

# ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1914 - 1918

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ I

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՈԿՏՈՐ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԻ



17 3/4  
2-50

D. DEUTSCHLAND  
UND  
8 101-1018

RECHENKUNDE  
RECHENKUNDE

1. BAND

VON  
HERRN

HERREN  
HERREN



UNIVERSITÄT JENA



**DEUTSCHLAND  
UND ARMENIEN  
1914-1918**

**SAMMLUNG DIPLOMATISCHER  
AKTENSTÜCKE**

**BAND I**

**HERAUSGEGEBEN UND EINGELEITET VON  
JOHANNES LEPSIUS**

**ÜBERSETZT AUS DEM DEUTSCHAN  
VON VALENTINA MINALJAN**

**JEREWAN 2006**

9(47.925)  
9-50

Հանրապետության մատչելի է պահպանվում

ՀՀ ԳԱԿ (ՀՀ ԳԱԿ)  
ՀՀ ԳԱԿ (ՀՀ ԳԱԿ)  
102-0

Հայաստանի հանրապետության Գրադարանի կողմից պահպանվող և մատչելի է դրա համարները

**ԳԵՐՄԱՆԻԱՆ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
1914-1918**

3521

**ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**ՀԱՏՈՐ I**

**Հրատարակությունը և ներածությունը՝  
Դոկտոր Յոհաննես Լեփսիուսի**

**Թարգմանությունը գերմաներենից՝  
Վալենտինա Մինալյանի**



**ԵՐԵՎԱՆ 2006**

ՀՀ ԳԱԿ (ՀՀ ԳԱԿ)

ՀՀ ԳԱԿ (ՀՀ ԳԱԿ)

ՀՏԴ-941(479.25)  
ԳՄԴ-63.3(2Հ)  
Գ 501

**Հրատարակվել է պետական աջակցությամբ**

**Աշխատությունը հրատարակության է երաշխավորել  
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի  
գիտական խորհուրդը**

*Մասնագիտական խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր՝  
Ստ. Մելիք-Բախչյան*

Գ 501 **Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Գիվանագիտական  
փաստաթղթերի ժողովածու: Հատոր I, հրատարակությունը և  
ներածությունը Յոհաննես Լեփսիուսի - Երևան, «Գրական  
հայրենիք» («Հայաստան»), 2006, 392 էջ:**

*Աստվածաբանության դոկտոր Յոհաննես Լեփսիուսի  
«Գերմանիան և Հայաստանը. 1914-1918» դիվանագիտա-  
կան փաստաթղթերի ժողովածուի մեջ ի մի են բերված գեր-  
մանացի դեսպանների, հյուպատոսների, դիվանագիտա-  
կան, զինվորական այլևայլ ներկայացուցիչների գաղտնի  
գեկուցագրերը, որոնցում բացահայտորեն դրսևորված է  
բուրջական կառավարության վարած հակահայկական քա-  
ղաքականության ողջ էությունը:*

0503010913  
L 2006  
701(01)2006

ԳՄԴ-63.3(2Հ)

ISBN 5 540-01998-9

© «Գրական հայրենիք», 2006թ.:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Թարգմանչի կողմից (Վ. Մինայան) ..... 8**  
**Առաջաբան (Յ. Լեփսիտս) ..... 15**

**Ներածություն**

**I. Նախաբան ..... 18**

1. Կիլիկիա ..... 18  
 2. Արևելյան Անատոլիա ..... 21  
 3. Վանի խռովությունները ..... 23  
 4. Համատարած տեղահանության որոշումը ..... 25

**II. Համադարձ տեղահանություն ..... 28**

1. Մտավորականության զանգվածային  
 ձերբակալումը Կ. Պոլսում ..... 28  
 2. Հաղորդումներ արտաքսումների մասին ..... 30  
 3. Տեղահանություն ..... 32  
 4. Դեսպանության ձեռնարկած քայլերը  
 Բ. Դռան առաջ ..... 35

**III. Տեղահանվածների ճակատագիրը ..... 43**

1. Բռնի իսլամացում ..... 45  
 2. Դեսպանության ձեռնարկած քայլերը ..... 47  
 3. Տեղահանվածների բնաջնջումը ..... 49  
 4. Մեծ վեզիր Թալեաթ փաշան ..... 52

**IV. Կովկաս ..... 56**

**V. Իրադարձությունների բնույթը ..... 61**

1. Տեղահանությունը որպես վարչական միջոցառում ..... 61  
 2. Գերմանական կողմի մասնակցությունը ..... 66  
 3. Ռազմական վնասը ..... 71  
 4. Չոհեր ..... 74  
 5. Պաշտոնական պատճառաբանություն ..... 77

**Փաստաթղթեր**

1913 ..... 93  
 1914 ..... 99  
 1915 ..... 121

**Անվանացանկ ..... 378**

Անձնանուններ ..... 378  
 Տեղանուններ ..... 385

## ԹԱՐԳՄԱՆԶԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոհաննես Լեփսիուսը ծնվել է 1868թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում: Հայրը՝ հայտնի եգիպտաբան Ռիխարդ Լեփսիուսը, Բեռլինի համալսարանի պրոֆեսոր էր, գիտությունների ակադեմիայի անդամ, մայրը՝ ծայրահեղ աստվածապաշտ կին: Նա երազում էր իր 6 զավակներից ամենակրտսերին՝ Յոհաննեսին, քահանա տեսնել:

Դպրոցն ավարտելուց հետո Յ. Լեփսիուսը սկզբում սովորում է աստվածաբանություն, այնուհետև փիլիսոփայություն՝ միաժամանակ ուսանելով մաթեմատիկա, գրականություն և արվեստի պատմություն: 1880թ. նրան շնորհվում է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Այդ ժամանակ նա հեռացել էր աստվածաբանությունից և նվիրվել գրականությանն ու թատրոնին: Գրել է բազմաթիվ գրականագիտական հոդվածներ և պիեսներ: Գրական տաղանդից բացի նա օժտված էր երաժշտական ունակություններով, ուներ գեղեցիկ բարիտոն: Երաժշտությունը ուղեկցել է նրան ողջ կյանքում:

1881թ. Լեփսիուսը կրկին ցանկանում է քահանա դառնալ: 1884թ. հանձնելով աստվածաբանության երկրորդ քննությունը, նշանակվում է Երուսաղեմում գերմանական համայնքի քարոզչի օգնական և գերմանական դպրոցի ուսուցիչ: Այնտեղ ձեռք բերած արևելյան փորձը իր կնիքն է դնում նրա հետագա կյանքի վրա: Նա մտերմանում է միսիայի քահանա Յելլերի ընտանիքին, ամուսնանում նրա աղջկա՝ Մարգարետի հետ, որի եղբոր, հետագայում քահանա Ֆրիդրիխ Յելլերի հետ ողջ կյանքում շատ սերտ հարաբերությունների մեջ էր: 1886թ. վերադառնում է Գերմանիա: 1887-ից, տասը տարի շարունակ, եղել է Ֆրիդդորֆի (Հարավային հարց, Վիպրայի մոտ) քահանա: 1896թ. դիվանագիտական մի զեկուցումից տեղեկանում է 1895թ. Թուրքիայում սկսված հայկական կոտորածների մասին: 1896թ. ապրիլից մինչև հունիս դոկտոր Ջեյմս Գրինֆիլդի հետ՝ որպես գորգագործ, ճանապարհորդում է Թուրքիայում, որպեսզի անձնապես պատկերացում կազմի այսպես կոչված հայկական հետապնդումների մասին: Հարավ - գերմանական ընկերության 9000 շվեյցարական ֆրանկ գումարով նա՝ որպես առաջին օգնություն, Բալասում և Ուրֆայում հիմնադրում է երկու որբանոց: Վերադառնալուն պես փորձում է գերմանական հասարակայնությանը տեղեկացնել հայերի անբարեհույս վի-

ճակի մասին և օգնության գործ կազմակերպել: Սակայն գերմանական ռայխի համար, Թուրքիայում իր քաղաքական և տնտեսական շահերից ելնելով, թուրքերի դեմ ամեն տեսակի մեղադրանքներն անցանկալի էին:

1896թ. օգոստոսին Լեփսիուսը հրապարակում է հայերի դեմ գործված ոճրագործությունը բացահայտող առաջին մեծ վավերագիրը՝ «Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանք մեծ տերություններին, կոչ քրիստոնեական Գերմանիային» վերնագրով: Ինքնին պարզ է հեղինակի հետապնդած նպատակը: Գիրքն անմիջապես թարգմանվում է ֆրանսերեն, անգլերեն և լայն արձագանք գտնում եվրոպական հասարակայնության մեջ, բացի Գերմանիայից, որի պաշտոնական ղեկավարներն ամեն ինչ անում էին՝ թաքցնելու համար ճշմարտությունը Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանում թուրքական ոճրագործությունները մերկացնելու և դատապարտելու խնդրին, Լեփսիուսի բերած փաստագրական աղբյուրները ցայսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը:

Լեփսիուսը շարունակում է պայքարել հանուն հայ ժողովրդի՝ իր ելույթներով, զեկուցումներով և հոդվածներով, որոնք անստորագիր տպագրվում էին պահպանողական ավետարանչական “Reichsbote” թերթում: 33 տարեկանից նա գտնում է իր կյանքի խնդիրը, որին նվիրաբերում է մնացած բոլոր գործերը: Կարճ ժամանակամիջոցում՝ մինչև 1899թ., նրան հաջողվում է հիմնադրել օժանդակության 7 կայաններ: Միայն Ուրֆայում կառուցվում են երեք որբանոց 300 երեխաների համար, մեկ կլինիկա, մեկ դեղատուն, մեկ մանկական հիվանդանոց և մեկ գորգագործական ֆաբրիկա: Դրան ավելացրած Պարսկաստանում և Բուլղարիայում հայ գաղթականների համար ձեռնարկված օժանդակության միջոցառումները: Բացի այդ հիմնադրում է երկու ամսագիր՝ “Das Reich Christi” և “Der christliche Orient” (հետագայում “Der Orient”), որոնց համար բազմաթիվ հոդվածներ է գրում:

Նրա ուսերին էր ընկած հայերի օժանդակության համար փող հավաքելու հոգսը և օգնության այլ միջոցառումների կազմակերպումը: Նրա ողջ ընտանիքը մասնակցում էր հայերին օգնելու գործին՝ սկզբում առաջին կլինը, որը մահացավ 1898-ին, այնուհետև երկրորդ կինը և աղջիկները: Այդ նպատակով ձեռնարկվում է բազմաթիվ արտասահմանյան ուղևորություններ՝ Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա: 1899թ. ապրիլից մինչև դեկտեմբեր Լեփսիուսը Հյուսիսային Կովկասով հասնում է Երևան, հետո Ուրֆա, իսկ

1906թ. Բուլղարիայով՝ Կահիրե, Միրիայով՝ կրկին Ուրֆա: 1913թ. մեկնում է Թուրքիա: Գերմանիայում և Թուրքիայում նա պայքարում էր գերմանական և օսմանյան դիվանագիտության դեմ: Կ. Պոլսում, Լոնդոնում և Փարիզում նա հանդես եկավ որպես դիվանագիտական կարևոր միջնորդ՝ 1913-1914թթ. հայկական բարենորոգումների ծրագրի մշակման գործում և Գերմանիայում հիմնեց գերմանա-հայկական ընկերությունը:

1908թ. Բեռլինից, ուր տեղափոխվել էր 1897թ., կնոջ և 12 երեխաների հետ միասին տեղափոխվեց Պոտսդամ:

Համաշխարհային առաջին պատերազմն սկսվելուց հետո Թուրքիան, օգտվելով պատերազմական պայմաններից, սկսեց երկրորդ, էլ ավելի դաժան հայկական հետապնդումները՝ նպատակ ունենալով կոտորածների ու տեղահանությունների միջոցով բնաջնջել հայ ցեղը: Յ. Լեփսիուսը անմիջապես մեկնում է Կ. Պոլիս և փորձում քուրք իշխանությունների առաջ միջնորդել հօգուտ հայերի: 1915թ. օգոստոսին Էնվեր փաշայի հետ վարած նրա զրույցը նկարագրվել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքում: Կ. Պոլսից վերադառնալուց հետո, Բեռլինում նրան հաջողվում է ռայխստագում հույժ գաղտնի մեղադրական հաղորդագրություններով հանդես գալ քաղաքագետների, լրագրողների ու զինվորականների առջև: Նրա ջանքերով 50 բողոքական հոգևորականներ, ներառյալ կրոնական բարձր դիրք գրավող մի քանի դեմքեր, դիմում են ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին պաշտոնական խնդրանքով, որտեղ իրենց նողկանքն են արտահայտում հայկական հալածանքների նկատմամբ և Գերմանական կայսրությանը կոչ անում շտապ քայլերի դիմել՝ Բարձր Դռան այդ քաղաքականությանը վերջ դնելու և այն փոխելու համար: Նա շվեյցարական քերթերում անստորագիր հաղորդումներով հանդես է գալիս հայկական հալածանքների մասին: Գերմանական կառավարությունը, շահագրգռված լինելով Թուրքիայի իրադարձությունների հարցում լռելու մեջ, ամեն կերպ խոչընդոտում է Լեփսիուսին, արգելում հրապարակումները՝ ջանալով գերմանական ժողովրդից թաքցնել դաշնակից Թուրքիայի հայահալած միջոցառումները: 1915թ. հոկտեմբերի 7-ին հրապարակվում է հետևյալ ցուցմունքը. «Հայկական սարսափների մասին պետք է ասել հետևյալը. Թուրքիայի այդ ներքին միջոցառումները չպետք է վնասեն նրա հետ մեր բարեկամական հարաբերություններին, այս ծանր ժամանակներում դրանք անգամ չպետք է քննվեն: Ուստի մեր պարտքն է առայժմ լռել: Հետագայում եթե ուղղակի հարձակումներ կհետևեն արտա-

սահմանի կողմից մեր մեղսակցության վերաբերյալ, պետք է մեծ զգուշությամբ և վերապահորեն քննարկել այդ հարցը, այնուհետև պնդել, որ հայերը խիստ ձևով զրգռել են քուրքերին»<sup>1</sup>:

Սակայն Լեփսիուսը չի նահանջում: 1916թ. նա գաղտնի հրատարակում է «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» գիրքը: 20000 օրինակ անձամբ տարածելուց հետո, գիրքը բռնագրավվում և արգելվում է նրա հետագա տպագրությունն ու տարածումը (1919թ. լույս տեսած երկրորդ՝ լրացված հրատարակությունը կոչվում է «Հայ ժողովրդի բնաջնջումը»): Իր հայանպաստ գործողությունների պատճառով Լեփսիուսը սեփական երկրում դառնում է persona non grata (անվստահելի անձ): 1916թ. նա հարկադրված մեկնում է Հոլանդիա, որպեսզի համեմատաբար ազատ գործի: Եվ այդ արվում է ժամանակին, քանի որ Բեռլինում կայգերական դիվանագիտությունը, օսմանյան դեսպան Խակիի դրոմամբ, որոշել էր Լեփսիուսին զրկել գործելու հնարավորությունից՝ նրան մերժելով բոլոր վիզաները: Հոլանդիայում Լեփսիուսը շարունակում է հայերի օգնության գործը: Այստեղ նա սերտորեն համագործակցում է սկանդինավահայ բարեկամների հետ, անձնական կապ պահպանում անգլիական պետական գործիչ և հայերի մեծ պաշտպան լորդ Բրայսի հետ:

«Հաղորդագրությունը», որը մի քանի հրատարակություններ է ունեցել արևմտաեվրոպական լեզուներով, ինչպես նաև թարգմանվել է հայերեն, մեծ դեր խաղաց Կ. Պոլսում ռազմական ոճրագործներ Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի ու հայկական կոտորածների այլ պարագլուխների դատավարության ընթացքում, որը նրանց հեռակա մահվան դատապարտեց: Դոկտոր Լեփսիուսը այս գրքում, հենվելով դեպքերի անմիջական ակամատեսների վկայությունների վրա՝ գերմանական ծառայողներ, միսիոներներ, չեզոք պետությունների դիվանագիտական ներկայացուցիչներ և այլն, քննական վերլուծության ենթարկելով այդ վկայություններն ու օբյեկտիվ այլ աղբյուրներ՝ տալիս է անաչառ պատկերն այն ողբերգության, որ հայ ժողովուրդն ապրեց Թուրքիայում, հատկապես 1915-1916թթ., պատկերը ցեղասպանության այն քաղաքականության, որ երիտթուրքերն անց էին կացնում բռնի տեղահանությունների ու զանգվածային ջարդերի ճանապարհին: «Հաղորդագրությունում» բերված աղյուսակները ցույց են տալիս, որ 1915թ. բռնագաղթվել ու զաղթի ճանապարհին կամ համա-

<sup>1</sup> Heinrich Vierbucher: Armenien 1915, Bremen, 1987, 9. 78:

կենտրոնացման ճամբարներում գոհվել է 1 միլիոն 396 հազար 350 մարդ:

1918թ. նոյեմբերին Լեփսիոսը վերադառնում է Բեռլին: Պատերազմից հետո էլ նա շարունակում է պայքարը հանուն հայ ժողովրդի: Այդ ժամանակ Ժնևում կազմակերպվում է Հայերի օգնության միջազգային լիգա: 1919թ. Լեփսիոսը հրատարակում է «Գերմանիան և Հայաստանը 1914-1918» փաստագրական աշխատությունը: Մինչ հասարակությանը հայտնի դառնալը, այդ գրքի դեռևս անկազմ օրինակները Ժնևի վրայով հասցվում են Փարիզ՝ Խաղաղության միջազգային կոնֆերանսին, որտեղ հայկական պատվիրակությունները պայքարում էին հայկական պետության գոյության իրավունքի համար: Այդ կարևոր գիրքը փարիզահայերին է հասցնում Լեփսիոսի մտերիմ բարեկամ, գերմանա-հայկական ընկերության անդամ, հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:

1921թ. Յ. Լեփսիոսը Բեռլինում, Թեիլերյանի դատավարության ժամանակ, հանդես է գալիս որպես փորձագետ: Նրա ճառը մեծ ազդեցություն է գործում ատենակալների վրա՝ հօգուտ Թեիլերյանի արդարացման:

Իր վերջին ծրագիրը՝ Պոտսդամում հայ-գերմանական ակադեմիայի ստեղծումը, Լեփսիոսը չհասցրեց իրականացնել: Բազմամյա պայքարը քայքայել էր նրա առողջությունը: 1925թ. ամռանը նա մեկնում է Մերան (Հարավային Տիրոլ) բուժվելու, որտեղ և վախճանվում է 1926թ. փետրվարի 3-ին: Նա ապրել է ընդամենը 67 տարի, որից 30 տարին նվիրել է հայանպաստ գործունեությանը:

Յոհաննես Լեփսիոսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918» փաստագրական նյութերի ժողովածուն, որն առաջին անգամ է լույս տեսնում հայերեն, թուրքական կառավարության կողմից 1915-ից մինչև 1918թ. հայ ժողովրդի հանդեպ գործած ցեղասպանության մասին ամենակարևոր գործերից մեկն է:

Հակառակ «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» գրքի, որը 1916թ. արգելվեց գրաքննության կողմից, Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունը խրախուսում և աջակցում է «Գերմանիան և Հայաստանը» դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի լույս ընծայմանը՝ նպատակ ունենալով. ա) Թուրքիային մեղադրող գերմանական փաստաթղթերի միջոցով հաստատել հայերի բնաջնջումը, բ) ցույց տալ Գերմանիայի լրիվ «անմեղսակցությունը» հայերի բնաջնջման գործում: Չնայած դրան, գրքի արժեքը բոլորովին չի նվազում: Գերմանական դեսպանների, հյուպատոսների, դիվանագիտական ու զինվո-

րական այլ ներկայացուցիչների գաղտնի ու խիստ գաղտնի զեկուցագրերը մատչելի դառնալով, անհերքելիորեն վկայում են, որ տեղահանության իսկական նպատակը թուրքական պետության մեջ հայ ազգի ոչնչացումն էր, նաև այն, որ գերմանական կառավարությունը բացահայտորեն հանդես չէր եկել իրիհատականների հայասպան գործողությունների դեմ:

Դժվար է գերազնահատել «Գերմանիան և Հայաստանը» փաստաթղթերի ժողովածուի նշանակությունը թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ գործած ոճրագործությունները ճշմարտացիորեն բացահայտելու գործում, քանի որ գերմանական արտաքին գործերի գերատեսչության փաստաթղթերը պաշտոնական բնույթ են կրում: Խոսքը այն դիվանագետների գրությունների մասին է, որոնց կառավարությունը այն ժամանակ ռազմականապես, քաղաքականապես և տնտեսապես սերտ դաշնակցական կապերի մեջ էր Թուրքիայի հետ: Եթե անզլիական, ֆրանսիական, իսկ 1917թ. ապրիլից՝ նաև ամերիկյան քաղաքագետների և անհատների բերած փաստերի վրա կարող է կանխակալության կասկած ընկնել, ապա Թուրքիայի գերմանացի դաշնակիցները վեր են այդպիսի կասկածից: Բացի այդ, գերմանական փաստաթղթերն ավելի շատ են, որովհետև գերմանա-թուրքական փոխհամաձայնության հետևանքով ողջ Օսմանյան կայսրությունը ծածկվել էր գերմանական դիվանագիտական ներկայացուցչության խիտ ցանցով: Համարյա յուրաքանչյուր գավառի կենտրոնում գտնվում էր գերմանական հյուպատոսություն: Որպես դաշնակիցների գերմանական դիվանագետներին հնարավորություն էր տրվում անգամ պատերազմական պայմաններում անսահման և անարգել տեղեկություններ հավաքելու և զեկուցագրեր ուղարկելու Բերայի, Կ. Պոլսի դեսպանություններ, որտեղից դրանք հասնում էին Բեռլինի արտաքին գործերի գերատեսչություն:

Այդ բազմաթիվ զեկուցագրերը ոչ մի կասկած չեն բողոքում թուրքական մեթոդների և նպատակի վերաբերյալ՝ բնաջնջել Օսմանյան կայսրության մոտ 2 միլիոն հայ բնակչությանը: Արդեն 1915թ. հուլիսի 7-ին գերմանացի դեսպան Վանգենհայմը իրեն ներկայացված զեկուցագրերի հիման վրա խոստովանել է, որ «կառավարությունը (թուրքական) իրականում նպատակ է հետապնդում ոչնչացնել ողջ հայ ցեղը թուրքական կայսրությունում»:

Բերված փաստերը ժխտում են թուրքական կառավարության այն վարկածը, որ իբր «համընդհանուր հայկական ապստամբության» ա-



ուսջն առնելու համար էր կառավարությունը ձեռնարկել այդ միջոցառումները: Այս կեղծ վարկածը մինչև այժմ էլ օգտագործվում է թուրք պաշտոնական պրոպագանդայի կողմից՝ ցեղասպանության քաղաքականությունն արդարացնելու համար: Վանում, Ուրֆայում և մի քանի այլ տեղերում բռնկված ապստամբությունները եղել են ընդամենը ինքնապաշտպանական միջոցառումներ՝ խուսափելու համար այն ճակատագրից, որը բաժին ընկավ թուրքական իշխանությունների խոստումներով խաբված և իրենց կյանքը զոհաբերած հայրենակիցներին:

Յ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-1918» գիրքը մի մեղադրական փաստաթուղթ է իթիհատ կուսակցության և նրա գլխավորած կառավարության դեմ: Այն անգնահատելի նշանակություն ունի պատմության թուրք կեղծարարների ստահող պնդումները մերկացնելու գործում, բոլոր այն պատմաբանների ու քաղաքագետների, որոնք այսօր էլ փորձում են ժխտել հայերի եղեռնը, 20-րդ դարի այդ քստմենլի հանցագործությունը՝ ուղղված մարդկության և մարդկայնության դեմ:

Յ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» գիրքը, որը Գերմանիայում վերահրատարակվել է 1986թ-ին, մի վավերագրական հուշարձան է 1915-1918թթ. Օսմանյան Թուրքիայում նահատակված 1,5 միլիոն հայերի հիշատակին:

### **Վալենտինա Մինայան**

### **ԱՌԱՋԱԲԱՆ**

Հուլանդիայում երկուսկես տարի մնալուց հետո, անցյալ տարվա նոյեմբերի վերջերին, երբ Հաագայից Բեռլին վերադարձա, դեկտեմբերի 1-ին այցելեցի արտաքին գործերի գերատեսչության պետական քարտուղար պարոն դոկտոր Ջուլֆին: Նրանից թույլտվություն խնդրեցի ծանոթանալու արտաքին գործերի պաշտոնական փաստաթղթերին, որոնք հնարավորություն կտային դատելու Հայկական հարցի և պատերազմի տարիներին դրանում գերմանական կառավարության դիրքորոշման վերաբերյալ: Իմ խնդրանքի շարժառիթը հետևյալն էր: Այն աղբյուրների հիման վրա, որոնք մատչելի էին դարձել անձնական ծանոթությունների միջոցով 1915թ. ամռանը, Կ. Պոլիս կատարած ճամփորդության ժամանակ, 1916 թվականին հրատարակեցի «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» գիրքը: Այն առևտրի միջոցով տարածելը, անգամ այնտեղ պարունակվող փաստերի օգտագործումը մամուլում, այն ժամանակ անհնար էր: Գրաքննությունը կբռնագրավեր գիրքը: Մամուլը, ելնելով պաշտոնական հրահանգներից, պարտավոր էր լռել հայկական ջարդերի մասին: Ուստի ես իմ «Հաղորդագրությունը» կարող էի միայն գաղտնի տարածել: Մի հանգամանք, որ գրաքննության ուշադրությանն արժանացավ միայն այն ժամանակ, երբ 20000 օրինակ արդեն տարածվել էր ողջ Գերմանիայում: Գրքի հրատարակումը և տարածումն արգելվեց:

Հեղափոխությունն սկսվելուց հետո նոր տպագրության և գրախանութների միջոցով վաճառքի արգելք այլևս չկար: Նոր հրատարակության համար ինձ երկու բան էր խանգարում, առաջին՝ լրացուցիչ ստուգել իմ այն ժամանակվա աղբյուրների նյութը մինչ այդ ինձ անմատչելի գերմանական դեսպանության և հյուպատոսության հաղորդումների հիման վրա, և երկրորդ՝ ինձ համար կարծիք կազմել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ գերմանական դիվանագիտության դիրքորոշման մասին:

Պարոն դոկտոր Ջուլֆը անմիջապես պատրաստակամություն հայտնեց ծանոթանալու նպատակով տրամադրել ինձ փաստաթղթերը և թույլ տվեց օգտվել իմ հրատարակության համար: Նա միաժամանակ նշեց, որ գերատեսչությունը մտադիր է իր նախաձեռնությամբ Հայկական հարցի վերաբերյալ Սպիտակ գիրք (փաստագրական նյութերի ժողովածու)

հրատարակել:

Հաջորդ օրն աչքի անցկացրի փաստաթղթերը և համոզվեցի, որ մի քանի փաստաթղթերի օգտագործումը բավարար չէ պարզաբանելու Թուրքիայի իրադարձությունների հանդեպ Գերմանիայի դիրքորոշումը, որ դրա համար անհրաժեշտ է ծավալուն հրատարակություն:

Նույն օրը դուրս եկավ Ջոն Բրայտը, որ ինքը կհրաժարվի Մայիտակ գրքի հրատարակությունից, եթե ես իմ վրա վերցնեմ փաստաթղթերի նյութերի հիման վրա Հայկական հարցում Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանելու խնդիրը: Ես ընդունեցի առաջարկը հետևյալ պայմանով, որ 1) արտաքին գործերի գերատեսչության և դեսպանության փաստաթղթերի նյութերը ինձ լրիվ մատչելի լինեն, 2) հրատարակության համար փաստաթղթերի նյութերի ընտրությունը բացառապես մնա իմ հայեցողությանը, և 3) հրատարակումը տեղի ունենա ոչ թե գերատեսչության ցուցումով, այլ անձամբ իմ նախաձեռնությամբ: Արժանի եմ համարում հաստատելու, որ այս պայմանները պահպանվեցին:

Այստեղ հրատարակվող փաստաթղթերի ընտրության և Հայկական հարցի վերաբերյալ գերմանական կառավարության դիրքորոշման վավերականության պատասխանատվությունն ընկնում է միայն ինձ վրա: Ամեն տեսակի կասկածից լրիվ խուսափելու համար, թե իբր ես կարող է ջրի երես հանած չլինեմ այն փաստաթղթերը, որոնք ինչ-որ տեսակետից մերկացնում են գերմանական կառավարությանը, դեսպաններին և հյուպատոսներին կամ գերմանացի սպաներին, ծառայողներին և մասնավոր անձանց, այս դիվանագիտական թղթակցությունից, որն ինչ խոսք ընդգրկում է դեռ անթիվ, գործի համար լրիվ անկարևոր բյուրոկրատական նյութեր, կատարել եմ այնպիսի ամբողջական ընտրություն, որի ներքին հաջորդականությունը երաշխավորում է նրա գործնական ամբողջությունը: Տեղահանությունների ընթացքում կատարված դեպքերի և համակենտրոնացման ճամբարների իրավիճակի մասին մեծ թվով մանրամասն հաղորդումները, որոնք դեսպանությունը ստանում էր տարբեր կողմերից և որոնք արդեն օգտագործվել են իմ «Հաղորդագրությունում», առայժմ բաց են թողել, որպեսզի չափազանց շժանրաբեռնեն առանց այն էլ արդեն ծավալուն հրատարակությունը: Դրանք կհրատարակեմ ավելի ուշ: Մակայն ուշադրություն եմ դարձրել այն բանի վրա, որ խոսվի պաշտոնական գիտությանը հասած էական դեպքերի մասին, այնպես որ, հյուպատոսների տեսանկյունից ոլորտում գտնվող փաստերի պատկերը նույնպես ան-

բողջականության հավակնություն ունի:

Անատոլիայի, Սիրիայի և Միջագետքի՝ Տրապիզոնի, Էրզրումի, Սամսունի, Ադանայի, Ալեքսանդրեթի, Հալեպի, Դամասկոսի, Մոսուլի գերմանական դեսպանությունների հաղորդումները վկայում են, որ հյուպատոսներն իրենց վարչական շրջանի բոլոր կարևոր ստուգման ենթակա դեպքերի մասին անընդհատ, մանրամասն ու բարեխղճորեն, բանիմացությամբ և առողջ քաղաքական ու բարոյական դատողությամբ հաղորդել են գերմանական դեսպանությանը կամ ռախսկանցիներին: Հաղորդումներ չեն տրվել միայն այն շրջանների մասին, որոնք գտնվում էին իրենց տեսադաշտից դուրս, կամ ռուսական օկուպացիայի պատճառով թաքնված էին իրենց հայացքից: Այդ իսկ պատճառով բացակայում են մանրամասն հաղորդումներ Սվեդիայի, Բիթլիս-Մուշի և Վանի դեպքերի մասին, որոնք հավելվածում ներկայացրել են այլ աղբյուրներից, որպեսզի դյուրին լինի տեղահանությանը վերաբերող իրադարձությունների մասին ճշմարիտ կարծիք կազմելը: Առանց այս դեպքերի մասին լավատեղյակ լինելու հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ողջ հայ ժողովրդի տեղահանությունը արդյոք հիմնավորված էր ռազմական անհրաժեշտությամբ: Հավելվածի չորրորդ գեկուցագիրը պատկերացում է տալիս անպատի եզրին գտնվող համակենտրոնացման ճամբարների մասին: Վերջինը գրաքննությունից ազատ առաջին հաղորդագրությունն է գերմանական օժանդակության գործի մասին:

352/

Իմ առջև խնդիր չեմ դրել ստանձնել մեղադրողի, պաշտպանի կամ դատավորի դերը: Ես կարծել եմ, որ լավագույն ձևով ծառայած կլինեն ճշմարտությանը, եթե սահմանափակվեմ այնքանով, որ թողնեմ՝ փաստագրական նյութերն իրենք խոսեն: Այնպես որ, ամեն ոք կկարողանա իր կարծիքը կազմել փաստերի և հանցավորության հարցի մասին: Ներածությունը և, որ ներկայացնում են սկզբից, ավելին չէ, քան փաստաթղթերի միջով մի առաջնորդող թել, որը տանում է դեպի ընդարձակ նյութերի կարևորագույն թեմաները:

Պոտսդամ, Օստեն, 1919

*Դոկտոր Յոհանես Լեխսիուս*



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի տեղահանության պատմությունը Թուրքիայում ընդգրկում է հետևյալ ժամանակաշրջանները.

1. 1914թ. նոյեմբերի 1-ին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու պահից մինչև 1915թ. ապրիլի 20-ի Վանի ապստամբությունը:
2. 1915թ. ապրիլի 20-24-ին համընդհանուր տեղահանության վերաբերյալ որոշումից մինչև նրա ավարտը՝ 1915թ. դեկտեմբերը:
3. 1915թ. դեկտեմբերից հայ ժողովրդի մնացածների հանդեպ համատարած իսլամացման գործադրման սկզբից մինչև նրա բնաջնջման ավարտը՝ 1918թ. հոկտեմբերը:
4. Կովկասյան քատերաբեմ, 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից մինչև Բաքվի գրավումը՝ 1918թ. սեպտեմբերի 15-17-ը:

## I. ՆԱԽԱԲԱՆ

### 1. ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիայի դեպքերն սկսվեցին Չեյթունից, Տավրոսի բարձրահովիտներում ընկած մի լեռնային վայրից, որն ափից ուղիղ գծով գտնվում է 120 կմ հեռավորության վրա: Չեյթունի և շրջակա գյուղերի հայերը մինչև 70-ական թվականները վայելում էին իրենց անկախությունը, ինչպես հարկատու նստակյաց քրդերը: 1895-96թթ. Արդուլ-համիդյան հայկական ջարդերի ժամանակ, երբ զոհվեցին 80000-100000 հայեր, Չեյթունը դիմադրություն ցույց տվեց և հզոր երկրների միջամտության շնորհիվ ներման հասավ: Ով դիմում էր օտար միջամտության, պետության դավաճան էր համարվում: Առաջին իսկ հնարավորությունը, որ ներկայացավ պատերազմի սկսվելուց հետո, օգտագործվեց, որպեսզի հարձակվեն ատելի Չեյթունի վրա:

Դեռ պատերազմից առաջ, 1913թ. Ալակայա լեռան վրա բույն էր դրել ավազակային մի հրոսակախումբ, որը համալրվել էր համընդհանուր զորակոչից հետո ծանր զինձառայությունից փախած քրիստոնյա ու մահ-

մեղական դասալիքներով: Չեյթունի բնակչությունը մեղք չունեք նրանց գործողությունների համար, և ոչինչ այնքան չէր ուզում, որքան նրանց բռնվելը, քանի որ նրանց համատությունը կարող էր իշխանություններին առիթ տալ քաղաքի վրա արշավելու: Դասալիքների հետ ժամդարմների մի ընդհարում առիթ տվեց դեպքերի ծավալվելուն, ինչից վախենում էին զեյթունցիները: 4000 զինվորներից բաղկացած մի մեծ ջոկատ շարժվեց դեպի Չեյթուն, իբր թե ավազակներին վերջ տալու նպատակով: 150 դասալիքներ բացվեցին քաղաքից դուրս գտնվող մի վանքում: Վանքը գնդակոծման ենթարկվեց: Հարձակման ժամանակ թուրքերից զոհվեցին 7-8, դասալիքներից՝ 20-30 մարդ: Մնացած դասալիքներին թույլ տվեցին գիշերը փախչել, որպեսզի կարողանան պատասխանատվությունը զցել քաղաքի վրա: Դա կատարվեց 1915թ. մարտի 24-ին, պատերազմի 5-րդ ամսում: Հաջորդ օրը, 30 երևելիների ձերբակալումից հետո, սկսեցին Չեյթունի և նրա շրջակայքի ողջ հայ բնակչության՝ 10000-ից մինչև 20000 հոգու՝ տղամարդկանց, կանանց և երեխաների արտաքսումը: Մի մասին քչեցին Կոնիայի վիլայեթի ճահճուտ վայրեր, մյուս մասին՝ Եփրատի ափին գտնվող Դեյր էլ Չորի անապատները: Առանց դատ ու դատաստանի: Դա ներքին քաղաքականության միջոցառում էր, որը ոչ մի կապ չունեք ռազմական անհրաժեշտության հետ:

Կառավարության չաիրած երկրորդ վայրը Դյորթյուլ գյուղն էր, որն ընկած էր Կիլիկիայի ծովեզրին, հին Իսուսից ոչ հեռու: Դյորթյուլի բնակիչները 1909թ. կիլիկյան ջարդերի ժամանակ, երբ 20000 հայ զոհվեց, պաշտպանվել էին հաջողությամբ: Բավականին հարավ, Մուսա լեռան ստորոտում ընկած Սվեդիա գյուղի բնակիչներին ևս այն ժամանակ հաջողվել էր խուսափել ջարդերից: Չպարզաբանված, աննշան լրտեսական խարդախություններն առիթ տվեցին հարձակվելու Դյորթյուլի վրա: Դյորթյուլի տղամարդկանց տեղափոխեցին Հալեպ և լծեցին ճանապարհաշինության մեջ: Սվեդիայի և նրա հարևան գյուղի բնակիչները հուլիսի 30-ին պետք է արքորվեին Արաբական անապատներ: Նրանք փախան Մուսա լեռ: Մի քանի շաբաթ թուրքական ջոկատների կողմից պաշարման մեջ գտնվելուց հետո՝ նրանց հաջողվեց դեպի ծովն իջնող թեք լեռնալանջի վրայով կապվել ֆրանսիական մի հաժանավի հետ, որն օգնության կանչված «Ժաննա դը Արկ» շոգենավի և այլ ռազմանավերի հետ միասին փախստականներին՝ տղամարդկանց, կանանց և երեխաների, թվով 4058 հոգու, տեղափոխեց Ալեքսանդրիա (Հավելված N 1):

Այլ դեպքեր, որոնք կարող էին Կիլիկիայի հայ բնակչության (մոտավորապես 80000 հոգի) համատարած տեղահանության պատճառ դառնալ, տեղի չունեցան:

Ձեյթունի, Դյորթյուլի և Սվեդիայի իրադարձությունների մասին ժամանակին զեկուցել են հյուպատոսները: Բ. Դուռը Կիլիկիայում իր կատարած գործողությունների առթիվ չի խորհրդակցել դեսպանության հետ: Երբ դեսպանությունը բազմաթիվ անգամներ միջամտեց բոլոր շրջաններից գնալով մեծ ծավալ ընդունող արտաքսումների առիթով, Բ. Դուռը հասկացրեց, թե դա կատարվում է ռազմական շահերից ելնելով, և որ դա Թուրքիայի ներքին գործն է, որը դեսպանությանը չի վերաբերում: Կիլիկիայում կոտորածներ տեղի չունեցան, միայն արտաքսումներ: Երբ Մարաշի հայերը (մոտ 60000 հոգի, որոնցից 24000-ը՝ քրիստոնյաներ) Ձեյթունի դեպքերից և մահմեդականների զրգռվածությունից անհանգստացած, վախ հայտնեցին, թե կարող են կոտորածներ սկսվել, հյուպատոս Ռյոսլերը Հալեպից մեկնեց այնտեղ: Մարաշում գտնվող գերմանական հաստատությունների պաշտպանությունը (հիվանդանոց և ուղիներ) հիմք էին տալիս նրան այդ քայլին դիմելու: Նրա այցը հանգստացուցիչ ազդեցություն ունեցավ: Ամերիկյան առաքելությունը ևս, որը Մարաշում ուներ մի ներկայացուցիչ, շնորհակալ էր դրա համար: Հյուպատոս Ռյոսլերի դեմ անգլիական մամուլի տարածած այն զպարտությունները, թե իբր նա իր այցելության ժամանակ Այնթապում անձամբ ղեկավարել է կոտորածները և ոգևորել սարսափելի գործողությունները, զրպարտություններ, որոնք լսվել են նաև Անգլիայի պառլամենտում, հերքվեցին ամերիկյան միսիոներների վկայություններով: Պարոն Ռյոսլերի հյուպատոսական բազմաթիվ զեկուցագրերը ապացուցում են, թե ինչպիսի անդադրում անձնվիրությանը և համառությանը էր նա պաշտպանում իր հյուպատոսության շրջանի հայերին և այնտեղով անվերջ անցնող արտոյալներից ողջ պատերազմի ընթացքում: Քանի դեռ Ձեյալ բեյը Հալեպում էր, հյուպատոս Ռյոսլերը ուրախ էր: Այդ արդարամիտ և մարդասեր վալին, որը իր վիլայեթում չէր հանդուրժում ոչ տեղահանություններ և ոչ էլ կոտորածներ, համաձայն էր իր հետ: Սակայն 1915թ. հունիսի 21-ին Ձեյալ բեյին ազատում են պաշտոնից, որովհետև նա չէր ուզում ենթարկվել Կ. Պոլսի հրամաններին: 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Ձեյալ փաշան ևս, որի հրամանատարության սահմաններում էին գտնվում Կիլիկիան և Հալեպը, հավանություն չէր տալիս կառավարության հայահալած քաղա-

քականությանը: Համենայն դեպս, կրկնվող կարգադրությունների շնորհիվ, նա հասավ այն բանին, որ իր հրամանատարության սահմաններում կոտորածներ տեղի չունեցան: Կենտրոնական իշխանությունների կողմից հրահանգված տեղահանություններին և հայ ժողովրդի մնացած մասի իսլամացմանը նա ևս չհակառակվեց:

## 2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԱՏՈՒԿ

Պատերազմի սկզբից Էրզրումի վիլայեթից բողոքներ էին գալիս դեսպանություն քուրք ժանդարմների և չեթեների (հեծյալ բանդաների) կողմից հայ գյուղական բնակչությանը կողոպտելու և նրանց հանդեպ բռնություններ գործադրելու մասին: Այս հարձակումների հեղինակները գավառական քաղաքների երիտթուրքական ակումբներն էին: Փետրվարի 10-ին Էրզրումի օտոմանյան բանակի դիրեկտորի տեղակալ հայ Պաստիրմաջյանը դարձավ դավադրական սպանության զոհ: Չնայած գեներալ Փոսելդ փաշան՝ գերմանական ռազմական միսիայի անդամը, որն այն ժամանակ Էրզրումի բերդակալն էր, արեց ամեն ինչ, սակայն հայտնի մարդասպաններին չձերբակալեցին: Էրզրումի և Բասենի դաշտավայրերի գյուղական շրջաններում, Էրզրումից դեպի արևելք, հայկական բոլոր գյուղերը աստիճանաբար դատարկվեցին, հիմնականում կանանցից և երեխաներից, քանի որ տղամարդիկ զինծառայության էին կանչված՝ իբր թե ռազմական բնույթի պատճառներով:

Հրամանը արձակել էր 4-րդ բաժնակի գլխավոր հրամանատար Ձեյալ փաշան: Էրզրումի վալի Թահսին բեյը, որը դեմ էր այդ միջոցառումներին, անգոր գտնվեց: 1915թ. մայիսի 18-ին գերմանացի փոխհյուպատոս ֆոն Շոյբներ-Ռիխտերը հեռագրել է դեսպան ֆոն Վանգենհայմին. «Արտաքսված հայերի շրջանում ահավոր թշվառություն է տիրում: Հազարավոր կանայք ու երեխաներ առանց սնունդի կուտակվել են քաղաքի շրջակայքում: Անիմաստ արտաքսումը մեծ զայրույթ է առաջացնում: Թույլ կտա՞ք այդ կապակցությամբ քայլեր ձեռնարկել գլխավոր հրամանատարության մոտ»:

Հենց նույն օրը դեսպան բարոն Վանգենհայմը հյուպատոսին լիազորեց առարկություններ անել և ազդել, որպեսզի արտաքսվողների հետ մարդկայնորեն վերաբերվեն: Հյուպատոսը ներկայանում է Թորթումի

ուզմակայան և հունիսի 2-ին հաղորդում, որ իր «բանակցությունը բարձրագույն հրամանատարության հետ ոչ մի դրական արդյունք չտվեց»:

Կա՞ր արդյոք Էրզրումի վիլայեթում հայկական ապստամբության վտանգ: Գեներալ Փոսելդը ապրիլի 26-ին հայտարարում է. «Հայերի վարքն անբասիր է եղել»:

Հյուպատոսը հաստատում է այդ. «Քանի որ այստեղ հայերի ապստամբություն չի սպասվում, այս դաժան միջոցառումն անհիմն է և վրդովմունք է առաջացնում» (16-մայիսի):

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, որի մոտ դեսպանությունը հարց է բարձրացնում արտաքսման միջոցառումները մեղմելու մասին, «դեմ է դուրս գալիս», քանի որ Էրզրումում գտնվել են մերկացնող թղթակցություններ, զենքեր և ռուսներ (29 մայիսի): Դեսպանության հարցումին հյուպատոս ֆոն Շոյբներ-Ռիխտերը Էրզրումից հեռագրում է. «Էրզրումում և նրա շրջակայքում մեծ քանակությամբ չեն գտնվել, դա կարող է հաստատել նաև վալին» (2-հունիսի):

Կիլիկիայում և Էրզրումի վիլայեթում դեպքերն իրենց հունով ընթացան: Կապ գոյություն չունեցող թվում էր կայսրության հայ բնակչության դեմ ընդհանուր միջոցառումների մտադրություն չկար: Էրզրումի վիլայեթում նույնպես մինչև մայիսի վերջերը ջարդեր տեղի չունեցան, կատարվեցին միայն արտաքսումներ, որոնք կարգադրված էին գլխավոր հրամանատարության կողմից և հիմնավորված ուզմական բնույթի պատճառաբանություններով:

Այդ ընթացքում Բիթլիսի և Վանի վիլայեթներից լուրեր հասան, որոնք ավելի լուրջ բնույթ էին կրում: Դրանք, թվում է, հաստատում էին Բ. Դռան տեսակետը, թե ուզմական գործողություններին սպառնում են հայկական ժողովրդական տարրերի հեղափոխական շարժումները և պետական անվտանգությունը վտանգի տակ է: Բիթլիսի ու Մուշի ապստամբությունների վերաբերյալ անուղղակի լուրերից բացի, ուրիշ ավելի ճիշտ հաղորդումներ չկային: Դրանք այն շրջաններն էին, որոնք անհասանելի էին հյուպատոսություններին: Հետագայում պարզվեց, որ այնտեղ գարնանը Գոմս գյուղի դեմ թուրք ժանդարմների մի ոտնձգություն հասցրել է հուզումների, որոնք կարգավորվել են իշխանությունների միջամտությամբ և հայ պատգամավոր Փափագյանի միջնորդությամբ՝ Թալեաթ բեյի կարգադրության շնորհիվ: Մակայն այդ մասին դեսպանությանը ոչինչ չէր հաղորդվել (Հավելված N 2):

### 3. ՎԱՆԻ ԽՈՌՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապրիլի 22-ին Էրզրումից հաղորդեցին դեսպանություն. «Վանում և շրջակայքում բռնկվել են հայկական խռովություններ (հավանաբար ռուսական խարդավանքների հետևանքով): Տեղի են ունենում փողոցային կռիվներ, հեռագրալարերը կտրտված են, կապը Պարսկաստանի հետ ընդհատված է»:

Ահազանգող լուրը հաստատվեց Բ. Դռան կողմից: Վանում կատարվող իրադարձությունների և դրանց պատճառների մասին դեսպանությունը Բ. Դռնից ոչ մի անգամ պարզաբանում չի ստացել: Միայն ամիսներ անց այդ մասին վավերագրական հաղորդումներ են հասել Եվրոպա՝ ամերիկյան և գերմանական այն միսիոներներից, որոնք ականատես էին դեպքերին (Հավելված N 3):

Ի՞նչ էր տեղի ունեցել Վանում: Փետրվարի կեսերին Ջևդեթ բեյը՝ Վանի վալին, Էնվեր փաշայի փեսան, վերադարձավ Մալմաստից և Ուրմիայից, ուր մասնակցել էր թուրքական ու քրդական ջոկատների հյուսիս-պարսկական արշավանքին: Թուրք երևելիների մի ժողովում նա հայտարարեց. «Մենք Ադրբեջանը մաքրեցինք հայերից ու ասորիներից, հիմա պետք է նույն ձևով վարվենք Վանի հայերի հետ»: Նա հրահանգեց իր գավառի կայմակամներին՝ ամենափոքր առիթ տալու դեպքում հարձակվել հայերի վրա: Ինքը Վանի հայերին (20000 հոգի) բարեկամական վերաբերմունք ցույց տվեց: Կազմվեցին հանձնախմբեր և ուղարկվեցին գյուղերը՝ քրդական կողոպուտներին ու ժանդարմների բռնություններին վերջ դնելու համար: Այդ ժամանակ Ջևդեթ բեյը օժանդակ ուժեր բերել տվեց Էրզրումից: Երբ Շատախում, հայերով գերակշռող գյուղում, սկսվեցին գժտությունները ժանդարմների հետ (14 ապրիլի), նա հայերի երեք առաջնորդներին՝ Վոամյանին, Իշխանին և Արամին խնդրեց Վանի ոստիկանության մյուղիքի հետ գնալ Շատախ՝ վեճերը հարթելու համար: Իշխանը գնաց՝ իր հետ վերցնելով երեք հայերի և: Նրանց ուղեկցեց ոստիկանության մյուղիքը՝ չերբեզ դաբբիաների հետ: Ճանապարհի կեսին գիշերեցին Հիրճում: Երբ հայերը քնեցին, մյուղիքը չերբեզներին հրամայեց սպանել նրանց: Հաջորդ օրը վաղ առավոտյան, մինչև Վանում կիմանային այդ նեղ սպանության մասին, վալի Ջևդեթ բեյն իր մոտ կանչել տվեց մյուս երկու հայ առաջնորդներին՝ Վոամյանին ու Արամին: Արամը պատահաբար բացակայում էր: Վոամյանը, ոչինչ չկասկածելով, գնում է վալիի մոտ և հենց որ մտնում է կառավարական շենքը, ձերբակալվում է: Վալին նրան շրթայակապ Բիթլիսով Դիարբեքի է ուղարկում: Ճանապարհին նրան սպանում են:

Հենց նույն առավոտյան Ջևեթ բեյը պատրաստվում է հարձակվել քաղաքի հայկական թաղամասերի վրա: Միաժամանակ կոտորածներ են սկսվում Արճեշում և Հայոց ձորի գյուղերում: Սպառնացող կոտորածներից կանանց և երեխաներին փրկելու համար քաղաքի հայերը բաքնվում են իրենց թաղամասերում: Նրանք ոչ մի կապ չունենին Ռուսաստանի հետ: Չորս շաբաթ նրանք դիմադրեցին բուրքական ջոկատներին, որոնք պաշարել ու գնդակոծում էին նրանց: Հայերի պաշարները սպառվել էին: Մայիսի 15-ին տեղի ունեցավ վերջին ոմբակոծությունը: Գիշերը, ի մեծ զարմանս քաղաքի հայերի, Ջևեթ բեյը պաշարած ջոկատների հետ միասին հեռացավ քաղաքից: Հայերը դեռ տեղյակ չէին, որ ռուսական բանակը կովկասյան ճակատով մեկ առաջ էր շարժվում: Մայիսի 19-ին պաշարումը սկսվելուց 30 օր անց, ռուսները մտան Վան: Ռուսների առաջխաղացման համար Վանի արհավիրքը աննշան դրվագ էր: Նրանց գլխավոր ուժը (ինչպես դեռ պատերազմից առաջ կանխատեսել էր հյուսիսատոս Անդերսը) առաջ շարժվեց Վանա լճի հյուսիսով՝ Մուշի և Բիթլիսի ուղղությամբ: Վանի հայերի համար էլ քաղաքի արհավիրքը նշանավորվեց միայն նրանով, որ իրենց քաջարի տոկունությամբ փրկեցին իրենց և իրենց ընտանիքները, քանի որ ռուսներն արդեն հուլիսի 31-ին հեռացան Վանից, և ողջ հայ բնակչությունը ստիպված եղավ գաղթել Կովկաս:

Բ. Դուռը պետք է տեղյակ լինի Վանի ապստամբության բնույթի մասին, որն ինքնապաշտպանության գործողություն էր: Նա գիտեր, որ այդ «ապստամբությունը» հրահրված էր վալի Ջևեթ բեյի կողմից և ոչ մի կապ չունեի ռուս-բուրքական ռազմական գործողությունների հետ: Վանի (Հավելված N 3), ինչպես նաև Սվեդիայի (Հավելված N 1) մասին հաղորդումը ընթերցվում է որպես Կուպերի հնդկացիների մասին գրված վեպերից մեկի մի գլուխ և ոչ որպես համաշխարհային պատերազմի մի դրվագ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն ձևը, թե ինչպես է Բ. Դուռը (գաղտնի պահելու խնդրանքով) գերմանական դեսպանությանը ներկայացրել Վանի «ապստամբությունը»:

Հաղորդումներն այսպիսին էին.

24-ը ապրիլի. պետբանկի և հեռագրատան շենքերը հողս են թռել, փողոցային կռիվներ, 20 սպանված:

27-ը ապրիլի. Վանի խռովությունը ճնշված է: Զրդերը մասնակցում էին ապստամբությանը: Սպանված են 400 հայ, մնացածները փախել են Ռուսաստան:

6-ը մայիսի. նոր կռիվներ Վանում, բուրքական կողմից 600 մարդկային կորուստ:

9-ը մայիսի. հուզումները Վանում շարունակվում են:

Թուրքերից՝ 1000, հայերից՝ 3000 սպանվածներ:

Կորուստների թիվն աճում է թոնիքաձև՝ 20-ից 400, հետո՝ 600, հետո՝ 4000: Չորսշաբաթյա պաշարման ընթացքում՝ ապրիլի 20 - ից մինչև մայիսի 17-ը, հայերը իրականում տվել էին 18 սպանված, իսկ բուրքերից հազիվ թե ավելի շատ մարդիկ զոհված լինեին<sup>1</sup>: Ֆալստաֆը ոչինչ էր Ջևեթ բեյի համեմատությամբ:

Ինչի՞ համար էին այդ տարօրինակ չափազանցությունները: Չէ՞ որ Էնվեր փաշային իր փեսան՝ Ջևեթ բեյը, անկասկած իրազեկ էր դարձնում դեպքերին: Նրանք ուզում էին դեսպանությանն ապացուցել, որ ամեն ինչ դրված է խաղաքարտի վրա, որ կայսրության հետագա գոյությանը վտանգ է սպառնում հայերի խիստ վտանգավոր ապստամբության պատճառով:

Նրանք հասան իրենց նպատակին: Դեսպանությունը հավատաց դրան:

#### 4. ՀԱՄԱՏԱՐԱԾ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

1915թ. փետրվարին, Կովկասյան ճակատից վերադառնալուց հետո Էնվեր փաշան՝ ռազմական նախարարը և բուրքական բանակի գեներալ-լիսինուսը, պատասխանեց Կոնիայի եպիսկոպոսի ուղերձներից մեկին. «Շնորհակալ եմ ձեզանից ուղերձի համար և օգտվելով առիթից հայտնում եմ Ձեզ, որ օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն են կատարում իրենց պարտքը պատերազմական թատերաբեմում, դա ես կարող եմ հաստատել սեփական փորձից ելնելով: Խնդրում եմ իմ բավարարվածությունը և շնորհակալությունը հաղորդել հայ ազգությանը, որը հայտնի է իր կատարյալ նվիրվածությամբ կայսերական օսմանյան կառավարությանը»: Հայ պատրիարքի ներկայությամբ ևս Էնվեր փաշան «արտահայտեց իր առանձնահատուկ գոհունակությունը հայ զինվորներ»:

1 Վերջին հաշվով բուրքական երևակայությունը Վանի 18 սպանվածների թիվը հասցրեց 180000-ի: 1915թ. հոկտեմբերի 1-ին Բեռլինի բուրքական դեսպանությունում պատմում էին. «Մինչև այս տարվա գարունը հայերի և բուրքերի միջև կատարյալ լավ հարաբերություն էր տիրում: Դա առավել ևս բացատրելի է այն բանով, որ հայերը հեղափոխության ժամանակ համակրում էին կոմիտեին և նրա հետ միասին դուրս եկան հին ռեժիմի դեմ: Շրջադարձը սկսվեց ապրիլին, երբ պարսկական Աղբեջանի դեմ բուրքերի առաջխաղացման ժամանակ հայերը խռովություն բարձրացրին բուրքական բանակի թիկունքում, որի ընթացքում զոհվեցին 180000-ից ոչ պակաս մահմեդականներ: Ուստի զարմանալի չէ, որ մահմեդականները վրեժխնդի եղան»:

րի վարքի ու քաջության կապակցությամբ, որոնք գերազանց էին կո-  
վում»: Սակայն դեռևս այն ժամանակ ցուցադրաբար ավելացրեց, որ  
«արևելյան հայկական կենտրոններում ամենաչնչին պատահարի դեպ-  
քում կձեռնարկի դաժան միջոցառումներ»: Ինչպե՞ս պատահեց, որ ապ-  
րիլի 20-ից հայ ազգի նվիրվածության վերաբերյալ կարծիքն այդպես  
հանկարծակի փոխվեց: Վանի «ապստամբությունը» հայ ժողովրդի ճա-  
կատագրի ողբերգական պահն էր: Էնվեր փաշայի «դաժան միջոցառում-  
ների» համար հայտարարությունն արված էր:

Այս պահի արձանագրումով չի ասվում, թե ռազմական նախարարի  
թիկունքում կանգնած շարժիչ ուժերի բնաջնջման ցանկությունը չէր ա-  
ռաջացել դեռևս Վանի իրադարձություններից առաջ: Դեռևս 1911թ. հոկ-  
տեմբերին Սալոնիկում կայացած երիտթուրքական «Միություն և առա-  
ջադիմություն» կոմիտեի համաժողովում ազգայնամուլ պանիսլամական  
զաղափարախոսությունը՝ թուրքական ցեղերի միահեծանության և կայս-  
րության զարգացում գուտ իսլամական հիմունքների վրա, ընդունվել էր  
որպես կառավարական ծրագիր:

«Ուշ թե շուտ պետք է անցկացվի թուրքական բոլոր հպատակների լրիվ  
օսմանացում, սակայն պարզ է, որ համոզման միջոցով դրան հասնել երբեք  
հնարավոր չէ: Ուստի անհրաժեշտ է դիմել զենքի օգնությանը: Կայսրու-  
թյան բնույթը մահմեդական պետք է լինի, և մահմեդական կառույցներն ու  
ավանդույթները պետք է պատկառանքի արժանանան: Մյուս ազգություն-  
ներին պետք չէ կազմակերպության իրավունք տալ, քանի որ ապակենտ-  
րոնացումը և ինքնակառավարումը թուրքական կայսրությունում դավաճա-  
նություն է: Ազգությունները *quantité négligeable* (ուշադրության ոչ արժանի  
մի բան) են, նրանք կարող են պահպանել իրենց կրոնը, բայց ոչ իրենց լե-  
զուն: Թուրքերենի տարածումը մահմեդական գերիշխանությունը ապա-  
հովելու և մնացած տարրերին ներծուլելու կարևոր միջոցներից է»<sup>1</sup>:

Պատերազմի սկզբից ի վեր այս ծրագիրն ընկած էր բոլոր միջոցա-  
ռումների հիմքում: Զրիստոնյա ազգերի «ուայային» վերաբերվում էին որ-  
պես ենթակայության մի «հոտի», այն է՝ քրիստոնյա բնակչության համա-  
տարած զինաթափում, հայ զինվորների աստիճանագրկում, որոնք զենքի  
ուժով ետ բերվեցին բեռնակրության և ճանապարհաշինական աշխա-  
տանքներ կատարելու համար, հայ ծառայողների և բժիշկների ազատում

<sup>1</sup> Լեփսիոս, Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին: Պոտոսում, 1916, էջ 220:

գերատեսչական ծառայությունից ու զինվորական հիվանդանոցներից և  
այլն: Պանթուրքական այս ծրագիրը Վանի դեպքերից դեռ շատ օրեր ա-  
ռաջ գտնվում էր Կիլիկիայի և Էրզրումի վիլայեթի արտաքսումների և  
զանգվածային ձերբակալությունների հիմքում ու թելադրում էր իր բնաջ-  
նջման ռազմարշավը, որը Պարսկաստանի հյուսիսում 1914-15թթ. ճնա-  
նը առաջնորդեց թուրքական և քրդական ջոկատներին՝ Ուրմիայի և Սալ-  
մաստի ասորի և հայ խաղաղ բնակչության դեմ: Այդ ծրագիրն առաջ բե-  
րեց համընդհանուր հալածանք քրիստոնյաների դեմ Դիարբեքիլի և Մո-  
սուլի վիլայեթներում, որին առանց խտրականության զոհ գնացին յակո-  
բյանները, քաղկեդոնականները, նեստորականները և հայերը:

Առանց «Վանի ապստամբության» էլ այդ ծրագիրն անցկացվելու էր:  
Չէ որ այդ «ապստամբությունն» ընդամենը ինքնապաշտպանության  
գործողություն էր սպառնացող ջարդի դեմ, որը տարբեր տեղերում սկսվեց  
միաժամանակ, երբ Ջևդեթ բեյը հայ առաջնորդներին դավադրաբար  
սպանելով, ազդանշան տվեց, երբ Կիլիկիայում ևս արտաքսումը տարած-  
վեց այն բոլոր շրջանների վրա, որոնք պատերազմական ոլորտից դուրս  
էին գտնվում:

«Վանի ապստամբությունն» ընդամենը պատրվակ էր, որպեսզի կայս-  
րության ներսում թուրքացման վաղուց նախատեսված ծրագիրն արտասահ-  
մանին ներկայացվեր ռազմական անհրաժեշտության բողի տակ և հենց կո-  
միտեի ներսում ճնշվեր այդ ծրագրի անցկացման՝ առաջին հերթին հայ ժո-  
ղովրդի բնաջնջման արմատական ձևի դեմ ամեն տեսակի ընդդիմություն:

Թե Կոստանդնուպոլսում ում կողմից կատարվեց կառավարության  
վճռական շրջադարձը հայկական քաղաքականության հարցում՝ Էնվեր  
փաշայի՞ թե Թալեաթ բեյի, կամ երիտթուրքական կոմիտեի որոշմամբ,  
պարզ կլինի միայն այն ժամանակ, երբ ջրի երես ելնեն երիտթուրքական  
կառավարության ներքին գործերը<sup>1</sup>: Ինչպես երևում է, հենց կոմիտեի ներ-  
սում առաջացել էին հակասություններ արմատական և չափավոր խմբե-  
րի միջև, որոնք վիճարկվեցին ապրիլի 24-ից մինչև մայիսի 27-ը և վերջա-  
ցան արմատական խմբի հաղթանակով:

Այս պայքարի արդյունքը եղավ այն որոշումը, որը վճռեց հայ ժողովր-  
դի բախտը՝ համատարած տեղահանություն:

<sup>1</sup> Օգոստոսի 10-ին Ստամբուլում Էնվեր փաշայի հետ իմ ունեցած գրույցի ժամանակ նա հայ-  
տարարեց, որ իր վրա է վերցնում երկրի ներսում կատարվածի պատասխանատվությունը:

## II. ՀԱՄԱՏԱՐԱԾ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՉԵՐՔԱԿԱԼՈՒՄԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Ապրիլի 22-ին ներքին գործերի նախարարը հաստատեց Վանում բռնկված խռովությունների մասին գերմանական դեսպանությանը հասած լուրերը՝ խնդրելով առայժմ գաղտնի պահել դրանք: Կիրակի օրը՝ ապրիլի 25-ին, անակնկալի եկած Կ. Պոլիսը ինացավ, որ շաբաթ լույս կիրակի գիշերը ձերբակալվել են մայրաքաղաքի հայ հասարակության քաղաքական և հոգևոր գլուխները: Կիրակի լույս երկուշաբթի գիշերը կրկին սկսվեցին շուրջկալները: Մոտ 600 հայ մտավորականներ՝ ազգի ղեկավար այրեր, պատգամավորներ, կուսակցական առաջնորդներ, հրապարակախոսներ, հոգևորականներ, բժիշկներ հաջորդ օրերին առանց դատ ու դատաստանի բանտերից տեղափոխվեցին Փոքր Ասիայի խորքերը՝ Այաշ և Չանկըր<sup>1</sup>:

Ծրագրված մահափորձերի մասին լուրերը պատվում էին քաղաքով մեկ, սակայն կառավարությունը հերքում էր դրանք: Վանի դեպքերի մասին կրկին ոչինչ հայտնի չէր: Ապրիլի 29-ին Կ. Պոլսի բնակչությունից պահանջեցին հանձնել զենքերը, որը և կատարվեց առանց միջադեպերի:

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը իր թարգմանչի միջոցով պաշտոնապես տեղեկացրեց դեսպանությանը, որ «կառավարությունը վճռել է վերջ դնել մինչայժմյան վիճակին, երբ ամեն մի կրոնական միաբանություն իր «քաղաքականությունն» է վարում և բացի այդ կարող է հիմնել ու պահել հատուկ քաղաքական միություններ: Այսուհետև Թուրքիայում պետք է վարվի միայն «օսմանյան» քաղաքականություն: Այստեղի (Կ. Պոլսի) հայերի մեջ կային մի շարք քաղաքականապես ոչ լրիվ վստահելի անձինք: Նրանց, բնականաբար, պետք էր փնտրել ակունքներում և խմբագրություններում գործող անդամների մեջ: Չի կարելի չխոս-

<sup>1</sup> Չոհրապը՝ Կ. Պոլսի առաջին փաստաբանը, դաշնակցության հայտնի առաջնորդներ՝ Հայկունին և Վարդգեսը մի քիչ ուշ ձերբակալվեցին և նույնպես բերվեցին Այաշ, որտեղից Չոհրապին ու Վարդգեսին ուղարկեցին Դիարբեքի, ուր պետք էր ռազմական դատարանի առաջ կանգնեին:

տովանել այն անհանգստությունը, որ պատերազմի անհաջող շրջադարձի դեպքում այս տարրերն առիթը կօգտագործեին խռովություն հրահրելու համար: Պահը հարմար էր, որպեսզի այս բոլոր կասկածելի անձինք հեռացվեն մայրաքաղաքից: Անշուշտ, արտաքսվողների մեջ կային շատերը, որոնք ոչ մի մեղք չունեին: Դա կառավարությունը չի ժխտում, և ինքը՝ Թալեաթը, սեփական մախաձեռնությամբ և առանց միջամտության կարիք ունենալու, թույլ կտա այդպիսիների վերադարձը<sup>1</sup>:

Այդպիսով նախապես կանխվեց գերմանական կողմից որևէ միջամտություն: Օրինապահ և հարգված հայ մտավորականների դեմ մեղադրանքներ չներկայացվեցին: Նրանց մի մասը երիտթուրքերի մոտ ընկերներն էին (Չոհրապը հակահեղափոխության օրերին փրկել էր Խալիլ բեյի կյանքը): Ձերբակալումը բնորոշեցին որպես կանխման միջոցառում և խոստացան դատաքնության միջոցով հայտնաբերել կասկածելիներին:

Ձերբակալությունների ու Վանի իրադարձությունների միջև ոչ մի կապ չհաստատվեց: Հայ ազգի ոչնչացման ծրագիրը, որի առաջնորդ ու ժին՝ մտավորականությանը, գլխատեցին, մինչ մարմինը տանջամահ անելը, պետք է գաղտնի մնար, մինչև վերջանական համատարած բռնազաղթի պատրաստությունները: Ռուսական զորքերի մուտքը Վան կոտրեց կոմիտեում եղած վերջին դիմադրությունը: Կոմիտեի արմատական տարրերը ցնծում էին: Տեղահանության որոշումը տարածվեց Թուրքիայի ողջ հայ ազգաբնակչության վրա: Մայիսի 27-ին լույս տեսավ «Կասկածելի անձանց արտաքսման վերաբերյալ ժամանակավոր օրենքը»: 2-րդ հոդվածում ասվում է.

«Բանակների, զորագնդերի և դիվիզիաների հրամանատարները կարող են, ելնելով ռազմական նկատառումներից, տեղահանել և այլ վայրեր տեղափոխել քաղաքների և գյուղերի այն բնակչությանը, որոնց կասկածում են դավադրության կամ լրտեսության մեջ»:

Արտաքսման պատժամիջոցի համար մեղադրական ապացույցներ չէին պահանջվում: Բավական էր կասկածը: Այդպես էին գործում Կ. Պոլսում, այդպես՝ ողջ կայսրությունում:

<sup>1</sup> Մտավորապես 600 ձերբակալվածներից միայն 8-ն ազատ արձակվեցին, մնացածները անհետ կորան: Չոհրապը և Վարդգեսը մորթվեցին Դիարբեքիի ճանապարհին, Ուրֆայի մոտակայքում:



## 2. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թերևս խոսքն այն մասին չէր, որ գերմանական դեսպանությունից լրիվ քաթցվի այնպիսի մեծ նշանակություն ունեցող բան, ինչպիսին տեղահանությունն է: Վանի դեպքերի արտասովոր չափազանցումների ու խեղաթյուրումների, Բիթլիսում և Մուշում սկսված ապստամբությունների մասին չստուգված հաղորդումների, Էրզրումում ծրագրված դավադրության, կայսրության տարբեր վայրերում ռումբեր հայտնաբերելու և լրտեսական գործողությունների վերաբերյալ հաղորդումների միջոցով դեսպանատանն այնպիսի մթնոլորտ էր ստեղծված, որ վճռական միջոցառումներն արդարացի էին թվում: Մայիսի 18-ին Մոսուլից ստացված մի հեռագիր, որը հենց Վանի դեպքի հետ կապված հյուսիսատոս Հոլշտայնը ուղարկել էր դեսպանությանը, անշուշտ շփոթություն առաջացրեց: Քանի որ այն տեղեկացնում էր, թե ըստ Քոչանեսի նեստորական պատրիարքի և Մոսուլի բաղկեղտնական պատրիարքի նույն բովանդակությամբ հաղորդումների՝ «մոսուլմանները ծրագրել են համընդհանուր քրիստոնեական կոտորածներ և արդեն սկսել են իրագործել այն: Վալին ընդունում է փաստը, և թվում է, որ եթե ուղղակիորեն չի գրգռում շարժումը, ապա նաև բավականաչափ ջանադրությամբ չի զսպում այն»: Սակայն այստեղ խոսքը ոչ թե հայերի, այլ նեստորականների, յակոբյանների և ասորիների մասին էր:

Մայիսի 31-ին Գերմանիայի դեսպանը հեռագրեց արտաքին գործերի գերատեսչությանը. «Հայերի լրտեսական գործողությունները սահմանափակելու և նոր հայկական զանգվածային խռովությունների առաջն առնելու համար Էնվեր փաշան մտադրվել է, օգտվելով պատերազմական (բացառիկ) իրավիճակից, փակել մեծ թվով հայկական դպրոցներ, արգելել հայերեն փոստային թղթակցությունը, ճնշում գործադրել հայկական թերթերի վրա և ներկայումս ապստամբող հայկական կենտրոններից Միջագետք արքայի բոլոր ոչ լրիվ անբասիր ընտանիքներին: Նա թախանձագին խնդրում է, որ մենք այս գործում չխանգարենք նրան»:

Դեսպանին ուղղված Էնվեր փաշայի հաղորդմանը բնորոշ է դպրոցների, փոստային թղթակցությունների և հայկական թերթերի առաջնային լինելը գլխավոր խնդրից՝ տեղահանումների մասին հաղորդումից: Առարկությունների առաջն առնելու համար միջոցառումները սահմանափակ-

վում են «ոչ լրիվ անբասիր ընտանիքներով» և «ներկայումս ապստամբող հայկական կենտրոններով»:

Ո՞ր կենտրոններն էին այն ժամանակ ապստամբում:

Ձեյթունում դասալիքների հետ կապված խարդախ գործը և Դյոթթյուլի լրտեսական գործողությունները կարգի բերվեցին Ձեյթունի և Դյոթթյուլի բնակչության տեղահանման միջոցով: Բիթլիսի և Մուշի խռովությունները ճնշվեցին իշխանությունների միջոցով պատգամավոր Փափազյանի օգնությամբ, որի մասին դեսպանությունը տեղյակ չէր: Առանձին հավաստի կամ ոչ հավաստի ռումբեր գտնելը թուրքական գերատեսչության արդեն հայտնի միջոցն էր այդպիսի առիթների համար: Էրզրումի վալին կարծում էր, թե ունի իր ձեռքում հայերի դավաճանության փաստեր, չնայած գեներալ Փոսելդի վկայությամբ՝ «հայերի վարքն անբասիր էր» և ըստ հյուսիսատոս ֆոն Շոյբներ-Ռիխտերի՝ «ապստամբություն չէր սպասվում»: Դրան հակառակ, «Վանի ապստամբությունը» ներկայացվում էր որպես «զանգվածների խռովություն» և լուրջ վտանգ ռազմական գործողությունների համար:

«Ոչ անբասիր ընտանիքների» մասնակի տեղահանությունների միջոցառումները, ըստ եղած հաղորդումների, կարող էին ընդգրկել միայն Կովկասյան ճակատին մոտ գտնվող արևելյան վիլայեթները, ուր, ըստ թուրքական հաղորդագրությունների, Վանում, Շատախում, Բիթլիսում և Մուշում գտնվում էին «ապստամբող կենտրոնները»: Քանի որ դեռևս 1914թ. ամռանը հաղորդվել էր Բիթլիսի և Մուշի քրդական ապստամբություններին Ռուսաստանի մասնակցության մասին, Բ. Դռան կողմից «Ռուսաստանի կողմից սնուցվող խառնակիչ աշխատանքի» վերաբերյալ պնդումը որոշ հավանականություն ուներ<sup>1</sup>: Իրական դեպքերի մասին ոչ լիարժեք տեղեկատվության առկայությամբ «ապստամբող կենտրոններում» նախագուշակական միջոցառումների ձեռնարկումը ռազմական տեսակետից ճիշտ էր թվում: Այսպիսով, դեսպանը ոչ մի հիմք չէր տեսնում Էնվեր փաշայի հայտարարած միջոցառումներին հակառակվելու և դրանք հենց իր՝ Էնվեր փաշայի որոշած սահմաններում («ոչ լրիվ անբասիր ընտանիքներ», «ապստամբող կենտրոններ», «արտաքսումը Միջագետք») համարվում էր հիմնավորված: Նա մտածում էր, որ ինքը պետք է սահմանափակ-

<sup>1</sup> Իրականում Վանի հայերը ոչ մի կապ չունեին Ռուսաստանի հետ: Ոչ էլ Կիլիկիայի ապստամբությունները առաջացել էին «անցիլիական փողով»: «Նման ոչ մի հետք ես... չկարողացա բացահայտել» (հյուսիսատոս Ռյուսլեր, Հալեպ, 1915թ. ապրիլի 12):

վի արտաքսման ձևի վրա ազդելով՝ դրանք մեղմացնելու համար, և Տրապիզոնի, Էրզրումի, Աղանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի (որոնցից հյուսիսում գտնվողները նկատի էին առնվել որպես ելման կետ, իսկ հարավում գտնվողները՝ արտաքսման նպատակակետ) հյուսիսատուրքյուններից տեղեկացնում էր, որ նրանք հետևեն միջոցառումների կարգապահ կատարմանը: Այն փորձությունները, որոնց ենթարկել էին չերքեզ և բուլղար տարագիրներին, պետք է որ դեսպանին դաս լինեին, թե ինչեր կարող էին տեղի ունենալ այսպիսի «վերաբնակեցումների» ժամանակ: Սակայն, ինչպես երևում է, նա այդ մասին պարզ պատկերացում չուներ: Բերայում ճանաչում են Թուրքիայի միայն եվրոպական, քայց ոչ ասիական դեմքը: Մինչ այդ Կիլիկիայում և Արևելյան Անատոլիայում ջարդեր տեղի չէին ունեցել: Մայիսի 15-ին գերմանացի հյուսիսատուրք հաղորդեց Էրզրումից. «Այստեղ հազիվ թե կոտորածներ սկսվեն, որովհետև ճակատում կրած անհաջողություններից հետո թուրքական զորամասերը մահանջելու են Էրզրում»: Երբ դեսպանությունը առարկություններ արեց Էրզրումի վիլայեթում կանանց և երեխաների արտաքսման միջոցառումների դեմ, Թալեաթ բեյը հանգստացրեց նրան ասելով, որ «հայերը արտաքսումների շնորհիվ պահպանվում են ավելի վատթարից՝ կոտորածներից, և որ կառավարությունը արտաքսվածներին նոր բնակարաններ կհատկացնի և կօգնի նրանց»: Նման խոստումներն այն ժամանակ դեռ լուրջ էին ընդունվում:

### 3. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Շատ շուտով պարզվեց, որ հյուսիսատուրքներն ավելի ճիշտ էին մեկնաբանում տեղահանությունը, քան դեսպանությունը:

Հունիսի 3-ին Էրզրումի փոխհյուսիսատուրք ֆոն Շոյբներ-Ռիխտերը կանխագուշակեց տեղահանության միջոցառումներից սպասվելիք ներգործությունը: «Հայ բնակչությունը բոլոր դաշտավայրերից, ըստ երևույթին՝ նաև Էրզրումից, պետք է աքսորվի Դեյր էլ Չորի ուղղությամբ (Արաբական անապատներ): Այս մեծ ծավալի աքսորը հավասարազոր է կոտորածների, քանի որ փոխադրական միջոցների բացակայության պատճառով հազիվ թե կեսը հասնի իր նշանակման վայրը: Այն իր հետևից կբերի ոչ միայն հայերի, այլև ողջ երկրի քայքայում»:

Մեկ շաբաթ անց ահավոր լուրեր հասան Դիարբեքիից: Հունիսի 10-

ին հյուսիսատուրք Հուլտայնը հեռագրեց.

«Դիարբեքիից Մոսուլ աքսորված 614 հայ՝ ծերունիներ, կանայք և երեխաներ, լաստանավերով բերելիս լրիվ մորթվել են: Երեկ լաստերը այստեղ հասան դատարկ: Մի քանի օր է գետով դիակներ ու մարդկային մարմնի մասեր են լողում: Հայ «վերաբնակիչների» փոխադրումները շարունակվում են: Նրանց նույն ճակատագիրն է սպասվում: Ես այստեղի կառավարական շրջաններին հայտնեցի իմ խորագույն մողկանքն այս ոճրագործության կապակցությամբ: Վալին այդ առթիվ հայտնեց իր ցավակցությունը՝ միաժամանակ նշելով, որ դրա համար պատասխանատու է միայն Դիարբեքիի վալին»:

Հունիսի 12-ին հյուսիսատուրք Ռյուսերը Հալեպից հաղորդում է.

«Այստեղ գտնվող Սսի կաթողիկոսը հայտնեց, որ մինչև հիմա աքսորված հայերի թիվը անցնում է 30000-ից: Չեյթունը և նրա շրջակայքը, այնուհետև Ալաբաշը, Ալբիստանը, Դյորթյուլը, Հասան Բեյլին լրիվ դատարկվել են: Արտաքսված են ոչ միայն «ոչ լրիվ անբասիր» թվացող ընտանիքները, այլև ողջ բնակչությունը, անգամ զինվորական ծառայության մեջ գտնվողների ընտանիքները... Այսպիսով, կառավարությունը անհրաժեշտ նախագուշակական միջոցառումների նպատակից շատ ավելի հեռու է գնում»:

Հունիսի 18-ին ֆոն Շոյբներ-Ռիխտերը Էրզրումից հաղորդում է առաջին կոտորածների մասին.

«Տեղահանված հայերը ոչնչացվել են Երզնկայից Խարբեթը տանող ճանապարհին»: Ինչպես հետագայում հայտնի դարձավ, խոսքը քրդերի և 86-րդ հեծելազորի կառավարական զորքերի՝ իրենց սպաների դեկավարությամբ իրագործած հունիսի 10-ից մինչև 14-ը 20000-25000 տարագիրների ջարդի մասին էր, համարյա միայն կանայք և երեխաներ: Ջարդը տեղի էր ունեցել Կամախի կիրճում, որը գտնվում էր Երզնկա կայազորական քաղաքից՝ 3-րդ զորագնդի հրամանատարության նստավայրից, 12 ժամվա հեռավորության վրա:

Դեսպանը հեռագրում է հյուսիսատուրքին (հունիսի 21-ին).

«Թախանձագին վալիին ներկայացնել, որ այսպիսի ամոթալի դեպքերը վնասում են կառավարության վարկին չեզոք արտասահմանում և Թուրքիայի բարեկամների մոտ և հեղինակագրվում իշխանություններին երկրի ներսում... Տեղական իշխանությունների պարտքն է՝ բոլոր միջոցներով արգելել նման դեպքերը, եթե չեն ուզում ծանր պատասխանատվություն վերցնել իրենց վրա»:

Նույն ձևով դեսպանը առարկեց Բ. Դռան առաջ: Կիլիկիայի զանգվա-

ծային տեղահանումների մասին ևս դեսպանը խոսք բացեց ներքին գործերի նախարարի մոտ: Այդ քայլի անցանկալի արդյունքը եղավ այն, որ գործից ազատվեց Հալեպի վալի Ջելալ բեյը, միակ վալին, որն իր վիլայեթում հաջողությամբ դիմադրում էր կառավարության միջոցառումներին: Հյուպատոսների բողոքարկումները նույնպես մնացին անհետևանք կամ ունեցան հակառակ արդյունքը:

Մինչև հունիսի վերջերը կարող էր դեռևս այնպես թվալ, թե միջոցառումները կասեցնան և վերջին ռազմավարական տեսակետից վտանգավոր մերձազանգակատային մարզերով (Կիլիկիա, Էրզրում): Հուլիսի վերջերին կառավարությունը բողոքներում է իրեն: Մեծ թափով սկսվում են զանգվածային տեղահանումները Արևելյան Անատոլիայի բոլոր վիլայեթներից, ինչպես նաև միջին գավառներից (դրանք ընկած էին պատերազմական բառերաբեմից հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա): Տեղահանումներն առանց բացառության ուղեկցվում են ողջ ունեցվածքի բռնագրավմամբ, արական սեռի բնակչության սպանությամբ և երիտասարդ կանանց ու աղջիկների առևանգումով: Այժմ ոչ մի կասկած չկար, որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության համար կատարվող միջոցառումների, այլ ողջ հայ ժողովրդի ծրագրված բնաջնջման մասին է: Հարվածը հետևում է հարվածին.

Հունիսի 14-ից մինչև հուլիսի 15-ը՝ հայերի տեղահանումը Էրզրումից:

Հունիսի 24-ին՝ հայերի տեղահանումը Շապին-Գարահիսարից:

Հունիսի 25-ին՝ տեղահանումներ Սերաստիայից:

Հունիսի 26-ին՝ տեղահանումներ Մամուրեթ ու Ազիզից (Խարբերդ):

Հունիսի 26-ին՝ տեղահանումներ Տրապիզոնից:

Հունիսի 26-ին՝ տեղահանումներ Էրզրումից:

Հունիսի 27-ին՝ տեղահանումներ Մամսունից:

Հունիսի 1-ին՝ կոտորածներ Նիսիքին թել Էրմենում (հայեր և ասորիներ):

Հունիսի 1-ին՝ կոտորածներ Բիթլիսում:

Հունիսի 10-ին՝ կոտորածներ Մուշում:

Հունիսի 15-ին՝ կոտորածներ Մալաթիայում:

Հունիսի 27-ին՝ տեղահանումներ Կիլիկիայից և Անտիոքի ծովափնյա շրջաններից:

Հունիսի 28-ին՝ տեղահանումներ Այնթապից, Քիլիսից և Ադյամանից:

Հունիսի 30-ին՝ տեղահանումներ Սվեդիայից:

Օգոստոսի 12-19-ին՝ տեղահանումներ Արևմտյան Անատոլիայից (Իզմիր, Բաղչեջիկ, Բրուսա, Ադաքազար և այլն):

Օգոստոսի 16-ին՝ տեղահանումներ Մարաշից:

Օգոստոսի 16-ին՝ տեղահանումներ Կոնիայից:

Օգոստոսի 19-ին՝ կոտորածներ Ուրֆայում:

Ես այստեղ բերում եմ միայն զլխավոր վայրերը այն ամսաթվերով, որոնք հաղորդվել են հյուպատոսների կողմից: Սակայն արտաքսումներ տեղի ունեցան ոչ միայն այս վայրերից: Արտաքսվեց Արևելյան և Արևմտյան Անատոլիայի, Կիլիկիայի և Միջագետքի (բացառությամբ Կ. Պոլսի, Չմյուռնիայի և Հալեպի) քաղաքների և գյուղերի ողջ հայ ազգաբնակչությունը, ընդհանուր առմամբ 1400000 հայ՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ:

Որպես կանոն՝ տեղահանման մասին հայտնում էին միայն մի քանի ժամ առաջ: Տեղահանվողները պետք է թողնեին ողջ ունեցվածքը, տները, հողերը, անասունները, տնային կահ-կարասիքը, գործիքները: Տեղահանումը միաժամանակ հայ ժողովրդի ունեցվածքի համատարած բռնագրավման միջոցառում էր: Եթե անգամ որևէ տեղ թույլ էր տրվում հետները վերցնել սայլակներ կամ բեռնակիր անասուններ, դրանք գաղթականներից ճանապարհին խլում էին ուղեկցող ժանդարմները: Խլում էին նաև փողերը, զարդեղենները և այն ամենը, ինչ դեռ կար տեղահանվածների մոտ: Տղամարդկանց առանձնացնում էին կանանցից ու երեխաներից, մի կողմ տանում և սպանում: Երիտասարդ կանանց և աղջիկներին, ինչպես նաև երեխաներին, քշում էին հարեմները և վաճառում քրդական գյուղերում: Նրանք, ովքեր ամիսներ շարունակ քայլելուց հետո հասնում էին արքորավայր՝ Արաբական անապատի եզերքը, քրջոտ, սովալլուկ, խիստ աղքատ մարդիկ էին, մեծամասամբ միայն ծերունիներ, հասակավոր կանայք և երեխաներ:

Օգոստոսի 31-ին Թալեաթ փաշան գերմանական դեսպանի տեղակալ իշխան Հոհենլոխե-Լանգենբուրգին՝ հայտարարում է. «Հայկական հարց այլևս գոյություն չունի»:

#### 4. ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՉԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ ԵՎ ԴՌԱՆ ԱՌԱՋ

Ի՞նչ արեցին գերմանացի դեսպաններն աղետը վանելու և դրա կործանարար հետևանքները կանխելու համար:

«Ոչ լրիվ անբասիր ընտանիքներին» «ապստամբող կենտրոններից»

1 Բարոն Ֆոն Վանգենհայնը հիվանդացել էր և հուլիսի 20-ին արձակուրդի էր մեկնել Գերմանիա:

տեղահանման հաղորդագրությունը սխալ պատկերացում առաջացրեց գերմանական դեսպանության մոտ կոմիտեի որոշման բնույթի և նշանակության մասին: Խոսքը ոչ թե «քնտանիքների», այլ ողջ հայ ժողովրդի մասին էր, ոչ թե «ապստամբ կենտրոնների», այլ ողջ Անատոլիայի և Միջագետքի մասին: Երկրի մինչև ամենախորքի գավառները, յուրաքանչյուր քաղաք ու գյուղ, որտեղ հայեր էին ապրում՝ «ապստամբ» էին հայտարարված, չնայած տեղահանության ողջ շրջանում այն ժամանակվանից, ինչ Վանը ռուսների ձեռքում էր, ընդհանրապես ոչ մի «ապստամբություն» տեղի չէր ունեցել: Սակայն ըստ մայիսի 27-ի ժամանակավոր օրենքի, միայն «կասկածը» բավական էր, որ արքայազնի պատճառ դառնար:

Հյուպատոսության հաղորդումներից երևում է, որ հայերի արքայազնի մի դեպքում չէր պատճառարանվում միայն ռազմական անիրաժեշտությամբ: Հայոց պատրիարքը դեսպանությունում այն միտքն է արտահայտել, որ «Բ. Դռան միջոցառումների նպատակը ոչ թե հայ ազգաբնակչության ժամանակավոր անվտանգության ապահովումն է, այլ նրա բնաջնջումը»: Այո, արտաքին գործերի նախարար Թալեաթ բեյը դեսպանության ներկայացուցիչներից մեկի ներկայությամբ այն միտքն է արտահայտել, որ «Բ. Դռուը ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի հիմնովին ոչնչացնի իր ներքին թշնամիներին (տեղական քրիստոնյաներին)՝ առանց դիվանագիտական միջամտություն հարուցելու արտասահմանից»:

Այն տարածված կարծիքը, թե գերմանական կառավարությունը որոշակի ազդեցություն ուներ Թուրքիայի ներքին քաղաքականության վրա, Թալեաթ բեյը չէր բաժանում: Նա շատ լավ գիտեր, որ Գերմանիան, մինչև Բուլղարիայի պատերազմի մեջ մտնելը (1915թ. հոկտեմբերի 5-ը), Թուրքիայում ոչ մի հարկադրանքի միջոց չուներ, որպեսզի հաշվի առնեին նրա միջամտությունը: Մինչև գործը այդտեղ կհասներ, Բ. Դռուը հույս ուներ վերջ դնել «Հայկական հարցին»: Գերմանացի սպաները և գորախմբերը, որոնք ապրիլին գտնվում էին Թուրքիայում, չափազանց քիչ էին՝ 75 սպա և 150 զինվոր, զինվորական արհեստավորները չհաշված: Քանի դեռ Բուլղարիայի չեզոքության պատճառով կենտրոնական Եվրոպայի երկրներին և Թուրքիայի միջև կապը անհնար էր, Թուրքիայում գերմանական ջոկատների ամրացման և քրիստոնյա հավատակիցներին պաշտպանելու մասին ընդհանրապես խոսք լինել չէր կարող: Միայն 1915թ. հոկտեմբերից մեծ թվով զինվորական ջոկատներ մտցվեցին Թուր-

քիա՝ հիմնականում Դարդանելը պաշտպանելու նպատակով: Անատոլիայի ներսում, չհաշված առանձին սպաների, որոնք կցված էին բուրբակյան գլխավոր հրամանատարություններին, ընդհանրապես ոչ մի գերմանական ջոկատ չկար: Մինչև Բուլղարիայի պատերազմի մեջ մտնելը Գերմանիայի ազդեցությունը բուրբակյան կառավարության վրա շատ դժվարին բնույթ էր կրում նաև այլ պատճառով:

Բ. Դռուը հիասթափվել էր գերմանական օգնության սպասումներից և ստիպված էր ամիսներ շարունակ մեծակ դիմանալ դարդանելյան փոթորիկների մղձավանջին: Անգամ ճգնաժամային իրավիճակներում Գերմանիան չկարողացավ բավարար չափով ռազմամթերք մատակարարել: Ուստի Բ. Դռուը ոչ մի դեպքում իրեն պարտական չէր զգում Գերմանիայի նակտմամբ և ամեն առիթով զգացնել էր տալիս կենտրոնական Եվրոպայի երկրներին, որ ինքն ամենաշատ զոհերն է տվել դաշնակիցների համար՝ առանց փոխհատուցում ստանալու, ուստի թույլ չի տա, որ որևէ մեկը խառնվի իր ներքին գործերին:

Գերմանացի դեսպան բարոն Ֆոն Վանգենհայմը հունիսին բավարարվեց այնքանով, որ երկրի խորքերից ստացվող հաղորդագրությունները տեղեկացվեն Բ. Դռանը, և հանձնարարեց գերմանական հյուպատոսներին՝ համառորեն առարկություններ անել գավառների կառավարիչներին և գլխավոր հրամանատարներին, որպեսզի վերջ տրվեն խայտառակ գործողություններին: Երբ հունիսի վերջին և հուլիսի սկզբներին վիլայեթներից տեղահանությունների մասին հաղորդումները շատացան և ակնառու դարձավ, որ դրանք բոլորովին էլ ռազմական բնույթի պատճառարանություններով հիմնավորված տեղական սահմանային արտաքսումներ չեն, այլ բնաջնջման միջոցառումներ, դեսպանը մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային հանձնեց հուլիսի 4-ի հուշագիրը: Պատճենները ուղարկվեցին արտաքին և ներքին գործերի նախարարներին: Ռայխսկանցլերին ուղարկված հուլիսի 7-ի գեկուցագիրը հիմնավորեց այդ քայլը: Հուշագրում դեսպանը կրկին իր համաձայնությունն է արտահայտում Արևելյան Անատոլիայի գավառներում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ, «որոնք թելադրված են ռազմական բնույթի պատճառներով և օրինական պաշտպանության միջոց են»: Այնուհետև շարունակում է.

«Մյուս կողմից գերմանական կառավարությունը չի կարող թաքցնել այն վտանգը, որը ստեղծվում է այս միջոցառումների, առանձնապես զանգվածային տեղահանությունների պատճառով, որին ենթակա են թե՛

մեղավորները և թե՛ անմեղները, դրան ավելացրած, որ այս միջոցառումներն ուղեկցվում են բռնություններով՝ կոտորածներ ու քալան: Դժբախտաբար ըստ դեսպանությանը հասած տեղեկությունների՝ տեղական իշխանությունները ի վիճակի չեն եղել մման միջադեպերը կասեցնել, որը շատ ցավալի է: Թշնամի ուժերը կօգտվեն այս հանգամանքից՝ հայերի շրջանում ազիտացիա տանելու համար, իսկ արտասահմանում տարածվող լուրերը չեն պակասի, որպեսզի մեծ հուզում առաջացնեն չեզոք երկրներում, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, որի ներկայացուցիչները որոշ ժամանակից ի վեր սկսել են հետաքրքրվել Թուրքիայի հայերի ճակատագրով»:

Այնուհետև Բ. Դռան ուշադրությունը հրավիրվում է այն բանի վրա, որ այդ գործելակերպը կարող է հասցնել սեփական վնասի.

«Պետք է կանխատեսել, որ հաշտության պայմանագիր կնքելուց հետո Հայկական հարցը կրկին առիթ կձառայի օտար տերությունների համար, որպեսզի խառնվեն Թուրքիայի ներքին գործերին: Դեսպանությունը անհրաժեշտություն է գտնում, որ գավառական իշխանություններին պետք է շտապ պարտադրիչ հրամաններ ուղարկել, որպեսզի միջոցներ ձեռնարկեն արտաքսվող հայերի կյանքն ու ունեցվածքը, ինչպես փոխադրման ընթացքում, այնպես էլ նոր բնակավայրերում, ապահովելու համար»:

Հուլիսի 4-ի հուշագրի պատասխանը դեսպանությունը ստացավ միայն դեկտեմբերի 22-ին:

Հետագայում դեսպանությունը շարունակեց Բ. Դռանը քննարկման դնել երկրի բոլոր ներքին իրադարձությունները, որոնց մասին տեղեկանում էր և, անկասկած, իր նոր առարկություններում պախարակում էր շարունակվող բռնությունները: Գերմանիայի քրիստոնեական շրջաններում աճող անհանգստությունը, չեզոք երկրների հուզումը, թշնամական տերությունների բողոքները, կանխատեսվող հետևանքների պատճառով Թուրքիայի տնտեսության քայքայումը, աննպաստ պայմանները, որոնք ստեղծվում էին հաշտության բանակցությունների համար, սրանք այն մշտական թեմաներն էին, որոնցով գերմանացի դեսպանները փորձում էին թե՛ բանավոր, թե՛ գրավոր ձևով ազդել մեծ վեզիրի և նախարարների վրա: Սակայն այդ ամենը ապարդյուն խոսքեր էին:

Հուլիսի 16-ին, մեկնելուց առաջ, պարոն ֆոն Վանգենհայմը հիասթափված գրում է ռայխսկանցլերին. «Չնայած մեր կրկնվող համառ բողոքարկումներին, Բ. Դռուը շարունակում է տեղահանել հայերին և անբնակ վայրեր աքսորելու միջոցով նրանց մատնում է ոչնչացման: Այդ գործում

մենք չենք կարող նրան խանգարել և ստիպված ենք նրա վրա թողնել այս միջոցառումների տնտեսական ու քաղաքական հետևանքների պատասխանատվությունը»:

Իշխան Հոհենլոհեն-Լանգենբուրգը, որը Կոստանդնուպոլիս էր ուղարկվել՝ փոխարինելու դեսպանին, հեղինակավոր մարդկանց հետ անմիջապես ձեռնարկած անձնական զրույցների ժամանակ նույն բացասական արդյունքին է հասնում: Սայիդ Հալիմ փաշան, Թալեաթ բեյը, Էնվեր փաշան և Խալիլ բեյը իրենց բոլոր արտահայտություններում անդդվելիորեն քողարկվում էին ինքնիշխանության իրավունքով, այն է՝ կապիտուլյացիայի վերացումից հետո ոչ մի օտար պետության, այդ թվում՝ նաև Գերմանիային, թույլ չեն տա խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Միաժամանակ նրանք դիմում են ուրացումների, խորամանկությունների և անորոշ խոստումների օգնությամբ:

«Կառավարության որոշման դեմ մեր բոլոր բողոքարկումները, որպեսզի ձեռք չտան արևելյան գավառների տեղացի քրիստոնյաներին, ազդեցություն չունեցան», - այսպես է ամփոփում իր բոլոր ջանքերի արդյունքը իշխան Հոհենլոհեն (2 օգոստոսի):

Որպեսզի ավելի ուժեղ ազդեցություն գործի Բ. Դռան վրա, նա վերջինին է հանձնում օգոստոսի 9-ի հուշագիրը:

Այդ մասին Հոհենլոհեն գրում է ռայխսկանցլերին (12 օգոստոսի).

«Իրենց բնակավայրերից արտաքսված հայ ազգաբնակչության պարբերական ջարդերն այնպիսի չափերի են հասել, որ անհրաժեշտ է մեր կողմից կրկին կտրուկ բողոքներ ներկայացնել այդ վայրերի գործողության դեմ, որը կառավարությունը ոչ միայն հանդուրժում է, այլ բացեիբաց աջակցում, մանավանդ որ տարբեր տեղերում այլ ցեղերի ու դավանանքների քրիստոնյաները այլևս չեն խնայվում»:

Միաժամանակ դեսպանը խնդրում է իր քայլերը պաշտպանելու համար Բեռլինի Օտոմանյան կայսրության նոր դեսպանի ուշադրությունը հրավիրել նրա կառավարության հակահայկական քաղաքականության հետևանքների և այդ գործում գերմանական տեսակետի վրա:

Օգոստոսի 9-ի հուշագիրը սկզբում հիշեցնում է հուլիսի 4-ի (Բ. Դռան կողմից անպատասխան թողնված) հուշագրի մասին: Այնուհետև Հոհենլոհեն շարունակում է.

«Գերմանական դեսպանությունը ցավում է, որ անկողմնակալ և հավաստի աղբյուրներից ստացած տեղեկություններից հետո ստիպված է

հաստատել, որ այդպիսի դեպքերը (բռնությունները, ջարդերը, քաղաքի տեղական իշխանությունների կողմից արգելվելու փոխարեն կանոնավոր շարունակվում են, և հայերի տեղահանությունն անց է կացվում այնպես, որ նրանց մեծ մասը մահանում է մինչև նշանակման վայր հասնելը: Այս փաստերը հիմնականում հաղորդվել են Տրապիզոնի, Դիարբեքիի և Էրզրումի գավառներից: Որոշ տեղերում, ինչպես Մարդինում, բոլոր քրիստոնյաները, առանց ցեղի ու դավանանքի խտրության, նույն ճակատագրին են արժանացել:

Կայսերական օտոմանյան կառավարությունը միաժամանակ անհրաժեշտ է համարել, որ տեղահանության այս միջոցառումը տարածվի Փոքր Ասիայի մյուս գավառների վրա: Ամենավերջում մայրաքաղաքի մոտակայքում գտնվող Իզմիրի շրջանի հայկական գյուղերը նույն ձևով դատարկվել են իրենց բնակիչներից:

Նկատի ունենալով այս իրադարձությունները, գերմանական դեսպանությունը իր կառավարության հանձնարարությամբ ստիպված է մի անգամ ևս բողոքարկել այս սարսափելի գործողությունների դեմ և բացարկել բոլոր հետևանքների պատասխանատվությունը, որոնք կարող են բխել դրանից:

Նա անհրաժեշտ է համարում օտոմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այս կետի վրա, քանի որ հասարակական կարծիքը հասել է այն համոզմանը, թե Գերմանիան, որպես Թուրքիայի բարեկամ և դաշնակից կառավարություն, հավանություն է տալիս այս բռնություններին և նույնիսկ խրախուսում այդ գործողությունները»:

Այս երկրորդ հուշագիրը ևս Բ. Դուռը անպատասխան թողեց:

Չնայած դրան, դեսպանությունը շարունակեց իր առարկությունները: Այսպես՝ նա կրկին բարեխոսեց այն կաթոլիկ և բողոքական հայերի համար, որոնց Բ. Դուռը, հաշվի առնելով Պապի և ամերիկյան դեսպանների համառ առարկությունները, խոստացել էր իրենց բնակավայրերում մնալու արտոնություն տալ, սակայն հետագայում հրաժարվել էր իր խոստումից: Այս քայլերը նույնպես անհետևանք մնացին: Նույնիսկ օտոմանյան բանակի ծառայողների, ծխախոտի մշակման գործով զբաղվողների, միայնակ կանանց և երեխաների, հղի կանանց, հիվանդների, կույրերի, զինձառայողների ընտանիքների և առանձին մարդկանց համար բացառություն անելու դեսպանության դիմումը մերժվեց:

Միայն սեպտեմբերի 2-ին, թվում է, դեսպանի անխոնջ քայլերն ազդե-

ցին Թալեաթ բեյի վրա: Նա իրար ետևից հրաման-հեռագրեր է ուղարկում գավառական իշխանություններին՝ այդ ձևով ցանկանալով ապացուցել, թե իբր կենտրոնական իշխանությունը մտահոգված է, որ վերջ տրվեն անկարգություններին և հոգ տարվի արտաքսվածներին կերակրելու համար: Դեսպանությունը կառավարության հրամանների մասին տեղյակ է պահում հյուպատոսներին:

Մի շաբաթ հետո տեղահանման շրջանների հյուպատոսներից իրար հետևից հաղորդումներ են ստացվում: Մոսուլից (սեպտեմբերի 9-ին), Հալեպից (սեպտեմբերի 9-ին և 12-ին), Ադանայից (սեպտեմբերի 10-ին և 13-ին) տեղեկացնում են՝ Բ. Դուռն կողմից վիլայեթներն ուղարկված հրամանները մնացել են անհետևանք, տեղահանումները շարունակվում են, սովյալների թիվը մեծանում է, միջոցառումները, անգամ այրի կանանց, որբերի, հիվանդների, կույրերի և զինվորականների ընտանիքների հանդեպ, ավելի են խստացել: Բ. Դուռն կողմից տեղահանման ապահովման համար Կիլիկիա ուղարկված տեսուչ Ալի Մունիֆ բեյը, միջոցառումները մեղմացնելու փոխարեն, վերացնում է եղած արտոնությունները: Հյուպատոս դոկտոր Բյուզեն Ադանայից գրում է. «Իշխանություններն, իհարկե, գործում են ըստ երկրորդ ցուցմունքի և շարունակում են տեղահանությունը՝ առանց դավանանքի տարբերության: Բ. Դուռն կողմից կայգերական դեսպանությանը տրված հաղորդումը սուկ մի անպատկառ խաբեություն է»:

Խոստումների խաղը կրկին վերականգնվում է: Տրվում են խոստումներ, սահմանափակվում, նորոգվում, կրկին ետ վերցվում, կրկին նորոգվում: Խոստումները երբեք չեն կատարվում: Դեսպանությունը շարունակում է իրար հետևից դիվանագիտական քայլեր ձեռնարկել՝ Կ. Պոլսի հայերին սպառնացող արքայի առաջն առնելու համար, որոնք հազարներով արդեն գաղտնի հեռացվել էին քաղաքից: Ըստ ընդհանուր տեղահանության ցուցակի՝ Կ. Պոլսից պատրաստվում էին արքայի 70000 մարդ:

Դեկտեմբերին ժամանած նոր դեսպան կոմս Վոլֆ Մետերնիխսն անմիջապես ձեռնամուխ է լինում բանակցությունների: Նա սկզբում Էնվեր փաշայի, Խալիլ բեյի, Ջեմալ փաշայի, այնուհետև մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի հետ քննարկում է «հայկական հալածանքները»: Նա նշում է, «որ անհանգստությունն ու վրդովմունքը ընդգրկել են նաև բարեկամացած արտասահմանի և Գերմանիայի լայն շրջանները, և եթե վերջ չդրվի այս ամենին, ի վերջո բոլորը երես կթեքեն թուրքական կառավարությու-

նից»։ Իր քայլերի հաջողության մասին դեկտեմբերի 9-ին կոմս Վուլֆ Մե-տերնիխը գրում է ուսյասկանցիներին.

«Վուզենայի հավատալ, որ իմ առարկությունները լրիվ իզուր չէին... Ջեմալ փաշան, որը նույնպես այն թուրքերի թվին է պատկանում, որոնք ամաչում են, մինչև հիմա կոմիտեում հանդիպել է դիմադրության, երբ փորձել է անցկացնել իր ցանկությունները։ Ինչպես հաղորդեց նրա շտաբի պետը՝ գնդապետ Կրեսը, վերջերս նրանք չեն դիմադրում Ջեմալ փաշային։ Դա նա վերագրում է իմ միջամտությանը»։

Գեկտեմբերի 18-ին դեսպանը գրույց է ունենում Թալեաթ բեյի հետ, որը վերադարձել էր Անատոլիայից, և այդ մասին գեկուցում.

«Թալեաթ բեյը հայտարարեց, թե ինքը լայն միջոցներ է ձեռնարկել՝ արտաքսված հայ ընտանիքներին կերակրելու համար, որ հայերի ունեցվածքի և կյանքի դեմ կատարված հանցագործությունները խստագույնս պատժվելու են։ Վերջերս պատժվել են 20 հոգուց ավելի մարդ, որոնք մեղավոր են ճանաչվել նման գործողությունների համար... Կառավարությունը փորձում է մեղմացնել տեղահանումների պատճառով առաջացած անհարմարությունները... Կաթոլիկ և բողոքական հայերը, ինչքան որ հնարավոր է նման պայմաններում, կարող են վերադառնալ իրենց հայրենի վայրերը»։

Ռայխսկանցիներին ուղղված գեկուցման մեջ դեսպանը գրում է. «Ջրույցի ընթացքում Թալեաթ բեյը տարօրինակ տեսակետ արտահայտեց, որը նկատվում է նաև նրա գործընկերների շրջանում, թե մենք նրա պարագայում նույն ձևով կվարվենք և Գերմանիայում սկսված հեղափոխական շարժումը բռնությամբ արմատախիլ կանենք։ Ինձ համար միշտ անհասկանալի է եղել այն տեսակետը, որը մեղավորներին պատժելու համար պետք է տառապեն անմեղները։ Պետք է պատժվեն միայն ապացուցված հանցագործությունները։ Ես նախարարին հասկացրի, որ մենք երբեք նման ձևով չէինք վարվի և կպատժեինք միայն մեղավորներին»։

Տարբեր տեղերից ինձ հայտնում են, թե իմ լուրջ զգուշացումները կարծես ազդել են թուրք կառավարողների վրա»։

Միայն դեկտեմբերի 22-ին Բ. Դուռը հարմար գտավ պատասխանելու գերմանական դեսպանության հուլիսի 5-ի, օգոստոսի 9-ի, սեպտեմբերի 9-ի և նոյեմբերի 16-ի հուշագրերին։

Բ. Դուռն դեկտեմբերի 22-ի հուշագիրը.

«Հայկական հարցի վերաբերյալ գերմանական հուշագրերի Բ. Դուռն

առաջին գրավոր այս պատասխանի մեջ» Բ. Դուռը համառոտն հենվում է այն նույն դրույթի վրա, որն ընդգծել էր բանավոր բոլոր բանակցությունների ժամանակ, այն է՝ ոչ մի «օտար» պետություն, անգամ գերմանական դաշնակից բարեկամը, իրավունք չունի խառնվելու Թուրքիայի ներքին գործերին։

«Առաջին հերթին պետք է նշել, - ընդգծված է հուշագրում, - որ այն միջոցառումները, որոնք կիրառվել են կայսրության հայ ազգաբնակչության նկատմամբ, վերաբերում են երկրի ներքին կառավարման գործողությունների իրավասությանը, ուստի դրանք միայն այն դեպքում կարող են դիվանագիտական միջամտության առարկա դառնալ, եթե անխուսափելիորեն շոշափեն տեղի օտար շահերը։ Իրականում անվիճելի է, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնց նպատակը հեղափոխական շարժման կանխումն է, որը պոպուլյարացնում է նրա տարածքում, առանձնապես, երբ այդ շարժումը տեղի է ունենում պատերազմական ժամանակաշրջանում»։

Այսպիսի հիմնավոր բացատրությամբ և հետագա պնդումով, թե վերոհիշյալ բոլոր միջոցառումները թելադրված են «ռազմական պատճառներով և պաշտպանության օրինական միջոց են», դեսպանության միջամտությունը Հայկական հարցում առանց որևէ զիջման մերժվում էր՝ որպես չհիմնավորված։

Ուշագրավ է կտրուկ տոնը, որով սովորաբար չափվում է թուրքական քաղաքավարությունը։

### III. ՏԵՂԱԿԱՆՎԱԾՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Թալեաթ փաշայի այն հավաստիացումը, թե «այժմ այլևս տեղահանություններ տեղի չեն ունենում», պետք էր հասկանալ լրիվ բառացի։ Այո, տեղահանություններ տեղի չէին ունենում, քանզի տեղահանելու համարյա ոչինչ չէր մնացել, այլ իրագործվում էր արտաքսվածների սիստեմատիկ ոչնչացում։ Սովամահության միջոցով և ջարդարարների օգնությամբ այժմ պետք էր վերջացնել սկսած գործը<sup>1</sup>։

Ի՞նչ էր կատարվել այդ ընթացքում։

Նախնական հաղորդագրության համաձայն, տեղահանվածների աք-

<sup>1</sup> Տես Հավելված N 4։

սորավայրը և նոր բնակավայրը պետք է լիներ Միջագետքը: Սակայն աշ-  
նանից հայ ազգաբնակչությանը սկսեցին տեղահանել նաև Միջագետքի  
քաղաքներից: Մեյսոպոտամիայի 2-ին կոտորեցին Ջեզիրեի քրիստոնյաներին  
(4750 հայ, 250 կաթոլիկ քաղկեդոնականներ և 100 ասորի յակոբյաններ):  
Հոկտեմբերի 16-ին Ուրֆայի հայ ազգաբնակչությունը (20000 հոգի) մա-  
սամբ կոտորվեց և մասամբ արքայվեց: Հոկտեմբերի 18-ին հյուսիսատոս-  
թյունը Հալեպից հաղորդում է. «Վիլայեթի քաղաքական գործերով դիրեկ-  
տորի տեղեկության համաձայն Ռաջուի և Կաթմայի մոտ կենտրոնացվել  
են 40000 մարդ: Շարունակում են գալ այլ քաղաքներ Արևմտյան, Մի-  
ջին և Հյուսիսային Անատոլիայից: Դեպի հարավ (Հաուրանից արև-  
մուտք, Ռաքա, Դեյր էլ Ջոր) «վերաբնակեցման» են ուղարկվել 300000  
մարդ: Ըստ վերը հիշատակված պաշտոնյայի, արքայավայր հասնելով,  
նրանք հարկադրաբար ինքնահոսի կմատնվեն և բոլորն էլ կմահանան...»

Ամեն դեպքում նոր տեղում բնակություն հաստատելու համար բացա-  
կայում է ամեն ինչ: Համակենտրոնացման ճամբարներ չեն ուղարկվում  
ո՛չ վրաններ, ո՛չ բավարար ալյուր, ո՛չ էլ վառելանյութ: Իշխանություննե-  
րը արտաքսվող գյուղացիներից խլել են անգամ քլունգներն ու բահերը:  
Համընդհանուր համոզվածությունն այն է, որ բոլոր արքայավածները մահ-  
վան են դատապարտված»:

Ինչպես Միջագետքի քաղաքներից, այնպես էլ հյուսիսային Սիրիա-  
յից տեղահանվեց և կոտորվեց այն ամենը, ինչ մնացել էր հայերից: Հուն-  
վարի սկզբին 5-6000 հայեր Այնթապից քշվեցին անապատներ, փետրվա-  
րի կեսերին Քիլիսից տեղահանվեցին բոլոր երեխաները: Ապրիլի 6-ին  
Ռաս ուլ Այնի համակենտրոնացման ճամբարում 14000 արքայավներից  
12 000-ին կոտորեցին: Ավելի ուշ ոչնչացրին նաև մնացած 2000-ին: Ապ-  
րիլի 16-ին Մաաբայում և շրջակա գյուղերում «վերաբնակեցված հայե-  
րին» քշեցին Արաքական անապատները: Ապրիլի 19-ին նրանց ետևից  
Դեյր էլ Ջոր քշվեցին Մաաբայից 9000 հայ (24000-ի մնացածը): Համա-  
կենտրոնացման ճամբարներում տիրող համատարած սովը հոգ էր տա-  
նում, որպեսզի նորերի համար միշտ տեղ լինի<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, Կ. Պոլսի իշխանությունները 1915թ. դեկտեմբերին  
դեսպանի հետ ունեցած զրոյցների ժամանակ ձևացրին, թե իբր ցանկա-  
նում են դադարեցնել բնաջնջման միջոցառումները: Քանի որ, արդարև,

դեռ մի քանի հարյուր հազար մարդ կենդանի էր մնացել, այդ ժամանակ  
անցան մեկ այլ միջոցի, որպեսզի առանց արյուն քափելու հասնեն հա-  
մառորեն հետապնդած նպատակին, այն է՝ կենդանի մնացած քրիստո-  
նյա ազգերի թուրքացմանը:

## 1. ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՅՈՒՄ

Դեռ համընդհանուր բռնազարթի սկզբնական շրջանում որոշ տեղե-  
րում առանձին-առանձին, Տրապիզոնի շրջանում նույնիսկ ավելի մեծ չա-  
փերով, կիրառվում էր բռնի հավատափոխության միջոցը, որը պակաս  
դաժան էր, սակայն ցանկալի նպատակի համար նույնքան հուսալի: «Այն  
հայերը, որոնք կընդունեն իսլամը, չեն արտաքսվի», - շատ տեղերում հայ-  
տարարեցին ժանդարմներն ու կառավարական պաշտոնյաները տեղա-  
հանությունն սկսելիս: Տրապիզոնում, Ունիեում, Սամսունում իշխանու-  
թյունների ճնշման տակ հարյուրավոր ընտանիքներ ընդունեցին իսլամը  
և խնայվեցին: Գերմանացի փոխհյուպատոս Կուքիոֆը 1915թ. հուլիսի 4-  
ին Սամսունից հաղորդում է. «Կառավարությունը մոլեռանդ, խիստ հա-  
վատացյալ մահմեդական տղամարդկանց և կանանց ուղարկել է բոլոր  
հայերի տները՝ ազիտացիա տանելու, որ իսլամ ընդունեն, հասկանալի է՝  
սպառնալիքի ներքո: Նրանց, ովքեր հավատարիմ կմնան իրենց հավատ-  
քին, ծանր հետևանքներ են սպասում»: Տասնյակ հազարավոր կանայք և  
աղջիկներ, որոնց Անատոլիայի տարբեր ուղղություններով քշելիս քա-  
ղաքներում և գյուղերում վաճառում կամ քարշ էին տալիս թուրքական և  
քրդական հարեմներ, իրենց ծնողներից խլված հազարավոր հայ երեխա-  
ներ, որոնց հավաքում էին այսպես կոչված կառավարական որբանոցնե-  
րում, որպեսզի հետագայում դաստիարակվեն մահմեդական երեխաների  
հետ մեկտեղ (մի հյուսիսատոս հիշատակում է ենիչերիներին), իսլամի իս-  
կական ավարն էին: Սակայն այս բոլոր միջոցառումները մինչև այժմ հա-  
մատարած չէին, այլ միայն առանձին գավառական և տեղական պաշտո-  
նյաների կամայականությամբ էին անցկացվում: Այժմ դրանք կատար-  
վում էին մեթոդաբար:

Այդ նույն ժամանակամիջոցում, երբ մեծ վեզիրը և եռապետությունը  
հանգստացնող խոստումներ էին տալիս (9. 12. 1915թ.), երբ Խալիլ բեյը  
ժխտում էր, «որ բռնի իսլամացումը մեծ ծավալով է կատարվել»

<sup>1</sup> Տես Հավելված N. 4:



(20.12.1915թ.), արձակվեց «օսմանյան կառավարության մի գաղտնի կարգադրություն, ըստ որի՝ երկրի խորքի թուրք տեղական իշխանությունները ցուցում ստացան հայ ժողովրդի մնացածին ստիպել ստորագրելու մի ստացական, որով հատուկ շնորհ է տրվում անցնելու իսլամական կրոնին»: Հրաժարվողները պետք է արքորվեին: Միաժամանակ այդ կարգադրությունը լրացվեց ռազմական նախարարի հրամանով. «Այն հայերը, որոնց օգտագործում են բանակի ծառայության մեջ, պետք է մահմեդական դառնան: Արդեն այժմվանից նրանք պետք է ստանան մահմեդական անուններ: Հավատափոխման (քրիստոնեական) ձևակառուցությունները, ելնելով պատերազմական վիճակից, կկատարվեն ավելի ուշ»: Մայրաքաղաքում ևս հայերի վրա ճնշում էր գործադրվում, որ ընդունեն իսլամը: Այդ ժամանակից սկսած հյուպատոսական գեկույցների հիմնական բեման բռնի հավատափոխություններն էին: Ուրֆայում մնացած հայերը, այդ թվում՝ հայ բժիշկը, դեղագործի օգնականը և գերմանական առաքելության հիվանդանոցի ողջ արական անձնակազմը պետք է իսլամ ընդունեին: Կառավարության հրահանգով (հունվար 1916) իսլամացվում են նաև Ուրֆայի հայ որբ երեխաները (2500 երեխա), որոնք հետ էին մնացել տեղահանվածների քարավաններից և պահվում էին գերմանական և շվեյցարական փողերով: Աղանայում պետական որբանոցի դիրեկտորը քրիստոնյա երեխաներին հայտարարում է, որ նրանք կամ պետք է ընդունեն իսլամական կրոնը, կամ պետք է հեռանան որբանոցից. օսմանյան որբանոցում քրիստոնեական կրոնի համար տեղ չկա: Կոնիայում կենտրոնացված հայերին բաժանում են թուրքական գյուղերի վրա և ստիպում ընդունել իսլամական կրոնը (28 հունվարի 1916թ.): Կեսարիայում մյութասարիֆը հայտարարում է. «Ով կընդունի իսլամը, կխնայվի, ով չի ընդունի, կուղարկվի Սեբաստիա (այսինքն՝ մահվան)» (31 հունվարի 1916թ.): Փետրվարի վերջերին Հալեպում ստիպում են հավատափոխ լինել հայկական աշխատավորական գումարտակներին: Ոստիկանները քաղաքի հայերին հայտարարում են. «Աքսորից փրկվելու միակ միջոցն իսլամն ընդունելն է» (23 մարտի): Արևելյան Հորդանան տեղափոխված հայերը (150000՝ Հաուրանում, 3-4000-ը՝ Քերաքում) իսլամացվում են (հունիս, 1916թ.): Սեբաստիայի ճանապարհաշինական աշխատանքներում և սակրավորների գնդում ընդգրկված դեռևս մնացած հայերը, հետագայում արհեստավորական դպրոցի սաները և բոլոր հույները բանտարկվում են հայկական եկեղեցում: Հույները և իսլամ ընդունած հայերը ուժեղ կրկնահարվածներից հետո ազատ են արձակվում: Մյուս հայերին իշխանու-

թյունները խորհուրդ են տալիս իսլամական կրոն ընդունել. «Եթե հրաժարվեք, կաքսորվեք» (27 հունիսի): Գարահիսար Շարքիում հայերի մնացածն ընդունում է իսլամը: Սեբաստիայում ազգային տոնակատարության օրը» (24 հուլիսի) տարբեր աստիճանների բոլոր հայ զինվորական բժիշկները սպառնալիքի տակ իսլամ են ընդունում: Մյուս զինվորական բժիշկ, որը հրաժարվում է կրոնափոխ լինել, բանտ է նետվում: Համայում օգոստոսի առաջին շաբաթներին բռնագաղթվածներին ավելի հեռուն արտոբելու սպառնալիքով, խմբերով ստիպում են իսլամ ընդունել: Գործը տարվում է կատարյալ բյուրոկրատական եղանակով՝ դիմում, համաձայնություն, անվանափոխում, քրիստոնեական: Հալածանքներից փախած և Ուրֆայում հավաքված հայերին մյութասարիֆը սպառնալիքի ներքո ստիպում է մահմեդական դառնալ (ապրիլ, 1917): Անկարայում մնացած հայերին ևս ստիպում են ընդունել իսլամը (հունիս, 1917): Եվ այսպես շարունակ:

«Սև ծովից մինչև Սիրիա Քրիստոսի անունը ջնջվել է, եկեղեցիները փակվել են, դպրոցները՝ դատարկվել, քահանաներն ու քարոզիչները՝ սպանվել կամ արքորվել: Բացառությամբ շատ քիչ լիբանանյան քաղաքների, ողջ Անատոլիան իսլամացվել է: Քրիստոնեական անունները ջնջվել են ցուցակներից և փոխարինվել մահմեդական անուններով»:

## 2. ԴԵՄՊՆՈՒԹՅԱՆ ՉԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ

1915թ. նոյեմբերի 12-ին ռայխսկանցլեր ֆոն Բեթման Հոլվեգը նույն պատասխանն է տալիս ավետարանչական եկեղեցու 50 պատկառելի ներկայացուցիչների հոկտեմբերի 15-ի դիմումին և Գերմանիայում կաթոլիկների գլխավոր ասամբլեայի կենտրոնական կոմիտեի միսիոներական հանձնաժողովի հոկտեմբերի 29-ի դիմումին.

«Կայգերական կառավարությունը ինչպես մինչև հիմա, այնպես էլ ապագայում մշտապես իր առաջնահերթ պարտականություններից մեկն է համարում՝ իր ազդեցությունը օգտագործել, որպեսզի քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատքի պատճառով չհետապնդվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես, ղեկավարվելով այդ սկզբունքով, ուժս ներածին չափ կանեմ ամեն ինչ՝ հաշվի առնելու ձեր արտահայտած հոգսերն ու ցանկությունները»:

Երբ 1916թ. հունվարին բռնի հավատափոխությունների վերաբերյալ

հյուպատոսության հաղորդումները շատացան, դեսպան կոմս Մետերնիխը Խալիլ բեյին՝ արտաքին գործերի նախարարին առարկություններ արեց: Խալիլ բեյը կրկին վճռականորեն ժխտեց, «որ հայերի բռնի հավատափոխությունները կատարվել են մեծ ծավալով: Ստորադաս պաշտոնյաները, որոնք չարաշահումներ են կատարել, խստագույնս պատժվել են»:

Հունվարի 24-ին դեսպանը գեկուցում է ռախսականցիերին. «Նախարարի հավաստիացումները հակասում են այն միաձայն հաղորդումներին, որոնք անընդհատ կայգերական դեսպանություն են հասնում տարբեր տեղերից և իրարից անկախ աղբյուրներից»:

Դեսպանը կրկին առարկություններ է անում Բ. Դռանը: 1916թ. մայիսի 11-ին նա գեկուցում է. «Ինչպես Խալիլ բեյը, այնպես էլ Թալեաթ բեյը կրկին վստահեցրին ինձ, որ նրանք հեռու են հայ բնակչության քրիստոնյա տարրերի դեմ որևէ գործողությունից, թե ստորադաս պաշտոնյաների կողմից հնարավոր անկարգությունները խստագույնս կպատժվեն»:

Մարտ և ապրիլ ամիսների սկզբներին կրկին հաղորդագրություններ են ստացվում, որ հատկապես Այնթապում, Կեսարիայում Հալեպում և Ադրիանապոլսում թուրք պաշտոնյաների օգնությամբ տեղի է ունենում հետ մնացած քրիստոնյա հայերի իսլամացում:

«Ես այդ գործողությունների մասին տեղեկացրի Բ. Դռանը,- գրում է դեսպանը,- և համառորեն խնդրեցի դադարեցնել դրանք: Խալիլը կրկին ինձ հավաստիացրեց, թե Կ. Պոլսի կենտրոնական կառավարությանը ոչինչ հայտնի չէ այդ գործողությունների մասին: Իր գործընկերոջ՝ Թալեաթ բեյի հետ խորհրդակցելուց հետո նա հայտարարեց, որ վերջերս խստագույն ցուցումներ են ուղարկվել գավառական պաշտոնյաներին՝ հրաժարվել քրիստոնյա հայ բնակչությանն իսլամացնելու բոլոր փորձերից» (11 մայիսի 1916թ.):

Հուլիսի 3-ին դեսպանն ստիպված էր հաստատել, որ «չնայած պաշտոնական խոստումներին և հակառակ կարծեցյալ հրահանգների՝ շարունակվում է հայերի իսլամացումը: Դրա դեմ մեր առարկություններն անօգուտ են»: 1916թ. հուլիսի 16-ին կոմս Մետերնիխը գեկուցում է ռախսականցիերին՝ օրինակ բերելով բռնի իսլամացման շատ դեպքեր. «Չնայած պաշտոնական ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում իսլամացումը մեծ դեր է խաղում»:

Եվ այսպես շարունակ: Քանի որ բանավոր բոլոր առարկությունները

ոչ մի ազդեցություն չեն գործում, դեսպանությունը Բ. Դռանն է հանձնում 1917թ. հունվարի 4-ի ուղերձը՝ որպես բողոք բռնի անօրինական հավատափոխությունների դեմ:

### 3. ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԲՆԱԶՆՉՈՒՄԸ

Առաջին միաժամանակյա համընդհանուր բռնագաղթերը ողջ Անատոլիայով մեկ տեղի ունեցան 1915թ. հունիսի վերջերին, հուլիսին և օգոստոսին: Այն ժամանակ շարժման մեջ դրվեցին չտեսնված մարդկային քարավաններ, որոնց, ինչպես անասունների, կիզիչ արևի տակ բիրտ ժանդարմները քշում էին Անատոլիայի ծառագուրկ լեռնային հովիտներով՝ արևելքից, հյուսիսից և արևմուտքից: Թափառող երկարածիգ քարավանները քայլում էին ամիսներով, սնվելով վատ կամ, բոլորովին չսնվելով, ենթարկվելով հետամուտ լինող չեթների և քրդական հրոսակների հարձակումներին, սպանվելով, բռնաբարվելով, ենթարկվելով ամեն տեսակի անարգանքների և մեռնելով քաղցից ու հիվանդություններից: Մեծ մասամբ միայն մեկ երրորդ մասն է հասնում աքսորավայր՝ Արաբական անապատի եզրերը, Մոսուլի մոտերքը, Նիսիբին, Ռաս ուլ Այն, Ռաքա, Դեյր էլ Ջոր, Դերա, Հաուրան, Քերաթ: Նույնիսկ մահվան ճանապարհի վերջում նրանց հանգիստ չէին թողնում, շաբաթներով ետ ու առաջ էին քշում, լցնում ու դատարկում էին համակենտրոնացման ճամբարները, սառնասրտորեն թողնում, որ մեռնեն սովից ու համաճարակներից կամ հազարներով կոտորում էին: Դիակներով խցանված փողոցներն ապականում էին օղբ: Բժավոր տիֆը թունավորում էր էտապի փողոցները:

Քանի որ Բ. Դռուր խուլ էր մնում դեսպանության բողոքարկումների նկատմամբ, գերմանական հյուպատոսությանը 1916-ից մինչև 1918 թվականը ոչինչ չէր մնում, քան աջակցել և պաշտպանել երկրում մնացած գերմանացի և ամերիկյան առաքելությունների կողմից աղետյալներին օգնություն ցույց տալու ձեռնարկումներին, ինչքան որ դա հնարավոր էր իրագործել թուրք պաշտոնյաների թիկունքում:

Ամերիկայի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո (20 ապրիլի 1917թ.) այդ բեռն ամբողջովին մնաց գերմանական օժանդակության ընկերությունների միսիոներների և գթության քույրերի ուսերին, որոնց օգնում էին ամերիկյան, շվեյցարական,

հուանդական, սկանդինավյան և գերմանական նպաստի փողերով:

Արտաքին գործերի գերատեսչությունը, դեսպանությունն ու հյուպատոսությունը անում էին ինչ հնարավոր է, որպեսզի հավաքված դրամը հասներ նշանակման վայրը: Սակայն այն ամենը, ինչ կատարվում էր այս ձևով՝ ողորմելիորեն քիչ էր: Աքտրվածները ճանճերի պես կոտորվում էին համակենտրոնացման ճամբարներում՝ հազարներով ու տասնյակ հազարներով:

Օժանդակության գործերը մեծ մասամբ դժվարանում էին այն պատճառով, որ թուրք պաշտոնյաներն ընդհանուր արգելքների միջոցով փորձում էին խոչընդոտել արքայալիների նկատմամբ կիրառվող գրասրտության բոլոր ձեռնարկումները: Քաղաքներում դեռ հնարավոր էր գործել, քանի որ որոշ թուրք պաշտոնյաներ, չնայած կառավարական հրահանգներին, աչք էին փակում: Հալեպում պահպանվեց մի որբանոց, որը գտնվում էր հյուպատոսության շենքի ետևում: Մնացած որբանոցները հարյուրավոր որբերով, որոնց կերակրում և հագցնում էին գերմանացի գթության քույրերը, գտնվում էին թուրքական վերահսկողության ներքո: Հետագայում դրանք էլ դատարկվեցին: Երեխաներին ուղարկում էին երկրի խորքերը՝ Դամասկոս, Կոնիա, Իզմիթ և այլ տեղեր: Նրանց բաժանում էին զուտ մահմեդական «կառավարական որբանոցներին», որտեղ նրանք ստանում էին մահմեդական անուններ և պետք է դաստիարակվեին մահմեդական հավատքով: Դա կատարվում էր մեթոդաբար: Ամերիկյան, շվեյցարական և գերմանական ընկերությունների դիմումները՝ թույլ տալ իրենց օժանդակող խմբեր ուղարկել աղետյալ վայրերը, չնայած գերմանական դեսպանության միջնորդությանը, թուրքական կառավարության կողմից կտրականապես մերժվում էին: Գերմանական Արևելյան առաքելության առաջարկին գերմանական դեսպանությունը Բ. Դոնից ստացավ հետևյալ պատասխանը. «Թուրքական կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող թույլ տալ որևէ օտար օգնություն, որպեսզի հայերն իրենց հույսը չդնեն արտասահմանի վրա» (28 ապրիլի 1916): Դեսպանության այն հարցումին, որը նա Դամասկոսի հյուպատոս Լոյսվեդի միջոցով հղել էր 4-րդ բանակի գլխավոր հրամանատար Ջեմալ փաշային, թե ինչ հեռանկարներ կան ամերիկյան Bible House-ի (Աստվածաշնչի տան) կողմից Դամասկոսի աղետյալ հայերի համար ծրագրված խոշոր օժանդակության ձեռնարկումները իրականացնելու գործում, Ջեմալը պատասխանեց, որ ինքն «անձամբ կուզենար թեթևացնել հայերի ճակատագիրը,

սակայն, Կ. Պոլսից խստագույն կարգադրություններ է ստացել թույլ չտալ գերմանացիների և ամերիկացիների կողմից հայերին օժանդակելու որևէ ձեռնարկում, քանզի երկրի ներսում հայերի ապստամբությունը թուրքական կառավարության դեմ միայն այս դեպքում կարելի կլինի կոտրել, եթե նրանց հասկացնեն, որ ոչ մի օգնություն չեն կարող սպասել արտասահմանյան որևէ կառավարության կողմից» (29 մարտի 1916):

Թուրք պաշտոնյաներն անգամ հայ եպիսկոպոսին արգելում էին օգնել աղետյալ արքայալիներին, այնպես որ եպիսկոպոսը այդ նպատակի համար ստիպված էր օգտվել օտար աջակցությունից: «Պարզ երևում է, որ ամեն մի հասարակական օգնություն, որ կողմից այն գալու լինի, Բ. Դուռը մերժում է», - գրում է կոմս Վոլֆ Մետերնիխը:

1916թ. օգոստոսի 12-ին Էյֆելյան աշտարակից հնչում է հետևյալ ռադիոհաղորդագրությունը.

«Վաշինգտոնից իմանում ենք, որ Թուրքիան մերժել է Միացյալ Նահանգների խնդրանքը՝ չեզոք կոմիտեի միջոցով օգնություն ցույց տալ Միբիայում սովից տառապող հազարավոր մարդկանց»:

Դամասկոսում անձամբ Ջեմալ փաշայի ղեկավարությամբ տարվող օգնության գործը, որի համար Սալոնիկի և Հալեպի նախկին վալի Հուսեյն Բյազիմ բեյը արել է ձեռքից եկածը, ըստ նրա վկայության, ունեցավ հետևյալ ճակատագիրը.

«Նրա միջոցառումները ոչ թե չեն իրագործվում, այլ իշխանությունները գործում են դրա դեմ: Հայերին, որոնց նա ըստ ծրագրի Դերայից ուղարկում է Դամասկոս, տեղական պաշտոնյաները կրկին ետ են ուղարկում: Կառավարությունը նրան շատ քիչ փող է տրամադրում, որպեսզի կարողանա գործարար կերպով հոգալ հայերի կարիքները: Նա հույսը լրիվ կտրել է և այլևս չի հավատում թուրքական կառավարության՝ տեղահանված հայերին օգնելու լուրջ կամեցողությամբ: Նա նույնիսկ վախենում է, թե ուզում են հետևողականորեն բնաջնջել հայերին: Լսել է, որ Հալեպ ուղարկված հայերին կրկին բերել են Արևելք՝ Մոսուլ և Դեյր էլ Զոր: Նրանք, հավանաբար, կդառնան բեդվինների զոհերը:

Բնաջնջման այս հրեշավոր քաղաքականությունը խայտառակություն է Թուրքիայի համար: Խաղաղությունից հետո այն մեծ վնաս կհասցնի Թուրքիային, ինչպես նաև դժվար կացության մեջ կդնի Գերմանիային, քանի որ նա աշխարհի առջև մեղավոր է ճանաչվելու այն քանի համար, որ ավելի գործարար ձևով չպաշտպանեց հայերին»:

Համակենտրոնացման ճամբարները գտնելը և տեղում սովահարնե-

րին հազուստով, հացով կամ փողով օգնելը համարյա անհնար էր, քանի որ կառավարությունը բոլոր միջոցներով ջանում էր խանգարել դրան: Շատ քիչ գերմանացիների է միայն հաջողվում վտանգավոր առաքումներ կատարել: Գերմանացի զբոյրյան քույրերին արգելված էր հեռանալ քաղաքներից, չնայած նրանք հաճույքով կուզենային հեռու փախչել ամեն տեսակի վտանգից: Գերմանացիների հետ վարվում էին ոչ ավել, քան չեզոքների: Արտաքսվածների և սովամահության մատնվածների մեջ կային գերմանական դպրոցներում և որբանոցներում դաստիարակված բազմաթիվ գերմանախոս երեխաներ: Գերմանական հիմնարկությունների և դպրոցների հայ ուսուցիչներն ու օժանդակ անձնակազմը, գերմանական հիվանդանոցներում աշխատող հայ բժիշկները, դեղագործները, բուժքույրերն անխտիր արքայություն էին, նետվում բանտերը, գնդակահարվում, կախաղան հանվում և ամենաքիչը՝ բռնի իսլամացվում: Մամուրեթ ու Ազիզում գտնվող գերմանական որբանոցներից չորս շենք, որտեղ լիքը որբ երեխաներ էին, խլվեցին՝ ռազմական նպատակների համար օգտագործելու: «Դա հարված էր գերմանական աշխատանքին»:

Գերմանական դեսպանությունն արեց հնարավոր ամեն ինչ, որպեսզի Պալեստինայի, Եգիպտոսի և կաթոլիկական միսիոներական օժանդակության ընկերությունների ցանկությունները հասցնի Բ. Դոանը: Սակայն ամեն ինչ ապարդյուն էր: Գթասրտությունը սաբոտաժի ենթարկելու միջոցով արագացվում էր այն դատը, որը խոշտանգումների, սովամահության և համաճարակների օգնությամբ տանում էր դեպի հայ ժողովրդի բնաջնջումը:

#### 4. ՄԵԾ ՎԵՉԻՐ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՆ

Թալեաթ փաշան, որը մեծ վեզիր էր դարձել Սաիդ Հալիմ փաշայի փոխարեն, 1917թ. փետրվարի 15-ին ներկայացավ պատգամավորների պալատ և նոր կուրս հաղորդեց Բ. Դոան քաղաքականությանը: Պարոն ֆոն Էյուվանը, որն այն ժամանակ փոխարինում էր կոմս Վոլֆ Մետերնիխին դեսպանի պաշտոնում, այդ մասին փետրվարի 16-ին զեկուցում է ռալիսականցի ֆոն Բեքման Հոլվեգին:

«Ազդեցիկ շրջանակների ներսում լուրջ հիմքերի վրա դրվեց քաղաքական չափավոր հոսանքը, որը, ի հակադրություն կոմիտեի հայտնի անդամների անհեռատես, անգամ արյունալի բռնություններից ետ չկանգ-

նող ազգայնամուլական քաղաքականության, Թուրքիայի համար պահանջում է խոհեմ և հանդուրժող ներքին քաղաքականություն... Մեծ չափերով իրագործված հայերի բնաջնջումը և հույն բնակչության հանդեպ ևս անխնա վերաբերմունքի առանձին դեպքերն այս (ազգայնամուլ) քաղաքականության արդյունքն էին: Ամբողջությամբ վերցրած բնաջնջման քաղաքականությունը թուրքական կայսրությանը մեծ վնաս է հասցրել: Հայերի դեմ արշավի արհավիրքները դեռ երկար ժամանակ ծանրանալու են թուրք անվան վրա և զենք կլինեն այն մարդկանց ձեռքում, որոնք ժխտում են Թուրքիան որպես քաղաքակիրթ պետություն և պահանջում են թուրքերի վտարումը Եվրոպայից: Ֆիզիկապես ուժեղ, աշխատասեր և խնայող ազգաբնակչության ոչնչացման և արքայական պատճառով երկիրը ներսից ևս զգալիորեն թուլացել է: Հատկապես թուրքական օգտակար հանածոների ավելի արագ զարգացման գործում ամենամեծ խոչընդոտներից մեկը մարդկանց պակասելն է:

Այստեղ պաշտոնի անցնելուց հետո Թալեաթ փաշայի հետ ունեցածս զրույցի ժամանակ չքաքցրի իմ կարծիքն այս հարցի վերաբերյալ: Այն, որ այժմ իշխանության գլուխ անցնելուց հետո նա իր առաջին հայտարարություններում կառավարական ծրագրի կարևոր կետն է համարում օտոմանյան ազգությունների իրավահավասարությունը, գոհունակությամբ պետք է ողջունել: Ինչպես լսել եմ, պետք է սպասել, որ կդադարեցվեն հայերի արքայությունը և որոշ տեղերում՝ հույների նկատմամբ ձեռնարկվող հետապնդումները: Հայերին բույլատրվում է վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը, եթե դրանք չեն համարվում պատերազմական շրջաններ»:

Թալեաթ փաշան լուսավորչական և հայ կաթոլիկ պատրիարքին ևս հավաստիացրել է, թե «հայ ազգաբնակչության սահմանադրական իրավունքներին չեն դիպչի: Այն ինչ ռազմական անհրաժեշտությունից ելնելով ստիպված է եղել անել նախկին կառավարությունը, հնարավորին չափ կրկին կբարելավվի: Բոլոր նահանգներին ուղարկվել են համապատասխան հրամաններ»:

Դեսպանի լավատեսությունը չիրականացավ: Եպիսկոպոսի հույսերը ի դերն ելան: 1916թ. օգոստոսի 1-ին Բ. Դոանը օրենք իրատարակեց հայ կաթոլիկության և պատրիարքության վերաբերյալ, համաձայն որի՝ լուծարվում էին հայ ազգաբնակչության քաղաքական և կրոնական իրավունքները:

Օրենքը վերացնում էր՝ 1. հայերի Ազգային մեծ խորհուրդը, 2. Կ.Պոլսի

հայկական պատրիարքությունը և Սսի ու Աղթամարի կաթողիկոսությունները: «Մեծ խորհուրդը» հիմնականում կազմված էր մայրաքաղաքի աչքի ընկնող հայերից, որպես ազգի յուրատեսակ քաղաքական ներկայացուցչություն, որի ղեկավար էր կարգվել լուսավորչականների պատրիարքը, որպես հայ ժողովրդի հոգևոր-ազգային ներկայացուցիչ: Հարյուրամյակներ գոյություն ունեցող հայ գրիգորյանական եկեղեցական համայնքը ազգի միասնության վերջին կապն էր: Նրա ազգային-եկեղեցական հայրապետն Ամենայն հայոց կաթողիկոսն էր Էջմիածնում: Օգոստոսի 1-ի օրենքով Թուրքիայի եկեղեցական ղեկավարների և գրիգորյանականների ազգային եկեղեցու ղեկավարի միջև կապը կտրվում էր. (մոտավորապես նույն նշանակության մի միջոցառում, եթե Գերմանիայի կաթոլիկական եկեղեցին պետական օրենքով անջատվեր Հռոմից): Այսպիսով, Կ. Պոլսի պատրիարքին Սսի (Կիլիկիա) և Աղթամարի (կղզի Վանա լճում) երկու կաթողիկոսների հետ միասին մայրաքաղաքից աքսորում են Երուսաղեմ՝ Սուրբ Հակոբի վանքը: Այդ օրենքը հակասում էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածին: Դա ոչ այլ ինչ էր, քան հայ ազգային եկեղեցու՝ քրիստոնեական հնագույն եկեղեցու “capitis deminuto”:

Կոմս Վոլֆ Մետերնիխը գրում է. «Հայերի պատրիարքը այլևս հայ միլիթի (ազգի) գլխավորը չէ, այլ մի ջեմայեթի, պաշտամունքային համայնքի առաջնորդ: Այս արտահայտությունը կիրառվում էր Բ. Դռան գրասենյակային ոճում՝ բողոքական հայերի համեստ համայնքների և կարաիտյան հրեաների վերաբերյալ (մինչդեռ հույները, հրեաները և մինչև այժմ նաև հայերը միլլեթ էին կազմում):»

Այժմ վերջիններին ևս նոր օրենքով այսպես են բնորոշում: Կաթողիկոսին, պատրիարքին և եպիսկոպոսներին, ինչպես համայնքի հասարակ քահանաների, զրկել են բոլոր լիազորություններից և անտեսելով նրանց եկեղեցական պարտականությունները, սահմանափակվել համայնքի գործերի կառավարչի պաշտոնով:

Հայրապետի նստավայրը մայրաքաղաքից տեղափոխել են Երուսաղեմ, նա այլևս ազգային խորհրդի գործադիր մարմինը չէ, այլ միայն կառավարության հրահանգների կատարողը: Բացի այդ, այսուհետև նա իրավունք ունի գործ ունենալ միայն պաշտամունքային գերատեսչության՝ որպես վերադաս իշխանության հետ, մինչդեռ նախկինում նա մուտք ուներ բոլոր պաշտոնյաների նաև սուլթանի մոտ: Վերջիվերջո եպիսկոպոսների թիվը զգալիորեն կրճատվել է հետևյալ կերպ. եպիսկոպոս կարող

էին կարգվել այն շրջաններում, որտեղ կար ավելի քան 15000 շունչ: Սակայն Միջին Ասիայից և Ռումելիեից հայ ազգաբնակչության արտաքսելու պատճառով շատ քիչ շրջաններ կարող էին մնացած լինել, որտեղ հայ բնակչությունը կազմեր այդ թիվը»<sup>1</sup>:

1916թ. օգոստոսի 23-ին ռայխսկանցլերին ուղարկած իր գեկուցման մեջ կոմս Վոլֆ Մետերնիխն արտահայտում է իր կարծիքն այս օրենքի նշանակության մասին.

«Սույն թվի օգոստոսի 1-ի օրենքը հանրագումարի է բերում կառավարության միջոցառումները, ըստ որոնց՝ օսմանյան հայերը, որպես կենսունակ ազգ, պետք է ոչնչացվեն: Չանզվածային տեղահանություններին, որոնք ուղեկցվում են տղամարդկանց կոտորելով, հետ մնացածների և երեխաների իսլամացմամբ, հետևում են ունեցվածքի բռնագրավումը, քաղաքական համայնքի ավերումը»:

Երբ Թալեաթ փաշան պատրիարքին հավաստիացնում էր, թե «հայ ազգաբնակչության սահմանադրական իրավունքներին ոչ ոք ձեռք չի տա», նրա մտքովն անգամ չէր անցնում վերացնել այս օրենքը, որը նրա բնաջնջման գործի պսակն էր: Նրա մյուս խոստումները ևս մնացին միայն խոսքեր: Գավառական իշխանություններին հասած բոլոր հրամաններն ազդեցություն չունեին: Խարբերդի վիլայեթից դեռևս 1917թ. մարտին տեղահանեցին հայերի մնացածներին՝ 300 կանանց և երեխաների: Պատանիներին շրթայակապում և բանտերն էին նետում: Առանց դադար առնելու, տեղի էր ունենում սպանված ժողովրդի մարմնի փտեցման գործընթացը: Ինչպես կառավարությունը, այնպես էլ տեղական իշխանություններն անտարբեր դիտում էին հազարավոր կանանց և երեխաների մահը: Անպատի եզերքի համակենտրոնացման ճամբարները վեր էին ածվել զանգվածային գերեզմանների<sup>2</sup>: Հայերի իրենց բնակատեղերը վերադառնալու մասին խոսք անգամ չէր կարող լինել, «վերաբնակեցման» կամ միայն մարդավայել տեղավորման մասին երբեք չէին էլ մտածում: Գերմանական և չեզոք ընկերությունների կողմից աղետյալներին ցույց տրվելիք օգնությունը խափանվում էր: Խոստացված ներումը (ամնիստիա) իրեն երկու տարի սպասեցնել տվեց, մինչև որ Թուրքիայի պարտությունը վերջ դրեց վերապրած մնացորդի անվերջանալի տառապանքներին»:

Բռնի կրոնափոխությունը շարունակվում էր. 600 երեխաներից, որոնք

1 Կ. Պոլսից բացի դեռևս միայն Չմյունխայում:

2 Հավելված, Հմմ. N 4

գտնվում էին Հայաստանի համար գերմանական օժանդակության միությունում ծառայության մեջ գտնվող շվեյցարացի զթության քրոջ խնամքի ներքո, փետրվարին 70 երեխա ուղարկեցին Լիբանանի թուրքական որբանոց, 400-ին, որոնք հագնվում և սնվում էին օտարերկրյա նպաստի փողերով, պահանջեցին և բաժանեցին Կոնիայի, Իզմիրի, Բալիկեզրի և Ադաբազարի կառավարական որբանոցներին, որտեղ նրանք պետք է դաստիարակվեին մահմեդական երեխաների հետ միասին և խլամացվեին: Մյուսները խույս տվեցին բռնի կրոնափոխությունից փախուստի միջոցով: Գթության քրոջ այն հարցին, թե ինչու կառավարությունը երեխաներին վերցնում է հենց իր որբանոցներից, վալին միամտորեն պատասխանում է, «որ նրա երեխաները ամենալավ սնվածը և ամենամաքուր հագնվածն են: Եթե ինքն ուրիշ անապաստան երեխաներ ուղարկի, ապա կառավարությունը կհարցնի, թե ինչ է արել իրեն փոխանցված օժանդակության փողերը»:

#### IV. ԿՈՎԿԱՍ

Պատերազմի վերջին փուլը՝ կովկասյան արշավանքը, նոր խնդիրներ առաջադրեց: Երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը թուրքական զորագնդերի ճանապարհը բացեց դեպի Արաքսի դաշտավայրը, ռախստագում նախանշեցին այն նոր վտանգները, որոնք այժմ սպառնում էին Կովկասի հայերին և Կարսի մարզում ու Երևանի նահանգում գտնվող հարյուր հազարավոր հայ փախստականներին: Նրանց սպասում էր նույն ճակատագիրը, ինչ բաժին էր ընկել թուրքահայերին:

Նախքան թուրքական զորքերի կովկասյան սահմանն անցնելն ու Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններ մտնելը, դեսպանությունը արտաքին գործերի գերատեսչության հանձնարարությամբ (8-10 փետրվարի 1918թ.) դիմեց Բ. Դեանը և զինվորական հրամանատարներին՝ շտապ պահանջելով բոլոր միջոցներով կանխել հայկական արհավիրքի կրկնումը կովկասյան հողում: Խալիլ բեյը վստահեցրեց (11 փետրվարի), որ այդ կապակցությամբ արձակված են խստագույն հրամաններ: Համանման ձևով դիմեցին նաև Թալեաթ փաշային, որն այդ ժամանակ գտնվում էր Բեռլինում: Միաժամանակ խորհուրդ տրվեց շտապ արձակել խոստացված ներման հրամանը, ֆինանսական նպաստ հայթայթել ավերված գյու-

ղերը վերակառուցելու և տեղահանվածներին վերադարձնելու համար (11 փետրվարի, 2/3 մարտի 1918թ.): Պախարակվեց հայերի դեմ կրկին սկսված թուրքական ճնշման քաղաքականությունը, որը գալիս էր Էնվեր փաշայից. «Միլլի Ազենսի հաղորդագրությունները, ելնելով նախկին փորձերից, այլևս հավատ չեն ներշնչում», հեռագրում է պետական քարտուղարի օգնական ֆոն դեմ Բուսշեն (17 մարտի 1918թ.):

Ձեռնարկված այս քայլերի հաջողության մասին 1918թ. մարտի 17-ին նոր դեսպան կոմս Բեռնստորֆը զեկուցում է. «Թուրքական կառավարությունը, երևում է, այս անգամ իսկապես ազնվորեն ձգտում է կանխել անկարգությունները»:

Սակայն այդ նույն հեռագրում նա ներկայացնում է այն վտանգավոր տրամադրությունը, որը մայրաքաղաքում առաջացել է դեպի Կովկաս թուրքական զորքերի հեշտ առաջխաղացման պատճառով: «Դժբախտաբար զգացվում է մեծ վեզիրի բացակայությունը, քանի որ միայն նա է ի վիճակի սանձը ձեռքում պահել և հրահանգներ արձակել հայկական քաղաքականության վերաբերյալ: Այստեղի մյուս բոլոր պաշտոնյա ղեկավարները տվյալ պահին գտնվում են հաջողության, նացիոնալիզմի և պանիսլամիզմի գլխապտույտի մեջ: Նրանք կարծում են, թե Ասիայի բոլոր մահմեդականները հենց այն բանին են սպասում, որ իրենց եղբայրական ձեռք մեկնեն Թուրքիայից և հիմնեն իսլամական համադաշնակցություն (կոնֆեդերացիա): Թուրքական փառամոլությունն այժմ ավելի շատ դեպի Բաքու է ուղղված, քան դեպի Բաթում: Թերևս պետք է դրդել Թալեաթ փաշային, որպեսզի նա Բուխարեստից իր ակտիվ ցուցմունքներով միջոցներ ձեռնարկի հայերի հանդեպ վերաբերմունքի հարցում»:

Արդեն մարտի 23-ին սարսափելի լուրեր են գալիս նոր գրավված շրջաններում թուրքական ջարդերի մասին: Ինչքան թուրքերն առաջ են շարժվում Կովկասով, այնքան ջարդերը մեծ չափերի են հասնում:

Էնվեր փաշան, որն ապրիլի 24-ին վերադարձել էր Կովկասից, լի էր լավատեսությամբ. «Կովկասում թուրքերի համար ամեն ինչ հիանալի է ընթանում: Նրանց պետք է մի քիչ էլ առաջ շարժվել, և այնժամ Վրաստանը հաշտության պայմանագիր կկնքի»: Դեսպանը մեծ վեզիրից պահանջում է Հայկական հարցում ապահովության երաշխիք: Թալեաթ փաշան պատասխանում է, որ լիազորում է նրան պաշտոնապես հայտնելու նաև հրապարակման համար, որ «խաղաղասեր հայերի համար ներումը, փող տրամադրելու և հայրենիք վերադառնալու թույլտվության հետ միասին,

շուտով կարճակվի»: Արտաքին գործերի գերատեսչության այն հարցին, թե «արդյոք վերադարձի թույլտվությունը վերաբերում է նաև Ռուսաստան գաղթած հայերին, թե՞ միայն տեղահանվածներին», Թալեաթ փաշան պատասխանում է. «Ներումը պետք է վերաբերվի միայն «այստեղի» հայերին: Երկրում չգտնվողներին (խոսքը մոտավորապես 250000 հայերի մասին է) ետ քերելը վտանգավոր է»:

Թուրքական գործերի առաջխաղացումը Կովկաս հայ ազգաբնակչությանը, որը փախեցի Թուրքիայից և բնակատեղի, սեղմում է թաքարներով լցված Երևանի նահանգի շրջանները: Ավելի քան կես միլիոն հայեր ապրելի առաջին կեսերին հեռանում են իրենց գյուղերից՝ հասունացած հասկերով հացահատիկի դաշտերը թողնելով թուրք զավթիչներին: Չնայած Էնվեր փաշայի այն հայտարարությանը, թե մնացած բոլոր հայերը կունենան գույքի և ազատության ապահովություն, օկուպացված շրջաններից ձերբակալվում են 17-ից մինչև 60 տարեկան 14000 հայ և խցկվում աշխատանքային գումարտակներ: Հայ գաղթականների վիճակը, որոնք մերկ և սոված բնակարկել էին լեռներում ու անտառներում, իսկ երեխաները քարշ էին գալիս արտատալայրերում՝ խոտով սնվելու հույսով, վատանում էր շաբաթից շաբաթ, ամսից ամիս: Կովկասի հայկական կառավարության և Կ. Պոլսում նրա ներկայացուցիչ Ահարոնյանի խնդրանքներով արտաքին գործերի գերատեսչությունը և դեսպանությունը թուրքական զխաավոր հրամանատարությունից պահանջում են գաղթական հայերի վերադարձի թույլտվություն: Թուրք զխաավոր հրամանատար Էսադ փաշան մերժում է: Գլխավոր հրամանատարության հեռագրին Էնվեր փաշան մույնպես բացասաբար է պատասխանում: Հունիսի 9-ին Ֆելդմարշալ Հինդենբուրգը հեռագրում է Էնվեր փաշային. «Ձերդ գերագնացություն, զխաավոր հրամանատարության անունից խնդրում են ձեզ կարգադրել, որպեսզի թուրքական բոլոր գործերը, բացառությամբ Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի, ետ քաշվեն կովկասյան ոլորտից»:

Էնվեր փաշան չի կատարում նրա խնդրանքը և օգոստոսի 3-ին Ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգին ուղարկած երկար հեռագրում մերժում է կես միլիոն գաղթական հայերին՝ թույլ տալ վերադառնալու ապօրինաբար զբաղեցված իրենց հայրենի գյուղերը:

Կովկասում գերմանական պատվիրակ բարոն ֆոն Կրեսը օգոստոսի 4-ին հեռագրում է, որ միայն Կենտրոնական Եվրոպայի երկրների շուտափույթ օգնությունը կարող է փրկել Հայաստանը կործանումից: «Ներկայիս փոքր Հայաստանը մույնիսկ չի կարող կերակրել տեղի բնակչությանը, էլ չենք խոսում այժմ այնտեղ գտնվող 300000-500000 գաղթականների մա-

սին...

Թուրքերը Հայաստանը հերմետիկ փակել են բոլոր կողմերից: Նրանք խոչընդոտում են ամեն տեսակի առևտուր և երթևեկություն, դրսում են քաքար և պարսիկ ազգաբնակչությանը գաղթել, այնպես որ հայկական կառավարությունը վախենում է Երևանի վրա սպառնալիք հարձակումից: Թուրքերը այստեղ ևս չպահպանեցին Բաթումի հաշտության պայմանագրի պայմանները, այլև շարունակում են օկուպացված պահել Բաթումի սահմանի մյուս կողմում գտնվող կարևոր շրջանները... Ներկայումս արտադրողունակ շրջանները համարյա ամբողջովին գրավված են թուրքերի կողմից և պլանաչափ կողոպտվում են: Հակառակ պայմանագրի՝ նրանք դուրս են բերում հատկապես մեծ քանակությամբ բամբակի պաշարներ: Բերքը մասամբ հավաքում են թուրքերը, մասամբ էլ փչանում է: Հայերը, ինչպես և ես, համոզված են, որ երկու պետությունների միջև գործը կհասնի բախման, եթե թուրքերը ետ չքաշվեն Բաթումի պայմանագրով որոշված սահմանը: Էնվերի հակառակ պնդումը միայն պատրվակ է ժամանակ շահելու համար, որպեսզի պայմանագրին հակառակ զավթած երկիրը կատարելապես ավերեն և կողոպտեն»:

Էսադ փաշան ևս խուսափում է Բաթումի շրջանից նահանջելու պահանջից: Նա յուրաքանչյուր առանձին հայի համար գրավոր դիմում է պահանջում: «Ըստ Թիֆլիսի թուրքական ներկայացուցչի տեղեկության՝ Էսադ փաշայի մոտ մի քանի շաբաթում հավաքվել է ավելի քան 12000 անպատասխան դիմում»: Միաժամանակ թուրքերը կտրում են հայկական կառավարության կապը Թիֆլիսում գործող ազգային խորհրդի հետ: Այս ընդդիմագործական քաղաքականության վերաբերյալ իր անձնական կարծիքը բարոն ֆոն Կրեսը ընդհանրացնում է այսպես. «Ըստ ինձ հասած բազմաթիվ լուրերի և հաղորդագրությունների՝ այլևս կասկած չի կարող, որ թուրքերը պլանաչափորեն հասնելու են այն բանին, որպեսզի սովամահության միջոցով բնաջնջեն այն փոքրաթիվ հարյուր հազարավոր հայերին, որոնց մինչև հիմա չեն սպանել»:

Արտաքին գործերի գերատեսչության և շտաբի կայանի ուժեղացված ճնշման ներքո սեպտեմբերի վերջերին Թալեաթ փաշայի հետ Բեռլինում կայացած բանակցությունները հասցնում են այն արդյունքին, որ Բ. Դուրը հրաժարվում է դիմադրությունից և խոստանում է ազատել Բրեստի պայմանագրին հակառակ գրաված շրջանները:

Սակայն այս դիվանագիտական նահանջը ևս ետ մնաց իրադարձություններից: Թուրքական նվաճողական գործերն այդ ընթացքում լցվեցին

Ելիզավետպոլի նահանգը և շարժվեցին դեպի ռուսական խորհրդային կառավարության կողմից (որի հետ կնքվել էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը) գրավված Բաքու: Մեյտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին Բաքուն: Միակ բանը, ինչին հասավ Գերմանիան, դիվանագիտական երաշխավորություններն էին, հոգուտ կովկասյան երիտասարդ հանրապետությունների՝ Վրաստանի և Հայաստանի:

1918թ. մայիսին Բերայի դեսպանը Բեռլինից ստացած հրահանգների համաձայն Բ. Դռանը հանձնեց հետևյալ հայտարարությունը.

«1. Կայգերական կառավարությունը իրեն իրավունք է վերապահում խառնվելու Կովկասում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին, հատկապես Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների ներսում և դրսում կատարվող այն միջոցառումներին, որոնք համահունչ չեն Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրին:

2. Կայգերական կառավարությունը չի կարող ո՛չ հավանություն տալ, ո՛չ էլ պաշտպանել թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը Կովկասում և թուրքական պրոպագանդան վերը նշված մարզերից դուրս:

3. Կայգերական կառավարությունը ճանաչում է վրացական կառավարությունը որպես de-facto:

4. Կայգերական կառավարությունը խնդրում է կայսերական օսմանյան կառավարությանը Թուրքիայի կողմից գրավված շրջաններում ապահովել հայերի նկատմամբ պատշաճ վերաբերմունք:

5. ... Մենք չենք կարողանա մաս պաշտպանել Թուրքիային, եթե Կովկասի քրիստոնյա բնակչության դեմ թուրքական կողմից անկարգություններ գործադրվեն»:

Չնայած այս բոլոր հայտարարություններին, Թուրքիան ուշադրություն չդարձրեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի որոշումներին: Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում ժողովրդական քվեարկության ժամանակ նա սահմանափակվեց «միայն մահմեդական բնակչության կամքի արտահայտությունը ներկայացնելով» և երեք մարզերի հետ, որոնց ճակատագիրը պետք է թողնվեր գերակշռող քրիստոնյա բնակչության ինքնորոշման իրավունքին, վարվեց ինչպես օրինական կցորդային շրջանների: Իրականում նա անցնում էր ողջ Կովկասի գավթմանը:

Հայ ժողովրդի ճակատագրի ողբերգության սոսկալի ավարտը եղավ Բաքվի աղետը: Չնայած գերմանացի ավագ լեյտենանտ Պարաքվինի նախագոյազումներին, որը ծառայում էր թուրքական պաշարող բանակի գլխավոր շտաբում և պահանջել էր ժամանակին միջոցներ ձեռնարկել ջարդերը կանխելու համար, գլխավոր հրամանատար Նուրի փաշան՝ Էն-

վեր փաշայի կրտսեր եղբայրը, ոչ մի միջոց չի ձեռնարկում և քաթար բնակչությանը ժամանակ է տալիս երեք օր շարունակ կոտորելու քրիստոնյա՝ հիմնականում հայ բնակչությանը: Այն ժամանակ, երբ քաղաքի փողոցներում լավում էին կրակոցներ ու մոլեռանդ քաթարների անմեղ զոհերի ճիչերը, Նուրի փաշան զորահանդես էր անցկացնում և իր սպաների հետ խրախճանքի սեղան նստում «Մետրոպոլ» հյուրանոցում: Դաշկերույթի ժամանակ երգում են կովկասյան մի երգ և չթաքցրած հանդիսավորությամբ երգի բովանդակությունը քարզմանում գերմանացի սպայի համար, որ այժմ Թուրքիան կվերադարձնի իր հին սեփականությունը՝ Կովկասը:

Հակառակ գերմանացի սպաների, դանիական և շվեդական հյուպատոսությունների ակտիվ բողոքների, Նուրի փաշան քաթարներին բույլ է տալիս տնօրինել վայրենիների մման: Անգամ քաղաքի օտարազգի բնակիչները չեն պաշտպանվում. երկու գերմանացիների սպանությունը հետագայում ուղղակի ժխտվում է: Դաշկերույթի ժամանակ ավագ լեյտենանտ Պարաքվինի և Նուրի փաշայի միջև ընդհարում է տեղի ունենում, արդյունքում՝ Խալիլ փաշայի գերմանացի սպան՝ Արևելյան բանակի շեֆը, հեռացվում է պաշտոնից:

Մեյտեմբերի 15-ին, 16-ին և 17-ին 20000-30000 հայ կոտորվեց Բաքվում: Դրան նախորդել էին Ղարաքիլիսայի, Արդահանի, Օլթիի և Եկատերինենֆելդի կոտորածները, որոնց ժամանակ սպանվեցին նույնքան հայեր: Դրան հետևեցին Նուխին և Արեշը:

Սակայն այս ամենը Թուրքիայում հայ ժողովրդի բնաջնջման միայն վերջաբանն էր:

## V. ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ

### 1. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄ

Համընդհանուր տեղահանության և դրա հետևանքների պատասխանատվության հարցը գերմանական փաստաթղթերի հրապարակումից հետո այլևս բացատրության կարիք չուներ: Թուրքական կառավարությունը և նրա ղեկավար նախարարները անձամբ իրենց են համարում կարգադրված միջոցառումների հեղինակները: Դրսից, առանձնապես Գերմանիայից, եկող ամեն մի պատասխանատվության մասնակից լինելը ոչ միայն չի



վիճարկվում նրանց կողմից, այլև սկզբունքորեն ժխտվում է: Մի բրոշյուրում, որը 1916թ. մարտի 16-ին Բ. Դուռը բաժանեց Կ. Պոլսում օտար իշխանությունների ներկայացուցիչներին, ասվում է.

«Այն պնդումները, ըստ որոնց՝ Բ. Դուռն ձեռնարկած միջոցառումները խթանելով են եղել որոշակի օտար իշխանությունների կողմից, լրիվ անիմմ են: Օտմանյան կառավարությունը, հաստատ որոշած լինելով պահպանել իր բացարձակ անկախությունը, բնականաբար ոչ մի տեսակի միջամտություն իր ներքին գործերին չէր հանդուրժի, ինչպիսի ձևով և ում կողմից էլ այն արվեր, անգամ իր բարեկամների ու դաշնակիցների կողմից»:

Երբ Թուրքիայի ներսում և արտասահմանյան մամուլում տարածվեցին զրպարտություններ, թե Գերմանիան ոգևորել է տեղահանման միջոցառումները և կազմակերպել դրանց իրագործումը, դեսպանությունը Բ. Դուռնից պահանջեց ելույթ ունենալ այդպիսի պնդումների դեմ: Դրանից ելնելով Բ. Դուռը զավառական իշխանություններին հրաման տվեց պաշտոնապես հերքել այդպիսի լուրերի տարածումը, որոնք սովորաբար գալիս էին թուրք սպաներից, ծառայողներից և հոգևորականներից, և որոնց հավատում էին թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները: Մահմեդականների մեջ գտնվող ավելի նրբազգաց տարրերը, որոնք ամաչում էին հայերի դեմ իրենց գործած անոթալի արարքներից, բնականաբար, նախընտրում էին բիծը գցել դաշնակից Գերմանիայի վրա: Նրանք չէին ուզում հավատալ, որ իրենց սեփական կառավարությունը կարող էր լինել այսպիսի սարսափելի գործողությունների հեղինակը: Սակայն ինչքան էլ գերմանական կառավարությունը և դեսպանությունը առարկություններ են անում Բ. Դուռնը այս ստերի կապակցությամբ, որոնց արտասահմանում հաճույքով էին հավատում, որքան էլ մեծ վեզիրը և ներքին գործերի նախարարը ուղղակիորեն իրենց էին հայտարարում հայերի դեմ կիրառված միջոցառումների միակ պատասխանատուն, երկրի թուրք մոլլաներն ու պետական պաշտոնյաները չէին դադարում օժանդակել հավատալու այդ զրպարտություններին: Գերմանական կառավարությունը և դեսպանությունը հաճախ և համառորեն Բ. Դուռնը զգուշացրել են յուրաքանչյուր խոհեմ մարդու համար պարզ այն հետևանքների մասին, որոնք կառավարության կախախակեցման քաղաքականության պատճառով անպայման բացասաբար կանդրադարձան երկրի տնտեսական ապագայի և հաշտության բանակցությունների վրա: Սակայն այս նախազգուշացումները ոչ մի ազդե-

ցություն չունեցան դեկավար այրերի վրա: Ո՞վ էր մեղավոր:

Հակահայկական քաղաքականության ոգին երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեն էր: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը և փոխգնդարախիմուս Էնվեր փաշան այդ քաղաքականության իրագործման համար ձևակառուրեն էին պատասխանատու: «Այստեղ ոչ ոք ուժ չունի կոմիտեի բազմազիսանի հիդրային, նրա շովինիզմը և ֆանատիզմը զսպելու համար», - գրում է կոմս Վոլֆ Մետերնիխը 1916թ. հունիսի 30-ին:

«Կոմիտեն պահանջում է հայերի վերջին մնացորդների ոչնչացումը, և կառավարությունն ստիպված է զիջել: Իսկ կոմիտեն կառավարության կուսակցական կազմակերպությունն է ոչ միայն մայրաքաղաքում: Այն տարածվել է բոլոր վիլայեթներում: Յուրաքանչյուր պաշտոնյայի՝ վալիից մինչև կայմականը օգնում կամ հսկում է կոմիտեի մի անդամ»:

Երկրի զավառական քաղաքներում բռնի միջոցառումների նախապատրաստման, կազմակերպման և անխնայ իրագործման շարժիչ ուժերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեին միացած երիտթուրքական ակումբներն էին: Նրանք ներկայացնում էին ձևական մեղադրական ցուցակներ: Հայ առաջնորդների մի շարք քաղաքական սպանություններ նրանց ձեռքի գործն էին: Այն վալիներին, որոնք ուզում էին մեղմել միջոցառումները կամ բացառություններ անել, աքսորում էին ողջ ընտանիքով կիրառելով ամենավայրագ ձևերը: Նույն ձևով էին վարվում նաև երեխաների, հիվանդների, հղի կանանց, կույրերի, ներառյալ զինվորական ընտանիքների հետ՝ առանց դավանանքի տարբերության: Հանցագործներից և քուրդ ավագակներից բանդաներ էին կազմում՝ արտագաղթողների քարավանների վրա հարձակվելու և նրանց կտորելու համար: Նրանք հարստանում էին բռնագրաված ավարով: Նրանց բացահայտ միտումը՝ հայ ժողովրդի բնաջնջումն էր:

Մենատի անդամների մեջ կային շատերը, որոնց հաճելի չէր կառավարության գործողությունը և նրանք պախարակում էին այն: Ահմեդ Ռ-իգա բեյի հարցապնդմանը կառավարությունը պատասխանում է իր գերազանցը չունեցող ցինիզմով:

Տեղահանման հրամանը կատարող մարմինները բանակի հրամանատարներն ու վիլայեթների բարձրագույն քաղաքացիական պաշտոնյաներն էին: Ձեռնալ փաշան, որը Սիրիայում 4-րդ բանակի գլխավոր հրամանատարն էր, և որի հրամանատարության տակ էին գտնվում Կիլիկիայի և

Հալեպի վիլայեթները, առանձնահատուկ դիրք գրավեց Կ. Պոլսի իշխողների հանդեպ: Նա իր մարզում կանխեց ծանր ոսնձգությունները և որոշ բան արեց տեղահանվածներին կերակրելու ու միջոցներով ապահովելու համար: Սակայն նա ևս չհակադրվեց տեղահանությանը և տեղահանվածներին իսլամացնելուն, քանի որ պետք է հաշվի նստեր կոմիտեի հետ: Ի արդարացումն իրեն հայտարարեց, որ «Թալեաթ բեյն է որոշում, թե ինչ ծավալով պետք է տեղի ունենա արտաքսումը, իսկ ինքը՝ Ջեմալը, պետք է միայն հոգ տանի ներքին գործերի նախարարի տված կարգադրությունների զինվորական կատարումների համար»:

Որպես կանոն, հրամանները տրվում էին բանակի գլխավոր հրամանատարներին և գլխավոր հրամանատարներից վալիներին, մյուսասարիֆների և կայմակամներին, որոնք չնչին բացառությամբ, պատրաստակամորեն ձեռնարկում էին անհեռատես միջոցառումների իրագործումը: Կենտրոնական կառավարությունը պաշտոնյաներին պարտադրում էր տեղահանության միջոցառումներն անցկացնել ամենադաժան և ամենախիստ ձևով՝ նաև կանանց և երեխաների նկատմամբ: Էրզրումում գլխավոր հրամանատարությունը դիմադրություն ցույց տվեց վալիի՝ արտագաղթողների քարավանները պաշտպանության տակ վերցնելու ջանքերին, և իրականացրեց նաև գերմանական պաշտպանության տակ գտնվող բոլոր կանանց և երեխաների արտաքսում: Արտագաղթվածների զանգվածային սպանդների ժամանակ միասին էին գործում կանոնավոր զնդերը և չերքեզներից, քրդերից ու հանցագործների հրոսակախմբերից հավաքագրված խմբերը: Որոշ վալիներ, մյուսասարիֆներ և կայմակամներ արտաքսման քողարկված ձևն ավելորդ էին համարում և բոլոր քրիստոնյաներին, ինչպես Դիարբեքիում, Ջեզիրեում և Միդիաթում, տեղնուտեղը մորթել էին տալիս: «Տեղահանությունների ժամանակ տղամարդկանց ոչնչացումը մեծ մասամբ տեղի էր ունենում ոչ թե քրդերի, այլ ուղեկցող ժանդարմների կողմից»:

Նշանակման վայրը հասած ողջ մնացածների ոչնչացումը, որոնք հանկենտորդացման ճամբարներում սովամահության էին մատնվում կամ կոտորվում, նույնպես պաշտոնյաների ձեռքի գործն էր: Բաղդադ ուղարկված Խալիլ բեյի զնդերը Մոսուլի ճանապարհին ոչնչացրին իրեն հանդիպած տեղահանվածների բոլոր «բնակավայրերը»: Այդ նույնը նրանք պատրաստվում էին անել Մոսուլի հայերի հետ, սակայն հանդիպեցին ֆելդմարշալ ֆոն Գոլցի դիմադրությանը: Ռաս ու Այնի համակենտրո-

նացման ճամբարի 14000 տեղահանվածներ քաղաքի կայմակամի «հրամանով» կոտորվեցին չերքեզների օգնությամբ: Հայկական աշխատանքային գումարտակների զնդակահարումը տեղի ունեցավ սպաների հրամանատարության տակ գտնվող միլիցիայի պաշտոնյաների հրամանով: Կառավարական այլ պաշտոնյաները, որոնք դիմադրում էին հրամանների կատարմանը, կառավարության կողմից պաշտոնանկ էին արվում: Հալեպի վալի Ջեբալ բեյին տեղափոխեցին Կոնիա, քանի որ նա չուզեց թույլ տալ որևէ տեղահանություն կամ կոտորած իր վիլայեթում: Նույն պատճառով նրան ետ կանչեցին Կոնիայից: Դեյր էլ Ջորի մյուսասարիֆ Սայիդ բեյին, որը փորձում էր մեղմացնել կառավարության հրամանների կատարումը, փոխարինեցին չերքեզ Ջեքի բեյով, որը մաքրեց համակենտրոնացման ճամբարները և արդեն կիսով չափ սովի մատնված տարագիրներին տասնյակ հազարներով արտաքսեց ավելի հեռու, որպեսզի նրանք անհետանան ճանապարհին: Այն հազվագյուտ թուրք պաշտոնյաները, որոնք մարդկայնորեն զգայուն էին և փորձեցին օգնություն ցույց տալ հայերին, ինչպես Հուսեյն Քյազիմ բեյը (Հալեպի և Սալոնիկի նախկին վալին) Դամասկոսում և զնդապետ Քեմալ բեյը Հալեպում դիմադրության հանդիպեցին իշխանությունների կողմից: Դիարբեքիի վալի Ռեշիդ բեյի հրահանգով սպանվեց Միդիաթի կայմակամը, որովհետև վերջինս հրաժարվել էր կոտորել իր մարզի քրիստոնյաներին: Անձամբ Ռեշիդ բեյը՝ Դիարբեքիի կոտորածների կազմակերպիչը, ոչ թե հանվեց գործից, ինչպես պահանջում էր հյուսիստոս Հոլշտայնը, այլ տեղափոխվեց Անկարա: Երբ նա Թուրքիային անձնատուր լինելուց հետո ձերբակալվեց զինադադարի հանձնաժողովի կողմից և պետք է պատասխանատվության կանչվեր, ինքնասպանություն գործեց:

Մի անգամ ևս պետք է նշել, որ ազնիվ մահմեդականները հայերի դեմ գործունեություն ընդունում էին որպես բիծ Թուրքիայի համար և մեղսագործություն աստծո պատվիրանների դեմ: Թուրք բնակչությունը ևս, չնայած մեծ մասամբ անտարբեր դիտում էր արտաքսումը և թալանում հայերի թողած տները, ոչ միշտ է համաձայն եղել կառավարության գործողությանը: Նա շատ շտտով զգաց հայ արհեստավորների և վաճառականների արտաքսման հետևանքով առաջացած տնտեսական դժվարությունները:

Հայ ժողովրդին արտաքսելը, մորթելը, սովամահ անելը, իսլամացնելը թուրք ժողովրդի ատելության և կրքոտ մոլեռանդության գործը չէր: Հայերի բնաջնջումը, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ, թուրք կառա-

վարության վարչական միջոցառումն էր:

## 2. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանիային ոչ միայն մեղադրեցին տեղահանության միջոցառումները ոգևորելու և կազմակերպելու մեջ, այլ նույնիսկ որոշ գերմանացիների մեղադրեցին կոտորածներին ակտիվ մասնակցելու համար: Ինչքան արտասահմանյան բրոշյուրներ ու քերթեր են աչքի անցկացրել, խոսքը երեք դեպքի մասին է:

1. Ռյուսլերի դեպքը: Անգլիական և ֆրանսիական մամուլում (Times, Westminster Gazette, Matin, Հավասի սեպտեմբերի 30-ի հեռագիրը) հյուպատոս Ռյուսլերը մեղադրվում էր, որ Հալեպից գնացել էր Այնթապ՝ «այնտեղի ջարդերը անձամբ ղեկավարելու համար»: Անգլիայի Լորդերի պալատում՝ որպես Գերմանիայի մեղսակցության անուղղակի ապացույց, «ամերիկացի ակնատեսների զեկուցագրերի» հիման վրա, լորդ Գրեյը հաղորդել է, որ «գերմանական հյուպատոսության պաշտոնյաները Փոքր Ասիայում ոչ միայն դրդում, այլև ակտիվորեն ոգևորում էին ոճրագործությունները»: Բավական կլինե՞ր վկայել այստեղ հրապարակված գերմանական հյուպատոսների զեկուցագրերի ընդհանուր բովանդակությունը, որպեսզի հերքվեն այս գրպարտությունները: Մակայն, քանի որ Ռյուսլերի դեպքում խոսքը առանձնահատուկ տվյալների մասին է, որոնք վկայակոչում են 1915թ. մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը հյուպատոսի Մարաշ կատարած գործուղումը, ես ընդգրկել եմ Մարաշի և Այնթապի ամերիկյան միսիոներների բերած փաստերը, ինչպես նաև անգլիական պետական գործիչ միստր Ի.Ս. Վուդլի վկայությունները, որոնք լրիվ հերքում են նրա մեղսակցությունը (N 25, Հավելված 2, N 188, Հավելվածներ 1-5):

2. Էքարտի դեպքը: Անգլիական Կապույտ գրքում, N 31 (1916թ.) «The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915/16 Documents presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce. London, Causton and Sons 1916», N 134-ի տակ, 530 էջում տեղ է գտել Թումաս Կ. Սկրտչյանի նամակի մի հատվածը, որը հրապարակվել էր 1916թ. ապրիլի 1-ին «Կոչնակ» քերթում (այն օգտագործվել է նաև Ա. Մանդելշտամի կողմից «Le sort de J Empire Ottoman, Payot et Cie» գրքում, 1917թ. էջ 304): Պարոն Սկրտչյանը հիմնվում է երկու կանանց պատմածների վրա, որոնցից մեկը անգլուհի է:

Հալեպով ճանապարհորդելիս նրանք երկու հայից, որոնք գալիս էին Ուրֆայից և այնտեղ հյուրընկալվել էին գերմանական ծագումով շվեյցարացի Յակոբ Քյունցլերի մոտ, լսել էին Ուրֆայում տեղի ունեցած կոտորածներին պարոն Էքարտի մասնակցության մասին հետևյալը: Վերջին կարծեցյալ աղբյուրը բնութագրելու համար նախապես նշեմ, որ պարոն Էքարտը և պարոն Քյունցլերն աշխատում էին միևնույն գերմանական Արևելյան առաքելությունում, որ նրանք իմ գործընկերներն ու բարեկամներն են, և երկու տասնամյակ, նաև պատերազմի ժամանակ, իրենց բոլոր ուժերը նվիրել են Ուրֆայի հայերի օգնության գործին: Պարոն Քյունցլերը եղել է միսիոներական հիվանդանոցի սարկավազը, պարոն Էքարտը՝ որբանոցի և գորգագործական մանուֆակտուրայի ղեկավարը: Ահա, ուրեմն, պարոն Քյունցլերի անունից տրվում են հետևյալ ցուցմունքները.

«Պարոն Քյունցլերը միևնույն ժամանակ ցավում էր, որ պարոն Էքարտը դավաճանեց հայերին և թուրքերին հանեց նրանց դեմ: Պարոն Էքարտը՝ Ուրֆայի գերմանական որբանոցի նախկին պրեզիդենտը և ներկայումս գորգերի առևտրի վարչության ղիբեկտորը, գերմանական հրետանագործի զնդապետ էր: 1895թ. կոտորածներից հետո եկել էր Ուրֆա՝ որպես միսիոներ և լրտես: 1915թ. աշնանը նա քաջալերում էր թուրքական, քրդական և արաբական խուժանին՝ հարձակվել հայերի վրա, և պատասխանատու է երեք անգամ կրկնվող կոտորածների համար: Առաջին կոտորածը, որի ժամանակ սպանվեցին 250 հայ, տեղի ունեցավ 1915թ. օգոստոսի 19-ին, երկրորդը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին, այն տևեց մի շաբաթ, որի ժամանակ սպանվեցին մոտավորապես 300 հոգի, և ողջ քաղաքը կողոպտվեց: Երրորդը տեղի ունեցավ հոկտեմբերի 1-ին: Վերջում բոլոր հայերից պահանջեցին, որ պատրաստվեն Դեյր է Զոր գնալու: Երբ վերջիններս առարկեցին, թե իրենք կորցրել են ամեն ինչ և ոչինչ չունեն, որ կարողանան հետները վերցնել, Ֆախրի փաշան հրամայեց կոտորել նրանց: Ջարդը տևեց 10 օր: Գերմանական հրետանագործի գնդապետն ավերեց հայերի բնակարանները, եկեղեցին և մնացած ամեն ինչ՝ այդպիսով վերջ դնելով Ուրֆայի հայ բնակչությանը: Այդ ժամանակ էր, որ հեղափոխական Ապելյանը, ղեղապարտ Աբրահամ Աբարյանը, Սողոմոն էֆենդի Կնյազյանը, Աբուհայաթյանը և Հակոբյանը բանտարկվեցին պարոն Էքարտի պահանջով: Հեղափոխական Ապելյանին, Աբարյանին և Հակոբյանին կախեցին, Կնյազյանին և Աբուհայաթյանին գնդակահարեցին»:

Փաստաթղթերում ներկայացված են պարոն Քյունցլերի զեկուցագրե-

րը Ուրֆայի իսկական իրադարձությունների մասին: Պարոն Էքարտի մասին ահավոր ստերը, որոնք իբր թե հնչել են պարոն Քյունցլերի բերանից, կարելի է հերքել մի քանի բառով: Պարոն Էքարտը 20 տարի առաջ ժողովրդական դպրոցի դիրեկտոր էր: Նա երբեք չի ծառայել հրետանագործում, կյանքում երբեք թնդանոթից չի կրակել: Նա նախկին պրեզիդենտ չի եղել, այլ մինչև Ուրֆայից մեկնելը՝ 1918թ., հայերի և որբերի օժանդակության գործի, ինչպես նաև գորգագործական մանուֆակտուրայի ղեկավարն էր: Գորգագործական մանուֆակտուրան, որը հիմնադրել են ես գերմանացի, դանիացի, հոլանդացի, շվեյցարացի, հայ բարեկամների օգնությամբ 20 տարի առաջ, Արդուլ համիդյան կոտորածներից հետո, որպես հայերի օգնության գործ, մինչև պատերազմի սկիզբը աշխատանք ու հաց էր տալիս հայ կանանց և աղջիկներին: Որբանոցում նա պահել է ավելի քան 700 հայ որբ երեխաների: Պատերազմի ժամանակ ևս պարոն Էքարտն իր ուժերի ներածին չափով արեց ամեն ինչ, որպեսզի պաշտպանի հայերի կյանքը Ուրֆայում և օգնի կարիքավորներին:

Անսովոր ոչինչ չկա այն բանում, որ զրպարտանքը որոնում է հենց այն մարդկանց, որոնք իրականում ամենամեծ վաստակն ունեն, ինչպես Ռյոսլերի և Էքարտի դեպքում:

3. Գերմանացի մի սպայի դեպքը Մուշում: Հիշատակված Կապույտ գրքում (N 25, էջ 94) Մուշի կոտորածի վերաբերյալ մի զեկուցագրի կապակցությամբ, ըստ կովկասյան «Մշակ» հանդեսի, պատմվում է հետևյալը. «Ըստ կովկասյան տեղեկագրերի՝ թուրքերի դավաճանության և խաբեության միջոցով 20 հայկական գյուղերից մոտավորապես 5000 հայերի Մուշի Մուրբ Կարապետ վանքի շուրջն են հավաքել և կոտորել: Կոտորածն սկսվելուց առաջ մի գերմանացի սպա բարձրացել է վանքի պարսպի վրա և հայերի գլխին լուտանքներ է քափել, թե թուրքական կառավարությունը նրանց նկատմամբ բարեկամաբար է վերաբերվել, պարզևատրել է նրանց, իսկ նրանք գոհ չեն մնացել և պահանջել են ինքնավարություն: Հետո ատրճանակի կրակոցով համընդհանուր կոտորածի նշան է տվել»<sup>1</sup>:

Այս պատմությունը ևս հնարովի է: Գերմանական զինվորական միսիային արված հաղորդման միջոցով հաստատվել է, որ 1915թ. հուլիսի իրադարձությունների ժամանակ Մուշում և նրա շրջակայքում ոչ մի գերմանացի չի եղել: Իմ հարցումին գթության քույր Ալմա Յոհանսոնը, որն այժմ ապրում է Ռոններթում (Շվեդիա) և որն ականատես է եղել կոտորածնե-

րին, հայտարարեց. «1915թ. ամռանը Մուշի շրջանում, առավել ևս կոտորածի ժամանակ, ոչ մի գերմանացի չկար»:

Ջրպարտանքի երեք դեպքերի դեմ կան բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են տեղահանվածների համար գերմանացի հյուպատոսների անխոնջ պաշտպանության, գերմանացի միսիոներների և միսիոներուհիների անձնագոհ օժանդակության և ի պաշտպանություն հայերի գերմանացի սպաների հաջող միջամտության մասին:

Այստեղ բավական է բերել զինվորական պաշտպանության ինձ հայտնի դեպքերը:

1. Պատերազմական շրջանի կամավոր, գերմանացի Կարլ Շլյմեն՝ գերմանական հյուպատոսության աշխատակիցն էր զորումում, պատմում է, թե ինչպես ինքը հունիսի 18-ին ուղեկցել է ավստրիական դահուկորդների միսիայի անդամներին, որոնց վախն վստահել էր մի հայ ընտանիք, նրանց մեջ էր նաև Էրզրումի եպիսկոպոսի քույրը: Բաբերդում նրանց կառապանին խելուց հետո, փորձել են հայերին ևս խել նրանցից: Նրանք պաշտպանվել են: Շարունակելով ճանապարհը՝ հանդիպել են կոմիտեականների կանոնավոր պահակների: Պահպանող ժանդարմները հրաժարվել են շարունակել ուղեկցել նրանց և բազմաթիվ անգամներ առաջարկել են կոտորել հայերին: Սեփական կյանքը վտանգի ենթարկելով՝ ճանապարհորդները հայ ընտանիքը հասցրել են Երզնկա:

2. Պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերը, որը մինչև պարոն Վերքի ժամանումը, Էրզրումում հյուպատոսության փոխարինող էր նշանակված, 1915թ. օգոստոսին զինվորական հանձնարարությամբ Մոսուլ գնալիս, իր հրամանատարության տակ գտնվող սպաների և զորքերի հետ միասին, հրաժարվելով համագործակցել իրեն ուղեկցող թուրք սպաներին, խանգարել է նրանց Մոսուլից ստացված հրամանի համաձայն կոտորել տեղահանվածների մի ճամբար, որը ջարդի վախից խրամատավորվել էր Բիթլիսի և Մուշի միջև:

3. Գեներալ ֆելդմարշալ բարոն ֆոն դեր Գոլցը Մոսուլ ժամանելուց հետո (1915թ. դեկտեմբեր) իմացել է, որ Միջագետքի գլխավոր հրամանատար Նուրեդդին բեյը հրաման է տվել Բաղդադից Մոսուլ ուղարկված հայերին այնտեղից էլ ավելի հեռու քշել և Մոսուլում բնակվող հայերին ևս

<sup>1</sup> Հմմ. նաև Ա. Մանդելշտամ "Le sort de l'Empire Ottoman", էջ 304:

հասցնել Եփրատ: Ֆելդմարշալն այս միջոցառումը համարել է ռազմական առումով չհիմնավորված և միջամտել այդ կապակցությամբ վիայեթի իշխանությունների մոտ, սակայն անարդյունք: Նա գոնե հասել է այն բանին, որ հայերը միառժամանակ կարողանան մնալ Մոսուլում: Երբ մինչև 1916թ. հունվարը Կ. Պոլսից ոչ մի պատասխան չի ստացվել, ֆելդմարշալը, հիմնվելով բարձրագույն հրամանատարական իր լիազորության վրա, արգելել է Մոսուլի վալուն՝ ավելի հեռու փոխադրել հայերին: Մինչև հունվարի վերջը պատասխան չի ստացել, սակայն տեղեկացել է, որ կառավարությունը պնդում է տեղահանումը: Այն ժամանակ ֆելդմարշալը հեռագրով խնդրել է պաշտոնանկ անել իրեն: Դրանից հետո միայն Էնվեր փաշան հեռագրով քաղաքավարի պատասխանել է նրան, որտեղ հավաստիացումներ է արել հայերին Մոսուլում թողնելու մասին: Միաժամանակ ֆելդմարշալի ուշադրությունը հրավիրել է այն բանի վրա, որ բարձրագույն հրամանատարական լիազորությունը նրան իրավունք չի տալիս խառնվելու թուրքական կայսրության գործերին:

4. Գեներալ Լիման ֆոն Սանդերսը՝ նոյեմբերի 9-ին, երբ գտնվում էր Չմյուռնիայում՝ 56-րդ դիվիզիան և եվրոպական պատերազմական քառերաբեմից հետո գործի դրված 16-րդ դիվիզիան ստուգելու կապակցությամբ, իմացել է, որ նոյեմբերի 8-ին Չմյուռնիայում ձերբակալվել են բազմաթիվ հայեր և գնացքով ուղարկվել են երկրի խորքը, այդ թվում՝ ծեր կանայք և հիվանդ երեխաներ, որոնց ոստիականները ամենակապիտ ձևով հանել էին անկողիններից: Նոյեմբերի 10-ին նա բանակի շտաբի պետին ուղարկել է վալու մոտ հայտնելու, որ ինքը այդպիսի զանգվածային ձերբակալումներ և տեղահանումներ չի հանդուրժի և իր հրամանատարության տակ գտնվող ջոկատների օգնությամբ զենքի ուժով կարգելակի նման միջոցառումների իրագործումը: Միաժամանակ հրամայել է նախապատրաստություններ տեսնել: Նա մինչև կեսօր վալուն մտածելու ժամանակ է տվել: Ժամը մեկն անց կես շտաբի պետը զեկուցել է նրան, որ ձերբակալությունները և տեղահանությունները դադարեցվել են: Նույն ձևով գեներալ ֆոն Սանդերսը կասեցրել է Ուրֆայի տաս աչքի ընկնող ամենահարուստ հույն երևելիների ձերբակալությունը, որոնք առանց հարցաքննության բերվել էին Չմյուռնիայի բանտը:

5. Գեներալ ֆոն Լոսովը և գեներալ բարոն ֆոն Կրեսենշտայնը<sup>2</sup> (Թիֆ-1 Լիման ֆոն Սանդերսը, բացի ֆոն դեր Գոյցից, որը մի բանի ամիս 6-րդ բանակի հրամանատարն էր, միակ գերմանացի սպան էր, որը խնդրո առարկա ժամանակաշրջանում թուրքական բանակում գրավել է գլխավոր հրամանատարի պաշտոնը:

2 Հմմ. նաև N 233 և N 234:

լիսի գերմանական պատվիրակության ղեկավարը) եռանդագին միջոցներ են ձեռնարկել, որպեսզի թուրքական կովկասյան բանակը, որը հակառակ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի ներխուժել էր Թիֆլիս, Էրիվանի, Երիզավետպոլի և Բաքվի նահանգները, ետ քաշվեր պայմանագրով որոշված սահմանը: Իրենց բնակավայրերից փախած կովկասյան հայերը այնպիսի հուսահատ վիճակի մեջ էին ընկել, որ կես միլիոն տղամարդկանց, կանանց և երեխաներին սովամահություն էր սպառնում: Հակառակ Էնվեր փաշայի մերժման, գլխավոր հրամանատարությունը (տե՛ս Հինդենբուրգի և Լուդենդորֆի հեռագրերը) հնարավոր դարձրեց, որպեսզի փախած հայերը կարողանան վերադառնալ իրենց բնակավայրերը:

6. Փոխգնդապետ Պարաքվինը, որն այդ ժամանակ Խալիլ փաշայի բանակի հրամանատարներից էր, Բաքուն գրավելուց հետո եղել է այն բանի վկան, երբ Նուրի փաշան քաթարներին ազատ թույլ տվեց կոտորել հայերին, առանց որևէ միջոց ձեռնարկելու քաղաքի քրիստոնյաներին պաշտպանելու համար: Երբ փոխգնդապետ Պարաքվինը, որը դեռ դրանից առաջ իզուր պահանջում էր ջարդերը կանխելու համար միջոցներ ձեռնարկել, չբաքցրեց իր դժգոհությունը և կրկին պահանջեց քրիստոնյաներին պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկել, առաջացրեց Նուրի փաշայի անբարյացակամությունը իր հանդեպ այնպիսի ուժով, որ դրանից մեկ օր անց Խալիլ փաշան պաշտոնանկ արեց նրան:

7. Գերմանական Կատարինենդորֆ գաղութում գերմանացի գաղութաբնակների միջամտության շնորհիվ քաթարների ձեռնարկած կոտորածից փրկվել են 125 հայ:

Չեմ կասկածում, որ դեռ շատ սպաներ, որոնք ի վիճակի էին պաշտպանություն ցույց տալ վտանգի ենթարկված հայերին, նույն կերպ են գործել: Իմ նյութի ամբողջության համար արժեքավոր կլինեն Թուրքիայից վերադարձած գերմանացի ականատեսներից տեղեկություններ ստանալ հայերի հետապնդման մասին:

### 3. ՌԱԶՄԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Անըրբանկատությունը, որով, չնայած կայսրության վտանգված գոյությանը, կոմիտեն անց էր կացնում իր ներքին քաղաքական ծրագիրը, բնութագրվում է նրանով, որ միջոցառումների անցկացման ժամանակ չէին

հարգվում ո՛չ դաշնակիցների և ո՛չ էլ պատերազմի վարման շահերը: Թուրքիայի գերմանական ձեռնարկությունները, ինչպես օրինակ՝ բամբակի ձեռնարկությունը Կիլիկիայում և գորգագործական մանուֆակտուրան Ուրֆայում, հայերին արտաքսելու պատճառով զրկվեցին իրենց որակյալ բանվորական ուժից, գերմանական հիվանդանոցները՝ բուժական և խնամող անձնակազմից, դպրոցներն ու որբանոցները՝ ուսուցիչներից և օգնականներից: Հայերի ազգային ունեցվածքի բռնագրավման պատճառով գերմանական բանկերն ու առևտրական տները զրկվեցին վարկերի ապահովվածությունից: Անգամ սեփական ռազմական շահերին վնասելը ետ չկանգնեցրեց կոմիտեին հետապնդման իր վճռական մտադրությունից: Այն, որ էտապի փողոցները լցված էին կոտորածներից հետո չթաղված և սովամահ եղած հայերի դիակներով, որ բժավոր տիֆը տարածվել էր ողջ կայսրությունով մեկ, ոչ մեկին չէր անհանգստացնում: Այն, որ հայերի մեկուսացման և ոչնչացման պատճառով բանակը զրկվել էր բանիմաց զինվորական արհեստավորներից, կառավարությունը և բանկերը՝ իրենց գործին իրագեկ ծառայողներից, հիվանդանոցներից ու բժշկական օգնության կետերը՝ որակյալ բժիշկներից և լազարեթի անձնակազմից, ամենից քիչ էր հոգս պատճառում: Անգամ գլխավոր հրամանատարության բողոքները բանի տեղ չէին դնում: 1915թ. ճգնաժամային ժամանակաշրջանում անատլիական երկաթգծի գլխավոր դիրեկտորը երկաթուղու 850 հայ ծառայողներին արտաքսելու հրամանի պատճառով կանգնեց մի հարցի առաջ, որն անմիջականորեն կարող էր ազդել պատերազմի ընթացքի վրա: Այդ միջոցառումը հետաձգել տալ նրան հաջողվեց միայն այն պատճառով, որ նա հայտարարեց, թե նույն ժամին ստիպված է կանգնեցնել աշխատանքը ողջ ուղեգծի վրա: Միայն ճանձրալի բանակցություններից և բանակի գլխավոր հրամանատարության անվերջ ճնշումներից հետո հաջողվեց միջոցառման հետաձգումը փոխարինել դրա վերացմամբ և այդ ձևով երկաթգծի ձեռնարկությունում փրկել 850 հայերի և նրանց ընտանիքների կյանքը:

Ավելի վատ բան էր սպառնում երկաթուղային շինարարության ընկերությանը: 1916թ. հունիսին, Ամանոսի թունելի աշխատանքների ամենաեռուն պահին, շինարարության մեջ զբաղված 240 հայերի արտաքսման պատճառով աշխատողների թիվը, առանց ընկերությանը հարցնելու, մեկ հարվածով կրճատվեց համարյա կիսով չափ: Սպառնում էին այլ արտաքսումներ: Բոլոր որակյալ հայ աշխատողների, գործավորների բացակա-

յության պատճառով շինարարական աշխատանքների և կայարանի ձեռնարկության առաջընթացը մնացած բանվորներով դարձավ անհնար: Նոր բանվորների հավաքագրումը նույնպես անհնար էր: Անուրակ աշխատող զինվորներին գործի ընդունելը ամենաքիչը երեք ամսով կուշացներ շինարարության ժամկետը: Ամանոսի թունելի աշխատանքների դադարեցումն սպառնում էր փլուզումներով և երկաթգծի աշխատանքի երկարատև ընդհատումով: Միևնույն ժամանակ երկաթուղային հիվանդանոցից արտաքսվել էին երկու հայ բժիշկ և 43 դեղագործ ու հիվանդապահ: Երկաթուղային ընկերության բողոքներից ելնելով, թուրքական ռազմական նախարարի տված հակառակ հրամանը (18 հուլիսի 1916թ.) մնաց անհետևանք: Բեռլինի գերագույն գլխավոր հրամանատարի ռազմականայանի, ռազմական նախարարության և արտաքին գործերի գերատեսչության աջակցությամբ հաջողվեց նոր հրաման ստանալ (Թուրքիայի) ռազմական նախարարից՝ ուղղված 4-րդ բանակի հրամանատարին և Ադանայի վալիին, որպեսզի արտաքսված հայերը վերադարձվեն իրենց աշխատատեղերը: Սակայն վալին հայտարարեց (22 հունիսի), թե արտաքսվածներին վերադարձնելու վերաբերյալ ոչ մի հրաման չի ստացել, այլ միայն հրաման է ստացել «սահմանափակել արտաքսվողների թիվը»: Վալին, ի լրումն դրա, վստահեցրեց, որ եթե անգամ այդպիսի հրահանգ ստացած լինեք, չէր կատարի: Դրանից հետո (30 հունիսի) դեսպանը հայտարարեց նախարարներ Թալեաթ բեյին և Խալիլ բեյին, թե «միջոցառումներն այն տպավորությունն են բողոքում, կարծես թուրքական կառավարությունն ինքը ձգտում է այն բանին, որպեսզի պատերազմը տանուլ տա»: Չնայած այդ ընթացքում գեներալ ֆոն Ֆալկենհայնը ևս գերագույն գլխավոր հրամանատարի ռազմականայանից հեռագրով տեղյակ էր պահել Էնվեր փաշային «աշխատանքների լրիվ դադարեցման մասին, որի վերջը չի երևում» և նշել էր, որ «համալրման խափանումը ուղղակիորեն հարվածում է գերմանական շահին», ոչինչ չօգնեց դիմադրությունը կոտրելու համար: Հուլիսի 1-ին դեսպանը զեկուցում է, թե Թալեաթը կրկին ուզում է Էնվեր փաշայի հետ քննարկել արտաքսման հարցը, այնուհետև եզրակացնում է. «Արտաքսումը կոմիտեի կայացրած որոշումն է... Անգամ Էնվերն ու Թալեաթ բեյն անգոր են այդպիսի մոլեռանդ որոշումների դեմ»: Ոչինչ չփոխվեց: Հաջորդեցին այլ արտաքսումներ: 1917թ. մարտին Ամանոսի ուղեմասից անապատ են ուղարկվում 505 աշխատող՝ 187 ընտանիքի անդամներով, Տավրոսի ուղեմասից՝ համարյա նույնքան հայեր:

## 4. ՉՈՂԵՐ

Երբ հարց է ծագում, թե կոտորված, սովամահ եղած և իսլամացված հայերի թիվը քանիսի՞ է հասնում, ինքնըստինքյան հասկանալի է, որ ներկայացվում են ոչ լրիվ հաստատուն թվեր: Ըստ համընդհանուր կարծիքի, որը կիսում են նաև գերմանացի հյուպատոսները, թուրքահայերի կորստի թիվը հաշվվում է մեկ միլիոն, որոնց թվում կես միլիոն կանայք և երեխաներ: Դրան պետք է ավելացնել 50000-ից մինչև 100000 կովկասյան հայերին:

Ձեկուցագրերը պարունակում են հետևյալ տեղեկությունները՝ 1915թ. օգոստոսի 12-ին՝ զանգվածային տեղահանությունից վեց-յոթ շաբաթ անց, որը սկսվել էր հունիսի վերջերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ քաղաքացիների մեծ մասը դեռ ճանապարհին էր, և անապատի համակենտրոնացման ճամբարներում սովամահության բերքահավաքը դեռ խնդրո առարկա չէր դարձել, և խոսքը հիմնականում տեղափոխման ժամանակ տեղահանվածներին սպանելու կամ տեղում նրանց կոտորելու մասին էր, կոմս Հոնեկոնեն հաղորդել է, թե արևելքում սպանված հայերի թիվը հաշվվում է ամենաքիչը երկու, թերևս ավելի տասնյակ հազարներ: Մի քանի շաբաթ անց Էմվեր փաշան սպանված հայերի թիվը ներկայացնում է 300000: 1915թ. սեպտեմբերի 30-ին պարոն ֆոն Տիչկան Կ. Պոլսից գրում է. «Արդյոք զոհերի թիվը անցնո՞ւմ է 500000-ից թե ոչ, նշանակություն չունի»: 1916թ. հոկտեմբերի 4-ին զոհվածների թիվը հաշվվում է 800000-ից մեկ միլիոն: Այդպիսի հսկայական թիվը հասկանալի կդառնա, երբ հյուպատոսական զեկուցագրերից իմանում ես, որ քաղաքներում և ժամանակավոր ճամբարներում առանձին ջարդերից հետո զոհվածների թիվը, որպես կանոն, հաշվվում է հարյուրներով և հազարներով, անգամ անցնում է տասը հազարից: Արևելյան Անատոլիայից արտաքսվածներից հազիվ մեկ երրորդն է հասել արքայաձայր: Նրանք, ովքեր չէին ոչնչացվում ճանապարհին, ավելի մեծ ճամբարներում մատնվում էին կանոնավոր սովամահության: Այդպիսի ճամբարներից միայն մեկի մոտակայքում՝ Մեսքենեում (Եփրատի ափին, Հալեպի և Ռաքայի միջև), ըստ թուրք զինվորական դեղագործի վկայության, որը հաստատվել է մի թուրք սպայի օգնականի կողմից, թաղված են 55000 հայեր<sup>1</sup>: Տեղափոխությունների ընթաց-

քում տեղի ունեցած կոտորածներին մեծմասամբ զոհ են զնացել տղամարդիկ, համակենտրոնացման ճամբարներում սովից մահացել են համարյա բացառությամբ կանայք, երեխաներ, ծերեր: Դեյր էլ Չոբ հասած փոխադրումները 1915թ. հաշվվում էին 60000 հոգի: Անվերջ նոր ժամանող տեղահանվածների քարավանները հնարավոր էր ընդունել միայն այն պատճառով, որ նախորդ փոխադրվածները արդեն սովամահ էին եղել կամ տեղափոխվել մեկ այլ տեղ: Այսպիսով, 1916թ. ապրիլի 15-ին չորս փոխադրում կատարվեց դեպի Մոսուլ՝ թվով 19000 հոգի: Նրանք պետք է անապատով անցնեին 300 կմ: Մայիսի 22-ին, այսինքն՝ հինգ շաբաթ անց, այս փոխադրումներից Մոսուլ են հասել մոտավորապես 2500-ը: Կանանց և աղջիկների մի մասին ճանապարհին վաճառել էին բեղվիներին, մնացածը զոհվել էր սովից ու ծարավից: 1916թ. հուլիսի սկզբներին Դեյր էլ Չոբում դեռևս կային 20000 արտաքսվածներ: Ութ շաբաթ հետո, ըստ գերմանական սպայի վկայության, այդքանից մնացել էին միայն մի քանի արհեստավորներ, որոնք աշխատում էին զինվորների համար: Մնացած բոլորը, անգամ նրանք, որոնք իսկապես սկսել էին տեղավորվել հյուսիսային կայաններում, անհետացել էին: Կառավարությունը պնդում էր, թե նրանք ուղարկված են Մոսուլ: Սակայն ժողովուրդը կոտորվել էր Դեյր էլ Չոբից հարավ-արևելք ընկած հովիտներում: Նրանց խմբերով մեկը մյուսի ետևից մի կողմ էին տարել և հարյուրներով մորթել: Մի արաբ ականատես, որը գալիս էր հենց այդպիսի տեսարանի մի թատերաբեմից, հաստատել է այդ փաստը: 14000 արքայալների նկատմամբ ջարդերի նման ձևերի կիրառումը 1916թ. գարնանը հաստատվել է մի գերմանացու վստահելի տեղեկություններով: Մի ամիս շարունակ ամեն օր ճամբարներից տարվում էին 300-ից մինչև 500 արտաքսվածներ և մոտավորապես 10 կմ հեռավորության վրա մորթվում: Դիակները շարվում էին գետը: Ապրիլի 22-ին Ռաս ուլ Այնում դեռևս մնացած 2000 արտաքսվածներ՝ 14000-ի մնացածը, ավելի ուշ նրա այնտեղ այցելության ժամանակ, արդեն անհետացել էին: Այսպիսի գործողության դեպքում, երբ այն պարբերաբար շարունակվում էր երկու տարի, կարելի է հնարավոր համարել, որ ընդհանուր հաշվարկներով ոչնչացվել է մեկ միլիոն հայ: Թե ինչպիսին էր վիճակը համակենտրոնացման ճամբարներում, կկարողաք N 4 հավելվածի զեկուցագրում: Ով այն կարդացել է, չի զարմանա, երբ մեկ այլ ականատես վկայում է, որ հունվարի վերջին, երբ ինքը գտնվում էր Բաբում, երկուսուկես օրում մահացել են 1029 հայ:

1 Տե՛ս Հավելված N 4:

Հաշվարկման յուրատեսակ մեկ այլ ուղի կարելի է ընտրել (N 302, 4. 10.16) Հալեպում հավաքված 720 երեխաների ծնողների ու հարազատների ճակատագրի մասին եղած ցուցակի հիման վրա: Արտաքսված 120 երեխա, մինչև 9 տարեկան, իրենց հայրերին ու մայրերին կորցրել են հետևյալ պայմաններում. այն ժամանակ, երբ ամուսինները ծառայում էին բանակում, 246 մայրեր իրենց երեխաների հետ աքսորվել են: Բնական մահով մահացել են 129 հայրեր և 53 մայրեր, ոչ բնական մահով՝ 321 հայրեր և 379 մայրեր: Երեխաների հարազատների թիվը, որոնք զոհվել են տեղափոխությունների ժամանակ, կազմում էր 2616 հոգի: Երբեք, որոնցից կենդանի էին մնացել 720 երեխա, գալիս էին տասը տարբեր վիլայեթներից և մեկնելու ժամանակ հաշվվում էին 3336 անձ: Այսպիսով տեղափոխությունների ժամանակ անհետացել էր 78,5 տոկոսը: Եթե այս պայմանը հիմք ընդունենք և տեղահանվածների ընդհանուր թիվը ենթադրենք կլոր մեկուկես միլիոն, ապա մնացածների թիվը հաշվվում է 322000: Ինչ խոսք, այս օրինակը միայն փորձի արժեք ունի:

Հաշվարկումները, որոնք տեղ են գտել իմ «Հաղորդագրության»<sup>1</sup> մեջ, հենվում են Թուրքիայի հայ բնակչության վիճակագրության վրա, ելնելով պատրիարքարանի համայնքների ցուցակներից, ըստ որոնց՝ Թուրքիայի հայերի ընդհանուր թիվը հասնում է 1845450: Եթե հաշվենք այն հայերին, որոնք փախել են Կովկաս և ծովի վրայով Ալեքսանդրիա՝ 244400 հոգի, և այն հայերին, որոնք մնացել են տեղահանությունից հետո՝ 204700 հոգի (որը թերևս շատ բարձր է հաշվված), ապա տեղահանվածների թիվը հասնում է 1396350-ի: Արաբական անապատի եզրերին կենդանի մնացած հայերի թիվը, ըստ նոր տվյալների, հասնում է 150000-ից 200000-ի: Բացի այդ, եթե ընդունենք, որ իսլամացված, առևանգված կանանց, աղջիկների և երեխաների թիվը հասնում է 200000-ի, որն, իհարկե, երաշխավորված չէ, ապա կարելի է հանգել ընդհանուր հաշվի հետևյալ արդյունքին՝ 1845000 հայերից կլոր մեկ միլիոնը զոհվել է և 845000-ը դեռ կենդանի է, որոնցից մոտավորապես 200000-ը մնացել են իրենց հայրեցի քաղաքներում, 200000-ը ցրված են, 250000-ը փախել են Կովկաս և 200000-ը՝ որպես սովատանջ մուրացիկներ, մնացել են համակենտրոնացման ճամբարներում: Քանի որ պետք է նկատի ունենալ, որ ցրվածների և համակենտրոնացման ճամբարներում կենդանի մնացածների մեծ մասը իսլա-

<sup>1</sup> «Հաղորդագրություն հայերի վիճակի մասին Թուրքիայում», Թեմպի հրատարակչություն, Պոտսդամ, 1916թ., Վիճակագրություն, էջ 298-303:

մացված է, ապա իսլամացված հայերի թիվը կարելի է հաշվել 250000-ից 300000 հոգի: Կովկասյան և Կովկաս փախած հայերի մարդկային կյանքի կորուստները հաշվվում են 50-100 000: Թուրքահայերից բռնագրավված ազգային հարստությունը գնահատվում է մեկ միլիարդ:

Կարիք չկա կրկնելու, որ այս հաշվարկները չունեն և չեն կարող ունենալ ճշգրիտ վիճակագրական հիմք: Որոշ չափով վստահելի արդյունքի կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե թույլատրվի անցկացնել բուրքական և կովկասյան հայերի մարդահամար, և այն համեմատել բնակչության նախկին կազմի հետ: Ով չէր ուզեմա հուսալ, որ կենդանի մնացած հայերի թիվն ավելի մեծ լիներ, քան ենթադրվում է մինչև այժմ:

Պատերազմից առաջ թուրքական, կովկասյան, պարսկական և արաբական հայերի ընդհանուր թիվը հասնում է 3600000: Արդեն 800000 հայերի կորուստը կազմում է հայ ազգաբնակչության մեկ չորրորդը:

Ինչպե՞ս կարելի էր համեմատել պատերազմի մեջ գտնվող ժողովուրդների զրկանքները հայ ժողովրդի կորուստների հետ, որը պատերազմի հետ ոչ մի առնչություն չուներ:

##### 5. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Քանի որ այստեղ չեն կարող գրել Հայկական հարցի պատմությունը, այլ պետք է սահմանափակվեն միայն այնքանով, որ հանրագումարի բերեմ առկա փաստաթղթերը և կարևորագույն տվյալները, այդ իսկ պատճառով չեն քննարկում այն հարցը, թե ինչպես պատահեց, որ Արդուլ Համիդի տապալումից և սահմանադրության ընդունումից հետո Օսմանյան կայսրության տարրալուծվող ազգերի համերաշխությունը, որը հեղափոխության առաջին արբեցման մեջ փաստ էր դարձել և դեմոկրատական սահմանադրությամբ երաշխավորված էր թվում, կարճ ժամանակ անց վերածվեց քայքայման գործողության: Երիտթուրքական կոմիտեն, որը եռանդագին և կասկածելի ձևով հակադրվում էր բոլոր ոչ թուրքական ազգություններին, կլիկիյան կոտորածներով և ալբանական բռնությունների գործողություններով վերադարձավ Արդուլ Համիդի մեթոդներին: Իրար հաջորդող երեք պատերազմների ընթացքում նրա քաղաքականությունը մեկ հարյուրամյակի կարճ ժամանակահատվածում հասցրեց նախ աֆրիկյան տիրույթների, այնուհետև եվրոպական Թուրքիայի



կորստին և ի վերջո՝ ողջ կայսրության քայքայմանը, որը հավանաբար, պատերազմից հետո կշարունակի գոյություն ունենալ միայն որպես մի փոքր պետություն Անատոլիայի տարածքում:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի քաղաքական ծրագիրը՝ ստեղծել զուտ իսլամական, պանթուրքական կայսրություն, ուտոպիա հանդիսացավ: Երիտթուրքերի պատմական միսիան Թուրքիայի լիկվիդացումն էր: Տեղահանության միջոցառումները կատարվեցին պատերազմի ճգնաժամային փուլի ժամանակաշրջանում: Թուրքիան, որ կոչվում էր երեք ճակատով՝ Դարդանեղոս, Կովկասում և Միջագետքում, եվրոպական երեք հզոր պետությունների կողմից հարձակման ենթարկված, պատերազմի առաջին տասնմեկ ամիսների ընթացքում հույսը դրել էր միայն իր սեփական ռազմական ուժի վրա: Կենտրոնական պետությունները Բուլղարիայի և Ռումինիայի չեզոքության պատճառով ի վիճակի չէին անհրաժեշտ զինվորական քանակակազմով օգնության հասնել նրան: Առավել տարօրինակ է այն, որ իրենց ներքին քաղաքական ազգային ծրագիրն անցկացնելու համար երիտթուրքական իշխողներին «ամենաբարենպաստ առիթ» թվաց հենց իրենց ռազմական վիճակի ծայրահեղ վտանգավոր պահը (դարդանեղոսյան կոիվների ամենաեռուն ժամանակ)՝ այդպիսով խաղատախտակին դնելով տնտեսական գոյության հետ միասին նաև իրենց գաղափարական վարկը: Այս վարակ քաղաքականությունը շատ էր համապատասխանում երիտթուրքական իշխողների արկածախնդիր բնույթին:

Այնուհանդերձ կենտրոնական իշխանությունների հետ միասին ֆեդերացիան պահանջեց երիտթուրքական քաղաքականությանն առաջնորդող պատճառների և նպատակների բողոքում: Բ. Դուռը դաշնակից պետություններին բացարձակ խոստովանեց սեփական մեթոդների կիրառումը, որոնք պատկանում են իսլամական ժառանգությանը, միայն այն ժամանակ, երբ իրագործել էր իր մտահաղացման գլխավոր գործը և հայ ազգի բնաջնջման միջոցով դեսպանների թիկունքում «լուծել էր Հայկական հարցը»: Եվրոպական դիվանագետների առջև երևաց թուրքական միջնադարը՝ սերթուկով: «Ռազմական անհրաժեշտությունները» պատճառաբանություններ էին, որպեսզի տեղահանության վարագույրի ետևում Եվրոպային գրկեն՝ տեսնելու հայ ազգաբնակչության խեղդամահությունը: «Ռազմական անհրաժեշտությունները» հիմնավորված էին մի շարք պաշտոնապես հաղորդված դեպքերով,

որոնց կարևորությունը կարելի է գնահատել առանց մեկնաբանության:

1. Առանձին, ոչ լրիվ բացահայտված լրտեսական գործողությունները կիլիկյան ծովեզրին:

2. Ընդհարումներ դասալիքների հետ, որոնք միացել էին ավազակային բանդային (այն գոյություն ուներ դեռևս պատերազմից առաջ, Ջեյթունի հարևանությամբ):

3. Առանձին դեպքերում՝ իրական կամ կարծեցյալ ռումբերի հայտնաբերում (Կեսարիա, Էրզրում):

4. Թշնամական իշխանությունների կողմից կիրառվող դավաճանական պլանների օժանդակում:

5. Ապստամբություններ տարբեր վիլայեթներում՝ ենթադրական կամ իրական:

Այս դեպքերի կարևորությունը կարելի է տարբեր ձևով փաստարկել՝ կամ որպես վատ կառավարման ավելի կամ պակաս պատահական հետևանք (անգամ խաղաղ ժամանակներում ոչ անսովոր), կամ որպես «լայն տարածված դավադրության» և «համընդհանուր ծրագրված ժողովրդական ապստամբության» ախտանիշ:

Լրտեսական գործողությունները և դասալիքության պատմությունները պատկանում են այն բնականոն երևույթների թվին, որ իր հետ բերում է պատերազմը բոլոր ճակատներում, առավել ևս՝ սահմանամերձ շրջանների խառը ազգաբնակչության տարբերի շրջանում: Ռումբերի, զենքերի, արգելված թղթակցությունների, գրությունների և նման այլ բաների գտնելը, ինչպես ավելի ուշ մի առիթով նկատում է Զյուլմանը (17 նոյեմբերի 1916թ.), թուրքական իշխանությունների պատճառաբանությունների հայտնի գործիքն է: Այն, որ հայերը Անտանտի գործակալների հրահանգով «խոռվություն են բարձրացրել օտոմանյան կառավարության դեմ», որ այդ գործում իրենց դերն են խաղացել անգլիական ոսկին և ռուսական գնդացիները, հնարավոր է և կասկածի տակ է առնվել գերմանացի հյուպատոսների կողմից:

Կարծեցյալ կամ իրական «ապստամբությունները» տեղի են ունեցել Անատոլիայում (մի վայր, որն ունի Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի մեծության տարածք), ըստ Բ. Դուռան տեղեկագրերի՝ ոչ ավելի, քան վեց տեղերում տարբեր ժամանակահատվածներում. Մուշում (մարտի սկզբներին, 1915թ.), Ջեյթունում (25 մարտի 1915թ.), Վանում (20 ապրիլի

1915թ.), Շապին Գարահիսարում (3 հուլիսի 1915թ.), Սվեդիայում (30 հուլիսի 1915թ.), Ուրֆայում (1 հոկտեմբերի 1915թ.): Պետք է տարբերել, արդյաք դրանք տեղի են ունեցել համընդհանուր տեղահանությունից առաջ, տեղահանության ժամանակ քե դրանից հետո: Տեղահանությունն սկսվելուց առաջ ապստամբություններ տեղի են ունեցել Մուշում, Ջեյթունում և Վանում: Առաջին երկու դեպքում խոսքը ոչ թե «ապստամբությունների» մասին է, այլ ժանդարմների ու դասալիքների միջև կայացած աննշան ընդհարումների, որոնք անսովոր չէին նաև խաղաղ ժամանակներում: Օրինակ, հյուպատոս Անդերսը գեկուցում է մինչպատերազմյան շրջանում Բիթլիսի վիլայեթում մի շուրջկալի մասին, երբ «բռնել են 2500 քրդերի, որոնք խուսափել էին զինվորական ծառայությունից»: Ջեյթունում խոսքը 150 հայ, մասամբ նաև մահմեդական, դասալիքների մասին է: Մշո դաշտի գյուղերում բռնագրավումների ժամանակ հրաձգությունների մասին: Այսպիսի դեպքերի արժեքը կարելի է գնահատել զոհերի շատ փոքր թվով, Ջեյթունում՝ թուրքական կողմից 7-8 ժանդարմ և 20-30 հայ, Մշո դաշտում՝ 7 ժանդարմ և 27 հայ: Տեղահանության ժամանակ սկզբնական շրջանում, երբ գործը հասավ արդեն Վանի վիլայեթի և Էրզրումի նշանակալի ջարդերին, տեղի ունեցան Վանի ու Շապին Գարահիսարի ապստամբությունները, որոնք իրականում ինքնապաշտպանական գործողություններ էին: Վանում չորսշաբաթյա պաշարման ընթացքում, զոհվել են 18 հայ և, հավանաբար, նաև նույնքան թուրք: Շապին Գարահիսարում թուրքական ամփոփագիրը հաշվում է «150 սպանված՝ քաղաքացիական և զինվորական»: Այդ թիվը, ելնելով Վանի մասին թուրքական պաշտոնական տվյալներից, հավանաբար պետք է համանման ձևով տասներորդական մասով կրճատել: Եթե հանրագումարի բերենք տեղահանությունից առաջ և դրա ընթացքում ընդհարումների ժամանակ սպանվածների թիվը, ապա կստացվի թուրքական կողմից՝ 50 մարդ, իսկ հայկական կողմից՝ համապատասխանաբար մի քիչ ավել կամ պակաս: Տեղահանությունը զագաթնակետին հասցնելուց հետո տեղի են ունենում Սվեդիայի և Ուրֆայի «ապստամբությունները», մարդկանց հուսահատական գործողությունները, որոնք մոռթվելու և սովամահությանը նախընտրեցին զենքը ձեռքին մեռնելը: Ուրֆայում, ըստ թուրքական տեղեկությունների, սպանվածների թիվը հասնում է 20-ի, ըստ գերմանական տեղեկագրերի՝ 50-ի, Սվեդիայում ըստ հայկական տեղեկագրերի՝ 200-ի: Բոլորը միասին թուրքական կորուստների թիվը վերահաշվարկելուց հետո, այսպես կոչված «ապստամբությունների» հետևանքով թուրքական կողմը կազմում է մոտավորապես 300

սպանված: Միայն բարբարոսական վրեժխնդրության գաղափարախոսությունը կարող է արդարացի համարել պայքարում զոհված 300 տղամարդկանց դիմաց հատուցել մեկ միլիոն հայերի գահաբերությամբ, ներառյալ կես միլիոն կին և երեխա: Ամեն դեպքում, այս ըմբռնումը համընկնում է Մուշի մյութասարիֆի արտահայտությանը, երբ նա յոթ սպանված ժանդարմների մասին իր մահախոսական ճառի ժամանակ երդվեց. «Ձեր գլխի յուրաքանչյուր մազի դիմաց ես 1000 հայ մորթել կտամ»:

Ավելի ծանրակշիռ, քան այս առանձին դեպքերը, որոնք եթե չէին վերաբերում անկարգ կառավարչության կանոնավոր երևույթներին և պատերազմական վիճակին, առաջացել էին միայն տեղահանության պատճառով, այն մեղադրանքն է, թե իբր հայ կուսակցությունների, կազմակերպությունների, առանձնապես դաշնակցության կողմից, ծրագրվել էր համընդհանուր ապստամբություն:

Դեռևս 1916թ.<sup>1</sup>, երբ դեռ ծանոթ չէի գերմանական նյութերի հետ, բերել են այն ապացույցը, որ հայկական ապստամբությունը ոչ նախապատրաստվել էր, ոչ էլ առաջադեմ մարդկանց կողմից ծրագրվել, ոչ էլ ընդհանրապես մտածողության մեջ կար: Այն ժամանակ, երբ քրիստոնյա բնակչությունը զինաթափված էր, իսկ մահմեդականները՝ զինված, մի այնպիսի ժամանակ, երբ հայկական քաղաքների և գյուղերի արական սեռի բնակչությունը տեղահանված և թշված էր ճանապարհաշինական աշխատանքների հեռավոր անանցանելի ճամփերի վրա, քաղաքներից հեռու, բնականաբար ժողովրդի ապստամբության կամ դրա ձեռնարկման համար ամենից անհնար ժամանակն էր, դրա մասին կարող էին մտածել միայն խելագարները: Ազգային ինքնավարություն կամ լրիվ անկախություն հայ ժողովրդին կարող էր բաժին ընկնել միայն պատերազմի բախտորոշմամբ, որը, ինչպես Լեհաստանի դեպքում, բոլորովին կախված չէր նրա վարքից: Տեղահանությունը, որպես «կանխող միջոցառում», հայ ժողովրդի ապստամբության դեմ կրկնակի անիմաստ էր, քանի որ տղամարդկանց մորթելուց հետո խոսքը կանանց և երեխաների զանգվածային արտաքսումների մասին էր:

Հյուպատոսական բոլոր գեկուցումները և Թուրքիայում ապրող գերմանացիների բոլոր վկայությունները լրիվ հաստատում են այս եզրահանգումները: Նախևառաջ դրանք հաստատում են, որ ապստամբության ծրագրերի ոչ մի ապացույց և ժողովրդական խռովության ոչ մի վտանգ

1 «Հաղորդագրություն հայերի վիճակի մասին Թուրքիայում», Պոտսդամ, 1916թ., Երկրորդ մաս. Մեղավորության հարցը:

չկար: Հյուսիսատոսների վկայությունները, որոնք լրիվ իրարից անկախ են, այս հարցում համերաշխ են:

Հոֆման, Ալեքսանդրեթ, 7 մարտի. «Ինչքանով ճանաչում եմ տեղացի փոքր ազգաբնակչությանը (հայերին), չեմ հավատում, որ նա երկրի հանդեպ դավաճանաբար գործի»:

Բյուզե, Ադանա, 26 մարտի. «Հայերի (Ջեթունի) նախապատրաստվող ապստամբության մասին խոսք անգամ լինել չի կարող»:

Ռյուսեր, Հալեպ, 12 ապրիլի. «Բնակչությունը (Մարաշի) խաղաղ է և չի մտածում կառավարության դեմ ըմբոստանալու մասին»:

Գեներալ Փոսելդ, Էրզրում, 26 ապրիլի. «Հայերի վարքը անբասիր է եղել»:

Միսիոներ Էհման, Մամուրեթ ու Ազիզ, 5 մայիսի. «Այստեղի քրիստոնյաների մտքով իսկ չի անցնում ըմբոստանալ կառավարության դեմ»:

Ֆոն Շոյբներ-Ռիխտեր, Էրզրում, 15 մայիսի. «Էրզրումի և նրա շրջակայքի հայերի կողմից ոչ մի ապստամբություն չի ենթադրվում, չնայած այստեղ շատ քիչ քուրբական զինված ուժեր կան»:

Ռյուսեր, Հալեպ, 5 օգոստոսի. «Հայերի մտադրված և նախապատրաստված ապստամբության վերաբերյալ ոչ մի ապացույց չկա»:

Նույնը, 8 նոյեմբերի. «Ոչ մի ապացույց չկա, թե շրջանը (Սվեդիա) սկզբից ևեթ մտադիր էր ապստամբել: Այն ավելի շուտ հասցվել է ապստամբության՝ սպառնացող արքայազանի պատճառով»:

Նույնը սեպտեմբերի վերջին, 1915թ. «Ուրֆայի ապստամբությունը նույնպես դրսից ազդեցության կարիք չունեւր... Բավական էր, որ Ուրֆայի բնակիչները տեսնեին կառավարության կանխման միջոցառումները՝ արտորը և դրա հետ կապված իրենց ժողովրդի բնաջնջումը, որպեսզի առաջանար ապստամբության որոշումը»:

Այս վկայություններին համապատասխանում է դեսպանության և հյուսիսատոսության ընդհանուր կարծիքը, որը սկզբից մինչև վերջ նույնը մնաց: Բարոն ֆոն Վանզենհայնը 1915թ. ապրիլի 15-ին գրում է. «Միայն մի կետում (քուրբական և հայկական կողմերի միջև) կարող է համաձայնություն լինել, որ հայերը սահմանադրության ընդունումից հետո հրաժարվել են ապստամբության մտքից, և որ դրա համար ոչ մի կազմակերպություն գոյություն չունի»: Պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերը 1916թ. դեկտեմբերի 4-ին գրում է. «Թուրքիայի հետ դաշնակից պետությունների համար դաշնակցական կուսակցության կողմից կարծեցյալ նախապատրաստված հեղա-

փոխությունը պատրվակ էր: Տեղական խռովություններն ու հայերի ինքնապաշտպանական ձգտումներն ուժնացվեցին և պատրվակ բերվեցին վտանգավոր սահմանամերձ շրջաններից հայերի տեղահանությունը պատճառաբանելու համար»:

Կ. Պոլսի վերաբերյալ գոյություն ունի անձամբ Թալեաթ բեյի վկայությունը, որտեղ նա, «Կան ապացույցներ, որ գահակալության տոնակատարության օրը նախատեսված էր խռովություն» պնդումը, սխալ է համարում և 600 երևելիների ձերբակալումն ու մայրաքաղաքից արքայազանը հիմնավորում է որպես միմիայն կանխման միջոցառում, քանի որ նրանց մեջ գտնվում էին «ոչ լրիվ անվտանգ անձնավորություններ», որոնք «պատերազմի անհաջող շրջադարձի դեպքում առիթը կարող էին օգտագործել խռովություն հրահրելու համար»: Նա նույնիսկ չի պնդում, որ ապացույցներ ունի այս կասկածի համար, կասկածանքի ընդհանուր հնարավորությունը նրա համար բավարար է, որ արքայազանի պատճառ հանդիսանա: Էնվեր փաշայի Հումանին ներկայացրած այն պատճառաբանումը, թե «նրան հայտնի է մի դավադրություն, որի համաձայն՝ Աղաբազար -Իզմիթ շրջակայքի մոտավորապես 30000 հայեր ուզում էին օգնել ռուսներին՝ ափ իջնելու Չաքարիայի մոտ», հարուստ երևակայություն ունեցող ռազմական նախարարի հայտնի վիճակագրական վարկածներից մեկն էր, որը Կ. Պոլսում ոչ ոք լուրջ չընդունեց:

Ի վերջո, բնաջնջման ցանկության համար՝ որպես պատճառաբանություն, առաջադրվեց հայերը պետք է փոխհատուցեն այն կոտորածների համար, որոնք իբր իրագործել են բնակչության նկատմամբ: Այստեղ խոսք կարող է լինել միայն խիստ սահմանափակ վրեժխնդիր գործողությունների մասին, որոնք տեղի են ունեցել միայն տեղահանության, ջարդերի և սովամահության ընթացքում: Եթե անգամ, չհաշված պատերազմի ժամանակվա օրերներով մարդասպաններին և կողոպտիչներին գնդակահարելը, վրեժխնդիր գործողությունները տեղի ունեցած լինեին որոշ նկատելի չափերով, դրանք պետք է մարդկայնորեն ավելի քան հասկանալի համարել: Սակայն, ինչպես մինչև այժմ ստուգված դեպքերը ապացուցում են, խոսքը ինքնապաշտպանության և ծրագրված բնաջնջման դեմ դիմադրության մասին է: Այստեղ մնում է մեջ բերել այն միտքը, որ Հալեպի վալի Ջելալ բեյը արտահայտեց գերմանացի հյուսիսատոս Ռյուսերի հետ գրույցի ժամանակ. «Ապրելը մարդու ամենաբնական իրավունքն է:

1 Ձերբակալվել են իմ կողմից:

Որդը, որին տրորում են, գալարվում է: Հայերը կղիմաղղեն»: Վրեժխնդրության գործողությունների մասին, որոնք իբր թե կիրառել են արևելյան վիլայեթների հայերը մահմեդական բնակչության հանդեպ իրենց կողմից ետ գրավված շրջաններում (ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ, թուրքական զորքերի մահանջից հետո), տեղեկություններ կան միայն թուրքական լրատվություններում: Դրանք, ինչպես միշտ, տատանվում են երևակայական թվերի միջև և վերաբերում են՝

1. Վանի շրջանին. Վանի արհավիրքի ժամանակաշրջանում՝ 1915թ. մայիսի 17-ից մինչև հունիսի վերջերը: Էնվեր փաշան պատմում է երրորդ կարգի կապիտան Հումանին. «Հայերը, որոնք մոլորեցված և հրահրված էին ռուսական զործակալների կողմից, այնպես ուժգին էին գայրացած օտոմանյան բնակչության դեմ, որ 150000 թուրքերից, որ նախկինում ուներ Վանի վիլայեթը, կենդանի են մնացել միայն 30000 մահմեդականներ»:

2. Բիթլիսին. Ռուսների կողմից Բիթլիսի գրավման ժամանակաշրջանի՝ 1916թ. մարտի սկզբների մասին գեկուցում են. «Հայ հրոսակները այնտեղ բնակչության շրջանում կազմակերպեցին մի արյան բաղնիք, որի գոհը դարձան 2000-3000 հոգի»:

3. Երզնկային և Էրզրումին. 1917թ. դեկտեմբերին և 1918թ. հունվարին (գրավված շրջաններից ռուսական զորքերի և հայ կամավորականների մահանջից առաջ)՝ մի քանի հարյուր սպանված մահմեդական:

4. Կարսի շրջանին (Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրում բախտի քմահաճույքին մատնված երեք շրջաններ թուրքական զորքերի մտնելուց առաջ), 1918թ. գարուն: Ըստ Էնվեր փաշայի խոսքերի՝ «ռուսական մարդահամարից հետո միայն Կարսի շրջանում մուսուլմանական բնակչության թիվը քչացել է 45000-ով, որոնք բոլորն էլ սպանվել են հայերի հալածանքների հետևանքով»:

Նշված չորս դեպքերում էլ խոսքը թուրքական տվյալների մասին է, որոնք հաստատված չեն չեզոք աղբյուրներով, սակայն զլխավորապես, ինչպես կարելի է ապացուցել, իրենցից ներկայացնում են արտառոց չափազանցություններ: Թուրքական գեկուցազրերի տվյալները կարելի է ստուգել նաև առանց առանձին իրադարձություններին ավելի մոտ ծանոթ լինելու և տարբեր տեղերում կրճատել:

Էնվեր փաշայի կողմից կապիտան Հումանին Վանի վիլայեթի 150000 թուրքերի մասին ներկայացված թիվը, որոնցից իբր կենդանի են մնացել ընդամենը 30000-ը, ունի իր պատմությունը: Ես ուսումնասիրել եմ այդ

պատմությունը դեռևս 1916թ., երբ այն առաջին անգամ երևաց թուրքական ամփոփագրում: 1915թ. թուրքական ամփոփագրում գրված է. «180000 մահմեդականներից, որոնք բնակվում էին Վանի վիլայեթում, հազիվ 30000-ն են կարողացել փրկվել: Մնացածը մատնված է ռուսների և հայերի հարձակումներին, որոնց ճակատագրի մասին մինչև հիմա ոչ մի բան իմանալ չենք կարողացել»:

Այսպիսով, 150000 մահմեդականների ճակատագիրը հայտնի չէր և նաև հնարավոր չէր իմանալ, քանի որ նրանք գտնվում էին ռուսական ճակատից այն կողմ: 30000-ը այն թուրքերն են, որոնք ռուսների առաջխաղացման ժամանակ փախել էին Մշո դաշտ: (Ինչքան էլ այս թվերը անհուսալի լինեն, փաստից բխում է, որ հենց այս փախած մահմեդականները մայիսի 17-ին, նաև ըստ թուրքական աղբյուրի՝ հաշվվել են 80000):

Էնվեր փաշայի վկայությունում ամփոփագրի զգույշ արտահայտությունը, ըստ որի՝ մնացած 150000-ը մատնված է ռուսների և հայերի «հարձակումներին, որոնց ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ», տարբերակվել է այնպես, որ նախ՝ «հայերն» են միակ չարագործները և «ռուսները» բաց է թողնված, և երկրորդ՝ նա ուղղակի պնդում է, որ այս 150000 թուրքերը, որոնց ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէր և չէր էլ կարող լինել, դարձել են հայերի զայրույթի զոհերը:

Ամփոփագրի թվերի վերջին ձևավորումը տեղ է գտել Բեռլինի թուրքական դեսպանության 1915թ. հոկտեմբերի 1-ի վկայությունում: Այնտեղ պատմվում է, որ «ապրիլին, դեպի Ադրբեջան թուրքերի առաջխաղացման ժամանակ թուրքական բանակի թիկունքում հայերը խոռվություն բարձրացրին, որի ժամանակ զոհվեցին ոչ պակաս քան 180000 մահմեդականներ»: Այստեղ 30000 փախած մահմեդականներն ու 150000 ռուսական ճակատի ետևում մնացածները, որոնց մասին ոչ ոք ոչինչ չգիտեր, միասին են հաշվված և բոլոր 180000-ը ներկայացված են որպես Վանի հայկական խոռվության զոհեր: Այսպիսով, մոտավորապես 18 թուրքերը, որոնք զոհվել են (Վանի սպանված հայերի թիվն էլ մոտավորապես այդքան է կազմում), հաջողությամբ դարձրել են 180000:

Այսպիսի արտառոց թվերով՝ 180000 սպանված մահմեդականներ, թուրքական դեսպանությանը հեշտ էր մոլորության մեջ գցել արտաքին գերատեսչությանը. «Չարմանալի չէ, որ մահմեդականները վրեժխնդիր եղան»:

Անգամ երևակայությամբ սարքված այս թվերը օդից չեն վերցված. վրեժխնդրության օրինակն ունի իր հիմքը: Այն անվիճելիորեն բխում է վի-

լայերի վիճակագրությունից: Վանում հաշվվում է 180000 մահմեդական՝ մոտավորապես 30000 քուրդ և 150000 քուրդ: 30000 քուրդերը ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ փախել էին Բիթլիսի վիլայեթ: Մինչև այստեղ Էնվեր փաշայի վկայությունը համապատասխանում է իրականությանը, որովհետև ամփոփագիրը լույս տեսած ժամանակ ռուսներն արդեն գտնվում էին Վանա լճի արևմտյան ափին:

Վանի վիլայեթի 150000 քրդերը, որոնք հիմնականում բնակվում էին հարավային և հարավ-արևելյան շրջաններում, մասամբ մնացին ռուսական ճակատի ետևում, մեծ մասը ընդհանրապես չհայտնվեց ռազմական գործողությունների շրջանում: Ոչ ոք չէր մտածում նրանց մազլին դիպչել, քանի որ նախ՝ Հեքյարիի լեռներում գտնվող քրդերի բնակատեղերն անանցանելի էին, և երկրորդ՝ ռուսները քրդերի հետ, որոնց առաջնորդները նրանցից տարեկան ռոճիկ էին ստանում, լավ փոխհարաբերությունների մեջ էին: Նույնքան քիչ թշնամանք գոյություն ուներ նաև քրդերի և հայերի միջև: Այս 150000 մուսուլմանները ընդհանրապես ոչ մի «հարձակման էլ չէին մատնված», էլ չենք խոսում հայերի կողմից կոտորվելու մասին: Նրանք մինչև հիմա էլ առոք-փառոք ապրում են:

Այսպիսով լուծվում է կարծեցյալ թուրքական սպանդի հանելուկը, որը թուրքական շարադրանքում հայ ժողովրդի բնաջնջումը արդարացնում է որպես վրեժխնդրության գործողություն:

Կարսի շրջանում մուսուլման բնակչության նվազեցման վերաբերյալ Էնվեր փաշայի տվյալներում խոսքը գնում է նման անիրական օրինակի: Իրականում Էնվեր փաշան Կարսի հայերին, որոնք իբր թե այնտեղի մահմեդականների թիվը նվազեցրել են 45000-ով (ե՞րբ, չի ասվում), մի մանիֆեստով կոչ է արել մնալ իրենց բնակատեղերում և այդ 45000 մահմեդականներին սպանողներին երաշխավորել է «կյանք, անվտանգություն և ազատություն»: Կովկասում թուրքական գործերի գործողությունների փորձից ելնելով՝ Կարսի հայերը նախընտրում են բախտի քմահաճույքին թողնել տուն ու տեղ և կանանց ու երեխաների հետ փախչել Երևանի նահանգ: Սակայն Կարսի դեպքում Էնվեր փաշայի երևակայությունը հավանաբար հետապնդել է առանձին նպատակ: Կարելի էր «հայերի հետապնդման հետևանքով նահատակված 45000 մուսուլմանների» թիվը ժողովրդական քվեարկության ժամանակ, որից կախված էր լինելու Կարսի ճակատագիրը, ավելացնել մահմեդականների մնացած փոքրամասնության վրա, որպեսզի այդպիսով ստացվեր մահմեդականու-

թյան ծանրակշիռ մեծամասնություն: Փաստորեն երեք շրջաններում քվեարկությունը որոշում են միայն մահմեդականները, ուզում են ասել վիճակագրությամբ հաշվված մահմեդական անձանց թիվը ներկայացվեցին որպես քվեարկություն:

Բիթլիսում «հայ հրոսակների» զոհերի թիվը, որը, ըստ թուրքական աղբյուրների, 1916թ. մարտին հասնում է 2000-3000-ի, նույնպես կարելի է ստուգել: Թուրքական փաստաթղթերի ժողովածուում “Aspirations et Agissements Révolutionnaires des Comités Arméniens avant et apres la proclamation de la Constitution Ottomane, Constantinople 1917”, որն արժանի է առանձնահատուկ լուսաբանման, գտնվում է 131 մարդկանց ցուցակ, որոնք սպանված են եղել Բիթլիսում՝ քաղաքը ռուսների կողմից գրավելուց հետո: Ցուցակը թվագրված 27 օգոստոսի 1917թ.: Բիթլիսի շրջանի հայերը (51500) 1915թ. հունիսի սկզբներին տեղահանվել են: Բիթլիս քաղաքում հայերի մեծամասնությունը կոտորվել է, 900 կին և երեխա տեղափոխվել են, այսինքն՝ խեղդամահ են արվել Տիգրիսում: Այս տեղափոխման ժամանակ իր մահկանացուն է կնքել նաև Վանի պատգամավոր Վռամյանը: Ինչպես էլ տեղի ունեցած լինի Բիթլիսի 131 սպանված մուսուլմանների դեպքը, զուցե նրանց, որպես Բիթլիսի կոտորածների գլխավոր մեղավորների, գնդակահարել են պատերազմի ժամանակվա օրենքներով, զուցե խոսքն առանձին վրեժխնդրության մասին է: Ամեն դեպքում 2000-3000 թիվը պետք է կրճատել մինչեվ 131 սպանված և այս դեպքում խոսք անգամ չի կարող լինել կոտորածի մասին, քանի որ Բիթլիսում ապրում են 20000 մահմեդականներ:

Այս փորձերից հետո պետք չէ հավատալ թուրքական թվերին՝ այն կոտորածների մասին, որոնք իբր թե իրագործել են Երզնկայում և Էրզրումում հայ ֆիդայիները 1917թ. դեկտեմբերին և 1918թ. հունվարին, այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հաստատվել այլ աղբյուրներով:

Բոլոր չորս դեպքերի համար բնորոշ է այն, որ հայերի կարծեցյալ կամ իրոք ձեռնարկած պատժային և վրեժխնդիր գործողությունները, որոնք իրենց հարյուր-հազարավոր զոհերի համեմատությամբ կազմում են ամենաշատը հարյուրներ, կատարվել են ոչ թե տեղահանությունից առաջ, այլ աքսորից և զանգվածային սպանություններից հետո:

«Մահմեդական ժողովուրդների հոգու եռացող վրիժառության մոլուցքը», որպես կոտորածների պատճառ, նույն ձևով մերժված է, ինչպես «ռազմական անհրաժեշտությունները»՝ տեղահանության համար: Կոմի-

տեղի որոշումները այլ պատճառ ունեին: Միայն համընդհանուր տեղահանության միջոցառումները, դրանց անցկացման դաժան մեթոդները, տեղահանվածների երկու երրորդից ավելին ոչնչացումը և մնացածի խլամա-ցումը բավարար չափով բացատրում է այն:

Թողենք, որ փաստաթղթերն իրենք խոսեն: Այս դեպքում այլ բացատրության կարիք չի զգացվի:

Արդեն 1915թ. ապրիլին Հալեպի վալի Ջելալ բեյը ցավում է, որ «թուրքական կառավարությունում հաղթանակ է տանում մի հոսանք, որը հակված է հայերին դիտելու որպես լրիվ արևաճարիված կամ թշնամական ազգ: Ինքն այդ ընթացքը դիտում է որպես մի դժբախտություն իր հայրենիքի համար և խնդրում է դեսպանին՝ իր հայեցողությանը թողնել աշխատելու այդ ուղղության դեմ»:

Դատում են գերմանացի հյուպատոսները.

«Կառավարությունը համառոտեմ մնում է միջնադարյան տեսակետին, որ մի մարդու կամ մի քանիսի թույլ տված արարքի համար մեղավոր է ողջ ժողովուրդը: Նա իր միջոցառումներով ձգտում է ամբողջ շրջանների հայերի բնաջնջմանը: Բոլոր հարուստ, կրթված, ազդեցիկ հայերը պետք է վերացվեն, որպեսզի մնա միայն անառաջնորդ հոտը» (Ռ-յուլեր, 10 մայիսի, 1915թ.):

«Շուտով ամենուրեք խռովություններ կսկսվեն, եթե կառավարությունը չփոխի քրիստոնյաներին հետապնդելու իր ծրագիրը» (Հուլիտայն, 13 հունիսի 1915թ.): «Կենտրոնական կոմիտեն այս ձևով ուզում է մեկընդմիջտ վերջ դնել Հայկական հարցին» (Բերգֆելդ, 9 հուլիսի 1915թ.):

Խոսքը վերաբերում է ոչ պակաս քան մի ողջ ժողովրդի բնաջնջմանը կամ բռնի խլամացմանը (Կուրխոֆ, 4 հուլիսի 1915թ.):

«Մինչայժմյան իմ հաղորդումները ցույց են տվել, որ թուրքական կառավարության հրահանգների ընդարձակումը, դրանց ամենադաժան և ամենախիստ եղանակով անցկացումը իշխանությունները համարում են իրենց պարտականությունը, անգամ կանանց և երեխաների նկատմամբ: Գիտակցաբար հայ ժողովրդի հնարավորին չափ մեծ մասին ոչնչացնելու համար ձգտում են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք փոխառնված են հնադարից: Կասկած լինել չի կարող, որ թուրքական կառավարությունը ցանկանում է օգտագործել այս հնարավորությունը, քանի դեռ գտնվում է պատերազմի մեջ քառյակ միությունում, որպեսզի ապագայում ազատվի Հայկական հարցից՝ հնարավորին չափ քիչ համախմբված հայկական

համայնքներ թողնելով» (Ռ-յուլեր, 27 հուլիսի 1915թ.):

«Ի դեպ, վերջինիս (երիտթուրքական կոմիտեի խիստ ուղղության) կողմնակիցները բացելիքաց խստովանում են, որ իրենց գործողության վերջնական նպատակը հայերի լրիվ բնաջնջումն է Թուրքիայում: «Պատերազմից հետո Թուրքիայում այլևս ոչ մի հայ չի մնա», - սա մի հեղինակավոր անձնավորության բառացի արտահայտությունն է» (Ֆոն Շոյբներ-Ռիխտեր, 28 հուլիսի 1915թ.):

«Տեղահանվածների ճամբարների վիճակի մասին զեկուցագրերը պատկերացում են տալիս այն մասին, որ տեղի է ունենում տեղահանվածների գիտակցված և ցանկալի բնաջնջում թուրքական կառավարության մարմինների կողմից» (Ռ-յուլեր, 3 հունվարի 1916թ.):

«Երիտթուրքական կոմիտեի մեծամասնությունը այն տեսակետին է, որ թուրքական կայսրությունը պետք է կառուցվի միայն մաքուր մահմեդական պանթուրքական հիմքի վրա: Ոչ մահմեդական և ոչ թուրքական բնակիչները պետք է բռնի մահմեդականացվեն ու թուրքացվեն, իսկ որտեղ դա հնարավոր չէ, ոչնչացվեն» (Ֆոն Շոյբներ-Ռիխտեր, 4 դեկտեմբերի 1916թ.):

Նույն կարծիքն էին հայտնում դեսպանները: 1915թ. հունիսի 17-ին բառն ֆոն Վանգենհայմը գրում է.

«Միանգամայն ակնհայտ է, որ հայերին աքսորելը պատճառաբանվում է ոչ միայն ռազմական անհրաժեշտությամբ: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը այս հարցի մասին վերջերս (դոկտոր Մորդմանի հետ զրուցելիս)... այն միտքն է արտահայտել, որ Բ. Դուռը ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի լրիվ ազատվի իր ներքին թշնամիներից (երկրի ներսի քրիստոնյաներից)՝ առանց հարուցելու արտասահմանի դիվանագիտական միջամտությունը»:

Նույնը՝ հուլիսի 7-ին.

«Այս հանգամանքը (միջոցառումների տարածումը) և վերաբնակեցման անցկացման եղանակը ցույց են տալիս, որ կառավարությունը փաստորեն նպատակ է հետապնդում բնաջնջել հայ ցեղը թուրքական կայսրությունում»: Օգոստոսի 2-ին իշխան Հոհենհոլեն գրում է. «Կառավարության որոշման դեմ մեր բոլոր բողոքարկումները, որպեսզի ձեռք չտան արևելյան գավառների տեղացի քրիստոնյաներին, ազդեցություն չունեցան»:

1916թ. հունիսի 30-ին ռախսկանցիներին ուղարկված իր զեկուցման մեջ կոնս Վուֆ Մետերնիխը բացահայտում է երիտթուրքական քաղաքակա-

նության նյութական շահագրգռվածությունը: «Կոմիտեն պահանջում է հայերի վերջին մնացորդների ոչնչացում, և կառավարությունը ստիպված է զիջել: Կոմիտեի սոված գայլերը իրենց մոլեռանդ հալածանքի կատարությանը հագուրդ տալուց բացի, ուրիշ ոչինչ չեն սպասում այս դժբախտներից: Հայերի գույքը վաղուց խլված է, ունեցվածքը՝ բռնագրավված, այսպես կոչված հանձնաժողովի կողմից, այսինքն՝ եթե որևէ հայ ուներ 100 քուրբական ֆունտ արժողության տուն, ապա այն բաժին էր ընկնում որևէ քուրքի, կոմիտեի անդամի կամ նրա բարեկամին՝ մոտավորապես 2 ֆունտով: Այնպես որ հայերից այլևս շատ բան հնարավոր չէր խել: Շնեքի ոհմակը անհամբերությամբ պատրաստվում է այն պահին, թե երբ Հունաստանը, Անտանտի ստիպմամբ դուրս կգա Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դեմ: Հույները կազմում են Թուրքիայի կուլտուրական տարրը: Այնուհետև այն կոչնչացվի, ինչպես հայկականը, եթե արտաքին ազդեցությունները դրա առաջը չառնեն: Թուրքացնել՝ նշանակում է՝ այն ամենը, ինչ քուրբական չէ, արտաքսել և սպանել, ոչնչացնել ու բռնի տիրանալ ուրիշ մարդկանց ունեցվածքին: Այժմ սրանում և ֆրանսիական ազատամիտ ֆրագների կրկնօրինակած քնկթնկոցի մեջ է կայանում Թուրքիայի նշանավոր վերածնունդը»:

Հուլիսի 10-ի զեկուցման մեջ կոմս Մետերնիխը բնութագրում է երիտօրբական մտածելակերպի էությունը.

«Թուրքական կառավարությունը իր ծրագրի անցկացման գործում, այն է՝ Հայկական հարցը լուծել հայ ցեղի ոչնչացման միջոցով, չշփոթվեց ոչ մեր առարկություններից, ոչ էլ ամերիկյան դեսպանության և Պապի պատգամավորների առարկություններից, ոչ նաև Անտանտի պետությունների սպառնալիքներից, և ամենից քիչ հաշվի առավ Արևմուտքի հասարակական կարծիքը...»:

«Ի վերջո հայերի բռնի իսլամացումը չի կարելի դիտել որպես կրոնական մոլեռանդությունից բխող միջոցառում: Երիտօրբական տիրակալներին նման զգացումները խորթ են: Դրան հակառակ ճիշտ է այն, որ ողջ էությունը օսմանցի հայրենասեր լինելու համար առաջին հերթին պետք է ընդունես իսլամ: Թուրքական կայսրության պատմությունը իր սկզբնական շրջանից մինչև վերջին ժամանակները ապացուցում է սկզբունքի այն ճշմարտությունը, որ Արևելքում կրոնական դավանանքն ու ազգությունը նույնական են, և յուրաքանչյուր օսմանցի իր հոգու խորքում համոզված է դրանում: Պաշտոնական և ոչ պաշտոնական հավաստիացում-

ները, դուրանից և ավանդույթից բերված ողջ մեջբերումների հետ միասին, պատկանում են սովորական ֆրագներին, որոնցից օգտվում էին ռեֆորմի հրովարտակի լույս տեսնելուց հետո՝ եվրոպացիներին իսլամի և օսմանցիների հանդուրժողականությունը ապացուցելու համար: Այսպիսով այն հերքումները, որոնք նախարարները հակադրում են դավանանքի համար հալածանքների մասին հաղորդագրություններին, ավելի շուտ համապատասխանում են լավ տոնի պահանջներին: Սակայն դրանք այնքանով են ճիշտ, որ առաջնորդող պատճառը կրոնական մոլեռանդությունը չէ, այլ հետապնդում է հայերին կայսրության մահմեդական բնակչությանը ձուլելու նպատակ»:

Այս կարծիքը ճիշտ է: Սակայն չի կարելի մոռանալ, որ կրոնական հետապնդումները մաքուր տեսքով երբեք գոյություն չեն ունեցել: Հոռմեական կայսրությունում քրիստոնեության հալածանքները բելադրված էին պետական շրջահայեցության հիմունքներով, միջնադարում և նոր ժամանակների Ռուսաստանում հրեաների դեմ հալածանքների հիմքում ընկած էր ընչաքաղցությունը: Կոտորածները, որոնք անձամբ Մուհամեդն էր կազմակերպել, վերջին հաշվով կողոպուտ էին հետապնդում: Երիտօրբական հալածանքը քրիստոնեության դեմ, թերևս բոլոր ժամանակներում ամենամեծը, նույն դրդապատճառներն ուներ՝ պետական շրջահայեցություն և ընչաքաղցություն:





**Սեպտեմբեր**

1.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Թերապիա, 26 սեպտեմբերի 1913թ.

Չերդ գերագանություն, պատիվ ունեն հավելվածում կցել երկու գեկու-  
ցագիր, որոնք ներկայացրել է փոխհյուպատոս Անդերսը Էրզրում ժամա-  
նելուց հետո՝ Էջմիածնում հայ կաթողիկոսին կատարած իր այցելության,  
ինչպես նաև Կովկասի լուսավորչական հայերի հանդեպ Ռուսաստանի  
բռնած դիրքի մասին:

**Վանգենհայմ**

**Նորին գերագանություն ռայխականցիեր**  
**պարոն ֆոն Բեքման Հովեզին**

2.

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Էրզրում, 16 սեպտեմբերի 1913թ.

Թիֆլիսից Կովկասով Էրզրում մեկնելիս սույն ամսվա 7-ին այցելեցի  
Ամենայն Հայոց կաթողիկոս, նորին Սրբագնություն Գևորգ 5-րդ Սուրե-  
նյանին Էջմիածնի իր աթոռանիստում, որը գտնվում է Արարատ լեռան  
ստորոտում: Վանքը, որտեղ ինձ շատ հյուրընկալություն քննունեցին, կա-  
ռուցվել է 303 քվականին, Քրիստոսի ծնունդից հետո, կաթողիկոս Գրիգոր  
Լուսավորչի կողմից: Արդեն առաջին դարում (Քրիստոսի ծնունդից հետո)  
Հայաստանում կազմավորվել էր քրիստոնեական համայնք և Տրդատ քա-  
ղաքի գլխավորությամբ, որը 301-ից մինչև 332 քվականը իշխում էր Հա-  
յաստանում, քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվել է որպես պե-  
տական կրոն: Չնայած 303թ. (Քրիստոսի ծնունդից հետո) հայ եկեղեցին  
ինքնուրույն դարձավ, Վաղարշապատի (Էջմիածնի) հայ պատրիարքնե-  
րին Նիկիայի համաժողով ուղարկեցին 324թ., Կ. Պոլսի համաժողով՝ 328թ.  
և Եփեսոսի համաժողով՝ 432 քվականին: Այնտեղ տեղ գտած դրզմաները  
քննունեցին հայերի կողմից, սակայն Քաղկեդոնի 451թ. համաժողովի ո-  
րոշումները պաշտոնապես մերժվեցին: Ներկայումս պատրիարքի ընտ-  
րությունը տեղի է ունենում հետևյալ ձևով. քվե են տալիս սինոդի 8 անդամ,

7 ավագագույն վանահայրեր, ինչպես նաև յուրաքանչյուր թեմից մեկ հոգևորական և մեկ աշխարհական (6-ը Ռուսաստանում, 2-ը Պարսկաստանում, 1-ը Ռումինիայում, 50-ը Թուրքիայում): Յարին երաշխավորում են ամենից շատ քվե ստացած երկու եպիսկոպոսներ: 1911թ. դեկտեմբերի 11-ին վերջին ընտրության ժամանակ դրանք եղել են ներկայիս կաթողիկոսը (Թիֆլիսի նախկին արքեպիսկոպոսը) ու Կ. Պոլսի հայ պատրիարք Տուրյանը:

Ըստ իմ տեղեկության, կաթողիկոսը ոչ մի աշխատավարձ չի ստանում ռուսական կառավարությունից: Դրա փոխարեն անձնական օգտագործման համար նրա տրամադրության տակ է գտնվում համայնքի միջոցներից տարեկան 12000 ռուբլի:

Կաթողիկոս Գևորգ 5-րդը աշխույժ, դեմքի խելացի արտահայտությամբ մի պատվարժան, համակրելի անձնավորություն է: Նա ինձ ընդունեց իր վեհարանում, ճակատը ծածկող կնճուղի վրա կար աղամանդներով զարդարված մի խաչ, որը ցարի նվերն էր: Նրան անչափ հետաքրքրում էր այն հանգամանքը, որ կայգերական կառավարությունը իր հյուպատոսական ներկայացուցչությունն է հիմնել Էրզրումում: Նա մեծ ակնկալիք ունի այս ձեռնարկումից, ինչպես ինքն արտահայտվեց, «թուրքական լծի տակ գտնվող իր խեղճ, ճնշված հավատակիցների համար»: Նորին սրբազնությունը խնդրեց ինձ, ինչքանով որ թույլ են տալիս իմ պաշտոնական լիազորությունները, հոգ տանել Էրզրումի վիլայեթի հայերի մասին, և մի գրություն տվեց, որ հանձնեմ Էրզրումի հայ եպիսկոպոս Սմբատին:

Ինչ վերաբերում է բարենորոգումներին, կաթողիկոսն այն միտքն արտահայտեց, որ ծրագրի ըննարկման հարցում մեծ տերությունները դժբախտաբար դեռևս համաձայնության չեն եկել, քանի որ յուրաքանչյուր տերություն մարդասիրական առաջարկությունների կողքին ուզում է ծրագրի հետ ներդաշնակել իր սեփական տնտեսական կամ քաղաքական նպատակները: Նա շնորհակալությամբ գնահատեց այն հանգամանքը, որ կայգերական կառավարությունը Բեռլինում ընդունել է շարժման առաջնորդին՝ Պողոս Նուբար փաշային և իր համակրանքն է արտահայտել հայ ժողովրդի գործի հանդեպ: Դժբախտաբար, Ռուսաստանից բացի, բոլոր տերությունները չափազանց շատ են հաշվի առնում թուրքական կառավարությանը, որը հարյուրամյակներ ի վեր անկարող է եղել ամեն տեսակ բարենորոգումների գործում: Այնուհետև պատրիարքը նշեց, որ գերմանական ռազմաճակատի ուղարկումը Մերսինա սույն թվի զարմանք էականորեն նպաստել է Կիլիկիայի հայերի անվտանգությանը, ասաց, որ կարդացել է Սսի կաթողիկոսի զեկուցագիրը՝ Չերդ գերագանցության

սույն թվի մայիսի 5-ին Գոթբեն նավով կատարած այցելության մասին: Հույս հայտնեց, որ կայգերական կառավարությունը կշարունակի, առանձնապես Բաղդադի երկաթգծի շրջանում, իր պաշտպանության տակ վերցնել հայերին, հույս ունի նաև, որ երկաթգծի կառուցումը այնտեղի հայերին կրերի քաղաքակրթական և կուլտուրական մեծ օգուտ:

Վերջում պատրիարքը ինձ բարի ճանապարհ մաղթեց և մեծ հաջողություն ցանկացավ Էրզրում կատարելիք իմ առաքելությանը, հրահանգեց ցույց տալ ինձ վանքի զանձերը, որոնց թվում՝ Նոյի տապանի մնացորդները, որոնք սուրբ Գրիգորին հանձնված են եղել հրեշտակապետի կողմից:

Անդերս

**Կայգերական դեսպան բարոն ֆոն Վանգենհայմին, Կոստանդնուպոլիս**

3.

**Կայգերական Գերմանիայի Էրզրում, 16 սեպտեմբերի 1913թ. հյուպատոսություն**

Էջմիածնի վանք այցելության ժամանակ գրույցի ընթացքում իմացա Կովկասի լուսավորչական հայերի հանդեպ ռուսական կառավարության բռնած դիրքի մասին հետևյալը.

Երբ 1828 թվին կաթողիկոս Եփրեմի պատրիարքության ժամանակ ռուսները գրավեցին Հայաստանը (ընդ որում՝ Թիֆլիսի այն ժամանակվա արքեպիսկոպոս, ավելի ուշ՝ կաթողիկոս Ներսես 5-րդը նրանց մեծ ծառայություն մատուցեց՝ տրամադրելով հայկական մի աշխարհագոր), նրանք հայերին խոստացան ազգապահպանում և առանձնաշնորհներ: Սակայն առաջին փոխարքա Պասկևիչ-Էրիվանսկին շատ դաժան վարվեց: 1836 թվականին Կովկասի համար ընդունված դատավարության կարգը («Պոլսեցիներ»), որտեղ սինոդի ներմուծմամբ կրճատվեցին պատրիարքի իրավունքները, զգալիորեն սահմանափակեց նաև հայերի իրավունքները:

Ճիշտ է մինչև 1908թ. բոլոր պատրիարքները հանդիսավոր ձևով ձեռնադրվում էին ցարի կողմից «Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսով, սակայն կառավարությունը մշտապես փորձում էր ռուսացնել հայերին: 1903թ. իրականացվեց հայ եկեղեցու ողջ ունեցվածքի բռնագրավում: Կաթողիկոսը «ողջ հայության անունից», քանի որ ունեցվածքը պատկանում էր նաև Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայությանը, բացեի-բաց ընդդիմացավ կառավարությանը: Չնայած արդեն մեկ տարի հետո,

հիմնականում ներկայիս փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի խորհրդով, ունեցվածքը վերադարձվեց, ռուսական կառավարությունը նպատակահարմար գտավ կաթողիկոսին զրկել ոչ ռուսահայերի գործերին խառնվելու իրավունքից: 1909 թ. ապրիլին ընտրված կաթողիկոս Մաթևոս Իզմիրլյանի ձեռնադրման ժամանակ առաջին անգամ բաց թողնվեց «Ամենայն հայոց կաթողիկոս» տիտղոսը: Յարական շնորհագիրը ևս, որին ծանոթացրեց ինձ առաջնորդող եպիսկոպոս Կարապետը, իր տոնով զգալիորեն տարբերվում էր նախկին փաստաթղթերից: Յարը հույս էր հայտնում, որ պատրիարքը ուշադրություն կդարձնի կառավարական օրենքների կատարմանը իր համայնքում: Որպեսզի բացեիք բաց զգացնել տա իր չկամությունը հայկական առանձնաշնորհների հարցում, ցարը առաջին անգամ, ի տարբերություն սովորաբար ընդունված կարգի, կաթողիկոս Մաթևոս 2-րդին չպարգևատրեց Ալեքսանդր Նևսկի շքանշանով: Ներկայիս կառավարող պատրիարքը ևս 1912 թ. իր ձեռնադրման ժամանակ չպարգևատրվեց շքանշանով: Միայն այն ժամանակ, երբ ասիական Թուրքիայում քաղաքական իրավիճակի ձևավորման հետևանքով Ռուսական կայսրությունը, ելնելով Թուրքահայաստանի վերաբերյալ իր նկրտումներից, հարմար գտավ բարեկամական հարաբերությունների մեջ մտնել ռուսահայերի հետ, այս տարվա գարնանը կաթողիկոսը պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկի շքանշանով:

Ես այն տպավորությունն ստացա, որ ռուսահայերին իրենց ազգային յուրահատկության պահպանման շահերից ելնելով, ոչ մի դեպքում դուր չի գա, եթե Թուրքահայաստանն անցնի ռուսական տիրապետության ներքո: Ամենուրեք, որտեղ հիմնադրվել են հայկական դպրոցներ, անմիջապես երևան են եկել ռուսական կառավարական դպրոցներ: Ըստ հայերի, իրենց համար ամենալավը կլինեի այն, որ Թուրքահայաստանը Լիբանանի օրինակով ձեռք բերեր ինքնավար իրավիճակ թուրքական գերագույն իշխանության ներքո: Քանի որ այս նպատակը նրանց դեռևս անհասանելի է թվում, նրանք գոհ կմնան, որ նշանակվի քրիստոնյա վալի: Այնուհանդերձ նրանք թախանձորեն ցանկանում են, որ եվրոպական վերահսկողությունը սահմանվի: Ամեն դեպքում, որպես միևնույն, պահանջում են, որ ապագայում երաշխավորվի յուրաքանչյուր հայ անձի անվտանգության, ունեցվածքի և պատվի պահպանումը:

**Անդերս**

**Նորին գերազանցություն կայզերական դեսպան բարոն  
Ֆոն Վանզենհայմին, Կոստանդնուպոլիս**

1914

**Փեպրվար**

4.

*Կայզերական Գերմանիայի Էրզրում, 16 փետրվարի 1914թ. հյուպատոսություն*

Այսօր ինձ այցելեց այստեղի հայ եպիսկոպոս Բեադեթյանը, իր համայնքի անունից շնորհակալություն հայտնեց բարենորոգումների ծրագրի՝ ընդունման կապակցությամբ, կայզերական կառավարության կողմից բարենորոգման նախագծի համառ պաշտպանության համար, որի շնորհիվ հիմնականում, իրագործվեց այդքան երկար սպասված բարենորոգման գործը: Ոչ քաղաքում և ոչ էլ Էրզրումի վիլայեթում այժմ բողոքելու պատճառ չկա, բացառությամբ Կազա Նարվանում տեղի ունեցած բախումների, որտեղ չերքեզական մի ցեղ բռնագրավել է հայերի ունեցվածքը: Սակայն վալիև խոստացել է քննություն անցկացնել և օգնություն ցույց տալ: Տեղի իսլամական բնակչությունը բարենորոգումների ընդունման լուրն ընկալեց առանց որևէ թշնամական դրսևորման և ոչինչ չի ձեռնարկի բարենորոգումների անցկացումը խանգարելու համար: Ըստ եպիսկոպոսի կարծիքի, այժմ հայերը լրիվ հաշտվել են և իրենց զգում են ինչպես հավատարիմ օտոմաններ: Տեղի հայերը լրիվ գիտակցում են, որ կայզերական կառավարությունը բարյացակամությամբ և շահագրգռվածությամբ հետևում է նրանց ճակատագրին և շնորհակալ են ինձանից, որ ես այդ բանը արտահայտել եմ տարբեր առիթներով:

**Անդերս**

**Նորին բարեձնության կայզերական պաշտոնակալար, դեսպանության խորհրդական պարոն ֆոն Մուրիասին**

1 Մեծ տերությունների կողմից ռուսական կողմի նախաձեռնությամբ պահանջված բարենորոգումների ծրագիրը Արևելյան Անատոլիայի (հայկական) գավառների համար ձևակերպվեց այնպես, ինչպես երկար բանակցություններից հետո (1913թ. հուլիսից) պայմանավորվել էին ռուսական և գերմանական դեսպանությունները: Այն Բ. Դռան կողմից ընդունվեց հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) համաձայնագրով: Բարենորոգման ծրագիրը Արևելյան Անատոլիայի երկու հատվածների բաժանված վեց գավառների համար նախատեսում էր երկու ընդհանուր տեսուչներ:

**Հունիս**

5.

*Մուշի ռազմակայան, 21 հունիսի 1914թ.*

Մույն ամսվա 20-ին, երբ տեսչական գործերով Մուշ ժամանեցի, մյուս քասարիֆը բացակայում էր: Նրա տեղակալը՝ գլխավոր դատախազը, ինձ շատ ջերմ ընդունեց:

Չնայած նա այժմյան Մուշի սանջակում տիրող ընդհանուր վիճակը խաղաղ ինձ ներկայացրեց, սակայն շուտով ես այլ կարծիք կազմեցի, երբ այցելեցի հայոց արքեպիսկոպոս Ներսես Կարազյանին և դաշնակցության առաջնորդ Ռուբեն Էֆենդիին: Երկուսն էլ ներկայիս հանգիստ վիճակը համարում են որպես խաղաղություն փոթորկից առաջ և խիստ հոռետեսորեն արտահայտվեցին: Ըստ նրանց կարծիքի՝ Բիթլիսի քրդական ցեղապետները միայն առժամանակ են ահաբեկված ռազմական դատարանի խիստ գործողության եղանակից, սակայն բարենորոգման նախագիծը չափազանց շատ է հակասում նրանց շահերին, և նրանք կփորձեն ուժեղ դիմադրություն ցույց տալ որոշումներին: Արքեպիսկոպոսն ինձ բավականին հանգամանորեն նկարագրեց Մուտկան գավառակի հայ գյուղացիների վիճակը: Նրանց ճորտական կախվածությունը դերբեթյաներից այնպիսի չափերի է հասել, որ վերջիններս, ինչպես ժամանակին Գոզոլն է նկարագրել Ռուսաստանի ճորտատիրությունը, միմյանց են վաճառում ամբողջական գյուղեր ճորտերի հետ միասին, մեկ շնչի համար վճարելով 5-15 լեզ<sup>1</sup>: Այսպես, շեկո ցեղի քրդերը՝ բալլըկլիների ճյուղերից մեկը, որոնց պատկանում էր 30 գյուղ, վերջերս մի դերբեթյանից գնել են հայկական Փիշենք գյուղը:

1894թ. Սասունում հայերի ապստամբության ժամանակ Շատախի գավառի Տավորիկ, Խիանք և Խուր գյուղերի գյուղացիները վոնդել են իրենց քուրդ կալվածատերերին: Սահմանադրական կառավարության ա-

<sup>1</sup> 1 Լեզ - բուրբական ֆունտ:

զակցութեամբ 1908 թվականին Փասնք գավառի 25 գյուղ նույնպէս ազատվել են: Դրան հակառակ Մոտկան գավառակում դեռևս իշխում են հին նահապետական պայմաններ: Գյուղացիները պարտավոր են բեյերին որոշակի հարկ վճարել: Ընդ որում՝ հայ և քուրդ ճորտերի թշնամութիւնը անհավար է: Ողջ Մոտկան գավառակում միայն Խիզան գյուղում մի հայկական դպրոց կա: Խնուսում Պողոս Նուբար փաշայի միջոցներով պետք է բացվեր դպրոց, սակայն արդեն մի քանի օր հետո ուսուցիչները քրդական սպառնալիքների ներքո փախուստի են դիմել:

Խիստ այժմեական է Խնուս, Փաշավանք և Լորդնձոր գյուղերի բնակիչների մի բողոքը, որոնցից բալլըկլիների ցեղը պահանջում էր 2300, 1500 և 800 լեզ (թուրքական ֆունտ)՝ 60 տարի առաջ այժմյան գյուղացիների նախնիների կողմից փոխառնված նվազագույն պարտքի դիմաց: Այստեղի եպիսկոպոսը այդ մասին զեկուցում է պատրիարքարան, սակայն կառավարությունը ժխտում է գործի փաստական դրությունը, մամուլի բյուրոն ևս հերքում է եպիսկոպոսի հաղորդումը: Այնուամենայնիվ, Բիթլիսի վալին կենտրոնական կառավարությունից թախանձանքով փող է ձեռք բերում, որպէսզի գործը փոխադարձ համաձայնությամբ կարգավորվի:

Առանձնահատուկ է ոչխարի հարկի գանձման ձևը: Թահսիդարների (հարկահավաքների) հայտնվելուց առաջ բալլըկլիների ցեղի քրդերը 300 ոչխար էին բշէլ հայկական Խուր գյուղը, որոնք չնայած գյուղացիների բողոքին, նույնպէս հաշվել էին որպէս իրենցը: Եվ քանի որ գյուղացիները հրաժարվել էին ավելորդ գումարը՝ մոտավորապէս 20 լեզ ոչխարահարկը վճարելուց, նրանց ստիպել են վաճառել իրենց կովերն ու եզները:

Չնայած այսպիսի ոչխարագողություններն ու հողամասային վեճերը հասցնում էին քրդերի և հայերի միջև հարաբերությունների վատացմանը, սակայն եպիսկոպոսը ընդունում է, որ վերջին ամիսներին կյանքի և ընտանիքի պատվի անապահովության պատճառով բողոքները քչացել են: Վերջերս միայն 4-5 հայ են սպանվել Սասունում բեդրիկյան ցեղի քրդերի (Մուսսի ցեղից) կողմից: Աղջիկների առևանգման առանձին դեպքերում հաստատել հնարավոր չի եղել, թե արդյո՞ք աղջիկները կամովին չեն հետևել առևանգողներին: Դաշնակցականների առաջնորդ Ռուբենը վախենում է, որ շուտով խռովություններ կսկսվեն, քանի որ մինչև հիմա ամեն անգամ, երբ մեծ տերությունները բարենորոգման ծրագիր են հաստատել, հետևել են կոտորածները: Քրդերը չափազանց դժգոհ են կառավարությունից, որ նրանց որպէս մաքուր իսլամներ չի ճանաչում, և որ մահապատժի

է ենթարկել իրենց կրոնական առաջնորդ շէյխ Սեիդին, որին նրանք պատում էին ինչպէս մարգարէի: Ռուբենը այն կարծիքին է, որ դերբեյները եռանդազին կաշառպանեն իրենց վտանգված արտոնությունները:

Այնուհետև Ռուբենը բողոքեց դատարանների կողմնակալությունից և այն բանից, որ ժանդարմները, երբ ի պաշտպանություն հայերի պետք է դուրս գան քրդերի դեմ, չեն կատարում կառավարության հրահանգները: Քրդերը ոչ մի ակնածանք չեն տածում ժանդարմների հանդեպ, վախենում են միայն գործող զինվորականներից:

Ինչպէս ինձ հայտնեց 34-րդ դիվիզիայի հրամանատար Իհսան փաշան, որը այստեղից ղեկավարում է պաշարման դրությունը, նրա զինվորներին հաջողվել է խռովարարների ոլորտում (4 շրջան՝ Սիմեկ, Խիզան, Գյուզելդերե և Շատախ) բռնել ոչ միայն վերջին խռովության պարագլուխներին, այլև նախկինում փնտրվող հանցագործների 50 տոկոսին, ինչպէս նաև 2500 քրդերի, որոնք խուսափել էին զինվորական ծառայության պարտականություններից:

Ըստ Իհսան փաշայի դրությունը լուրջ է, բայց ոչ ծայրահեղ: Ես վաղը մեկնելու եմ Բիթլիս:

Անդերս

**Նորին գերազանցություն կայզերական ղեսպան բարոն ֆոն Վանզենհայմին**

6.

Բիթլիսի ռազմակայան, 25 հունիսի 1914թ.

Չիով Բիթլիս գնալու ժամանակ (85 կմ) ինձ ուղեկցում էր 34-րդ դիվիզիայի գլխավոր շտաբի կապիտան Ռուհի բեյը, որը Բիթլիս էր գնում Իհսան բեյի հատուկ հանձնարարությամբ: Մենք Մուշից մեկնեցինք սույն ամսվա 23-ի առավոտյան ժամը 5-ին և երեկոյան ժամը 9-ին հասանք Բիթլիս: Կարա Մուի բերրի դաշտավայրում իրար ետևից շարված են գյուղերը: Դաշտավայրում լրիվ անվտանգ է, միայն Գեբեն գյուղում բնակալել է քուրդ մի պարագլուխ՝ Մուսա բեյը, որը նախկինում՝ որպէս ժանդարմների հրամանատար, մեծ ծառայություններ էր ունեցել Եմենում և այժմ, որ-

պես հեծյալ ավագակ, ժամանակ առ ժամանակ թախանում է քարավանները: Կարա Սուի աղբյուրի մոտ գտնվում է շատ գեղեցիկ, քայքայման ընթացքում գտնվող մի հուշարձան: Այն մնացել է սուլթան Սելիմ Յաուզի ժամանակներից, որն այստեղ վճռական մարտում հաղթել է պարսիկներին:

Սույն ամսվա 24-ին կեսօրից առաջ այցելեցի Բիթլիսի վալի Մուստաֆա Աբդուլ Հալիկ բեյին, որը մինչև այս տարվա մարտ ամիսը Մղերդի մյուսասարիֆն էր: Ես նրան շնորհավորեցի վերջերս 1-ին կարգի Մեջլիսի շքանշանով պարգևատրվելու առթիվ և խոսք բացեցի այս տարվա ապրիլի սկզբներին կատարված դեպքերի մասին: Եթե խոսվարարներին ապրիլի 4-ին հաջողվեց Բիթլիսում գրավել բարձունքը կառավարական պալատով հանդերձ, ապա հետևանքներն աներևակայելի կլինեին: Ապստամբությունը ողջ Քրդստանում և ռուսական առաջխաղացումը, բնականաբար, անհետևանք չեղան: Քուրդ ապստամբներն արդեն գրավել էին քաղաքի այն մասը, որտեղ գտնվում էր ռուսական հյուպատոսությունը: Երբ գործերի դրությունը քրդերի համար անբարեհաջող ընթացք ստացավ, ռուսական հյուպատոս Շիլկովը վալիից պահանջեց դադարեցնել կրակը, և ըստ այստեղի թուրքերի կարծիքի, դրանով մեծապես վարկաբեկեց իրեն: Շիլկովը, որին այցելեցի հաջորդ օրը իր հրավերքի համաձայն, բացատրեց, որ իրեն չափազանց տհաճ է Մուլլահ Սելիմի և նրա հանցակիցների համարյա երեք ամիս տևող ներկայությունը հյուպատոսությունում: Հյուպատոսությունը բոլոր կողմերից զիջեր ու ցերեկ պահպանվում է զինվորականների և ժանդարմների ուժեղ զորամասերի կողմից, այն պես որ Մուլլահ Սելիմի փախուստը անհնար է թվում: Սակայն ենթադրում են, որ ռուսական կառավարությունը, հաշվի առնելով իր հեղինակությունը Բուխարայի և Սամարղանդի մուսուլմանների շրջանում, չի հանձնի հանցագործին, այլ կպնդի, որ նրան պահակախմբի ուղեկցությամբ ապահով անցկացնեն սահմանը: Վալին 2 օր առաջ լուր էր ստացել, որ ժանդարմերիայի քաջ կապիտան Քյազիմ բեյը, որին ինքը հետը բերել էր Մղերդից, սույն ամսվա 22-ին հարձակման է ենթարկվել կարգան ցեղի քրդերի կողմից (Մղերդ), վիրավորվել է և գերի վերցվել: Այսօր, հունիսի 25-ին, քաղաքից դուրս եկավ պատժային մի արշավախումբ, քաղաքի պարետ մայոր Հիլմի բեյի և շտաբի գլխավոր կապիտան Ռուհի բեյի ղեկավարությամբ, որպեսզի պատժի կարգան ցեղի քրդերին և ազատի գերված սպային: Քյազիմ բեյը հատկապես աչքի էր ընկել ապրիլի 4-ի մարտում, չնայած

դրան, վալին արշավանքը բնորոշեց ոչ քաղաքական բնույթի, այլ որպես մի սովորական ավագակային հարձակում, որը նրան ցանկալի հնարավորություն է տալիս նորից որևէ մեկին պատժելու՝ որպես օրինակ մյուսների համար:

Այսպիսով, ներկայումս Բիթլիսում մնում են տեղակայված գումարտակներից միայն 2 վաշտ: 34-րդ դիվիզիայի գլխավոր խմբավորումն ու շտաբն այն պատճառով են տեղաբաշխված Մուշում, որ այնտեղի տարածքային պայմանները թույլ են տալիս ջոկատներն ավելի լավ վերապատրաստել: Բիթլիսը չափազանց ճզմված է հովտափոսում:

Ինչպես Մուշում, այնպես էլ Բիթլիսում տեսա նոր զորանոցների կառուցումների սկիզբը: Կառավարությունը եռանդազին ջանում է ձեռքբերել ոչ միայն վերջին խոտվոթյանը մասնակցած քրդերին, այլ նաև տարիներ ի վեր հետապնդվող չարագործներին և դատալիքներին: Մուշի դաշտավայրի գյուղերում դարպասներին փակցված ազդագրերում կարդացի այն մասին, որ յուրաքանչյուր ոք, ով ապաստան կտա խոտվարարի, կկանգնի ռազմական դատարանի առջև: 14 ապստամբների, հատկապես հանրահայտ հարզված Սեիդ Ալիի մահապատիժը մեծ ազդեցություն գործեց: Իսկ արդյոք այն տևակա՞ն կներգործի բարենորոգումների հանդեպ թշնամաբար տրամադրված քրդերի ցեղապետների վրա, կերևա միայն հետագա ամիսների ընթացքում:

Անդերս

### Նորին գերագանցություն կայզերական դեսպան բարոն ֆոն Վանգենհայմին

**Հուլիս**

7.

*Կայզերական Գերմանիայի Թերապիա, 24 հուլիսի 1914թ. դեպի Երևան*

Կայզերական փոխյուպատոս Անդերսը (Էրզրում), որը ճանապարհորդում է տեղեկություններ քաղելու նպատակով, սույն ամսվա 4-ին Վանից հաղորդում է հետևյալը.

«Հունիսի 1-ից մինչև 30-ը Մամուրեթ ուլ Ազիզ, Բիթլիս և Վան վիլայեթների մայրաքաղաքներն այցելելուց հետո կարող եմ հաստատել, որ այս երեք վիլայեթների իրավիճակները շատ նման են Էրզրումին: Եթե Էրզրումի վիլայեթում քրդական հարցը այնքան սուր չէ, ինչպես վերը նշված երեք վիլայեթներում, ապա բոլոր չորս վիլայեթներում էլ բարեփոխությունների կարիքը նույնն է: Տեղեկություններ քաղելու նպատակով ճամփորդելիս Խարբերդում, Մուշում, Բիթլիսում և Վանում անձնական ծանոթություններ ձեռք բերեցի, այնպես որ այժմ հնարավորություն ունեմ Էրզրումից հետևելու երեք հարևան վիլայեթների իրադարձություններին:

Փոստային կապն ամեն դեպքում կարելի էր դեռևս եղածից շատ ավելին ցանկանալ: Դրա փոխարեն, ինչպես ինձ հավաստիացրեց այնտեղի վալի Թահսին բեյը, ամենամոտ ժամանակներում բավականին կբարելավվի կապը Վանի և Բիթլիսի միջև: Կառավարությունը, եղած մոտորանավակից բացի (ներկայումս գազովինի բացակայության պատճառով չի գործում) պատվիրել է նաև երկու մեծ շոգեմավ: Վանից Բիթլիս հասնելու համար, եթե մինչև այժմ ոտքով 3 օր էր պահանջվում, ապա այժմ կարելի է հասնել 8 ժամում, Վանից Դատվան շոգեմավով՝ հինգ ժամում և Դատվանից Բիթլիս բավականին բարեկարգ ճանապարհով՝ երեք ժամում: Ըստ Թահսին բեյի կարծիքի՝ միայն մոտորանավի շնորհիվ էր, որ լաստերով մի քանի հարյուր զինվորականներ հասցվեցին Դատվան, որ

այս տարվա ապրիլի 4-ին բավարար գորքեր հնարավոր եղավ հանել Բիթլիսի ապստամբ քրդերի դեմ: Ընդհանրապես նկատեցի, որ Բիթլիսի և Վանի երկու վալիներն էլ շատ համերաշխ են գործում, առանձնապես երբ խոսքը վերաբերում է քրդերի շրջանում ռուսական ազդեցությունները նկատելուն և դրա դեմ պայքարելուն»:

**Վանգեևհայմ**

*Նորին գերագանցություն ուսյասկանցիք պարոն ֆոն Բեքման Հովվեզին*

8.

*Կայզերական Գերմանիայի Տրայիզոն, 30 հուլիսի 1914թ. հյուպատոսություն*

Ձերդ գերագանցություն, պատիվ ունեմ խոնարհաբար զեկուցելու, որ Զրդստանում նոր ապստամբություն է բռնկվել: Հեռավորության և վատ կապի պատճառով ոչ բոլոր մանրամասնություններն են հայտնի: Մինչդեռ շարժումն այս անգամ կարծես ավելի մեծ չափեր է ընդունել: Ապստամբության կենտրոնը Բիթլիսն է և քրդերի բարձր ամբողջ՝ Դերսիմը: Ասում են, որ մի թուրք գեղապետ և մի քանի ժանդարմ գերի են վերցվել քրդերի կողմից և կախաղան բարձրացվել: Ապստամբները հայերին ևս հասկացրել են, որ նրանք, ովքեր ապաստան չեն տա փախստական քրդերին, կսպանվեն:

Այս տարվա գարնանը, քրդական խռովությունների ժամանակ, քրդերը հայերին կյանքի և ունեցվածքի ապահովություն երաշխավորեցին: Իսկ եթե հիմա նրանք հայերի հանդեպ ուրիշ դիրք զբաղվեն, ապա դա թերևս կնշանակի, որ շարժման նպատակն այլ է: Նախկինում, նպատակը կարծես միայն այն էր, որ նեղություններ պատճառեն թուրքական կառավարությանը: Այս անգամ թերևս նպատակադրվածություն կա ռուսական միջամտություն առաջ բերել: Թե որքանով է ռուսական ուժերին կրկին բորբոքել շարժումը, այստեղից հնարավոր չէ պարզել:

Մի քանի օր առաջ այստեղի ռուս հյուպատոսը հանկարծ մեկնեց

երկրի խորքերը: Ասում են, որ նա այցելում է հունական վանքերը: Երկու օր հետո նրան հետևեց այստեղի մետրոպոլիտը: Նրան ուղեկցում է մի ռուս, որն արդեն մի շաբաթ է, ապրում է նրա մոտ և իրեն գիտնականի տեղ դնում: Այն, որ ռուս գործընկերն այսպիսի մի ժամանակամիջոցում, երբ իրավիճակը Եվրոպայում այստեղից պարզ չի երևում, բողոքում է Ռուսաստանի համար կարևոր իր պաշտոնատեղը, որպեսզի օրերով գնա երկրի խորքերը, աչքի ընկնող երևույթ է:

**Դոկտոր՝ Բերգֆելդ**

**Նորին գերազանցություն ռախականցլեր պարոն ֆոն Բերման Հոլվեգին**

**Օգոստոս**

9.

Կայզերական Գերմանիայի Թերասպիա, 11օգոստոսի 1914թ.  
դեսպանություն

Կայզերական փոխհյուպատոս Անդերսը Վանա լճի ափին գտնվող իր վրանաճամբարից ուղարկած անցյալ ամսվա 26-ի գեկուցագրով հաղորդում է.

«Արևելյան Անատոլիայում նշանակված ընդհանուր տեսուչ գնդապետ Հոֆ բեյի՝ ժամանումը, որի գործունեության վրա այստեղի հայերը բնականաբար մեծ հույս էին դնում, սպասվում է մոտ օրերս: Այստեղի եպիսկոպոսության կողմից երեկ 14 անդամներից կազմվել է մի կոմիտե, որը համայնքի անունից ոչ միայն պետք է ողջունի Հոֆ բեյին նրա ժամանման առթիվ, այլև, ոչ պաշտոնապես, պետք է հովանավորի նրան ապագա գործունեության ընթացքում: Այս կոմիտեն կազմվել է տեղի երեք կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանների և ռամկավարների ներկայացուցիչներից, վաճառականներից և երևելիներից: Կոմիտեի որոշ անդամների մասին ինձ տեղեկություններ տվեց իմ այստեղի երաշխավորը: Հոֆ բեյի շտաբում պաշտոնապես նշանակված են.

1. Հայկազունի Բեյիկյանը՝ որպես գյուղատնտեսության գծով խորհրդատու, մոտավորապես 46 տարեկան, մինչև այժմ հողագործության նախարարության դիրեկտոր:
2. Ագտիկ էֆենդի Գյոզուբուլյանը, մինչև այժմ քաղաքացիական տեսուչ:
3. Գրիգոր էֆենդի Շահինյանը, մինչև այժմ քարզմանիչ Ստամբուլի հասարակական անվտանգության բյուրոյում:
4. Մաթևոս էֆենդի Էրիզայանը, մինչև այժմ Բիդայետ մեհթեմեյի (1-ին առյանի դատարանի) պրեզիդենտ Վանում:

1 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Բ. Դռան կողմից մեծ տերությունների հետ պայմանավորված որոշման հիման վրա հայկական բարենորոգումների անցկացման համար նշանակված երկու ընդհանուր տեսուչներն էլ՝ նորվեգացի Հոֆը և հոլանդացի Վեստենենգը, պատերազմը սկսվելուց շատ չանցած, սուլթանի ղեկավարների 3 (16)-ի հրահանգով հեռացվեցին գործից: Բարենորոգումներն այլևս չիրականացան:



Ամեն անգամ, երբ առիթ էր ներկայանում, ես հայկական շրջաններում ուշադրություն էի հրավիրում այն բանի վրա, որ բնականաբար մի շարք բարենորոգումների իրագործումը տարիներ է պահանջում, և որ պետք չէ չափից դուրս պահանջներ դնել: Ամեն դեպքում նրանք կարող էին համոզված լինել, որ կայգերական Գերմանիայի կառավարությունը, մյուս մեծ տերությունների հետ միասին կհոգա, որ այս անգամ բարենորոգումներն իսկապես անցկացվեն:

Պարոն Հոֆն անձամբ, այս ամսվա 6-ի հեռագրով ինձ տեղեկացրել էր իր էրգրում ժամանելու մասին և ավելացրել, որ հաջորդ շաբաթվա սկզբներին մտադիր է ուղիղ Վան մեկնել:

**Վանգենհայն**

*Նորին գերազանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին*

10.

*Կայգերական Գերմանիայի Թերապիա, 11օգոստոսի 1914թ. ղեկավարություն*

**Չեռագիր**

Պատիվ ունեն ներկայացնելու նորին գերազանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին:

**Վանգենհայն**

*Կայգերական Գերմանիայի Վրանաճամբար Վանա լճի ափին, հյուպատոսություն 25 հուլիսի 1914թ.*

Վերջերս հնարավորություն ունեցա պարսկական սահմանամերձ շրջաններում տիրող դրության մասին խոսել Ուրմիայի բուրքական հյու-

պատոսության կառավարչի հետ, որը ժամանել էր այստեղ՝ ներկա գտնվելու ազգային տոնակատարությանը, ինչպես նաև 1906 թվականից ինձ հետ բարեկամացած Հեքյարի մյութասարիֆ Ջևդեթ բեյի (Էնվեր փաշայի փեսայի) հետ: Երկուսն էլ նույն կարծիքին էին, որ Ադրբեջանի գավառում և հատկապես Ուրմիայի շրջանում լրիվ անարխիա է տիրում: Պարսիկ պաշտոնյաները լրիվ անգոր են և հաճախ իրենք են օգնություն խնդրում ռուսական զավթիչ ուժեղ բանակից: Միայն Ուրմիայում գտնվում է 1000 ռուսական զինվոր:

Ռուսների կողմից վարձատրվող տխրահոշակ Սմկո բեյը՝ Մակու շեյխի հետևորդը<sup>1</sup>, ռուսների մոտ իր հեղինակության շնորհիվ դարձել է պարսկական սահմանի պարետը: Ինչ վերաբերում է Մակու շեյխին, ապա, ըստ Ջևդեթի արտահայտության, նա որոշ ժամանակ հետո դժվարություններ կպատճառի իր մինչայժմյան բարեկամներին՝ ռուսներին, քանի որ հասկանում է, որ շուտով գալու է իր անկախության և իշխանության վերջը: Ջևդեթ բեյն ինձ ասաց՝ անհնար է արգելել կամ վերահսկել ավազակների սահմանանցումը առանց թույլտվության, քանի որ երկու կողմից էլ չկա բավականաչափ ուժեղ ժանդարմերիա: Մակայն իր սանջակի շրջանում պարսկական ավազակախմբի կողմից հաճախակի գողությունների առաջն առնելու համար, նա իր սեփական նախաձեռնությամբ, առանց օրենքով լիազորված լինելու, քրդական ցեղապետներին, որոնց շրջանում չարաշահումներ են ի հայտ գալիս, պատասխանատու է դարձրել հասցված վնասի համար: Այս միջոցառումից հետո գիշերային անասնագողությունները հազվադեպ են դարձել, որից ակնհայտորեն բխում է, որ նախկին գողությունների ժամանակ թուրքական քրդերն ավազակների հետ միասին էին գործում:

Վերջին ամիսներին համեմատաբար հանգիստ էր տիրում: Միայն այս ամսվա կեսին Սմկոյի մարդիկ հարձակվել են մի գյուղի վրա, որի արական սեռի բնակիչներն այդ ժամանակ աշխատում էին դաշտում, սպանել են հինգ կնոջ և քչել տարել անասունները: Հանուն տուժածների շահերի, այդպիսի դեպքերի համար օրենքը պետք է պարզեցում մտցնի: Գողությունները բացահայտելու դեպքում կառավարու-

<sup>1</sup> Մակու և Սմկո շեյխերը քրդեր են:



**Հոկտեմբեր**

**11.**

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հալեպ, 16 հոկտեմբերի 1914թ.

Ինչպես ինձ պատմում են Մարաշից եկած միսիոներուհիները, Չեյքու-  
նի բնակիչների կողմից մինչև այժմ ցույց տրվող ակտիվ և պասիվ դիմադ-  
րությունը, որն ուղղված էր հայկական այս քաղաքի զինապարտներին  
բանակ զորակոչելու դեմ, թուրքական կողմից այսուհետև կոտրված է<sup>1</sup>։  
Նրանց առաջնորդ Նազարեթ Չաուշը, արդեն մի քանի ամիս լեռներում  
աննպատակ բրև եկող դասալիքների պարագլուխը, որը ժամանակի ըն-  
թացքում դարձել էր ավագակապետ և իր կամայականությունների պատ-  
ճառով պատուհաս էր դարձել անգամ հայերի համար, մոտավորապես  
հոկտեմբերի սկզբներին խորամանկության և խոստումնազանցության  
միջոցով բռնվել է թուրք զորքերի կողմից և ամենադաժան ձևով տանջա-  
մահ արվել։

**Ռ-յուլեր**

**Նորին զերազանցություն կայզերական դեսպան  
պարոն բարոն ֆոն Վանզենհայմին**

1 29 հոկտեմբեր. թուրք-ռուսական հակամարտության սկիզբը: Չեյքունի վիճակի մասին դես-  
պան Ռ-յուլերը 1913թ. ապրիլի 25-ին գեկուցել էր Կ. Պոլսի դեսպանություն. «Հալեպի հայ  
լուսավորչական եպիսկոպոս Ներսես Դանիելյանը մի քանի շաբաթ առաջ վերադարձել է  
Չեյքուն կատարած ճանապարհորդությունից, ուր գնացել էր թուրքական կառավարության  
ցանկությամբ: Այդ քաղաքի բնակիչները, որոնք ի սկզբանե համարվել են անհնազանդ,  
հնարավորին չափ խուսափել են զինժառայությունից: Չեյքունի երիտասարդները գնացել  
են լեռները, որտեղ գոյատևելու համար սկսել են վարել ավագակային կյանք: Վերջերս  
նրանց են միացել նաև մահմեդականները: Եպիսկոպոսի խնդիրը պետք է լիներ իր հավա-  
տակիցներին կանոնավոր կյանքի վերադարձնելը: Սակայն նրանք պահանջել են սուլթանի  
մի հրահանգ, որը նրանց կազատեր զինվորական ծառայությունից: Այնպես, որ նրան չի  
հաջողվել կատարել իր խնդիրը: Եպիսկոպոսը, որը խելացի և լուրջ մարդ է, պատկանում է  
չափավոր և շրջահայաց հայերի այն ուղղությանը, որոնք հավանություն չեն տալիս Ռու-  
սաստանին միանալու ձգտումներին, ավելի շուտ ցանկանում են թուրքական պետության  
ներսում խաղաղ ճանապարհով բաղենորոգումների հասնել»:

**Նոյեմբեր**

**12.**

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Տրապիզոն, 18 նոյեմբերի 1914թ.

Նոյեմբերի 1-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև խզվեցին դիվանա-  
զիտական հարաբերությունները:

Երեկ առավոտյան Տրապիզոնի խաբսխակայանում երևաց ռուսա-  
կան սևծովյան նավատորմը՝ բաղկացած երկու գրահապատ նավից,  
հինգ հաժանավից և մեկ տրանսպորտային նավից, որոնք շրջափակված  
էին մի քանի ականակիր նավերով: Ժամը 8-ին սկսվեց քաղաքի ռմբակո-  
ծումը, որը ընդհատումներով տևեց մոտավորապես մեկ ժամ: Մի քանի  
կրակոցներ արձակվեցին ծանր հրետանիներից (ըստ գտնված արկերի  
մասերի կարելի է դատել, որ այն ≈20 սմ տրամագիծ ունի), որոնք ուղղ-  
ված էին կայզերական դեսպանության հին և նոր փոստային ծառայու-  
թյան շենքերին: Մնացած կրակոցները փոքր տրամագծերի արկերից էին  
և առաջին հերթին ուղղված էին Գյուզել-Հիսարի հին ամրոցին և նավա-  
հանգստին: Դրանց պատճառով վնասն աննշան է: Ռմբակոծման նպա-  
տակը պարզ չէ: Կարծում եմ, որ ռուսները հույս ունեին, որ հայ և հույն  
բնակչությունը խռովություն կսկսեր, և այդ դեպքում զորքը ափ դուրս  
կգար: Թուրքերն անմիջապես զինեցին մահմեդականներին և գրավեցին  
ափը: Քաղաքում երևացին նաև մեծ թվով պարեկներ՝ ոստիկանների ա-  
ռաջնորդությամբ: Մահմեդականները ցուցադրեցին լավագույն կարգա-  
պահություն:

Ռմբակոծությունը սկսվելուն պես մի քանի հայ և թուրք կանայք ի-  
րենց երեխաների հետ միասին օգտվեցին կայզերական հյուպատոսու-  
թյան պաշտպանության իրավունքից: Նրանք լրիվ կորցրել էին գլուխնե-  
րը, լաց էին լինում և սպառնում խուճապ առաջացնել: Այդ ժամանակ ես



թղթակցությունների ընդհատման պատճառով հավաստի լուրեր չկան:

Ընդհանուր առմամբ պատրիարքը նշեց, թե յուրաքանչյուր շրջահայաց հայ ցանկանում է, որ հայերը մնան թուրքական տիրապետության ներքո և չի ընդունում տվյալ տարածքների միացումը որևէ օտար պետության: Ամեն դեպքում անպայման անհրաժեշտ է, որ ծրագրված բարենորոգումների ոգով Արևելյան Անատոլիայում հայերին երաշխավորվի հավասարություն օրենքի առաջ և կյանքի ու գույքի ապահովություն:

Անցնելով մեզ հետ պատերազմի մեջ գտնվող այս կամ այն տերության հանդեպ հայերի ունեցած համակրանքին, պատրիարքը կարծում է, որ դա կարելի է հասկանալ, քանի որ ռուսական շրջանների հետ սահմանային հաղորդակցության ժամանակ բազմիցս կարող էր համակրանք առաջանալ ռուսականի նկատմամբ:

Ամեն տարի գարնանը հազարավոր հայեր են ձգվում Ռուսաստան աշխատելու համար և աշնանը իրենց խնայողություններով վերադառնում են թուրքական հայրենիք: Ահա և, հավանաբար, համեմատություններ են անցկացնում օտար տեղում տեսած վերաբերմունքի և Թուրքիայում իրենց վիճակի միջև: Իսկ թե ինչպիսին կլինի նրանց ճակատագիրը, եթե ընկնեն Ռուսաստանի տիրապետության տակ, նրանք այդ մասին ճիշտ պատկերացում չունեն: Էրզրումի հայկական կոտորածի ժամանակ (1898թ.) ռուս հյուպատոս Մաքսիմովը ոչ միայն մերժեց այն հայերին, որոնք ապաստան էին փնտրում հյուպատոսությունում, նույնիսկ բարձր կոչերով հրահրեց ֆանատիկ խուժան ամբոխին շարունակել բռնությունները: Պատրիարքը այլ մանրամասնություններ էլ մեջբերեց և ավելացրեց, որ Ռուսաստանի կողմից բարենորոգումների պաշտպանությունը Թուրքահայաստանում պայմանավորված է Կովկասի հայ բնակչությանը հաշվի առնելու հանգամանքով:

Եթե կա համակրանք Ֆրանսիայի հանդեպ, ապա դա այն բանի հետևանքն է, որ հայկական դպրոցներում օտար լեզուներից հիմնականում ֆրանսերենն է ուսուցանվում: Այդ լեզվի իմացությունը ոգեմիջնորդ է ֆրանսիական գաղափարների և ֆրանսիական համակրանքի ներմուծման համար: Համապատասխան ուսուցիչների պակասության պատճառով մինչև հիմա միայն մի քանի դպրոցներում է գերմաներեն դասավանդվում: Ամերիկայի հանդեպ գոյություն ունի բացառիկ համակրանք, չնայած ամերիկացիների կողմից նոր հավատքի դարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքը շատ անգամ զայրույթ է առաջացնում հայերի

մեջ: Կայգերական գթության քույրերի և գերմանական այլ ընկերությունների Թուրքիայում հայերի համար ծավալված օգտակար լայն գործունեությունը պատրիարքի կողմից ճիշտ է գնահատվում: Պատրիարքի վերոհիշյալ դատողությունները պետք է համարել դիպուկ և անկեղծ: Ինչքանով հայտնի է ինձ, նա ինքը, ինչպես և հայկական համայնքի այժմյան «Մեծ խորհրդի» մեծամասնությունը, մտնում են չափավոր կուսակցության («Ռամկավար») կազմի մեջ:

Վանգենհայն

**Ձերդ գերազանցություն ռախականցիք պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

14.

Կայգերական Գերմանիայի Բերա, 30 դեկտեմբերի 1914թ. դեսպանություն

Կից զեկուցագիրը, որը Էրզրումի շրջակայքի հայ բնակչության դեմ թուրքական կողմից կատարված բռնությունների մասին է, հաստատում է այդ մասին պատրիարքի ինձ հաղորդածը: Ես անհրաժեշտ եմ գտնում այս իրավիճակի մասին խոսք բաց անել Բ. Դռանը և անհապաղ խորհուրդ տալ, որպեսզի հոգ տարվի միջադեպերը վերացնելու համար: Ամեն դեպքում մեծ վեզիրը այն կարծիքին է, որ այս միջադեպերն առաջ են եկել ոչ առանց հայերի պրովոկացիայի: Որպես դրա ապացույց նա մեջբերեց այն փաստը, որ պատերազմում հայերը բացեիքբաց դեմ են դուրս գալիս թուրքական գործին, և մնացածի թվում հիշատակեց, որ բուլղարահայերը Ռուսաստանի տրամադրության տակ են դրել կամավորների մի ջոկատ<sup>1</sup>:

Վանգենհայն

**Նորին գերազանցություն ռախականցիք պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

<sup>1</sup> Պետք չէ մոռանալ, որ հայ ժողովրդի կեսը՝ Կովկասի հայերը, ռուսահպատակներ էին:

Հավելված

Կայզերական Գերմանիայի Էրզրում, 5 դեկտեմբերի 1914թ. հյուպատոսություն

Էրզրումի վիլայեթի հայ բնակչությունը, հատկապես գյուղական բնակչությունը, խիստ անհանգստացած է մի քանի դեպքերի պատճառով, որոնք նրանք ընկալում են որպես նոր ջարդերի նախանշան:

Էրզրումի բարձրավանդակի Օձնի գյուղում սույն ամսվա 1-ին երեք թուրք բաշիբոզուկներ այցելել են հայերի շրջանում մեծ հարգանք վայելող մի քահանայի, կերել-խմել են նրա հետ և գիշերել նրա տանը: Իսկ հաջորդ առավոտյան ստիպել են քահանային իրենց ուղեկցել մինչև գյուղի ծայրը, որտեղ հրացանազարկ են արել նրան:

Գվնիկ գյուղում, նույնպես Էրզրումի բարձրավանդակում, բաշիբոզուկների 12 հոգանոց մի խումբ դուրս էր քշել բոլոր տղամարդկանց, կապկպել և որպես վրկագին յուրաքանչյուրի համար պահանջել 100 թուրքական ֆունտ: Այդքան գումար գյուղը չի կարողացել հավաքել: Տղամարդիկ գերի են մնացել: Այս գյուղի մի քանի կանայք լացելով եկել են Էրզրում, եպիսկոպոսի մոտ և օգնություն խնդրել:

Մյուս գյուղերից էլ նույնամանա հաղորդագրություններ են գալիս:

Էրզրումի հայ եպիսկոպոսը դիմել է վալիին, որը խոստացել է Էրզրումի բարձրավանդակը մաքրել բաշիբոզուկներից: Այս տեղեկությունները գալիս են հարգված հայերի կողմից:

Հայ բնակչությունը պնդում է, որ դա թուրքական «Իթիհատ»՝ կուսակցության նյութած գործն է:

Փաստն այն է, որ թուրք սպաները լավ չեն խոսում հայերի մասին, քեռուսասեր են և հեշտացրել են ռուսական գորքերի մուտքը թուրքական շրջան: Որոշ նշաններից երևում է, որ թուրք բնակչության շրջանում կրկին բորբոքվում է հին ատելությունը հայերի նկատմամբ:

Շվարց

Նորին գերազանցություն ռախսկանցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին, Բեռլին

1 «Իթիհատ»-ը "Ittihad we Teraki Djemijeti" կրճատ ձևն է, երիտթուրքական «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի անունը:

Փնայում

15.

Կայզերական Գերմանիայի հյուպատոսություն

ԲՅուս, 2 դեկտեմբերի 1914թ.

1915

Ոնցեսմուք տեսուչ Հ.Ֆ. քեյի հետ կերպով համամայնացրի Տ.թ. կայզերականի կայսերական կատարարությունն իրավունք ունի համար ձայնագրի ժամկետը լրանալուց անոց այն չիլայի համարել: Համարատախյամ վերադառնում է պարտական ման քարտուղար Բեյքի Է.Ս. կնքված արձանագրությանը: Երիտթուրքական վարչարարում թե՛քսակրթ վարչարարությանը կրեանոց է առաջել քուրդ կանաճակի համամայն չիլայի համարել կերպ նշված պարտմները հետ կերպով համամայնացրի: Աման չիլով վարչկցան հետ համարված ռեֆորմացիոն վարչարարում:

Կատարած չի կարող լինի քուրդ իրավունքային այս միջոցառումը մեծ հուզում կարողացրեց իրավունքային շրջանում, քանի որ դա կեննկարտիի որպես այն քանի նշան, որ ի. Կուրդ չի կաննկում շարունակել հայկական բարեկրթությունն իրավունքային: Ենչու է. Ս. Կուրդ այդ քանի բացիորաց չի խոստովանում, այլ անկողջ դարձվածքներով մատուցանում է. քե հեմարավոր է, որ պատահությանից հետո վերադարձուս այդ երկու ռեֆորմացիոններին: Մարտն դա ավելյան չէ, քան ներս ձե շուկե խուցի ճեկ, որը չի կարելի լացը ընդունել:

Երբ Թուրքեր ընչին կանկան կարծեսցին, քե ուղղորդ այրվալեթ քուրդնը օգուակն"ն է, մտ սրանե՛րանենց "L'art le seul moment" բարբալ" (Ենչու պրակնի դա ձեռնմու է) եւ քուրդերն շրջանում սպանցիս մատուցանում նկրուեթ, քե Թուրքիայի պարտմետ դեպքում հայ ազգայնացի ու յուրեն անսխալման կերպի հասրակի կորնից, և որ բարեկրթման եւրոպ թե՛քս խոստովանեթն այստեղ այլոց վարկել չեն կարող: Այդ պատմմազ Թ. Կուրդ ձաննկուցել է, և յուր չի տու, որ իայ ձեղակրիլիմ Թուրքիայի մտա քուրդյուններինց անոց պարտմյալ վերադառնուր քարմն քեկի:

Ինքը նշված միջոցառումն այսպիսով բնորոշվում է որպես կատարված:

Հավելված

Կայզերական Գերմանիայի  
Ֆեդերատիվային

Էրզրան, 5 դեկտեմբերի 1914թ.

Էրզրանի գյուղերն են քանակապես, հատկապես գյուղական  
ընտանիքներն են և նրանց առաջատար է նրանցի վաղեմի արտոճա-  
րակ, որով նրանք զինված են զուրկ հոր շարժերի նախաձեռնում:

Էրզրանի գյուղացիներն Օսմանյան գյուղական սուլթանի անվան ի-նի նման  
բոլոր բաշխումներն են արած, որ նրանք չպահանջեն մեծ հարգանք վաղե-  
մի մի քանակությամբ, այլ նրանք են և գիշերի մյուս տանը: Իսկ հա-  
ջորդ ստավորումը նրանք են քանակապես իրենց ուղևորել մինչև գյուղի  
մայրը, որտեղ նրանք են արած:

Չվերջ գյուղական, մասնաճյուղային քաղաքականացում, բաշխու-  
թանցներ 12 հարգանք են արած, որ նրանք են բնի բոլոր արտադրությանը,  
կապիտալ և արհեստական, որ նրանք են համար արտաճանքի 100  
բաշխական գումար: Այս բոլորը են կարողանալու նախորդի:  
Տղամարդիկ գերի են մեծ և մասնաճյուղային մի կամայք թացելով են  
են Էրզրան, մայրաքաղաքը են և նրանք են խնդրել:

Այս գյուղերից է Գալիպոլիսի հատկապես գյուղերն են Գալիս:

Էրզրանի այդ նշանակալից գյուղերն է Գալիս, որ խոստացել է Էրզրա-  
նի քաղաքականությանը մասերն բաշխողականին: Այս տեղեկությունները  
գալիս են հարգված նախիկ կազմել:

Հայ քաղաքացիներն անհոգ են, որ նրանք թուրքական շեքիմական կոստակ-  
ապրան մյուսն զարծել:

Մասան այն է, որ բոլոր նրանք լավ են խոսում նրանքի մասին, բե  
առատակ են և կենսապես են առաջատար զորքերի մասերը և արհեստական չը-  
բան: Իրոք նրանք են կոստակ և, որ բոլոր նրանք չպահանջեն կրկին  
բաշխված է են անկարգությանը հարին մասան:

Հզոր

Երբն գերազանցությունը անհավանական  
պարան ինքն ինքն Հոլիվուդիկ Քեյթին

1-Վերնապատման "Titulul ve Terakki Ocumu" կրթական և քաղաքական վարչակազմի  
և առաջատարների կազմերն են:

խորհրդի մոր պարագի զոհ լին վաղը մյուս կրկին և արհեստական մասան  
-մզմի մասնաճյուղային դի 1 կարողանալու արտաճանքի միջին մասերն են  
**Փետրվար** և արհեստական զորքի զանազան մասերն են մասերն են

Կազմակերպում

15.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 2 փետրվարի 1915թ.

Ընդհանուր տեսուչ Հոֆ բեյի հետ կնքված համաձայնագրի 5-րդ հոդ-  
վածի համաձայն, թուրքական կառավարությունն իրավունք ունի համա-  
ձայնագրի ժամկետը լրանալուց առաջ այն չեղյալ համարել: Համապա-  
տասխան վերապահում է պարունակում նաև քարտուղար Բլեիի հետ  
կնքված համաձայնագիրը: Քրիստիանիայում լիազորված թուրքական  
դեսպանությունը հրահանգ է ստացել՝ բոլոր կանոնների համաձայն չե-  
ղյալ համարել վերը նշված պարունակների հետ կնքված համաձայնագիրը:  
Նման ձևով վարվեցին նաև հուլանդացի ռեֆորմատոր Վեստենենգի  
հետ:

Կասկած չի կարող լինել, որ թուրքական կառավարության այս միջո-  
ցառումը մեծ հուզում կառաջացնի հայ բնակչության շրջանում, քանի որ  
դա կմեկնաբանվի որպես այն բանի նշան, որ Բ. Դուռը չի կամենում շա-  
քունակել հայկական բարենորոգումների իրագործումը: Այլ չէ, Բ. Դու-  
ռը այդ բանը բացեիքաց չի խոստովանում, այլ անորոշ դարձվածքներով  
մատնանշում է, թե հնարավոր է, որ պատերազմից հետո վերադարձնեն  
այդ երկու ռեֆորմատորներին: Սակայն դա ավելին չէ, քան facon de par-  
ler (խոսքի ձև), որը չի կարելի լուրջ ընդունել:

Երբ Թալեսթր բեյին կասկած հայտնեցին, թե արդյոք այդպիսի որոշու-  
մը օգտակա՞ր է, նա պատասխանեց “Cnst le seul moment propice!” (Տվյալ  
պահին դա ձեռնառու է): Ես թուրքերի շրջանում այնպիսի մտայնություն  
նկատեցի, թե Թուրքիայի պարտվելու դեպքում հայ ազգաբնակչությունն  
անպայման կկռվի հաղթողի կողմից, և որ բարենորոգման հարցի բոլոր  
խոստումներն այստեղ ոչինչ փոխել չեն կարող: Այդ պատճառով Բ. Դու-  
ռը ձանձրացել է, և թույլ չի տա, որ հայ ժողովրդին Թուրքիայի նյութ ազ-  
գություններից առաջ արտոնյալ վերաբերմունք բաժին ընկնի:

Վերը նշված միջոցառումն այսպիսով բնորոշվում է որպես կառավա-

րական գործողությունների այն շղթայի մի նոր օղակը, որի միջոցով Թուրքիան կրկին ինքնավստահ արտահայտում է իր անսահման ինքնորոշման իրավունքը պետական կյանքի բոլոր բնագավառներում:

**Վանգենհայմ**

*Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին*

16.

*Կայզերական Գերմանիայի Բերա, 22 փետրվարի 1915թ. դեսպանություն*

Սույն ամսվա 2-ին հույն պատրիարքին կատարած իմ այցելությունը մեծ ազդեցություն գործեց այստեղի լայն շրջանակներում:

Հայ պատրիարքը ևս ցանկություն հայտնեց հանդիպում ունենալ ինձ հետ:

Սույն ամսվա 20-ին ինձ կատարած այցելության ժամանակ նա նախևառաջ իր շնորհակալությունը հայտնեց հայկական բարեկրթությունների հարցում մեր բարյացակամ քաղաքականության համար: Նա ինձ խնդրեց միջնորդել, որ գերմանացի զինվորականները և հյուպատոսները պաշտպանության տակ վերցնեն սահմանամերձ գավառներում գտնվող պատերազմից տուժած հայ ազգաբնակչությանը: Այնտեղ գտնվող հայերի վիճակը նա ընդհանուր առմամբ բնորոշեց որպես «համեմատաբար բավարար»:

Ես պատրիարքին կրկին վստահեցրի, որ մենք առաջվա պես ձգտում ենք բարելավել բուրքահայերի վիճակը, և որ երկարատև խաղաղության շրջանը, որը սպասվում է պատերազմի ավարտից հետո, մեզ հնարավորություն կընձեռի այդ հարցում շարունակել իրացնելու մեր բարոյական և քաղաքական ազդեցությունը: Ես ասացի, որ պատերազմը բնակչության բոլոր մասերին զոհեր է բերել, որ պատահական դաժանություններից հնարավոր չէ խուսափել, հատկապես բուն պատերազմական շրջաններում: Սակայն գերմանացի ծառայողները, ինչքան հնարավոր է, հոգ կտանեն հայերի համար, և ես ինքս անձամբ ինձ իրավունք եմ վերապահում Բ. Գոմանը քննարկել տալ այս կամ այն կետը:

**Վանգենհայմ**

*Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին*

124

**Մարտ**

17.

*(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)*

**Հեռագիր**

*Ուղարկված է Էրզրումից 1915թ. մարտի 3-ին  
Ստացված է Բերայում 1915թ. մարտի 3-ին*

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Բիթլիսի վիլայեթից<sup>1</sup> հաղորդում են հայերի խռովարարական շարժումների և զինվորականների ու ժանդարմների դեմ զինված գործողությունների մասին: Կեսարիայում տնային խուզարկությունների ժամանակ հայտնաբերվել են ռումբեր և ծածկագիր գրքեր: Այս շարժումները վերագրում են թշնամական ուժերի կողմից գրգռիչ ազիտացիային: Չինվորական ծառայողները խիստ միջոցառումներ են ձեռնարկել, հայերը իրավունք չունեն անգամ ծառայության ընթացքում զենք ունենալ:

**Շոյբներ**

18.

*Կայզերական Գերմանիայի Ալեքսանդրեթ, 7 մարտի 1915թ. հյուպատոսություն*

Վերջին օրերին այստեղի բոլոր ռայաների՝ հայերի, ասորիների, հույների մոտ, վերևներից եկող (ըստ լուրերի Կ. Պոլսից) հրահանգի համաձայն, անց են կացվում տնային խուզարկություններ: Շատ տներից բռնագրավվել են գրագրություններ, հավանաբար միայն նրա համար, որ դրանք օտար լեզվով էին: Նույն ճակատագրին են արժանացել նաև գրքերը, հատկապես անգլերեն լեզվով: Այդ հողի վրա մինչև այսօր ձեռքարկություններ չեն եղել: Որքան ճանաչում եմ այստեղի փոքր ազգաբնակչությանը (հայերին), չեմ հավատում, որ նա երկրի հանդեպ դավաճա-

1 Համեմատիր N 2 հավելվածը:

125



նաբար գործի: Այդ պատճառով էլ տվյալ միջոցառումը զարմացրեց այստեղի օտար պետությունների քաղաքացիներին: Ամեն դեպքում միջոցառումն անցկացվել է պատշաճ ձևով:

Չինվորականներից լսել են, որ միջոցառումը կապված է այն անվտանգության հետ, որ վերջերս ուժեղացել է կառավարական շրջաններում քրիստոնյաների, հատկապես Սիրիայի և Կիլիկիայի հայ բնակչության հանդեպ, հավանաբար նաև այլուր, որին սնունդ են տալիս այստեղ և հարևան շրջաններում տեղ գտած փոքր միջադեպերը: Օրինակ, ինչպես հաղորդել են՝ «Դորիս» հաժանավի երկու ափիհանման ժամանակ անգլիացիներին գերի ընկած ժանդարմների մեջ հայեր կային: Մի անգամ հայ ենթասպան քաշկինակով կապիտուլյացիայի նշան է տվել մի փոքր խրամատում գտնվող (առանց հետադարձ ելքի հույս ունենալու) 7 մարդուց բաղկացած (չգործող մարտիմիներով զինված) անձնակազմին: Ավելի շուտ այս գործելակերպը կարելի է բացատրել զինվորական փորձի պակասությամբ, սակայն այստեղի զինվորական իշխանությունները դրա մեջ դավաճանություն են տեսնում: Այս երկու դեպքերը ևս այստեղի հայերի մեջ խուճապ առաջացրին:

Խուճապը ուժեղացավ այստեղից 30 կմ հեռավորության վրա գտնվող Ադանայի վիլայեթին պատկանող Դյորթյուլի վայրում զինվորական իշխանությունների գործողության հետևանքով: Թե իրականում ինչ է այստեղ տեղի ունեցել, ես դեռ չեմ կարողացել մանրամասն պարզել: Ըստ այստեղի զինվորական իշխանությունների հաղորդման, խոսքը գնում է շուրջկալի մասին, որը ձեռնարկվել էր այնտեղ մի շաբաթ առաջ՝ որպես դասալիքների, ավագակների և խոռվություններ դրդողների վայր: Ըստ այդ տեղեկությունների՝ բոլոր աշխատունակ մարդիկ բռնի քշվել են Օսմանիե՝ ճանապարհաշինական աշխատանքների: Փաստն այն է որ բնակավայրը շրջափակվել է զինվորականներով, և մուտքն ու ելքը թույլատրվում է միայն զինվորական անցաթղթով:

**Հոֆման**

**Նորին գերագանցություն կայզերական  
դեսպան պարոն բարոն ֆոն  
Վանզենհայմին, Կ. Պոլիս**

19.

**Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն**

**Ադանա, 13 մարտի 1915թ.**

Ձերո գերագանցություն, պատիվ ունեմ հավելվածում ներկայացնելու իմ երաշխավորի շարադրած նկարագրությունը Դյորթյուլի իրադարձությունների մասին:

Չեկուցագրի վստահելիության համար որևէ պատասխանատվություն ես ինձ վրա վերցնել չեմ կարող, սակայն կարծում եմ, որ գործը միանգամայն ճիշտ է ներկայացված:

**Բյուզե**

**Նորին գերագանցություն կայզերական  
դեսպան պարոն բարոն ֆոն  
Վանզենհայմին, Կոստանդնուպոլիս**

**Հավելված**

**Խոռվությունները Դյորթյուլում**

Դյորթյուլը, քիչ բացառություններով, բնակեցված է հայերով և շրջապատված թուրքական բնակավայրերով: Բնակչությունը ապրում է բացառապես նարնջի կուլտուրայով, և այս տարի, համընդհանուր պատերազմի պատճառով իր աշխատանքի միակ արտադրանքը չկարողացավ շուկա հանել:

Չորակոչման ժամանակ Դյորթյուլի բնակիչները ո՛չ ծառայության մտան, ո՛չ էլ փրկագին վճարեցին: Փողի պակասության պատճառով մարդիկ ծանր կացության մեջ էին ընկել և նրանցից շատերը, փոխանակ հետևելին զինակոչին, դասալիք դարձան: Դասալիքներից մի քանիսը պանդխտության գնացին, սակայն շատերը մնացին իրենց բնակատեղում:

Այս հանգամանքը և շրջակայքում ապրող թուրքերի անվտանգությունը հայերի նկատմամբ կառավարության ուշադրությունը հրավիրեցին վերջիններիս վրա, առավել ևս, որ Դյորթյուլի բնակիչները վերջին կոտորածների՝ ժամանակ պաշտպանվել էին թուրքերից:

1 1909 բվականին:

Անգլիական ռազմանավերի կողմից թուրքական նավահանգիստները գնդակոծելուց հետո անգլիացիները հաճախ անարգել դուրս էին գալիս ցամաք, գնում էին Դյորքոյու և այնտեղ գնումներ կատարում: Շահամոլութունից ելնելով, որոշ հայեր առևտուր էին անում անգլիացիների հետ, ի դժգոհություն մյուսների, որոնք նկատել էին, որ կառավարությունն ամեն ինչ տեսնում է, ու կգա ժամանակ, երբ առանձին անձանց գործելակերպի համար պատասխան են տալու բոլորը: Սալջյան ազգանունով մի նախկին դասալիք, որը իր դաստիարակությունն ստացել էր այստեղի ճիզվիտների մոտ և հայկական դպրոցում աշխատում էր որպես ֆրանսերեն լեզվի ուսուցիչ, մի քանի շաբաթ առաջ մուտք է գործում Դյորքոյու: Երկու տարի է, ինչ նա գտնվում է Կիպրոսում, իսկ հիմա, երևի, ծառայում է անգլիական բանակում: Նա մի հայի ուղեկցությամբ Ալեքսանդրեթից գնում է Դյորքոյու և այնտեղ մնում 6-7 օր: Համարյա հաստատ կարելի է ասել, որ նա փորձել է հայերին ներգրավել օտար ծառայության մեջ: Թե ինչքանով է դա նրան հաջողվել, հնարավոր չէ որոշել: Իսկ որոշ առևտրականներ պնդում են, որ Սալջյանի առաքելությունը մասնավոր բնույթ էր կրում և բնակչության հետ ոչ մի գործ չի ունեցել: Տեղի երևելիներն այդ ողջ անցուդարձի մասին ոչ մի տեղեկություն չունեին, ոմանք այդ ընթացքում նույնիսկ այնտեղ չէին:

Սալջյանը ձեռք էր բերել անցաթուղթ և ներկայացել որպես առևտրական: Անգամ ոստիկանությունը տեղյակ էր նրա ներկայության մասին: Սակայն միայն այն բանից հետո, երբ Սալջյանը վերադառնում էր անգլիական ռազմանավ, ոստիկանությունը, զուտ պատահականությամբ, ուշադրություն է դարձնում կեղծ առևտրականի վրա, և կարողանում է բռնել միայն նրա ուղեկցին:

Դրանից մի քանի օր անց Կյոչկերյան ազգանունով (Օջախլիից) մեկ այլ հայ ռազմանավից մուտք է գործում երկիր: Այն բանից հետո, երբ կինը ջարդերի ժամանակ մորթվել էր թուրքերի կողմից, նա գտնվում էր արտասահմանում: Նա հետն ուներ նաև 40 լեզ գումար:

Բոլոր իրադարձություններից ու երևույթներից չի կարելի եզրակացնել, որ հայերն ինչ-որ կազմակերպություն ունեն դավաճանության և հեղափոխության նպատակով: Սակայն մի բան հաստատ է, որ ռազմանավերի հայտնվելը և նրանց ագրեսիվ վարքը ընդհանրապես քրիստոնյա ողջ բնակչության և հատկապես հայերի կողմից, մեծ ուրախությամբ է ընդունվում, և եթե անգլիացիներին կամ ֆրանսիացիներին երբևէ հաջողվի

մտնել երկիր, նրանք բոլոր քրիստոնյաների կողմից կընդունվեն մեծ հրճվանքով:

Որևէ միջադեպից խուսափելու համար, ելնելով հարևան բնակավայրերի թուրք բնակչության հայերին Դյորքոյուից հեռացնելու պահանջից, ինչպես նաև դասալիքներին բռնելու նպատակով, կառավարությունը մի գիշերվա մեջ ձերբակալեց արական սեռի բոլոր բնակիչներին և հեռացրեց այդտեղից: Նրանց խիստ հսկողության տակ ուղարկեցին Հալեպ և օգտագործեցին փողոցների շինարարության վրա:

Ձերբակալման ժամանակ հայերը կատարյալ հնազանդություն ցուցաբերեցին և կառավարության դեմ ոչ մի զենք չգործածեցին: Միայն փախուստի ժամանակ սպանվեց 3 մարդ: Սրանք ևս զենքի չէին դիմել:

Ադանա, 12 մարտի 1915թ.

20.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 26 մարտի 1915թ.

Սույն ամսվա 12-ին Հալեպի կայզերական դեսպանությունը հաղորդել է, որ Չեյթունում, որը վաղ ժամանակներից հայտնի է որպես հայկական անհանգիստ անկյուն, խռովություն է սկսվել, որի չափերը դեռ անհայտ են: Չնայած վալիի նախազգուշացմանը, զինվորական հրամանատարը այնտեղ ոչ մի ջոկատ չէր թողել: Երբ այդ մասին հարցում արվեց Ադանայի հյուպատոսին, վերջինս հաղորդեց, որ հայերի կողմից նախապատրաստվող ապստամբության մասին խոսք անգամ չի կարող լինել և խոսքը, հավանաբար, վերաբերում է գորակոչման առիթով առաջացած առանձին անկարգություններին: Այստեղի հայ պատրիարքը հաստատում է այդ բացատրությունը և մասնավորապես ավելացնում, որ կառավարությունը որոշ ժամանակ ի վեր Չեյթունի բնակիչների ձեռքից վերցրել է բոլոր զենքերը:

Հյուպատոս Ռյուպերը երեկ հեռագրել է.  
«Չեյթունում հայ դասալիքները, որոնք պետք է ձերբակալվեին, սպանել են մի քանի թուրք ժանդարմների: Այդ կապակցությամբ Մարաշի մահմեդական բնակչությունը բացեիբաց ծրագրել է ջարդեր սկսել, սակայն

գործը ռազմական դատարան հանձնելու մասին հայտարարությունից հետո հանգիստ է մնացել: Մարաշից Չեյթուն է ուղարկվել մի գերմանացի միսիոներ՝ բանակցություններ վարելու համար: Եթե բնակիչները չհանձնեն պարագլուխներին, ապա զինվորները կհարձակվեն: Այդ դեպքում շատ դժվար կլինի զսպել Մարաշի հասարակ մահմեդական բնակչությանը: Խնդրում են խստագույն հրահանգներ տալ հարձակումներից պաշտպանելու համար: Մարաշի հայ ազգաբնակչությունը լրիվ խաղաղ է: Միսիոներական պատվիրակությունը, որտեղ կան 8 գթության քույրեր, ինձ մոտ է ուղարկել մի գթության քրոջ, որն ինձանից խնդրում է գնալ Մարաշ՝ գերմանացիներին պաշտպանելու համար: Խնդրում են թույլ տաք մեկնել»:

Ես այստեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեցի և հնարավոր դարձրի կայգերական հյուպատոսի մեկնումը Մարաշ:

**Վանգենհայմ**

**Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

21.

Կայգերական Գերմանիայի դեսպանություն Բերա, 20 մարտի 1915թ.

Վերջին տեղեկությունները, որոնք այս օրերին Չեյթունից հասել են Բ. Դուռ, հաստատում են Հալեպի կայգերական դեսպանի կարծիքն այնտեղի վիճակի լրջության մասին:

Առանձին դեպքերի մասին, որոնք կառավարությունը վերագրում է զինվորական միջամտությանը, ներքին գործերի նախարարը հաղորդեց հետևյալը.

Հայ դասալիքները, որոնք փախուստի միջոցով խույս էին տվել ծառայության պարտականությունից, վերջերս հարձակում գործեցին Չեյթունի բանտի վրա՝ ձերբակալված հայերին ազատելու համար: Տեղի ունեցավ արյունալի ընդհարում, որի ժամանակ վիրավորվեցին և սպանվեցին պահակախմբի շատ ժանդարմներ և մի քանի հայեր, որոնք դեմ էին հարձակմանը: Տներում դասալիքներ փնտրող ժանդարմներին դիմավորեցին կրակոցներով և քարեր շարտելով: Այստեղ էլ իրենց մահը գտան մեկ կամ մի քանի ժանդարմներ: Դասալիքների մեծ մասը այնուհետև հավաքվեց

Չեյթունի մոտակայքում գտնվող մի վանքում, որտեղ հարձակման ենթարկվեց թուրք ժանդարմների կողմից: Վերջիններս տվեցին 7-8 սպանված, որոնց մեջ էր նաև Մարաշի ժանդարմների հրամանատար Սուլեյման բեյը և 20 վիրավոր: Հայերին հաջողվեց փախչել՝ տալով 20-30 սպանված, որոնցից մի քանիսի գլուխը փախչելուց առաջ կտրել էին:

Դա գալիս է նրանից, որ անհնազանդ հայերը, չնայած որոշ ժամանակ առաջ Չեյթունի բնակիչներին զինաքափելու վերաբերյալ կարգադրությանը, ունեն գեներ, և այս պայքարի պատճառն ընդհանուր զինվորագրությանը դիմագրավելու փորձն է: Նախարարը կարծում է, որ դրանից բացի այստեղ խառն է օտար ազիտատորների մատր: Բայցևայնպես, նա հավաստիացնում է, որ Չեյթունի սահմանամերձ շրջաններում հնարավոր անկարգությունների համար անհանգստությունները անհիմն են:

Հայոց պատրիարքը փորձում է մեղմացնել Չեյթունում և այլուր տեղի ունեցող իրադարձությունները և լրիվ ժխտում է կազմակերպված ապստամբության առկայությունը: Ինչպես նա, այնպես էլ նրան մոտ կանգնած հայ շրջանները պնդում են, որ թուրքահայերը լրջորեն ձգտում են իրենց պահել քաղաքավարի և լոյալ:

Վերջին պնդումները, թվում է, համապատասխանում են ճշմարտությանը: Սակայն չի կարելի չընդունել, որ հայերի և թուրքերի միջև փոխադարձ անվստահությունը վերջին ժամանակներս աճել է: Որպես դրա բնորոշ օրինակ է այն հանգամանքը, որ մի քանի շաբաթ է, ինչ բանակում ծառայող հայերը, ինչպես նաև նորակոչիկները զրկվել են զենք կրելու իրավունքից: Նրանց օգտագործում են ճանապարհաշինության մեջ և նման ծառայություններում:

**Վանգենհայմ**

**Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

22.

(Հալեպի կայգերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մարաշից 1915թ. մարտի 31-ին  
Ստացված է Բերայում 1915թ. մարտի 31-ին

Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությանը

Ձեյթունի մոտակայքում կռիվը գնում էր մեկուսի ընկած մի վանքի համար, որտեղ ապաստանել էին դասալիքները: Այն շրջապատվել էր, սակայն դասալիքներին հաջողվել է ճեղքել շրջափակումը և փախչել լեռները: Նրանք մոտավորապես 150 հոգի էին: Մի քանիսը զոհվել են, մի քանիսը վիրավորվել և գերի ընկել: Վանքը գնդակոծվել է հրետանիով: Ձեյթուն քաղաքի դեմ կռիվներ առաջիկայում տեղի չեն ունենա:

Կառավարությունը բոլորից պահանջել է, ովքեր չեն կատարել իրենց ծառայողական պարտքը, ներկայանալ ինքնական: Ինքնական ներկայացել են Ձեյթունից 123, Մարաշից 430 մարդ: Մարաշը գտնվում է պաշարման վիճակում, այստեղ է գտնվում նաև ռազմական դատարանի նստավայրը: Երեկոյան ժամը 6-ից հետո տնից դուրս գալն արգելված է: Ձենքեր գտնելու նպատակով տնային խուզարկություններ են անցկացվում միայն քրիստոնյաների, հազվադեպ՝ մուսուլմանների մոտ: Շաբաթ օրվանից լարվածությունը մի փոքր թուլացել է:

**Ռ-յուսեր**

Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությանը  
Ձեմալ փաշան չորեքշաբթի օրը հրահանգ է տվել, որ ոչ ոք չպետք է խառնվի կառավարության գործերին: Այն մահմեդականը, որը կհարձակվի որևէ հայի վրա, զինվորական դատարանի առջև կկանգնի:

**Ապրիլ**

23.

(Հալեայի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մարաշից 1915թ. ապրիլի 1-ին  
Ստացված է Բերայում 1915թ. ապրիլի 1-ին

Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությանը

Ձեմալ փաշան չորեքշաբթի օրը հրահանգ է տվել, որ ոչ ոք չպետք է խառնվի կառավարության գործերին: Այն մահմեդականը, որը կհարձակվի որևէ հայի վրա, զինվորական դատարանի առջև կկանգնի:

**Ռ-յուսեր**

24.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Բերա, 3 ապրիլի 1915թ.

Ձեյթունի կռիվների մասին սույն ամսվա 31-ին հյուպատոս Ռ-յուսերը հաղորդել է, որ խոսքը մեկուսի մի վանքի մասին է, որտեղ տեղավորվել էին հայ դասալիքները: Վանքը շրջապատել են, սակայն հայերը, թվով 150 մարդ, ճեղքել են շրջափակումը և փախել լեռները: Նրանցից մի քանիսը զոհվել են, մի քանիսն էլ վիրավորվել և գերի ընկել: Վանքը քարուքանդ է եղել հրետանային գնդակոծությունից:

Թվում է՝ Ձեյթուն քաղաքի դեմ կռիվներ առաջիկայում չեն լինելու: Իշխանությունների պահանջից հետո ինքնական ներկայացել են Ձեյթունից 125 և Մարաշից 450 զինապարտներ, որոնք մինչև այժմ խուսափում էին զինծառայությունից:

Մարաշում տեղավորվել է զինվորական դատարանը, և քաղաքը հայտարարվել է պաշարման մեջ: Տեղի են ունենում տնային խուզարկություններ՝ զենքեր գտնելու նպատակով, հիմնականում՝ քրիստոնյաների

մտ, և արևը մայր մտնելուց հետո տնից դուրս գալն արգելված է: Ամեն դեպքում լարվածությունը թուլացել է:

Մեկ այլ հեռագրում, ուղարկված ապրիլի 1-ին, հյուպատոս Ռյուսերն ավելացնում է, որ Ջեմալ փաշան հայտարարել է, թե յուրաքանչյուր մահմեդական, ով կհարձակվի որևէ հայի վրա, կկանգնի զինվորական դատարանի առջև, ոչ ոք իրավունք չունի խառնվելու կառավարության գործերին:

#### Վանգեհայս

#### Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին

25.

Կայսերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հալեպ, 12 ապրիլի 1915թ.

Ձեյթունում սկսված խռովությունները հարց առաջացրին. արդյո՞ք դրանք դրսից չէին նյութված: Մարաշ կատարած իմ գործուղման ընթացքում, մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը, նման բան վկայող դեպք չեմ հայտնաբերել: Չինվորական դատարանի նախագահը, իհարկե, պնդում է, որ այստեղ առկա է օտար ազդեցությունը, սակայն այդ մասին ինձ ոչ մի տվյալ չտվեց: Տեղում առկա Թուրքիայի ներսի թշնամություններից առաջացող ծիլերն ավելի քան բավարար են խռովությունները բացատրելու համար:

Ձեյթունի մոտակայքում հայերի մեջ ունեցված Չաուշի գլխավորությամբ ավազակային մի խումբ էր կազմավորվել: Անցյալ տարվա հոկտեմբերին նրանց դեմ արշավի ելավ Մարաշի մյութասարիֆ Հայդար փաշան: Նա ազնիվ խոսքով խոստացավ Ձեյթունի հայերին, որ նրանց, ովքեր իր ձեռքը կհանձնեն ավազակներին, ոչինչ չի անի և այդ ձևով իրոք հասավ իր նպատակին: Սակայն դատավարություն սկսելու և մեղավորներին պատժելու փոխարեն, նա Նազարեթ Չաուշին ծեծելով սպանել տվեց բանտում (համեմատելու անցյալ տարվա հոկտեմբերի 16-ի զեկուցագիրը): Նրա հետ բանտարկված 30 հոգուր տեղափոխեցին Օսմանիե բանտը, որտեղ նրանք մինչև այսօր նստած են առանց դատավճռի: Մյուսներին թողեց, որ փախչեն, որպեսզի ստիպված չլինի միաժամանակ պատժել մահմեդական ավազակներին: Դրա փոխարեն, իր խոստման հակառակ, ձերբակալել

տվեց այն մարդկանց, որոնք նրան օգնել էին ավազակներին բռնելու:

Պատերազմն սկսվելուն պես գեներալ Ֆախրի փաշան, Հալեպի վալի Ջելալ բեյի խորհրդին հակառակ, Ձեյթունից հանեց զինվորների ջոկատը և նրանց փոխարինեց ժանդարմներով, որոնց մի մասը Ձեյթունի բնակիչների անձնական թշնամիներն էին: Վերջիններիս հանձնեցին այդ ժանդարմներին:

Ձեյթունը բացառապես քրիստոնեական քաղաք է: Այստեղ շատ անգամ դաժան են վարվել տղամարդկանց հետ, անհանգստացրել կանանց ժանդարմերիայի կապիտանի և կայմակամի թույլտվությամբ ու հովանավորությամբ: Ձեյթունի ճնշված ժողովուրդը դիմել է Մարաշի մյութասարիֆին այս երկու պաշտոնյաներին ետ կանչելու խնդրանքով: Վալիի առաջարկով Հայդար փաշան նոյեմբերին փոխարինվել է մյութասարիֆ Մուսթաֆա բեյով, որն անկողմնակալ և շրջահայաց մարդ էր ու ձգտում էր ճիշտ պատկերացում կազմել իրավիճակի մասին: Նա երկու ծառայողների մեղավորության համար ապացույցներ է պահանջել: Սակայն բնակիչները չէին համարձակվի որևէ պետական պաշտոնյայի դեմ ապացույցներ բերել: Յուրաքանչյուր վկա ու չ թե շուտ պետք է դրա համար անողորմաբար պատժվեր: Այդպիսով ժանդարմները շարունակում են մնալ այնտեղ և դառնություններ պատճառել:

Խռովությունը ծնունդ էր առել նաև այլ աղբյուրից: Մարաշում գտնվող հայ զինվորների մի մասը դասալքվեց, որովհետև նրանց վատ էին կերակրում և, քանի որ նրանք զեյթունցիներ էին, չարչարում և վատ էին վերաբերվում նրանց հետ:

Ինչ-ինչ պատճառներով, որոնք այստեղի շրջանի հետ ոչ մի կապ չունեին, կառավարությունը քրիստոնյա զինվորների ձեռքից վերցրեց համազգեստն ու զենքերը: Քանի որ սա տոգետ մարդկանց կողմից դիտվեց որպես քրիստոնյաների դեմ հետագա ավելի ծանր միջոցառումների նախերգանք, դասալքվեցին նաև այլ քրիստոնյա զինվորներ և միացան Ձեյթունի մոտակայքում բուն դրած ավազակներին: Երբ ժանդարմներ ուղարկվեցին նրանց բռնելու համար, նրանք գեներալի դիմեցին և սպանեցին 6 ժանդարմի (մոտավորապես մարտի 9-ին): Սպանեցին նաև մի մահմեդական ջորեպանի, որը գնում էր Ձեյթուն: Ձեյթունի բնակիչները, վախենալով, որ ավազակները կհարձակվեն քաղաքի վրա, պաշտպանություն խնդրեցին, որը և կատարվեց:

Քաղաքի տարբեր թաղամասերում ժանդարմական պարեկների շրջե-

լու ժամանակ, Յենի Դունյա բաղամասում, որտեղ ժամանակին ապրում էր Նազարեթ Չաուշը, մի տնից կրակեցին պարեկախմբի վրա: Տունը շրջապատելու և մեղավորներին բռնելու փոխարեն ժանդարմերիայի կապիտանը, որը դրանից առաջ ճնշում էր ժողովրդին, նախընտրեց այլևս չգնալ քաղաք, այլ մնալ քաղաքից վերև գտնվող իր գորանոցում: Այնուհետև շարժումն ընդարձակվեց: Ավազակներն ու դասալիքներն ամրացել էին քաղաքից դուրս գտնվող ուխտատեղի ծառայող նախկին վանքում (Թեքքե): Քաղաքի բնակիչների միջոցով նրանց կառավարությանը հանձնելու փորձերն անհաջողության մատնվեցին: Վրեժ էին լուծում նաև այն բանի համար, որ Հայդար փաշան հոկտեմբերին դրժել էր իր խոսքը և ավազակներին հանձնողներին պատժել:

Գերմանական օժանդակության կազմակերպությունից միախոններ Բլանկի խնդրանքը՝ թույլ տալ իրեն գնալ Չեյթուն և փորձել գլուխ բերելու հոժարակամ հանձնվելու գործը, մյուսասարիֆ Մումթազ բեյի կողմից խելամտորեն ընդունվեց: Մարտի 23-ին Բլանկը գնաց Չեյթուն, սակայն նրա ջանքերն անհաջողության մատնվեցին: Խրամատավորվածներն այլևս ոչ մեկին մոտ չէին թողնում վանքին: Նրանք Բլանկի ուղարկած տեղաբնիկներին սպառնացին կրակել նրանց վրա, հենց որ խոսք եղավ հանձնվելու մասին: Նրանք հայտարարեցին, որ ավելի շուտ կմեռնեն զենքը ձեռքին, քան կհանձնվեն կառավարությանը: Որից հետո Չեյթունի պարեկը շրջապատեց վանքը, սակայն ոչ բավարար թվով ջոկատով: Եթե նա ռազմականորեն ճիշտ գործեր, ապա ողջ ավազակախումբը ձեռքը կրնկներ: Պարեկը պետք է սպասեր հրետանու ժամանմանը կամ էլ ավազակներին սովի մատներ: Դրա փոխարեն նա հարձակում ձեռնարկեց, որի ժամանակ Մարաշից եկած ժանդարմերիայի մայորն արշավեց դեպի վանքի գլխավոր դարպասը և մի բանի զինվորների հետ միասին գնդակահարվեց: Ավազակները, որոնց թիվը, հավանաբար, 150 էր, բավականին թվով սպանվածներ և վիրավորներ տալուց հետո, որոնք ընկան զինվորների ձեռքը, ճեղքեցին շրջապատումը, հասան քաղաք և այնտեղից էլ բարձրացան լեռները: Հիշատակության է արժանի այն փաստը, որ նրանք իրենց սպանվածներից երկուսի գլուխը կտրել էին, հավանաբար, որպեսզի թուրքերը չկարողանան ճանաչել նրանց: Հետո վանքն ուժեղ ուժակոծության ենթարկվեց և քարուքանդ արվեց: Լեռներում ավազակներին բռնելը դժվար կլինի: Մումթազ բեյը, որն այդ ընթացքում հասել էր Չեյթուն, պաշտոնից հեռացրեց ժանդարմերիայի կապիտանին, որով-

հետև վերջինս ավազակների կողմից պահակախմբի վրա կրակահերթ բացելուց հետո ճիշտ միջոցառումներ չէր ձեռնարկել: Հեռացրեց նաև կայմակամին, որովհետև վերջինս մյուսասարիֆի ժամանելուց հետո էլ հրաժարվել էր գորանոցից ներքև իջնել և քաղաքում իր պարտականություններին անցնել:

Չեյթունի իրադարձությունները մշտապես ավելի մեծ ուշադրության են արժանանում այն պատճառով, որ դրանք հակադարձ ազդեցություն են գործում Մարաշի՝ որպես ամենամոտ գտնվող քաղաքի վրա: Մարաշում կա մոտավորապես 50 000-60000 բնակիչ, որոնցից 36000 մահմեդականներ և 24000 քրիստոնյաներ են: Նրանք մասամբ զբաղված են արդյունաբերության մեջ կամ առևտրով, սակայն մեծ մասամբ գյուղատնտեսական աշխատանքով՝ խաղողագործությանը (չամիչ ստանալով և խաղողից մեղր պատրաստելով), բրնձի մշակությանը, բամբակի, մետաքսի մշակմամբ և այլն: Չնայած հողը բերրի է և ջրատառ, այնպես որ հացահատիկը կարելի է ջրել, բնակչությունը աղքատ է, և ներկայումս մեծ մասը գտնվում է համարյա թշվառության շեմին՝ մասամբ երկարատև քաղաքական անհանգստությունների, մասամբ հաղորդակցական կապերի խիստ պակասության պատճառով: Ժողովուրդը խաղաղ է և չի մտածում իշխանության դեմ ըմբոստանալու մասին: Չորահավաքը, շարունակվող բռնագրավումները խիստ խեղճացրին նրանց և մնացածների թվում չափազանց նվազեցրեցին փոխադրական միջոցները: Մեքենան, որով ես ժամանեցի Հալեպից, միակն էր քաղաքում: Ընդհանուր առմամբ մինչև մարտի վերջերը բռնագրավվել էին 2000 ձի և ջորի: Ապրիլի 5-ին պահանջեցին հանձնել 500 ավանակ: Քրիստոնյա ջորապաններին ստիպեցին 4 շաբաթ անընդհատ ձրի աշխատել ռազմական նպատակներով՝ առանց աշխատավարձի և օգնելու վերաբերյալ փաստաթուղթ տալու (յսև մահմեդականներին մի երկու օր հետո ազատ թողեցին): Եթե անգամ նրանց բաց թողնեին տեղեկանքով, որ նրանք կատարել են իրենց պարտքը, միևնույն է, մեկ այլ տեղում նրանց կրկին կբռնեին և ձրի կաշխատեցնեին: Վիճակն արդեն անտանելի էր դարձել, երբ վրա հասան Չեյթունի դեպքերը: Այժմ սկսեցին խլել նաև հայ քաղաքացիական բնակչության զենքերը խուզարկությունների միջոցով, որոնք հիմնականում կատարվում էին զիշերները: Չինվորները ծեծում էին քրիստոնյաներին, անհանգստացնում կանանց՝ զենք փնտրելու պատրվակով նրանց խուզարկելով, քարեր էին շարտում երեսակների վրա: Լուր տարածվեց, որ քրիստոնյա զինվորները բունավորել

են իրենց մահմեդական ընկերների հացը: Մահմեդական կանայք բացելի-բաց սպառնում էին նոր ջարդերով: Մի մահմեդական իր քրիստոնյա ընկեր-րոջն ապաստան է տվել իր տանը: Ազդեցիկ մուսուլմանները որոշեցին հե-ռագիր ուղարկել կենտրոնական կառավարությանը, որ հայերը, իբր, գրա-վել են մզկիթները: Այնքան անմիտ է այս գրգռիչ մեղադրանքը և այնքան համապատասխան է այնտեղի մահմեդականների կրթական ցածր մա-կարդակին: Հեռագիրը սկզբում հաղորդեցին Չեյթունի մյութասարիֆին, ո-րը խափանեց հեռագրի ուղարկումը և այդ մասին ծանուցեց զինվորական դատարանին: Մակայն դատարանը ոչինչ չձեռնարկեց հեռագրի հեղի-նակների դեմ: Այն ժամանակ, երբ հայերի ձեռքից խլվեցին գեներերը, մու-սուլմանները հնարավորություն ունեցան վառող և մանրագնդակ գնել: Մարաշից ոչ հեռու գտնվող Թերեք գյուղի բնակիչները այնտեղ լուր ու-ղարկեցին, որ եթե մարաշցիները իսլամ չընդունեն, կզրկվեն կյանքից: Կարճ ասած, գործերի վիճակը Մարաշի գերմանական միսիային այնպես է պատկերանում, որ հարաբերությունների հետագա սրման դեպքում, հատկապես երբ Չեյթունում կռիվները շարունակվեն և էլի մահմեդական զինվորների արյուն հոսի, կասկածելի է, թե կառավարությանը կհաջողվի զսպել Մարաշի մահմեդական բնակչությանը: Կասկածելի է նաև, թե տե-ղական իշխանությունների մոտ որ ուղղությունը կհաղթի՝ մյութասարիֆի խոհեմ թե մի քանի երևելիների ավելի խիստ ուղղությունը: Քանի որ մա-մակները ենթարկվում էին խիստ գրաքննության, և քանի որ ոչ միայն փոս-տով, այլ նաև սուրհանդակի միջոցով 4-5 շաբաթ առաջ ուղարկված մա-մակը միսիա չէր հասել, օժանդակ կազմակերպությունը որոշել էր գրու-թյան քույրերից մեկին Մարաշից ուղարկել Հալեպ, որ այցելի ինձ: Վեր-ջինս նաև մի մամակ բերեց դպրոցի դիրեկտոր Հելենե Շտոկմանից, որ-տեղ նկարագրվում է, թե ինչպիսի անմարդկային ձևով են անցկացվում մարմնական պատիժները: Ամերիկյան միսիան դիմել է Հալեպի իր հյու-պատոսին՝ նմանապես Մարաշ այցելելու խնդրանքով: Այդ մասին Այնթա-պից դոկտոր Շեփարդի ստացած մամակից պատիվ ունեն մի կտոր մեջ-բերել: Ինչպես բնակչությունը, այնպես էլ միսիան, մեծ սպասումներ ունե-րևէ հյուպատոսի այցելությունից: Այսպիսի այցելությունը երկրի խորքից հեռու ընկած շրջաններ, որոնց թվում է նաև Մարաշը, առանձնապես մեծ ազդեցություն է գործում անգամ իշխանությունների վրա: Արդեն այցելու-թյան մասին լուրը, որ ես իմացա մարտի 27-ին մյութասարիֆին ուղարկ-ված արդեն հայտնի թուրքական հեռագրից, հանգստացնող և զսպող ներ-

գործություն ունեցավ: Այնհայտ է, որ այն հետագայում ևս նպաստեց ժո-ղովրդի հանգստությանը և ազդեց նաև զինվորականության վրա: Իմ այ-ցելությունից հետո փողոցում մարդկանց այլևս չէին ծեծում: Պատիվ ու-նեն կից ուղարկել ամերիկյան միսիայի կողմից անցյալ ամսվա 31-ին գրված մի մամակ, որտեղ խոսվում էր այդ ազդեցության մասին: Մարաշի ողջ հայ բնակչությունը խորապես շնորհակալ է այս ազդեցության համար և այն ընդունեց ընդհանրապես որպես իրավիճակի թեթևացում: Միայն մարտի 31-ին հրապարակվեց հավելվածին կցված Ձեմալ փաշայի հրա-հանգը, որը ժողովրդին հանգստության կոչ էր անում: Դրանով հանդերձ նա չցանկացավ խանգարել, երբ ապրիլի 3-ին քաղաքի մահմեդական թաղամասում պարեկները հրացանի կոթով ջարդեցին միայնակ ապրող մի հայի դուռը և նրան ստիպեցին իսլամ ընդունել:

Չեյթունի դեպքերը շարունակում են ծավալվել և մինչև օրս էլ չեն վեր-ջացել: Կառավարությունը դասալիքներից պահանջեց ինքնական ներ-կայանալ: Նրանցից մի մասին օգտագործեցին ուղղիչ աշխատանքային ջոկատներում, մի մասն էլ սպասում է զինվորական դատարանի կողմից իր դատավճռին: Ի դեպ, զինվորական դատարանի միջոցով խուզարկու-թյուններ են անցկացվում Մարաշի բոլոր հարգված և հարուստ հայերի շրջանում, որոնցից շատերը բացարձակապես ոչ մի առնչություն չունեն Չեյթունի դեպքերի հետ, և նրանք ոչ մի բան այնպես չեն ցանկանում, ինչ-պես ավագակներին վերջ տալը, որպեսզի Մարաշը վերջապես գտնի իր հանգիստը: Չերբակալել էին Մարաշի պատգամավոր Հովսեփ էֆենդի Կիրակյանի տղային, մեղադրելով գեներալի մաքսանենգությամբ զբաղվե-լու մեջ: Բայց հետո, երբ դրա համար ապացույցներ չեն եղել, մեղադրել են այն բանում, որ նա հրահրել է մի մարդու փողոցում գեներալի կրակել, որ-պեսզի անկարգություններ առաջ բերի: Վերջ ի վերջո ստիպված բաց են բողոչ նրան: Տնային խուզարկություններ են անցկացրել հայ-բողոքական քահանաների, կաթոլիկ հայ հոգևորականների, գերմանական տղաների դպրոցի հայ դիրեկտորի և գերմանական հիվանդանոցի հայ բժշկի մոտ: Այս ամենը կատարվում է՝ հենվելով կարծեցյալ այն փաստի վրա, որ նշ-վածները իբր թե Հայկական բարեգործական միության անդամներ են, ո-րոնց ցուցակը իբր գտել են Չեյթունում: Միությունը, որի կենտրոնը Եգիպ-տոսում է, գոյություն ունի և ճանաչված է պետության կողմից, սկզ-բում Աբդուլ Համիդի, իսկ 1910 թվականից՝ նաև սահմանադրական պե-տության կողմից: Այն զբաղվում է հայկական դպրոցների օժանդակու-

թյամբ և հայկական գյուղատնտեսական օրինակելի հաստատությունների սարքավորումով: Միության անդամներին հայտնաբերելու համար բռնություն է կարիք չկար Ձեյթունում գտնել ինչ-որ ցուցակ, այլ կարելի էր Մարաշից բերել տալ նախագահին: Եթե միության կենտրոնը Եգիպտոսում գտնվելը կասկածելի է դիտվում, և կասկած կա, որ կազմակերպությունն այժմ՝ պատերազմի ժամանակ, արտասահմանից օգտագործվում է քաղաքական նպատակով, ապա դա պատճառ է, որի մասին արժե խոսել: Այդ պատճառով անկողմնակալ քննության դեմ ոչինչ առարկել չի լինի: Սակայն ես շատ քիչ հույս ունեմ, որ զինվորական դատարանը քննությունը անկողմնակալ է տանում: Դատարանի ողջ գործունեությունն այն տպավորությունն է բողոքում, որ կարծես նպատակային գործողության անբավարարության պատճառով տարվում է կեղծ գործունեություն և, քանի որ դատարանը չի կարողանում հայտնաբերել իսկական մեղավորներին, կասկածի տակ է առնում ողջ հայ ժողովրդին և ելնելով շահադիտական նպատակներից, նրա միջից ընտրում է առաջնորդներին: Ջարդերի վտանգն առայժմ անցել է, չնայած մուսուլմանական սադիզները ձեռք չեն քաշել այդ գործից: Նրանք մարտի 31-ին մի հեռագիր պատրաստեցին կենտրոնական իշխանություն ուղարկելու համար, որտեղ ասվում էր, որ Ձեյթունի բնակիչները (10000 հոգի) պետք է տեղահան արվեն, և քաղաքը հողին հավասարեցվի: Պարզ է, որ մի այսպիսի ծրագրի իրագործումը երկար ժամանակ անհանգստություն կստեղծի: Հեղինակները փորձեցին ճնշում գործադրել Մարաշի մեծահարուստ հայերի վրա, որպեսզի նրանք ստորագրեն այս գրության տակ: Վերջիններս մերժեցին, պահանջելով այն նախևառաջ ցույց տալ մյուսասարիֆին: Վերջինս, ինչպես նաև Մուշի մուֆտին, հավանություն չտվին այս ձեռնարկմանը: Դրանից հետո նույն հայերի շրջանում ապիլի 3-ին սկսվեցին տնային խուզարկությունները:

Ապրիլի 5-ից Մարաշի ղեկավար շրջանների մեջ ճեղքվածք առաջացավ: Մի մասը խորհուրդ էր տալիս խաղաղություն պահպանել, մյուսներն ուզում էին շարունակել հետապնդումները:

Քանի որ Մարաշում գտնվող գերմանացիներին անմիջական վտանգ չէր սպառնում, ես այլևս չէի կարող սպասել հետագա գործողությունների զարգացմանը տեղում, Մարաշում 9 օր մնալուց հետո հեռացա այնտեղից: Ինձ հաջողվեց բարեկամաբար լեզու գտնել իշխանությունների հետ: Մյուսասարիֆը դեռևս Ձեյթունում է գտնվում:

Ես սկզբից էլ Ձեյթուն գնալու նպատակ չունեի, քանի որ այնտեղ գերմանացիների շահերը պաշտպանելու կարիք չկար: Սակայն զինվորական իշխանությունները, ըստ երևույթին, կարծել էին, թե ես ցանկացել եմ գնալ այնտեղ և ամեն ինչ գործի էին դրել՝ իմ Ձեյթուն գնալը խափանելու համար: Ըստ միսիոներ Բլանկի կարծիքի՝ լեռները փախսած ավազակներն ու դասալիքներն այսօր էլ կհանձնվեն, եթե որևէ պաշտոնյա գնա նրանց մոտ, որին նրանք կվստահեն, և հանձնման պայմանները կպահպանվեն: Սակայն իշխանությունները չեն ցանկանում, որ որևէ օտարի հաջողվի այն, ինչը չի հաջողվում իրենց՝ չխոսելով թուրքական ներքին հարաբերությունների մեջ օտար միջամտության նկատմամբ եղած հասկանալի ընդհանուր հակակրանքի մասին:

Ավազակներին մինչև այժմ չի հաջողվել վնասագերծել: Ապրիլի սկզբներին Մարաշի և Ձեյթունի միջև ընկած Ալակայա լեռնաշղթան, որը, ինչպես և ողջ տեղանքը, կտրտված ու անանցանելի է, դարձել է ավազակների ապաստարանը: Պետք էր նրանց դեմ գործք հանել: Մարաշում լուր է տարածվել, որ զինվորների առաջխաղացման ժամանակ մի գյուղի բնակիչներ նրանց վախից հեռացել են գյուղից և անցել ավազակների կողմը: Եթե պարզվի, որ այդ լուրը ճիշտ է, ապա դա վտանգավոր նշան կլինի, որ այդպիսի շարժումը կարող է էլ ավելի ընդլայնվել:

Վերադառնալուցս հետո Հալեպի վալի Ջելալ բեյն ինձ հաղորդեց, որ ռուսական սահմանին մոտ ընկած թուրքական մարզի որոշ հայկական բնակավայրեր, որոնք գրավված են եղել ռուսների կողմից, դրսևորել են ռուսական համակրանք, որ թուրքական մասի որոշ հայկական գյուղերի բնակիչներ սպանվել են մահմեդականների կողմից, և որ թուրքական կառավարության շրջանում, թվում է, հաղթանակ է տարել այն ուղղությունը, որը հակված է հայերին դիտել որպես լրիվ անվստահելի կամ թշնամական տարր: Նա այս շրջադարձը դիտում է որպես դժբախտություն իր հայրենիքի համար և ինձ խնդրեց դիմել Նորին գերագանցություն կայզերական դեսպանին՝ այդ ուղղության դեմ գործելու համար:

Ռ-յուլեր

Նորին գերագանցություն պարոն ռախականցչերին

Ընթերցված է:

Քերա, 24 ապրիլի 1915թ.

Վանգենհայն



**Հավելված 1**

(անգլերեն)

Այնթապ, 24 մարտի 1915թ.

Միրելի պարոն Ջոնսոն,

Վերջին շաբաթվա ընթացքում 48 ժամ, երեքշաբթի կեսօրից մինչև հինգշաբթի կեսօրը՝ մարտի 18-ը, գտնվում էի Մարաշում:

Անկասկած, ծրագրված էր Մարաշում կոտորած հրահրել՝ վերջ տալու Ջեյթունի հուզումներին: Բանը հասել էր նրան, որ Ջեյթունից մուսուլմաններ էին ուղարկվել՝ լեռներից քողերին կանչելու, սակայն կառավարությունն այդ ծրագրին հավանություն չտվեց և, ինձ քվում է, դրան անկասկած վերջ է տրված, հատկապես որ, ինչպես ես հասկացա, Ջեյթունի դեկավարության և ժողովրդի մեծամասնության վարքագիծը անբասիր է: Օրիորդ Ռոհաներն այժմ հայտարարում է, թե զինված ընդհարումը տեղի և կառավարության միջև անխուսափելի է: Այդ դեպքում որոշ չափով դժվար կլինի վերահսկել Մարաշի մուսուլմանական խուժանին: Ես ի սրտե ցանկանում եմ, որ հնարավորության դեպքում Մարաշ ուղարկվի գերմանական կամ ամերիկյան հյուպատոսության մի ներկայացուցիչ, կամ, ավելի լավ կլինի, յուրաքանչյուրի կողմից մեկական ներկայացուցիչ (ոչ թե Ջեյթունի դեպքերին միջամտելու, այլ գերմանական և ամերիկյան լայն շահերը պաշտպանելու նպատակով):

Օրիորդ Ռոհաները հնարավորություն կունենա հաղորդելու տեղի գերմանացիների և ամերիկացիների շրջանում տիրող տրամադրությունների մասին: Այնթապում դրությունը լրիվ հանգիստ է:

**Գոկպոր Շևիարդ**

**Չես Բի. Չեկսոնին, Հալեպի  
ամերիկյան հյուպատոսին**

**Հավելված 2**

(անգլերեն)

31 մարտի 1915թ.

Թույլ տվեք Ձեր միջոցով շնորհավորել Ձեր հյուպատոսին՝ Մարաշ գալուց ի վեր նրա ձեռք բերած հաջողությունների առթիվ: Իրերի ընդհա-

նուր վիճակում ակնառու դրական տեղաշարժ կա, որը մենք վերագրում ենք նրա ազդեցությանը: Հուսով ենք, որ նա ի վիճակի կլինի հնարավորին չափ երկար մնալ այստեղ հավաստելու, որ ազնվորեն կկատարի իրեն ուղղված ցանկացած դիմում: Բարի եղեք հայտնել նրան մեր երախտագիտությունը:

**Խորին հարգանքներով սրբանց Ձեր****Ի. Ս. Վուդլի****Մարաշ, Բլանկին****Հավելված 3**

(ֆրանսերեն)

Ձգուշացման բովանդակությունը

1. Ջեյթունում տեղի է ունեցել ապստամբություն, որին պետք է հետևեր զինված գործողություն և որը շարունակվում է մինչև հիմա:

2. Թուրքական կառավարության պարտականությունն է պաշտպանել հնազանդ ազգաբնակչության կյանքը, պատիվը և բարեկեցիկ վիճակը, լինի դա հայ թե մահմեդական: Հետևաբար, վերջինս պետք է վստահ լինի, որ հարձակումների առարկա չի դառնա և կկարողանա հանգիստ զբաղվել խաղաղ աշխատանքով:

3. Մահմեդականներից նա, ով ցանկացած պատճառով հարձակվում է հայի վրա, կդիտվի որպես խոտվարար և կհանձնվի զինվորական դատարանին: Այսպիսով ոչ ոք, ոչ ուղղակիորեն, ոչ անուղղակի, չպետք է խառնվի կառավարության գործերին, նույնիսկ ամենափոքր բաների համար:

4. Ես կարգադրում եմ անմեղ և հնազանդ ազգաբնակչությանը շատ արագ ենթարկվել զինվորական իշխանության ցուցումներին, որպեսզի նրա անդամներից ոչ մեկը զինված ավազակների հետապնդման ընթացքում կասկածի կամ ոչ արժանի պատժի զոհ չդառնա:

**Ձինվորական 4-րդ կորպուսի****հրամանատար՝ Չեմալ փաշա****29 մարտի 1915թ.****Հրատարակված 31 մարտի 1915թ.**

26.

Կայգերական Գերմանիայի Բերա, 15 ապրիլի 1915թ. դեսպանություն

Արևելյան Անատոլիայից եկող լուրերից երևում է, որ թուրք մահմեդական բնակչության և հայերի միջև լարված հարաբերությունները վերջին ամիսների ընթացքում էլ ավելի են վատացել: Փոխադարձ անվստահությունն աճել է և այն իշխում է ինչպես ողջ երկրի, այնպես էլ մայրաքաղաքի բնակչության մեջ և պաշտոնական շրջաններում:

Կարծեցյալ և իրական հետապնդումների մասին բողոքները, որոնց ենթարկվում են հայերը պատերազմի հետևանքով, գնալով շատանում են և էլ ավելի աղաղակող դառնում: Հայերն էլ իրենց հերթին մեղադրվում են այն բանում, որ համակրում են կայսրության թշնամիներին, նրանց հետ գտնվում են դավաճանական կապերի մեջ և որոշ տեղերում բացահայտ ըմբոստանում են տեղական իշխանությունների դեմ: Հայերի դեմ վատ տրամադրվածությունն ուժեղանում է արտասահմանում ապրող հայերի վարքագծի մասին լուրերի միջոցով: Ոչ միայն Կովկասից, այլև Ամերիկայից, Բուլղարիայից և այլ երկրներից հազարավոր հայեր կամավոր մտնում են ռուսական բանակ<sup>1</sup>: Պնդում են, թե ռուսական կողմը դաշնակցություն կուսակցությունից պահանջել է Թուրքիայի համար պատերազմի անբարենպաստ ելքի դեպքում ոչնչացնել Թուրքիայից անջատված տարածքների մահմեդական բնակչությանը<sup>2</sup>: Ի դեպ, առանձնապես գունազարդված է ներկայացվում ռազմական արշավանքի ժամանակ թուրքական բանակում հայկական ջոկատների վարմունքը: Նրանք, իբր թե, իրենց զենքերը կրկին շուռ են տվել թուրքերի դեմ<sup>3</sup>:

Ամեն մեկի կողմից մյուս կողմի դեմ ներկայացված մեղադրանքները ժխտվում են որպես անհիմն, կամ պատահարների համար մի կողմն իր մեղքը գցում է մյուսի վրա: Միայն մի կետում երկու կողմերի միջև կարող է համաձայնություն լինել, այն է՝ սահմանադրության ընդունումից հետո հայերը հրաժարվել են հեղափոխության մտքից, և որ դրա համար ոչ մի

կազմակերպություն գոյություն չունի:

Անկասկած է, որ այժմ Արևելյան Անատոլիայում հայերի դեմ գործադրվում են հարձակումներ և բռնության գործողություններ, և հայերի կողմից այդ իրադարձությունները հիմնականում ճիշտ են նկարագրված, չնայած երբեմն չափազանցված են: Շատ անգամ խոսքը վերաբերում է այն թշնամություններին և նեղություններին, որոնք, անգամ քաղաքակիրթ երկրներում, իր հետ բերում է ամեն մի պատերազմ: Որոշ դեպքերում մեղքն ընկնում է նաև հայկական կողմի վրա, սակայն ամենից շատ կշտամբում են իշխանություններին, որ նրանք ժամանակին նախագգուշական միջոցներ չեն ձեռնարկում և դեպքը կատարվելուց հետո են անօգուտ խստությամբ վարվում:

Հայկական աղբյուրներից (պատրիարքությունից, ինչպես նաև Գերմանիայից եկած գերմանա-հայկական ընկերության ներկայացուցիչ ղոկտոր Լիպարիտ Նազարյանցիի հաղորդագրություններից) ստացված նյութը հիմնականում վերաբերում է բուն ռազմական մարզին (Էրզրումի վիլայեթին) և անմիջապես դրան սահմանակից շրջաններին (Վանի և Բիթլիսի վիլայեթներին):

Այս շրջաններում կատարվող գործողությունների համար հայերը պատասխանատու են համարում.

1. Ժանդարմների ցուցմունքով զինված թուրք բաշիբոզուկներին և ավազակային բանդաներին: Նրանք մեղադրվում են հայերի դեմ գործադրված բազմաթիվ կողոպուտների, ավազակային սպանությունների և այլ հարձակումների մեջ:

2. «Միություն և առաջադիմություն» կոմիտեին կից գործող ակումբներին, որոնցում ներգրավված են ոչ մաքուր շատ տարրեր: Պնդում են, որ այս ակումբները, հատկապես Էրզրումում գտնվողը, կազմել են կեղծ մեղադրական ցուցակներ: Բացի այդ, մի շարք քաղաքական սպանություններ, որոնք անցյալ տարվա դեկտեմբերից կատարվել են տարբեր աչքի ընկնող հայերի նկատմամբ, վերագրվում են նրանց գործողություններին:

Ավելացվում է նաև, որ մի քանի օր առաջ հայերն զգուշացրել էին ներքին գործերի նախարարությանը այդ ակումբների գործողությունների մասին, որոնք արդեն մի անգամ, 1909թ. Աղանայի դեպքերի ժամանակ, ճակատագրական դեր են խաղացել:

3. Տարբեր քաղաքացիական պաշտոնյաների, հատկապես Մուշի գավառապետին (Բիթլիսի վիլայեթ) և Վանի վալիին: Այլ նկարագրություն-

1 Դրանք 2000-3000 էին:

2 Այս հավաստիացման համար ոչ մի սպացույց չկա:

3 Հմմտ. գեներալ Փոսելդի հակառակ վկայությունը, N 31:

ների թվում բերվում է այն փաստը, թե ինչպես 2000 մահմեդական ընտանիքներ ռուսների կողմից օկուպացված Ալաշկերտի շրջանից տեղափոխվել են Մուշի հայկական գյուղերը, որոնք հազիվ ի վիճակի էին ապահովելու իրենց ապրուստը: Հայ գյուղացիներին օգտագործում էին որպես քաշող անասուն ռազմամթերքն ու պարենը տեղափոխելու համար: Շատերը մեռան անմարդկային վերաբերմունքի հետևանքով, մի փոքր մասը, թերևս մեկ քառորդը, վերադարձավ գյուղերը: Վանի երկու մարզերում կայմակամի թողտվությամբ տեղի են ունեցել իսկական ջարդեր:

Ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու ընկած գավառներում հայ բնակչության վիճակը որոշ չափով տանելի է, չնայած այնտեղից էլ առանձին բողոքներ են եկել: Սակայն դրանք հիմնականում ոչ կարևոր նշանակություն ունեցող դեպքերի մասին են՝ ինչպես արգելված զենքեր և դասալիքներ գտնելու նպատակով տնային խուզարկություններն են, որոնց ընթացքում առաջացել են պատահական անկարգություններ և մահան այլ դեպքեր:

Ավելի շատ ուշադրության են արժանի երկու դեպքեր, որոնց մասին հյուպատոսական զեկուցումների միջոցով մանրամասն տեղեկություններ է հաղորդվել կայզերական դեսպանությանը:

Մարտի սկզբներին, երբ դրանից առաջ անգլիացիներն արդեն բազմաթիվ անգամներ նավից ափ էին իջել և անարգել գնումներ արել, հայկական Դյորթյուլ բնակավայրում կանգ առան ծագումով այդ վայրերից երկու հայ, որոնք ազիտացիա էին տանում հոգուտ անգլիացիների: Այդ գործակալներից մեկն ընկավ թուրքական իշխանությունների ձեռքը և Ադանայում մահապատժի ենթարկվեց: Հետևանքը եղավ այն, որ Դյորթյուլի ողջ արական բնակչությունը տեղահանվեց և քշվեց Հալեպի վիլայեթ՝ ճանապարհաշինական աշխատանքներում օգտագործելու համար: Երեք հոգի փախուստի փորձի ժամանակ գնդակահարվեցին: Դրան ավելացրած, որ այս դեպքերի ժամանակ Դյորթյուլում թաքնվել էին բազմաթիվ դասալիքներ: Չէին մոռացել, որ 1909 թ. ջարդերի ժամանակ այստեղի բնակիչները զենքը ձեռքին պաշտպանվել էին թուրքերից:

Ջեյթունի դեպքերի մասին, որոնք առաջացել են նորակոչիկների զինակոչման դեմ հայերի բարձրացրած խռովության պատճառով, արդեն հաղորդվել է: Այս անգամ ևս իշխանություններին կշտամբեցին այն բանի համար, որ ժամանակին միջոցներ չէին ձեռնարկել: Վկայակոչելով վերոհիշյալ նկարագրված դեպքերը, կայզերական դեսպանությանը և

մեր հյուպատոսությանը հայկական կողմը խնդրում է ազդեցություն գործել թուրքական կառավարության մարմինների վրա, որպեսզի դադարեցնեն հայերի հետագա հետապնդումները խնդրո առարկա երկրամասում: Առանձնապես կարևոր է նշված գավառներում փորձված, խնդիրներին ծանոթ վալիների և մյութասարիֆների նշանակումը: Հայերը նաև կարծում են, որ Վանում, Բիթլիսում և այլ տեղերում գերմանացի հյուպատոսների ներկայությունը կբավարարեր ամենավտանգավոր անկարգություններն արգելելու համար:

Այստեղ, ինչպես նաև երկրի ներսում, մեր ազդեցության օգտագործումը հոգուտ հայերի նրանց կողմից դիտվում է որպես *nobile officium* մեզ համար՝ որպես եվրոպական քրիստոնեական մեծ տերություն և Թուրքիայի դաշնակից, քանի որ հենց Թուրքիայի, ինչպես նաև մեր շահերն են պահանջում պաշտպանել հայ տարրին և նվաճել նրա համակրանքը: Պետք է նշել, որ հայերը, չնայած բոլոր տառապանքներին, իրենց պահում են օրինապահ և քաղաքավարի, ամենաքիչը՝ գոնե պասիվ: Սակայն շարունակվող կանոնավոր հետապնդման դեպքում պետք է վախենալ, որ այս տրամադրվածությունը հակառակ ձևը կընդունի: Կառավարության հետ բարեկամ կուսակցությունները, ինչպես դաշնակցությունը, այլև չեն կարողանա ետ պահել ժողովրդին, և վտանգ կա, որ ռուսների առաջխաղացման դեպքում գրավված տարածքներում հայերը ոչ միայն կանցնեն թշնամու կողմը, այլ նաև հնարավոր է թուրքական բանակի քիկունքում կկազմեն խռովարարական հրոսակախմբեր:

Թուրքիայի գերմանական ներկայացուցչությանն ուղղված *nobile officium*-ի կոչը հասկանալի է Հայկական հարցի զարգացման տեսակետից և հատկապես հիմա, երբ պատերազմի հետևանքով Եռյակ միության պետությունների աջակցությունը բացառվում է, և նրանք չեն կարող հանդես գալ որպես պաշտպանող պետություններ: Սակայն կոչին հետևելու և հայերի պաշտպանի դերն ստանձնելու փորձը, որ արել են Անգլիան՝ Բեռլինի կոնգրեսից հետո և վերջերս՝ Ռուսաստանը, Բ. Դրան կողմից կրկնակվեն իբրև ներքին քաղաքական գործերին անիրավացի ու լկտի միջամտություն: Դրա համար պահը խիստ անբարենաստ է, որովհետև Բ. Դուռը հենց նոր սկսել է վերջ դնել հովանավորի իրավունքին, որը օտար այլ պետություններ փորձում են օգտագործել թուրքահպատակների հարցում: Ավելին, նա (Բ. Դուռը) ստիպված է հաշվի նստել թուրքական բոլոր տարրերի ազգային զգացմունքների հետ, որոնք խիստ ուժեղացել են

վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով:

Ինչ վերաբերում է հայկական կողմից ներկայացված նկատառումներին, դրանք լուրջ ուշադրության են արժանի, և ես բազմաթիվ անգամներ առիթներն օգտագործել եմ և կոչ արել ինչպես Բ. Դռան, այնպես էլ պատրիարքի մոտ՝ վարել հաշտվողական քաղաքականություն և պահպանել փոխադարձ լավ հարաբերություններ: Սակայն ներկայումս կառավարական շրջաններում հայերի հանդեպ անբարենպաստ տրամադրվածությունն էլ ավելի է նեղացնում հայերի համար միջամտության մեր ուղիները: Ուստի կարծում եմ, որ այս կապակցությամբ այսպես կոչված հայկական գավառներում գերմանական հյուպատոսությունների ավելացումը նպատակին ծառայել չի կարող: Հավանաբար Բ. Դռուրը դրանում կտեսնի մեր կողմից իշխանություններին հսկողության տակ վերցնելու փորձ, ինչպես որ ժամանակին Անգլիան, իսկ ավելի ուշ Ռուսաստանը իրենց հյուպատոսության ներկայացուցիչներին ուղարկելու միջոցով փորձեցին վերահսկել հայկական բարենորոգումների անցկացումը տվյալ վայրում: Մի այսպիսի միջոցառում իշխանություններին ամբողջովին կշրջեր հայերի դեմ և, այսպիսով, կատացվեր հակառակ այն բանի, ինչ որ իրենք հայերն են ցանկանում:

**Վանգենհայն**

**Նորին գերագանցություն  
պարոն ռայխսկանցլերին**

27.

**(Հայեայի կայզերական  
հյուպատոսություն)**

Հեռագիր՝

Հայեայ, 20 ապրիլի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ինչպես հայտնի դարձավ Այնթապի ամերիկյան քոլեջի տնօրեն դոկտոր Մերիլի վստահելի հաղորդումներից, կառավարությունն արքային է Մարաշի, Չեյթունի և մինչև Հասան Բեյլի բոլոր գյուղերի հարուստ, կրթված և ազդեցիկ հայերին: Տեղահանությունն սկսել է իրագործվել: Չեյթունից արդեն հեռացված են 35 ընտանիք, ճանապարհին են երկրորդ և եր-

1 Դեսպանությունն այն հանձնել է արտաքին գործերի գերատեսչությանը:

բորդ խմբերը: Տղամարդկանց առանձնացնում են կանանցից և ուղեկցում գինվորականների հատուկ ջոկատների հսկողությամբ:

32-ից մինչև 45 տարեկան բոլոր քրիստոնյա տղամարդիկ ստացել են գորակոչի հրաման, նպատակը, անշուշտ, նրանց արքային է: Մահմեդականները չեն գորակոչվել: Կենտրոնական կառավարության միջոցառումներն ակնհայտորեն հենվում են Մարաշից եկող սխալ հաղորդումների վրա: Այս միջոցառումները դժբախտություն են մի երկրի համար, որի նպատակն է բնակչության կարևոր մասի սխտեմատիկ ոչնչացումը: Դրանք բխում են այն սխալ ըմբռնումից, ըստ որի՝ ողջ հայ ժողովուրդը դիտվում է որպես անվստահելի կամ թշնամական: Ես անում եմ ամեն ինչ այս գործողության դեմն առնելու համար:

Իմ ամերիկացի գործընկերը խնդրում է հաղորդել ամերիկյան դեսպանությանը, իսկ դոկտոր Մերիլը հայերի պատվերով խնդրում է հաղորդել հայ պատրիարքարան այս ամենի մասին: Այստեղի հայ եպիսկոպոսին փոխարինողը մեկնել է Սիս՝ կաթողիկոսի մոտ:

**Ռյուսլեր**

Բովանդակությունն ապրիլի 24-ին հաղորդվել է ամերիկյան դեսպանություն և հայ պատրիարքարան:

25. 4.

**Մորդման**

28.

**(Աղանայի կայզերական  
հյուպատոսություն)**

Հեռագիր

Աղանա, 24 ապրիլի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Սաի հայ կաթողիկոսը ցանկանում է հյուպատոսության և դեսպանության միջնորդությամբ Չեյթունի իրադարձությունների մասին հաղորդել Կոստանդնուպոլսի պատրիարքարանին: Կից կուղարկվի նաև գերմաներեն թարգմանությունը<sup>1</sup>: Խնդրում եմ հեռագրով ցուցում տալ:

**Բյուզե**

1 Հմմ. N 34:

Հեռագիր

Բերա, 25/4

Աղանայի հյուպատոսությանը  
24/4-ի հեռագրի պատասխանը: Համաձայն են:

Վանգենհայմ

29.

Կայգերական Գերմանիայի  
ղեսպանություն

Հեռագիր

Բերա, 24 ապրիլի 1915թ.

Մտացված է 25 ապրիլի 1915թ.

Կայգերական ղեսպանն արտաքին գործերի գերատեսչությանը  
Ինչպես երևում է Էրզրումի հյուպատոսության ամսի 22-ի հեռագրից,  
Վանում և շրջակայքում բռնկվել են հայկական ապստամբություններ  
(հավանաբար ռուսական խարդավանքների հետևանքով): Տեղի են ունե-  
նում փողոցային կռիվներ, ավերված են հեռագրալարերը, ընդհատված է  
կապը Պարսկաստանի հետ: Ներքին գործերի նախարարությունը հաս-  
տատել է այս ամենի իսկությունը, սակայն խնդրում է առաջժ գաղտնի  
պահել այն:

Վանգենհայմ

30.

Կայգերական Գերմանիայի  
ղեսպանություն

Բերա, 24 ապրիլի 1915թ.

Ներքին գործերի նախարարությունն առաջժ գաղտնի պահելու խնդ-  
րանքով ինձ հաղորդեց՝ Էրզրումից եկած Վանի հայերի խռովություննե-  
րի մասին տեղեկության իսկությունը:

Անհաճո ղեպքերը, ինչպես ժանդարմների վրա հարձակումները և  
այլն, վերջերս խիստ շատացել են և կանխատեսվում է, որ վատ շրջա-

դարձ կունենան: Սկզբում զինված ընդհարումներ տեղի ունեցան Վանից  
հարավ ընկած Շատախ և Ոստան վայրերում, այնուհետև ապստամբու-  
թյուն բռնկեց հենց Վանում: Հայերը գործում էին նաև ռումբերով, և դրա  
հետևանքով ոչնչացվեցին հասարակական բանկի և փոստի շենքերը<sup>1</sup>:  
Փողոցային կռիվների ժամանակ զինվորների կողմից սպանվել է 20 հոգի:  
Վալի Ջևդեթ բեյը, որը խմորումների առիթով վերջերս վերադարձել էր  
Վան (մինչ այդ Պարսկաստանում էր գտնվում), եռանդազին գործի է ան-  
ցել և հույս ունի շուտով խաղաղություն հաստատել այնտեղ:

Իմ այն դիտողությանը, թե նախևառաջ անհրաժեշտ է կարգուկանոն  
սահմանել զինվորականների շրջանում, որպեսզի խուսափեն ամեն մի  
գործողությունից, որը կարող է դիտվել որպես քրիստոնյաների ջարդ: Իմ  
երաշխավորը բավականին վեհերոտ նկատեց, որ Վանում գտնվող ջո-  
կատները բաղկացած են նոր գորակոչված, վատ վարժեցրած զինվորնե-  
րից և հազիվ թե հնարավոր լինի խուսափել ծայրահեղություններից:

Վանգենհայմ

Նորին գերազանցություն ռախականցիլը  
պարոն Բեքման Հովեզին

31.

Կայգերական Գերմանիայի  
ղեսպանություն

Նշում

Զրույց պարոն գեներալ Փոսելիի հետ ապրիլի 26-ին 1915թ.  
1. Գեներալ Փոսելը գտնում է, որ հայերն իրենց խաղաղ կպահեն, ե-  
թե թուրքերը նրանց չճնշեն, այստեղ շատ անգամ դեր է խաղում նաև մր-  
ցակցության նախանձը: Հայերի վարքն անբասիր է եղել:

Ընչտ է, որ թուրքահայերը ռուսների դեպի Էրզրում առաջխաղացման  
ժամանակ բազմաթիվ ծառայություններ են մատուցել նրանց, այդպիսիք  
գտնվել են նաև ռուսներից խլված գերիների մեջ: Սակայն նա (գեներալ  
Փոսելը) բացառում է այն փաստը, որ հայ զինվորները կրակել են իրենց

1 Հմմ. N 33 ծանոթագրությունը:

թուրք ընկերների վրա, չէ որ հայերին միշտ օգտագործել են ռազմաճակատից հեռու՝ քիկունքում:

2. Հաստատված է Էրզրումի ակումբի գործունեությունը: Դատապարտվածների ցուցակում ընդգրկված է 22 հայի անուն: Թահսին բեյը՝ վալին, հնարավորին չափ խանգարել է ջարդերի իրագործմանը:

Պատախրմաճյանին սպանեցին, որովհետև նրա եղբայրը, նախկին դեպուտատը Վանի վիլայեթում գործում էր հանուն ռուսական շահերի: Նա սպանվեց երկու զինվորի կողմից: Մարդասպանների անուններն անստորագիր նամակով հաղորդել էին իշխանություններին, սակայն, չնայած Փոսելը անձամբ շահագրգռված էր այդ գործում, նրանց չբռնեցին:

26. 4.

**Մորդման**

32.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Էրզրում, 26 ապրիլի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը  
Հայոց եպիսկոպոսը խնդրում է Վանի իրադարձությունների մասին հաղորդել այդտեղի պատրիարքին:

**Շոյբներ**

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Ապրիլի 28-ին գաղտնի հաղորդվել է պատրիարքին:  
28/4

**Մորդման**

33.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Էրզրում, 26 ապրիլի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը  
Ապրիլի 24-ի հեռագրի կապակցությամբ Վանից հենց նոր ստացված ապրիլի 19-ի մասնավոր լուրերը վկայում են այն մասին, որ մինչև խռովության բռնկվելը կառավարությունը ձերբակալել էր հայ երևելիներին, որոնցից հայ երևելի Իշխանը և երեք այլ հայեր ոստիկանական հսկողության ներքո տեղափոխելիս մորթվել են: Շրջափակվել է քաղաքի հայկական թաղամասը: Ոչնչացվել են 250 հայկական տներ: Օտոմանյան բանակը, ըստ ենթադրության, պայթեցրել են հայերը՝

Այստեղ հանգիստ է տիրում: Սակայն հայ բնակչությունն անհանգստացած է և վախենում է ջարդերից: Եպիսկոպոսը հյուպատոսությունից պաշտպանություն է խնդրում:

**Շոյբներ**

34.

Կայզերական Գերմանիայի հյուպատոսություն

Ադանա, 26 ապրիլի 1915թ.

Համաձայն դեսպանության սույն ամսվա 25-ի հեռագրի, կայզերական դեսպանության գրասենյակ են ուղարկում հայոց կաթողիկոսի կից գեկուցազիրը գերմաներեն թարգմանության հետ միասին:

(Կնիք)

(Գերմաներեն թարգմանությունը)

Ադանա, 8/21 ապրիլի 1915թ.<sup>2</sup>

Հարգարժան արքեպիսկոպոս Ջավենին, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին:

Սույն ամսվա 7/20 իմ գրության մեջ ես համառոտակի ներկայացրել էի Ձեզ Չեյթունի դեպքերը և այժմ ուզում եմ մանրամասն հաղորդել այդ մասին՝ համոզված լինելով, որ իմ գրությունը կհասնի Ձեզ:

1 Երկու տեղեկություններն էլ սխալ են: Հմմ. Ժանոթագրություն N 3:  
2 Բոլոր տեղերում ավելացված է գրիգորյան ամսաթիվը:

Ժամանակին ես Չեզ տեղեկացրել էի Մարաշի մյութասարիֆի դաժանությունների և անմարդկային արարքների մասին: Չեզ պետք է որ արդեն հայտնի լինի, թե ինչպես նա, մեղավորներին պատժելու փոխարեն, դաժան վերաբերմունք է ցուցաբերում անմեղների, նույնիսկ կանանց և երեխաների հանդեպ, գործադրում ճնշման միջոցներ և անարգում նրանց: Որոշ կանայք դաժան վերաբերմունքի հետևանքով վիժել են, իսկ մի քանի բանտարկյալներ՝ զրկվել իրենց մարմնի տարբեր մասերից: Պետական պաշտոնյաները ծաղրում են մեր հավատը և հայեցողությունը: Չեզ պետք է որ արդեն հայտնի լինի, թե ինչպես մյութասարիֆը Մարաշ բերել տվեց ոչ միայն հանձնված 25 դասալիքների, այլև խաղաղ ժողովրդի միջից բազմաթիվ անմեղների, որոնց հետ դաժանորեն վարվեց: Կառավարության կողմից որպես խռովարար անվանարկված ժողովուրդը այս բոլորը այն ժամանակ հանդուրժեց, որպեսզի հաստատի իր հավատարմությունը կայսրության հանդեպ:

Չեթունի կայմական Հուսեյն Հյուսնի, ֆելդվերել Սուլեյման բեյի, մուֆտիի և պետական պաշտոնյաների չլված ոճրագործություններն ու դաժան գործողությունները, որոնք միայն զցում են կառավարության հեղինակությունը, նպատակ ունեն խաղաղասեր ժողովրդին հասցնել ծայրահեղության, որպեսզի կառավարությանն առիթ տան նրան բնաջնջելու: Չնայած դրան, ժողովուրդը դիմանում է ամեն ինչին, միայն երբեմն փորձում է բողոքել: Նա իզուր է խնդրում ուղարկել ազնիվ, անկողմնակալ տեսուչներ: Ոչ ոք ականջ չի դնում խեղճ ժողովրդին, և այս վիճակը շարունակվում է:

Կանայք փորձեցին իրենց սրտակեղեք վիճակը հեռագրով նկարագրել Վալիդե սուլթանուհուն՝ կայսրուհի մորը, որ գուր հայցեն: Քանի որ իշխանությունը մերժեց նրանց այդ բանն անել, նրանք ենթադրեցին, թե այստեղ մեղքը համայնքի առաջնորդինն է և բողոքի ցույց արեցին:

Մի քանի դասալիքներ, որոնք փախել էին լեռները, փորձեցին բնակչությանը ոտքի հանել կազմակերպված ապստամբության: Սակայն խաղաղասեր ժողովուրդը նրանց չհետևեց:

Փետրվարին իշխանությունը որոշեց Չեթուն քաղաքում տեղավորված զենքերն ու ռազմամթերքը տեղափոխել Մարաշ: Դասալիքներն իմացան այդ մտադրության մասին և ուզեցին տիրանալ այդ ամենին: Սակայն հայ երևելիների պախարակիչ ելույթներից հետո այդ բանը նրանց չհաջողվեց և նրանց մտադրությունը ձախողվեց: Փետրվարի 15/28-ին

դասալիքների մտադրությունը հաստատվեց և հաջորդ օրը միաձայն որոշումից հետո համայնքի առաջնորդի և քաղաքագլխի միջոցով այդ մասին պաշտոնապես հայտնվեց իշխանությանը: Իշխանությունը գաղտնի ուստիկանության միջոցով արդեն տեղյակ էր բոլոր իրադարձություններին:

Այդ ընթացքում մի քանիսը փախան: Նրանք ենթարկվել էին Հայդար բեյի բարբարոսական գազանություններին և եղել էին գերի վերցված Նազարեթ Նորաշխարհյանի դաժան մահվան ականատեսը: 16 ժանդարմներ, որ ուղարկված էին դասալիքներին բռնելու, վերադարձան (նրանք հետագայում նոր գազանություններ գործեցին շրջակա բնակավայրերում): Վերադարձին ժանդարմները հանդիպել էին դասալիքներին: Ընդհարումից հետո ժանդարմները փախան Չեթուն՝ կրելով 6-8 կորուստ:

Կառավարությունը և ժանդարմներն անհաջողությունից կատաղած՝ համայնքի առաջնորդներից պահանջեցին հանձնել դասալիքներին: Առաջնորդները հասկացրին, որ պահանջն անիրագործելի է, քանի որ բնակչությունը իր զենքերը հանձնել է կառավարությանը և այժմ անգոր է զինված դասալիքների դեմ: Մարտի 5/18-ին երևելիները հավաքվեցին այս լարվածության ավերիչ հետևանքները կանխելու նպատակով: Դասալիքները մտել էին քաղաք՝ ուստիկանության հետ ընդհարվելու և իշխանությանը տիրելու մտադրությամբ: Այս ընդհարման ժամանակ, երբ հայերը օժանդակում էին իշխանությանը, դասալիքներն ունեցան մեկ վիրավոր, իսկ քաղաքացիներն ու ժանդարմները՝ 9 մահացած:

Մարաշի մյութասարիֆը և ուստիկանության հրամանատարը 2 վաշտով հասան Չեթուն և քաղաքից պահանջեցին հանձնել սպանված ժանդարմների մոտից վերցրած զենքերը: Կարճ խորհրդակցությունից հետո համայնքի կաթոլիկ առաջնորդը և քաղաքի բժիշկը գնացին դեպի վանքը, ուր պատսպարվել էին դասալիքները, որպեսզի համոզեն նրանց հանձնել զենքերը և հաղորդեցին նրանց համար ներում ձեռք բերելու կայմականի խոստումը:

Խոստումը պահպանելու և խաղաղություն մտցնելու փոխարեն կայմականն արեց հետևյալ հայտարարությունը. «Մա 35-րդ անգամն է, որ Չեթունի բնակիչները ըմբոստանում են: Մինչայժմյան խռովություններն այնպես վտանգավոր չէին, ինչպես հիմա: Նախկինները նման էին ընտանեկան վիճաբանությունների: Այժմ երկրին բոլոր կողմերից վտանգ է սպառնում, և ամեն ոք պետք է օժանդակի պետությանը»: Այս պահանջը ինքնըստինքյան իրավացի է, սակայն այն չի վերաբերում Չեթունի բնա-

կիչներին, որովհետև նրանք երբեք խռովություն չեն բարձրացրել: Հնարավոր է, որ նրանք դիմադրել են անկանոն գործերին ու ետ շարտել նրանց հարձակումները: Այդ ժամանակ էլ կառավարությունը ապստամբությունը ճնշելու պատրվակով գործեր է ուղարկել: Այս անգամ էլ պետական չարամիտ ծառայողների անիրավացի գործելակերպը հասցրեց ներկայիս տխուր իրադրությանը:

Մարաշի մյուսասարիֆը և Ջեյթունի կայմակամը ոչ մի անգամ չեն պահել ժողովրդին խնայելու իրենց խոստումը: 8-10 օրում ուզեցին 400 հոգուց բաղկացած զինվորական ուժով և անողորմ պարետով ահաբեկել բնակչությանը: Նույն օրը Մարաշից մի քանի երևելիներ գնացին Ջեյթուն՝ դասալիքներին համոզելու, որ հնազանդվեն: Ընդհանուր խորհրդակցությունից հետո հայերը դիմեցին պարետին՝ դասալիքներին ուժով դուրս բերելու խնդրանքով, քանի որ նրանք չէին ուզում հանձնվել: Պարետը կրկին ժողովրդից պահանջեց անպայման հանձնել դասալիքներին:

Մարաշից եկած երևելիները վերադարձան տուն: Կառավարությունը հրամայեց քաղաքից պաշարները տեղափոխել գորանոց: Հենց որ քաղաքով մեկ տարածվեց, որ տարվել են իշխանության գրագրություններն ու գրքերը, դպրոցները փակեցին, և խուճապը մեծացավ: Այդ ընթացքում դասալիքները փախան մոտակայքում գտնվող վանքը, որտեղ շրջապատվեցին զինվորականների կողմից: Մարտի 12/25-ին սկսվեց գնդակոծությունը երկու քնդանոթներից: Չնայած բազմաթիվ կրակոցներին չկարողացան վնաս հասցնել վանքին: Այն քանից հետո, երբ իշխանությունը համոզվեց, որ ժողովուրդն իրեն խաղաղ է պահում, սեղմեց շրջապատման օղակը: Այնժամ դասալիքները պատասխան կրակ բաց արեցին և զոհված զինվորականների թիվը զգալի դարձավ: Հրամանատարը (բինբաշի) մոտեցավ վանքին, և այն պահին, երբ զինվորականներն ուզում էին վանքը կրակի տալ, հրամանատարը մի քանի զինվորների հետ զոհվեց: Կռիվը տևեց մինչև երեկո:

Նույն օրը քաղաքի բնակիչները դիմեցին կառավարությանը՝ առաջարկելով չհանել շրջապատումը, որպեսզի հնարավորություն չտան դասալիքներին փախչելու, այլապես նրանք կրկին գլխացավանք էին դառնալու թե քաղաքացիների և թե զինվորականների համար: Չնայած տված խոստմանը, կառավարությունը հանեց պաշարումը և դասալիքներին հնարավորություն տվեց փախչելու: Մեզ համար անհասկանալի է, թե ինչպես 15-20 դասալիքների հաջողվեց ճեղքել 400 հոգուց բաղկացած պա-

շարման օղակը: Մենք կասկածում ենք, որ կառավարությունը մի քանի դասալիքների դիտավորյալ թողեց փախչել, որպեսզի խաղաղ ժողովրդին մեղադրի նրանց հետ համագործակցության մեջ և անցկացնի արսուրման գործողությունը:

Դասալիքների փախուստից հետո իշխանություններից խնդրեցին խնայել վանքը, որը ողջ հայ ժողովրդի սեփականությունն է, որտեղ պահպանվել էին շատ քանկարժեք իրեր և սրբություններ: Կայմակամը, մուֆտին և մյուս պաշտոնյաները խոստացան խնայել, սակայն զինվորականությունը հաշվի չառավ այն, վանքը կրակի մատնեց: Հակառակ համայնքի առաջնորդի խնդրանքին, չխնայվեցին նույնիսկ մոտակայքում գտնվող գյուղացիների տները և դրանք ևս հրդեհվեցին: Տեսնելով այս ամենի ոչնչացումը, ժողովուրդը լալիս էր և անիծում իր ճակատագիրը, այնպես, որ անգամ քարերն էին արձագանքում:

Հաջորդ օրը գորանոցից մի կապիտան եկավ քաղաք և սկսեց խուզարկությունը՝ վիրավոր դասալիքներ և զենք գտնելու նպատակով: Նա մի քանի անարժեք զենքեր գտավ Չաքրյան Պետրոսի մոտ, որի որդին նույնպես դասալիք էր, և մի արյունոտ վերնաշապիկ: Նա Պետրոսին ու մի քանի այլ մարդկանց ձերբակալեց որպես կասկածելիների և բանտ տարավ: Մարտի 25/28-ին մոտ 30 երևելիների կանչեցին գորանոց, կայմակամ Խուրշիդ փաշան այլևս բաց չթողեց նրանց: Առանց ճանապարհի համար ամենաանհրաժեշտ պատրաստություն տեսնելու հնարավորություն տալու, նրանց իրենց կանանց և երեխաների հետ միասին ուղարկեցին Մարաշ: Այնտեղ նրանց խցկեցին մի թոփխանայի մեջ, կանանց ու երեխաների լացն ու կոծը երկինք էր հասնում:

Երեք օր ճանապարհին գտնվելուց հետո խեղճերը հասան Օսմանիե, որտեղից բազմաթիվ ձերբակալվածների հետ ուղարկվեցին Ադանա: Այստեղից էլ նրանց անմիջապես ուղարկեցին Տաքսոն: Բոլոր արսուրվածներն էլ հավատարիմ հպատակներ են և բոլոր հարցերում աջակցել են կառավարությանը: Փաստորեն կառավարությունը պետք է պարզևատրեր այս հավատարիմ հպատակներին, բայց դրա փոխարեն նրանց ամենախիստ պատիժը տվեց՝ արսուրեց: Ու՞ր են քշելու նրանց:

Ինչո՞վ են նրանք ապրելու: Ի՞նչ է լինելու արսուրվածների ունեցվածքի հետ: Ի՞նչ է լինելու մնացածների հետ: Մրա՞նց էլ են քշելու աշխարհի բոլոր ուղղություններով:

Ես նույնպես, որպես կաթողիկոս, Ջեյթունի բնակիչներին միշտ խոր-



հուրդ եմ տվել հավատարիմ մնալ կայսրությանը և կատարել պետության հանդեպ իրենց քաղաքացիական պարտքը: Նրանք ինձ լսում էին, իսկ հիմա պետք է առանց միջոցների և մերկ քարշ գան երկրով մեկ: Գա իմ անկեղծ ջանքերի վարձատրությունն է, և իմ պատիժը ավելի ծանր է լինելու: Գնալով ավելի շատ եմ խղճի խայթ գգում: Հաճույքով կուզենայի մեռնել, որովհետև միայն մահվան մեջ կարող եմ մոռանալ այսքան շատ ցավերը:

Ես ինձ կարող եմ միայն այն բանով մխիթարել, որ Ձեմալ փաշան, որին հեռագրել էի, պահեց իր խոսքը, և ջարդեր տեղի չունեցան:

Վանքը հրդեհվելուց հետո 100 դասալիք առանց դիմադրության հանձնվեցին: Նրանք արժանացան գազանային վերաբերմունքի: Նրանց կապեցին ինչպես կենդանիների և մտրակների հարվածների տակ ուղարկեցին Գամասկոս: Նրանցից մեկը ճանապարհին մեռավ: Ինչ է լինելու մյուսների հետ, չգիտեմ:

Այսբանն եմ իմացել մինչև հիմա և հաղորդում եմ Ձեզ: Աստված պահպանի մեզ գալիք շարիքներից: Հիմա թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես լրիվ անգոր եմ:

Իմ 12-ամյա ծառայության ժամանակամիջոցն ինձ համար եղել է դառնության և վշտի հավերժ ժամանակ: Եթե քրիստոնյա չլինեի, կանիծեի այն օրը, երբ լույս աշխարհ եկա, կամ ավելի շատ այն օրը, երբ նշանակվեցի այս ծանր, պատասխանատու գործին:

*Սահակ  
Կիլիկիայի կաթողիկոս*

35.

*Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն*

*Հեռագիր*

*Բերա, 27 ապրիլի 1915թ.*

Բեռլինի արտաքին գործերի գերատեսչությանը:  
Ինչպես հեռագրել է Էրզրումի հյուպատոսությունը, պետական մի-

ջամտությունից հետո Վանի խոռվությունը ճնշված է<sup>1</sup>: Այդ ընթացքում սպանվել է 400 մարդ, մնացածները փախել են Ռուսաստան<sup>2</sup>: Իբր թե ապստամբությանը մասնակցել են նաև քրդերը, որպեսզի վրեժ լուծեն 1914թ. Բիթլիսում իրենց շեյխին մահապատժի ենթարկելու և կառավարության կողմից նրանց ճնշելու համար<sup>3</sup>:

*Վանզենհայմ*

36.

*(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)*

*Հեռագիր*

*Բերա, 28 ապրիլի 1915թ.*

Էրզրումի գերմանական հյուպատոսությանը  
Հայերի համար ձեր միջամտությունը կօգնի խաժամոժի բռնությունները, ինչպես ջարդերն ու կողոպուտներն են, խափանելուն և քաղաքականապես կասկածելի անձնավորությունների հանդեպ մարդավարի վերաբերմունք ցուցաբերելուն: Ընդամին պետք է խուսափել այն տպավորությունից, թե մենք ուզում ենք օգտագործել հայերին հովանավորելու իրավունքը և միջամտել իշխանությունների գործին, և առիթի դեպքում այդ բանը շեշտել իշխանությունների մոտ: Գաղտնի. այստեղի իշխանություններն այս օրերին ձերբակալեցին հարյուրավոր հայ երևելիների և ուղարկեցին Անատոլիա, իբր թե հեղափոխական շարժման նշաններ են երևացել:

*Վանզենհայմ*

1 Համեմատիր հակառակը NN. 41,43, 45, 50 և 56: Պաշարումը տևեց 27 օր:  
2 Հմմ. նախաբանը:  
3 Հմմ. N 6:

37.

*Կայգերական Գերմանիայի  
ղեկավարություն*

*Բերա, 30 ապրիլի 1915թ.*

Ապրիլի 19-ին Վանից ստացված լուրերի հիման վրա Էրզրումի կայգերական հյուպատոսը Վանի ղեկավարի մասին լրացուցիչ հաղորդում է, որ այնտեղի իշխանությունները մինչև խռովությունների բռնկվելը ձեռքբերել են մի խումբ հայերի, որոնցից երեքը ոստիկանական հսկողությամբ տեղափոխվելու ժամանակ սպանվել են: Նրանցից մեկը հայտնի իշխանն էր, որը նախկինում հայդուկ է եղել: Կովի ժամանակ հայկական քաղաքացիական շրջապատեցին, ոչնչացվեցին 250 տներ, որոնց բնակիչները Օտոմանյան բանակի բաժանմունքի շենքը, որը պետք է որ հայերը պայթեցրած լինեն<sup>1</sup>:

Ներքին գործերի նախարարը սույն ամսվա 28-ին հաղորդեց առաջին քարգմանչին. «Վանում տեղի ունեցավ վատթարագույնը: Այնտեղ գործը հասավ կանոնավոր կոլովներին, և երկու կողմից կորուստներն էլ զգալի էին: 400 հոգուց ավելի հայեր զոհվեցին, զինվորականներն էլ հարյուրավոր մարդիկ կորցրեցին: Սակայն կարգապահությունը պահպանվեց, այնպես որ ջարդերի մասին խոսք լինել չի կարող: Այն, որ սերտ հարաբերություններ կան հայերի և ռուսների միջև անառարկելիորեն հաստատված է<sup>2</sup>: Միաժամանակ այնտեղի հուզումների հետ կապված՝ Կովկասում ուժեղացան ռազմական գործողությունները»:

Վանը, որն ունի 20000 հայ բնակչություն, տարիներ շարունակ եղել է դաշնակցական կուսակցության գլխավոր կենտրոնը: 1910 թ. Կույենհագենում տեղի ունեցած սոցիալիստների միջազգային համաժողովում նրանց զեկույցում ներկայացվել էր իրենց գործունեությունը Բիթլիսի և Վանի գավառներում: «Այս գավառներում, -ասված է զեկույցում,- մենք մինչև 1908 թրվականը զենք կրելու ընդունակ բոլոր մարդկանց, ովքեր ներգրավված էին քաղաքական խմբերում, հավաքել էինք մեր դրոշի տակ... Այս գործողությունը, ըստ էության, քաղաքական և հեղափոխա-

1 Հմմտ N 33 ծանոթագր.:

2 Հմմտ. նախաբանը:

կան բնույթ էր կրում: Այն այսօր էլ շարունակվում է, բայց արդեն ավելի քացարձակ ձևով: Թուրքահայաստանի բոլոր կենտրոններում մեր կուսակցությունն ունի ֆիդայական իր խմբավորումները, որոնց նպատակն է զգոն լինել, որպեսզի ռեակցիան կրկին գլուխ չբարձրացնի»: Մեկ այլ տեղ նշվում է, որ 1908թ. Վանում կուտակված է եղել ավելի քան 1000 հրացան, մեկ միլիոն փամփուշտ և բավականին շատ պայթուցիկ նյութեր, որոնք այն ժամանակ բռնագրավվել են կառավարության կողմից:

*Վանգենահայ*

*Նորին զերազանցություն ուսիսկանցիեր  
պարոն ֆոն Բերման Հոլվեգին*

38.

*Կայգերական Գերմանիայի  
ղեկավարություն*

*Բերա, 30 ապրիլի 1915թ.*

Սույն ամսվա 25-ին՝ շաբաթ լույս կիրակի գիշերը և 26-ին՝ կիրակի լույս երկուշաբթի գիշերը, տեղի ունեցան բազմաթիվ հայերի ձերբակալություններ: Ձերբակալվել են մոտավորապես 500 անձնավորություններ հասարակության տարբեր խավերից՝ բժիշկներ, լրագրողներ, գրողներ, հոգևորականներ, նաև մի քանի երեսփոխաններ: Դաշնակցական կուսակցության օրգան «Ազատամարտ» թերթը, որի աշխատակիցների մեծ մասը ձերբակալվել է, պաշտոնապես արգելվեց: Ձերբակալվածների մեծ մասը հաջորդ օրերին ուղարկվեց Փոքր Ասիայի խորքերը:

Այս միջոցառումների պատճառների մասին ժողովրդի մեջ տարածվել են ամեն տեսակի չստուգված լուրեր. իբր հայերի տներում և եկեղեցիներում հայտնաբերվել են պայթուցիկ նյութեր, ռումբեր և զենքեր, և որ հայերը ծրագրում են քաղաքության տոնակատարության օրը (սույն ամսվա 27-ին) հարձակվել Բ. Դոան և այլ հասարակական շենքերի վրա:

Երբ հայ պատրիարքը մեծ վեզիրին և ներքին գործերի նախարարին հարցրեց այս զանգվածային ձերբակալումների պատճառների մասին, նրան պատասխանեցին, որ հայ բնակչության համախմբվածությունը քաղաքական կուսակցություններում ներկա պահին կարող էր օգտագործվել առանձին ազդեցիկ մարդկանց կողմից հասարակական հան-



**Մայիս**

40.

(Հալեպի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 3 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 4 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ձեռքունից և շրջակայքից աքսորվել են հազարավոր, թերևս տասնյակ հազարավոր հայեր: Նրանք պետք է փոխարինվեն Մակեդոնիայից փախած մահմեդականներով:

Միջոցառումը շարունակվում է: Վերջերս ձեռնարկվել են ձերբակալություններ Այնթապում, տնային խուզարկություններ՝ Հալեպում:

**Ռոյալեր**

41.

Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 4 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 6 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Վանում շարունակվում են կռիվները զինվորների և հայերի միջև: Թուրքական կողմից վերջին օրերս սպանվածների թիվը հասել է մոտավորապես 200-ի և կրկնակի չափով էլ վիրավորներ կան: Այստեղ կատարվել

են մոտ 200 ձերբակալություններ: Շարունակում են վախենալ, որ ջարդեր կսկսվեն: Վալին կարծում է, թե իր ձեռքում ունի ապացույցներ, որ տեղի հայերի մի մասը դավադրություն էր պատրաստում: Հաջորդ օրերին վճիռը կկայացվի: Կարծում եմ, որ հնարավոր կլինի խուսափել ջարդերից:

**Շոյքներ**

42.

(Գերմանական որբանոց)

Մամուրեթ ու Ազիզ, 5 մայիսի 1915թ.

Ձերդ գերագնացություն,

Քանի որ այս վիլայեթում գերմանացի հյուպատոս չկա, խնդրում եմ՝ ներողամիտ լինեք, եթե թույլ եմ տալիս ինձ հակիրճ զեկուցելու այստեղի քաղաքական իրադրության մասին:

Մի քանի օր է, ինչ քաղաքի և շրջակայքի քրիստոնյաների տներում խիստ խուզարկություններ են կատարվում, ձերբակալվում են կառավարությանը կասկածելի թվացող անձինք և քրիստոնյաներից պահանջվում է հանձնել իրենց զենքերը:

Կառավարության այս միջոցառումները հավանաբար կապված են Վանի և Դիարբեքի դեպքերի հետ և իրագործվում են կենտրոնական իշխանության հրահանգով:

Այդ պատճառով քրիստոնյա ողջ բնակչությունը մեծ անհանգստության մեջ է և վախենում է ավելի վատթար հետևանքներից:

Այս բնակավայրում ապրածս 18 տարիների ընթացքում լավ իրազեկ լինելով այստեղի անցքերին, ցանկանում եմ Ձերդ վսեմության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ եթե անգամ այստեղի բնակչությունը մասնավոր խուզարկությունների ժամանակ երբեմն դժգոհություն է հայտնել թուրքական կառավարությունից, և եթե անգամ որոշ քրիստոնյաների համակրանքն այս պատերազմում եղել է Եռյակ միության կողմը, հակառակ այդ ամենին, այս վիլայեթի բնակչության մեծ մասը հնազանդ է կառավարությանը, և այստեղի քրիստոնյաների մտքովն իսկ չի անցնում ըմբոստանալ կառավարության դեմ:

20-ից մինչև 45 տարեկան քրիստոնյա տղամարդիկ առանց դժվարության գորակոչվել են զինձառայության: Պարենամթերքների հարկահա-

վաքի ժամանակ, ինչպես նաև «Կարմիր կիսալուսնին» օժանդակության հարցում քրիստոնյա բնակչությունը հնարավորին չափ ընդառաջեց կառավարությանը: Այնպես որ իմ պարտքն էմ համարում խնդրել խնայել այստեղի քրիստոնյաներին:

Լավ տրամադրված գլխավոր նահանգապետը, որի հետ բարեկամաբար խոսեցի այստեղի անցքերի մասին, հույս ունի, որ այստեղ լուրջ դեպքեր տեղի չեն ունենա և ինձ վստահեցրեց, որ ինքը կանի ամեն ինչ, որպեսզի գործը խաղաղությամբ կարգավորվի: Նա նույնպես համոզված է, որ տեղի քրիստոնյա բնակչությունը խաղաղասեր է և կառավարությանը նվիրված: Սակայն վտանգ կա, որ հայատյաց գորավոր և ազդեցիկ տարրերը կգերիշխեն ու վատթարագույն քայլեր կձեռնարկեն, ուստի խնդրում եմ Ձերդ գերագանցությանը, հանուն մարդկության շահերի, հարկ եղած քայլերը ձեռնարկել՝ կենտրոնական իշխանությանը լուսաբանելու այստեղի իրադրության մասին:

**Հարգանքներով Յոհաննես Էհման**

*Նորին գերագանցություն բարոն Վանգենհայմին՝*

*Կայգերական Գերմանիայի նորին մեծության ղեսպանին*

43.

*(Կայգերական Գերմանիայի ղեսպանություն)*

**Հեռագիր**

*Բերա, 6 մայիսի 1915թ.*

*Ստացված է 6 մայիսի 1915թ.*

Կայգերական ղեսպանը՝ արտաքին գործերի գերատեսչությանը

Էրզրումի հյուպատոսության մայիսի 4-ի հեռագրի համաձայն, այս օրերին Վանում կրկին կռիվներ են տեղի ունեցել հայերի հետ: Այդ ընթացքում թուրքերի կողմից եղել են 600 սպանված և վիրավոր: Կեսարիայում և Դիարբեքիքում հայտնաբերվել են ռումբերի մեծ պաշարներ<sup>1</sup>: Կառավա-

<sup>1</sup> Հմմ. նախաբանը:

րությունը լայն նախազգուշական միջոցառումներ է ձեռնարկել երկրի ներսում հայկական շարժման դեմն առնելու համար: Էրզրումում ձերբակալվել են 200 մարդ, մեծ բնակավայրերից հայերի արտաքսումը շարունակվում է: Այդ վայրերը բնակեցվելու են մահմեդական վերաբնակիչներով:

**Վանգենհայմ**

44.

*Կայգերական Գերմանիայի ղեսպանություն*

*Բերա, 8 մայիսի 1915թ.*

Հակառակ հայկական շրջանների ջանքերի՝ մեղմացնել վերջին շաբաթների ընթացքում զանազան վայրերում բռնկված խռովությունների նշանակությունը կամ մեղքը վերագրել թուրք պաշտոնյաների ձեռնարկած միջոցառումներին, ավելի շատ նշաններ են երևում, որ այդ շարժումը ավելի լայն է տարածված, քան ենթադրվում էր մինչ այժմ, և որ դրան արտասահմանից օժանդակում են հայ հեղափոխական կոմիտեները:

Վանի կռիվները, որոնց մասին արդեն հաղորդվել է, և որոնց ժամանակ ապստամբները երբեմն հաղթանակ են տարել, վկայում են այն մասին, որ այնտեղի հայ բնակչությունը գեներալի և պայթուցիկ նյութերի բավականին մեծ պաշար ունի: Ըստ թուրք պաշտոնյաների հաղորդումների՝ սպանվածների մեջ շատ հաճախ գտնվում են ռուսական հագուստներով անձնավորություններ: Հայերի կողմից նույնպես չի ժխտվում, որ իրենց համերկրացիներից մեկը, ոմն Պաստիրմաճյան, այնտեղ ազիտացիա էր տանում հոգուտ ռուսական շահերի: Այս վտանգավոր ազիտատորը հայտնի էր դարձել այստեղի լայն շրջաններին մաև ժամանակին տեղի Օտոմանյան բանկի վրա հարձակումը ղեկավարելու գործով: Սահմանադրության վերականգնումից հետո նա կրկին վերադարձել էր այստեղ, դարձել երեսփոխան և ավելի ուշ, որովհետև չէր վերընտրվել, գնացել էր Ռուսաստան: Ըստ վերջին լուրերի (մայիսի 8-ի), հայ կամավորականներին շատ անգամներ հաջողվել է Վանից կապ հաստատել ռուսների հետ<sup>1</sup>:

Կեսարիայում հայտնաբերված ռումբերի մասին հայ պատրիարքը

<sup>1</sup> Հմմ. նախաբանը:

տալիս է հետևյալ բացատրությունը. Ամերիկայից վերադարձած մի հայ, որը բնակություն էր հաստատել Էվերեկում՝ Կեսարիայի մոտ, զբաղվում է ռումբեր պատրաստելով: Երեք ռումբ պատրաստելուց հետո, չորրորդի ժամանակ անհաջողության է մատնվել և զոհվել է: Պատրաստի երեք ռումբերն իր հայրենակիցները թաքցրել էին, սակայն ոստիկանությունը, որը պատահաբար իմացել էր այդ մասին, հայտնաբերել է դրանք: Հետագա հետազոտությունների ժամանակ հայտնաբերվել են 24 դատարկ, դեռ չլիցքավորված պարկուճներ, որոնք թաքցրել էին տեղական եկեղեցու աղյուսե տանիքի տակ: Դա փետրվարի սկզբներին էր: Դրանից հետո էլ են գտնվել ռումբեր: Ներքին գործերի նախարարը վերջերս տեղեկություն տվեց Կեսարիայում գտնված ռումբերի թվի մասին, որը հասնում էր 400-ի: Բացի այդ Դիարբեքիում նույնպես հայտնաբերվել են ռումբեր և ուղարկվել Վան, որտեղ դրանք օգտագործվելու են ապստամբների դեմ կռվում<sup>1</sup>:

Այն, որ արևելյան գավառների հայ բնակչությունը իր տրամադրության տակ զենքեր ունի, խոստովանում են հայերը, պատճառաբանելով, որ դրանք ծառայում են քրդերի և այլ խուժանի ավազակային հարձակումներից պաշտպանվելու համար: Պետք է ենթադրել, որ դրանք գլխավորապես հավաքված են եղել վաղուց այնտեղի հայ հեղափոխական կոմիտեի կողմից<sup>2</sup>:

Իշխանությունները համոզված են, որ Ջեյթունի հայերը ևս հրահրված են կառավարության դեմ զինված ապստամբության՝ օտար մեքենայությունների միջոցով<sup>3</sup>:

Չի կարելի ժխտել, որ հայկական շարժումը վերջին շաբաթներին ձեռք է բերել մտահոգող բնույթ, որը մղել է կառավարությանը՝ ձեռնարկել հարկադրական միջոցառումներ:

Չանգվածային ձերբակալություններն այստեղ և այլ տեղերում, ինչպես օր. Էրզրումում, որտեղ վալին կարծում է, թե ապացույցներ ունի հայերի դավադրության վերաբերյալ, Այնթապում և այլուր, ուղղված են կոմիտեների դեմ, որոնք այս ձևով զրկվում են իրենց առաջնորդներից: Դրանք առաջին հերթին ուղղված են դաշնակցական կուսակցության դեմ:

Այստեղ, քաղաքում, մի քանի օր առաջ ողջ բնակչությունից պահանջվեց՝ հանձնել իրենց մոտ եղած բոլոր տեսակի զենքերը:

1 Հմմ. 307:  
2 Հմմ. 176:  
3 Հմմ. 25:

Հուզմունքի ժամանակ, որը համակել էր նաև մահմեդական բնակչությանը, հնարավոր չէր կանխել ցածրաստիճան պաշտոնյաների կողմից խաղաղ բնակչության հանդեպ գործադրվող ճնշումներն ու բռնի գործողությունները: Սակայն չնայած տիրող մեծ երկյուղին, մինչև այժմ ջարդեր տեղի չեն ունեցել ոչ Ջեյթունում, ոչ Մարաշում, ոչ Այնթապում և ոչ էլ Էրզրումում: Եվ, հավանաբար, կառավարությունը ապագայում էլ ի վիճակի կլինի կանխել դրանք:

**Վանգեհայում**

**Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

45.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 9 մայիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 10 մայիսի 1915թ.

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Վանում խռովությունները շարունակվում են: Թուրքերի կողմից մինչև այժմ կա 1000, հայերի կողմից՝ 3000 սպանված<sup>1</sup>:

Այստեղ վերջերս նորից կատարվեցին ձերբակալություններ, 30 հոգու արսորել են, բացառված չէ, որ նրանք ճանապարհին սպանվել են:

**Շոյբներ**

1 Հմմ. հավելված N 3 և ներածություն:

46.

(Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 10 մայիսի 1915թ.

Կայգերական դեսպանը՝ արտաքին գործերի նախարարին

Մոսուլի վալիի մայիսի 8-ի հաղորդագրության հիման վրա այնտեղի հյուպատոսությունը հեռագրում է.

Վան գավառի քրիստոնյա բնակչությունն արդեն շատ օրեր գտնվում է ապստամբության մեջ: Հայերը հարձակվել են Վանի մոտակայքում գտնվող մահմեդական գյուղերի վրա, անարդյունք գրոհել Վանի միջնաբերդի վրա: Հարձակումները ետ մղելիս թուրքական թույլ կայագորը կորցրել է 300 մարդ: Քաղաքը, որտեղ ամեն օր կռիվներ են մղվում, մեծ մասամբ գտնվում է ապստամբների ձեռքում: Ապստամբությունը հատկապես ուժեղ է Շատախում՝ Վանի մոտ: Նեստորական տիարիների տոհմից Բաշկալայի շրջանում նույնպես ապստամբել են, 200 լավ զինված տիարիներ հարձակվել են մահմեդական գյուղերի վրա և ամրացել Ջուլամերկի հյուսիսային մասում: Վանի գերմանական մանկատան ճակատագրի հարցով դեսպանությունը ուղիղ հեռագրել է քարոզիչ Սպոնրիին:

Վանգենհայն

47.

Կայգերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հալես, 10 մայիսի 1915թ.

Մարաշից վերադառնալուց հետո նոր լուրեր են ստացել Ջեթունից և շրջակա գյուղերից ավելի մեծ չափերով կատարվող արտաքսումների մասին: Բացի դրանից, ըստ միախոհեր Բլանկի սույն ամսվա մայիսի 9-ի հեռագրի՝ այժմ արտաքսումներ են սկսվել նաև Մարաշից: Արտաքսված-

ների անշարժ գույքը զնահատում է հատուկ նշանակված հանձնաժողովը, որի արժեքը պետք է հատուցվի նրանց: Սակայն չի կարելի սպասել, որ կառավարության այդ մտադրությունը կիրագործվի: Վերաբնակեցումը լինելու է Կոնիայի վիլայեթում և երևի Ջորում: Սակայն եթե այնպես շարունակվի, ինչպես նկարագրում է Բլանկը, ապա բռնագաղթվածները, եթե անգամ կենդանի մնան, այնպիսի թշվառ և հյուծված վիճակում կլինեն, որ այլևս ի վիճակի չեն լինի տնտեսապես կրկին ոտքի կանգնելու: Ջեթունում և շրջակայքում արտաքսվածների տեղը վերաբնակվում են Բալկաններից եկած մահմեդական փախստականները:

Այդ ընթացքում ես փորձեցի պարզել, թե ինչի վրա է հենվում հայերի դավադրության մասին կառավարության կարծիքը: Սակայն ինձ հայտնի դարձավ միայն մեկ փաստ: Այն ինձ պատմեց հայերի հետ մոտ հարաբերությունների մեջ գտնվող և նրանց մասին լավատեղյակ մի չեզոք անձնավորություն: Սկզբում Դյորթյուլից նամակներ են ուղարկվել Ջեթուն, թե ապստամբության պահը հարմար է: Վերականգնվել է կապը անգլիական ռազմաճակատի հետ: Արդյոք նամակները հասն<sup>ո</sup>ւ են հասցեատերերին, իմ երաշխավորին հայտնի չէ: Այսպիսով ապացուցվում է, եթե իմ երաշխավորը ընդհանրապես լավ տեղյակ է, որ ապստամբության կոչ է արվել: Թե ինչպես են արձագանքել հասցեատերերն այս կոչին, հայտնի չէ: Եթե բարեգործական ընկերության անդամների հասցեները, որոնք կարելի էր ձեռք բերել Եզիպտոսում, անգլիացիների կողմից օգտագործվել են իրենց նպատակների համար, ապա թուրքական կողմը ըստ օրենքի հասցեատերերին պատժելուց առաջ պետք է ապացույցներ բերեր նրանց հակաօրինական տրամադրության կամ հակաօրինական գործողությունների վերաբերյալ: Մնացածում ևս կառավարությունը դավադրությունը դիտում է խաշորացույցով: Ես համոզված եմ, որ արտաքսվածների մեծամասնությունն անմեղ տեղն է տառապում: Բարեգործական ընկերության անդամները կառավարության դեմ գործում էին միշտ բացեփրաց: Դրա համար նրանք հիմա պետք է քավեն իրենց մեղքը: Կառավարությունը համառորեն մնում է միջնադարյան տեսակետին, որ մի մարդու կամ մի քանիսի թույլ տված արարքի համար մեղավոր է ողջ ժողովուրդը: Նա իր միջոցառումներով ձգտում է ամբողջ շրջանների հայերի բնաջնջմանը: Բոլոր հարուստ, կրթված, ազդեցիկ հայերը պետք է վերացվեն, որպեսզի մնա միայն անառաջնորդ հոտը: Կառավարությունը վախենում է, որ հա-

յերը հետագայում հնարավորություն կունենան իրենից հաշիվ պահանջել, և այդպիսով ինքը բարոյությունների հող է ստեղծում:

Նույն գեկույցը ուղարկում են պարոն ռայխսկանցիերին:

**Ռ-յուսլեր**

**Նորին գերագանցություն ռայխսկանցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

48.

(Հալեայի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Հալեայից 10 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 11 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Մինչև այժմ հայերին արտաքսում էին միայն Չեյթունից և շրջակա տեղերից, այժմ տեղահանվում են նաև ընտանիքներ Մարաշից:

**Ռ-յուսլեր**

49.

(Մոսուլի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Մոսուլից 14 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 14 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Երեկ Խալիլ բեյը Ուրմիայից հեռագրել է այստեղի վալիին, որ իր գործերի հետ Խևեր-Բաշկալայի վրայով գնում է դեպի Վան:

Այնտեղ վիճակը վատացել է: Ինն օր է, ինչ կտրվել է կապը Վանի հետ: Ուստի խոնարհաբար խնդրում են հեռագրով տեղեկություն հաղորդել Վանի վիճակի մասին:

**Հոլշտայն**

50.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

**Հեռագիր**

Բերա, 15 մայիսի 1915թ.

Մոսուլի գերմանական հյուպատոսությանը

Ինչպես այսօր հաստատեց ներքին գործերի նախարարը, Վանում կռիվները շարունակվում են: Նա ավելացրեց, որ ռուսական զինված ուժերը մոտենում են Վանին: Դեռևս գործում է կապը այստեղի և Վանի միջև:

**Վանգենհայմ**

51.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Էրզրում, 15 մայիսի 1915թ.  
Հասել է Կոստանդնուպոլիս 27 մայիսի 1915թ.

Չերդ գերագանցություն

Ես արդեն ինձ թույլ եմ տվել ապրիլի 26-ի և 30-ի, մայիսի 4-ի և 9-ի հեռագրերում հաղորդել Վանի հայկական խոռվությունների և այստեղի հուզումների մասին:

Անհրաժեշտ եմ գտնում հեռագրային այս հաղորդումներին ավելացնել հետևյալը. Վանի խոռվությունների արտաքին առիթը, ինչպես արդեն իմացել եմ, եղել է մի քանի հայ երևելիների, հատկապես Իշխանի և Վանի հայ երեսփոխան Վռամյանի ձեռքակալումն ու սպանությունը, որոնք մեծ հարգանք էին վայելում հայերի շրջանում:



Արդյո՞ք այս դեպքը տեղի է ունեցել այնտեղի իշխանությունների համաձայնությամբ, այս հարցը ես մի կողմ եմ բողոմում: Ամեն դեպքում կառավարությանը պետք է պարզ լիներ, որ դրանով տրվում էր վերջին հարվածը, որը բերեց վաղուց ի վեր, հատկապես պատերազմի սկսվելուց հետո եռացող հուզմունքի բռնկմանը: Իսկ այն կարող էին գուցե միայն առաջնորդները: Հատկապես բռնագրավումների և գորքերի կուտակման պատճառով դժբախտության մեջ ներքաշված հայկական շրջաններում խիստ նկատելի է դարձել դժգոհությունը ոչ միայն Վանում և նրա շրջակայքում՝ Ռուսաստանի հետ սահմանամերձ շրջաններում և այստեղ, այլև երկրի ավելի խորքը ընկած հայկական բնակավայրերում: Շատ տեղերում վաղուց ի վեր զենքեր են հավաքված, սկզբում՝ թերևս միայն ինքնապաշտպանական նպատակով հնարավոր ջարդերի դեպքում, հետագայում՝ նաև զինված ապստամբության համար:

Այն, որ բուրքական կողմից մշտապես սխալներ են թույլ տրվել հայկական հարցում, Չերք գերագնացությանը բավականաչափ հայտնի է: Դրանք ռուսական կողմից պատերազմից դեռ առաջ օգտագործվել են ծրագրված սադրիչ գործողությունների համար:

Հատկապես Վանը (տեղի ռուսական հյուպատոսության օգնությամբ) վաղուց ի վեր ռուսական քայքայիչ գործունեության կիզակետն էր, որը այնքանով անարգել կարող էր գործել, որքանով որ այնտեղ չկար հակակշիռ կազմող գերմանական ներկայացուցչություն: Էրզրումի երիտասարդ հյուպատոսությունը հեռավորության պատճառով չէր կարող բավարար չափով իր ազդեցությունը տարածել այնտեղ: Հիմա ազդեցությունը, որը մեծ ուշադրություն է պահանջում, բացառված է: Դրան ավելացրած, որ այժմ նաև ընդհատված է կապը Վանի հետ: Այն ժամանակ, երբ այստեղի հայկական շրջանները փոստային ավելի լավ կապի և այստեղի հյուպատոսության գործունեության շնորհիվ (տեղեկատվության սրահ, ընթերցարան, թերթի հողվածներ, հայտարարություններ պատերազմական վիճակի մասին) կողմնորոշվում են աշխարհի իրավիճակի մեջ, տեղյակ են եվրոպական պատերազմական թատերաբեմում ռուսների անհաջողությունների մասին, այս կողմնորոշումը բացակայում է Վանում: Այնտեղի հայերը, որոնք բնականաբար անվստահ են վերաբերվում բուրքական հայտարարություններին, լուրերը քաղում են ռուսական բոլորովին ոչ մաքուր աղբյուրներից և այդպիսով, ինչպես աշխարհի որոշ ժողովուրդներ, ստանում են լրիվ սխալ պատկեր Եվրոպայում տիրող վիճա-

կի մասին: Եվս մի պատճառ՝ Ռուսաստանի հանդեպ նախկինում եղած համակրանքը ապստամբության հասցնելու համար: Ինչպես հայտնի է Չերք գերագնացությանը, Թուրքիայի հայերը վաղուց ի վեր Ռուսաստանի մեջ տեսնում են իրենց իսկական պաշտպանին, իսկ Ռուսաստանը միշտ էլ իր վրա է վերցրել հայերին հովանավորելու իրավունքը և օգտագործել է այն: Այն փաստը, որ ռուսահայերը ավելի ապահով կյանք ունենալուց բացի, գտնվում են նաև ավելի լավ տնտեսական պայմաններում, բուրքահայերի վրա նույնպես ազդում է ձգողական մեծ ուժով: Դրան հակառակ մնում է այն կարծիքը, որ Ռուսաստանի ավելի ուժեղացող ազդեցությունը իր հետ կրերի ապագայնացման փոխանց: Այդպես են մտածում հայերի հոգևոր առաջնորդները: Սակայն վերջիններիս մեջ էլ գոյություն ունի երկու ուղղություն. մեկն առաջին պլան է քաշում ազգային յուրահատկության պահպանումը, որը հնարավոր է միայն Թուրքիայում, մյուս ուղղությունը՝ տնտեսական շահերը և կրոնական ընդհանրությունը:

Գերմանական ազդեցությունը հայերի մեջ մինչև այժմ քիչ է եղել: Գերմանիայի և գերմանացիների մասին գիտեին միայն քիչ թվով կրթված հայեր: Ինչքանով ինձ հայտնի է, այստեղ բացառություն են կազմում միայն Մանասարյան դպրոցի նախկին սաները, որոնք բարձրագույն կրթություն են ստացել Գերմանիայում: Այդ դպրոցը մի քանի տարի առաջ, վախենալով Ռուսաստանի կողմից Էրզրումի վրա հարձակումից, տեղափոխվել էր Սերաստիա: Հայ զարգացած երիտասարդության մեծ մասն իր կրթությունը ստացել է ֆրանսիական դպրոցներում, իսկ հետո՝ Ֆրանսիայում և Ռուսաստանում: Հայ բնակչության շրջանում պատերազմի բռնկումից հետո նույնիսկ կասկածներ են առաջացել այն մասին, թե արդյոք գերմանացիները քրիստոնյաներ են, քանի որ նրանք դաշն են կնքել բուրքերի հետ: Արդեն այն փաստը, որ Գերմանիան ինքնակալ Թուրքիայի բարեկամն է, որի տիրապետության տակ այնքան շատ տառապել են հայերը, նրանց մեջ անվստահություն է առաջացրել մեր հանդեպ: Պատերազմի մեղքը ևս վերագրվում է Գերմանիայի ազդեցությանը, և դրա հետևանքով առաջացած տնտեսական վնասները իր ունեցվածքը պահպանելու և ավելացնելու մեծ ձգտում ունեցող ժողովրդի մեջ խիստ տհաճ զգացում է առաջացնում:

Երբ սկսվեց պատերազմը, գերմանացիների նկատմամբ հայերի ընդհանուր տրամադրվածությունը բարյացակամ չէր, սակայն վերջին ամիսների ընթացքում այն նկատելիորեն փոխվել է: Դրան թերևս մասամբ

նպաստեց գերմանական մարտական հաջողությունը կովի դաշտերում և գերմանացի սպաների ներկայությունը Էրզրումում: Սակայն այդ շրջադարձը հատկապես նկատելի դարձավ, երբ այստեղի հայերը համոզվեցին (դա մոտավորապես մարտի կեսերին էր), որ կոտորածների բռնկումը խափանվել է միայն այստեղի հյուպատոսության ներկայության և գործունեության շնորհիվ: Հայոց եպիսկոպոսը նույնպես քանիցս իր շնորհակալությունն է հայտնել գեներալ Փոսելդին և ինձ՝ հայերին պաշտպանելու համար:

Ինչ վերաբերում է այստեղի վիճակին, ինչպիսին որ այն ներկայանում է հիմա, կարող եմ ասել, որ Էրզրումի և նրա շրջակայքի հայերի կողմից ոչ մի ապստամբություն չի մտադրվում, չնայած այն հանգամանքին, որ այստեղ շատ քիչ թուրքական զինված ուժեր կան: Ավելի հեռու՝ ռուսական սահմանի մոտ գտնվող հայկական բնակավայրերը վաղուց լքված են իրենց բնակիչների կողմից, նրանց մի մասը փախել է Ռուսաստան, որտեղ նրանք ռուսական ջոկատներում, ինչպես նաև Վանի մոտ կռվում են թուրքերի դեմ, մի մասն էլ եկել է Էրզրում: Առանձին դեպքերը, ինչպես բռնագրավումների ժամանակ զինված դիմադրությունը հեռավոր գյուղերում, թուրքերի սպանությունը, որոնք պահանջում են հայ աղջիկների և կանանց հանձնումը, հեռագրագծերի և հեռախոսալարերի փչացնելն ու կտրատելը, լրտեսությունը, այնպիսի երևույթներ են, որոնք պատերազմական ժամանակաշրջանում սովորական են խառը բնակչությանը սահմանամերձ շրջաններում: Տեղի հայերի հանգիստ վարքը, ըստ իմ կարծիքի, պայմանավորված է.

1. արդեն վերը նշված ավելի լավ կողմնորոշմամբ աշխարհի ընդհանուր իրադրության մեջ, որը թույլ չի տալիս այլևս հույս ունենալ ռուսների «արագ հաղթանակի» վրա,
  2. տեղի իշխանության խելամիտ դիրքորոշումով, որը մինչև հիմա խուսափել է ճնշման կտրուկ դեպքերից:
- Պատահիք՝ Օտոմանյան բանկի դիրեկտորի սպանությունից բացի, որը տեղի ունեցավ մարտին, քաղաքական սպանությունների դեպքեր այստեղ տեղի չեն ունեցել: Վալի Թահսին բեյը, որը Վանում իր նախկին գործունեության ժամանակ մեծ փորձ է ձեռք բերել հայկական հարցի մեկնաբանման գործում, հակառակ որոշ զինվորական շրջանների, որոնք գտնում են, որ հայերի հետ հաշիվ մաքրելու պահը եկել է, չափավոր տեսակետ է պահպանում: Իշխանության միջոցառումները մինչև

այժմ սահմանափակվել են միայն տնային խուզարկություններով և ձերբակալություններով: Ձերբակալվածների մեծ մասը կրկին ազատ է արձակվել, մի քանիսին արտաքսել են երկրի խորքերը: Ինչքան հայտնի է ինձ տնային խուզարկությունները մեղադրական նյութ չեն հայտնաբերել: Իշխանության այս վարքը շատ է նպաստում հայերի հանդարտեցմանը: Այստեղ հազիվ թե ջարդեր սկսվեն, որովհետև ճակատում կրած անհաջողություններից հետո թուրքական գործառնները նահանջելու են Էրզրում: Ես ամենուրեք ակտիվորեն ելույթներ եմ ունեցել «հաշիվ մաքրելու» մտայնության դեմ և նշել, որ ներկա ժամանակում ներքին հուզումները Թուրքիայում վատ հետևանքներ կունենան:

Հյուպատոսության ներկայությունը և գործունեությունը կապի լավ ծառայության հետ քիչ չնպաստեց այստեղի թուրքերի ու հայերի մինչև այժմ գոյություն ունեցող խաղաղ իրավիճակին:

**Ֆոն Շոյբներ-Ռիխտեր**

**Նորին գերազանցություն պարոն դեսպան քարոն ֆոն Վանգենհայմին, Կ. Պոլիս**

52.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Էրզրում, 15 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Շրջակա գյուղերից հայերն արտաքսվում են և ուղարկվում էտապի վայր: Այդ պատճառով բնակչությունը չափազանց անհանգստացած է:

Շոյբներ

53.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Էրզրում, 16 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղի շրջակայքի ողջ հայ բնակչությանը Մամախաթուն և այլ տեղեր արտաքսման միջոցառումները տեղի են ունենում բանակի գլխավոր հրամանատարի հրամանով և հիմնավորված են ռազմական նկատառումներով:

Քանի որ հայ տղամարդիկ գորակոչվել են ծառայելու աշխատանքային գումարտակներում, քում են հիմնականում կանանց և երեխաներին, ընդ որում՝ նրանք ստիպված են թողնել իրենց ունեցվածքը: Այստեղի հայերի կողմից ապստամբություն չի սպասվում, ուստի այս դաժան միջոցառումն անհիմն է և վրդովմունք է առաջացնում: Քաղաքացիական գերատեսչությունը մասնակից չէ այդ միջոցառմանը և դրանից բխող հետեվանքների ամեն մի պատասխանատվություն հեռացնում է իրենից:

Շոյբներ

54.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 17 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 18 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Մայիսի 5-ի հեռագրի կապակցությամբ

Հայոց եպիսկոպոսը խնդրում է Չերդ գերագնացությանը՝ տեղյակ պահել պատրիարքին այստեղի դրության մասին:

Շոյբներ

55.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

20 մայիսի 1915թ.

Ծանուցում

Այսօր տեղեկությունները հաղորդվել են պատրիարքին, նա ոչ մի լուր չունի Էրզրումից: Նրա հայեցողությանը թողեցի, որ եթե իր կողմից քայլեր ձեռնարկելու լինի, դիմի ռազմական նախարարին:

Մորդման

56.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 18 մայիսի 1915թ.

Ստացված է 19 մայիսի 1915թ.

Արտաքին գործերի գերատեսչությանը

Էրզրումի հյուպատոսության սույն ամսվա 17-ի հաղորդումը

Վանը գրավել են ռուսները, ռազմական կացությունը թուրքերի համար անբարենպաստ է: Հայերը միացել են ռուսներին և կոտորում են մահմեդականներին, 80000 մահմեդականներ փախել են Բիթլիս:

Վանզենհայմ

57.

(Մոսուլի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 18 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 20 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Քոչանիսի նեստորականների առաջնորդ Մար Շիմունը ինձ հաղորդեց, որ Ամադիայի շրջանում օրեցօր աճում է հակաքրիստոնեական շարժումը, մահմեդականները ծրագրել են համընդհանուր քրիստոնեական կոտորածներ և մասամբ արդեն սկսել են իրագործել այն: Նույն բանը հաղորդեց ինձ այստեղի քաղկեդոնական պատրիարքը:

Վալին խոստովանում է այս փաստը, և եթե ուղղակիորեն չի գրգռում այս շարժումը, ապա բավականաչափ եռանդ չի ներդնում այն արգելելու համար, ինչը շատ անխոհեմ է: Եթե նա ազդեր թուրք շեյխերի վրա, ապա դժվար չէր լինի կասեցնել ջարդերը:

Չեր հայեցողությանն են թողնում այդ իմաստով վալին միջնորդելը:

Հուլիան

58.

(Ադանայի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Ադանայից 18 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 18 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ադանայի վիլայեթի ողջ հայ բնակչությունը կառավարության գործողության պատճառով մեծ ահի մեջ է: Հարյուրավոր ընտանիքներ ար-

տաքսվել են, բանտերը լեփ-լեցուն են: Այսօր վաղ առավոտյան կրկին տեղի ունեցան մահապատիժներ:

Իր բարբարոսական գործողությամբ իշխանությունը ակնհայտորեն վնասում է երկրի շահերին: Գերմանական արևելյան բանկը, որը զգալի կերպով վնաս է կրել, ինձ խնդրեց միջնորդել, որ դադարեցվի հայերի արտաքսումը:

Քյուզե

59.

(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 18 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 18 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Արտաքսված հայերի շրջանում ահավոր թշվառություն է տիրում: Հազարավոր կանայք և երեխաներ, առանց սննդի կուտակվել են քաղաքի շրջակայքում: Անիմաստ արտաքսումը մեծ զայրույթ է առաջացնում:

Թույլ կտա՞ք այդ կապակցությամբ քայլեր ձեռնարկել գլխավոր հրամանատարության մոտ:

Շոյբներ

60.

(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)

Բերա, 19 մայիսի 1915թ.

Հեռագիր

Էրզրումի գերմանական հյուպատոսությանը

Ի պատասխան սույն ամսվա 18-ի հեռագրի.  
Նկարագրված պայմաններում Դուք լիազորված եք այդտեղի գլխա-

վոր հրամանատարության մոտ առարկություններ անել արտաքսված հայերի կապակցությամբ և պահանջել, որ մարդասիրական վերաբերմունք ցույց տրվի արքայական բնակչության հանդեպ:

**Վանգենհայմ**

61.

*Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն* *Բերա, 19 մայիսի 1915թ.*

Ձեր սույն ամսվա 5-ի գրությունը և 17-ի հեռագիրը ստացել եմ:

Գոհ եմ իմանալու Ձեր գրությունից, որ այդտեղի վիճակն առայժմ ոչ մի հիմնավոր մտահոգության տեղիք չի տալիս և հուսով եմ, ապագայում էլ խոհեմ տարրերին կհաջողվի վտանգավոր միջադեպերի առաջն առնել: Հասկանալի է, որ Վանի ցավալի դեպքերի հետևանքով կառավարությունը կձեռնարկի մասնավոր միջոցառումներ և որ այս առիթով երբեմն էլ խաղաղ բնակչությունը կտուժի: Ամեն դեպքում, հենց որ առիթը ներկայանա, Ձեր մանրամասն տեղեկությունների վրա ուշադրություն պիտի դարձնեմ և մյուս կողմից էլ խնդրում եմ Ձեզանից՝ իշխանությունների և բնակչության հետ ունեցած Ձեր հարաբերությունները օգտագործել, հանդարտեցնելու իմաստով ներգործելու համար: Այս կապակցությամբ կուզենայի հատուկ նշել, որ հակառակ ներկայիս հասկանալի հուզումների և ի հեճուկս զանազան պրովոկացիաների՝ մինչև այժմ ոչ մի տեղ հայերի հանդեպ զանգվածային անկարգություններ՝ կոտորածներ, կողոպուտներ և այլն, տեղի չեն ունեցել:

Հոժարակամ և առանձին հետաքրքրությամբ սպասում եմ Ձեզանից հետագա տեղեկությունների:

**Ֆոն Վանգենհայմ**

*Նորին սրբազնություն, պարոն քահանա Յոհաննես Էհմանին,  
Մամուրեթ ուլ Ազիզ*

62.

*Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն* *Բերա, 19 մայիսի 1915թ.*

Վանում բռնկված հուզումների առիթով, ինչպես արդեն հեռագրով հաղորդել եմ, ուղղակիորեն հեռագրեցի Վանում գտնվող քահանա Սպոբրին՝ նրա վիճակի մասին տեղեկանալու համար: Քանի որ պատասխան չստացա, նույն նպատակով դիմեցի ներքին գործերի նախարարությանը: Վերջինս հաղորդեց Վանի վալիի հեռագրային հետևյալ տեղեկությունը.

Հայ ապստամբները խրամատավորվել են քաղաքի այն քաղամասում, որտեղ գտնվում են քարոզիչ Սպոբրինի հաստատությունները և ամերիկյան միսիան (Ռայնոլդները): Ինքը՝ վալին, ցանկացել է Սպոբրինն ուղարկված հեռագիրը սպիտակ դրոշը պարզած սուրհանդակի միջոցով հանձնել հասցեատիրոջը: Սակայն հայերը սուրհանդակի վրա կրակ են բացել՝

Վալին ավելացրել էր, որ ապստամբությունը հալածելու և ճնշելու ժամանակ նա հաշվի է առնում գերմանացիների և ամերիկացիների ներկայությունը:

Այստեղ առկա են Խարբերդում (Մամուրեթ ուլ Ազիզ) գտնվող միսիոներ Յոհաննես Էհմանի սույն ամսվա 5-ի մանրամասն գեկույցը և այդ գեկույցը վավերացնող սույն ամսվա 17-ի հեռագիրը, այնպես որ այժմ նրա և նրա հաստատության համար անհանգստանալու պատճառ չկա:

**Վանգենհայմ**

*Նորին գերազանցություն ռայխսկանցլեր  
պարոն Ֆոն Բերման Հոլվեգին*

63.

*(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)*

*Հեռագիր*

*Ուղարկված է Էրզրումից 22 մայիսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 25 մայիսի 1915թ.*

Կ. Պոլսի կայզերական դեսպանությանը

Հայերի արտաքսման կապակցությամբ հեռախոսով խոսեցի բանակի հրամանատարության հետ և երկուշաբթի օրը մեկնելու եմ թորթունի գլխավոր շտաբ: Մահմեդական բնակիչները տիրանում են արտաքսված հայերի գյուղերին:

**Շոյքներ**

64.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 22 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 25 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղի ամերիկյան միսիայի հանձնարարությամբ խնդրում եմ հարցնել միստր Փիթին (Աստվածաշնչի հրատարակման և տարածման ընկերություն), ուզու՞մ է նա արդյոք դրամական օգնություն ցույց տալ արտաքսված հայերին: Խնդրում եմ շտապ հեռագրով պատասխանեք հյուպատոսությանը և միսիային:

**Շոյքներ**

65.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Բերա, 26 մայիսի 1915թ.

Հեռագիր

Էրզրումի գերմանական հյուպատոսությանը

Ի պատասխան մայիսի 24-ի հեռագրի.

Միստր Փիթը հայերի համար օժանդակության ֆոնդ է ստեղծել: Փո-

խանցման անապահովության պատճառով փորձի համար կուղարկվի մի փոքր գումար:

**Ֆոն Վանզենհայն**

66.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 26 մայիսի 1915թ.

Ստացված է Բերայում 26 մայիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Լրիվ վստահելի աղբյուրներից իմացել եմ, որ Մարաշի սանջակից և Ադանայի արևելյան մասից մինչև այժմ արտոլված հայ ընտանիքների թիվը հասնում է 2000-ի, այսինքն՝ 10 000 հոգի: Արտաքսումները շարունակվում են: Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը Բ. Դ-ան ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ դրա հետևանքով ապագայում կարող են բարդություններ առաջանալ: Արևելքի հայերի թույլ տված սխալների համար Մարաշը չպետք է հատուցի և անմեղները մեղավորների պատճառով չպետք է պատժվեն: Արդեն բավականաչափ դժբախտություն է կատարվել, և ժամանակն է կանգ առնելու: Եթե երկրի ներսում վերաբնակեցման և գաղութացման մտադրություն կա, ապա դրա համար պետք էր անհրաժեշտ պատրաստություններ տեսնել:

**Ռ-յուլեր**

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

Մայիսի 29-ին զրուցեցի Թալեաթ բեյի հետ: Նախարարը լավ իրազեկ չէր Մարաշից հայերի տեղահանության մասին և տեղեկություններ կիսվաքի այդ կապակցությամբ:

**Մորդման**

67. (անգլերեն)

Թուրքիայում ամերիկյան միսիայի գանձապահ  
Վ. Վ. Փիթի գրասենյակ

26 մայիսի 1915թ.

Բերայի գերմանական դեսպանության գլխավոր հյուպատոս պարոն  
Մորդմանին

Սիրելի պարոն.

Ելնելով այս առավոտ Ձեր արած սիրալիք առաջարկից՝ հաղորդել  
Էրզրումի մեր մարդկանց աղքատների և կարիքավորների վիճակը  
թեթևացնելու համար իմ ուղարկած դրամական միջոցների մասին, նկա-  
տի ունենալով Էրզրումի մեր մարդկանցից վերջերս ստացված հաղոր-  
դումները, ես հանգում եմ այն եզրակացության, որ նրանք ի վիճակի են  
մասնավոր դրամ հատկացնել այստեղ վճարումներ կատարելու համար:  
Ուստի ես հեռագրեցի մեր դուկտոր Քեյսին 250 լիրա ստանալ իմ անունով,  
որից 150 լիրան՝ նպաստ տալու նպատակով:

Նամակիս կցում եմ այն հեռագրի պատճեն, որն այսօր ուղարկում եմ:  
Բոլորս բարձր կգնահատենք Ձեր ծառայությունը, եթե Դուք բարի լինեք  
Ձեր հյուպատոսի միջոցով վավերացնել այս հեռագիրը: Պարոն, շնորհա-  
կալ եմ այս խնդրի նկատմամբ Ձեր ցուցաբերած բարի վերաբերմունքի  
համար:

Խորին հարգանքներով  
Ձեր Վ. Վ. Փիթ  
գանձապահ

Այսօր մենք հեռագիր ուղարկեցինք Էրզրում հետևյալ պարզաբանու-  
մով.

Աղքատների և կարիքավորների համար ստանալ 150 լիրա, կայանի  
ծախսերի համար՝ 100 լիրա:

68.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Կ. Պոլիս, 29 մայիսի 1915թ.

Հեռագիր

Էրզրումի գերմանական հյուպատոսությանը

Տեղի ամերիկյան միսիան լիազորված է պարոն Փիթի կողմից նրա  
հաշվին փոխանցել 250 թուրքական ֆունտ, որից 150-ը նախատեսված է  
կարիքավորների օժանդակության և 100-ը կայանի համար:

Նոյրաք

69.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

29 մայիսի 1915թ.

Նշում

Այսօր Թալեաթ բեյին դրդեցի մեղմացնել տեղահանության միջոցա-  
ռումները Էրզրումի հայերի, հատկապես կանանց և երեխաների հան-  
դեպ: Նա հակաճառեց, որ հենց Էրզրումում հայերի շրջանում գտել են ոչ  
միայն մեղադրական գրագրություններ, այլև զենքեր, ռումբեր և նման այլ  
բաներ<sup>1</sup>, որ ծրագրված է եղել ռուսների առաջխաղացման դեպքում ապս-  
տամբություն սկսել և թիկունքից հարձակվել թուրքերի վրա<sup>2</sup>: Տեղահանու-  
թյան միջոցով հայերը կպահպանվեն վատթարագույնից, այսինքն՝ կո-  
տորածներից: Կառավարությունը արտաքսվածներին կապահովի նոր  
բնակատեղերով ու նաև կօժանդակի նրանց:

Մորդման

70.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 30 մայիսի 1915թ.

1 Հմմ. N 74:

2 Հմմ. N 53:

## Հեռագիր

Էրզրումի գերմանական հյուպատոսությանը  
Մայիսի 15-ի գեկույցի կապակցությամբ.

Ներքին գործերի նախարարը պնդում է, որ Էրզրումի հայերը խիստ մեղադրվում են իրենց մոտ ռուսներ և այլ պայթուցիկ նյութեր գտնվելու առումով, և որ նրանք մտադիր էին ռուսների առաջխաղացման դեպքում ապստամբել թուրքական զորամասերի թիկունքում<sup>1</sup>: Տեղահանությունը ձեռնարկվել է նաև արտաքսվողների շահերից ելնելով, որպեսզի նրանց պահպանեն վատթարագույնից (կոտորածներից):

## Վանգենհայն

## 71. (Ֆրանսերեն)

1915թ. մայիսի 14/17-ի օրենքը՝ կասկածելի անձանց արտաքսման վերաբերյալ<sup>2</sup>, պարունակում է հետևյալ որոշումները.

Հոդված առաջին.- Եթե պատերազմի ժամանակ բանակի, զորամիավորումների և դիվիզիաների հրամանատարները կամ նրանց տեղակալները, ինչպես նաև առանձին շրջանների ղեկավարները նկատեն բնակչության կողմից որևէ ձևով կատարվող հակազդեցություն, զինված հարձակում և դիմադրություն կառավարության կարգադրություններին, երկրի պաշտպանությանը և հասարակական կարգի պահպանմանը, վերջիններս իրավունք ունեն և պարտավոր են անմիջապես ձեռնարկել պատժի ամենախիստ միջոցներ՝ ռազմական ուժի օգտագործմամբ և վճռականորեն ճնշել այդ հարձակումներն ու դիմադրությունը:

Հոդված երկրորդ.- Բանակների, զորագնդերի և դիվիզիաների հրամանատարները կարող են տեղափոխել այլ շրջաններ և այնտեղ բնակեցնել գյուղերի ու քաղաքների բնակչությանը՝ ելնելով ռազմական նկատառումներից, կամ այն դեպքում, եթե կասկածեն նրանց լրտեսության և դավաճանության մեջ:

Հոդված երրորդ.- Այս օրենքն ուժի մեջ է հրապարակման պահից:

27 մայիսի 1915թ.

1 Հմմ. N 53 և 74:

2 Հայկական կոմիտեների ձգտումներն ու գործողությունները Օստմանյան սահմանադրության հռչակումից հետո: Կ. Պոլիս, 1917:

## 72.

(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)

## Հեռագիր

Բերա, 31 մայիսի 1915թ.

Ստացված է 1 հունիսի 1915թ.

Արտաքին գործերի գերատեսչությանը

Հայերի լրտեսական գործողությունները սահմանափակելու և հայկական զանգվածային խռովությունների առաջն առնելու համար, Էնվեր փաշան մտադիր է, օգտվելով պատերազմական (բացառիկ) իրավիճակից, փակել հայկական շատ դպրոցներ, արգելել հայերեն փոստային թղթակցությունը, ճնշել հայկական թերթերը և ներկայումս ապստամբող հայկական կենտրոններից բոլոր ոչ լրիվ անբասիր ընտանիքներին արտոբել Միջագետք: Նա թախանձագին խնդրում է, որ այս գործում իրեն չխանգարենք:

Թուրքիայի այս միջոցառումները բնականաբար կրկին մեծ հուզումներ կառաջացնեն մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված բոլոր երկրներում և նրանց կտրամադրեն մեր դեմ: Միջոցառումներն, իրոք, մեծ խստությամբ են կիրառվում հայ բնակչության դեմ: Ես այն կարծիքին եմ, որ մենք կարող ենք մեղմացնել դրանց անցկացման եղանակը, սակայն սկզբունքորեն չպետք է խանգարենք: Ռուսաստանից սնուցվող հայկական խառնակիչ գործունեությունը մեծ չափերի է հասել, որը սպառնում է Թուրքիայի հետագա գոյությանը:

Խնդրում եմ հասկացնել դոկտոր Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին, որ Թուրքիայում տիրող քաղաքական և ռազմական վիճակում նշված միջոցառումները կասեցնել, դժբախտաբար, անհնար է<sup>1</sup>:

Ես այդ մասին արդեն գաղտնի հաղորդել եմ Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի հյուպատոսություններին:

## Վանգենհայն

1 Հաղորդումը դոկտոր Լեփսիուսին դրոշեց մեկնել Կ. Պոլիս:



**Հունիս**

73.

(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 2 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 3 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Բանակի գլխավոր հրամանատարի հետ հայերի արտաքսման մասին իմ բանակցությունները դրական արդյունք չունեցան: Հայ բնակչությունը բոլոր դաշտավայրերից և, ըստ երևույթին, նաև Էրզրումից, պետք է արտորվի Դեյր էլ Չորի ուղղությամբ: Այս մեծ ծավալի արտորը հավասարազոր է կոտորածների, քանի որ փոխադրական միջոցների պակասության պատճառով արտորյալների հազիվ կեսը կհասնի նշանակման վայրը: Այն իր ետևից կբերի ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ երկրի քայքայում: Ռազմական բնույթի պատճառաբանություններն անհիմն են, որովհետև տեղական բնակչության ապստամբությունը բացառված է, արտաքսվածները միայն կանայք և երեխաներ են: Իսլամ ընդունող հայերին չեն արտաքսում: Հայկական լքված գյուղերը, ուր ես այցելեցի, քաղաքացիական են: Կողոպտված է նաև Գրզըլվանքը, որի եկեղեցին ավերված է:

**Շոյբներ**

74.

(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 2 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 3 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Մայիսի 30-ի հեռագրի կապակցությամբ Էրզրումում և շրջակայքում ումբեր և նման բաներ չեն հայտնաբերվել, որը կարող է հաստատել նաև վալին<sup>1</sup>: Այստեղից չեն կարող ստուգել, արդյոք մեկ այլ տեղում նման բաներ հայտնաբերվել են:

**Շոյբներ**

75.

(Հալեայի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեայից 3 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 3 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ի պատասխան մայիսի 31-ի հեռագրի:

Հրահանգ է ստացվել՝ Ադանայի վիլայեթից այստեղ հասած հայերին բաժանել մահմեդական գյուղերի վրա: Նրանք այնտեղ կոչնչանան, ինչը չի կարող լինել Էնվեր փաշայի նպատակը: Ես քախանձագին խնդրում եմ Չեզ, միջնորդել, որպեսզի այս հայերին թույլատրվի մնալ Հալեայում, որտեղ նրանք անվնաս կլինեն: Կառավարության հակահայկական քաղաքականությունը անցկացնելու համար Հալեայ է ուղարկվել մի հատուկ պաշտոնյա՝ Էյուբ բեյը, որն անմիջապես անցել է Ֆախրի փաշայի տրամադրության տակ: Վալի Չելալ բեյը, որը իշխանությանը հայտնի է որպես մեղմ քաղաքականության կողմնակից, հեռացվել է պաշտոնից:

**Ռյուշեր**

<sup>1</sup> Հմմտ N 69 և N 70:

76.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 6 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 6 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ամենախոր հարգանքներով խնդրում են Ձեզ թույլ տալ՝ կրկին ներկայացնել Ձեզ: Հայ աքսորյալների մեջ հիմնականում գտնվում են կանայք: Դանապարհին և գյուղերում նրանց անխնա ձևով անարգում են: Հնարավոր չէ՞ արդյոք, որ արտաքսեն միայն տղամարդկանց, իսկ կանայք և երեխաները մնան Հալեպում: Մինչև հիմա ճանապարհին բազմաթիվ երեխաներ են զոհվել:

Ռյուսեր

77.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

Հեռագիր

Հալեպի գերմանական հյուպատոսությանը

Ի պատասխան հունիսի 6-ի հեռագրի:

Ներքին գործերի նախարարը խոստացավ Հալեպի վալիին հարցում անել արտաքսված հայերի պայմանների մասին:

Վանգենհայն

78.

(Մոսուլի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 10 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 11 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Դիարբեքիից Մոսուլ արտաքսված 614 հայեր՝ ծերեր, կանայք, երեխաներ, լաստանավերով բերելիս, լրիվ մորթվել են: Լաստանավերը երեկ այստեղ հասան դատարկ: Մի քանի օր է գետով դիակներ և մարդու մարմնի մասեր են լողում: Շարունակվում են հայ «վերաբնակիչների» փոխադրումները, նրանց մույն ճակատագիրն է սպասվում:

Ես տեղի իշխանությանը իմ ամենախորը նողկանքն արտահայտեցի այս ոճրագործության կապակցությամբ: Վալին այդ առթիվ հայտնեց իր ցավակցությունը՝ միաժամանակ նշելով, որ դրա համար պատասխանատու է միայն Դիարբեքիի վալին:

Հուլիսյան

79.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 12 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 13 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղ գտնվող Սսի կաթողիկոսը հայտնեց, որ մինչև հիմա արտաքսված հայերի թիվը 30000-ից ավելի է: Լրիվ դատարկվել են Չեյթունը և նրա շրջակայքը, Ալաբաշը, Ալբիստանը, Դյորքյուլը, Հասան Բեյլին: Արտաքսված են ոչ միայն կարծեցյալ «ոչ լրիվ անբասիր» ընտանիքները, այլև ողջ բնակչությունը, անգամ զինվորական ծառայության մեջ գտնվողների ընտանիքները: Հնարավոր չէ՞ր զոհն սրանց համար բացառություն անել:

Շարունակվում են կանանց և երեխաների փոխադրումները երկրով մեկ: Նրանց թույլ չեն տալիս մնալ անգամ ամենափոքր բնակավայրերում, ինչպես Բաբում, Մեմբիջում, Իդլիբում, այլ 3-4 ընտանիքներով տեղաբաշխում են մահմեդական գյուղերում, որտեղ նրանց կեսից ավելին կոչնչանա:

Այսպիսով կառավարությունն անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների նպատակից շատ ավելի հեռուն է գնում: Նա (կառավարությունը) չի՞ մտածում արդյոք, որ խաղաղության պայմանագրի ժամանակ, նախքան հիմնականում հայերով բնակեցված, այժմ կորցրած Վանի գավառը կրկին նրան համարելը, հնարավոր է հաշվի առնեն, որ նա ինչպես Կիլիկիայում, այստեղ էլ անհրաժեշտ նախազգուշական միջոցառումներով սահմանափակվելու փոխարեն, ոչնչացրեց բնակչության կարևոր մասը:

Ռ-յուլեր

80.

(Մոսուլի կայգերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 13 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 14 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հունիսի 10-ի հեռագրի կապակցությամբ.

Այստեղ օրեցօր ավելի շատ է հայտնի դառնում Դիարբեքիում տեղի ունեցող հայկական կոտորածի մասին: Դա բնակչության մեջ առաջ է բերում աճող անհանգստություն, որն այստեղի իշխանության անհասկանալի անբարեխղճության և թուլության հետևանքով կարող է հեշտությամբ անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Մարդիկ և Ամադիայի շրջաններում գործը հասել է քրիստոնյաների իսկական հետապնդման:

Եթե կառավարությունը չփոխի քրիստոնյաներին հետապնդելու իր ծրագիրը, շուտով ամենուրեք խռովություններ կսկսվեն: Պետք է դադարեցնել հայկական ջարդերը:

Հուլիսյան

81.

Կայգերական Գերմանիայի դեսպանություն

Բերա, 17 հունիսի 1915թ.

Հայ բնակչության արտաքսումն Արևելյան Անատոլիայի գավառների իրենց բնակավայրերից և նրանց վերաբնակեցումը այլ վայրերում կատարվում է անգույք ձևով:

Սաի կաթողիկոսի վստահելի տվյալների համաձայն, միայն իր թեմից մինչև հիմա տեղահանվել են 30000 հայեր: Չեյթունը և նրա շրջակայքը, Ալբիստանը, Հասան Բեյլին և ճուլնիսկ ամենափոքր բնակավայրերը լրիվ դատարկված են: Այստեղ, ինչպես և ամենուրեք, բնակիչներին ցրում են երկրով մեկ և տեղաբաշխում մահմեդականներ մեջ, հիմնականում իրարից հեռու ընկած տեղանքներում: Օրինակ, Չեյթունի բնակիչները մասամբ տեղափոխված են Կոնիայի շրջակայք, մասամբ Եփրատի ափին՝ Դեյր էլ Ջոր: Էրզրումի հայերին տեղափոխել են Դերջան (Մամախաքում):

Արտաքսվողներին պարտադրում են անմիջապես կամ մի քանի օրվա ընթացքում թողնել իրենց բնակատեղերը, այնպես որ նրանք ստիպված են լքել իրենց տներն ու շարժական ունեցվածքի մի մասը, չկարողանալով ճուլնիսկ իրենց հետ վերցնել ճամփորդության համար անհրաժեշտ սննդամթերք: Ժամանելով իրենց նշանակման վայրը, նրանք մնում են անպաշտպան և անօգնական իրենց դեմ թշնամաբար տրամադրված բնակչության մեջ: Որոշ տեղերում, արդեն փոխադրման ժամանակ, տեղի են ունեցել բռնություններ: Դիարբեքիից Մոսուլ տեղափոխվող բոլոր հայերին ճանապարհին մորթել են: Լրիվ բացառված է, որ կառավարությունը բռնագաղթվողներին ապահովի փողով, սննդամթերքով կամ անհրաժեշտ այլ բաներով: Էրզրումի կայգերական հյուպատոսը և ամերիկյան միսիոներները, իսկ այլ տեղերում՝ տեղական հայ պատրիարքարանը օգնության միջոցներ են ձեռնարկել:

Միանգամայն ակնհայտ է, որ հայերին քստրելը պատճառաբանվում է ոչ միայն ռազմական անհրաժեշտությամբ: Վերջերս ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը առանց քաշվելու այն միտքն է արտահայտել կայգերական դեսպանության աշխատակից դոկտոր Մորդմանի մոտ, որ «Բարձր Դուռն ուզում է օգտագործել համաշխարհային պատերազմը,

որպեսզի լրիվ ազատվի իր ներքին բշխմանից (երկրի ներսի քրիստոնյաներից), առանց հարուցելու արտասահմանի դիվանագիտական միջամտությունը»:

Մի քանի օր հետո հայոց պատրիարքը նույն պաշտոնյային հայտնել է, որ Բ. Դռան միջոցառումների նպատակը ոչ թե հայ ազգաբնակչության ժամանակավոր անվտանգության ապահովումն է, այլ նրա վտարումը Թուրքիայից, կամ, առավել ևս, նրա բնաջնջումը: Տեղահանությունը նույնքան վատ է, որքան կոտորածը, և զարմանալի չի լինի, եթե հայերը ի վերջո զենքի դիմեն՝ անգամ առանց հաջողության հույս ունենալու: Նա (պատրիարքը), թվում է, կորցրել է հույսը, թե թուրքական կառավարության մոտ իր ձեռնարկած քայլերի միջոցով կարելի է բարելավել իրավիճակը: Նա, ինչպես նաև, թերևս, իրադարձություններին տեղյակ բոլոր հայերը, նախկինի պես այն համոզմանն են, որ կառավարության կողմից հայերին վերագրվող խժոժությունները հրահրված են իշխանությունների գործողություններով:

**Վանգեհայս**

**Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն Ֆոն Բեքման Հոլվեգին**

82.

**Գերմանա-հայկական ընկերություն** Պոտսդամ, 18 հունիսի 1915թ.

Սոֆիայից ստացա հետևյալ հեռագրերը.

Հեռագրված է Սոֆիայից 14-ին, 6-րդ ամիս

Ընդունված է Պոտսդամում 16-ին, 6-րդ ամիս

«Աքսորված հայերից Ալնունին, Հայկը, Չարդարյանը, Մինասյանը այժմ ուղարկված են Անկարա՝ զինվորական ատյանի առաջ կանգնեցնելու համար: Հայաստանը մաքրում են հայերից: Երզնկայից, Մարաշից, Հաճընից, Այնթապից հայ բնակչությունն արտաքսվել է Միջագետքի խորքերը: Չանգվածաբար քսորում են Կիլիկիայի ողջ հայությանը: Աք-

սորում են նաև Կ. Պոլսից: Բոլորը հուսահատության մեջ են: Խնդրում են մեզ տեղյակ պահել ձեռնարկված քայլերի մասին»:

Հեռագրված է Սոֆիայից 17-ին, 6-րդ ամիս

Ընդունված է Պոտսդամում 18-ին, 6-րդ ամիս

«Կ. Պոլսում մահապատժի են ենթարկվել 20 հնչակյաններ: Նույն ճակատագիրն է սպասում Անկարա քսորված դաշնակցականներին: Խնդրում ենք անել հնարավոր ամեն բան այս դժբախտությունը կասեցնելու համար»:

**Դոկտոր Յոհանես Լեփսիուս**

**Արտաքին գործերի գերատեսչությանը**

83.

(Արտաքին գործերի գերատեսչություն)

Հեռագիր

Բեռլին, 18 հունիսի 1915թ.

Բերայի գերմանական դեսպանությանը

Գերմանա-հայկական ընկերությունը լուր է ստացել, որ մահապատժի են ենթարկվել 20 հնչակյաններ և որ Անկարա քսորված և ուղևորված դատարան ներկայացված դաշնակցականներին նույն ճակատագիրն է սպառնում: Նրանց մեջ են գտնվում օրինապահ հայերի աչքի ընկնող առաջնորդներ, ինչպիսիք են Ալնունին, Չարդարյանը և ուրիշներ: Եթե լուրը ճիշտ լինի, ապա երկյուղ կա, որ մինչև այժմ օրինապահ հայերը կանցնեն Անտանտի կողմը, և հուզումնալից լայն թափ առնելով, կվերածվի խռովությունների և մահափորձերի՝ այդտեղի իշխողների դեմ: Խնդրում են զգուշացնել Բ. Դռանը՝ անխտեն քայլեր չձեռնարկել և միջնորդել, որ կասեցվի դաշնակցական առաջնորդներների դեմ հնարավոր մահվան դատավճռի կիրառումը:

Յիսերման

84.

(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 18 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 19 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Էրզրումի դաշտավայրից արտաքսված հայերը Երզնկայից դեպի  
Խարբերդ ճանապարհին ենթարկվել են հարձակման քրդերի և նման  
խուժանի կողմից: Տղամարդկանց և երեխաների մեծ մասին սպանել են,  
կանանց՝ հափշտակել: Կառավարությունը չի կարող կամ չի ուզում որևէ  
բան անել արտաքսվածներին պաշտպանելու: Ի՞նչ քայլեր պետք է ձեռ-  
նարկել այս խնդրում և հետագա սպանդները կանխելու համար:

Շոյբներ

85.

(Էրզրումի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 18 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 19 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ճիշտ են արդյոք Ադանայի հայկական ապստամբության վերաբե-  
րյալ լուրերը: Խնդրում են հեռագրով հաղորդել այդ մասին:

Շոյբներ

86.

(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 19 հունիսի 1915թ.

Քահանա Էմանին,

Մամուրեթ ու Ազիզի գերմանական միսիայի կայան

Ի պատասխան հունիսի 18-ի հեռագրի:

Ներքին գործերի նախարարության տված տեղեկության համաձայն՝  
այդտեղի հայ բնակչության արտաքսում նախատեսված չէ:

Վանզենհայմ

87.

(Հալեպի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 21 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 22 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղի վալի Ջելալ բեյը հրահանգ է ստացել Անկարայի վալիի հետ  
փոխանակել տեղերը: Ետ կանչելը բացատրվում է Հայկական հարցի  
նկատմամբ նրա բռնած դիրքով: Ջելալ բեյը Հալեպի վիլայեթից մինչև հի-  
մա ոչ մի հայ չի արտաքսել, երաշխավորելով, որ նրանք խաղաղ են: Հա-  
վանաբար կառավարությունը ցանկանում է այստեղ էլ ազատ գործելու  
հնարավորություն ունենալ:

Ետ կանչելը ցավալի է՝ թուրքական շահերից ելնելով:

Ռյուպեր

88.

(Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 21 հունիսի 1915թ.

Երզրումի գերմանական հյուպատոսությանը

Թախանձագին խնդրում եմ վալիին ներկայացնել, որ այսպիսի անոթալի դեպքերը վնասում են կառավարության վարկին Թուրքիայի բարեկամների մոտ ու չեզոք արտասահմանում և հեղինակագրկում իշխանություններին երկրի ներսում: Ռուսների և հայերի պատժամիջոցներն ու վրեժխնդիր գործողությունները նրանց կողմից գրավված շրջաններում այս ամենի անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով կոժվարանա մա Թուրքիայի դիրքը ապագա հաշտության բանակցությունների ժամանակ և կրկին առիթ կտրվի հզոր պետություններին խառնվելու հայկական գործերին: Եթե մենք չենք կարող առարկություններ անել այդ միջոցառումների դեմ, քանի որ դրանք արդարացվում են պատերազմական վիճակից ելնելով, ապա պետք է ավելի եռանդագին ջանանք, մաև հանուն մեր շահերի, որպեսզի տեղի չունենան անգեմ բնակչության կոտորածներ: Տեղական իշխանությունների պարտքն է բոլոր միջոցներով արգելել նման դեպքերը, եթե նրանք չեն ուզում ծանր պատասխանատվություն վերցնել իրենց վրա:

Ձեր անձնական հաղորդագրության առթիվ հայտնում եմ, որ նույն իմաստով առարկություններ կանեմ Բ. Դռանը:

Վանգենհայմ

89.

Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն

Հեռագիր

Բերա, 22 հունիսի 1915թ.

Ադանայի գերմանական հյուպատոսությանը

Լուրեր են ստացվել, թե Ադանայում հայկական ապստամբություն է բռնկվել: Խնդրում եմ այդ մասին հեռագրով հաղորդել:

Վանգենհայմ

90.

(Ադանայի կայգերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Ադանայից 23 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 23 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ադանայի վիլայեթում հայերի ապստամբություն չկա: Այստեղ ամենուրեք իշխում է խաղաղություն և կարգապահություն:

Բյուզե

91.

(Երզրումի կայգերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Երզրումից 21 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 23 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հունիսի 19-ին և 20-ին այստեղից տեղահանվեց արտաքսված հայերի

երկրորդ խումբը՝ մոտավորապես 300 ընտանիք: Իմ բողոքի և 18-ի հեռագրում հաղորդված դեպքերի հետևանքով վալին ուղեկցելու համար տրամադրել է 100 ժանդարմ:

**Շոյբներ**

92.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Էրզրումից 22 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 23 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հրահանգի համաձայն առարկություններ արեցի վալիի մոտ: Նա խոստովանեց դեպքերի խայտառակությունը, ափսոսաց դրա համար և խոստացավ հնարավոր ամեն ինչ անել նման դեպքերի կրկնությունից խուսափելու: Վալիին խնդրեցի բանակի հրամանատարությանը տեղյակ պահել իմ առարկությունների մասին:

**Շոյբներ**

93.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Բերայից 23 հունիսի 1915թ.  
Ստացված է Բեռլինում 24 հունիսի 1915թ.

Արտաքին գործերի գերատեսչությանը

Հայոց պատրիարքն ուրախությամբ կողջունի դոկտոր Լեփսիուսի ճանապարհորդությունն այստեղ: Թերևս այն կօժանդակի մեր նկատմամբ վատ տրամադրված հայկական շրջանների վրա բարերար ազդեցություն

գործել: Սակայն ներքին գործերի նախարարը դրանից ոչ մի հաջողություն չի խոստանում և ափսոսում է, որ դոկտոր Լեփսիուսին չի կարող բույլ տալ մուտք գործելու նահանգներ: Ամեն դեպքում հայտնում է, որ նրան բույլատրված է զալ այստեղ:

**Վանգենհայն**

94.

Տրապիզոնի կայզերական հյուպատոսություն

**Հեռագիր**

Ուղարկված է Տրապիզոնից 24 հունիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 25 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Գարահիսարում բռնություններ կատարվեցին հայերի դեմ: Այստեղ այսօր սկսվեցին ձերբակալություններ տեղափոխման նպատակով: Վալին ինձ հաստատ խոստումներ տվեց, որ նույնիսկ հայերի ապստամբության դեպքում երիտթուրքական կոմիտեները և այլ անպատասխանատու անձինք կմեկուսացվեն, և հայերի արտաքսման իրագործումը կթողնվի միայն իշխանությունների վրա: Այդպիսով, հնարավորին չափ կկանխվի հայերի դեմ բռնությունների վտանգը:

**Բերգֆելդ**

95.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

**Հեռագիր**

Բերա, 25 հունիսի 1915թ.

Տրապիզոնի գերմանական հյուպատոսությանը

Հունիսի 24-ի հեռագրի պատասխանը: Վերջերս Էրզրում, Դիարբեքիր և այլ տեղեր արտաքսված հայերը կր-

կին ենթարկվել են ելուզակների հարձակմանը, կարծում են՝ սպանվել են ուղեկցող անձնակազմի կողմից: Ելնելով դրանից, համառորեն խնդրում են խորհուրդ տալ վախի՛ն, որ փոխադրման ժամանակ հոգ տանի հայերի պաշտպանության համար:

**Վանզենհայմ**

96.

Մամուրեթ ու Ազիզի գերմանական օգնության միություն

Հեռագիր

Մամուրեթ ու Ազիզ, 26 հունիսի 1915թ. Ստացված է 27 հունիսի 1915թ.

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Վերջին ժամանակներս, ամեն տեսակի նեղություններից հետո, հիմա էլ հրաման է արձակվել՝ քաղաքի և գավառի ամբողջ քրիստոնյա բնակչությանը անխտիր բռնագաղթի ենթարկել: Հանուն մարդասիրական սկզբունքի խնդրում են բարեխոսել, որ անմեղների, տկարների և ծերերի հանդեպ գուր ցուցաբերվի: Բացի այդ՝ Ձերո գերագանցությանը աղաչում են պաշտպանության տակ վերցնել մեր հիմնարկները և բոլոր ծառայողներին:

**Էհման**

97.

Տրապիզոնի կայզերական հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Տրապիզոնից 26 հունիսի 1915թ. Ստացված է Բերայում 27 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը Այսօր հրատարակվեց հայտարարություն, համաձայն որի՝ հայերը, անգամ կանայք և երեխաները, հինգ օրվա ընթացքում պետք է մեկնեն:

**Բերգֆելդ**

98.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Էրզրումից 26 հունիսի 1915թ. Ստացված է Բերայում 27 հունիսի 1915թ.

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Վերջերս զլխավոր հրամանատարը հրաման է արձակել Էրզրումից արտաքսել բոլոր հայերին: Ռազմական տեսակետից չլիմնավորված և ըստ իս, միայն ռասայական ատելությունից բխող այս հրամանը եթե իսկապես իրագործվի, բանակի համար ևս վտանգավոր է, քանի որ բոլոր զինվորական աշխատողները, վարորդները և այլն հայեր են:

**Շոյբներ**

99.

(Մամսունի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Մամսուն, 27 հունիսի 1915թ.

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Կառավարությունը վճռել է ողջ հայ ժողովրդին արսորել Միջագետք՝



իրենց տեղական գործերը կարգավորելու համար տալով հնգօրյա ժամկետ:

**Կուրիոզ**

**100.**

*Տրապիզոնի կայզերական հյուպատոսություն*

**Հեռագիր**

*Ուղարկված է Տրապիզոնից 27 հունիսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 28 հունիսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հունիսի 26-ի իմ հեռագրի կապակցությամբ

Միայն Տրապիզոնի վիլայեթից տեղահանվել են երեսուն հազար մարդ: Այդպիսի զանգվածային փոխադրումը հարյուրավոր կիլոմետրեր ձգվող ճանապարհներով, անապատան ու անսնունդ, ավելացրած, որ 300 կիլոմետրը վարակված է բժավոր տիֆով, մեծ զոհեր կիսի հատկապես կանանցից և երեխաներից: Այս դեպքում կտուժի ոչ միայն Թուրքիայի, այլև նրա դաշնակիցների բարոյական հեղինակությունը: Չերդ գերագանցություն, ելնելով մարդասիրական տեսակետից և արժանապատվությունից, ես իմ պարտքն եմ համարում մատնանշել զանգվածային տեղահանությունների վտանգը: Այստեղի վալին հենվում է Կ. Պոլսից ստացված ցուցումների վրա:

Նույն նկատառումներով իմ ավստրիացի գործընկերը գեկուցել է իր դեսպանությանը:

Գուցե բուրբական կառավարությունը ձեռք բաշի կանանց և երեխաներին արքորելուց կամ բավարարվի մոտակա վայրերում տեղավորելով նրանց, ովքեր կամովին չեն հետևի իրենց ամուսիններին:

**Բերգֆելդ**

**101.**

*Արտաքին գործերի գերատեսչություն*

*Բեռլին, 28 հունիսի 1915թ.*

**Հեռագիր**

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ինչպես պարզել է Լեփսիուսը, Վոանյանին՝ Վանի երեսփոխանին և դաշնակցականների առաջնորդին, բերելու են Կ. Պոլիս, որ մահապատժի ենթարկեն: Լեփսիուսը խնդրում է միջամտել:

**Ֆիներման**

**Ծանուցում**

Հայերի շրջանում այդ մասին մանրամասնություններ հայտնի չեն: Պատրիարքն այսօր ինձ ասաց, որ Վոանյանը ձերբակալվել էր մեկուկես ամիս առաջ և հեռացվել Վանից, երբ Վանը դեռևս բուրբերի ձեռքում էր ու փոխադրման ժամանակ սպանվել Բիթլիսում:

**5/7 Մորդման**

**102.**

*(Տրապիզոնի կայզերական հյուպատոսություն)*

**Հեռագիր**

*Ուղարկված է Տրապիզոնից 29 հունիսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 1 հուլիսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հայ ընտանիքները հրաման են ստացել՝ պատրաստ լինել վաղը երկույան մեկնելու: Իմ բոլոր գործընկերների հետ միասին այն կարծիքին են, որ հունիսի 27-ի հեռագրում նկարագրված պայմաններում կանանց և երեխաների փոխադրումը հավասարազոր է զանգվածային կոտորածի: Ես շարունակում եմ իմ փորձերը՝ ազդել այստեղի վալիի վրա, որ բացառություններ արվեն: Սակայն մեծ թվով կանանց և երեխաներին այս տե-

ղահանությունից բացառության կարգով փրկել հնարավոր է միայն Բ. Դ-ուան հրահանգի միջոցով:

**Քերգֆելդ**

103.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Հալեպից 29 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 29 հունիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Չոհրապը և Վարդգես էֆենդին՝ երկու հայտնի հայ երեսփոխաններ, ներկայումս գտնվում են այստեղ, նրանց փոխադրելու են Դ-իարբեքիր:

Այն ամենից հետո, ինչ հայտնի է այդտեղից, կարելի է ենթադրել, որ սա նրանց համար մահ է նշանակում: Չոհրապը սրտային հիվանդ է, Վարդգեսի կինը նոր է ծննդաբերել:

Թախանձագին խնդրում են միջնորդել, որ նրանց թույլատրվի մնալ Հալեպում:

Այս հեռագիրը գրում են մի բարձրաստիճան մահմեդականի միջնորդությամբ:

**Ռյուսլեր**

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

12 հուլիսի 1915թ.

**Ծանուցում**

Ըստ Սսի կաթողիկոսի սույն ամսվա 18-ին Հալեպից ուղարկված հաղորդագրության, Չոհրապից և Վարդգեսից բացի այնտեղ էին գտնվում նաև դոկտոր Թազվորյանը, Ակնունին, Չարդարյանը («Ազատամարտ» թերթի զլխավոր խմբագիր) և Հայկը («Ազատամարտ»-ի աշխատակից):

Ինչպես վերջերս ինձ պատմեց պատրիարքը, Դ-իարբեքիրում գործերը վատ են: Քսան հայի նախաքննության ընթացքում ծեծել են մինչև մահ, այնտեղի եպիսկոպոսը հուսահատությունից ինքնասպան է եղել: Վարդգես էֆենդին հակահեղափոխության ժամանակ շարաքներ շարունակ իր մոտ էր քաքրել հայտնի Հալիլ բեյին:

**Մորդման**

104.

(Էրզրումի կայզերական հյուպատոսություն)

**Հեռագիր**

Ուղարկված է Էրզրումից 30 հունիսի 1915թ.

Ստացված է Բերայում 2 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հունիսի 18-ի հեռագրի կապակցությամբ:

Ճանապարհին սպանված հայերի թիվը կազմում է երեք հազար:

**Շոյքներ**

**Հուլիս**

105.

*Տրապիզոնի կայզերական  
հյուպատոսություն*

**Հեռագիր**

*Ուղարկված է Տրապիզոնից 2 հուլիսի 1915թ.  
Ստացված է Բերայում 2 հուլիսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Վալին բացառություն արեց 10 տարեկանից ցածր երեխաների համար:

Էրզրումից Երզնկայով այստեղ հասած ենթասպան վատ բաներ հաղորդեց. Մամախաթունի և Երզնկայի միջև նա հանդիպել է մոտավորապես 400 ուժեղ տղամարդկանցից բաղկացած մի ավազակախմբի, որոնց առաջնորդները ֆրանսերեն էին խոսում<sup>1</sup>: Նրանք, ինչպես երևում է, սպասում էին Էրզրումից եկող հայերին: Երզնկայի և Սպիկորի միջև ենթասպան հանդիպել էր հայ կանանց, որոնք սովածությունից խոտ էին ուտում: Վերջապես նա հաստատ աղբյուրից իմացել էր, որ Երզնկայից տեղահանված հայերն սպանվել են զինվորականների կողմից՝ Երզնկայի ետևում ընկած լեռներում:

**Բերգֆելդ**

106.

*Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն*

*Բերա, 7 հուլիսի 1915թ.*

Մոտավորապես 14 օր առաջ հայ ազգաբնակչության արտաքսումը սահմանափակվում էր պատերազմական թատերաբեմի հարևանությամբ

<sup>1</sup> Երիտթուրքական կոմիտեի անդամներ: Հմմ. N 109 և 176:

գտնվող արևելյան գավառներով և Ադանայի վիլայեթի մի քանի շրջաններով: Դրանից հետո Բ. Դուռը որոշեց այդ միջոցառումները տարածել նաև Տրապիզոնի, Մամուրեթ ու Ազիզի ու Սեբաստիայի նահանգների վրա և սկսեց իրագործել արտաքսումը՝ չնայած այդ տեղանքներին ներկայումս ոչ մի բշտամական ներխուժում չի սպառնում: Այս հանգամանքը և վերաբնակեցման անցկացման եղանակը ցույց են տալիս, որ կառավարությունը իրականում նպատակ է հետապնդում բնաջնջել հայ ցեղը թուրքական կայսրությունում:

Այդ առթիվ թույլ տվեք իմ նախկին զեկույցներին ավելացնել նաև հետևյալը.

Ինչպես հաղորդում է կայզերական հյուպատոսը, հունիսի 26-ին այստեղի հայերը հինգ օրվա ընթացքում մեկնելու հրահանգ են ստացել: Նրանց ունեցվածքը մնալու է իշխանությունների պաշտպանության ներքո: Բացառություն են կազմել միայն հիվանդները, հետո թույլ է տրվել բացառություն անել նաև այրիների, որբերի, ծերերի և հինգ տարեկանից ցածր երեխաների համար: Սակայն, ըստ ավելի նոր տեղեկության, բացառությունները մեծ մասամբ կրկին վերացվել են, և տեղում մնում են միայն երեխաներն ու քայլելու անընդունակ մարդիկ, վերջիններս տարվել են հիվանդանոցներ:

Միայն Տրապիզոնի վիլայեթից տեղահանվել է 30000 հայ, որոնք Երզնկայով պետք է տարվեն Միջագետք: Այսպիսի զանգվածային փոխադրումը հարյուրավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող նշանակման վայրը, առանց փոխադրամիջոցների, այնպիսի վայրերով, որտեղ չկա ոչ ապաստան և ոչ էլ սնունդ և որոնք վարակված են այնպիսի համաճարակային հիվանդություններով, ինչպես բժավոր տիֆն է, բազմաթիվ զոհեր կխլի հատկապես կանանցից և երեխաներից: Բացի այդ վերաբնակվողների ճանապարհն անցնում է Դերսիմի քրդական շրջաններով, և Տրապիզոնի վալին հյուպատոսին, որը նրան այս հրահանգի կապակցությամբ առարկություններ էր արել, բացեիքաց հայտարարել է, որ ինքը փոխադրման անվտանգությունը կարող է երաշխավորել մինչև Երզնկա: Այստեղից սկսած արտագաղթողներին ուղղակի թողնում են քրդերի և այլ ելուզակների հրոսակախմբերի հարվածների տակ: Այսպես, օրինակ, Էրզրումի դաշտավայրից արտաքսված հայերը Խարբերդի ճանապարհին հարձակման են ենթարկվել, տղամարդիկ և երեխաները սպան-

վել, կանայք հափշտակվել են: Էրզրումի կայզերական հյուպատոսի տեղեկության համաձայն այս դեպքերի ժամանակ սպանված հայերի թիվը 3000 է:

Տրապիզոնում հայերը զանգվածաբար հավատափոխ են եղել, որպեսզի խույս տան սպառնացող արքայից և փրկեն իրենց կյանքն ու ունեցվածքը:

Չհաշված այն նյութական վնասին, որ հասցվում է թուրքական պետությանը աշխատավոր և կուլտուրական բնակչության տարրին սեփականագրվելու և արտոբյու հետևանքով, որի տեղը գրաված քրդերն ու թուրքերն առայժմ արժանի փոխարինող չեն, զգալիորեն վնաս է հասցվում նաև մեր առևտրական շահերին և այդ վայրերում գոյություն ունեցող գերմանական բարեգործական հաստատություններին:

Բացի այդ, Բ. Դուռը թերագնահատում է այս և մյուս բռնի միջոցառումների (ինչպես օրինակ զանգվածային մահապատիժները այստեղ և երկրի ներսում) ազդեցությունը արտասահմանի կարծիքի և ապագա հաշտության բանակցությունների ժամանակ Հայկական հարցի քննարկման հետևանքների վրա:

Ուստի ես անհրաժեշտ եմ համարում Բ. Դուռն ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մենք բնակչության տեղահանությանը հավանություն ենք տալիս այնքանով, որքանով այն անհրաժեշտ է ռազմական նկատառումներից ելնելով և ծառայում է ապստամբությունների դեմն առնելու համար, սակայն այս միջոցառման անցկացման ժամանակ տարագիրները պետք է պաշտպանվեն թալանից և կոտորածներից: Որպեսզի այս առարկություններն անհրաժեշտ տպավորություն գործեն, ես դրանք շարադրեցի գրավոր հուշագրի ձևով, որը սույն ամսվա 4-ին անձամբ հանձնեցի մեծ վեզիրին: Հետո այս հուշագրի պատճենները հանձնեցի արտաքին և ներքին գործերի նախարարներին:

**Վանգեհայ**

**Նորին գերագնացություն ռախականցլեր պարոն ֆոն Բերման Հուլվեզին**

**Հավելված (Ֆրանսերեն)**

**Կայզերական Գերմանիայի դեսպանություն**

Բերայի գերմանական դեսպանության հուշագիրը՝ հանձնված մեծ վեզիրին, 4-ը հուլիսի 1915թ.

Գերմանական կառավարությունը որևէ առարկություն չունի Արևելյան Անատոլիայի հայ բնակչության դեմ օսմանյան կառավարության պատժիչ միջոցառումների դեմ, որոնք թելադրված են ռազմական նկատառումներով և օրինական ինքնապաշտպանության միջոց են, քանի որ այդ միջոցառումները նպատակ ունեն ամրապնդել Թուրքիայի ներքին քաղաքականությունը և զերծ պահել նրան զինված ապստամբության փորձերից:

Այդ նկատառումով գերմանական կառավարության հայացքները լիովին համընկնում են Բ. Դուռն բացատրություններին՝ ի պատասխան այն կշտամբանքների, որոնք Անտանտի մեծ տերությունները վերջերս հասցեագրել են նրան՝ այսպես ասած այն ոճրագործությունների պատճառով, որոնք տեղի են ունեցել հայերի հանդեպ Թուրքիայում:

Մյուս կողմից գերմանական կառավարությունը չի կարող անտեսել այն վտանգը, որ ստեղծվում է այս միջոցառումների, առանձնապես զանգվածային տեղահանությունների պատճառով, որին ենթակա են թե՛ մեղավորները և թե՛ անմեղները, դրան ավելացրած, որ այդ միջոցառումներն ուղեկցվում են բռնություններով՝ կոտորածներով և թալանով: Դժբախտաբար, ըստ դեսպանությանը հասած տեղեկությունների, տեղական իշխանություններն ի վիճակի չեն եղել կասեցնել նման միջադեպերը, որը շատ ցավալի է:

Եվ ինչպիսի հաղորդումներ էլ տրվեն, թշնամաբար տրամադրված մեծ տերությունները կարող են օգտվել դրանից, որպեսզի ազիտացիա տանեն հայերի մեջ, իսկ լուրերը, որոնք տարածվում են արտասահմանում, մեծ հուզում կառաջացնեն չեզոք երկրներում, հատկապես Միացյալ Նահանգներում, որի ներկայացուցիչները որոշ ժամանակից ի վեր սկսել են հետաքրքրվել Թուրքիայում ապրող հայերի ճակատագրով: Գերմանական կառավարությունը, որպես Թուրքիայի բարեկամ և դաշնակից պետություն, պարտավորված է զգում Բ. Դուռն ուշադրությունը հրավիրելու այն հետևանքների վրա, որոնք կարող են վնասակար ազդեցություն գործել նրանց ընդհանուր շահերի վրա, ինչպես ներկայիս պատերազմի ժամանակ այնպես էլ ապագայում: Նա (գերմանական կառավարությունը) պետք է կանխատեսի, որ հաշտության պայմանագրի ընդունումից հետո

Հայկական հարցը արտասահմանյան տերություններին Թուրքիայի ներքին գործերին միջամտելու նոր առիթ կտա: Դեսպանությունը կարծում է, որ անհրաժեշտ է շտապ պարտադրիչ ցուցումներ տալ նահանգական իշխանություններին՝ արդյունավետ քայլերի դիմելու, ինչպես փոխադրման ընթացքում այնպես էլ նոր բնակավայրերում տարագրված հայերի կյանքն ու սեփականությունը ապահովելու համար: Նա (դեսպանությունը) գտնում է նաև, որ խռհեմությունը պահանջում է միաժամանակ դադարեցնել մահվան դատավճռի կիրառումը այն հայերի նկատմամբ, ովքեր կանգնել կամ պիտի կանգնեն զինվորական ատյանների առջև մայրաքաղաքում կամ գավառներում և ամենից առաջ՝ Դիարբեքիում ու Ադաճայում:

Վերջապես գերմանական դեսպանությունը խնդրում է, որ Օսմանյան կայսրությունը հաշվի առնի Գերմանիայի առևտրական և բարեգործական հաստատությունների հետ կապված բազմաթիվ շահերը այն նահանգներում, որտեղ ներկայումս անց է կացվում հայերին արտաքսելու քաղաքականություն: Քանի որ վերջիններիս շտապ մեկնումը լուրջ վնաս է հասցնում այդ շահերին, դեսպանությունն իրեն պարտավորված կգզար, եթե Բ. Դուռն առանձին դեպքերում երկարացներ տեղահանությունների ժամկետները և բարեգործական հաստատությունների անձնակազմին պատկանողներին, ինչպես նաև սաներին, որբերին և կախյալ այլ անձանց թույլ տար մնալու իրենց տեղում, իհարկե, բացառությամբ նրանց, ովքեր մեղավոր են ճանաչվել այնպիսի արարքներում, որոնք անհրաժեշտ են դարձնում նրանց հեռացումը:

107.

(Հալեայի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեայից 8 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 9 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Վերջերս Ջեմալ փաշայի կողմից կրկին խիստ հրամաններ են ար-

ձակվել, որոնց նպատակը հայկական կոտորածների կանխումն է:

Նա առաջարկեց կառավարությանը՝ 3-րդ բանակի ոլորտի համար էլ նման հրահանգներ տալ: Նրա հրամանների բնագավառը տարածվում է դեպի արևելք, ներառյալ Ուրֆան, մինչդեռ Դիարբեքիքը պատկանում է 3-րդ բանակին: Թողնում են Չեր հայեցողությանը նույն ոգով, ինչպես Ջեմալը, ազդել իշխանությունների վրա:

Ռ-յուսլեր

108.

Կայզերական Գերմանիայի Բերա, 9 հուլիսի 1915թ. դեսպանություն

Սույն ամսվա 8-ի քվադրությամբ Հալեայի կայզերական հյուպատոսը հաղորդում է. «Մոսուլից վերադարձած մայոր ֆոն Միկուշը զեկուցեց հետևյալը. Մոտ մեկ շաբաթ առաջ քրդերը Թել Էրմենում և հարևան գյուղում հայկական ջարդեր են կազմակերպել: Մեծ եկեղեցիներն ավերված են: Պարոն ֆոն Միկուշը անձամբ տեսել է 200 դիակ: Ոստիկանությունը և ժանդարմերիան հանդուրժել են ջարդը, թերևս՝ նաև մասնակցել դրան:

Նիսիբիսի և Թել Էրմենի միջև պահեստային զորամասերը (ազատ արձակված կալանավորները) լրիվ թալանել էին ամբողջովին կոտորված բնակիչներով մի հայկական գյուղ և հրճվանքից փայլատակող դեմքերով իրենց սպանների հետ պատմում էին կոտորածի մասին:

Ջերաբուլուսում տեսել է Եփրատով դեպի ցած քվոդ բազմաթիվ իրար կապած դիակներ»:

Նույն օրը ուղարկված մեկ այլ հեռագրում պարոն Ռ-յուսլերը հաղորդում է, որ Ջեմալ փաշան վերջերս խիստ հրամաններ է արձակել՝ իր հրամանատարության տակ գտնվող տարածքում հայկական կոտորածները կանխելու և առաջարկել է նման հրամաններ տալ երրորդ բանակի տարածքի համար:

Մնացածների քվում վերջինիս է պատկանում նաև Դիարբեքիի վիլայեթը, որտեղ հայերին հետապնդում են առանձնահատուկ դաժանությամբ: Տվյալ պահին Դիարբեքիի զինվորական դատարանը հետաքննություն է վարում դաշնակցական միության մի շարք ղեկավարների դեմ՝ նրանց դավաճանական գործողությունների պատճառով: Ենթադրվում է,

որ այս մեղադրյալները, նրանց թվում նաև այնպիսիները, որոնք նախկինում սերտ կապերի մեջ են եղել երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ, մահվան կդատապարտվեն: Այնտեղի այլ իրադարձությունների մասին այստեղ ոչ մի մանրամասնություն հայտնի չէ: Դիարբեքիի հայ եպիսկոպոս Մուրախասը անգորությունից ինքնասպան է եղել:

Սույն ամսվա 8-ին Էրզրումից ուղարկած հեռագրում պարոն ֆոն Շոյբները հաղորդում է, որ Բաբերդից, Երզնկայից և Դերջանից հասած վերջին լուրերի համաձայն, այդ տեղերում կրկին սկսվել են հայկական կոտորածներ: Ինչպես երևում է, այս արհավիրքները, իշխանությունների բողոքովությամբ, խրախուսվում են կոմիտեի միջոցով, որի անդամները, որպես երկրորդական իշխանություն, ճակատագրական դեր են կատարում այնտեղ:

**Վանգենհայմ**

**Նորին գերագանություն ռախականցլեր պարոն ֆոն Բեքման Հովեզին**

109.

Կայզերական Գերմանիայի Տրապիզոն, 9 հուլիսի 1915թ. ղեսպանություն

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո նկատելիորեն աճել է այստեղի հայերի երկյուղը իրենց կյանքի անվտանգության համար: Չնայած առաջիկա խժոժությունների համար ոչ մի նշան չկա, ես ամեն դեպքում այստեղի վալիի մոտ մտերմաբար խոսք բացեցի Տրապիզոնի և շրջակայքի քրիստոնյաների պաշտպանության մասին: Նա ինձ հաստատապես վստահեցրեց, որ նրանց դեմ ոչինչ չի ձեռնարկվի, քանի դեռ նրանք իրենց խաղաղ կյանքին, և ինձ ցույց տվեց ներքին գործերի նախարարության մի հեռագիր, որով Թալեաթ բեյը իշխանություններին հանձնարարում է պաշտպանել հայերին: Այստեղի քրիստոնյաները ևս ի վերջո, իրոք, ուրախացան մեծագույն անվտանգության համար, իսկ հայերի շրջանում կատարված մի քանի տնային խուզարկությունները, ինչ-

պես իրենք՝ հայերն են հաստատում, կատարվել են մեծ տակտով: Այս բանն առավել գնահատելի է հատկապես հիմա, երբ ծովափին ռուսահայ կամավորականները կոփում են ոչ միայն թուրքերի դեմ, այլ նաև մեծ անկարգություններ են թույլ տվել ռուսական մահմեդականների հանդեպ<sup>1</sup>: Նրանցից փախած հազարավոր մահմեդականներ հասել են այստեղ և մեծ մասամբ փոխադրվել երկրի խորքերը:

Այստեղի քրիստոնյաները չեն քաքցնում իրենց հակակրանքը Թուրքիայի և համակրանքը Եռյակ միության՝ հատկապես Ռուսաստանի հանդեպ, և դա պետք է վերագրել այստեղ տարածվող այնպիսի անիմաստ լուրերին, ինչպիսիք են Դարդանելի, Կ. Պոլսի, Էրզրումի անկումը, ռուսների ափ իջնելը Միդիայի մոտ կամ նույնիսկ սուլթանի փախուստը Բրուսա: Այնուհետև երիտթուրքական կարգերի և նրա ղեկավարների դեմ դավադրության բացահայտումը<sup>2</sup>, Վանի գավառում հայերի ապստամբությունը<sup>3</sup> և հայերի խռովությունները Թուրքիայի այլ վայրերում: Այս ամենը դրդեց Բ. Դուանը հայերի դեմ ձեռնարկել բացառիկ միջոցառումներ:

Հունիսի 24-ին ձերբակալվեցին այստեղի հայկական կոմիտեի ղեկավարները և Սասունով տեղափոխվեցին երկրի խորքերը: Նույն օրն իմացա, որ այդ հայերին արստելը ծրագրված էր եղել, և որ ենթադրվում է, թե այս առիթը կօգտագործեն հայերի դեմ բռնություններ գործելու համար: Ես վալիի ուշադրությունը հրավիրեցի դրա վրա և որոշակիորեն բացատրություններ ստացա, որ հայերի հավանական արտաքսումը, անգամ զինված ապստամբության դեպքում, առանձին անպատասխանատու անձանց մեկուսացման պայմաններում, անց է կացվելու միմիայն քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների կողմից:

Հունիսի 26-ին հայերից պահանջվեց հինգ օրվա ընթացքում պատրաստ լինել՝ երկրի խորքերը հեռացվելու: Միայն հիվանդներին թույլատրվեց մնալ, և հոգ տարվեց նրանց հիվանդանոց տեղափոխելու մասին: Նրանց արգելվեց վաճառել որևէ բան: Խանութները և կրպակները պետք է կնքվեն, բնակարանների բոլոր իրերը տարվեն որոշակի տեղ և հանձնվեն իշխանության պահպանմանը, փողը փոստով ուղարկվելու է էտապային կարգով:

Տրապիզոնի նահանգից տեղահանվելու է 30000 հայ: Այսպիսի զանգ-

1 Հմմ. հակառակ բողոքը N 29:  
2 Նկատի ունի հայ մտավորականների ձերբակալումը Կ. Պոլսում, N 39:  
3 Հմմ. հավելված N 3:

վաճառյին փոխադրումը երկար ճանապարհներով, սնունդի և ապաստարանի պակասության առկայությամբ, և այն, որ նրանք ստիպված են առաջին 300 կմ-ը անցնել բժավոր տիֆով լրիվ վարակված ճանապարհով, մեծ զոհեր կխլի հայերից, հատկապես՝ կանանցից և երեխաներից, որը իրավացի քննադատություն կառաջացնի արտասահմանում ու նաև Գերմանիայում՝ շարունակվող մնան միջոցառումների դեմ: Այդ պատճառով ես Կ. Պոլսի կայգերական դեսպանությանը տեղյակ պահեցի իրերի դրության մասին և միաժամանակ փորձեցի այստեղի վալիին համոզել մեղմացնելու արտաքսումը: Նա ուշադիր լսեց իմ առարկությունները և ընդառաջեց: Այսպիսով տեղահանությունից զերծ մնացին 10-ից ցածր տարիք ունեցող բոլոր երեխաները, այրի կանայք և որբերը, ինչպես նաև բոլոր այն կանայք, որոնք ներկայումս գուրկ են տղամարդու պաշտպանությունից, այդ թվում՝ նաև պատերազմի ժամանակ զոհվածների ընտանիքները, հիվանդներն ու հղի կանայք, ինչպես նաև կաթոլիկ հայերը: Բացի այդ, հիվանդներին ու հղի կանանց թույլատրվեց մնալ իրենց տներում և իրենց մոտ պահել ընտանիքի անդամներից մի կինարմատ՝ որպես խնամող: Թույլատրվեց երեխաներին տանել ծանոթների մոտ: Ի վերջո նաև արտաքսվողներին թույլատրվեց ոստիկանության դիրեկտորից թույլտվություն ստանալուց հետո վաճառել քանկարժեք իրերը, ինչպես նաև տան կահ-կարասիները: Տեղափոխման առաջին երկու օրն անցան ըստ այս հիմնական սկզբունքների՝ հաշվի առնել երեխաների տարիքը և կանանց հիվանդությունները: Դժբախտաբար երբորդ օրը, հավանաբար Կ. Պոլսից եկող ցուցմունքներից ելնելով, կրկին վերացվեցին բոլոր ձեռք բերված բացառությունները՝ բացի երեխաների տեղում մնալու թույլտվությունից:

Տեղափոխումը Տրապիզոն քաղաքից և մոտակա շրջակայքից ավարտվել է:

Աքսորվածների ապահովության համար վալին ինձ հանգստացնող վստահություններ տվեց: Ես հույսս դնում եմ նաև նրա եռանդի և բարի կամեցողության վրա, որ նրա իրավասության տակ գտնվող շրջանում հայերի դեմ ոչինչ չի ձեռնարկվի: Այնուհանդերձ նշաններ են երևում, որ մյուս տեղերում ծրագրվում են հայկական կոտորածներ: Օրինակ՝ Երզնկայի և Դիարբեքի միջև գտնվող լեռնային ճանապարհի վրա հայերը կոտորվել են, ենթադրվում է՝ քրդերի կողմից, իսկ Էրզրումի և Բաբերդի մոտակայքում հայտնվել են մեծ թվով ելուզակների հրոսակախմբեր՝

Ֆրանսերեն խոսող առաջնորդներով: Գնալով ավելի նկատելի է դառնում, որ մինչև այժմ լրիվ անվտանգ վայրերում կազմվում են ավելի մեծ հրոսակախմբեր: Առանց իմ կարծիքի համար ապացույցներ բերել կարողանալու, չեմ կարող ձեռքազատվել այն տպավորությունից, որ երիտթուրքական կոմիտեին պետք է ղյտել որպես գործող ուժ հայերի դեմ բռնությունների ձեռնարկելու մեջ: Կենտրոնական կոմիտեն այս ձևով ուզում է մեկընդմիջտ վերջ դնել Հայկական հարցին: Որովհետև այն հայերից, որոնք իսկապես կհասնեն իրենց նշանակման վայրը, հետագայում շատ քչերը կվերադառնան իրենց նախկին բնակավայրերը: Նրանցից շատերն արդեն չեն ունենա անհրաժեշտ միջոցներ: Այսպիսով ապագայում ոչ մի գավառում հայ բնակչության տոկոսը բարձր չի լինի: Երիտթուրքերի տեղական կոմիտեները հույս ունեն հայերի բռնագաղթման միջոցով, նրանց ունեցվածքի յուրացման շնորհիվ հարստություն ձեռք բերել և նկատի ունենալով կառավարական պաշտոնյաների կախվածությունը կոմիտեից, նրանք իրոք հուսախաբ չեն լինի իրենց հաշիվների մեջ:

Իմ այստեղի գործընկերները Կ. Պոլսի իրենց դեսպանություններին հեռագրով տեղյակ են պահել արտաքսման հրամանի մասին: Իտալիայի և Ամերիկայի ներկայացուցիչները, որոնց չի թույլատրվում իրենց դեսպանությունների հետ ծածկագրային հաղորդակցություն, ստիպված են սահմանափակվել փաստերի կարճ հաղորդմամբ: Ավստրո-Հունգարիայի հյուպատոսն իր վերադաս պաշտոնյային մատնանշել է այն մեծ վտանգը, որ ներկայացնում է կանանց և երեխաների բռնագաղթեցումը: Այստեղի վալի մոտ ավստրիացի գործընկերս միջնորդեց մի քանի երեխաների համար, իսկ ամերիկացի հյուպատոսը՝ իր պաշտպանության տակ գտնվող պարսկահայերի համար, սակայն երկուսի միջնորդությունն էլ անհաջողության մատնվեց:

Ճգնաժամային օրերին կայգերական հյուպատոսությունից ոչ հեռու գտնվող ոստիկանական տեղամասն ուժեղացվեց զինվորականներով և իմ սեփական բնակարանը աննկատելիորեն պահպանության տակ վերցվեց զինվորականների կողմից: Ես հրաժարվեցի իմ անձի, ինչպես նաև քաղաք մեկնելու և վերադառնալու համար պաշտպանությունից:

Իրև կայգերական կառավարությունը վճարեց **Դոկտոր Բերգֆելդ**

**Նորին գերազանցություն ռախականցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

110.

(Մոսուլի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 10 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 11 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ներկայումս այստեղ գտնվող Մարդինի նախկին մյութասարիֆը հաղորդեց հետևյալը.

Դիարբեքիի վալին՝ Ռեշիդ բեյը, կատաղած, արնախում շան պես մոլեզուն է իր վիլայեթի քրիստոնյաների վրա: Վերջերս Մարդինում այդ նպատակով ետ կանչված ժանդարմերիայի միջոցով մի գիշերվա մեջ հավաքել տվեց 700 քրիստոնյայի (հիմնականում հայեր), որոնց մեջ էր նաև հայոց եպիսկոպոսը և քաղաքի մոտակայքում մորթել տվել նրանց: Ռեշիդ բեյը շարունակում է իր արյունարբու գործը անմեղների նկատմամբ, որոնց թիվը այսօր անցել է երկու հազարից:

Եթե կառավարությունը վճռական միջոցներ չձեռնարկի Ռեշիդ բեյի դեմ, ապա այստեղի վիլայեթի մահմեդական հասարակ բնակչությունը ևս քրիստոնյաների կոտորածներ կսկսի: Դրությունն այստեղ օրեցօր սպառնալից է դառնում:

Կառավարությունն անմիջապես պետք է ետ կանչի Ռեշիդ բեյին և դրանով ցույց տա, որ չի հանդուրժում նրա ամոթալի արարքները: Դա կթուլացնի այստեղ տիրող ընդհանուր հուզումը:

Հուլիսյան

111.

(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)

1 1919թ. փետրվարին, երբ Ռեշիդ բեյը ձերբակալվեց հայերի դեմ գործած ոճրագործությունների համար պատասխանատվություն կրելու, ինքնասպան եղավ:

Հեռագիր

Բերա, 11 հուլիսի 1915

Մոսուլի կայզերական հյուպատոսությունը՝  
Հուլիսի 10-ի Ձեր հեռագրի բովանդակությունը ես կհաղորդեմ Բարձր  
Դուռ:

Վանգենհայն

112. (Ֆրանսերեն)

Կայզերական Գերմանիայի 12 հուլիսի 1915թ.  
դեսպանություն

Հանձնված է ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին  
Գերմանական դեսպանությունը հենց նոր վստահելի աղբյուրներից իմացավ հետևյալը.

Դիարբեքիի վալի Ռեշիդ բեյը վերջերս իշխանությունների պահանջով կազմակերպել է քրիստոնյա բնակչության կոտորածներ, առանց խտրականություն դնելու հայերի և մյուս քրիստոնյաների միջև, որոնք պատկանում են այլ դավանանքի՝ չհոգալով անգամ այն մասին, թե ով է մեղավոր և ով՝ անմեղ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալ փաստը, որը տեղի է ունեցել վերջերս.

Ռեշիդ բեյի հրամանով Դիարբեքիի ժանդարմները գնացել են Մարդին, ձերբակալել այնտեղի հայոց եպիսկոպոսին մեծ թվով հայերի և այլ քրիստոնյաների հետ միասին՝ ընդամենը 700 մարդ: Բոլոր այս մարդիկ գիշերը տարվել են քաղաքից հեռու ընկած մի վայր և այնտեղ մորթվել ոչխարների պես:

Այս պարբերաբար ջարդերի զոհերի ընդհանուր թիվն անցնում է 2000-ից:

Եթե կայզերական կառավարությունը վճռական միջոցներ չձեռնարկի Ռեշիդ բեյի դեմ, ապա վտանգ է սպառնում, որ մոտակա վիլայեթների մահմեդական հասարակ բնակչությունը ոտքի կելնի ու կսկսի քրիստոնյա ողջ բնակչության կոտորած:



113.

(Մոսուլի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 15 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 16 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ձեզիքեի մոտակայքում (Դիարբեքի Վիլայեթ) գտնվող Փեյշաբադ քաղկեղծական գյուղն անցյալ կիրակի հարձակման է ենթարկվել քրդերի կողմից, և բացառապես քաղկեղծական քրիստոնյաներից բաղկացած նրա ողջ բնակչությունը կոտորվել է:

Քանի դեռ կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում Դիարբեքի Վիլայի դեմ, չի կարելի հուսալ, որ կոտորածները կդադարեն:

Հուշդասյն

114.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 16 հուլիսի 1915թ.

Պարոն Լեփսիուսի հաղորդած փաստերը՝ հաստատում են կայզերական դեսպանությանը այլ աղբյուրներից ներկայացված տեղեկություններով, իրականությանը համապատասխանում են նաև դրա հետ կապված նկատառումները:

Չնայած մեր կրկնվող համառ բողոքներին, Բ. Դուռը շարունակում է տեղահանել հայերին և արքայազնի անբնակ վայրեր, մատնում նրանց ոչնչացման: Մենք չենք կարող Բ. Դուռնը խանգարել այդ գործում և

1 Հմմ. N 82:

ստիպված ենք նրա (Բ. Դուռն) վրա թողնել միջոցառման տնտեսական և քաղաքական հետևանքների պատասխանատվությունը:

Վանգենհայմ

Նորին գերագանցություն ռախականցիեր  
պարոն ֆոն Բեքման Հոլվեգին

115.

(Մոսուլի կայզերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 15 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 16 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Երեկ վերադարձած այստեղի վալին հաղորդում է.

1. Դիարբեքի Վիլայի հրամանով վերջերս սպանվել է Միդիաթի կայմականը (մահմեդական), որովհետև հրաժարվել էր կոտորել տալ իր շրջանի քրիստոնյաներին:

2. Դիարբեքի Վիլայեթից այստեղ արտաքսված հայերից տեղ են հասել միայն կանայք և երեխաները, սկզբնական թվաքանակի միայն մեկ երրորդն է հասել: Կանանցից ջահելները բաժանվել են քրդերի միջև: Այստեղի վալին միջոցներ է ձեռնարկել՝ Մոսուլի Վիլայեթում կոտորածների առաջն առնելու, սակայն վախենում է, որ այս միջոցառումներն արդեն շատ են ուշացել:

Հուշդասյն

116.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 16 հուլիսի 1915թ.

Ձերդ գերագանցություն, պատիվ ունեն ներկայացնել Մամսունից

կայգերական փոխյուպատոսի սույն ամսվա 4-ի քվազությամբ գեկույցի պատճեն՝ հայերի արտաքսումների վերաբերյալ: Ես հայտնեցի պարոն Կուրեռֆին, որ համաձայն եմ նրա բռնած դիրքին և դատողություններին, նրա համար ձեռք բերեցի նաև ցուցումներ՝ գերմանական շահերի պահովման վերաբերյալ: Սակայն իմ միջամտությունները Բ. Դռանը, ցավոք, նվազագույն հաջողության հույս են տալիս:

**Վանգենհայմ**

**Նորին գերագանցություն ուսիականցլեր  
պարոն Ֆոն Բերման Հոլվեգին**

Հավելված

Կայգերական Գերմանիայի  
փոխյուպատոսություն

Մամսուն, 4 հուլիսի 1915թ.

Բռնագաղթեցման միջոցառումը, որն, ըստ երևույթին, գործում է Անատոլիայի բոլոր վիլայեթների համար, անց է կացվում այնպիսի դաժանությամբ և մարդկային զգացմունքին հակառակ, որ հնարավոր չէ անտարբեր ընդունել այն: Խոսքը վերաբերում է ոչ պակաս, քան մի ամբողջ ժողովրդի բնաջնջմանը կամ իսլամացմանը, որի անդամները ոչ մի ուղղակի մասնակցություն չունենին հեղափոխական շարժմանը, այսինքն՝ անմեղ զոհեր են: Արտաքսման հրամանի անցկացման եղանակը սպառնում է այնպիսի ձևեր ընդունել, որի նմանը կարելի է գտնել միայն Իսպանիայի և Պորտուգալիայի հրեաների հետապնդման մեջ: Կառավարությունը մոլեռանդ, խիստ հավատացյալ մահմեդական տղամարդկանց ու կանանց ուղարկել է բոլոր հայկական տները՝ ազիտացիա տանելու, որ իսլամ ընդունեն, հասկանալի է՝ սպառնալիքի ներքո: Նրանց, ովքեր հավատարիմ կմնան իրենց հավատքին, ծանր հետևանքներ են սպասվում: Ինչքանով հայտնի է ինձ, այստեղ մինչև այսօր շատ ընտանիքներ հավատափոխ են եղել, և նրանց թիվը օրեցօր մեծանում է: Դժբախտների մեծ մասը մինչև հիմա դիմադրել է այդ գայթակղությանը և ամեն օր խմբերով քշվել երկրի խորքերը: Համարյա ոչ մեկին ժամանակ չտվին՝ իր գործերը կարգի գցելու: Միայն ամենամահրաժեշտ բաները հետները վերցնելով՝ նրանք ստիպված էին լքել իրենց կայքն ու գույքը: Ինչպես իմացել եմ, հիմա

նրանց պահում են ոչ շատ հեռու վայրերում, որպեսզի այնտեղ ավելի հիմնովին մշակեն՝ իսլամական կրոն ընդունելու համար: Նրանցից մի քանիսն այդ նպատակով վերադարձել են այստեղ: Մամսունի շրջակայքի բոլոր հայկական գյուղերը մահմեդականացված են, ինչպես նաև՝ Ունիեն: Հավատափոխ եղածներից բացի ոչ մեկին զիջումներ չի արվում: Առանց բացառության բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք, ծերերը, երեխաները, անգամ ծծկեր երեխաները, հին հավատքը դավանողները, բողոքականներն ու կաթոլիկները, չնայած վերջիններս երբեք չեն հարել որևէ ազգային հեղափոխական շարժման և խնայվել են նույնիսկ Արդուլ Համիդի կողմից, բոլորը պետք է հեռացվեն: Ոչ մի քրիստոնյա հայ իրավունք չունի մնալ այստեղ, անգամ արտասահմանյան քաղաքացիություն ունեցողները: Վերջիններս նույնպես պետք է արտաքսվեն: Ըստ մյուսասարիֆի վկայության՝ արտաքսվածների նշանակման վայրը Ուրֆան է:

Հասկանալի է, որ ոչ մի հայ այս նպատակավայրը չի հասնի: Երկրի խորքերից եկած լուրերը տեղեկացնում են քաղաքներից բոլոր արտաքսված մարդկանց անհայտացման մասին:

Ես փորձեցի ամենատարբեր միջոցներով ներգործել նահանգապետի վրա, որ կառավարության միջոցառումն առայժմ սահմանափակվի 17-ից 60 տարեկան արական սեռի բնակչության արտաքսումով, և որ առաջին հերթին գտնեն իսկական մեղավորներին: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն բանի վրա, թե ինչպիսի անհաճո տպավորություն կգործի նման միջոցառումը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի քրիստոնյա ժողովուրդների վրա: Ամեն ինչ իզուր էր. մոլեռանդներին մատչելի չեն բանականության հիմունքները: Որո՞նք են հետևանքները: Հայ տարրի ոչնչացումով Անատոլիայում կքայքայվի ողջ նիստուկացը, և երկար տարիներ անհնար կլինի երկրի տնտեսական զարգացումը, քանի որ բոլոր վաճառականները, արդյունաբերողները և արհեստագործները բացառապես հայեր են: Այս հանգամանքը ես բացատրեցի նահանգապետին, դժբախտաբար՝ անարդյունք:

Կարելի է կանխատեսել, թե ինչպիսի արդյունքների կհասնի Հայկական հարցը, երբ հայտնի դառնա այս ոճրագործությունը: Ողջ քրիստոնյա աշխարհի գայրույթի ճիչն անխուսափելի է: Անատոլիայում բողոքական ու կաթոլիկ միսիոներների աշխատանքը ոչնչացված է: Մեր թշնամիները դրանից գերազանց օգուտ կքաղեն, և մեր հայրենակիցներին նույնպես կպատի խորագույն վրդովմունքի զգացումը:

Եվ գործի վատթարագույն կողմն այն է, որ ողջ աշխարհն այդ բանի համար մեղքը կրարդի Գերմանիայի վրա, քանի որ բարեկամ թե թշնամի կարծում են, թե Բ. Դոան իշխանությունը լրիվ մեր ձեռքում է, և որ այդպիսի արմատական միջոցառումը կարող էր իրագործվել միայն գերմանական կողմի համաձայնությամբ:

Մահմեդականների գրգռված մոլեռանդությունը և մեր յուրահատուկ դիրքը Թուրքիայում, ներկայիս համաշխարհային իրադրությունում, ինչպես նաև Ոսկեդջուրի մոտ գտնվող ղեկավար շրջանների տրամադրվածությունը թույլ են տալիս կանխագուշակել այն դժվարությունները, որոնք մարդկայնության և գործնական բարոյականության տեսակետից կանգնած են Հայկական հարցի լուծման դեմ:

Այնուամենայնիվ, ես թույլ եմ տալիս ինձ հուսալ, որ Չերք գերագնացությանը կհաջողվի վերջ դնել երկրագնդի հնագույն և ամենադժբախտ ժողովրդի մեծ մասի կատարյալ բնաջնջմանը:

*Կուրհոֆ*

117.

*Կայգերական Գերմանիայի Բերա, 16 հուլիսի 1915թ. դեսպանություն*

Խոնարհաբար հաղորդում եմ, որ ստացա Չեր սույն ամսվա 4-ի հաճոյակատար զեկույցը, որի բովանդակությանը մեծ հետաքրքրությամբ ծանոթացա: Չեր բռնած դիրքի և Չեր գործողությունների հետ համաձայն եմ:

Իմ բազմաթիվ ջանքերը՝ թեթևացնելու այն բռնագաղթվածների ճակատագիրը, որոնք ոչ մի պատժելի գործողությունների մեջ չեն մեղադրվում, ցավոք, հաջողության նվազագույն հույս չեն տալիս: Թույլ տվեք սպասել Չեր գալիք զեկույցին:

*Ֆոն Նոյրաթ*

*Սամսունի կայգերական փոխհյուպարոսին*

118.

*(Մոսուլի կայգերական հյուպատոսություն)*

226

*Հեռագիր*

*Ուղարկված է Մոսուլից 21 հուլիսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 23 հուլիսի 1915թ.*

*Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը*

Մինչև հիմա այստեղ են հասել վեց հարյուր կանայք և երեխաներ (հայ, քաղկեդոնացի, ասորի), որոնց արական սեռի հարազատները կոտորվել են Սղերդում, Մարդինում և Փեյշղաբուրում: Մոտ օրերս սպասվում է նույնքան մարդկանց ժամանում:

Այս մարդկանց թշնամությունն անհնար է նկարագրել, շորերը նեխել են մարմնի վրա, ամեն օր քաղցից մեռնում են կանայք և երեխաներ:

Նրանց տրամադրված միջոցներից այստեղի կառավարությունը չի կարող թշնամների համար անգամ հաց գնել:

Ողջ մնացածների կյանքը փրկելու համար անհրաժեշտ է անհապաղ օգնություն, առանձնապես՝ հագուստեղենի ձեռք բերում:

Համոզված, որ գործում եմ կայգերական կառավարության ոգով, և քանի որ անհապաղ օգնությունը մարդկայնության պատվիրանն է, ես կայգերական կառավարության անունից երեկ այստեղի իշխանությանը տրամադրեցի 300 լեզ: Դրանով խիստ կարիքավորների համար ձեռք են բերվելու հաց, հագուստեղեն և կոշիկ:

*Հուլյան*

119.

*Կայգերական Գերմանիայի Բերա, 21 հուլիսի 1915թ. դեսպանություն*

*Ծանուցում՝*

Իմ կարծիքով վերջերս Բ. Դոան առաջ արած մեր բոլոր փորձերից հետո (հմմ. մեր միջնորդությունը Էրզրումում պարոն Շոյքների հայ ծառայողների, Մարաշի օգնության միության հայ անձնակազմի, Ամասիայում Ցիմերի<sup>2</sup> հայ գործավորների, Չանկըրիում՝ Պասիդյանի և Բալակյանի

1 Չոհրապի և Վարդգեսի համար նոր միջամտության կապակցությամբ:  
2 Դոկտոր Ցիմեր՝ գերմանացի, Ամասիայի մոտակայքում կալվածք ունի:

227

համար), մեր բոլոր քայլերը ապարդյուն են կամ հակառակ հաջողություն են ունենում: Յիմերի գործի վերաբերյալ Թալեաթն իբր վճռել է. «Վատ օրինակ չծառայելու համար չի կարելի բացառություն անել»: Չոհրապի և Վարդգեսի դեպքում, բացի այդ, խոսքը վերաբերում է դեռ չորոշված դատավարությանը:

Շայրահեղ դեպքում կարելի է մի փորձ ևս անել ռազմական նախարարությունում:

**Մորդման**

120.

Հալեպի կայզերական հյուպատոսություն

Հալեպ, 27 հուլիսի 1915թ.

Հայերի արտաքսման և դրա անցկացման եղանակի մասին իմ վերջին զեկուցագրի առաքումից հետո ինձ հայտնի է դարձել հետևյալը.

1. Այստեղի վալի Ջելալ բեյի հեռագրումից հետո, ինչպես և սպասվում էր, արտաքսումն այժմ տարածվել է Հալեպի վիլայեթի ծովեզրով մեկ: Ալեքսանդրեթի, Անտիոքի, Հարամի, Բեյլանի, Սուլլուկի, Քեսաբի և մյուս տեղանքների դատարկման հրամանի մասին լուրը ստացվել է հայկական աղբյուրից: Այն իրագործելու համար կարճ ժամկետ է տրված: Ալեքսանդրեթի փոխհյուպատոսն այդ մասին մինչև սույն ամսվա 17-ը տեղյակ չէր:

2. Սսի կաթողիկոսի ստացած տեղեկությունների համաձայն՝ Դիարբեքիից հարավ ուղարկված 800-1000 տղամարդիկ ոչ մի տեղ չեն հասել: Ենթադրում են, որ նրանց բոլորին սպանել են: Այստեղ խոսքը մի դեպքի մասին է, որը տեղի է ունեցել շաբաթներ առաջ:

3. Ինչպես ինձ հաղորդեցին սույն ամսվա 17-ին Եփրատով քշվող դիակների հոսքը, որը դիտվել է Ռումբալեում, Բիրեջիկում և Ջերաբուլուսում, տեղ է 25 օր: Բոլոր դիակները կապված են եղել միևնույն ձևով՝ երկուական, մեջք մեջքի: Այս համաչափությունը ցույց է տալիս, որ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե ջարդերին, այլ իշխանությունների կատարած սպանություններին: Դա նշանակում է, հավանաբար այդպես էլ կա, որ Ադյամանում զինվորները դիակները շարտել են գետը: Ինչպես

կհաղորդվի հետո, դիակների հոսքը որոշ ընդմիջումից հետո նորից սկսվել է էլ ավելի մեծ չափերով: Այս անգամ խոսքը վերաբերում է հիմնականում կանանց և երեխաներին:

4. Ինչպես իմացա լրիվ արժանահավատ աղբյուրից՝ մինչև հիմա Թեյ Աբիադում բնակվող հասակավոր շվեյցարացի ամուսնական գույզից, Թեյ Աբիադում հայերը վաճառում էին իրենց 8-14 տարեկան աղջիկներին, սկզբում երկու մեջիդիով (մեկ մեջիդին կազմում է մոտավորապես 3,50 մարկ), ավելի ուշ՝ մեկ և ավելի պակաս մեջիդիով կամ լրիվ ծրի էին տալիս: Հավանաբար նրանք ուզում էին իրենց դատրիկներին փրկել անապատի կլիմայից և բեդվիանների կողմից նրանց սպառնացող ճակատագրից: Այստեղ շտապող թուրքերը Թեյ Աբիադ գյուղում շարունակել են տարազիրների հետ սակարկել երեխաների համար: Իմ երաշխավորն ինձ հայտնեց գնորդների անունները: Թեյ Աբիադով անցնողները, որոնց առաջին խմբերը եկել են Չեթունից, և որոնց նախնական նշանակման վայրը Ռաբան է, իրենց վիճակից բթամտացել էին և լռելյայն թույլ էին տալիս վարվել իրենց հետ, ինչպես ուզում են: Նրանց բավարար չափով սնունդ էին տվել, բայց անկանոն: Թեյ Աբիադի հարավային մասում, որտեղ ջուրը շատ քիչ է, փոքր երեխաները մահանում են: Դրանից բացի, շատերը մեռնում են գրկանքներից: Արդեն մի ամբողջ խումբ ոչնչացել է ջուր չլինելու պատճառով: Գյուղատնտեսական գործիքներ նրանք չեն կարող իրենց հետ վերցնել: Ի՞նչ են ձեռնարկելու վերապրածները նշանակման վայրում:

5. Կառավարական հրամանների խստության առկայությամբ գաղթականների նկատմամբ վերաբերմունքը քիչ թե շատ կախված է առանձին պաշտոնյաների և ժանդարմների բարի կամքից, որոնց ենթակա շրջաններով նրանք անցնում են տվյալ պահին: Պատահում է, նրանց կերակրում են, պատահում է՝ ոչ:

Հալեպում, որտեղ իշխանությունների մեղքով որոշ ժամանակ սնունդը վատ էր, այժմ Ջեմալ փաշայի հրամանով, կաթողիկոսի միջնորդությունից հետո, մեծահասակների համար վճարվում է 5 մետաղիկ (20 փֆենինգ), երեխաների համար՝ 4 մետաղիկ (16 փֆենինգ): Մարդկանց թիվը, որոնք շարունակելու են ճանապարհը, ներկայումս հասել է տասնյակ հազարների: Նրանք կարող են այստեղ մի քիչ հանգստանալ:

6. Ավելի շատ նշաններ են երևում, որ կառավարությունը իր միջոցառումների անցկացումը, դիտավորյալ թե առանց դիտավորության, բաց է

բողոմու ձեռքից և թույլ է տալիս, որ դրանք վերածվեն չերքեզների և քրդերի կողմից հայկական կոտորածների:

7. Ռ-աս ուլ Այն (Բաղդադի երկաթգծի ներկայիս վերջին կայանը) վերջերս բազմաթիվ հայեր են բերվում Խարբերդից, Էրզրումից և Բիթլիսից: Խարբերդից եկած հայերը հաղորդում են, որ քաղաքից մի քանի ժամվա հեռավորությամբ դեպի հարավ ընկած մի գյուղում տղամարդկանց առանձնացրել են կանանցից: Տղամարդկանց սպանել են և դրել այն ճանապարհի աջ և ձախ կողմերում, որտեղով հետո անցել են կանայք: Մի խումբ կանայք և աղջիկներ Մարդինի և Ռ-աս ուլ Այնի արանքում լրիվ կողոպտվել են բեդվիհների կողմից: Որոնք դուր են եկել բեդվիհներին՝ տարվել են: Ի՞նչ է լինելու դժբախտների հետ, երբ նրանք ավելի խորանան բեդվիհներով բնակեցված վայրերում:

8. Տեղացի մի հայ ինձ պատմեց իր ազգականներից մեկի ընտանիքի մասին, որը բաղկացած էր 17 անձից: 7 տղամարդկանց տարել են, նրանց ճակատագիրն անհայտ է, երկու կանայք մահացել են ճանապարհի գրկանքներից, 8 հոգի են հասել Ռ-աս ուլ Այն: Ընդ որում՝ Ռ-աս ուլ Այնից սկսվում է ճանապարհի ամենավատ մասը:

9. Կ. Պոլսից արքայազնի հայտնի հայ երեսփոխաններ Չոհրապը և Վարդգեսը որոշ ժամանակ կանգ էին առել Հալեպում: Երբ կառավարությունից հրաման ստացվեց նրանց Դիարբեքի արքայազնի մասին, նրանք գիտեին, որ իրենց մահ է սպասում: Ես առիթ եմ ունեցել այդ մասին իրազեկ դարձնելու կայգերական դեսպանությանը: Նրանց ուղեկցող և այստեղ վերադարձած ժանդարմի պատմածներից հետո, թե նրանք ճանապարհին ավազակների են հանդիպել, որոնք պատահաբար գնդակահարել են երկու երեսփոխաններին, այլևս ոչ մի կասկած չի կարող լինել, որ կառավարությունը նրանց սպանել է տվել Ուրֆայից Դիարբեքի ընկած ճանապարհին:

Հայ ժողովրդի հանդեպ նկարագրված վերաբերմունքը, ըստ նվաստիս կարծիքի, այլ նկատառումներից բացի, արժանի է նաև գերմանական կողմից առանձնահատուկ ուշադրության, քանի որ այն բնակչության լայն շրջանների, ինչպես նաև մահմեդականների, կողմից վերագրվում է թուրքական կառավարության շրջանում առկա գերմանական ազդեցությանը: Նշանակում է՝ Գերմանիան է պատճառը թուրքական կառավարության որոշման համար, որի համաձայն՝ հայ ժողովուրդը պետք է ջախջախվի՝ մինչև նրա բոլորովին աննշան դառնալը: Թուրքական կա-

ռավարությունը հավանաբար կանի ամեն ինչ՝ այդ կարծիքի տարածմանը նպաստելու համար: Նա ուրախ կլինի մեզ վրա զցելու իր միջոցառումների խայտառակությունը:

Մինչայժմյան իմ հեռագրային և գրավոր հաղորդումները ցույց են տվել, որ թուրքական կառավարությունն անցել է իրական և հնարավոր հայկական խարդավանքների դեմն առնելու սահմանը, ամենից շատ իր հրահանգների ընդարձակմամբ, որոնց ամենախիստ և ամենադաժան եղանակով անցկացումը իշխանությունները համարում են իրենց պարտքը՝ անգամ կանանց և երեխաների նկատմամբ: Գիտակցաբար հայ ժողովրդի մեծ մասին ոչնչացնելու համար ձգտում են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք փոխառնված են հնադարից: Այդպիսի գործողությունը վայել չէ մի կառավարության, որն ուզում է դաշնակցել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ թուրքական կառավարությունը ցանկանում է օգտագործել այս հնարավորությունը, քանի դեռ գտնվում է պատերազմի մեջ Քառյակ միությունում, որպեսզի ապագայում ազատվի Հայկական հարցից՝ հնարավորին չափ քիչ հայկական համայնքներ թողնելով: Նա (կառավարությունը) մի քանի մեղավորների հետ զոհաբերեց ամենեղների զանգվածներ:

Հնարավոր չէ՞ արդյոք հիմա դադարեցնել հետագա արհավիրքները և փրկել գոնե Հալեպի վիլայեթի ծովափնյա շրջանի հայերին, որոնց արտաքսումը նոր է կատարվելու: Եթե նրանց արտաքսումը, ռազմական պատճառներից ելնելով, խիստ անհրաժեշտ է, հնարավոր չէ՞ նրանց փոխադրումը գոնե հետաձգել մեկ-երկու ամսով և հոգատարությամբ նախապատրաստվել՝ տրամադրելով նրանց փոխադրող կենդանիներ և սննդամթերք: Չէ՞ր կարելի արդյոք նրանց մնալ Հալեպում կամ Ուրֆայում, քանի որ հիմա արդեն խոստացել են նրանց հետագայում վերադառնալու իրավունքը:

Գերմանական կառավարությունը «Norddeutsche Allgemeine Zeitung»-ում հունիսի 9-ի թվագրությամբ հրատարակած «Օտոմանյան կառավարությունն ընդդեմ թշնամական մեղադրանքների» հուշագրում պնդում է, թե արտաքսումները ժամանակավոր բնույթ են կրում: Նա հայտարարել է. «Եթե որոշ հայեր ստիպված են եղել ժամանակավորապես տեղափոխվել կայսրության այլ շրջաններ, ապա պատճառն այն է, որ նրանք ապրում էին պատերազմական շրջանում»...

Այստեղ կարելի է նրան խոսքի վրա բռնացնել: Մի՞թե Բեյլանը, Սուլ-

լուրը, Քեսաբը և այլն, իսկապես պատերազմական շրջաններ են: Մի՞թե կանանց և երեխաների այնտեղ գտնվելը վտանգավոր է, քանի որ տղամարդիկ բոլորն էլ թշվառ են:

“Norddeutsche Allgemeine Zeitung”-ը հուլիսի 13-ի N 192 հրատարակությունում լույս է ընծայել պաշտոնական օսմանյան “Agence Milli” հեռագրային գործակալության բողոքը “Gazette de Lausanne”-ի այն պնդման դեմ, թե օսմանյան կառավարությունը պաշտպանում է Թուրքիայում ապրող հայերի դեմ գործադրվող բռնի գործողությունները, և որ այդ բռնությունները հաճախ վեր են ածվում կոտորածների: Դժբախտաբար “Gazette de Lausanne”-ի այս պնդումը շատ բանում ճիշտ է:

Թե՛լ Էրմենիի ջարդերի վերաբերյալ բացառիկ ճշտությամբ ապացուցված իմ հեռագրային հաղորդումն արդեն կար, երբ հրապարակվեց հերքումը: Քրդերի նախաձեռնած այս ջարդերը, ինչպես ապացուցվել է, իրագործվել են թուրքական կառավարության զինված ուժերի ներկայությամբ, հավանաբար նույնիսկ նրանց մասնակցությամբ:

Թուրքական կառավարությունն իր հայ հպատակներին, ինչպես հայտնի է, անմեղ մարդկանց, պատերազմական շրջաններից հեռացնելու պատրվակով հազարներով և տասնյակ հազարներով՝ թշեց անապատ, առանց բացառության թե՛ հիվանդներին և թե՛ հղիներին, ինչպես նաև զինակոչված ծառայողների ընտանիքներին, անբավարար և անկանոն կերակրեց նրանց, չապահովեց բավարար ջրով, ոչինչ չձեռնարկեց նրանց շրջանում բռնկած համաճարակների դեմ, կանանց հասցրեց այնպիսի զրկանքի և հուսահատության, որ նրանք իրենց կրծքի երեխաներին և նորածիններին թողնում էին ճանապարհների վրա, հազիվ հասունացած աղջիկներին վաճառում, իրենց փոքր երեխաների հետ նետվում գետը: Կառավարությունը նրանց հանձնեց ուղեկցող ջոկատի կամայականությանը և այդպիսով՝ խայտառակությանը, այնպիսի ուղեկցող ջոկատի, որն առևանգում և վաճառում էր աղջիկներին, թշուր թեղվիմների ճանկը, որոնք կողոպտում և բռնաբարում էին նրանց: Նա (կառավարությունը) առանց դատ ու դատաստանի տղամարդկանց գնդակահարել տվեց անմարդաբնակ վայրերում և իր գոհերի դիակները թողեց շների ու ագռավների հոշոտմանը, սպանել տվեց աքսոր թշվառ պատգամավորներին: Բանտերից բաց թողեց կալանավորների, զինվորական հագուստ

1 Մինչև հուլիսի կեսերը ավելի քան՝ 30000, Ադանայի վիլայեթից և Մարաշի մյուսասարիֆությունից: Արտաքսումները շարունակվում են:

հագրեց նրանց և ուղարկեց այն վայրերը, որտեղով պետք է անցնեին աքսորականները: Հավաքագրեց չերքեզ կամավորներին և նրանց ուղղեց հայերի դեմ: Իսկ ի՞նչ է հավաստիացնում նա (կառավարությունը) իր կիսապաշտոնական հայտարարության մեջ. «Օսմանյան կառավարությունը ... տարածում է իր բարյացակամ հովանավորությունը բոլոր ազնիվ և խաղաղասեր քրիստոնյաների վրա»:

Ե՛րբ ասած՝ աչքերիս չհավատացի, երբ տեսա այդ հայտարարությունը, և ես խոսք չեմ գտնում դրա կեղծիքի խորությունը ցույց տալու համար: Թուրքական կառավարությունը չի կարող ժխտել այն բանի պատասխանատվությունը, ինչ տեղի է ունեցել, ինչքան էլ այն առաջացած լինի անբավարար հոգատարության և կանխատեսման, միջոցառումները անցկացնող մարմինների անպետքության և իր երկրի արևելյան մասերում տիրող անարխիայի պայմանների հետևանքով: Չէ՞ որ նա կանխամտածված է թշել արտաքսվածներին այդ քառսի մեջ: Պատասխանատվությունն ընկնում է նրա վրա նաև այն դեպքում, երբ նա կորցրել էր իշխանությունը իր կողմից գործի կոչված տարրերի վրա, ինչպես հեշտությամբ պատահեց հատկապես Դիարբեքիի վիլայեթում: Այստեղ հայերի ոչնչացումը վերագրում են գերմանական կողմից հրահրմանը, և թուրքական կառավարությունը փորձում է եվրոպական հասարակության առջև իր գործելակերպը ծածկել մեր հեղինակությամբ:

Ես խոնարհաբար խնդրում եմ Չերդ գերագանցությանը՝ ուշադրության առնել, թե արդյոք Հայկական հարցի վերաբերյալ թուրքական բացատրությունները հարմա՞ր են գերմանական մամուլում հրապարակելու համար, և արդյոք վտանգ չի՞ սպառնում, որ մենք կվարկաբեկվենք մեր դաշնակիցների կողմից:

Նույն գեկույցը ուղարկում եմ կայգերական դեսպանությանը:

*Ռյուսիեր*

**Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեթման Հոլվեգին**

121.

Հալեպի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 27 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 27 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Արևելքում հայերի ջարդերի մասին այստեղ հասած հավաստի լուրերը սահմնկեցուցիչ են: Կրկին և ավելի մեծ չափերով դիակներ են քշվում Եփրատն ի վար, այս անգամ՝ հիմնականում կանանց և երեխաների դիակներ: Խոնարհաբար խնդրում են հաղորդել արտաքին գործերի գերատեսչությանը, որպեսզի գերմանական մամուլում չհայտնվեն թուրքական հերքումներ, որոնք գերմանական կողմի հավանության տպավորություն կառաջացնեն:

Ռ-յուլեր

122.

Կայզերական դեսպանություն

Հեռագիր

Բերա, 28 հուլիսի 1915թ.

Հալեպի հյուպատոսությանը

Ի պատասխան հուլիսի 27-ի հեռագրի

Այստեղից արդեն արվել է հնարավոր ամեն բան: Արտաքին գործերի գերատեսչությունը մշտապես տեղյակ է պահվել գործերի ընթացքին:

Հոհենլոհե

123.

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Էրզրում, 28 հուլիսի 1915թ.

Ինչպես պատիվ էի ունեցել հաղորդելու Ձերդ գերազանցությանը՝

սույն ամսվա 9-ի զեկույցի մեջ, դժբախտաբար այստեղ վերջին ժամանակներս նկատելի է դարձել երկրորդական իշխանության ազդեցությունը:

Դրանից բացի, հիմա էլ 3-րդ բանակի գլխավոր հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշան, որն իր գլխավոր շտաբը տեղափոխել է այստեղ, խիստ ձևով խառնվում է վիլայեթի կառավարման գործերին:

Մինչև հիմա Էրզրումում, ի տարբերություն մյուս քաղաքների, որոշ չափով մեղմ էին վերաբերվում արտաքսվածների հետ: Օրինակ, իշխանությունները խիստ անապահով ընտանիքներին մինչև Երզնկա և Սեբաստիա տրամադրում էին սայլեր: Բացի այդ, վալին թույլ էր տալիս, որ հիվանդները, առանց տղամարդկանց ընտանիքները, միայնակ կանայք մնան Էրզրումում:

Այս մարդկային վերաբերմունքին, որի կողմնակիցն էի նաև ես, հանկարծ վերջ տրվեց ինչ-որ կոմիտեի ազդեցության շնորհիվ: Հիմա էլ Մահմուդ Քյամիլ փաշան հրահանգ է տվել՝ անհապաղ և անխնա ձևով արտաքսել բոլոր հայերին:

Քաղաքում մնացած կանանցից և հիվանդներից կրկին ետ են վերցվել արդեն բաժանված մնալու թույլտվության ստացականները և նրանք քշվել են փողոց՝ դեպի որոշակի մահ:

Դա պատահեց, երբ վալին և ես Երզնկայում էինք:

Ինձ թվում է, որ այստեղի վալի Թահսին բեյը, որը հայերի հարցի վերաբերյալ ավելի մարդկային ըմբռնում ունի, քան մյուսները, անգոր է խիստ ուղղության դեմ:

Ի դեպ վերջինիս կողմնակիցները բացահայտորեն խոստովանում են, որ իրենց գործողության վերջնական նպատակը հայերի լրիվ բնաջնջումն է Թուրքիայում: «Պատերազմից հետո Թուրքիայում այլևս ոչ մի հայ չի լինի», - սա մի հեղինակավոր անձնավորության բառացի արտահայտությունն է:

Քանի որ այս նպատակին հնարավոր չէ հասնել տարբեր ջարդերի միջոցով, հույս ունեն, որ դեպի Միջագետք երկար ճամփաների զրկանքներն ու այնտեղի անսովոր կլիման կանեն մնացածը: Հայկական հարցի այս «լուծումը» խիստ ուղղության կողմնակիցներին, որոնց պատկանում են համարյա բոլոր զինվորական և կառավարական պաշտոնյաները, թվում է իդեալական: Ինքը՝ թուրք ժողովուրդը, ոչ մի դեպքում համաձայն չէ Հայկական հարցի այսպիսի լուծմանը: Արդեն հիմա իր վրա զգում է

հայերին քշելու հետևանքով երկրի վրայով այստեղ հասած տնտեսական ծանր վիճակը:

**Ֆոն Շոյբներ-Ռիխտեր**

**Նորին գերագանցություն պարոն դեսպան քարոն Ֆոն Վանգենհայմին, Կ. Պոլիս**

124.

(Մոսուլի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 28 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 28 հուլիսի 1915թ.

1. Քրիստոնյա բնակչության (ինչպես քաղկեդոնական, այնպես էլ ասորական) ապստամբությունը Մարդինի և Միդիասի միջև շարունակվում է: Դիարբեքի գնացող հեռագրագիծը խափանված է:

Այս ապստամբությունն առաջացել է անմիջականորեն քրիստոնյաների դեմ Դիարբեքի վալիի կիրառած ծայրահեղ գործողությունների պատճառով: Նրանք պաշտպանում են իրենց կյանքը:

2. Աբդուլ Ռեզակ Բեդր խանը Բայազետից Բողրի վրայով արշավում է դեպի Մոերդ, ճանապարհին քրդերը միանում են նրան: Սղերդից ընտանիքներով փախչում են:

3. Մոսուլ-Ռաս ու Այն փոստային և ճանապարհային հաղորդակցությունը կտրված է, որովհետև Նիսիբիևի տեղանքը գրավված է ապստամբներով:

4. Մինջար լեռան (Մոսուլից հարավ) եզդիները նույնպես մի քանի օր է ինչ ապստամբել են:

Հուլյան

125.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 30 հուլիսի 1915թ.

Ստացված է Բերայում 30 հուլիսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Կառավարությունը հրահանգ է արձակել, որ ինչպես Հալեպի վիլայեթի ծովափնյա շրջանը, այնպես էլ Այնթապը և Քիլիսը և քերևս նաև Մարաշը պետք է մաքրվեն հայերից, վայրեր, որոնք չեն գտնվում ո՛չ պատերազմական շրջանում, ո՛չ էլ էտապի ճանապարհին: Այնթապն ունի 32000, Քիլիսը՝ 6000 հայ բնակիչ:

Խոնարհաբար խնդրում են Ձերդ գերագանցությանը շտապ խորհուրդ տալ կառավարությանը՝ վերացնելու այս հրահանգը կամ գոնե հետաձգելու դրա իրագործումը: Նրա կազմակերպությունը ոչ մի դեպքում չի բավարարի՝ միանգամից այդպիսի զանգվածային միջոցառում անցկացնելու: Արդեն հիմա 10000 հայ է կուտակվել այստեղ: Դեյր է Չորում հավաքվել են 15000 հայեր, որոնց սնունդով ապահովումը կառավարության կողմից լրիվ անբավարար է:

Քազմաթիվ կիրք քաղաքաբնակներ ճանապարհների գրկանքների ավելի վատ են դիմանում քան գյուղաբնակները: Քանի որ նրանց հանդեպ միջոցառումներն անկանխելի են, հայերն առաջարկում են և խնդրում արտաքսման փոխարեն իրենց թույլ տալ արտագաղթելու:

Ռյուսեր

126.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Բերա, 31 հուլիսի 1915թ.

Մույն ամսվա սկզբից Դիարբեքի վալի Ռեշիդ բեյն սկսել է իր գերա-




տեսչության շրջանի քրիստոնյա բնակչության սիստեմատիկ բնաջնջումը՝ առանց ռասայի և դավանանքի խտրականության: Այսպիսով, մնացածների բվում հատկապես տուժել են Մարդինի ու Թել Էրմենի կաթոլիկ հայերը և Միդիաթի, Ջեզիրեթ իրն Օմարի և Նիսիբիհի շրջանի քաղկեդոնական քրիստոնյաներն ու չմիավորված ասորիները:

Ըստ Մոսուլի հյուպատոսության հաղորդագրությունների՝ Մարդինի և Միդիաթի միջև ընկած քրիստոնյա բնակչությունն այդ պատճառով դուրս է եկել կառավարության դեմ և ավերել հեռագրագիծը:

**Հոհեմյոհե**

**Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**



**Օգոստոս**

127.

Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 2 օգոստոսի 1915թ.

Հեռագիր

Հալեայի գերմանական հյուպատոսությանը

Ի պատասխան հուլիսի 30-ի հեռագրի

Կառավարության որոշման դեմ մեր բոլոր բողոքարկումները, որպես-  
զի ձեռք չտան արևելյան գավառների տեղացի քրիստոնյաներին, ազդե-  
ցություն չունեցան:

Հոհեևրոհե

128.

(Հալեայի կայգերական  
հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեայից 3 օգոստոսի 1915թ.

Ստացված է Բերայում 3 օգոստոսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Մինչև հիմա արևմտյան Փոքր Ասիայից արտաքսվել է մոտավորա-  
պես 40000 հայ: Եթե նրանց արտքեն մաս մեծ քաղաքներից և Հալեայի  
վիլայեթի ծովափնյա շրջաններից, ապա նրանց թիվը կհասնի 150000-ի:

Միջոցառման իրագործումն արդեն սկսվել է: Եթե ինչ-որ ձևով Թուր-  
քիայից դուրս օգնության գործ չձեռնարկվի, ապա պետք է նկատի ունե-  
ցնալ, որ հաջորդ ամիսներին հազարավոր մարդիկ սովամահ կլինեն:

Ռյուսիեր

129.

Էրզրումի կայգերական  
հյուպատոսություն

Էրզրում, 5 օգոստոսի 1915թ.

Հայերի արտաքսումն ստույգ ավարտին է հասել, այսինքն՝ այստեղի  
հյուպատոսության ծառայության շրջանում այլևս ոչ մի հայ չկա: Ինձ  
տեղին է թվում, համառոտ ամփոփելով, զեկուցել վերջին ամիսներին հա-  
յերի արտաքսման հետ կապված դեպքերի մասին:

Մինչև մայիսի սկզբները հայերն այստեղ ապրում էին ազատ ու ա-  
նարգել և կարող էին հանգիստ զբաղվել իրենց գործերով: Առանձին դեպ-  
քերը, ինչպես բանկի դիրեկտոր Պաստիրմաճյանի սպանությունը և նման  
դեպքեր, միայն անցողիկ անհանգստացնող ազդեցություն էին գործել: Ա-  
մեն դեպքում առկա էր թուրքերի կողմից կոտորածների վտանգը և ոչ ան-  
հիմն, սակայն զեներալ Փոսելդի<sup>1</sup> ներկայությունը և գործունեությունը,  
ինչպես նաև գերմանական հյուպատոսի ներկայությունը խանգարում  
էին կոտորածների սկսվելուն:

Մայիսի սկզբներին Վանի հայտնի դեպքերը հասցրին այն բանին, որ  
կառավարությունն ու զինվորական իշխանությունները խիստ միջոցա-  
ռումներ ձեռնարկեցին հայերի դեմ: Դեռևս բանակում ծառայող բոլոր հա-  
յերը հեռացվեցին և խցկվեցին աշխատանքային գումարտակներ: Էրզրու-  
մի և Բասենի դաշտավայրի բոլոր բնակիչները, որոնց կազմում միայն կա-  
նայք էին, երեխաներ և ծեր տղամարդիկ բշվեցին իրենց գյուղերից և բռնի  
ուղարկվեցին Միջագետք: Ռազմական նկատառումներով հիմնավորված  
այս միջոցառումն անցկացվեց ավելորդ խստությամբ և դաժանությամբ:  
Երզնկայի ճանապարհին՝ Մամախաթունի, Սանսարի, Եփրատի կամրջի  
և Փերեզի մոտ արտաքսվածների վրա հարձակվեցին քրդերը և թուրք ելու-  
զակները, թալանեցին ու սպանեցին նրանց: Սպանվածների թիվը հաս-  
նում է 10000-20000-ի, ըստ կառավարության տվյալների՝ 3000-4000-ի:

Նույն ժամանակամիջոցում Երզնկայի դաշտավայրի բնակիչները  
Կամախի կիրճով անցնելիս նույնպես համարյա մինչև վերջին մարդը կո-  
ղոպտվել և սպանվել են, կանայք՝ առևանգվել: Այս գործին, ինչպես իմա-  
ցել են վստահելի աղբյուրներից, մասնակցել են զինվորականներն ու

<sup>1</sup> Գեներալ Փոսելդը դեռևս 1915թ. ապրիլին ետ կանչվեց Էրզրումի բերդակալի իր պաշտոնից:

ժանդարմները:

Հունիսի սկզբներին, 14 օրվա ընթացքում, Էրզրումից արտաքսվեց հայ երևելիների առաջին խումբը: Շուրջ 500 հոգի հունիսի 16-ին հեռացան Էրզրումից և քայլեցին լեռների միջով՝ Խարբերդից դեպի Ուրֆա: Ըստ կառավարության հաղորդագրության՝ նրանցից 14-ը ճանապարհին սպանվել են, իսկ ինձ հասած մասնավոր տեղեկությունների համաձայն՝ համարյա բոլոր տղամարդիկ: Երկրորդ խումբը, մոտավորապես 3000 հոգի, Էրզրումից հեռացավ հունիսի 19-ին և 20-ին: Նրանց մի մասը, առանձնապես տղամարդիկ, Բաբերդում առանձնացվեցին, որոնց մասին ես ոչինչ իմանալ չկարողացա: Ամենայն հավանականությամբ, նրանք սպանվել են, մնացածներն առանց միջադեպերի հասան Երզնկա, որտեղ նրանք մնալու են մինչև ճանապարհների անվտանգ դառնալը: Արտաքսվածների երրորդ խումբը, շուրջ 300 ընտանիք, հունիսի 26-ին հեռացավ Էրզրումից: Նրանք մինչև Երզնկա հասան կանոնավոր, առանց միջադեպերի: Չորրորդ խումբը, բաղկացած հիմնականում արհեստավորների ընտանիքներից, որոնց կառավարությունը սկզբում տեղում մնալու ստացական էր տվել, իսկ ավելի ուշ բանակի գլխավոր հրամանատարի հրահանգով այդ ստացականները խլվեցին նրանցից, նույնպես բարեհաջող անցնելով Բաբերդը, հասավ Երզնկա: Այսպիսով, մինչև հունիսի 15-ը համարյա բոլոր հայերը արտաքսվել էին Էրզրումից: Շատ քչերը, որ դեռ մնացել էին այնտեղ, հատուկ պայմանների պատճառով, ինչպես՝ անփոխարելիությունը, հիվանդությունը և նման բաներ, կառավարությունից տեղում մնալու ստացական էին ստացել: Իմ և Էրզրումի վալիի ներկայությամբ բանակի գլխավոր հրամանատարի հրահանգով հանկարծ նրանցից էլ խլվեցին այդ ստացականները: Նրանք պետք է շատ կարճ ժամանակում հեռանային Էրզրումից, և նրանցից շատերը չկարողացան ճանապարհորդության համար իրենց հետ վերցնել ամենաանհրաժեշտ բաները: Այս վերջին խումբը Աշկալայի և Բաբերդի մոտակայքում մասամբ թալանվեց: Նրանց մեջ էին գտնվում հայ բժիշկներ ու դեղագործներ, որոնց մի մասին, իբր թե զինվորական դատարանի վճռով, Բաբերդի մոտ գնդակահարեցին: Երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերը, ինչպես արդեն ասվեց, չնչին բացառությամբ, բարեհաջող հասան Երզնկա և մնացին այնտեղ վրանաճամբարում մինչև օգոստոսի սկիզբը: Երզնկայում եղած ժամանակ ես անձամբ համոզվեցի, որ նրանց պայմանները հնարավորին

չափ լավ են: Օգոստոսի սկզբներին նրանց ուղարկեցին Ուրֆա, և նրանք բարեհաջող անցան տիրահոչակ Կամախի կիրճը: Նրանցից մի քանիսը կենդանի և առողջ հասան իրենց նշանակման վայրը, ինձ որոշակի հայտնի չէ:

Ինչ վերաբերում է հարևան վիլայեթներից արտաքսված հայերին, ապա այդ տեղերի սպանվածների թիվն ավելի մեծ է: Օրինակ, Խնուսի դաշտավայրում հայկական մեծ կոտորածներ տեղի ունեցան, իսկ Տրապիզոնի վիլայեթում համարյա բոլոր տղամարդիկ սպանվել են:

Իրոք, Երզնկայում գտնված ժամանակ այնտեղով անցնող Տրապիզոնից ժամանած հայերի մեջ ես ոչ մի տղամարդ չնկատեցի: Արտաքսման ձևը բավականին դաժան էր: Օրինակ, Տրապիզոնի հայերին միայն մի քանի ժամ էին տվել և արգելել էին իրենց իրերից որևէ բան վաճառել: Նրանք իշխանություններից փոխադրական ոչ մի միջոց չէին ստացել, այնպես որ մեծ մասը ստիպված էր ոտքով գնալ: Նման դաժան ձևով վերաբերվել էին Սեբաստիայի հայերի հետ:

Ինչ վերաբերում է այս ողջ հարցում իմ դիրքորոշմանը, ապա ես դեկավարվել եմ հետևյալ տեսակետներով.

Ինձ հայտնի է, որ մենք իրավունք չունենք պաշտպան կանգնել ինչպես նաև հովանավորել արտաքսված անմեղ հայերին:

Իմ միջնորդությունը հայերի համար, որոնք կառավարության հանդեպ ոչ մի բանով չեն մեղանչել, սահմանափակվել է նրանով, որ ես հանդես եմ եկել բռնությունների դեմ, ի պաշտպանություն նրանց կյանքի և ունեցվածքի, և հովանավորել եմ, որ ռազմական անհրաժեշտությամբ պատճառաբանված արտաքսումն անցկացվի հնարավորին չափ մարդկայնորեն: Այդ իմաստով արտաքսումն սկսվելու ժամանակ ես դիմել եմ ինչպես քաղաքացիական կառավարչությանը, այնպես էլ բանակի գլխավոր հրամանատարությանը: Երբ հայտնի դարձավ Կամախի, Խնուսի, Դերջանի առաջին մեծ կոտորածների մասին, ես, այդ իմաստով ուղարկված զեկուցագրի Չերդ գերագանցության պատասխանում տված հրահանգավորման համաձայն, շատ համառ ձևով բողոք հայտնեցի վալիին: Միաժամանակ նշեցի, որ այսպիսի ամոթալի գործողությունները վնաս են հասցնելու Թուրքիայի հեղինակությանը չեզոք արտասահմանում և նրա բարեկամների մոտ: Այնուհետև նշեցի, որ այսպիսի գործողությունները կարող են հեշտությամբ հիմք տալ օտար նոր միջամտությանը հայկական գործերին և ապագա հաշտության բանակցությունների ժամանակ

դժվարացնել Թուրքիայի դիրքը: Բացի այդ, ես համառորեն մատնանշեցի նաև այն հանգամանքը, թե այս միջադեպերի պատճառով անհաճո վիճակի մեջ կդրվի մեր կառավարությունը, և մենք դրա համար վճռականորեն կպահանջենք, որ պատասխանատու կառավարական մարմիններն ամեն պարագայում խուսափեն նման դեպքերի կրկնությունից: Վալին անմիջապես խոստովանեց, որ իմ փաստարկումը ճիշտ է, սակայն մատնանշեց, որ պատասխանատվությունը ընկնում է ոչ թե իր, այլ բանակի գլխավոր հրամանատարի՝ վրա, որի հրամանատարության ներքո է ինքը գտնվում: Նա, իմանալով ճանապարհների վտանգավորությունը, հրամայել էր հայերի արտաքսումը՝ առանց նրանց համար բավականաչափ պաշտպանություն ապահովելու: Բայցևայնպես վալին խոստացավ անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի նման միջադեպերի առաջն առնվի: Նա իսկապես ջանացել էր հոգալ աքսորվածների պաշտպանության համար, ինչքան որ հնարավոր էր կոմիտեի և այլ հեղինակավոր անձանց հակառակ մտադրությունների պայմաններում: Սակայն նրա այս ձգտումներին, որոնք բանակի հրամանատարության և կոմիտեի կողմից հանդիպեցին դիմադրության, չբավարարեցին ոչ նրա ազդեցությունը, ոչ էլ նրա եռանդը: Բայց ընդհանրապես արտաքսման ժամանակ Էրզրումի բնակիչների հետ ավելի լավ էին վերաբերվել, քան այլ քաղաքների բնակիչների հետ: Վալիի ընդառաջման և իմ ջանքերի շնորհիվ թույլատրվեցին հետևյալ արտոնությունները.

1. Մեծամասնությանը տրվեց 14 օր ժամկետ՝ մեկնման պատրաստություններ տեսնելու համար:
2. Նրանց թույլատրվեց հետները վերցնել կամ վաճառել իրենց իրերը:
3. Վաճառականների և երևելիների մի մասը հնարավորություն ունեցավ իրենց իրերը, ապրանքները և Օտոմանյան բանկում եղած արժեքները պահ տալ հայկական եկեղեցուն:
4. Միջոցներ չունեցող ընտանիքներին իշխանություններն անվճար տրամադրեցին սայլեր:
5. Այն տղամարդկանց, որոնց ընտանիքները մնացել էին առանց տղամարդու հովանավորության, բաց թողեցին աշխատանքային գումարակներից և թույլ տվեցին ուղեկցել իրենց ընտանիքներին:

Քաղաքացիական կառավարչության մեկ այլ հրահանգ, այն է՝ հի-

վանդները, միայնակ կանայք և երեխաները կարող են մնալ Էրզրումում, վերացվեց զինվորական իշխանությունների հրամանով՝ կոմիտեի պնդման համապատասխան:

Շատ ցավալի է, որ զինվորական իշխանությունների կողմից հանդուրժվող կոմիտեի և կասկածելի սադրիչների վարքը սահմանամերձ շրջաններից հայերի արտաքսումը վեր է ածել նրանց դեմ վրիժառության, բնաջնջման և թալանի գործունեության: Թուրք բնակչության խոհեմ դատող լայն շրջանների, հատկապես տեղաբնիկների կողմից բնաջնջման այդ քաղաքականությունը նույնպես հավանության չի արժանացել:

Հայկական հարցի վերաբերյալ իմ զեկուցագրերը և իմ գործունեությունն ամփոփելով, կնշեմ հետևյալը.

Այստեղ շատ տեղ կգրավեր հայկական խռովությունների պատճառներին անդրադառնալը և հետաքննելը, թե արդյոք դրանք կարելի՞ էր կասեցնել կառավարության նպատակային միջոցառումներով և գործողություններով: Որքանով ինձ հայտնի է, այդ տեսակետից ժամանակին ոչինչ չարվեց: Բացի այդ, ինքնըստինքյան հասկանալի է, որ այնտեղ, որտեղ հայ հեղափոխականների և ռուս գործակալների պահանջով ապստամբություններ տեղի ունեցան, մեղավորների դեմ գործեցին ամենայն խստությամբ: Ես նույնիսկ սպասում էի և կցանկանայի, որ կառավարության և զինվորական իշխանությունների կողմից ավելի խիստ միջոցառումներ ձեռնարկվեն վտանգավոր կետերում, սակայն ոչ հետին թվով վրեժխնդիր միջոցառումներ, ինչպես մեծ մասամբ տեղի ունեցավ: Ընդհանրապես հայերի մտադրված և նախապատրաստված ապստամբության վերաբերյալ, ըստ իս, ոչ մի ապացույց չկա:

Այն, որ սեփական կառավարության կողմից ճնշված և վատ վերաբերմունքի արժանացած, հետևապես՝ դժգոհ սահմանամերձ բնակչությունը, որն այլ ազգության և այլ հավատքի է, միանում է նույն հավատքի հաղթականորեն առաջ շարժվող թշնամուն, որը, դրան ավելացրած, իրեն ազատարարի տեղ է դնում և նրանց հրապուրում խոստումներով, ինձ թվում է, ինչքան էլ ցավալի լինի, բնական է: Այդպիսի բան պատահել է նաև այլ պատերազմական թատերաբեմերում: Դրա դիմաց նույնքան բնական են քաղաքական և զինվորական պաշտպանողական խիստ միջոցառումները: Ինձ համար, սակայն, անբնական է թվում և քաղաքակրթության հավակնող կառավարության համար անարժան, երբ այն սկզբում ոչ մի միջոցառում չի ձեռնարկում իրավացիորեն դժգոհ ժողովրդի որոշ մասերի

նախատեսվող խոսվածքները կանխելու համար՝ լինի դա հարմար զինվորական միջոցներով կամ քաղաքական բանակցություններով, այլ գրգռում է այն (խոսվածքները) իր անգործությամբ և իր ոստիկանական մարմինների ու «չեթեներին» (հեծյալ կամավորականներ) պրովոկացիոն գործելակերպով:

Այս նկատառումների հիման վրա և ուշադրության առնելով գործի ողջ վիճակը, ես, որպես գերմանական կառավարության ներկայացուցիչ, իմ պարտքը համարեցի լռելյայն չդիտել հայերի դեմ կառավարության գործունեությունը և նրանց դեմ ձեռնարկված միջոցառումները, այլ, քանի որ մենք չենք կարող արգելել այդ միջոցառումները, գոնե աշխատենք մեղմացնել արտաքսման ձևերը: Անհարմարությունները, այո՛, նաև վտանգները, որոնք երբեմն իմ դիրքորոշման պատճառով ուղեկցում էին ինձ, նաև այն պատճառով հաճույքով ինձ վրա վերցրի, որովհետև կարծում էի, թե իմ կառավարությանը միայն հաճելի կլինի իմանալ, որ նրա այստեղի ներկայացուցիչն իր տրամադրության տակ գտնվող բոլոր իրական միջոցներով հովանավորել է, որպեսզի անմեղ տառապողներին մարդկայնորեն վերաբերվեն:

Իմ այս ձգտումների ժամանակ ինձ սատար են կանգնել խելահաս մտածող բուրքերը՝ կառավարական և զինվորական շրջաններից, եթե ետ չեն կանգնել ինձ օգնելու մտադրությունից՝ կոմիտեից վախենալու պատճառով: Տեղական կոմիտեում կրկին կա բավական նվազ նշանակալից, սակայն մնացածներին ահաբեկող, անհատներից բաղկացած մի փոքր խումբ, որը, անձնական շահից և ազատությունից դրդված, հայերի դեմ բնաջնջման արշավանք է քարոզում: Ի միջի այլոց, սրանք այն մարդիկ են, որոնք իրենց անօրինակ արյունաբքու գործողություններով Թուրքիայի կողմից ժամանակավոր գրաված շրջաններում՝ Արդանուսում, Արդահանում, Օլթիում և այլուր երկար ժամանակով, եթե ոչ ընդմիջտ, վնասեցին Ռուսաստանի մահմեդական բանկիչների գործին:

Դժբախտաբար այս կասկածելի կոմիտեական ահաբեկիչների ազդեցությունը, որոնք լրիվ թշնամաբար են տրամադրված գերմանացիների հանդեպ, ավելի ուժեղ է, քան թվում է: Այդ ազդեցությունը, որ նրանք ձեռք են բերում իրենց ահաբեկչական համակարգով և այլն, ըստ իս, հնարավոր է կոտրել միայն նրանց դեմ շատ մեծ եռանդով հանդես գալով: Այդ

մարդկանց ազդեցությունը և «կառավարման մեթոդների» տարածումը վտանգավոր է ոչ միայն բուրքերի, այլև մեզ՝ նրանց դաշնակիցների համար: Քանի որ Հայկական հարցում վարվելածը պարզ ցույց տվեց, թե ինչպիսի վտանգավոր գործիք է կառավարական իշխանությունը պատասխանատվություն չկրող և միայն անձնական շահը ճանաչող մարդկանց ձեռքում:

Ես բույլ եմ տալիս ինձ՝ կցել պատերազմական ժամանակաշրջանի կամավորական Կարլ Շլիմեի՝ ձիով Տրապիզոն գնալիս տեսածի մասին զեկույցը:

*Ֆոն Շոյբներ-Ռիխտեր*

*Նորին պայծառափայլություն կայզերական  
դեսպան իշխան Հոհենլոհե-Լանգենբուրգին,  
Կ. Պոլիս*

130.

*Էրզրում, 5 օգոստոսի 1915թ.*

Ձեկուցագիր Տրապիզոն կատարած  
ճանապարհորդության մասին

Պարոն փոխիսուպատոս ֆոն Շոյբների հանձնարարությամբ հունիսի 18-ին մեկնեցի Տրապիզոն: Մինչև Բաբերդ գնացի ավստրիացի դահուկորդների միսիայի անդամների հետ միասին: Այստեղի վալին խնդրել էր պարոններին՝ իրենց հետ վերցնել մի հայ ընտանիք, այդ թվում՝ նաև այստեղի հայ եպիսկոպոսի քրոջը, որոնք Անկարա մեկնելու համար անցաթուղթ էին ստացել: Բաբերդում մեզանից պահանջեցին հանձնել հայ ընտանիքը: Երբ մենք հրաժարվեցինք, մեզանից խլեցին կառապաններին, այնպես, որ մենք ստիպված էինք ինքներս քշել կառքը: Դուկտոր Փիչմանն ինձ խնդրեց ուղեկցել նրան մինչև Երզնկա: Բաբերդում մեզանից չընդունեցին նաև հեռագրեր՝ հասցեագրված գերմանական հյուպատոսությանը: Մեր բանակցությունների ժամանակ նկատեցինք, որ ուզում են ուժով խլել հայերին: Մենք կրակելու պատրաստ պահեցինք մեր հրացանները և միայն այդպես կարողացանք անվնաս դուրս գալ Բաբերդից: Ծանապարհին նկատեցինք կոմիտեականների կանոնավոր պահակներին: Մեզ ու-

դեկցող ժանդարմները հրաժարվեցին մեզ հետ շարունակել ճանապարհը և մեզ մի քանի անգամ առաջարկեցին կոտորել հայերին: Այսպես, մշտական հարձակման սպասողական վիճակում, հասանք էրզնկա:

Այստեղ ոստիկանությունը մեզանից խլեց և ներկալեց հայ ընտանիքը:

**Կարլ Շլիմե, կամավորական**

131.

Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն

6 օգոստոսի 1915թ.

Նշում

Կապիտան լեյտենանտ Հումանի գրույցը Էնվեր փաշայի հետ Գերմանա-հայկական կոմիտեից դոկտոր Լեփսիուսի ժամանման առթիվ Էնվերը հիշատակում է իրեն հայտնի դարձած ամերիկացի մի հյուպատոսի զեկուցագիրը Միացյալ Նահանգների դեսպանին: Հյուպատոսն իր զեկուցագրում այն հետևություններն է անում, որ ամերիկյան կառավարությունը լավ կաներ, եթե մեկընդմիջտ հրաժարվեր հօգուտ հայերի քաղաքականությունից, քանի որ Թուրքիան իր հակահայկական գործողությամբ հայերի հետ հետագա քաղաքական գործունեությունն անհնարին է դարձրել: Հայերին չկոտորեցին, ինչը քաղաքական տեսակետից դեռ վատթարագույնը չէր լինի, որովհետև այդպիսի կոտորածներից հետո միշտ էլ մի փոքր կորիզ մնում է, որի վրա կարելի է կառուցել հետագա բոլոր հույսերը: Դրա փոխարեն նրանց, ինչը քաղաքական առումով շատ ավելի վատ է, ցրեցին երկրով մեկ, այնպես, որ նրանք լավ թե վատ պետք է ներծուլվեն երկրի թուրքական տարրի հետ: Դրանով, առանց այլևայլության, մեջտեղից վերանում է ապագայում Հայկական հարցով զբաղվելու հիմնապատճառը:

Այնուհետև Էնվերը պատմում է այն բոլոր նախագգուշացումների մասին, որ նա պատերազմի սկզբում արել է հայոց պատրիարքին, և միաժամանակ մատնանշում է այն հանգամանքը, որ վերջերս Սազոնովը Դումայում գովել է Թուրքիայի իրենց «հավատարիմ հայերին»:

Հայերը, որոնք մոլորեցված և հրահրված էին ռուս գործակալների

կողմից, այնպես ուժգին էին զայրացած օսմանյան բնակչության դեմ, որ Վանի վիլայեթի նախկին 150000 թուրքերից կենդանի են մնացել միայն 30000 մահմեդականներ<sup>1</sup>:

Բացի այդ Էնվերին հայտնի է մի դավադրության մասին, որի համաձայն Ադաբազար-Իզմիթ շրջակայքի մոտավորապես 30000 հայ ուզում էր օգնել ռուսներին՝ ափ իջնելու Չաքարիայի մոտ<sup>2</sup>:

Ինքն անձամբ նախարարների խորհրդում պաշտպանել է այն տեսակետը, որ հենց պատերազմը նկատի ունենալով, պետք է փորձել հայերի հետ բարությանը և խաղաղությանը յուր գնալ: Այդ բանը նա ասել էր նաև պատրիարքին, սակայն միաժամանակ նշել էր, որ արևելյան հայկական կենտրոններում ամենափոքր իսկ միջադեպի դեպքում ինքը կձեռնարկի դաժան միջոցառումներ: Բանակը, որը Կովկասում կռվում է հզոր թշնամու դեմ, պետք է անպայման վստահ լինի, որ նրա թիկունքում թշնամի չի կանգնած: Դրա համար ինքը՝ զինվորական գլխավոր հրամանատարը, հոգ կտանի բոլոր միջոցներով:

Այնուամենայնիվ, Էնվեր փաշան պատրաստ է ընդունել դոկտոր Լեփսիուսին և նրա հետ քննարկել Հայկական հարցը<sup>3</sup>:

132.

(Էրզրումի կայգերական  
հյուպատոսություն)

Էրզրում, 10 օգոստոսի 1915թ.

Արտաքին գործերի գերատեսչությանը

Հայկական հարցը, որը տասնյակ տարիներ զբաղեցրել է Եվրոպայի դիվանագիտությանը, ներկայիս պատերազմում գտավ իր լուծումը: Թուրքական կառավարությունն օգտագործեց պատերազմական վիճակը և Վանում, Մուշում, Գարահիսարում բռնկված հայկական ապստամբությունների առիթը, որպեսզի Անատոլիայի հայերին բռնի արտաքսի Միջագետք: Հայկական դպրոցները ճնշելով, հայերեն լեզվով թղթակցություններն արգելելով և նման այլ միջոցառումներով նա հույս ունի վերջ-

1 Հմմ. նախաբանը, էջ 15:

2 Հմմ. N 136:

3 Էնվեր փաշայի հետ իր գրույցի մասին դոկտ. Լեփսիուսը զեկուցել է իր «Արևելքը» ամսագրում, 1915, բրոշյուր 1/3:

նականապես ճնշել հայերի քաղաքական և մշակութային ձգտումները: Հավանաբար, կառավարությունը հույս ունի այդպիսով տնտեսապես այնպիսի վճար հասցնել հայերին, որ հետագայում նրանց համար անհնար լինի ինքնուրույն մշակութային կյանք վարելը: Բացի այդ, ուզում են այստեղ նշել այն հանգամանքը, որ կառավարական այս միջոցառումներն այնպիսի եղանակով են անցկացվում, որը հավասարազոր է հայության անպայման ոչնչացմանը: Չեն կարծում, որ այլ ձևով կհաջողվեր ոչնչացնել մի մշակույթ, որն ավելի հին է և շատ ավելի բարձր, քան բուրքերինը: Ըստ իս` հայերն ընդհանրապես իրենց մեծ տոկոսությամբ նման են իրեական ցեղին: Իրենց կրթական, առևտրական ունակությունների, հարմարվելու ընդունակությունների շնորհիվ նրանց կհաջողվեր անբարենպաստ պայմաններում տնտեսապես կրկին ուժեղանալ: Միայն բռնի բնաջնջման քաղաքականությունը, մի ողջ ժողովրդի բռնի ոչնչացումը կարող էր բուրքական կառավարությանն այդպիսով հասցնել իր փայփայած նպատակին` Հայկական հարցի «լուծմանը»: Նպատակահարմար է արդյոք հարցի այդպիսի լուծումը բուրքերին, կասկածում են: Ի հիմնավորումն դրան բերեմ հետևյալ փաստերը.

Անատոլիայի բնակիչները հիմնականում կազմում են բուրքերը, հայերը և քրդերը: Քրդերը կուլտուրապես ամենացածր մակարդակի վրա են գտնվում, հայերը` ամենաբարձր: Սերը դեպի իրենց հայրենիքը, դեպի դարեր շարունակ իրենցով բնակեցված բարձրավանդակը, նրանց բնավորության հիմնական և ամենահամակրելի գիծն է: Եթե չունենային այդ սերը, ապա նրանք, որպես ժողովուրդ, այդքան տառապանք չէին կրի: Քաղաքներում տնտեսական տեսակետից նրանք գերակշռում են, համարյա ողջ առևտուրը գտնվում է նրանց ձեռքում: Իրենց գործարար հակումով և շահախնդրությամբ նրանք հաճախ հաճելի տպավորություն չեն գործում: Թուրք վաճառականը այդ առումով քիչ է զիջում նրանց, սակայն առևտրական ունակություններով շատ ցածր է գտնվում: Որովհետև երբ որևէ բուրք մի քիչ կրթություն է ունենում և պատահաբար խոսում է եվրոպական որևէ լեզվով, նա ընտրում է չինովնիկի կարիերան և հավակնում ամենաքիչը գավառական վալիի պաշտոն: Հայերի կրթական զարմանալի բարձր մակարդակը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, որը նրանք ձեռք են բերել իրենց հոգևորականության գործունեության և գերազանց դպրոցների շնորհիվ, նրանց հնարավորություն է ընձեռում ծանոթանալու եվրոպական մշակույթին ու տեխնիկային, և այդ ամենը ներ-

մուծելու իրենց բնակավայրերը: Ընդամին, պետք է նկատի ունենալ, որ ֆրանսիական մշակույթի ազդեցությունը հայերի վրա շատ ուժեղ է, և նրանց համակրանքը ևս ֆրանսիացիների կողմն է: Այս իմաստով ուժեղ ազդեցություն են գործել ֆրանսիական հոգևորականների դեկավարության տակ գտնվող բազմաթիվ դպրոցները:

Արևելյան Անատոլիայի հայերի շրջանում քաղաքական առումով ևս ուժեղ պրոպագանդիստական գործունեություն է ծավալվել ֆրանսիական և անգլիական, հատկապես ռուսական կողմից: Անգլիան և Ռուսաստանը քաղաքականապես շահագրգռված են, որ Թուրքիայում Հայկական հարցի հետ կապված աճող դժվարությունները մեջտեղից չվերանան: Նրանք իրենց ձևացնում են հայերի պաշտպաններ և դրդում նրանց, ելնելով իրավիճակից, ներկայացնել ոչ միայն արդարացի պահանջներ իրենց ճակատագիրը բեթևացնելու համար, այլև ուտոպիստական քաղաքական բնույթի պահանջներ: Ընդ որում` կուզենայի առանձնապես նշել այստեղի և Վանի ռուս հյուպատոսների քայքայիչ գործունեությունը:

*Ֆոն Շոյբներ-Ռիխտեր*

*Բեռլին, արտաքին գործերի  
գերապետությանը*

133.

*(Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն)*

*Հեռագիր*

*Բերա, 11 օգոստոսի 1915թ.*

*Տրապիզոնի հյուպատոսությանը*

*Էրզրումի հյուպատոսությանը*

*Ադանայի հյուպատոսությանը*

*Մոսուլի հյուպատոսությանը*

Չնայած մեր բազմաթիվ բողոքներին, վերջին շաբաթներին հայկական սարսափներն այնպիսի չափերի են հասել, որ մենք պարտավորված

ենք զգում մեզ, որտեղ պահանջվում է, արտահայտել մեր վճռական անհամաձայնությունը այդ գործողությունների առթիվ: Թուրք սպաները, հոգևորականները և այլ անձինք երկրի ներսում բազմիցս արտահայտվել են, թե այս սարսափների հեղինակները մենք ենք: Պետք է ակտիվորեն հակահարված տալ մեզ վարկաբեկող այս կարծիքին:

Հոհենլոհե

134.

(Հալեպի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 12 օգոստոսի 1915թ.

Ստացված է Բերայում 12 օգոստոսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

1. Այստեղի հայերի թիվը Արևելքի զոհված հայերի մեջ կազմում է ամենաքիչը երկու հարյուր հազար, թերևս շատ ավելի: Տղամարդկանց սպանությունները մեծ մասամբ կատարվում են ոչ թե քրդերի, այլ ժամդարմների ձեռքով:

Առկա են լուրջ նշաններ, որ արտաքսվածներին ճանապարհին սպանելու մեթոդը կիրառվելու է նաև Հալեպի և Մարաշի շրջաններում: Հակառակ Ձեմալ փաշայի հրահանգներին, կոմիտեն աշխատում է այդ ուղղությամբ:

2. Բողոքական հայերը հեռագրով դիմել են ռազմական նախարարին և ներքին գործերի նախարարին՝ խնդրելով իրենց ևս կաթոլիկ հայերի նման արտոնություն տալ:

Ռյուպեր

Նշում. Առաջին իսկ հնարավորության դեպքում բողոքական հայերի համար կմիջնորդեն Թալեաթ բեյի մոտ:

Մորդման

135.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Հեռագիր

Բերս, 14 օգոստոսի 1915թ.

Դամասկոս, գերմանական հյուպատոսությանը

Ինչպես հաղորդում է Հալեպի հյուպատոսությունը, սպասվում է Հալեպի վիլայեթի և Մարաշի հայերի վերաբնակեցում. մտավախություն կա, որ արտաքսվածներին կկոտորեն: Հայտնի է, որ Ձեմալ փաշան բազմիցս հրահանգներ էր տվել այդպիսի գործողությունների դեմ, սակայն այս հրահանգներին մյուս անպատասխանատու կողմը միշտ չէ, որ ուշադրություն է դարձնում: Ուստի խնդրում եմ հորդորել Ձեմալ փաշային (կապված առաջիկա դեպքերի հետ) վերանայելու իր կարգադրությունները:

Հոհենլոհե

136.

Կայզերական Գերմանիայի դեսպանություն

Բերս, 12 օգոստոսի 1915թ.

Իրենց բնակավայրերից արտաքսված հայ բնակչության պարբերական ջարդերը վերջին շաբաթներին այնպիսի չափերի են հասել, որ անհրաժեշտ է մեր կողմից կտրուկ բողոքներ ներկայացնել այդ վայրենի գործողության դեմ, որը կառավարությունը ոչ միայն հանդուրժում է, այլ բացեիքաց աջակցում, մանավանդ, որ տարբեր տեղերում այլ ցեղերի և դավանանքի քրիստոնյաները այլևս չեն խնայվում: Գործը հասել է այնտեղ, որ այս օրերին իշխանություններն սկսել են տեղահանել մայրաքաղաքին շատ մոտ Իզմիթի (Նիկոմեդիա) շրջակայքի տարբեր վայրերի հայերին, որովհետև նրանք իբր թե ցանկանում էին օգնել ռուսներին՝ ափ դուրս գալու Չաքարիայի գետաբերանում:

Այս միջոցառումը մեծ անհանգստություն առաջ բերեց այստեղի հայերի շրջանում: Իմացել են, որ այսօր սկսված բայրամի տոներից հետո



այստեղի հայերին նույնպես բշելու են: Այստեղ ապրող հայերը մեծ թիվ են կազմում (ամենափոքր հաշվարկներով 20000 հոգի), և այդպիսի մտադրության իրագործումն առաջ կբերի ոչ միայն առևտրի խանգարումներ, այլև լրջորեն կվնասի ոչ մահմեդական բնակչության, առանց բացառության նաև օտարների կյանքին և ունեցվածքին:

Ուստի սույն ամսվա 11-ին ես Բարձր Դռանը հանձնեցի ներկայացված հուշագրի պատճենը: Թալեաթ բեյը, որը հուշագիրն ընդունեց մեծ վեզիրի բացակայությամբ, խոստացավ հնարավորին չափ օգնություն ցույց տալ և իմ հարցումից հետո վստահեցրեց, թե Կ. Պոլսի հայերը չեն աքսորվի:

Բ. Դռնում ներկա գտնվող պատգամավորների պալատի նախագահ Խալիլ բեյը, որը, ինչպես երևում է, հավանություն չի տալիս իշխանությունների հակահայկական գործողություններին, պնդում էր, թե կոտորածներին և այլ ոճրագործություններին կառավարությունը հավանություն չի տալիս, սակայն նա ոչ միշտ է ի վիճակի եղել ժողովրդական զանգվածների անկարգությունները կասեցնելու, տեղահանության միջոցառումների անցկացման ժամանակ ստորադաս պաշտոնյաները ևս բույլ են տվել բռնություններ:

Վերն ասվածի կապակցությամբ պետք է նշել, որ երկրի թուրք բնակչության շրջանում լայնորեն տարածվել է այն կարծիքը, թե գերմանական կառավարությունը համաձայն է հայերի բնաջնջմանը և նույնիսկ ուղղակիորեն խրախուսում է այն: Այդ կապակցությամբ Անատոլիայի կայզերական հյուպատոսություններում նշեցի, որ պետք է վճռականորեն դուրս գալ մեզ վարկաբեկող աղայիսի կարծիքների դեմ, որոնք բացեիբաց արտահայտում են նույնիսկ սպաները, կրոնավորները և ավելի բարձր կանգնած այլ անձինք:

Թողնելով Ձերդ գերագանցության հայեցողությանը, ինձ խոնարհաբար բույլ են տալիս առաջարկել Ձեզ, հարմար առիթի դեպքում գերմանական մամուլում ևս նշել, որ մենք լրիվ հեռու ենք կանգնած թուրքական կառավարության կողմից հայերի հանդեպ գործադրվող բռնի միջոցառումներից, ուստի և պատասխանատու չենք այդ ընթացքում տեղի ունեցած խժողությունների համար, որոնց մենք հավանություն չենք տալիս և ցավում ենք դրա համար:

Ի վերջո, այստեղ ձեռնարկված քայլերը պաշտանելու համար ցանկալի կլինեն Օտոմանյան կայսրության այդտեղի նոր դեսպանի ուշադրու-

թյունը հրավիրել նրա կառավարության հակահայկական քաղաքականության հնարավոր հետևանքների և այդ հարցում մեր տեսակետի վրա:

Հոհեմլոհե

Նորին գերագանցություն ռախականցլեր  
պարոն ֆոն Բեքման Հոլվեզին

Հավելված

Կ. Պոլսի կայզերական

Բերա, 9 օգոստոսի 1915թ.

Գերմանիայի դեսպանությանը

Հուշագիր (ֆրանսերեն)

Հուլիսի 4-ի հուշագրում գերմանական կառավարության դեսպանությունը պատիվ ուներ ներկայացնելու կայզերական Գերմանիայի կառավարության տեսակետը Անատոլիայի վիլայեթներից հայ բնակչության արտաքսումների վերաբերյալ և նրա ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ այդ միջոցառումը շատ տեղերում ուղեկցվել է բռնի գործողություններով՝ կոտորածներով և թալանով, որոնք չեն կարող արդարացնել Օտոմանյան կայսրության հետապնդած նպատակը: Գերմանական դեսպանությունը ցավում է, որ անկողմնակալ և հավաստի աղբյուրներից ստացած տեղեկություններից հետո ստիպված է հաստատել, որ այդպիսի դեպքերը (բռնությունները, ջարդերը, թալանը) տեղական իշխանությունների կողմից արգելվելու փոխարեն կանոնավոր շարունակվում են, և հայերի տեղահանությունն անց է կացվում այնպես, որ նրանց մեծ մասը մահանում է մինչև նշանակման վայր հասնելը: Այս փաստերը հիմնականում հաղորդվել են Տրապիզոնի, Դիարբեքլիի և Էրզրումի գավառներից: Որոշ տեղերում, ինչպես Մարդինում, բոլոր քրիստոնյաները, առանց ցեղի ու դավանանքի տարբերության, նույն ճակատագրին են արժանացել:

Կայսերական օտոմանյան կառավարությունը անհրաժեշտ է համարել տեղահանության այդ միջոցառումը տարածել նաև Փոքր Ասիայի այլ գավառների վրա: Ամենավերջում մայրաքաղաքի մոտակայքում գտնվող

Իզմիթի շրջանի հայկական գյուղերը նույն ձևով մաքրվել են իրենց բնակիչներից:

Նկատի ունենալով այս իրադարձությունները, գերմանական դեսպանությունը իր կառավարության հանձնարարությամբ ստիպված է կրկին բողոքել այդ սարսափելի գործողությունների դեմ և բացարկել բոլոր հետևանքների պատասխանատվությունը, որոնք կարող են բխել դրանցից: Նա (գերմանական դեսպանությունը) անհրաժեշտ է համարում օտոմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այդ կետի վրա, որ հասարակական կարծիքը հասել է այն համոզման, թե Գերմանիան, որպես Թուրքիայի բարեկամ և դաշնակից կառավարություն, հավանություն է տալիս այս բռնություններին և նույնիսկ խրախուսում է այդ գործողությունները:

## 137.

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հայեսպ, 13 օգոստոսի 1915թ.

Սարկավագ Զյունցլերը սույն ամսվա 11-ի զեկուցագրի հետ ուղարկած իր մամուլը վերջացրել է հետևյալ խոսքերով. «Կանանց և երեխաների փոխադրման սարսափելիության մասին Չեզ բանավոր կհաղորդի մի ականատես»: Այդ ականատեսը մի ավստրիացի է, որին ես երկու տարի է լավ ճանաչում եմ և որի նկարագրության ճշմարտության համար անձամբ երաշխավորում եմ: Նա իր կնոջ հետ եկել էր մի քանի շաբաթ հանգստանալու Ուրֆայի մոտակայքում գտնվող խաղողի այգիներից մեկում, սակայն ժամանակից շուտ վերադարձել էր, որովհետև այլևս չէր ցանկացել տեսնել ոճրագործությունները: Իմ ցանկությամբ նա սիրալիրորեն շարադրել է իր տեսածներից որոշ բաներ: Կից ներկայացնում եմ նրա գրառումների պատճենը: Ի դեպ, Ուրֆայից Արսը Փունար մեկնելիս ճանապարհին նա ենթարկվել է ավազակային լուրջ հարձակման, որը կարողացել է ետ մղել, որովհետև ավազակները չէին սպասում, թե հրանոթները նրան օգնության էին հասել: Հավանաբար ավազակները սպասում էին հայկական քարավանի: Ավստրիացու կինը վախի հետևանքով պառկած է հիվանդանոցում:

Արևելքում գերմանական առևտրական և արդյունաբերական ընկերության, Ուրֆայի գորգագործական մանուֆակտուրայի ներկայացուցիչ պարոն Ֆրանց Էքարտն ինձ է ուղարկել կից ներկայացված օգոստոսի 5-ի մամուլը: Այդ մամուլը, ինչպես նաև Ուրֆայում տիրող ողջ կացությունը, ինձ դրդեցին Ուրֆայի մյութասարիֆին ուղղել մի գրություն, որտեղ նրան հատկապես խորհուրդ եմ տվել պաշտպանության տակ վերցնել այնտեղի գերմանացիների անձը, անձնակազմը և գործունեությունը:

Այսամանից դուրս եկած մեկ այլ խմբի մասին, ինչպես նախորդ մամուլում, ինձ հայտնել են ճշգրիտ տեղեկություններ: Այսամանից հետո ցած 696 հոգուց 32-ն են հասել Հալեպ՝ 206 տղամարդ և 57 կին սպանվել են, 70 կին ու աղջիկ և 19 տղա՝ հափշտակվել: Մնացածի մասին տվյալներ չկան:

Սույն ամսվա 12-ին Սեբաստիայից այստեղ հասած մի խումբ 3 ամիս շարունակ ճանապարհին էր և լրիվ հյուծվել էր: Տեղ հասնելուն պես մի քանիսը մահացան: Ճանապարհին շատ անգամներ հրաժարվել էին նրանց ջուր տալ: Մուրադչայի մոտ 14 օր շարունակ ստիպել էին շրջանաձև քայլել նույն տեղում՝ օրերով ջուր չտալով նրանց: Այս խմբի կոուստների քիվը ինձ հայտնի չէ:

Ինչպես այսօր ինձ հաղորդեց այստեղի վալի Բեշիր Սամի բեյը, կաթոլիկ հայերին տրված արտոնությունը կրկին վերացվել է: Առանց բացառության արտոնվելու են բոլորը: Մյուս կողմից նա հայտարարեց, որ ինքը չի հանդուրժի անպատասխանատու անձանց կողմից անարդարություններ իր վիլայեթում և նման չարագործների դեմ կգործի ամենայն խստությամբ: Դժբախտաբար, այս լավ ցանկությունը չի կանխում այն դժբախտությունը, որը տեղի է ունենում կազմակերպչական անբավարար աշխատանքի և նախապատրաստության պատճառով: Կասկած չկա, որ Հալեպի վիլայեթում ևս, օրինակ, Բաբից Մեմբիջ ճանապարհին, հյուծվածությունից մահացել են բազմաթիվ կանայք և երեխաներ: Նույն զեկուցագիրն ուղարկում եմ կայզերական դեսպանին:

Ռ-յուսլեր

Նորին գերազանցություն պարոն  
ռայխսկանցլերին

## Հավելված I

## Մի ավստրիացու գրառումները

Հանձնված է Հալեայի գերմանական հյուպատոսությանը 11 օգոստոսի 1915թ.

Դիտումներ Ուրֆայում հայերի փոխադրումների ժամանակ

Փոխադրվողները միայն կանայք, ծերեր և երեխաներ էին: Առողջ, ուժեղ տղամարդիկ բացակայում էին: Այն խմբերը, որոնք արդեն մեկ շաբաթ կամ ավելի քայում էին, ողորմելի տպավորություն էին թողնում: Ջրկանքներից գերհոգնած ու հիվանդացած՝ շատերը հազիվ էին քայում՝ իրենց հետ քարշ տալով երեխաներին (կային շատ ծծկեր երեխաներ և երեխանայր): Երեխաների, ծերերի և, ընդհանրապես, թույլ անձնավորությունների մեծ մասի ոտքերը ծածկված էին վերքերով, խիստ ուռած էին և ցնցոտիներով փաթաթած: Գաղթականների մեծ մասն իր ունեցվածքը վաճառել էր մինչև Ուրֆա հասնելը, որպեսզի կարողանար գյուղերում վարձով փոխադրող ավանակներ ձեռք բերել՝ մի օրվա համար վճարելով 3 մեջիդիե (դա սովորական գնից 3 անգամ քանկ է): Տեղափոխվողների մեծ մասը որոշ ճամփորդական իրեր և սպասք էր հասցրել Ուրֆա, որոնք այստեղ անխնա կողոպտվեցին: Սև շուկայում զինվորներն անձամբ էին վաճառում այս արքայականների իրերը: Շատերին տեղավորեցին որբանոցում, ուր իրենք պետք է հոգային իրենց սննդի մասին: Ոստիկանները հերքապահում էին որբանոցի շուրջը: Ես նկատեցի, թե ինչպես մի ազահ վաճառական գնած հագուստներով թռավ ցանկապատի վրայով և բացեիքաց պահակի բուռը դրեց կաշառադրամը: «Թեյանվերի» գնով կամ ծանոթությամբ քարավաններից կարող էին վերցնել կանանց, աղջիկների, երեխաների: Հետագայում իշխանություններն արգելեցին նաև առևտուրը: Չնայած դրան, հափշտակումները շարունակվում էին: Անձամբ տեսա, թե ինչպես թուրքերը փողոցից հափշտակեցին 16 և 30 տարեկան երկու հայ կանանց: Երբ նույն օրը հյուր գնացի թուրքերի մոտ, այդ կանայք ինձ պատմեցին, որ իրենք Ադյամանից են և արդեն տասն օր է, ինչ ճամփա են ընկել: Ժանդարմները լավ էին վերաբերվել նրանց, ետ էին մղել մի ավազակային քրդական բանդայի, որը փորձել էր առևանգել կանանց, գյուղերում նրանց հաց ու պանիր էին տվել: Օրական երթերը

տևում էին 6-7 ժամ, հաճախ դադար են առել: Ադյամանից այս կողմ նրանք հանդիպել են մորթված մերկ, նաև կրծքերը կտրված, խեղված կանանց: Կենդանի մնացած երկու կին պատմել են, որ իրենք ետ էին մնացել քարավանից՝ մի քանիսը հիվանդության պատճառով, մի քանիսն էլ փախուստի դիմելու մտադրությամբ: Այդ պատճառով նրանք բռնաբարվել ու կողոպտվել էին քրդերի կողմից:

Փոխադրումների ժամանակ շատերն էին ոչնչանում: Ուրֆայում, իմ աչքի առաջ, մի կին տապալվեց գետին: Քանի որ ոստիկանը ետ մնալու իրավունք չուներ, շրջապատի կանգնածներից մի քանիսին կարգադրեց գնալ ոստիկանատուն և գեկուցել, որ տանեն հիվանդին: Հաջորդ օրն այդ նույն կնոջը (30 տարեկան) տեսա մեկ այլ փողոցում, որբանոցի առաջ, կիզիչ արևի տակ՝ մահացած, ընկած: Երբ մոտեցա, տեսա, որ նրա դեմքն արդեն կապտել էր: Կողքին կանգնած էին զինվորները, հրապարակը լցված էր ոստիկաններով և քաղաքացիներով: Ըստ իս, կինը ժամեր շարունակ ընկած մնացել էր այնտեղ: Միայն մյուսաբարիֆի մոտ իմ միջամտությունից հետո կես ժամվա ընթացքում դիակը տարան արքատար սայլակով:

Ուրֆայից դուրս (Թեև Աբիադի ուղղությամբ), անմիջապես Ուրֆայի այգիների առաջ, ճամփեզրին ընկած էր 20-24 տարեկան մի տղամարդու դիակ: Ոչ ոք այն չէր թաղել, և զիշատիչ թռչունները հոշոտում էին դիակը:

Ուրֆայից Արաբ Փունար տանող ճանապարհին, հավանաբար մթության պատճառով, ես դիակներ չտեսա, սակայն իմ կառապանը, որը մշտապես երթևեկում է այս ճանապարհով, ցույց տվեց ինձ այրված տեղեր ճանապարհի երկայնքով: Ուրեմն մարդկանց դիակները տեղն ու տեղը այրել էին:

Քարավանները ցավից ճչալով՝ դժվարությամբ առաջ են շարժվում: Այս դժբախտներից շատերը մարդ տեսնելուն պես ծնկի են իջնում, օգնություն և փրկություն աղերսում, կամ առաջարկում վերցնել իրենց երեխաներին: Այս երթերի ժամանակ, 56 աստիճան շոգի և ջրի պակասության պայմաններում, շատերը հյուծվածությունից գետին են տապալվում: Ով ետ է մնում, հաստատ դառնում է մահվան բաժին:

Արևելքում գերմանական առևտրական և արդյունաբերական ընկերության Ուրֆալի գորգագործական մանուֆակտուրա Ուրֆա, 5 օգոստոսի 1915թ.

Մի քանի օր առաջ երկու թուրք Դիարբեքիրում մոտակա փողոցով անցնող հայ գաղթականների միջից մի կնոջ քարշ տվեցին իմ հողամասի ներքևի մասում գտնվող մի փոս և մերկացրին նրան՝ բռնաբարելու նպատակով: Կնոջ ճիչերի վրա իմ երեխաները մոտ վազեցին, և ես օգնության կանչեցի մոտակայքում գտնվող բանվորներին: Վերջիններս փրկեցին կնոջը, որը փախավ իմ տուն: Կարճ ժամանակ անց այդ երկու թուրքերը չորս այլ ուղեկիցների հետ միասին եկել են իմ տան առաջ և իմ բացակայության ժամանակ կնոջիցս պահանջել են հանձնել հայ կնոջը: Կնոջս բազմիցս պատասխանից հետո՝ «Այստեղ ապրում են գերմանացիներ», նրանք սպառնալով հեռացել են:

Չնայած նահանգապետին ուղղված իմ բողոքներին՝ ո՛չ ես, ո՛չ իմ ընտանիքը և ո՛չ էլ իմ բանվորները ապահով չենք այդ թուրքերի ճնշումներից: Նրանք հենց այսօր առավոտյան կրկին վտարել են իմ այգում աշխատող երեք հայերի: Ուստի ես ստիպված եմ դիմել իմ կառավարության պաշտպանությանը:

**Յր. Էրարս**

**Հալեպի կայզերական Գերմանիայի հյուպատոսությանը**

138.

Կայզերական Գերմանիայի Բերա, 13 օգոստոսի 1915թ. ղեկավարություն

Այստեղի թերթերում հրապարակվել է, որ Կ. Պոլսի ռազմական դատարան է հրավիրված հայտնի հայ քաղաքական գործիչ և եզիպտահ-

պատակ Պողոս Նուբար փաշան, որը մեղադրվում է զանազան դավաճանական գործողությունների մեջ:

Ռազմական ատյանի կողմից բացված այս դատը պետք չէ լուրջ ընդունել:

Ընչտն այն է, որ Նուբար փաշան Էջմիածնի կաթողիկոսի հետ միասին մասնակցում է Անատոլիայի արևելյան նահանգներից հայկական ինքնավար կամ անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ Եռյակ Միության պետությունների հետ բանակցություններին: Դրան հակառակ, կասկածելի է (և իրավացիորեն), թե նա ուղղակի կապի մեջ է գտնվում դատական հրավերի մեջ նշված թերթերի հետ, որոնք հնչակյանների կուսակցության օրգաններն են, քանզի նա մինչև հիմա իրեն հեռու է պահել հայտնի հայկական կազմակերպությունից:

Մյուս մեղադրանքներում, որոնք վերաբերում են Պողոս Նուբար փաշայի 1913 և 1914 թվականներին հայկական բարենորոգման հարցում կատարած աշխատանքին, որոշ կողմերից նկատվում է թաքնված հանդիմանություն մեր այն ժամանակվա քաղաքականության հանդեպ, որը պաշտպանում էր բարենորոգման նախագծի իրականացումը:

**Հոհեմյոհե**

**Նորին գերագանցություն պարոն ռախականցլերին**

139.

(Մոսուլի կայզերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Մոսուլից 14 օգոստոսի 1915թ.

Ստացված է Բերայում 15 օգոստոսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Գերմանական տարբեր թերթերում կարդացի քրիստոնյաների սարսափների վերաբերյալ թուրքական պաշտոնական հերքումներ և զարմացած են Բարձր Դռան միանություն վրա, որը կարծում է, թե ակնհայտ

ստերով կարող է ի չիք դարձնել բուրքական իշխանությունների ոճրագործությունների փաստերը:

**Հոշտայն**

140.

**Հալեայի կայզերական հյուպատոսություն**

**Հեռագիր**

*Ուղարկված է Հալեայից 15 օգոստոսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 16 օգոստոսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ըստ շարունակաբար ստացվող տեղեկությունների, այսօր Արևելքում հայերն արդեն լրիվ ոչնչացված են:

Կառավարությունը Արևմուտքի հայերին կամ նույնպես ուզում է ոչնչացնել, կամ էլ չզիտի, թե ինչ է անում: Տիրում է կատարյալ կազմալուծում, այնպես որ, անզամ կատարման համար լիազորված իշխանությունները չզիտեն, թե ի՞նչ է ուզում կառավարությունը: Կիլիկիայի հայերը, որոնք գտնվում են Հալեայում, թեկուզ անկանոն, բայց կառավարությունից որոշ սնունդ են ստանում: Արևելքից եկածները, որոնք մոտավորապես 6000 հոգի են (ամեն օր ժամանում են 300 հոգի), ոչինչ չեն ստանում: Հալեայի հայկական համայնքի կողմից հավաքված միջոցները շուտով կսպառվեն: Առաջ յուրաքանչյուր գաղթական կարող էր ստանալ 4 փոքր հաց, այժմ՝ միայն երկու հաց և ուրիշ ոչ մի սնունդ: Մյուս տեղերում գտնվող հազարների և հարյուր հազարների համար, ինչպես Հալեայում, ոչ ոք հոգ չի տանում:

**Ռյուսեր**

141.

**Հալեայի կայզերական հյուպատոսություն**

**Հեռագիր**

*Ուղարկված է Հալեայից 16 օգոստոսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 16 օգոստոսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հայերի տեղափոխությունը Մարաշից սկսվել է: Ոչ մի լուր չկա այնտեղի գերմանական միսիայի մասին: Խոնարհաբար խնդրում են միջնորդել, որ բացառություն արվի հիվանդանոցի անձնակազմի և ուսուցիչների, օժանդակության միության դպրոցների աշակերտների և աշակերտուհիների համար, քանի որ խոսքը վերաբերում է գերմանական հաստատություններին:

**Ռյուսեր**

142.

**Կայզերական Գերմանիայի դեսպանություն**

**Հեռագիր**

*Բերա 17 օգոստոսի 1915թ*

Հալեայի գերմանական հյուպատոսությանը

Ներքին գործերի նախարարը ինձ խոստացավ պաշտպանել Մարաշի գերմանական հաստատությունները, հիվանդանոցը՝ դեղատան հետ միասին և դպրոցները, ինչպես նաև թույլ տալ օժանդակ անձնակազմին և դպրոցականներին՝ մնալու տեղում: Միաժամանակ խոստացավ, որ տեղական իշխանությունները կստանան համապատասխան հեռագրային ցուցումներ:

**Հոհեկոհե**

(Կոնիայում ապրող  
գերմանացիների զեկուցագիրը)

Կոնիա, 16 օգոստոսի 1915թ.

Ներքոստորագրյալները՝ ներկայումս Կոնիայում բնակվող Գերմանիայի հայատակներ, թույլ են տալիս իրենց՝ կայգերական Գերմանիայի դեսպանությանը ներկայացնել հետևյալ զեկուցագիրը:

Մի քանի շաբաթ է, ինչ դարձել ենք ամենահուզիչ տեսարանների վկաները, տեսարաններ, որոնց մասին հեռվում գտնվողը հազիվ թե կարողանա պատկերացում կազմել: Ամեն օր ժամանում են հայերի երկարաշար քարավաններ՝ տեղահանված Իզմիթից, Ադաբազարից և շրջակա վայրերից:

Ճամփորդներից իմացանք, որ արքտրման այս միջոցառումներն արդեն մի քանի ամիս է, ինչ անցկացվում են Կիլիկիայում և Հյուսիսային Միջագետքում, և ինչպես լսել ենք, Անատոլիայի մյուս վայրերը ևս պետք է մաքրվեն հայերից: Այսօր տեղի հայերը քաղաքը 8 օրվա ընթացքում թողնելու հրաման ստացան:

Մեր զեկույցի նպատակն է՝ բողոքարկել արտաքսվողների նկատմամբ կիրառվող այսպիսի անմարդկային վերաբերմունքի դեմ:

Կանանց և երեխաներին քշում են բռունցքի և փայտի հարվածներով: Գիշերով տանում են նրանց բաց սայլերով ու արաբներով, իսկ չունևորներն ստիպված են իրերի մնացորդը շալակած ոտքով շարունակել ծանր, երկար ճամփորդությունը: Հուսալքությունն այնպիսի ահավոր չափերի է հասել, որ մայրերն իրենց երեխաներին նվիրաբերում են, որպեսզի փրկեն նրանց անողորմ ճակատագրից:

Այն երեխաներին, որոնց վերցրել էին կարեկցող քրիստոնյա ընտանիքները, հետագայում իշխանությունները նրանցից խլել են և տվել թուրքերին:

Մեր կողմից ցույց տրվող օժանդակությունները հաճույքով չեն դիտվում: Այդ մեզ հիշեցնում է այս տարվա ապրիլի այն դեպքը, երբ արգելվեց այստեղի ամերիկյան միսիայի օժանդակությունը Չեյթունից գաղթած մոտավորապես 3000 հայերին: Դրան հակառակ, ոչ մեկի կողմից չբողոքարկվեց, երբ բալկանյան հուզումների ժամանակ այդ նույն միսիայի կողմից Էսկիշեհիթից մինչև Էրեզլի տեղավորված մահմեդական գաղթականներին բաժանվեց ավելի քան 500 լեզ արժողությամբ անկողին և սպիտակեղեն:

Այստեղից մինչև Հալեպ ընկած ողջ ճանապարհը ողորմելիների և թշ-

վառների մի շարասյուն է: Անհնար է պատկերացնել արտաքսվածների վիճակը Կարաման, Էրեզլի և Բոզանտի վայրերում, որտեղ տեղի բնակիչներն իրենք են տառապում հացի պակասից: Այստեղ տեղափոխված հայերը մատնված են երկարատև տանջալից սովամահության: Հիշեցնենք, որ հացի գինը հասել է 8 սլիաստրի, սակայն անգամ այս գնով հնարավոր չէ հաց ճարել:

Տավրոսի այս կողմում ընկած լեռնային վայրերում և այն կողմում գտնվող հարթավայրում այս թշվառները համձմված են կիսավայրենի մահմեդական բնակչության ցանկասիրություններին:

Ամեն ինչից երևում է, որ այս ողջ միջոցառման նպատակը հայերին լրիվ ոչնչացնելն է: Այս անմարդկային վերաբերմունքը համաշխարհային պատմության մեջ անջնջելի խայտառակ բիծ է ոչ միայն թուրքերի, այլ նաև մեզ՝ գերմանացիներիս համար, եթե մենք ձեռքներս ծալած դիտենք այս ամենը և թույլ տանք հայ ժողովրդի բնաջնջումը: Չխոսելով այն մասին, որ այս ձեռնարկումը խիստ վնասակար է երկրի տնտեսական շահերից ելնելով, գերմանական ձեռնարկությունները ևս կտուժեն, եթե այս աշխատասեր ժողովուրդը կորչի:

Եթե ներքոստորագրյալները թույլ են տալիս իրենց կայգերական դեսպանությանը ուղարկել զեկուցագիրն այս անցքերի մասին, ապա նրանք այդ ամում են այն ենթադրությամբ, որ դրանք ամբողջ ծավալով հայտնի չեն Կայգերական Գերմանիայի դեսպանությանը:

Մենք՝ գերմանացիներս, այստեղ ամեն օր ստիպված ենք ականատես լինել անմարդկային վերաբերմունքի, և որպես կիսաքաղաքակիրթ ժողովրդի մեջ ապրող կուլտուրական երկրի ներկայացուցիչներ, պարտավորված ենք զգում բողոքել այս ամենի դեմ:

Հուսով ենք, որ մեր խնդրանքը հաշվի կառնվի և զոնե կմեղմացվի հազարավոր կանանց և երեխաների ճակատագիրը:

*Խորին հարգանքներով*

*Վիլի Չեեզեր՝ Անապոլիայի արդյունաբերա-սոն փրակյան  
ընկերության ղեկավար, Կոնիայի մասնաճյուղ  
Գեորգ Բիզել՝ միջնակարգ դպրոցի ուսուցիչ,  
Հայնրիխ Յանսոն՝ գործարանի վարպետ  
Յ. Է. Մաուրեր՝ դիպլոմավոր ինժեներ*

*Կ. Պոլսի Կայգերական Գերմանիայի դեսպանությանը*

144.

(Արտաքին գործերի  
գերատեսչություն)

Հեռագիր

Բեռլին, 18 օգոստոսի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Խնդրում եմ հարմար ժամանակ և համապատասխան ձևով Հալեպից ուղարկված հուլիսի 27-ի զեկուցագիրը ներկայացնել Բ. Դռանը և հայտնել, որ հայաստանը գործողությունը հակասում է նրա մտադրություններին և հրահանգներին:

Թուրքական կառավարության մեր բարեկամները պիտի հասկանան, որ մենք աշխույժ հետաքրքրություն ենք հանդես բերում ծայրահեղությունների եռանդուն ճնշման հարցում, առավել ևս այն պատճառով, որ մեղադրվում ենք դրանց հրահրողները լինելու մեջ:

Ֆիներման

145.

Մի հայի դիմումը

Գերմանական դեսպանություն

(Հանձնված է Պրելատ Դուլչիի կողմից)

Բերա, 19 օգոստոսի 1915թ.

Հայերի տեղահանությունից

Նիկոմեդիայի (Իզմիթ) կաթոլիկները տեղահանվեցին մյուս հայերի հետ: Երկու քահանա և կաթոլիկ հայերի մի մասը երջանիկ պատահականությամբ մնացել էին Էսկիշեհիրում: Հինգ օր հետո նրանց քշելու են այնտեղից: Խնդրում եմ հասնել այն բանին, որ այս երկու քահանաներն ու իրենց ժողովուրդը կան վերադառնան իրենց քաղաքներն ու գյուղերը, կան մնան Էսկիշեհիրում, սակայն նույնքան ազատ, ինչքան այդտեղի կաթոլիկ հայերը:

Հակառակ բոլոր խոստումներին, սույն ամսվա 16-ին Բաղչեջիկից տեղահանվեցին կաթոլիկ և բողոքական հայերը: Պատահաբար հինգ միանձնուհի և երեք քահանա մնացել են Նիկոմեդիայում, իսկ նրանց ժողովուրդն արտոլվել է գնացքով: Խնդրում եմ միջնորդել, որ թույլատրվի այս քահանաներին և միանձնուհիներին վերադառնալ Բաղչեջիկ կամ գնալ Կ. Պոլիս: Միաժամանակ թույլ տալ կաթոլիկներին և բողոքականներին՝ վերադառնալ իրենց գյուղը կամ մնալ Էսկիշեհիրում:

Խնդրում եմ հրահանգել երկաթգծի ծառայողներին մարդկային վերաբերմունք ցուցաբերեն այս դժբախտների նկատմամբ:

Մեզ թույլ են տվել ողորմություն տալ թշվառներին:

(Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն)

Հանձնարարություն

Գլխավոր հյուպատոս պարոն Մորդանին՝ հնարավորության դեպքում այսօր Թալեաթի մոտ այս գործի համար միջնորդելու խնդրանքով:

Նոյրաթ

146.

21 օգոստոսի, 1915թ.

Նշում

Այսօր ներքին գործերի նախարարությունում Ազիզ բեյի մոտ (նախարարը և Ջամբուլադ բեյը այնտեղ չէին) քայլեր ձեռնարկեցի արդեն տեղափոխված կաթոլիկ հայերին վերադարձնելու համար:

Ազիզ բեյն այդ մասին կզեկուցի նախարարին: Նա միաժամանակ նշեց, որ ըստ նոր հրահանգի՝ Անկարայի և Ադանայի կաթոլիկ հայերին կրկին զրկել են արտոնությունից:

Ես հատուկ խնդրեցի արդեն Էսկիշեհիր և Կոնիա տարված և այնտեղ համակենտրոնացման ճամբարներում ներկայված կաթոլիկ և բողոքական հայերի համար, որ հեռագրով ցուցումներ ուղարկվեն Էսկիշեհիրի և

Կոնիայի վիլայեթի մյուսասարիֆներին, որպեսզի ներկայվածներին ավելի հեռուն չտեղափոխեն կամ ետ ուղարկեն:

**Մորդման**

**Ծանուցում**

**Բերա, 23 օգոստոսի 1915թ.**

Կաթոլիկ հայերի պատրիարքը տեղեկացնում է, որ կաթոլիկ հայերին արքայի չուղարկելու արտոնությունը կասեցվել է, և խնդրում է միջամտել:

**147.**

**Նշում**

**23.8.15**

Այսօր ներկայացրի Թալեսթ բեյին, որը խուսափոխարար արտահայտվեց: Ես միաժամանակ արժարժեցի արդեն Էսկիշեհիր և Կոնիա քշված կաթոլիկ և բողոքական դավանանքին պատկանող հայերին ավելի հեռուն չտեղափոխելու և նրանց իրենց հայրենի վայրը վերադառնալ թույլ տալու հարցը, և ստացա նույն անորոշ պատասխանը:

Ազիզ բեյը, որին գտա, որպեսզի արագացնեմ Էսկիշեհիրի հետ կապված գործը, շատ է կասկածում, թե նախարարը կտա ցանկալի հրահանգներ:

**Մորդման**

**148.**

**Հեռագիր**

**(Կաթոլիկական Գերմանիայի  
դեսպանություն)**

**Բերա, 24 օգոստոսի 1915թ.**

Ադանայի գերմանական հյուպատոսությանը

Վերջերս Բարձր Դուռը խոստացել էր իրենց բնակավայրերում բողոքական կաթոլիկ և բողոքական հայերին, սակայն հետո՝ Անկարայի և Ադանայի համար ետ է վերցրել այդ արտոնությունը: Այդ կապակցությամբ այստե-

ղից քայլեր են ձեռնարկվում, որպեսզի կասեցվի Բ. Դուռն վերջին որոշումը: Արդյոք այդ քայլերը հաջողություն կունենա՞ն, կասկածելի է:

Խնդրում եմ, եթե հնարավոր է, հեռագրով հաղորդեք այդտեղի վիճակի մասին:

**Հոհենլոհե**

**149.**

**(Փոխգնդապետ Շտանգե)**

**Էրզրում, 23 օգոստոսի 1915թ.**

Չեկույց հայ բնակչության արտաքսումների մասին

Հայերի արտաքսումներն սկսվեցին 1915 թվականի մոտավորապես մայիսի կեսերին: Մինչ այդ ամեն ինչ բավականին խաղաղ էր: Հայերն զբաղվում էին իրենց առևտրով և արհեստով, հանգիստ դավանում իրենց կրոնը և ընդհանուր առմամբ գոհ էին իրենց վիճակից: Արդարև, սույն թվականի փետրվարի 10-ին, երեկոյան ժամը 6-ին հենց փողոցում սպանվեց մի հայ՝ այստեղի Օտոմանյան բանկի երկրորդ դիրեկտորը: Չնայած կառավարության թվացյալ ջանքերին, մարդասպանը չհայտնաբերվեց: Այսօր արդեն ոչ մի կասկած չկա, որ այս սպանության առիթը բաղաբանական բնույթ էր կրում: Այն ժամանակ սպանվեց նաև Երզնկայի հայոց եպիսկոպոսը:

Մայիսի 20-ին գլխավոր հրամանատար Քեմալ փաշան հրամայեց Էրզրումի հյուսիսային մասի գյուղերը մաքրել հայերից, որը թուրք պաշտոնյաների կողմից կատարվեց ամենադաժան եղանակով: Այդ մասին վկայում է հայկական գյուղի բնակիչների նամակն իրենց եպիսկոպոսին: Մարդկանց կարճ ժամանակամիջոցում քշեցին իրենց տնից, բակից և դաշտից, ու բոլորին միասին արտաքսեցին: Մեծ մասին ժանդարմները ժամանակ չթողեցին, որ գոնե ամենաանհրաժեշտ բաները կապկալեն ու հետները վերցնեն: Թողնված և հետները վերցված ապրանքները սեփականատերերից խլվեցին ուղեկցող ժանդարմների և զինվորականների կողմից կամ գողացվեցին տներից: Այն ժամանակվա վատ եղանակին արտաքսվածները ստիպված էին գիշերել բաց երկնքի տակ: Միայն հատուկ վարձատրության դիմաց նրանք ժանդարմներից թույլտվություն էին ստանում մտնել բնակավայրեր՝ սննդամթերք ճարելու կամ ջուր վերցնելու: Տեղի էին ունենում բռնաբարություններ, իսկ հուսալքված մայրերը ի-



րենց կրծքի երեխաներին շարտում էին Եփրատը, որովհետև այլևս հնարավոր չէր նրանց կերակրել: Գերմանացի հյուպատոսը շատ անգամներ իր հյուպատոսության ծառայողների միջոցով նրանց հաց է բաժանել, և վերջիններս ի վիճակի են բշտակների բշտակության մասին գեկուցելու:

Անառարկելի է, որ այս հայերը, առանց բացառության, Մամախաթունի (Դերջան) շրջանում սպանվել են այսպես կոչված չեթեների (հրոսակների), աշխրեթների և նման բաշխրոզուկների կողմից, այն էլ ուղեկցող զինվորների թույլտվությամբ, նույնիսկ նրանց օգնությամբ: Վալին, իհարկե, միայն կիսով չափ խոստովանեց այս փաստերը գերմանացի հյուպատոսին, իսկ վերջինս դեպքերի մասին մանրամասն լսել էր կոտորածից հրաշքով մազապուրծ եղած մի ծեր հայից: Հյուպատոսության ծառայող, պատերազմական ժամանակաշրջանի կամավորական Շիմեն այնտեղ տեսել էր մեծ թվով դիակներ:

Հունիսի սկզբներին սկսվեց հայերի տեղահանությունը Էրզրումից: Այն իրագործվում էր իշխանությունների, ոստիկանական պաշտոնյաների և նրանց մարմինների միջոցով, կազմակերպվածության և կարգապահության կատարյալ բացակայության պայմաններում: Դեռ ավելին, այն անխնա, անմարդկային և անօրինական կամայականության, վայրենի դաժանության ցուցադրական օրինակ է, դաժանություն, որը կիրառվում էր տեղահանմանը մասնակից բոլոր թուրքերի կողմից՝ իրենց խորապես առեկի և օրենքից դուրս դիտված խավի դեմ: Այդ են վկայում մեծ թվով հավաստի օրինակները: Կառավարությունը ոչ մի միջոց չձեռնարկեց տեղահանվողներին ինչ-որ ձևով օգնելու, և քանի որ ոստիկանները իրազեկ էին իրենց պետերի տրամադրվածությանը, իրենք էլ իրենց կողմից ամեն ինչ անում էին՝ հայերի տառապանքներն ավելացնելու:

Արտաքսումները հրահանգվում և կրկին վերացվում էին, մի քանի օր հետո ոստիկանությունը կրկին ետ էր պահանջում տեղում մնալու իրավունքի տեղեկանքները, ոչնչացնում դրանք և արտաքսման նոր հրամաններ տալիս: Շատ դեպքերում դրանք տրվում էին զիջերվա ընթացքում: Բողոքների և գանգատների վրա ուշադրություն չէին դարձնում և հաճախ դրան պատասխանում էին բռնություններով:

Կառավարությունը արտաքսվածներին չէր հայտնում նշանակման վայրը: Նա թողեց, որ փոխադրամիջոցները հասնեն անմատչելի բարձր գների, հաճախ տալիս էր անբավարար թվով ուղեկցող ջոկատներ, որոնք վատ էին պատրաստված և արտաքսվածներին պաշտպանելու պարտա-

կանությունը ոչ մի դեպքում լուրջ չէին ընդունում, որը հաճախ երևաց հետագայում: Եվ չնայած բոլորին հայտնի էր, որ ճանապարհների անպահովությունը խիստ բարձրացել է, սակայն դա իշխանություններին ետ չէր պահում հայերին դուրս բշտուց: Նրանք պետք է սպանվեին: Տրապիզոնում, ըստ արտաքսման վերաբերյալ ստացված հրամանի, հայերին նույնիսկ արգելվում էր իրենց ունեցվածքից որևէ բան վաճառել կամ հետները վերցնել: Այստեղի հյուպատոսության ծառայողը, գերմանացի կամավորական Շիմեն (նա հյուպատոսության հանձնարարությամբ Տրապիզոն էր գործուղվել Բաբերդի և Երզնկայի միջով), անձամբ տեսել է Տրապիզոնում, թե ինչպես ոստիկանական ծառայողները ոստիկանական տեղամասի մոտով անցնող հայերից խլում էին նրանց խղճուկ կապոցները:

Վերոհիշյալը կբավարարի թեկուզ թույլ պատկերացում տալու այն դաժան վերաբերմունքի մասին, որին ենթարկվում էին հայերը: Մեր տրամադրության տակ կան բազմաթիվ այլ դեպքերի փաստեր: Քանի որ կառավարությունը ձգտում է թաքցնել կամ մեղմացնել իրադարձությունները, այդ իսկ պատճառով որոշ բաներ կարող են բաց թողնվել: Իսկ վիճակն այսպիսին է.

Առաջին խմբից, որը հունիսի 10-ին ուղիղ ճանապարհով գնում էր Խարբերդ, և որը մեծ մասամբ բաղկացած էր հայ երեխաներից, որոնք հետները բավական շատ կապոցներ էին տանում, բոլոր տղամարդիկ առանց բացառության սպանվել են: Իսկ վալին խոստովանեց, որ ընդամենը 13 հայ է սպանվել: Կանայք իրենց փոքր երեխաների հետ պետք է հասած լինեն Խարբերդ, հասուն աղջիկների մասին ոչինչ որոշակիորեն հայտնի չէ: Մնացած խմբերին, բշտուկ Բաբերդի և Երզնկայի միջով, տարան Կամախի (Եփրատի հովիտ) ուղղությամբ: Նրանք պետք է որ ընդհանրապես «հաջող անցած լինեն» հովտով, սակայն Մարաշից գնալիս դեռ անցնելու են մի վտանգավոր տեղանք և՛ Խարբերդ-Ուրֆա շրջանում:

Տրապիզոնից տեղահանված հայերի միջից տղամարդիկ առանձնացվել և տարվել են լեռները, այնտեղ զինվորների աջակցությամբ մորթվել, իսկ կանայք ողբալի վիճակում բշտել են Երզնկա: Թե ինչ է եղել նրանց հետ, առայժմ հայտնի չէ: Տրապիզոնում հայերին նավով տարել են ծովի խորքը և ջուրը լցրել: Տրապիզոնցի եպիսկոպոսը հրավիրվել էր Էրզրումի զինվորական դատարան և ճանապարհին իր ուղեկիցների հետ միասին

արախողխող արվել: Տրապիզոնի և Բաբերդի միջև սպանվել է մի հայ զինվորական բժիշկ:

Երզնկայի բոլոր հայերին բռնել են Կամախի (Եփրատի հովիտ) և այնտեղ կոտորել: Բավական հավաստի զեկուցվել է, որ դիակները բարձել են այնտեղ նախապես պատրաստ կանգնած սայլերը, տարել Եփրատ և շարտել գետը: Երզնկայի եպիսկոպոսն ուղեկցել է իր դավանակիցներին և արժանացել նույն ճակատագրին:

Այն բանից հետո, երբ սկզբնական հրահանգը՝ առանց տղամարդկանց պաշտպանության մնացած կանանց և երեխաներին թույլատրվում էր մնալ քաղաքում, կրկին վերացվեց, նրանց արտաքսումն իրագործվեց խիստ և դաժան ձևով: Էրզրումում հատուկեմտ հայեր են մնացել: Արտաքսվեցին անգամ նրանք, որոնք խիստ անհրաժեշտ էին բանակում և վարչությունում աշխատեցնելու համար՝ արհեստավորները, պայտագործները, վարորդները, հոսպիտալի անձնակազմը, բանկի և կառավարական ծառայողները, զինվորական բժիշկները, որոնց արտաքսումը ծրագրված չէր:

Հայերին Էրզրումի պատերազմական շրջանից հեռացնելը օրենքով թույլատրելի էր և պատճառաբանվում էր ոսպնական անհրաժեշտությամբ: Հիրավի, հայերը տարբեր շրջաններում իրենց ցույց տվեցին որպես անվտանգ: Տեղի ունեցան ապստամբություններ, օրինակ՝ Վանա լճի մոտ, Բիթլիսում և Մուշում: Պատահաբար կտրվեցին հեռագրային հաղորդալարերը և հայտնաբերվեցին լրտեսության ոչ քիչ դեպքեր: Արդյոք նրանք՝ ռուսների Էրզրումին մոտենալու դեպքում կշարունակեին հանգիստ մնալ՝ հնարավոր չէ հաստատ որոշել: Ռազմունակ բոլոր հայ տղամարդիկ զորակոչվել էին, այնպես որ, որևէ ապստամբությունից վախենալու առանձին պատճառ չկար: Սակայն, ինչպես երևում է, կառավարությունը վախենում էր հայերից, բայց դա ոչ մի կապ չուներ այստեղի հայերի անգոր վիճակի հետ: Եվ եթե անգամ այս ոչ այնքան վստահելի տարբի տեղահանման որոշումը միայն բարձրագույն հրամանատարության գործն էր, ապա գոնե պետք է սպասվեր և պահանջվեր, որ այս միջոցառումն անցկացվեր առանց տեղահանվողների կյանքին ու գույքին վնաս հասցնելու, որոնց անձնական ամենաչնչին մեղքն անգամ ապացուցել հնարավոր չէ: Այս ձևով չի շոշափվում առանձին մեղավորներին դատարանի առջև կանգնեցնելու իրավունքի և պարտավորության հարցը: Սակայն այն, որ կանոնավոր ձևով սպանվեցին հարյուր հազարավոր

հայեր, այն, որ պաշտոնյաները կամայականորեն տնօրինեցին յուրաքանչյուր լքված սեփականություն՝ տներ, խանութներ, ապրանքներ, տնային իրեր (հայկական եկեղեցում գտնվում էր մոտավորապես 150000 լեզ<sup>1</sup>), այն, որ հեռացումը կատարվում էր ամենամարդկային եղանակով, կանանց և երեխաներին բռնում էին առանց տղամարդկանց պաշտպանության և, վերջապես այն, որ մահմեդականություն ընդունած հայերին այլևս արհամարհանքով չէին նայում և հանգիստ էին թողնում, իրավացիորեն առիթ է տալիս ենթադրելու, որ հայերի արտաքսման համար ուղղակի բնույթի պատճառները նկատի են առնվել միայն երկրորդ հերթին: Իրականում կառավարության հիմնական նպատակն այս հարմար առիթն օգտագործելն էր, երբ դրսից միջամտություն չի սպասվում՝ իրագործելու վաղուց փայփայած նպատակը՝ հայ բնակչության լրիվ բուլացում, եթե ոչ ոչնչացում: Այստեղ ուղղակի բնույթի պատճառներն ու երկրի տարբեր տեղերում խռովության փորձերը միայն հարմար պատրվակ էին:

Ընդ որում՝ իշխանություններն սկզբունքորեն իրավացի են համարում, որ անմեղները պետք է վարձահատույց լինեն մեղավորների արարքների համար, որոնց չեն կարողանում բռնել:

Տեղահանության միջոցառումներն անցկացնելիս վալին մեկ վկայակոչում էր բարձրագույն հրամանատարության հրամանները, մի ուրիշ անգամ՝ Կ. Պոլսից տրված հրամանները: Գլխավոր հրամանատարը համառորեն պահանջում էր արտաքսման անխնա արագացում և հաճախ հրամաններ էր տալիս, որոնց կատարման պատասխանատվությունը գցում էր վալիի վրա՝ առանց արտաքսման անցկացման համար միջոցներ տրամադրել կարողանալու կամ ցանկանալու: Գլխավոր հրամանատարը տեղյակ էր առաջին տեղահանված հայերի սպանության, մաս՝ ուղեկցող ժանդարմների գործելակերպի մասին: Նրան հայտնի էր ճանապարհների անապահով լինելը, սակայն ոչինչ չէր անում՝ խոչընդոտը վերացնելու համար: Ավելին, հրամայում էր հայերին տեղափոխել հենց այդ ճանապարհներով: Այս գործելակերպն, արդարև, համապատասխանում է դեսպանի մոտ արած նրա այն արտահայտությանը, որ «պատերազմից հետո Հայկական հարց այլևս գոյություն չի ունենա»:

Կատարվածից հետո կարելի է վստահությամբ խոստովանել հետևյալը.

<sup>1</sup> Մոտավորապես 2775000 մարկ:

Հայերին արսորելու և ոչնչացնելու մասին որոշումն ընդունվել է Կ. Պոլսում երիտթուրքական կոմիտեի կողմից: Հավանաբար, նրա կողմից էլ հենց կազմակերպվել ու իրականացվել է այդ՝ ռազմական իշխանությունների ու զանազան հրոսակների օգնությամբ: Այդ նպատակով, բացի տեղական վարչությունից և ռատիկանության պետ Խուլուսի բեյից և գլխավոր հրամանատար Մահմուդ Քյամիլ փաշայից, տեղերում գտնվում էին կոմիտեի անդամներ Հիլմի բեյը, Էրզրումի երեսփոխան Շաքիր բեյը, Սեյֆուլա բեյը:

**Փոխգնդապետ Շպանզե**

**Կ. Պոլսի գերմանական զինվորական միսիային**

**150.**

**Հալեպի կայզերական հյուպատոսություն**

**Հեռագիր**

*Ուղարկված է Հալեպից 25 օգոստոսի 1915թ.  
Ստացված է Բերայում 25 օգոստոսի 1915թ.*

**Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը**

Ջենալ փաշան ներքին գործերի նախարարի պարզ հրամանին՝ բողոքական հայերը կարող են մնալ տեղերում, տվել է հակառակ հրամանը: Առաջինը վալին նրա ուշադրությունը հրավիրեց այդ հակասության վրա:

**Ռ-յուլեր**

**151.**

**Կայզերական Գերմանիայի դեսպանություն**

**Հեռագիր**

*Բերա, 27 օգոստոսի 1915թ.*

Երուսաղեմի գերմանական գլխավոր հյուպատոսությանը  
Բ. Դռան որոշման համաձայն՝ բողոքական հայերը գերծ էին մնացել տեղահանությունից: Ջենալ փաշան Հալեպի վիլայեթի վերաբերյալ, ըստ այնտեղի հյուպատոսի հեռագրի, տվել է հակառակ հրամանը: Խնդրում եմ, եթե Ջենալ փաշային բռնացնեք այդտեղ, ջանացեք ձեռք բերել հակառակ հրամանը, հնարավոր է՝ պարզեք դրա պատճառները:<sup>1</sup>

**Հոհեմլոհե**

**152.**

**Կայզերական Գերմանիայի դեսպանություն**

**Հեռագիր**

*Բերա 27 օգոստոսի 1915թ.*

**Հալեպի գերմանական հյուպատոսությանը**

Ես խնդրեցի Երուսաղեմի հյուպատոսությանը՝ Ջենալ փաշային առարկել բողոքական հայերի կապակցությամբ: Բ. Դռանը բացատրեցին՝ կաթոլիկ և բողոքական հայերի համար բացառությունը տարածվում է միայն Հալեպ քաղաքի և ոչ վիլայեթի վրա:

**Հոհեմլոհե**

**153.**

**Հալեպի կայզերական հյուպատոսություն**

**Հեռագիր**

*Ուղարկված է Հալեպից 26 օգոստոսի 1915թ.  
Ստացված է Բերայում 27 օգոստոսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ժամանակին զինժառայությունից հրացանով փախած մի հայ օգոստոսի 19-ին Ուրֆայում, տնային խուզարկության ժամանակ, սպանել է երեք ոստիկանի:

Դրան հետևեցին կանոնավոր ջարդեր խաժամուժի կողմից, որի ընթացքում սպանվեցին մոտավորապես 200 տղամարդ՝ հայեր և ասորիներ: Կառավարությունը հաջորդ առավոտյան իշխանությունը կրկին իր ձեռքը վերցրեց:

**Ռ-յուպեր**

**154.**

*Դամասկոսի կայզերական  
հյուպատոսություն*

**Հեռագիր**

*Ուղարկված է Դամասկոսից 26 օգոստոսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 27 օգոստոսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ջենալ փաշան մեկնեց Երուսաղեմ, Դամասկոս չեկավ, ուստի չկարողացա նրա հետ խոսել: Այստեղի վալիին, որն այսօր մեկնում է նրա մոտ, ծանոթացրի օգոստոսի 14-ի հեռագրի բովանդակությանը: Մինչև հիմա 3000 հայ է բերված Հեջազի երկաթուղով Քերաքի շրջանը: 60000 հայ պետք է քշվեն այնտեղ և Հաուրան: Փորձագետների կարծիքով՝ ներկայումս Դամասկոսի նահանգում հնարավոր է ուտելիքով ու օքլանով ապահովել միայն 12000 գաղթականների: Բացի այդ Հեջազի երկաթուղային կայարանի ղեկավարությունը հայտնում է, որ չի կարող գնացքներ տրամադրել 60000 հայերի համար՝ առանց վնասելու Հեջազ-Եգիպտոս երկաթգծի կառուցման համար փոխադրումներին, հացահատիկի առաքմանը Հեջազ ու զինվորների տեղափոխություններին: Մինչև այժմ տեղական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ կարգին է:

Սակայն վախ կա, որ Քերաքում և Հաուրանում հայերը աստիճանաբար կդառնան բեղվիմների և դրուզների զոհերը:

**Լոյսվեդ**

**155.**

*Տրապիզոնի կայզերական  
հյուպատոսություն*

**Հեռագիր**

*Ուղարկված է Տրապիզոնից 28 օգոստոսի 1915թ.*

*Ստացված է Բերայում 28 օգոստոսի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այն հայերը, որոնք սկզբում վալիի թույլտվությամբ իրավունք ունեին մնալու, ինչպես Օտոմանյան բանկի ու վարչության ծառայողներն ու միայնակ կանայք, գիշերով հեռացվել և, ըստ երևույթին, սպանվել են քաղաքի սահմանի վրա: Վալին, որն անգոր է, թողեց իր դիրքերը և երեք շաբաթով մեկնեց երկրի խորքերը:

Ես ինձ թույլ եմ տալիս խոնարհաբար խնդրել՝ Ռազմական դատարան հիմնել Տրապիզոնում այս գործը քննելու համար: Սակայն այս միջոցառումից միայն այն դեպքում կարելի է հաջողություն սպասել, եթե դատարանի հիմնումն անսպասելի լինի պաշտոնյաների, ժանդարմների և երիտթուրքական կոմիտեի համար, և դատարանի անդամները բավականաչափ անկախ լինեն, որպեսզի չզայթակղվեն հայերի կողոպտված ավարը բաժանելով և չվախենան երիտթուրքական կոմիտեից:

**Բերգֆելդ**

**156.**

*Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն*

*Տրապիզոն, 27 օգոստոսի 1915թ.*

Տրապիզոնից հայերի համընդհանուր տեղահանության ժամանակ մի

քանիսը վալիի գրավոր կամ բանավոր թույլտվությամբ մնացել էին այստեղ: Խոսքը վերաբերում է Օտոմանյան բանկի, ծխախոտագործական վարչության ծառայողներին, ծառայողների երկու կանանց և մի քանի միայնակ կանանց: Այս գիշերը նրանց էլ կհեռացնեն և, հավանաբար, կսպանեն քաղաքի սահմանի մոտ: Ճիշտ է, Տրապիզոնի վալին երիտթուրքական կոմիտեի անդամ է, բայց ջանում է հնարավորին չափ մեղմացնել հայերի դեմ կիրառվող միջոցառումները և պահպանել իր անկախությունը: Նրա ազդեցության շնորհիվ հաջողվել է ետ կանչել տալ այստեղի տեսուչին և կոմիտեի առաջնորդին: Դժբախտաբար, նա իր ծառայողների և ոստիկանական մարմինների կողմից օժանդակություն չի ստանում: Շատ քիչ բացառությամբ, նրանք հարստանում են անամոթ ձևով հայերի տները կողոպտելով: Այնպես որ, վալին չի կարող համեմատվել հայերի կյանքի ու ունեցվածքի դեմ գործող ոճրագործների հետ: Մյուս կողմից նա ստիպված էր հակասել իր բնավորությանը՝ մնալ իրեն դուր չեկած չարագործությունների անգոր դիտորդ: Ահա թե ինչու նա թողեց դիրքերը և մոտավորապես երեք շաբաթով մեկնեց երկրի խորքերը:

Նկարագրված դեպքերը ցավալի են ոչ միայն գերմանական ու բուրքական հեղինակությունը նկատի առնելով, ինչպես նաև ելնելով համամարդկային հիմքերից, դրանք նաև վտանգ են ներկայացնում այն իմաստով, որ կոմիտեի մարդկանց դուր է գալիս նման հեշտ եղանակով հարստանալը, և եթե հիմա պատիժը չհետևի, հարմար պահին նրանք նման ձևով կգործեն հույն բնակչության դեմ:

Պատիժը հնարավոր է միայն Տրապիզոնում ռազմական դատարանի հիմնումով՝ դեպքը քննելու և դատապարտելու համար: Ընդ որում՝ դատավորների գործը հեշտ չի լինելու: Նրանց ոչ միայն կփորձեն գայթակղեցնել հայերից խլված ավարով կաշառելով, նրանց նաև վտանգ է սպառնում կոմիտեի մարդկանց դեմ գործողությամբ արատավորել իրենց ապագան:

Ես Կ. Պոլսի կալեբրական դեսպանությանը ներկայացրել եմ այս զեկուցագրի պատճենը:

*Իրավագիտության դոկտոր Բերգֆելդ*

*Նորին գերազանցություն ռախականցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին*

157.

*Կալեբրական Գերմանիայի Բերա, 31 օգոստոսի 1915թ. դեսպանություն*

Արձանագրություն

Պարոն դեսպանն օգոստոսի 30-ին դեսպանության խորհրդատուի ուղեկցությամբ այցելեց մեծ վեզիրին և առարկություններ արեց հայերի դեմ կատարվող գործողությունների կապակցությամբ:

Օգոստոսի 31-ին հայ կաթոլիկական պատրիարքը այցելեց Նորին պայծառափայլությանը, նրան հանձնեց Ադանայի գավառապետի համընդհանուր արտաքսման մասին հրամանի պատճենը և խնդրեց բարեխոսել՝ Ադանայի և Անկարայի հայերին վերաբերող արտաքսման հրամանը վերացնելու համար: Նորին պայծառափայլությունը դրանից հետո Թալեաթ բեյին խնդրեց ընդունել իրեն: Սակայն վերջինս ինքը եկավ դեսպանատուն՝ հաղորդելու, որ արդեն չեղյալ է համարել այդ արտաքսման հրամանները: Նա վաղը կուղարկի հակառակ հրամանի պատճենը: Թալեաթ բեյը միաժամանակ հայտարարեց, որ հակահայկական միջոցառումներն ընդհանրապես դադարեցվել են: “La question arménienne n'existe plus”<sup>1</sup>:

Պարոն դեսպանի ցուցումի համաձայն ես (հեռախոսով) հաղորդեցի հայ կաթոլիկական պատրիարքություն (քարտուղար Հուսիկին), որ Ադանայի և Անկարայի հայերի արտաքսում այլևս տեղի չի ունենա: Պարոն դեսպանը խնդրում է, հենց որ ստանաք հակառակ հրամանի պատճեն, պատրիարքին գրավոր հայտնեք այդ մասին:

*Գյուպերպ*

158.

*Հալեպի կալեբրական հյուպատոսություն*

<sup>1</sup> Հայկական հարց այլևս գոյություն չունի:

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 31 օգոստոսի 1915թ.

Մտացված է Բերայում 31 օգոստոսի 1915թ.

Ա. Պոլսի գերմանական դեսպանությանը

Իմ բողոքից հետո երեկ վալին ներքին կարգով մեկ շաբաթով հետաձգեց այստեղ գտնվող Այնթապից և Մարաշից ժամանած հայ բողոքականների տեղափոխումն ավելի հեռու՝ սպասելով Չերդ պայծառափայլության կողմից Ջենալ փաշայի մոտ ձեռնարկած քայլերի արդյունքին: Ջենալ փաշան, հավանաբար, Երուսաղեմ կիսանի սեպտեմբերի 1-ին:

Ռ-յուլեր

Սեպտեմբեր

159.

Արտաքին գործերի գերատեսչություն

Հեռագիր

Բեռլին, 1 սեպտեմբերի 1915թ.

Բերայի գերմանական դեսպանությանը

Մամուրեթ ու Ազիզում, Մարաշում և Հարունիեում, ըստ գերմանական օժանդակության միության հաղորդագրության, հայերի հալածանքների հետևանքով վնաս է հասցվել նրա հաստատություններին: Խնդրում եմ միջոնորդեք, որ որք երեխաները չհեռացվեն գերմանական հաստատություններից:

Յիսերման

160.

Կայգերական Գերմանիայի դեսպանություն

Բերա, 4 սեպտեմբերի 1915թ.

Թալեաթ բեյը սույն ամսվա 2-ին ինձ հանձնեց տարբեր հեռագրային հրահանգների գերմաներեն քարգմանության պատճենները, որոնք նա ուղղել է հայկական հետապնդումների գործերի հետ առնչվող գավառական պաշտոնյաներին: Դրանով նա հաստատ ցանկանում էր ապացուցել, թե կենտրոնական կառավարությունը լրջորեն ջանք է գործադրում՝ երկրի ներսում հայերի դեմ կատարվող բռնություններին վերջ դնելու և տեղափոխման ժամանակ արտաքսվածներին սնուցողով ապահովելու ուղղությամբ: Այս կապակցությամբ Թալեաթ բեյը սրանից մի քանի օր առաջ ինձ արել էր հետևյալ արտահայտությունը. “La question armenienne n'existe plus”:

Առաջին և երկրորդ հեռագրերում ամսաթիվը նշված չէր, առաջինը պետք է որ ուղարկված լիներ օգոստոսի 31-ին<sup>1</sup>:

Մինչև իմ հետագա գեկույցը ներկայացնելը, թույլ տվեք նկատել, որ Տրապիզոնի կայսերական հյուպատոսի հեռագրից հետո էլ օգոստոսի վերջին օրերին այնտեղից գիշերով հեռացվել են մի խումբ մինչև այժմ խնայված հայեր (որոնց թվում՝ Օտոմանյան բանկի, վարչության ծառայողները և կանայք) ու քաղաքի մոտակայքում սպանվել:

Այստեղի հայ-կաթոլիկական պատրիարքը ևս գաղթականների պատմածների հիման վրա հաղորդում է, որ Անկարայի հայերը (հիմնականում կաթոլիկները), այդ թվում արքեպիսկոպոսն իր հոգևորականության և բազմաթիվ միանձնուհիների հետ, օգոստոսի 30-ին հեռացվել են Անկարայից և որոշ հեռավորության վրա բոլորը, առանց բացառության, սպանվել:

**Հոհեցողիկ**

**Նորին գերագանցություն ռայսականցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

**Հավելված I**

*Օսմանյան ներքին գործերի նախարարություն*

**Հեռագիր**

Խուդավենդիկյարի, Անկարայի, Կոնիայի, Իզմիրի, Ադանայի, Մարաշի, Ուրֆայի, Հալեպի, Ջորի, Սեբաստիայի, Բյուրահիայի, Կարասիի, Նիզդեի, Մամուրեթ ու Ազիզի, Դիարբեքի, Գարահիսարի, Կեսարիայի, Էրզրումի գավառային իշխանություններին

Քանի որ օսմանյան կառավարությունը հայերին իրենց բնակավայրերից նախապես որոշված գոտի տեղափոխելով՝ հետապնդում է միայն մեկ նպատակ՝ խանգարել այս ազգի թշնամական գործունեությունն ու ձեռնարկումը կառավարության դեմ, ինչպես նաև զրկել նրանց հայկական պետություն ստեղծելու ազգայնամուլական ձգտումներին հետամուտ

1 Բովանդակությունը հաղորդված է Էրզրումի, Ադանայի, Հալեպի հյուպատոսություններին:

լինելու հնարավորությունից, և քանի որ օսմանյան կառավարության նպատակը այս ազգի ոչնչացումը չէ, ուստի վերջնականորեն որոշված է ձեռնարկել բոլոր միջոցառումները՝ տեղափոխման ժամանակ շարասյուները պաշտպանելու և սնունդով ապահովելու համար: Եվ, բացառությամբ իրենց բնակավայրերից արդեն հեռացված և իրենց ավելի հեռու տեղափոխելուն սպասող հայերին, մնացած բոլորին, ինչպես նաև, համաձայն արդեն արված հաղորդման, զինվորականների ընտանիքներին, պահանջվող թվով արևեստավորներին և կաթոլիկ ու բողոքական համայնքի հայերին այսուհետև չարտաքսել իրենց բնակավայրերից:

Այսպիսով հայտարարվում է, որ բոլոր այն անձանց դեմ, ովքեր կհարձակվեն շարասյուների վրա, կզբաղվեն կողոպուտով և իրենց անասնական հակումներով խայտառակ արարքներ կգործեն, նրանց օժանդակողների հետ միասին, ինչպես նաև բոլոր մեղավոր պաշտոնյաների ու ժանդարմների դեմ, խիստ պատժելու նպատակով դատական գործ կսկսվի: Պետք է հայտնվեն այն պաշտոնյաների անունները, որոնք հանցանք են գործել: Նման ոճրագործությունները կրկնվելու դեպքում, պատասխանատվությունը դրվում է վիլայեթների և լիվանների իշխանությունների վրա:

**Հավելված II**

*(Օսմանյան ներքին գործերի նախարարություն)*

1331 թ. օգոստոսի 16-ի (օգոստոսի 29 1915թ.) հեռագիրը

**Կոնիայի վիլայեթ**

Էրեզլիում գտնվող հայ գաղթականների համար ձեռք բերել հաց ու զեյթուն և բաժանել նրանց, ինչպես նաև տալ պաքսիմատ: Հայտնել, թե ինչքան ծախսեր են պահանջվում, որպեսզի այստեղից ուղարկվի անհրաժեշտ զումարը:

**Հավելված III**

*(Օսմանյան ներքին գործերի նախարարություն)*

Հեռագիր

Իզմիթի, Էսկիշեհիթի, Բյոթահիայի, Գարահիսարի, Խուղավենդիկյարի, Կոնիայի, Անկարայի, Ադանայի, Հալեայի գավառային իշխանություններին

Սույնով Ձեզ հանձնարարվում է՝ այն հայերի համար, որոնք հիմա գտնվում են կանգառներում, և նրանց համար, որոնց տանում են ավելի հեռու կանգառներ, երեք կամ չորս օրվա ընթացքում հաց ճարել և ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի նրանք ճանապարհին կարիքի մեջ չլինեն:

161.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 7 սեպտեմբերի 1915թ.

Տրապիզոնի գերմանական հյուպատոսությանը

Օգոստոսի 28-ի հեռագրի պատասխանը

Վերջերս (ենթադրվում է՝ օգոստոսի 29-ին) Բ. Դուռը հայտնել է վիլայեթների մեծ մասին, իհարկե, բացառությամբ Տրապիզոնի, որ տարագրված հայերի հանդեպ բռնություններ թույլ տվողները դատարանով կպատժվեն, իսկ բռնությունները կրկնվելու դեպքում՝ պատասխանատվության կկանչվեն գավառական իշխանությունները: Դեսպանությունն ստացել է այս հեռագրերի գերմաներեն թարգմանությունը: Խնդրում են ճշտել հաղորդված դեպքերի մանրամասնությունները, և եթե դրանք հաստատվում են, վալիի ուշադրությունը պատշաճ ձևով հրավիրել նշված հեռագրերի վրա:

Հռենյոհե

162.

Տրապիզոնի կայզերական հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Տրապիզոնից 8 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 9 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Վալիի հետ, որը դեռ չի վերադարձել և անգոր է երիտթուրքական կոմիտեի դեմ, ձեռնարկվելիք քայլերից ես ոչ մի հաջողություն չեմ ակնկալում: Այնուհանդերձ, հանձնարարությունը կկատարեմ, սակայն խնդրում եմ՝ մինչև այդ այստեղի գավառական իշխանությանը ուղարկել Բ. Դուռն նշված հեռագրերը:

Բերգ. Ֆելդ

163.

Երուսաղեմի կայզերական հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Երուսաղեմից 9 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 9 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Օգոստոսի 27-ի հեռագրի պատասխանը:

Ջեմալ փաշան հայտարարեց, որ Թալեաթ բեյն է որոշում, թե ինչ ծավալով է տեղի ունենալու արտաքսումը, մինչդեռ ինքը՝ Ջեմալ փաշան, պետք է հոգ տանի միայն ներքին գործերի նախարարի արձակած զինվորական հրահանգների կատարման համար:

Շմիդտ



164.

(Հալեայի կայգերական հյուպատոսություն)

Հեռագիր

Ուղարկված է Հալեայից 9 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 9 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Կառավարությունը մի քանի օր առաջ ընդհանուր ցուցում է տվել, որ այն հայերը, որոնք դեռևս գտնվում են իրենց բնակատեղերում, թողնվելու են այնտեղ: Սակայն կասկածելի համարվողներն արտաքսվելու են: Հալեայում գտնվող գաղթականների մեջ մահացության դեպքերն օրական հասնում են 25-ից 50 հոգու, հետո հասավ 60 հոգու: Այստեղ իշխում է դիզինտերիան, մյուս կայաններում մոլեգնում է տիֆը: Բանակի էտապի փողոցները վարակվելու վտանգի տակ են: Ուստի հենց զինվորական շահն է պահանջում, որպեսզի գաղթականները բուժում ստանան: Քաղցից տառապողների թիվը գնալով մեծանում է: Գնալով ավելի անհրաժեշտ է դառնում որևէ հաստատության օժանդակությունը, օրինակ՝ դրամի փոխանցում պատրիարքի միջոցով:

Ռ-յուպեր

165.

Ադանայի կայգերական հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Ադանայից 10 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 10 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Բ. Դոան կողմից կայգերական դեսպանությանը հայերի վերաբերյալ օգոստոսի 31-ին տված հաղորդումը սոսկ մի անպատկառ խաբեություն է, որովհետև դրանից հետո այդ որոշումը լրիվ վերացվեց այստեղ ուղարկված հրահանգիչ Ալի Մունիֆ բեյի պահանջով: Իշխանության մարմինները, իհարկե, գործում են միայն երկրորդ ցուցումով և շարունակում են արտաքսումն առանց դավանանքի տարբերության: Հրամանով սպանված հայերի թիվն այստեղ թերևս անցնում է 1909թ.<sup>1</sup> երիտթուրքերի կոտորածի զոհերի թվաքանակից: Հնարավոր է, որ ոչ գերմանական մամուլը, չնայած թուրքական հյուպատոսների մինչ այժմ արած հերքումներին, ավելի ճիշտ կարտացոլի այս սարսափները:

Ի դեպ, այստեղի կոմիտեի առաջնորդն սպառնացել է, որ եթե բոլոր հայերը չբռնազաղթվեն, համընդհանուր քրիստոնեական ջարդեր տեղի կունենան:

Բյուզե

166. (Ֆրանսերեն)

Ջինվորական կոմիսարի նամակը Բաղդադի երկաթգծի շինարարության 3-րդ բաժանմունք

Հալեայ, 10 սեպտեմբերի 1915թ.

Պարոն գլխավոր ինժեներ,

Այն բանից հետո, ինչ 4-րդ բանակին հայտնի դարձավ, որ Բաղդադի երկաթգծի ինժեներներն ու ծառայողները լուսանկարում են հայերի տեղափոխումները, նորին գերազանցություն Ջեմալ փաշան՝ բանակի գլխավոր հրամանատարը, հրաման արձակեց, որպեսզի ինժեներները և ծառայողները անհապաղ, 48 ժամվա ընթացքում զինվորական վարչություն հանձնեն բոլոր լուսանկարները, խավաքարտերը և պատճենները: Այն անձինք, ովքեր չեն հանձնի այդ լուսանկարները, կպատժվեն և կդատապարտվեն որպես պատերազմական դաշտում առանց թույլտվության

1 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ սպանվեցին 22000-26000 հայեր:

լուսանկարումներ կատարած անձինք: Խնդրում են բարի լինել տալու օրենքին համապատասխան հրահանգներ և, պարոն գլխավոր ինժեներ, ընդունել իմ յտր հարգանքը Ձեր հանդեպ:

**Չինվորական կոմիսար Նիզամի**

167.

**Կայգերական Գերմանիայի ղեկավարություն** **Բերա, 11 սեպտեմբերի 1915թ.**

Մույն ամսվա 9-ին կայգերական հյուպատոսության կառավարիչ Հուլտայնը Մոսուլից հեռագրել է, որ ըստ այլ աղբյուրներով հաստատված թուրք զինվորների տվյալների, որոնք Ջեզիրեից Բաղդադ գնալիս անցել են Մոսուլով, մոտավորապես մի շաբաթ առաջ քրդերի հրոսակները, որոնք Դիարբեքիի պատգամավորների կողմից հավաքագրվել էին այդ նպատակով, տեղական իշխանության մարմինների հանդուրժողականությամբ և զինվորականների մասնակցությամբ կոտորել են Ջեզիրե քաղաքի (Դիարբեքիի վիլայեթ) ողջ քրիստոնյա բնակչությանը:

Ջեզիրեի բնակչությունը 1891 թ. հաշվվում էր մոտավորապես 10000 հոգի, որոնց կեսը մահմեդականներ էին (նրանց թվում՝ 2000-ից ավելի քրդեր): Մյուս կեսը կազմում էին 4750 հայ (2500 լուսավորչականներ, 1250 կաթոլիկներ, 1000 բողոքականներ), 250 կաթոլիկ քաղկեդոնականներ և 120 ասորի յակոբյաններ:

Այս դեպքը, ինչպես նաև արդեն հաղորդված Տրապիզոնի և Անկարայի դեպքերը, բացահայտ հակասում են ներքին գործերի նախարարության վերջերս արձակած հրահանգներին, որոնք հույս էին տալիս, թե հայկական հետապնդումներին և դրանց հետ կապված ոճրագործություններին վերջ են դրվելու:

**Հոհենլոհե**

**Նորին գերագնացություն ռախսկանցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

168.

**Կայգերական Գերմանիայի ղեկավարություն**

**Հեռագիր**

171.

**Կայգերական Գերմանիայի ղեկավարություն** **Բերա, 12 սեպտեմբերի 1915թ.**

**Կայգերական ղեկավարությունը արտաքին գործերի գերատեսչությանը**

Վերջերս կայգերական ղեկավարությունը Բ. Դոան առաջ կրկին քայլեր ձեռնարկեց գերմանական օժանդակության միության հաստատությունների կապակցությամբ, որի արդյունքը եղավ հետևյալը.

Քահանա էհմանը սեպտեմբերի 10-ին Մամուրեթից հեռագրել է.

«Մեր խնամքի տակ գտնվող 450-ից ավելի այրիների և որբերի հետ աշխատանքը մինչև այժմ շարունակվում էր առանց լուրջ խանգարումների: Բոլոր դպրոցական շենքերն ու մի որբանոց վեց ամիս է, ինչ զբաղեցրել են զինվորականները, այդ պատճառով դադարեցված է դպրոցի գործունեությունը: Ուսուցչական կազմի կեսից ավելին այստեղ է, աշակերտների մեծ մասն իրենց ընտանիքներով արտաքսված են: Ցանկալի կլիներ, որ մեր դպրոցները կրկին բացվեին նախկին ծավալով՝ թուրքերեն և գերմաներեն լեզուների դասավանդումով»:

Սեպտեմբերի 7-ին Հալեպի կայգերական հյուպատոսությունը հեռագրել է.

«Մարաշի հաստատությունները շարունակում են գործել: Գերմանական և հայկական անձնակազմը, ինչպես և աշակերտները, մնում են»:

Ինչ վերաբերում է Հարունիեին, ապա ներքին գործերի նախարարը օգոստոսի սկզբներին հրաման էր տվել՝ ոչ մի ձևով նեղություն չտալ գերմանական որբանոցներին: Այս կապակցությամբ իմ հեռագրային հարցմանը Ադանայի կայգերական հյուպատոսությունը դեռ չի պատասխանել:

**Հոհենլոհե**

169.

Հալեպի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 12 սեպտեմբերի 1915թ.  
Ստացված է Բերայում 13 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղի վալին Բ. Դռան հրահանգները հասկանում է այնպես, որ այլևս չեն վտարվելու միայն այն բողոքականներն ու կաթոլիկները, որոնք իրենց բնակավայրերից դեռ չեն տեղահանվել: Դրա փոխարեն նա ուզում է ավելի հեռու քշել ոչ միայն դրսից Հալեպում հավաքված և հնաքնակ հայերին, այլև բողոքականներին ու կաթոլիկներին:

Խոնարհաբար խնդրում եմ միջնորդել, որ նոր, պարզ հրամաններ տրվեն, որպեսզի նրանց բոլորին թույլատրվի մնալ այնտեղ, որտեղ գտնվում են: Խնդրում եմ շտապել:

Ռ-յուսլեր

170.

Ադանայի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Ադանայից 13 սեպտեմբերի 1915թ.  
Ստացված է Բերայում 13 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հայերի դեմ ձեռնարկված միջոցառումները խստացվել են: Այրի կանայք, որքերն ու զինվորականների ընտանիքները, անգամ հիվանդներն

ու կույրերը պետք է անմիջապես ճամփա ընկնեն: Հյուպատոսությունը շրջապատված է օգնություն աղերսող կանանցով:

Խոնարհաբար խնդրում եմ պատասխանել, արդյոք հույս կա՞ այս որոշումը չեղյալ հայտարարելու:

Բյուզե

171.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Հեռագիր

Կոստանդնուպոլիս, 15 սեպտեմբերի 1915թ.

Ադանայի գերմանական հյուպատոսությանը

Սեպտեմբերի 13-ի հեռագրի պատասխանը  
Ներքին գործերի նախարարը խոստացավ այսօր հեռագրել Ադանա, որ հիշատակված կարգի մարդկանց չաքտրեն:

Հոհեմլիհե

172.

Հալեպի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 14 սեպտեմբերի 1915թ.  
Ստացված է Բերայում 14 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Քանի որ թուրքերը ի վիճակի չեն բազմաթիվ մարդկանց կերակրելու կազմակերպչական խնդիրը լուծել, չնայած Բ. Դռան հրամանին՝ կերակրել արտագաղթողներին, ժամանակի ընթացքում մեծամասնությունը պետք է սովամահ լինի: Եթե Բ. Դռան որոշումների վրա ազդելու մի փոքր հույս կա, ապա խոնարհաբար խնդրում եմ միջնորդել, որ գոնե բողոքա-

169.

Հալեպի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 12 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 13 սեպտեմբերի 1915թ.

միջառդար ցմուզումարածի մախազմար

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այստեղի վալին Բ. Դռան հրահանգները հասկանում է այնպես, որ այլևս չեն վտարվելու միայն այն բողոքականներն ու կաթոլիկները, որոնք իրենց բնակավայրերից դեռ չեն տեղահանվել: Դրա փոխարեն նա ուզում է ավելի հեռու քշել ոչ միայն դրսից Հալեպում հավաքված և հնարճակ հայերին, այլև բողոքականներին ու կաթոլիկներին:

Խոնարհաբար խնդրում եմ միջնորդել, որ նոր, պարզ հրամաններ տրվեն, որպեսզի նրանց բոլորին թույլատրվի մնալ այնտեղ, որտեղ գտնվում են: Խնդրում եմ շտապել:

Ռ-յուսլեր

170.

Աղանայի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Աղանայից 13 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 13 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Հայերի դեմ ձեռնարկված միջոցառումները խստացվել են: Այրի կանայք, որբերն ու զինվորականների ընտանիքները, անգամ հիվանդներն

ու կույրերը պետք է անմիջապես ճամփա ընկնեն: Հյուպատոսությունը շրջապատված է օգնություն աղերսող կանանցով:

Խոնարհաբար խնդրում եմ պատասխանել, արդյոք հույս կա՞ այս որոշումը չեղյալ հայտարարելու:

Քյուզե

171.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Հեռագիր

Կոստանդնուպոլիս, 15 սեպտեմբերի 1915թ.

Աղանայի գերմանական հյուպատոսությանը

Սեպտեմբերի 13-ի հեռագրի պատասխանը

Ներքին գործերի նախարարը խստացավ այսօր հեռագրել Աղանա, որ հիշատակված կարգի մարդկանց չաքտրեն:

Հոհենլոհե

172.

Հալեպի կայզերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 14 սեպտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 14 սեպտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Քանի որ թուրքերը ի վիճակի չեն բազմաթիվ մարդկանց կերակրելու կազմակերպչական խնդիրը լուծել, չնայած Բ. Դռան հրամանին՝ կերակրել արտագաղթվողներին, ժամանակի ընթացքում մեծամասնությունը պետք է սովամահ լինի: Եթե Բ. Դռան որոշումների վրա ազդելու մի փոքր հույս կա, ապա խոնարհաբար խնդրում եմ միջնորդել, որ գոնե բողոքա-

կանգնեին ու կաթոլիկներին բույլատրվի մնալ այնտեղ, որտեղ գտնվում են:

**Ռ-յուլեր**

173.

Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն

**Հեռագիր**

Բերա, 16 սեպտեմբերի 1915թ.

Հալեայի գերմանական հյուպատոսությանը

Սեպտեմբերի 14-ի հեռագրի պատասխանը:

Հալեայում գտնվող տարագիրների կարիքների մասին խոսք բացեցի Բ. Դռանը: Թալեաք բեյը նյութական օգնություն խոստացավ, սակայն ղեմ արտահայտվեց կաթոլիկների ու բողոքականների մնալուն:

**Հոհեմլոհե**

174.

(Արտաքին գործերի  
գերատեսչություն)

Բեռլին, 22 սեպտեմբերի 1915թ.

Բերայի գերմանական ղեսպանությանը

Սույն ամսվա 11-ի զեկույցի կապակցությամբ:

Կարծում եմ, Ձերդ գերագանցությունը Բ. Դռանը խոսք է բացել Ջեզի-րե քաղաքի քրիստոնյա բնակչության ղեմ գործադրվող բռնությունների վերաբերյալ, որոնց մասին արդեն հաղորդվել էր: Կարիքից ելնելով՝ խնդրում եմ նորից ու վճռական ձևով նախագրուչացնել կենտրոնական կառավարությանը, որ քրիստոնյա բնակչության, հատկապես հայերի պաշտպանության համար գավառական իշխանություններին տված իր

ցուցումներին հատուկ ուշադրություն դարձնի և խստորեն հետևի դրանց կատարմանը:

**Ֆիներման**

175.

Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն

Բերա, 25 սեպտեմբերի 1915թ.

Աղանայի և Հալեայի կայզերական հյուպատոսների հետագա հաղորդումները հաստատում են, որ Բ. Դռան հեռագրային ցուցումները՝ բարելավել տարագրված հայերի վիճակը տարբեր բացառությունների հետևանքով, որոնք ինքը՝ Բ. Դռուը, հենց սկզբից, և հետագայում էլ, արեց տրված արտոնություններից, և գավառական իշխանությունների կամայականության պատճառով, մեծ մասամբ չհասան նպատակին:

Ինչպես հաղորդում է պարոն Բյուզեն, սույն ամսվա 13-ին Աղանայից բռնագաղթվում են այրի կանայք, որբերը, զինվորականների ընտանիքները, անգամ հիվանդներն ու կույրերը:

Միաժամանակ, պարոն Ռ-յուլերը Հալեայից հաղորդում է, որ հակառակ Բ. Դռան հրամանին՝ ապահովել բռնագաղթվածներին սնունդով, նրանց մեծ մասը սովամահ է եղել, որովհետև իշխանություններն ի վիճակի չեն կազմակերպել մարդկանց զանգվածներին կերակրելու գործը:

Վերջերս պարոն Ռ-յուլերից ստացվեց սույն ամսվա 18-ին ուղարկված հետևյալ հեռագիրը.

«Այս օրերին Արևելքից ոտքով այստեղ հասան համարյա սովամահ կանանց և երեխաների շարասյուներ, և նրանց, որոնք ղեռ չէին մահացել, ուղարկեցին ավելի հեռու:

Բ. Դռան հրամանը՝ տեղում թողնել դեռևս իրենց բնակավայրերում գտնվողներին, խաբկանք է դառնում, որովհետև ուզածը մարդը կարող է կասկածելի համարվել: Դրանից շատ են օգտվում:

Հակառակ հրամանի՝ զինվորականների ընտանիքներին բացառություն չի արվում: Ծանր հիվանդները նույնպես անողոքաբար հեռացվում են:

Վերջերս նորից փոխադրումներ են կատարվում Մոսուլ և Դեյր էլ Ջոր: Հակառակ Դռան հավաստիացման, ամեն ինչ հանգում է հայ ժողովրդի բնաջնջմանը:

Հայերն ինձ խնդրեցին այս ամենը նորից ներկայացնել Ձերդ պայծառափայլությամբ»:

Թալեաթ բեյը, որի ուշադրությունը հրավիրեցի այս դեպքերի վրա, հոժարությամբ օգնություն խոստացավ: Ամեն դեպքում, ես չեմ հավատում, որ կենտրոնի հրամանները էականորեն կբարելավեն բռնագաղթված հայերի վիճակը:

### Հոհենլոհե

#### Նորին գերագանցություն ռախսկանցիեր պարոն Բեքման Հոլվեզին

176.

(Ֆոն Տիչկա)

Կ. Պոլիս, 30 սեպտեմբերի 1915թ.

Թուրքիայի միջոցառումները հայերին ոչնչացնելու համար Չմյուռնիայի և Ադրիանապոլսի վիլայեթներում հայերին թողնում են տեղում, ինչպես նաև մասամբ՝ Կ. Պոլսում: Մնացած բոլոր գավառների հայերը քշվել են Հալեպ, Մոսուլ, Դեյր էլ Չոր և այլ տեղեր, ուր նրանք չեն հասել: Նախկին պատգամավոր Չոհրապը՝ Կ. Պոլսի ամենանշանավոր փաստաբաններից մեկը, Ալեքսանդրեթից Ուրֆա տանող ճանապարհին մահացել է, պատգամավոր Վարդգեսը, որը արքայազն էր Դիարբեքիր, տեղ չի հասել:

Չմյուռնիայի վալի Ռահմի բեյը և Ադրիանապոլսի վալի Հաջի Աղլի բեյը հայտարարել են, որ չեն արտաքսի հայերին:

Չեկուցման համար ներքին գործերի նախարարի մոտ ժամանելով՝ երկուսն էլ պնդել են իրենց վճիռը: Կոմիտեում գոյություն ունեցող անհամաձայնության մի փաստ ևս:

Թալեաթը ծայրահեղ է. ինչ նա ուզել է, մինչև հիմա կատարվել է: Ռահմին ավելի բանիմաց է, քան Թալեաթը, և ավելի շատ է աշխարհ տեսել, գործնական է, սակայն նաև մարդասիրական բնավորություն ունի: Տարբեր քաղաքական հարցերի վերաբերյալ նրա, որպես պատգամավորի, հստակ դատողություններից ես բազմիցս եմ օգտվել: Նա շատ համախոհներ ունի կոմիտեում:

Ընդհանրապես Թուրքիայում տիրող տագնապալի լուրերին քիչ են ուշադրություն դարձնում, որովհետև կարծում են, թե շատ բան չափազանցված է նաև այն պատճառով, որ այսօրվա կառավարությանը գործնական շատ մեծ ազատություն են տվել: Այսօրվա կառավարությանը լրիվ անիրավացիորեն համարում են լիբերալ: Նա ամեն ինչ է, միայն ոչ լիբերալ, այն ավելի անսահման, ավելի դիկտատորական է, քան Աբդուլ Համիդին էր: Մամուլի բերանը փակել են, և այն միայն գովաբանում է ներկայիս իշխողներին:

Վանի ապստամբության պատճառով հայերի դեմ կառավարության կիրառած խիստ միջոցառումների մասին խոսում էին որպես ինքնապաշտպանության արդարացի միջոցառում, որը պետությունը պետք է ձեռնարկեր կարգուկանոն ստեղծելու համար: Հայերի մեղքը առավել ևս մեծ էր թվում, որ նրանք կապի մեջ էին գտնվում ազգի թշնամիների՝ ռուսների հետ, որոնք օժանդակեցին Վանում հայ հեղափոխական ապստամբությանը:

Այն, որ կառավարությունը երկաթյա մատներով բռնում և ծնկի է բերում անջատվել ձգտողներին՝ նրա իրավունքն է, որովհետև երկիրը բաղկացած է բազմաթիվ անհամատեղելի տարրերից, որոնք սպասում են հարմար առիթի՝ հայերին ընդօրինակելու, և ոչինչ այնպես վնասակար չէ, քան թուլություն ցույց տալն այնտեղ, որտեղ միայն ուժը կարող էր ամրապնդել կառավարության հեղինակությունը: Սակայն նա (կառավարությունը), եթե ազատության քղամիտը չդառնա պաճուճապատանք, պարտավոր է սահմանը ճանաչել, և իրավունք չունի մեղավորներին պատժելու փոխարեն՝ անմեղներին ու անպաշտպաններին ոչնչացնելու, ինչ է՝ որ նրանք պատկանում են ըմբոստների ռասային:

Այսօր խոսքը վերաբերում է այնպիսի զոհերին, որպիսիք բռնություններով հիրավի ոչ աղքատ թուրքական պատմությունը դեռ չգիտի: Սա ցնցող ճշմարտություն է, օգնություն է պահանջվում յուրաքանչյուրից, ով ի վիճակի է օգնելու:

Արդյո՞ք հայերի զոհերի թիվը անցնում է 500000-ից թե ոչ, նշանակություն չունի: Նշանակություն ունի այն, թե ինչպիսի հանգստությամբ և բնականոնությամբ է կատարվում հետապնդումը, և այն սնապարծությունը, որը հեզմանքով է վերաբերվում ամեն մի օտար միջամտության:

Հայերը չէին, որ ինձ մղեցին ավելի խորությամբ զբաղվել թուրքական կառավարության գործունեության պատճառներով և հետևանքներով,

հանդես գալ՝ որպես իրավունքի և մարդասիրության ներկայացուցիչ: Դրանք այստեղի սենատի թուրք սենատորներն էին, մեծ ծառայության և անբասիր բնավորության տեր մարդիկ, որոնք զգվում էին այն գործողություններից, որ կիրառում էր իրենց կառավարությունն անդրդվելի հանգստությամբ՝ որպես ինքնըստինքյան հասկանալի մի բան:

Երբ իմ մտերիմ հայ ընկերոջը՝ ներքին գործերի նախարարության քաղաքացիական հրահանգիչ Հակոբ Համամջյան էֆենդուն, որը 26 տարի շարունակ մեծ ջանասիրությամբ և անդրդվելի հավատարմությամբ աշխատել էր որպես իրավաբանական խորհրդատու և նահանգապետների ու գլխավոր նահանգապետների օգնական, հանկարծ առանց թռչակ նշանակելու հեռացրին ծառայությունից, ես բացատրություն պահանջեցի, որովհետև առաջին քայլին շուտով կարող էր հետևել երկրորդ՝ նրա ընտանիքի կյանքին վտանգ սպառնացող քայլը:

Ինձ հետ բարեկամացած ներքին գործերի նախարարության դիրեկտոր Հասան Ֆեհմի բեյից սույն թվի սեպտեմբերի 14-ի թվագրությամբ ստացա հետևյալ պատասխանը. «Ձեր ընկերոջ ազնվությունը կասկածից վեր է: Միայն ձեռնարկված ընդհանուր գործող միջոցառման պատճառով է նա հանգստյան ուղարկվել»:

Այսպիսին է նրա բացատրությունը, որովհետև այս մարդը ամենաջանասեր, լավագույն աշխատողն է և, ինչպես բացատրվում է նաև պաշտոնապես, փորձված ազնվության տեր է: Սակայն նա բազմանդամ ընտանիք ունի, ընտանիքի միակ կերակրողն է և կարող է ամեն վայրկյան ուղարկվել դուրս, որտեղից չի վերադառնա:

Սույն ամսվա 20-ին Հասան Ֆեհմի բեյն ինձ հայտնեց, որ նախարար Թալեաթ բեյն ուզում է բոլոր հայերին հեռացնել ներքին գործերի նախարարությունից, որովհետև թուրք պաշտոնյաները չեն ուզում այլևս նրանց հետ աշխատել: Սակայն թուրքական այս հրաժարումը կարող է միայն վնասակար ազդել ներքին կարգապահության վրա, և հետևանքը կլինեն մշտապես շարունակվող դժվարությունները երկրի ներքին վարչությունում: Այսպիսով, ներքին գործերի նախարարը, այնուհանդերձ, վճռել է իր գերատեսչության բոլոր հայերին, առանց անձի հեղինակությունը հաշվի առնելու, հեռացնել ծառայությունից: Նա գտնում է, որ ներքին գործերի գերատեսչությունում հայերն ավելի շատ հնարավորություն կունենան ընդհանուր ծրագրեր կազմելու և խոռվություններ հրահրելու, քան որևէ այլ նախարարությունում: Հայերին պետք է մաքրել, որովհետև նրանք ու-

նեն անհաշտ, վրեժխնդիր բնավորություն և արի են, ուրեմն՝ միաժամանակ պետության համար վտանգավոր տարր են:

Իմ այն առարկությանը, թե մյուս նախարարություններում՝ արդարադատության, ֆինանսների, հասարակական աշխատանքների, անտառտնտեսության և գյուղատնտեսական, ինչպես նաև պետական խորհրդում նույնպես գտնվում են հայեր, ինձ պատասխանեցին, որ հայերին պետք է վերջ տալ: Ներքին գործերի նախարարությունում սկիզբը դրվել է, ժամանակի ընթացքում կհետևեն նաև մյուս պետական մարմինները:

Այսպիսով, Թուրքիայում որոշված փաստ է՝ պետական բոլոր բնագավառներից հեռացնել հայերին և Օսմանյան կայսրությունն այսուհետև կառուցել մաքուր թուրքական հիմքի վրա:

Բոլոր հայերին գավառներից քշելու և Միջագետքում բնակեցնելու թուրքական ծրագիրը հին է: Հայերի արտաքսումն իրականացնելու խթան հանդիսացավ Վանի ապստամբությունը:

Երկաթյա կամրի տեր մի այնպիսի մարդու համար, ինչպես Թալեաթ բեյն է, որը կղիմի ամենաձայրահեղ քայլի, եթե դա ճիշտ է համարում, որի վրա ոչ ոք չի կարող ազդել և որը նպատակին հասցնող ամեն մի ձեռնարկում լավ է համարում, մի այդպիսի մարդու համար Վանի ապստամբության հետ կապված հայերի արտաքսումն անհրաժեշտություն էր դարձել:

Միևնույն է, թե ինչպիսի անարդարություններ և դաժանություններ տեղի կունենան այդ ընթացքում: Ինչ վերաբերում է հատկապես իր սեփական վճիռներին, Թալեաթ բեյը վերին աստիճանի լավատես է: Ինչպիսի առույգությամբ նա հրահանգներ է արձակում, նույնպիսի սառնասրտությամբ լսում է բոլոր բողոքները: Մինչդեռ վերջերս, այս տարվա սկզբին, հայերը համարվում էին ամենավստահելի, այո՛, Թուրքիայում ապրող քրիստոնյաներից միակ վստահելի տարրը: Այդ մասին կարելի էր կարդալ բոլոր թերթերում, և թուրք բարձրաստիճան մարդիկ ամեն մի ներկայացած առիթով հաստատում էին այդ:

Մարտից սկսած տեղի ունեցավ փոփոխություն, այնպես ընդհանուր, այնպես որոշակի, կարծես թուրքերը մինչև այժմ չգիտեին, թե ինչպիսի վտանգավոր օձ են տաքացրել իրենց ծոցում:

Որտեղ փորձառությունը չի վերահսկում և որոշում գործողությունները, այնտեղ գոյություն ունեն միայն կամայականություն և անհանգստություն: Ձեմալ փաշան, որպես ծովային նախարար, թուրք-ֆրանսիական

կոմիտեի ամենաեռանդուն հովանավորն է: Անգամ մահացու թշնամու՝ ռուսների համար պետք է ոսկե կամուրջներ կառուցվեն: Թաքե Յոնես-կուն, հաճախ հիշատակվող Ռուսիանիայի ներքին գործերի նախարարը, Թալեաթ բեյի ամենամտերին ընկերն էր:

Ընդհանրապես, ի՞նչ շահ կարող են ունենալ հայերը թուրքերից անջատվելուց: Նրանք, հակառակ Թուրքիայում ապրող բուլղարների, հույների և սերբերի, ոչ մի կապ չունեն իրենց թագավորության հետ, նրանք չափազանց լավ են հասկանում ամեն ինչ, որպեսզի վստահեն ռուսներին: Իսկ այն զենքերը, որոնք թուրքերը գտել են հայերի մոտ, մեծ մասամբ 1908 թվականին թուրքերից ստացած զենքերն էին, որպեսզի դրանցով օգնեն կոմիտեին՝ պաշտպանվելու ռեակցիայից: Եվ եթե թուրքերը չէին վստահում ռուսական սահմանի մոտ տեղավորված հայերին, ապա ինչու՞ Յալովայից, Անկարայից, Բրուսայից, Կաստամունից հայերին հեռացնում էին նույն դաժանությամբ, ինչպես ռուսական սահմանի մոտ գտնվողներին: Միայն այս տեղերից թշվել են 250000 հայեր: Նրանք 48 ժամվա ընթացքում պետք է թողնեին իրենց բնակարանները և բռնեին արքայի ճամփան՝ դեպի Հալեպ, Դեյր էլ Ջոռ, Համա, Մոսուլ, Հաուրան:

Թուրքական կառավարության կողմից ոչինչ չարվեց արտաբնակներին իրենց արտարավայրը փոխադրելու համար: Գնացքներն զբաղեցված էին զինվորականների փոխադրումով: Ոչ մի հայի համար տեղ չկար այնտեղ: Դանապարհների անվտանգությունն ապահովելու համար ոչինչ չձեռնարկվեց:

Չեթեները, 1877-78թթ. պատերազմի հին բաշիբոզուկները, կրկին հայտնվեցին այնտեղ, որտեղ էժան ձեռք կարելի էր ավար ձեռք բերել և սպանել՝ առանց ռիսկի դիմելու: Ինչքան որ թուրք զինվորը քաջ է և մարդկային, եթե չեն բորբոքվել նրա կրոնական զգացմունքները, այնքան վախկոտ ու անմարդկային է հրոսակը: Վստահորեն կարելի է հաստատել, որ չեթեներին հրահրում և առաջնորդում էին երիտթուրքերը:

Այն վայրերում որտեղ տեղի են ունեցել հայկական ջարդեր՝ Բաբերդում, Մարաշում, Շապին-Գարահիսարում, Անկարայում, Մալաթիայում տղամարդկանց առանձնացնում էին ընտանիքից: Կանայք ինչ-որ հապճեպ կարողանում էին վերցնել, տանում էին հետները: Չեթեները հետևում էին անպաշտպանների քարավաններին՝ թալանում, բռնաբարում և սպանում, նայած թե ինչպես էին ցանկանում: Մի թուրք ավագ լեյտենանտ, որը կոչում էր Դարդանելում և վերջերս արձակուրդ էր եկել մայրաքաղաք,

լալով պատմում էր, թե ինչ են գրել իր ազգականները Տրապիզոնից ու Սեբաստիայից՝ թուրքերի կողմից ձեռնարկված հայկական ջարդերի մասին:

Հայ բարձր հոգևորականության մասին այսօր հայտնի է միայն, որ Չմյուռնիայի եպիսկոպոսը կենդանի է, պատրիարքը ենթադրում է, որ մյուս տեղերի հոգևորականների մեծ մասն սպանված է: Թե ի՞նչ է պատահել հայ եկեղեցիների, եկեղեցիներում հարյուրամյակներով հավաքված գանձերի հետ, ոչ ոք չգիտե: Ներքին գործերի նախարարին ուղղված պատրիարքի բոլոր հարցումները մնում են անպատասխան:

Թուրքերը սիրում են, որ իրենց գովաբանեն: Նախկին ժամանակներում նրանք լսում էին գովասանք և ուրախանում դրա համար, որը նրանց արարքների վրա տևական ազդեցություն չէր թողնում: Այսօր երիտթուրքերը բոլոր գովասանքները հալած յուրի տեղ են ընդունում և արբենում են իրենց անսխալականությամբ:

Իսկապես, ժամանակն է վերջ դնել թուրքերի հասցեին բոլորովին ավելորդ գովասանական անշնորհք աշխատանքին: Բայց Հեսեմի բարձրագույն դպրոցներում, որպես դասավանդվող առարկա, ուզում են մտցնել թուրքերեն լեզու: Եվ դա մի այնպիսի ժամանակ, երբ մոլորվում են փողոցներում՝ չկարողանալով կողմնորոշվել զուտ թուրքական գրություններով ցուցանակների միջև, և թուրքերը ստացված արժեքավոր առարկաների բոլոր անդորրագրերը, նույնիսկ ազգանունը, եվրոպացուն են ուղարկում թուրքերեն լեզվով: Այնպես որ, չես կարող իմանալ, արդյո՞ք դու ես այն ստանալու իրավունք ունեցողը: Պետք չէ չափից դուրս դուրագացություն ցուցաբերել և մեծամոլությամբ տառապողներին ամեն անգամ նոր նյութ տալ՝ իրենց անիրավացի սնապարծության համար: “Hilal”-ի մի ոգեշունչ հոդված պահանջում է, որ գերմանացի պրոֆեսորները, որոնք ուզում են դասախոսել այստեղի համալսարանում, չպետք է հայրենիքից իրենց հետ բարգմանիչներ բերեն, պետք է նրանց փնտրեն այստեղ: Իսկ հաջողությամբ դասավանդելու համար պետք է ջանանք թուրքերեն սովորել, որպեսզի դասավանդվող առարկաներն այդ լեզվով վարեն: “Hilal”-ի մեկ այլ առաջնորդող էմվեր փաշային, իր կարգադրելու ունակությամբ, կամքի ուժով և հանճարեղ գործողություններով, դնում է Հինդենբուրգի հետ նույն աստիճանին:

Սակայն առանց կանխակալության, գործերը լրիվ ուրիշ տեսք ունեն: Դեպի Մուեզի ջրանցք արշավանքից ստիպված հրաժարվեցին, որովհետև այն ձեռնարկվել էր ոչ ճիշտ ժամանակ և անբավարար միջոցներ



րով, քիչ էին ծանր հրետանիները և բեռնատար անասունները՝ ուղտերը, որոնք անհրաժեշտ էր ժամանակին ձեռք բերել:

Թուրքերը հանկարծակիի եկան արաբական Իրաքում անգլիացիների առաջխաղացումից և տեղյակ չէին Բասրայում անգլիացիների կողմից արշավանքի երկար նախապատրաստություններից: Դեպի Կովկաս արշավանքը ձեռնարկվեց անբավարար հանդերձավորված, որոնց պահանջները չէին ապահովված: Տիֆլ, որին զոհ գնաց բանակի մի ամբողջ կորպուս, վերագրվեց ծանր զրկանքներին, որոնց առանց պատճառի և ապարդյուն ենթարկվեցին զինվորները: Վանը դեռևս գտնվում է ռուսների ձեռքում, որոնք գտնվում են նաև Էրզրումի մոտակայքում: Դարդանելի պաշտպանության համար շատ բան արվեց: Ձինվորները լավ սպառազինված են և լավ պարենավորված: Արտակարգ արդյունքներից հետո, որոնք կատարվեցին Եվրոպայի աչքի առջև, կարելի է դատել Թուրքիայի հզորության մասին: Սակայն այնտեղ, որտեղ հրամանատարություն էին անում միայն թուրքերը, գործերի վիճակն այլ էր: Միայն գործերի քաջությունը ոչինչ անել չի կարող: Թուրքերը կանոնավոր ժողովուրդ չեն: Գեներալների մեծ մասը չզիտե հրամայել, նրանք չեն կարող օգուտ տալ իրենց ենթակա հրամանատարներին: Հարկավոր է մի ուսուցիչ, որը նրանց ցույց տա, քե ինչպես մի հոգին կարող է հաջողությամբ աշխատել միայն ամբողջության շղթայում և այնուհետև նրանց սովորեցնի հարձակվել, որը նրանց դեռ անձանթ է: Գերմանացիներն այստեղ կարող էին մեծ գործ կատարել: Նրանց անմոռանալի ծեր ուսուցիչ ֆոն դեր Գոյգ փաշան պետք է որ նորից իր ամուր ձեռքը վերցնեք սանձերը և ողջ մեխանիզմում միասնականություն հաստատեք: Դարդանելի մոտ գտնվող թուրքական բանակի հանդերձավորման գործում Էնվեր փաշայի ծառայությունը, իհարկե, չպետք է նվազեցվի: Նա արեց այն, ինչ կարող էին անել բարի կամքն ու ջանասիրությունը և պաշտոնի բարձրացումը: Սակայն առանց գերմանացիների այնպես չէր լինի, ինչպես եղավ:

*Ֆոն Տիչկա  
լրագրող*

177.

*Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն*

*Հեռագիր*

*Բերա, 30 սեպտեմբերի 1915թ.*

Արտաքին գործերի գերատեսչությանը

Մինչև սեպտեմբերի կեսերը Հանունիհեյնի հաստատությունն անխափան էր գործում, չնայած հայ ուսուցիչներին կրկին սպառնացել էին արտաքսումով: Դեսպանության միջամտությունից հետո Բ. Դուռը հակված էր հայ ուսուցիչներին և ծառայող անձնակազմին թողնել տեղում, իսկ վալին պնդում էր արտաքսել: Ի վերջո, Բ. Դուռը սեպտեմբերի 25-ի հեռագրով հրահանգել է ուսուցիչներին թողնել տեղում:

*Հոհենլոհե*

**Հոկտեմբեր**

178.

*(Արտաքին գործերի գերատեսչություն)*

Ծանուցում

*Բեռլին, 1 հոկտեմբերի 1915թ.*

Այսօր թուրքական դեսպանության խորհրդի ուշադրությունը համառոտ են հրավիրվեց այն բոլոր փաստարկների վրա, որոնք խոսում են Թուրքիայում հայ բնակչության հանդեպ մեղմ վարվելու օգտին: Հայ տարրի հետապնդումն ու ոչնչացումը, որը Թուրքիայում առևտրի ու արդյունաբերության գլխավոր կրողն է, ամենաձանր տնտեսական վնասը հասցրեց հենց իրեն՝ Թուրքիային: Հայկական հետապնդումների մասին լուրերը մեծ հուզումնաբեր են առաջացրել ոչ միայն քչամի երկրներում, այլև չեզոք արտասահմանում և մեծ վնաս են հասցնում թուրքական կառավարության հեղինակությանը: Նույնիսկ Գերմանիայում բարեգործական շրջաններում նկատվում է աշխույժ անհանգստություն:

Էդիեն բեյը խոստացել էր խոսել դեսպանի հետ ու նաև զեկուցագիր ուղարկել Կ. Պոլիս: Նա խոստովանեց, որ տեղի են ունեցել ոճրագործություններ, չնայած արտասահմանում տարածված լուրերը խիստ չափազանցված են: Մինչև այս տարվա գարունը հայերի և թուրքերի միջև կատարյալ լավ հարաբերություն էր իշխում, այդ առավել ևս բացատրելի է նրանով, որ հայերը հեղափոխության ժամանակ համակրում էին կոմիտեին և նրա հետ միասին դուրս եկան հին ռեժիմի դեմ: Շրջադարձն սկսվեց ապրիլին, երբ դեպի Ադրբեջան (պարսկական) թուրքերի առաջխաղացման ժամանակ հայերը խռովություն բարձրացրին թուրքական բանակի քիկուներում, որի ժամանակ զոհվեց ոչ պակաս քան 18000 մահմեդական<sup>1</sup>: Ուստի զարմանալի չէ, որ մահմեդականները վրեժխնդրություն

<sup>1</sup> Հմմ. նախաբանը, էջ 78:

են ձեռնարկել: Հայերի տեղափոխումը երկրի խորքերը անհրաժեշտ էր՝ ելնելով ռազմական բնույթի պատճառներից և Թուրքիայի ինքնապահպանման շահերից: Եթե այդ ընթացքում տեղի են ունեցել ծայրահեղություններ, ապա կենտրոնական կառավարությունը բոլորովին հավանություն չի տվել դրանց:

Կայսրության տարածքային մեծ հեռավորությունների պատճառով և կայսրության սահմանափակ պայմաններում կենտրոնական կառավարությունը, դժբախտաբար, ոչ միշտ էր ի վիճակի կասեցնելու պաշտոնյաների անշնորհքություններն ու անփութությունները:

**Ռոզենբերգ**

179.

*Կայսերական Գերմանիայի  
դեսպանություն**Բերա, 5 հոկտեմբերի 1915թ.*

Բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանը՝ այստեղի հայ շրջանակներում հայտնի մի անձնավորություն, շատ այլ հայերի հետ ձեռքակալվեց սույն թվականի ապրիլի 24-ին, որպեսզի արտոբվի Անատոլիա: Սկզբնական որոշումով նրան ուղարկելու էին Այազ կամ Անկարա, ուր բերում էին ավելի ծանր մեղք գործած անձանց և մի մասին պահում էին ոստիկանական կալանքի տակ: Այստեղից արված միջնորդությունից հետո նրան ներկալել են Չանկրիում, որտեղ արտոբյալները կարող էին ազատ շարժվել և զբաղվել իրենց մասնագիտությամբ:

Տիկին Չիլինկիրյանը<sup>1</sup> և նրա մայրը տիկին Ապպելը քայլեր են ձեռնարկել վերը նշվածի համար թույլտվություն ձեռք բերելու՝ նրան այստեղ վերադարձնելու կամ Գերմանիա տեղափոխելու նպատակով: Թուրք պաշտոնյաները երկուսին էլ մերժել են, որովհետև նրանք, ինչպես արտահայտվել են այդ պաշտոնյաները, բժիշկ Չիլինկիրյանին համարում են այն «մտավորականներից», որոնց ժողովրդի վրա ունեցած ազդեցությունից վախենում են: Տիկին Ապպելը մեզ հայտնեց, թե ոստիկանապետ Բեդրի բեյն արտահայտվել է, որ բժիշկ Չիլինկիրյանին, լավ վարքի համար բավարար երաշխավորությամբ, կարելի է թույլատրել մեկնելու Գեր-

<sup>1</sup> Գերմանուհի է:

մանիա: Սակայն, երբ կայգերական դեսպանության պաշտոնյաներից մեկն այդ կապակցությամբ հարցում արեց Բեդրի բեյին, նա լրիվ ժխտեց, որ արել է աշխիսի արտահայտություն:

Ի վերջո, երկու տիկնայք մի փորձ էլ արեցին, որպեսզի բժիշկ Չիլինկիրյանի համար Անկարայում մնալու թույլտվություն ձեռք բերեն, երբ օգոստոսի 26-ին նրանից հեռագիր ստացվեց, որ նույն օրը նրան տեղափոխելու են Այաշ: Ներքին գործերի նախարարությունը, ելնելով մեր կողմից արված դիմումներից անմիջապես հեռագրով ցուցում տվեց բժ. Չիլինկիրյանին թողնել Չանկլըրիում կամ ետ բերել այնտեղ: Ի պատասխան այս հեռագրի, Չանկլըրիի գավառապետը օգոստոսի 30-ին հաղորդեց, որ բժիշկ Չիլինկիրյանն ամսի 26-ին Չանկլըրիից հեռանալուց հետո, Կալեջիկի մոտակայքում հարձակման է ենթարկվել ելուզակների կողմից և սպանվել: Նա հայտնեց նաև, որ պաշտոնյաները ձերբակալել են 12 հոգուց բաղկացած բանդայից 4-ին:

**Պաշտոնակապար բարոն  
Ֆոն Նոյրաթ**

**Պարոն ուսիսկանցլերին**

180.

Հալեպի կայգերական  
հյուպատոսություն

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 9 հոկտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 9 հոկտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Ուրֆայի հայ բնակչությանն աքսոր է սպառնում, սակայն նա որոշեց պաշտպանվել՝ միանգամից մեռնելը գերադասելով աքսորի մահվան սարսափներից: Ֆախրի փաշան Ուրֆայում է, շրջափակել է հայկական քաղամասը և կարգադրել հրետանիով քարուքանդ անել այն: Թուրքական զորքերը մինչև այժմ քիչ հաջողության են հասել: Ուրֆայի գերմանացիները չեն վնասվել:

Հոֆման

181.

Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն

Հեռագիր

Ուղարկված է Բերայից 13 հոկտեմբերի 1915թ.

Ստացված է Բեռլինում 14 հոկտեմբերի 1915թ.

Կայգերական դեսպանությունը՝

Արտաքին գործերի գերատեսչությանը

Նորին սրբազնություն Պապի կողմից սուլթանին ուղարկվել էր մի ձեռագիր գրություն, որտեղ արտահայտված էր նրա ցավակցությունը հետապնդվող հայերի համար: Կուրիան պրելատ Դուլչին հանձնարարել էր գրությունը սուլթանին հանձնել հատուկ ընդունելության ժամանակ: Քանի որ Բ. Դուռը Պապի դրսևորման մեջ իր սեփական քաղաքականության հանդեպ քննադատություն էր տեսել և գրավել էր այն դիրքը, թե քանի դեռ դիվանագիտական հարաբերությունները չեն վերականգնվել, Պապի պատգամավորը չի կարող պաշտոնապես ընդունվել սուլթանի կողմից, պրելատի փորձերը մինչև այժմ հաջողություն չեն ունեցել: Դուլչիի խնդրանքով ես մեծ վեզիրին հասկացրի, որ հենց Պապի գրությունը Բ. Դուռը հնարավորություն է ընձեռում իր պատասխանում ներկայացնել թուրքական տեսակետը Հայկական հարցում: Սուլթանի կողմից պատգամավորի պաշտոնական ընդունելությունն ամենուրեք այն տպավորությունը կառաջացնի, թե իբր դիվանագիտական հարաբերությունները պատրաստվում են վերականգնվել կամ վերականգնվել են:

Մեծ վեզիրը համոզվեց և հույս հայտնեց, որ ընդունելությունը կկայանա:

Վանգենհայմ

Հալեպի գերմանական  
ռեալական դպրոց

Հալեպ, 15 հոկտեմբերի 1915թ.

Որպես ռեալական դպրոցի գործունեության լայն ասպարեզ ունեցող ուսուցիչներ, մենք՝ ներքոստորագրյալներս, մեր պարտքն ենք համարում արտաքին գործերի գերատեսչության ուշադրությունը հրավիրել այն տխուր փաստի վրա, որ հայերի աքսորի ժամանակ կատարվող ոճրագործությունները, որոնց մենք ականատես ենք լինում ամեն օր, մեծ վնաս են հասցնում մեր աշխատանքին:

Չենք ուզում կանգ առնել այն արյունալի դաժանության վրա, որոնցով սովորաբար սկսվում է հայերի տեղահանումն իրենց լեռնային երկրից: Չենք պատմի այն մասին, թե ինչպես հազարավոր տղամարդկանց առանձնացնելով, երբեմն իրենց հարազատների աչքի առջև մորթում են, այն անթիվ աղջիկների, կանանց և երեխաների մասին, որոնց բաժին ընկավ իրենց պահակների և նրանց հանցակիցների կողմից անարգանքն ու խեղումը, և որոնց մերկ դիակներն ընկած են ճամփաների վրա, որտեղով պիտի անցնեն աքսորականների նորանոր խմբեր: Չենք պատմի նաև այն աննկարագրելի դաժանությունների, ծարավի, քաղցի մասին, որոնք ոչնչացնում են կենդանի մնացածներին՝ մեծ մասամբ մինչև վերջ կողոպտված այրիներին և որբերին, նախքան նրանք կմախք դարձած կհասնեն այստեղ, որպեսզի հետո կենդանի մնացած վեցից մեկը տեղահանվի և տառապանքների մույն ուղիով, առանց գոյության հնարավորության, կրկին թշվառ անապատները, որ իսպառ վերանա հայ ցեղը:

Կարծում ենք, այս ամենը հայտնի է արտաքին գործերի գերատեսչությանը՝ այս երկրի իր ներկայացուցիչների միջոցով:

Դրա փոխարեն թույլ ենք տալիս մեզ լույս աշխարհի հանել այս ժողովրդի բնաջնջման զանգվածային թշվառության մի փոքրիկ բեկոր, որը գտնվում է անմիջապես մեր դպրոցի կողքին և բաժանված է նրանից միայն մի նեղ նրբանցքով:

Դա մի հին, մեծ իջևանատուն է, որը թուրքական իշխանությունները տրամադրել են հայ տարագիրներին, հիմնականում հիվանդներին: Այսպիսով, պետք է ենթադրել, որ այն հիվանդանոցի մնաց մի բան է: Ներս

մտնենք նեղ մուտքով: Մի քանի նկուղներ՝ լեփ-լեցուն թշվառ, ուժասպառ կերպարանքներով, որոնք ցնցոտիների մեջ փաթաթված մեկնվել են մերկ գետնին, լավագույն դեպքում՝ իրենց շարժական գույքի մի քանի խղճուկ մնացորդների վրա: Կանայք և երեխաներ, երբեմն՝ ծերունիներ: Տղամարդ չկա:

Մտնում ենք բակ: Այն դարձել է միակ արտաքնոցը: Նկուղների շեմին հիվանդների, մեռնողների, մահացածների կույտեր՝ իրար խառնված, ընկած կեղտի մեջ: Միլիոնավոր ճանճեր՝ հյուծված հիվանդների և դիակների վրա: Տնքոցներ, հառաչանքներ, երբեմն բժիշկ աղերսելու ճիչ, տրտունջ ճանճերի կողմից աչքերի խոռոչները չարչարելու առիթով: Մի ծերունու դիակի կողքին երկու երեխա իրենց բնական պահանջն են կատարում:

Անցնելով կեղտով ծածկված բակի միջով մտնում ենք մի նկուղ: Մի դյուժին երեխա՝ կիսաքաղց, անզգա, նրանց մեջ մի քանիսը մահամերձ, գուցե արդեն մահացած: Ոչ ոք նրանց մասին չի հոգում:

Մութ որմնախորշից մի տղայի կիսանեխած դիակ են դուրս բերում, որի վրա ուշադրություն էին դարձրել միայն նեխածության հոտի պատճառով: Այստեղ այն որբերն են, որոնց մայրերը վերջին օրերս մահացել են նկուղներում: Ոչ մի բժիշկ չի երևում: Ոչ մի դեղ թեթևացում չի բերում: Նրանք ևս դատապարտված են սարսափելի մահվան: Նրանք սովամահ են լինելու: Կառավարությունն այս «հիվանդանոցին» տալիս է ոսպ, բլդուր, կամ զինվորական սև հաց: Այս թշվառների, հաճախ շաբաթներ, ամիսներ շարունակ կիզիչ շոգին առանց ջրի թշված այս արարածների հյուծված ստամոքսն այսպիսի սննդին այլևս չի դիմանում, որն առանց այդ էլ բավարար չէ: Հետևում են դիզենտերիան, հյուծվածությունը, տիֆը:

Երևում են դազադներով բեռնակիրներ: Վերջին օրերին մահացածների մի մասը դրվում է դազադների մեջ, տարվում ամենամոտ եկեղեցու բակը և դատարկվում ընդհանուր գերեզմանոցում: Դազադները տեղափոխելու փոխադրամիջոցը (աղբ կրելու միջոցներ) չի բավարարում: Չէ՞ որ այստեղ հասած կենդանի մնացածներից օրական մահանում են 100-ից մինչև 150 հոգի: Դիակները դուրս են բերվում բեռնասայակներով՝ իրար վրա լցրած, բրեզենտով ամոթալի մասերը ծածկած: Այստեղ-այնտեղ կախված գլուխներ են ճոճվում անցնող սայլակի ճոճնոցին համընթաց:

Մենք՝ գերմանացի ուսուցիչներս, այս տեսարանների թատերաբեմի անմիջապես կողքին ստիպված ենք մեր աշակերտներին գերմանական

մշակույթ սովորեցնել, որոնք դպրոց գալիս հավանաբար հանդիպել են դիակներով լի մի այսպիսի սայլակի կամ նկուղի բաց պատուհանից լսել են թշվառ գոհերի տնքոցները, կամ տեսել խղճուկ կերպարանքները, որոնք օղ շնչելու համար նեղ փողոցով ներքև են սողացել և հաց մուրացել: Եվ այժմ, սաստիկ հյուծվածության պատճառով ի վիճակի չլինելով վերադառնալ իրենց նկուղը, ճանճերով ծածկված, մահամերձ ընկած են փողոցում:

Էլ ի՞նչ տրամադրությամբ աշակերտները, եթե հայ են, պիտի կարողանան մեզանից՝ իրենց ուսուցիչներից, սովորել պատմություն և հայրենագիտություն, կրոն և այլն, եթե դպրոցի հարևան բակերում սովամահ են լինում իրենց հայրենակիցները:

Իսկ մահմեդական երեխաները կարծում եք չե՞ն կասկածի, երբ այդ տեսարանների առկայությամբ լսեն մեր դասերը: Չէ՞ որ կան նաև կարգին մահմեդականներ, որոնք նողկանքով դատապարտում են անմեղ երեխաների և կանանց զանգվածային կոտորածները՝ դրանք դիտելով որպես Աստծո գրասրտության պատվիրանի դեմ կատարվող մեղսագործություն: Եվ առանց ըմբռնելու, որ այսպիսի հանցագործ սարսափի հեղինակը կարող է իր սեփական կառավարությունը լինել, հեղինակներին փնտրում են գերմանացիների մեջ: Մերձավոր Արևելքի ժողովուրդների ապագա պատմական հիշողության մեջ կեղտոտ բծեր են սպառնում Գերմանիայի պատվո վահանին:

Մեր գործը չէ որոշել հայերին իրենց լեռնային երկրից վտարելու քաղաքական իրավունքը: Սակայն մենք ուզում ենք և պարտավոր ենք բարձրաձայն ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ գերմանական դպրոցի աշխատանքն այս երկրում մեծ վնասներ է կրում սարսափելի ձևով շարունակվող այս արտաքսումների պատճառով, որոնք ուղեկցվում են կանանց և երեխաների զանգվածային կոտորածներով, ինչպիսին պատմությանը դեռևս հայտնի չէ:

Հուսով ենք, որ արտաքին գործերի գերատեսչությանը, իր ազդեցության շնորհիվ, կհաջողվի գոնե վերջին պահին կանգնեցնել այս ամոթալի ոճրագործությունը, և մեզ՝ գերմանացի ուսուցիչներին, ազատել հանցակցության այս ամոթալի կասկածից, որ մեր նկատմամբ ունեն հիմա այստեղի, իսկ հետագայում կունենան նաև ողջ աշխարհի քրիստոնյաներն ու մահմեդականները, և որն օրեցօր ծանրանում է մեր հոգու վրա:

*Ավագ ուսուցիչ, դոկտոր Նիպագե*

Մեր գործընկեր դոկտոր Նիպագեի նկարագրությունը բոլորովին չափազանցված չէ: Արդեն մի քանի ամիս է, ինչ մենք այստեղ դիակների հոտն ենք շնչում և ապրում ենք մահացողների մեջ: Միայն այս աղաղակող վիճակին շուտափույթ վերջ տրվելու հույսն է թույլ տալիս մեզ դեռ շարունակել աշխատանքը դպրոցում, նաև՝ այն ցանկությունը, որ մեր թույլ օժանդակ ուժերով ապացուցենք այստեղի ոչ թուրքական բնակչությանը, որ մենք՝ գերմանացիներս, անձամբ ոչ մի կապ չունենք այս երկրի սարսափելի մեթոդների հետ:

*Դպրոցի դիրեկտոր՝ Հուրեր Փիլիսոփայության դոկտոր Էդուարդ Գրանդեր Բանասիրության դոկտոր Մարի Շպիկեր*

*Բեռլինի արքային գործերի նախարարության գերատեսչությանը*

183.

*Կայզերական Գերմանիայի դեսպանություն*

*Հեռագիր*

*Ուղարկված է Բերայից 15 հոկտեմբերի 1915թ.*

*Ստացված է Բեռլինում 15 հոկտեմբերի 1915թ.*

*Կայզերական դեսպանությունը արտաքին գործերի գերատեսչությանը*

Ամերիկյան դեսպան պարոն Մորգենթաուն, որի հետ թշնամական մամուլում գերմանական կառավարության ու գերմանական հյուպատոսական ներկայացուցիչների դեմ հայկական հետապնդումներին աջակցելու համար արված կշտամբանքի առթիվ զրույց ունեցա անգլիական Լորդերի պալատում, կրկին նշեց, թե ինքը հաստատ գիտե, որ գերմանական կողմից արվել է ամեն ինչ՝ ոճրագործությունները կանխելու և երիտ-

բուրքական կառավարությանը հայերի մեծ մասի դեմ ձեռնարկումից ետ պահելու համար: Իր հյուպատոսների գեկույցներից նրան հայտնի է նաև, որ գերմանացի հյուպատոսները մշտապես և ամենուրեք հոգ են տարել հայերի համար:

**Վանգենհայմ**

184.

*Կայզերական Գերմանիայի Բերա, 15 հոկտեմբերի 1915թ. դեսպանություն*

Ջեզիրեում կատարված կոտորածների մասին այստեղ հասած տեղեկության բովանդակությունը ժամանակին հայտնվել էր ներքին գործերի նախարարությանը, որն իբր թե տեղյակ չի եղել այդ դեպքերի մասին: Երբ վերջերս նախարարին այդ կապակցությամբ կրկին հարցապնդում է արվել, նա հայտարարել է, որ ինքը ժխտում է կասկածելի լուրերը. Թուրքիայում կոտորածներ տեղի չեն ունեցել: Այս քիչ գոհացուցիչ պատասխանից կարելի է եզրակացնել, որ Ջեզիրեում, իրոք, տեղի են ունեցել ոճրագործություններ, և Բ. Դուռը հույս ունի, որ հերքումով կխուսափի տևաճ բացատրություններից:

**Վանգենհայմ**

*Նորին գերագնացություն ուսխսկանցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին*

185.

*Հալեայի կայզերական հյուպատոսություն*

*Հեռագիր*

*Ուղարկված է Հալեայից 18 հոկտեմբերի 1915թ. Ստացված է Բերայում 19 հոկտեմբերի 1915թ.*

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Երեկ հրաման է արձակվել 14 օրվա ընթացքում քաղաքը մաքրել արտոյալ հայերից (20000 հոգի): Առայժմ նրանց հավաքելու են քաղաքից դուրս գտնվող համակենտրոնացման ճամբարներում: Թավրիզից հարավ երկաթգիծն այլևս չի տրամադրվելու արտոյալներին տեղափոխելու համար: Սեփական փոխադրական միջոցներ չունեցող ընտանիքներն ուղարկվում են ոտքով: Յուրաքանչյուր ընտանիք բեռների համար պետք է ստանա մի ուղտ, որը, սակայն, հաճախ հարկադրաբար ետ է մնում: Վիլայեթի քաղաքական գործերով դիրեկտորի տեղեկության համաձայն Ռաջուի և Կաթմայի մոտ կենտրոնացվել են 40000 հոգի: Շարունակում են գալ քարավաններ Արևմտյան, Միջին և Հյուսիսային Անատոլիայից: Դեպի հարավ (Հաուրանից արևմուտք, Ռաքա, Դեյր էլ Զոր) «վերաբնակեցման» են ուղարկվել 300000 հոգի: Ըստ վերը հիշատակված պաշտոնյայի, արքտրավայր հասնելով, նրանք հարկադրաբար ինքնահոսի կմատնվեն և «բոլորն էլ կմահանան»: Կառավարությունը «թերևս» հայերի բնակեցումը խաղաղությամբ գլուխ բերեր, չնայած մահմեդականների բնակեցումը նույնպես շատ անգամ ձախողվել է, սակայն հիմա ո՛չ փող ունի, ո՛չ էլ պաշտոնյա: Ամեն դեպքում, բնակության համար բացակայում է ամեն ինչ՝ համակենտրոնացման ճամբարներ չեն ուղարկվում ո՛չ վրաններ, ո՛չ բավարար այուր, ո՛չ էլ վառելանյութ: Իշխանությունները բռնագաղթված գյուղացիներից խլել են նույնիսկ քլունգներն ու բահերը: Համընդհանուր համոզվածությունն այն է, որ բոլոր արքտրվածները մահվան են դատապարտված: Ի միջի այլոց, ոչ միայն բոլոր քրիստոնյաներն են կարծում, թե Գերմանիան համաձայն է այս զանգվածային սպանությանը, այլ նաև երկրի մահմեդական բնակչությունը՝ մի մասը հավանությամբ, մի մասը՝ նաև պախարակելով:

**Հո.Ֆման**

186.

*Հալեայի կայզերական հյուպատոսություն*

Հեռագիր

Ուղարկված է Հալեպից 18 հոկտեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 19 հոկտեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Այսօրվանից ունևոր հայերին թույլատրվում է տեղափոխման ժամանակ օգտվել գնացքից կամ սեփական փոխադրամիջոցից: Եթե մեր կողմից ձեռնարկվեր և հնարավոր լիներ այս արդեն տնտեսական տեսակետից անխնաստ զանգվածային կոտորածի սահմանափակումը, ապա խոսքը կվերաբերվեր հետևյալին.

1. Թողնել բոլորին, ովքեր դեռ արտաքսված չեն, առաջին հերթին՝ Հալեպի տեղացի ազգաբնակչությանը (որը նույնպես վախենում է արտաքսման հրամանից), ինչպես նաև այն արտագաղթվածներին, որոնք քաղաքում հիմնական բնակարան են գտել:

2. Անմիջապես կազմակերպել բնակեցումը՝ ներդնելով նշանակալից միջոցներ, այդ գործում ներգրավելով Դամասկոս, Համա, Հոմս քաղաքները և դրանց շրջակայքը, հնարավոր է՝ միայն ժամանակավոր, ավելի հեշտությամբ տեղավորելով կեսին:

3. Թույլ տալ արտագաղթ:

Այն բանից հետո, ինչ Բ. Դուռն անձամբ վերջերս Սիրիայից (Ուրֆա) արտաքսել է բնամական կողմի բազմաթիվ օտարերկրացիների, ռազմական բնույթի կասկածներն անհիմն են:

Հոֆման

187.

Արտաքին գործերի գերատեսչություն

Բեռլին, 20 հոկտեմբերի 1915թ.

Էրզրումի կայզերական հյուպատոսության առաքիչն ինձ հանձնեց Հայկական հարցի վերաբերյալ կայզերական դեսպանության այս տարվա օգոստոսի 5-ի թվագրությամբ զեկույցի պատճեն:

Ես համաձայն եմ Հայկական հարցում կայզերական ներկայացուցչի դիրքին և կարող եմ միայն ողջունել, եթե նա հնարավորին չափ հոգացել է հայ ազգաբնակչության համար: Միաժամանակ համաձայն եմ նրա ծրագրած փորձին, որ թուրք ներկայացուցիչների և դաշնակցական կուսակցության առաջնորդների միջև փոխըմբռնման ուղի հարթելու միջոցով ողջամտորեն հանդուրժելի կյանքի պայմաններ ստեղծվեն:

Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ համապատասխանաբար տեղյակ պահել պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերին:

Յիմերման

Նորին գերազանցություն կայզերական դեսպան պարոն բարոն ֆոն Վանզենհայմին, Կ. Պոլիս

188.

Կայզերական Գերմանիայի հյուպատոսություն

Հալեպ, 25 հոկտեմբերի 1915թ.

Ձերդ գերազանցություն, պատիվ ունեն «Westminster Gazette»-ում՝ իմ դեմ բարձրացված մեղադրանքներին՝ իբր ես ղեկավարել եմ և խրախուսել թուրքական շարժումը հայերի դեմ, որպես պատասխան կից ուղարկել երկու նամակ, որոնք ցույց են տալիս, թե ինչ կարծիքի եր Մարաշի ամերիկյան միսիան, որտեղ եղել եմ գործուղումով սույն թվի մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը: Առաջին նամակն ուղղված է գերմանացի միսիոներ պարոն Բլանկին: Հեղինակը անգլոհպատակ Ի.Ս. Վուդլին է (կանադացի) և հիմա ղեկավարում է ամերիկյան միսիան Մարաշում: Երկրորդ նամակը միսիայի վարչությունից է, կրկին պարոն Վուդլիից՝ ուղղված անձամբ ինձ, որը ցանկություն է հայտնում, որ ես գործի դնեմ իմ ազդեցությունը, որպեսզի պարոն Բլանկը դառնա Մարաշի գերմանական հյուպատոսության գործակալը՝ ըստ երևույթին համոզված լինելով, որ այդպիսի ծառայություն կմատուցվի նաև ամերիկյան միսիայի շահերին: Այս ամեն-

1 Նաև մյուս բերքերում: Լուրն սկզբում հայտնվեց «Թայմս»-ում՝ Կահիրեից ուղարկված հեռագրի ձևով:

նր չէր լինի, եթե ամերիկացիները, և առաջին հերթին պարոն Վուդլին, լրիվ վստահ չլինեին մեղմ գործելու և անհարկի դժբախտությունը կանխելու իմ ձգտումներին: Եվս մեկ ապացույց եվրոպական մշակութային համագործակցության, որը, հակառակ պատերազմի, իրեն զգացնել է տալիս Մարաշում տիրող հատուկ պայմաններում: Միսիայի երկու կարծիքներն էլ արտահայտվել են ինքնաբուխ, ես ոչ մի դեպքում չեմ առաջադրել դրանք: Ես այդպիսի կարծիքների կարիքը չունեի և չէի կարող կանխատեսել, թե դրանք երբևէ իմ կողմից կարող են օգտագործվել թշնամական գրապարտանքները ետ մղելու համար: Միսիոներները չէին ձգտում հյուպատոսական գործակալ նշանակել իրենց սեփական ազգից, որովհետև գիտեին ամերիկյան կառավարության սկզբունքային վճռոր՝ միսիոներին չնշանակել հյուպատոսության գործակալ:

Յուրաքանչյուր պատճեն վավերացված է այստեղի ամերիկյան հյուպատոսի կողմից:

**Ռ-յուպեր**

**Նորին զերազանցություն կայզերական դեսպան պարոն բարոն ֆոն Վանզենհայմին**

*(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)* **Բերա, 9 նոյեմբերի 1915թ.**

Պատճենները երկու բնագիր հավելվածների հետ խոնարհաբար ներկայացված են Ձերդ գերազանցության ռայխսկանցլեր պարոն ֆոն Բերման Հոլվեգին:

**Նոյրաբ**

**Հավելված I (ֆրանսերեն)**

Գերմանացիները մարդասպաններ են

*Լոնդոն, 30 սեպտեմբերի՝ Կահիրեից «Թայմս»-ին հաղորդում են.*  
«Գերմանացի հյուպատոսներից ոմանք ղեկավարում կամ խրախուսում էին հայերի կոտորածները:

Հենց Հալեպի գերմանացի հյուպատոս Ռ-յուպերը մեկնել էր Հալեպ, որպեսզի անձամբ ղեկավարի ջարդերը, իսկ վատահամբավ բարոն Օպենհայմն՝ առաջարկել էր դաշնակիցների կանանց և երեխաներին տեղափոխել Ուրֆա, որտեղ նրանք չէին կարող ականատես չլինել զինվորականների կողմից քաղաքի բառացիորեն արյունով ծածկված փողոցներում կատարվող բարբարոսություններին» (Հավաս):

**Հավելված II**

**Ռեյտերի հեռագիրը**  
*Ամստերդամ, 7 հոկտեմբերի ժամը 8 անց 44 րոպե*

Ինչպես հաղորդում է Ռեյտերը, երեկ անգլիական լորդերի պալատը զբաղվել է հայերի ծանր վիճակով: Լորդ Կրոմերը ասել է, որ սպանված հայերի թիվը հասնում է 800000-ի: Չնայած ինքն ապացույցներ չունի Գերմանիայի մեղսակցության համար, սակայն Թուրքիայի վրա մեծ ազդեցություն ունենալու շնորհիվ Գերմանիան անտարակույս մեղավոր է: Լորդ Գրեյը հայտարարել է՝ որքանով որ փաստերը պաշտոնապես հաստատված են, օգտակար կլինի դրանք հայտնի դարձնել ողջ աշխարհին, և ավելացրել է, որ կառավարությունը չի կարողացել պաշտոնական հաստատում ստանալ Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ: Սակայն այն, որ գերմանական հյուպատոսության պաշտոնյաները Փոքր Ասիայում ոչ միայն դիտել են ոճրագործությունները, այլև ակտիվորեն խրախուսել դրանք, երևում է ամերիկյան ականատեսների զեկուցագրերից, և նաև այն բանից, թե ինչեր են արել գերմանացիները մյուս տեղերում:

1 Ուրֆայում կոիվներն սկսվելուց առաջ, թուրքական կողմից մինչ այդ Հալեպում և այլ քաղաքներում տեղավորված թշնամական երկրների ներկայված քաղաքացիներին (ֆրանսիացիներ, անգլիացիներ, իտալացիներ) բերեցին Ուրֆա: Բարոն Օպենհայմին կշտամբում են, որ նա խորհուրդ է տվել նրանց բերել այստեղ, որպեսզի նրանք տեսնեն այնտեղի արյան քաղնիքը: Բավական է ցույց տալ այդ մեղադրանքների անհերքությունը: Ներկայվածներին ոչինչ չէր պատահել:



Հնարավոր է, որ նրանք այստեղ էլ մեղավոր են: Այնուհետև լորդ Գրեյը, որը հանձնաժողովի նախագահն է և ղեկավարում է քննությունը, իրագեկ է դարձրել ևս մի քանի ոճրագործությունների մասին, օրինակ՝ Տրապիզոնում ողջ հայ ազգաբնակչությանը նավերով տարել են ծովի խորքը և խեղդամահ արել: Այն, որ գոհերի ընդհանուր թիվը հասնում է 800000-ի, նրան շատ հավանական է թվում:

**Հավելված III (անգլերեն)**

31 մարտի 1915թ.

Միրելի պարոն Բլանկ,

Թույլ տվեք Ձեր միջոցով շնորհավորել Ձեր հյուպատոսին՝ Մարաշ գալուց ի վեր նրա ձեռք բերած հաջողության առթիվ: Իրերի ընդհանուր վիճակում ակնառու դրական տեղաշարժ կա, որը մենք վերագրում ենք նրա ազդեցությանը: Հուսով ենք, որ նա ի վիճակի կլինի հնարավորին չափ երկար մնալ այստեղ՝ հավաստելու, որ ազնվորեն կկատարի իրեն ուղղված ցանկացած դիմում: Բարի եղեք հայտնել նրան մեր երախտագիտությունը:

**Խորին հարգանքներով  
Ձեր՝ Ի. Սի. Վուդլի**

**Հավելված IV (անգլերեն)**

Մարաշ, 2 սեպտեմբերի 1915թ.

**Հալեայի կայզերական Գերմանիայի կառավարության  
հյուպատոս պարոն Ռ-յուլերին**

Պարոն, մենք ցանկանում ենք Ձեզ հայտնել, որ բարձր ենք գնահատում Ձեր ներկա այցը Մարաշ և գիտակցում, որ դրա արդյունքը կարող է երկարատև երաշխիք լինել, ուստի համարձակվում ենք Ձեզ դիմել ներքոհիշյալ խնդրանքով.

Հարկ չկա, որ մենք Ձեզ ներկայացնենք վերջին շաբաթների ընթացքում Մարաշում տիրող ծայրահեղ իրավիճակը, քանի որ դուք դրան քաջատեղյակ եք: Ուրախ ենք, որ Ձեր դրական ազդեցությունն իրեն զգացնել է տալիս: Համենայն դեպս, մենք երկյուղում ենք, որ Ձեր պաշտոնա-

կան ներկայության վերացման դեպքում կվերահաստատվի նախկին իրավիճակը: Մենք գտնում ենք, որ արտասահմանյան տերությունների կողմից մեկ կամ մի քանի ներկայացուցիչ պետք է գտնվի Մարաշում, գոնե մինչև դրության բարելավումը:

Այստեղի իրադրությանը ոչ ոք այնքան քաջատեղյակ չէ, որքան պարոն Կարլ Բլանկը, և այդ փաստը հաշվի առնելով, ցանկանում ենք Ձեզ դիմել հետևյալ խնդրանքով.

Որպես ամերիկյան միսիայի անդամներ մենք միասնաբար Ձեզ խնդրում ենք գործի դնել Ձեր ազդեցությունը՝ հասնելու այն բանին, որ պարոն Բլանկը նշանակվի կայզերական Գերմանիայի ներկայացուցիչ Մարաշում՝ խոստանալով օգնել նրան հնարավոր ամեն բանով, ցանկացած գործողության մեջ, որ նա կձեռնարկի այստեղ՝ տարբեր համայնքների բոլոր շահերը պաշտպանելու նպատակով:

Վստահ լինելով, որ այս խնդրանքը կարժանանա Ձեր հավանությանը և կրկին հայտնելով մեր երախտագիտությունն այն ամենի համար, որ Դուք արել եք այստեղ ավելի լավ պայմաններ ապահովելու ուղղությամբ, մնում ենք հարգանքներով Ձեր՝

**Մարաշում ամերիկյան միսիայի նախագահ՝ Ի.Սի. Վուդլի  
փոխնախագահ՝ Ջեյմս Քեյ Լայման  
քարտուղար՝ Քեյթ Ի. Էյնսլի**

**Հավելված V (անգլերեն)**

Կենտրոնական բուրքական քուլեջ Հալեայ, 9 դեկտեմբերի 1915թ.  
Այնթապ, բուրքական Ասիա

Հալեայ, կայզերական Գերմանիայի հյուպատոս  
հարգաբաժան պարոն Ռ-յուլերին

Պարոն, պատասխանելով սույն ամսվա 4-ի Ձեր գրությանը պատիվ ունեն հաստատելու, որ Այնթապում ոչ մի հուզում տեղի չի ունեցել<sup>1</sup>:

**Հարգանքներով Ջ. Ի. Մերիլ**

<sup>1</sup> Պարոն Բլանկի նշանակումը Մարաշում՝ որպես գերմանական հյուպատոսական գործակալ, չկայացավ ապրիլի 15-ին (N 26)՝ դեսպանի զեկուցագրում ներկայացված պատճառներով:

<sup>2</sup> Այս վերջին նամակը լրացուցիչ է ներկայացվել, որովհետև բշնամական մեղադրանքում ասվում է, թե իբր հյուպատոս Ռ-յուլերն Այնթապում ջարդ է կազմակերպել: Պարոն Ջ. Ի. Մերիլն այս քաղաքի ամերիկյան քուլեջի ղիրեկտորն էր:

**Նոյեմբեր**

189.

(Գլխավոր շտաբ)

**Հեռագիր**

Ուղարկված է Պլեսից 3 նոյեմբերի 1915թ.

Ստացված է Բեռլինում 4 նոյեմբերի 1915թ.

Կայզերական դեսպանությունը

արտաքին գործերի գերատեսչությանը

Գեներալ ֆոն Ֆալկենհայնը Էնվեր փաշային ուղարկել է հետևյալ հեռագիրը.

«Պատերազմական վիճակի զարգացումը ցույց է տալիս, որ Սիրիայից Միջագետք տանող երկաթուղիները պետք է ծայրահեղ ծանրաբեռնվեն: Խնդրում եմ՝ օգնեք, որպեսզի երկաթուղային ընկերությունները կարողանան պահել իրենց մասնագիտացված անձնակազմը, որը պատերազմի ժամանակ հայ ծառայողների արտաքսման պատճառով խիստ վնասվել է:»

**Թրոյքներ**

190.

Մոսուլի կայզերական հյուպատոսություն

**Հեռագիր**

Ուղարկված է Մոսուլից 4 նոյեմբերի 1915թ.

Ստացված է Բերայում 5 նոյեմբերի 1915թ.

Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը

Երեկ իր շտաբի հետ այստեղ ժամանեց Խալիլ բեյը: Հիվանդության պատճառով նա ստիպված է մի քանի օր մնալ անկողնում: Նրա շտաբի գեներալներից մեկն ինձ անմիջապես հայտնեց, որ Մոսուլի հայերին նույնպես պետք է կոտորեն, ինչը նա մտադրվել է անել: Անգամ ես չեմ կարող նրան ետ պահել դրանից, գերմանացիները դավաճանել են Թուրքիայի հետ հաստատված իրենց բարեկամությանը, որովհետև նրանք ուզում էին խանգարել հայերի կոտորածի իրագործմանը:

Անհրաժեշտ է, որ շտապ վճռական հրամաններ տրվեն Խալիլ բեյին, որպեսզի ամեն դեպքում խափանվեն հետագա կոտորածները:

Խալիլ բեյի ջոկատները, որոնք կոտորածներ են կազմակերպել հյուսիսում, վաղը կամ մյուս օրը կլինեն այստեղ:

**Հոլշտայն**

191.

(Կայզերական Գերմանիայի դեսպանություն)

**Հեռագիր**

Բերա, 5 նոյեմբերի 1915թ.

Մոսուլի գերմանական հյուպատոսությանը

Ի պատասխան նոյեմբերի 4-ի հեռագրի.

Արտաքին գործերի նախարարն անմիջապես դիմել է ռազմական նախարարին, որպեսզի նա հրահանգի այդտեղի զինվորական պաշտոնյաներին՝ ոչինչ չձեռնարկել հայերի դեմ:

**Նոյրաթ**

192.

Արտաքին գործերի գերատեսչություն

Բեռլին, 6 նոյեմբերի 1915թ.

Ծանոթության համար կից խոնարհաբար ուղարկում եմ Երզնկայի

Կարմիր խաչի արշավախմբի անդամ, գերմանացի բժիշկ, դոկտոր Նոյ-  
քիրիսի՝ Հայկական հարցի վերաբերյալ զեկուցագրի պատճեն:

(կնիք)

**Արցաքին գործերի գերապեսչություն**

**Կ. Պոլսի, կալզերական գործերի հավաքարմատար  
պարոն բարոն ֆոն Նոյրաքին**

**Հավելված**

Կարմիր խաչի արշավախումբ Երզնկա, 5 օգոստոսի 1915թ.

Հայկական հարցը Երզնկայում արդեն լուծված է: Կառավարության կողմից տեղում բողոքված մի քանի պահեստավորներից բացի, այստեղ այլևս տեղացի ոչ մի հայ չկա: Հետադարձ հայացք գցելով իմ մինչայժ-  
մյան հաղորդագրություններին, մտածում եմ, որ ես բավականաչափ ճիշտ եմ տարբերակել լսածս անձամբ տեսածիցս: Անշուշտ, եթե սահմա-  
նավակվենք միայն տեսածով, քիչ բան կմնա, որովհետև հնարավոր կո-  
տորածների դեպքում օտարներն ամեն դեպքում հեռացվում են: Թե ինչ-  
պես են այսպիսի բաները այստեղ կատարվում, բավականաչափ գիտեն  
հայկական հուզումների գիտակները: Մյուս կողմից դժվար է ճշտել, թե  
պատմություններում, որոնք լսում ես ամեն օր, ինչն է ճիշտ: Այնուամե-  
նայնիվ, ինչպես երևում է, այլ աղբյուրների պակասության պատճառով  
անհրաժեշտ է իրադարձությունները գրի առնել այնպես, ինչպես ես եմ ա-  
րել: Այն բանից հետո, ինչ նկատվում է այստեղ վերջին ժամանակներս,  
կարելի է ասել, որ հայերի արտաքսումն ավելի մարդկային դարձնելու  
համար ձեռնարկված քայլերը, որոնց մասին մենք մանրամասն չգիտենք,  
հաջող են եղել:

Եթե նախկինում այստեղով անցնում էին առանց գույքի խեղճ կա-  
նանց և երեխաների թշվառ խմբերը՝ շատ քիչ զինված մարդկանց ուղեկ-  
ցությամբ, ապա հետագայում այստեղով անցնող մարդիկ իրենց հետ ու-  
նեին նաև բեռնակիր կենդանիներ և անասուններ: Վերջում անցան Երզն-  
կայի բնակիչները՝ լավ ծանրաբեռնված եգասայերի մեծ քարավաննե-  
րով: Մարդիկ (ակնհայտորեն շատ էին նաև տղամարդիկ) շատ լավ տեսք

ունեին, քայլում էին փոքր խմբերով և պահպանվում էին բավականին  
մեծաթիվ ժանդարմներով՝ սպաների առաջնորդությամբ:

Ամենամեծ շարասյունն անձամբ ուղեկցում էր բարձրաստիճան մի  
պաշտոնյա՝ Բայազետի մյուքասարիֆը: Երզնկայի դաշտավայրում մար-  
դիկ տեղավորվեցին մի վրանաճամբարում և մոտավորապես մեկ շաբաթ  
հետո շարունակեցին ճանապարհը:

Երզրումի հայերի՝ ըստ պատշաճին տեղափոխումը, ըստ երևույթին,  
այնտեղի վալի Թահսին բեյի վաստակն է: Ափսոս, որ այստեղի իշխանու-  
թյուններն ուրիշ կերպ գործեցին:

Տրապիզոնի իրադարձությունները ևս, ըստ ճշգրիտ աղբյուրի, ցավա-  
լի են եղել: Այդ շրջանի մարդիկ այստեղով անցան հետիոտն և շատ քիչ  
գույքով կամ լրիվ առանց ունեցվածքի:

Արշավախմբի հարաբերություններն իշխանությունների և բնակչու-  
թյան հետ լավ են: Չնայած դրան, հայերը մեր վրա են բարդում պատա-  
հածի պատասխանատվությունը:

**Ամփոփում**

Տեղի է ունեցել բոլոր հայերի լրիվ արտաքսում այս երկրից, ըստ  
երևույթին՝ ի պատասխան Վանի դավաճանական գործողությունների:  
Առաջին շաբաթներին, անկասկած, կատարվեցին ամենաճանր սխալնե-  
րը: Հետագայում, արևելյան պայմանների համար, գործը բավականին  
կանոնավոր ընթացավ: Հունիսի կեսերից սկսած այստեղ կոտորածներ  
տեղի չեն ունեցել:

Տնտեսական հետևանքներն անկանխատեսելի են:

**Գովգոր Նոյրաք**

193.

Կալզերական Գերմանիայի Հալեպ, 8 նոյեմբերի 1915թ.  
հյուպատոսություն

Հայերի արտաքսումը հոկտեմբերի կեսերին հասավ իր գագաթնակե-  
տին, այնպես որ նրա տարածման մասին կարելի է պատկերացում կազ-  
մել, և պահը հարմար է ամփոփիչ ակնարկ տալու համար:

Ես այստեղ կշարունակեմ մի քանի իրադարձությունների նկարագրությունը և կարող եմ արժարժել մի քանի նկատառումներ: Կարլոս Մեծի կողմից Սաքսոնիայի դեմ կիրառած քաղաքականությունը քննարկելիս Ռանկեն իր «Համաշխարհային պատմության» մեջ ասում է. «Չի կարելի ժխտել, որ օրենքների խստությունը դիմադրություն առաջացրեց նրանց դեմ: Նման խառնաշփոթություններում միշտ այդպես է պատահում: Միջոցառումները, որոնք ձեռնարկում են ընդդիմության բռնկումից պաշտպանվելու նպատակով, հարմար են հենց այն առաջացնելու համար»:

Այս խոսքերը համապատասխանում են բուրքական կառավարության քաղաքականությանը, որը 1895թ. կոտորածներից ի վեր, չհաշված շեղումները, ամբողջությամբ վերցրած հետապնդել է հայերին: Այն հատկապես վերաբերում է վերջին իրադարձություններին: Կառավարությունը պատմության մեջ հազվադեպ հանդիպող դաժանությամբ նախազգուշական միջոցառումներ ձեռնարկեց հայերի դեմ և դրանով երկու տարբեր տեղերում դիմադրություն առաջացրեց՝ Սվեդիայում և Ուրֆայում<sup>1</sup>: Սվեդիայում կռիվները (Անտիոքի մոտակայքի 6 գյուղերում) վերջացան նրանով, որ ապստամբները մի քառակուսի ծովախորշում, թշնամական ռազմանավի կրակով պաշտպանված, կանանցով և երեխաներով, 5000<sup>2</sup> հոգով բարձրացան նավ: Եթե ամենամեծ հաշվումներով այս գյուղական բնակչության միայն 10 տոկոսն էր գեներ կրելու ընդունակ, ապա տղամարդկանց թիվը կկազմի 500:

Չնայած այն փաստին և չնայած թշնամական մի հաժանավի հետ հաջողված կապին, ոչ մի ապացույց չկա, որ այդ շրջանը նախապես մտադիր էր ապստամբել: Այն ավելի շուտ ապստամբության է հասցվել սպառնացող արքայազան պատճառով:

Ուրֆայի ապստամբությունը նույնպես դրսից ազդեցության կարիք չուներ: Հնարավոր է, որ Վանից և Դիարբեքիից գաղթածները բորբոքել են և իրենց ղեկավար կարգել, սակայն բավական էր, որ Ուրֆայի բնակիչները տեսնեին կառավարության կանխիչ միջոցառումները՝ արքային ու դրա հետ կապված իրենց ժողովրդի բնաջնջումը, որպեսզի առաջանար ապստամբության որոշումը: Հետո պայքարը բռնկվեց հենց հայերի մեղավորության պատճառով: Իրադարձությունները մասնավորապես ծավալվեցին այսպես.

Օգոստոսի 19-ին, մի պարեկի սպանությունից և դրա հետ կապված կոտորածից հետո, ոչինչ չհետևեց, անգամ պարեկի սպանության հետ կապված խուզարկություններ տեղի չունեցան: Սեպտեմբերի վերջերին կրկին կրակոց լսվեց հայկական քաղամասում, սակայն այդ մասին այլևս ոչինչ չիմացվեց, հայտնի չէր նաև, թե ում դեմ էր այն ուղղված: Իսկ երբ հաջորդ օրը կառավարությունը դեպքը քննելու համար ժանդարմների պահակախումբ ուղարկեց այնտեղ, նրա մի մասը գնդակահարվեց: Դրանից հետո հայերը քաղաքի իրենց քաղամասը բարիկաղավորեցին: Այն անմիջապես շրջապատվեց Ուրֆայում գտնվող 60 կամ 80 ժանդարմներով: Հոկտեմբերի առաջին օրերին ժամանեց մի գումարտակ, հոկտեմբերի 4-ին՝ Ֆախրի փաշան, հոկտեմբերի 5-ին՝ երկրորդ գումարտակը՝ 2 դաշտային հրանոթներով: Հայերը, որոնց պաշտպանների թիվը հասնում էր մոտավորապես 2000-ի, մերժեցին հանձնվելու պահանջը: Հոկտեմբերի 6-ից սկսվեց կռիվը, որը գլխավորապես ուղղված էր երեք պաշտպանական դիրքերի վրա: Ուրֆա քաղաքի նեղ և ծուռ ճարտարապետական ոճը, որի տները քարից են և քարանձավանման տներից շատ ավելի քարձր են, և որոնք հայերը հմտորեն կառուցել են պաշտպանության համար, դժվարացնում էր գրավումը: Հայերը զինված էին հրացաններով և ունեին նաև նոնակներ, որոնց պատրաստման համար, հավանաբար, օգտագործվել էր Բաղդադի երկաթուղու կառուցման ժամանակ գողացված դինամիտը: Սակայն նրանք, ինչպես պնդում են սխալմամբ, չունեին ռուսական կամ այլ գնդացիք: Հոկտեմբերի 12-ին ժամանեց 3-րդ գումարտակը՝ 12 սանտիմետրանոց երկու հատիքներով: Հոկտեմբերի 14-ին գրոհեցին եկեղեցու, 15-ին՝ ամերիկյան միսիայի շենքի վրա, որը հակառակ ամերիկյան միսիոներ Լեպիի կամքին, գրավել էին հայերը և, որպես ուժեղ շենք, դարձրել պաշտպանության գլխավոր կետը: Լեպին հայերի կողմից պահված էր որպես պատանդ՝ հուսալով, որ շենքը, որտեղ նա է գտնվում, չի գնդակոծվի: Նրան բաց թողնելու բուրքական պահանջը հայերը մերժեցին: Նա հետագայում ազատվեց գորբերի կողմից: Թուրքական կողմից կորուստների թիվը կազմեց 50 մահացած և 120-ից մինչև 130 վիրավոր: Քարանձավների և ջրհորների հետագա հետախուզումը, քարքված պաշտպանների առանձին կրակոցների հետևանքով բավականին թվով զինվորների կյանք խլեց: Մի հանձնաժողով որոշելու է հայերի դեմ ձեռնարկվելիք հետագա միջոցառումները:

Այնուհանդերձ, արտաքսումները շարունակվում են մեծ եռանդով և ա-

<sup>1</sup> Սվեդիա, հմմ. Հավելված N 1, Ուրֆա N 153, 180, 202:

<sup>2</sup> Ալեքսանդրիա հասանքների թիվը հաշվում է 4098 հայ:

մենասարսափելի հետևանքներով: Սովը և համաճարակն իրենց ետևից մահվան հարուստ ավար են բողնում: Արտաքսվածների մահացությունը Հալեպ քաղաքում չափազանց մեծ է: Ընդ որում՝ մինչև Ջեմալ փաշայի ժամանումը, որի մասին ներքևում կգեկուցվի, բացակայում էին անգամ ամենաանհրաժեշտ սանիտարական պայմանները: Մոտավորապես հոկտեմբերի կեսերին քաղաքից դուրս մի տեղ որոշվեց դարձնել գերեզմանոց: Սակայն մինչև գործը կհասներ այնտեղ թաղումներ սկսելուն, դիակները կույտերով իրար վրա լցված, արդեն մի քանի օր գտնվում էին բաց երկնքի տակ: Այսպիսի պայմաններում զարմանալի չէ, որ քաղաքի բնակիչները վարակվեցին բժավոր տիֆով, և բռնկվեց համընդհանուր ահավոր համաճարակ: Օրական մահացության դեպքերը հաշվվում են 150-ից 200 հոգի:

Վերջերս պատահաբար ծանր տպավորություն ստացա մի փողոցից, որտեղով անցնում էին արտաքսվածները: Աֆրիկի և Հալեպի միջև ընկած ճանապարհին, այսինքն՝ 60 կմ երկարությամբ, հոկտեմբերի 24-ին, անմիջապես փողոցի եզրին, տեսա 4 դիակ, որոնցից երկուսը զազանները կիսով չափ խժռել էին: Երբ այս դիակներից առաջինը տեսնելուցս հետո մտա առաջին պատահած իջևանատուն և իջևանատիրոջից պահանջեցի, որ վճարի դիմաց մարդիկ ուղարկի՝ դիակը թաղելու, նա ժպտաց, սակայն արեց այնպես, ինչպես ես էի ցանկանում: Երբ հարցրի նրան, թե ինչու ժպտաց, նա ասաց. «Եթե ցանկանում ես, ես թաղել կտամ այդ դիակը: Սակայն ինչու՞ ես այդքան մեծ նշանակություն տալիս դրան: Եթե դու իմանալիք, թե այստեղ յուրաքանչյուր ոլորանում ինչքան դիակներ են ընկած, դու կքքեիր մի դիակ թաղել տալու վրա, որը երևում է փողոցից»: Եթե սա կատարվում է աշխույժ անցուդարձ ունեցող Ալեքսանդրեթյան խճուղու վրա, ապա կարելի է մոտավորապես եզրակացնել, որ երկրի ավելի քիչ անցուդարձով ճանապարհներն ավելի լավ տեսք չունեն: Ես դեռ չեմ հիշատակել օդն ապականող բազմաթիվ կենդանիների լեշերը: Կաթմայի մոտակայքում գտնվող համակենտրոնացման ճամբարը ներկայացնում էր հիգիենայի բացակայության աննկարագրելի մի տեսարան: Կային ամեն տեսակի գաղթականներ՝ առանց սննդի ու առողջության, բոքիկ քայլողներ, որոնք սովամահության մոտ էին, հազիվ քարշ եկողներ կամ հուսալքված ու բթացած՝ ճանապարհի եզրին նստածներ, մինչև այնպիսիները, որոնք դեռևս ունեին անվնաս կոշիկներ կամ մի քանի տնային իրերով մեկնում էին սայլերով: Ընդ որում՝ այս տարբերությունները բա-

ցատրվում են իրենց ետևում բողած ճանապարհի երկարությամբ:

Պայմաններն այնպիսին են, որ Բոզանտիից Հալեպ ընկած էտապի ճանապարհը վարակված է: Միայն գնդապետ Բարոն Ֆոն Կրեսին հաջողվեց, վկայակոչելով էտապների համար հիգիենիկ միջոցառումների ռազմական կարևորությունը, դրդել 4-րդ բանակի զլխավոր հրամանատար Ջեմալ փաշային՝ այցելելու Հալեպ: Մինչև գալը, Ջեմալ փաշան ընդհանուր առողջական վիճակի մասին իր հեռագրային հարցման պատասխանն է ստանում էտապի տեսության շեֆ Վելի փաշայից, թե դիգենտերիայի որոշ դեպքեր կան, սակայն վարակիչ հիվանդություն չկա: Միայն այն բանից հետո, երբ Ջեմալ փաշան Ռաջակից հաղորդագրություն ստացավ, որ Հալեպից ժամանած գնացքում երեք դիակ է հայտնաբերվել, նա որոշեց մեկնել:

Հիմա նա այստեղ եռանդազին միջոցառումներ է հրահանգել: Մտցնել պարտադիր ծանուցում, կառուցել հիվանդանոցներ: Հիվանդներին տեղափոխելու համար պատրաստ պետք է լինեն փոխադրական միջոցները: Քաղաքը բաժանել շրջանների, յուրաքանչյուր շրջան իր հսկողության տակ է վերցնելու մի բժիշկ՝ տներն այցելելու իրավունքով: Քաղաքը մաքրելու համար կազմակերպել նոր ծառայություն:

Հրամանները տրված են, այժմ խոսքը գնում է դրանց իրագործման մասին:

Խնդրել են մի գերմանացի հիգիենիկ զինվորական բժիշկ:

Հաշվի առնելով այստեղի վայրերի կարևորությունը, որտեղից գործեր են ուղարկվելու Իրաք և Եգիպտոս, անհրաժեշտ է շարունակել ամենալուրջ ուշադրությունը նվիրել համաճարակի դեմ պայքարին: Բարոն Կրեսի անձը երաշխիք է, որ կարվի հնարավոր ամեն բան:

Նույն գեկուցագիրը ուղարկում են նաև Կ.Պոլսի կայսերական դեսպանությանը:

*Ռ-յուլեր*

**Նորին գերագանցություն ռայխսկանցլեր պարոն դոկտոր Ֆոն Բեքման Հովվեզին**

194.

Կայգերական Գերմանիայի  
ղեկավարություն

8 նոյեմբերի 1915թ.

## Արձանագրություն

Ելնելով այն լուրերից, որ թուրքական կառավարությունը վերջերս մտադրվել է արտաքսել նաև Կ. Պոլսի հայերին, ես դիմեցի Խալիլ բեյին և կրկին մատնանշեցի նման գործողությունների վտանգը և տնտեսական ծանր վնասները: Խալիլ բեյը հայտնեց, որ նախարարության խորհուրդն արդեն որոշել է հրաժարվել հայերի հետագա բոլոր արտաքսումներից, հատկապես Կ. Պոլսի հայերին արտաքսելուց:

Ֆոն Նոյրաբ

195.

Կայգերական Գերմանիայի  
ղեկավարություն

Բերա, 9 նոյեմբերի 1915թ.

Պարոն ֆոն Շոյբներ-Ռիխտերը սույն ամսվա 5-ի թվագրությամբ Մոսուլից հաղորդում է հետևյալը. «Էրզրումից Մոսուլ գնալիս, անցնելով Խնուսը, Մուշը, Բիթլիսը, Սղերդը, ճանապարհին հանդիպեցի նախկինում հայերով բնակեցված գյուղերի և տների, որոնք լրիվ դատարկ էին և ավերված: Կենդանի հայ տղամարդ չտեսա: Երևի մի քանիսը փախել էին լեռները: Մոտավորապես 500 հայ կանայք և երեխաներ ողորմելի վիճակում գտնվում են Բիթլիսի հայկական եկեղեցում: Հայ կանանց բռնությամբ պահում են նաև թուրքական տներում: Ամբողջ ճանապարհին ես և ինձ ուղեկցող գերմանացի պարոնները տեսանք նաև հայ տղամարդկանց, կանանց և երեխաների դիակներ՝ հաճախ թրի հարվածների նշաններով, չնայած մեզանից առաջ կառավարության հրահանգով ժանդարմները ճանապարհները մաքրել էին դիակներից: Քրդերի ասելով՝ այդ վայրի բոլոր հայերը սպանվել են: Ըստ իմ ունեցած տեղեկության՝ հայերի կողմից նախապատրաստված հեղափոխություն կամ ապստամբություն

տեղի է ունեցել միայն Վանում<sup>1</sup>, մյուս տեղերում հայերը դիմել են ինքնապաշտպանության: Թուրքերը, այդ թվում նաև թուրք սպաները, ամենուրեք տարածել են, և իրենք էլ լրիվ համոզված են, որ գերմանական կառավարությունն է դրդել հայերի բնաջնջումը»:

Մուշի հայերի բնաջնջման և Մուշի հայկական քաղամասի, ինչպես նաև շրջակա հայ գյուղերի կործանման մասին տեղեկությունները հաղորդեց վերջերս այստեղ հասած Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օժանդակության միության Մուշի որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը (շվեդուհի): Ըստ այդ տեղեկությունների՝ մի քանի գաղթականներից և մի քանի կողոպտված կանանցից բացի հայ բնակչությունից ոչինչ չի մնացել: Հայկական տները կրակի են մատնվել և գետնին հավասարեցվել: Այդ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել հուլիսի առաջին կեսերին, ինչպես կարելի է ենթադրել քույր Յոհանսոնի նկարագրությունից, ըստ երևույթին առաջացել են ռուսական զորքերի առաջխաղացման պատճառով, որոնք Խլաթը, Բուլանդը, Կոփը և Լիզը գրավելուց հետո շրջում էին Մուշից քայլով մեկ-երկու օրվա հեռավորության վրա:

Օրիորդ Յոհանսոնը, որը Մուշից հեռացել էր օգոստոսին և Խարբերդում (Մեզերե, Մամուրեթ ու Ազիզ) մի քանի ամիս մնալուց հետո, Մերաստիայով հասել այստեղ, իր նկարագրությունների վերջում նկատեց, որ ինչպես Մուշում, այնպես էլ Մեզերեում ու նաև Մերաստիայում, պաշտոնական շրջանները միահամուռ պնդում էին, թե գերմանացիներն են հրահրել թուրք կառավարությանը՝ հայերին հետապնդելու:

Նոյրաբ

Նորին գերագանցություն ռախականցլեր  
պարոն ֆոն Բեքման Հուլվեգին

196.

Կայգերական Գերմանիայի  
ղեկավարություն

6 նոյեմբերի 1915թ.

Նշում

Մուշի «Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օ-

1 Վանում նույնպես ինքնապաշտպանություն էր. տես Հավելված N 3:

ժամդակության միության» հաստատությունների քույր Ալմա Յոհանսոնի (շվեդուհի) տեղեկությունները Մուշի հայկական հետապնդումների մասին՝:

(Ի դեպ, Մուշում կա մի գերմանական որբանոց տղաների համար և մի որբանոց՝ աղջիկների համար, նաև մի պոլիկլինիկա, այսպես կոչված՝ բուժկետ:)

Մուշ քաղաքում հաշվվում է 50000 բնակիչ, մի կեսը հայեր են, մյուս կեսը՝ մահմեդականներ (քրդեր, թուրքեր): Մուշի շրջանում կա մոտավորապես 300 գյուղ, մեծ մասը՝ հայկական:

Չմռանը արական սեռի հայ բնակչությանը օգտագործեցին արևելյան պատերազմական քատերաբեմի համար պարենամթերք և ռազմամթերք տեղափոխող զորանոցներում: Այս մարդկանցից քչերը վերադարձան՝ 200-300-ից միջին հաշվով հազիվ 50 հոգի:

Գարնանը հայկական գյուղերն ավերեցին՝ դրանից առաջ զորքերը տեղավորելով և բռնագրավումների միջոցով ծանր վնաս հասցնելով դրանց:

Մայիս-հունիսին Բիթլիսը մաքրվեց հայերից:

Հունիսի կեսերին մյուսասարիֆը Ալմա Յոհանսոնին և Բողիլ Բյոռնին հայտնեց, որ գերմանական և թուրքական կառավարությունները որոշել են բոլոր եվրոպացիներին ուղարկել Խարբերդ: Ռուսներն առաջխաղացման ժամանակ Վանից հետո գրավել էին Խլաթը, Բուլանդը, Կոփը և Լիզը, և նրա պարեկները շրջում էին Մուշից քայքայված մեկ-երկու օրվա հեռավորության վրա:

Մակայն երկու քույրերն էլ հրաժարվեցին հեռանալ Մուշից:

Քաղաքը շրջափակվեց զորքերով, և շուրջբոլորը տեղադրվեցին հրանոթներ:

Հուլիսի 11-ին, կիրակի գիշերը, հրացանային կրակոցներով սկսվեց հայ բնակչության կոտորածը: Թուրքերը պնդում էին, թե մի քանի հայեր փորձել են ճեղքել շրջափակումը և հասնել Սասուն:

Կոնակում (կառավարական շենք) մի քանի ունևոր հայերի հայտնեցին, թե նրանք ողջ բնակչության հետ միասին երեք օրվա ընթացքում պետք է հեռանան քաղաքից, սակայն իրենց ունեցվածքը, որն այսուհետև պատկանում է կառավարությանը, պետք է թողնեն:

Առանց սպասելու այս ժամկետի լրանալուն, թուրքերն արդեն երկու

ժամ հետո սկսեցին ներխուժել հայերի տները և քաղանք:

Երկուշաբթի օրը, հուլիսի 12-ին, ամբողջ օրը շարունակվեցին հրետանագարկերն ու հրացանային կրակոցները, թուրք ժողովուրդը մասնակցում էր դրան:

Երեկոյան զինվորները ներխուժեցին աղջիկների որբանոցը՝ թաքնված հայեր փնտրելու:

Գիշերը և հաջորդ օրն ավելի շատ կրակոցներ եղան: Դարպասը փակելու ժամանակ մի կին և մի որբ աղջիկ գնդակից սպանվեցին քույր Յոհանսոնի կողքին:

Չորեքշաբթի առավոտյան քույր Յոհանսոնը գնաց մյուսասարիֆ Սերվեթ բեյի մոտ՝ պահանջելով պաշտպանել և խնայել հաստատությունն ու նրա բնակիչներին:

Մյուսասարիֆը՝ Էնվեր փաշայի մտերիմ ընկերը, իրեն կատաղածի պես պահեց և կոպտորեն մերժեց խնդրանքը, չնայած շրջապատի մարդկանց հորդորանքներին: Երկու քույրերին թույլատրվեց միայն պահել երեք աղջիկ և մի ծառա:

Հայ արական բնակչությունն անմիջապես սպանվեց քաղաքի մոտակայքում: Կանանց, աղջիկներին և երեխաներին, մի օր ճանապարհին քարշ տալուց հետո, վերացրեցին: Միայն որբանոցի երեք հայ ուսուցչուհիների հետագայում ազատ արձակեցին:

Քաղաքը մաքրելուց հետո հայկական քաղամասը հրդեհեցին և հողին հավասարեցրին: Նույն ձևով վարվեցին նաև հայկական գյուղերի հետ:

Այս դեպքերի ժամանակ իր դաժանությամբ աչքի ընկավ զինվորական բժիշկը՝ մի ալբանացի, որն սպառնաց նաև երկու քույրերին:

Օգոստոսի 10-ին վերջիններս մեկնեցին Մեզիրե-Խարբերդ, ուր հասան օգոստոսի 20-ին՝ հիվանդացած մյուսասարիֆի հետ միասին, որը 2 օր հետո մահացավ:

Խարբերդի հայերի կոտորածի մասին ևս քույր Ալման մանրամասն տեղեկություններ հաղորդեց: Այնտեղ հետապնդումներն սկսվել էին դեռ մայիսին, տղամարդկանց զանգվածային բնաջնջումը տեղի ունեցավ հուլիսի առաջին օրերին:

Մանրամասնություններից կհիշատակեմ հետևյալը.

Մուշի, Մեզիրե-Խարբերդի և Մեքաստիայի պաշտոնական շրջանները միաձայն պնդում են, թե գերմանացիներն են թուրք կառավարությանը հայերին արտաքսելու և բնաջնջելու մղել:

197.

Ռայխսկանցլեր

Բեռլին, 10 նոյեմբերի 1915թ.

Պատճենով ներկայացված կից խնդրագրով Գերմանիայի բողոքական շրջանների անվանի ներկայացուցիչները դիմել են ինձ՝ Հայկական հարցի բնառկմամբ: Նույն խնդրով զբաղվում է գերմանացի կաթոլիկների կենտրոնական կոմիտեի միսիան, որի խորհրդակցության որոշման պատճենն ևս ուղարկում եմ: Երկու խնդրագրերում արտահայտված տեսակետները ցույց են տալիս, թե ինչպիսի աճող անհանգստությամբ և հուզմունքով են Գերմանիայում ևս հետևում բուրքերի հակահայկական գործողությանը:

Խնդրում են Ձերդ բարեձնությանը, նկատի առնելով հավելվածներում ներկայացված տեսակետներն ու ցանկությունները, Ձեր ազդեցության շնորհիվ ներգործել Բ. Դռան վրա՝ հօգուտ հայերի և Ձեր ուշադրությունը ուղղել հատկապես այն բանին, որպեսզի Բ. Դռան միջոցառումները չտարածվեն նաև Թուրքիայի քրիստոնյա բնակչության մյուս հատվածների վրա:

Գործի ընթացքի մասին Ձերդ բարեձնությունը թող պարբերաբար հայտնի ինձ:

Ֆոն Բեքման Հոլվեզ

Նորին բարեձնություն կայգերական գործերի հավատարմատար պարոն Բարոն ֆոն Նոյրաֆին, Կ. Պոլիս

Հավելված I

Բեռլին, 15 հոկտեմբերի 1915թ.

Ձերդ գերազանցություն.

Ներքոստորագրյալների խիղճն ստիպում է արտահայտել այն անհանգստությունը, որը պատել է նրանց և գերմանացի քրիստոնյաների շատ շրջաններին՝ Թուրքիայի հայ ժողովրդի ողբալի ճակատագրի կապակցությամբ, որին, ըստ հավաստի լուրերի, բնաջնջում է սպասում, եթե չտապ վերջ չտրվեն այն միջոցառումներին, որոնք կիրառվում են նրանց

դեմ:

Այդ լուրերը մեզ ներկայացնում են հետևյալ պատկերը.

Արդեն ռուս-բուրքական պատերազմի բռնկվելուց հետո, քրդերի և անկանոն միլիցիաներների կողմից արևելյան վիլայեթների հարյուրավոր գյուղեր թալանելուց և հազարավոր անգեն հայեր սպանելուց հետո, հրաման տրվեց մայիսի վերջերից սկսել Անատոլիայի բոլոր վիլայեթների և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչության աքսորը Բաղդադի երկաթուղով հարավ՝ դեպի Արաբական տափաստանները: Այս միջոցառումն անցյալ ամիսներին անց է կացվել անմարդկային դաժանությամբ: Այն ժամանակ, երբ հայ ժողովրդի զենք կրելու ունակ տղամարդկանց կանչեցին զինվորական ծառայության և անգեն օգտագործեցին երկրի էտապի ճանապարհների վրա՝ որպես բեռնակիր անասուններ ու ճանապարհաշինարարներ, տղամարդկանց պաշտպանությունից զրկված կանանց, երեխաներին, հիվանդներին և ծերերին դուրս բռնեցին իրենց տներից, կողոպտեցին նրանց ունեցվածքը և առանց հանդերձանքի ու սննդամթերքի, բոքիկ, սոված, տանջահար շարունակաբար ենթարկեցին անարգանքների ու բռնաբարությունների: Հարյուր-հազարներով, կույտերով, ինչպես անասունների հոտերի, կուպիտ դափթիաները նրանց բռնեցին հարյուրավոր մղոն հեռու՝ դեպի աքսոր: Միջոցառումն սկսվեց նրանով, որ մայրաքաղաքում և երկրի կենտրոններում մի գիշերվա մեջ բանտարկեցին ժողովրդի առաջնորդներին՝ մտավորականներին, երևելիներին ու եկեղեցական բարձրաստիճան անձանց, առանց հարցաքննության ու դատավճռի գնդակահարեցին կամ աքսորեցին նրանց: Աքսորված կանանցից, երեխաներից և ծերերից նշանակման վայրը հասավ կեսից էլ քիչը: Աղջիկները և երիտասարդ կանայք բռնեցին բուրքական հարեմներ ու քրդական գյուղեր, որտեղ նրանց ուրիշ ոչինչ չէր մնում, քան ընդունել իսլամը: Նաև անթիվ երեխաներ խլվեցին իրենց քրիստոնյա ծնողներից և դաստիարակվում են որպես մահմեդականներ: Աքսորից խուսափեցին միայն այն հարյուրավոր քրիստոնյա ընտանիքները, որոնք որոշեցին իսլամ ընդունել: Արտաքսման միջոցառումն իրականում ամենամեծ ծավալի կոտորածի բնույթ ունի: Ճանապարհի որոշակի տեղերում կոտորածների, սովամահության և հյուծվածության հետևանքով աքսորյալների թիվը կիսով չափ պակասեց:

Բնականաբար, հնարավոր չէ բռնագաղթվածների ու կոտորվածների թվի վերաբերյալ ճիշտ տվյալներ տալ: Ըստ հայոց պատրիարքության



վիճակագրության՝ տեղահանության ենթարկված վիլայեթներում ապրում էին 1200000 հայեր: Եթե ենթադրենք, որ բնակչության մի մասը կարող էր փախչել լեռները, և հեռու ընկած շրջանները խնայվել են, ապա ամեն դեպքում կմնա 1 միլիոն հայ քրիստոնյա, որը ենթարկվել է տեղահանության և կոտորածների, այն էլ առանց դավանանքի տարբերության՝ լուսավորչականներ, հռոմեական կաթոլիկներ և բողոքականներ:

Դրանցից կեսը թե քանիսը, սպանվեց, և արդյո՞ք իսլամ ընդունած ընանյիքների թիվը հազար թե տասը հազար է, այդ մասին ոչ ոք այժմ չի կարող ասել: Սակայն մի բանում չի կարող կասկած լինել, որ Արևելքի ամենաաշխատասեր և ջանասեր քրիստոնյա ժողովրդին հասցված հարվածը տնտեսական, մշակութային ու քաղաքական իմաստով ճակատագրական հետևանքներ կունենա Թուրքիայի ապագայի համար և արդեն հաշտության բանակցությունների ժամանակ զգալիորեն կշոշափի Թուրքիայի հետ դաշնակից երկրների շահերն ու պատիվը:

Երկրի առևտուրն ու արհեստագործությունը, որոնք համարյա բացառապես գտնվում էին հայերի ձեռքում, ոչնչացած են: Կ. Պոլսից (մոտավորապես 180000), Ջմյուռնիայից (28000), Ադանայից և մի քանի այլ հայերով բնակեցված վայրերի քաղաքներից, որոնք մինչև այժմ խնայվել էին, հայ առևտրական և արհեստավոր բնակչության մախապատրաստվող տեղահանությունը ճակատագրական ազդեցություն կունենա Թուրքիայի տնտեսական զարգացման վրա, ինչը կվճարի մահ Գերմանիայի շահերը: Ըստ երկրի գիտակների կարծիքի՝ չի կարելի հույս ունենալ, թե անգամ տասնամյակների ընթացքում թուրք և հրեա տարրը ի վիճակի կլինեն գրավել կորցրած հայերի տեղը: Թող այս հարցերի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնեն տնտեսական բնագավառի հեղինակությունները:

Այն, ինչը ներքոտորագրյալներիս առաջին հերթին անհանգստացնում և դրդում է հավատքով դիմել Ձերդ գերագանցությանը, գերմանական տնտեսական և մշակութային գործի ապագայի համար հոգսը չէ, որը թուրքական ազգայնամոլության և իսլամական մոլեռանդության պատճառով հարցականի տակ է դրվում: Մեր խիղճն անհանգստացնում է այն պատասխանատվությունը, որն օրեցօր ընկնում է գերմանացի ժողովրդի վրա՝ որպես Թուրքիայի հետ դաշնակցական հարաբերության մեջ գտնվող քրիստոնյաների, խնդրո առարկայի հետ կապված իրադարձությունների համար:

Ոչ միայն Եռյակ միության մամուլը, այլև չեզոք երկրների հասարա-

կական կարծիքը Գերմանիային դիտում է որպես պատասխանատու Թուրքիայի ներսում կատարվող իրադարձությունների համար: Իհարկե, այստեղ գերագնահատվում է գերմանացի քաղաքագետների ազդեցությունը Բ. Դռան վրա: Սակայն մնում է այն տպավորությունը, որ Գերմանիան, Եռյակ միության երկրների մեկուսացումից հետո, մնացել էր Բոսֆորի մոտ միակ երկիրը, որը կարող էր կասեցնել քրիստոնյաների կոտորածները: Միջոցառումները, որոնք սպառնում են հայ ժողովրդի բնաջնջմամբ, Բ. Դռան կողմից պատճառաբանվում են հայ բնակչության հեղափոխական խարդավանքներով և սահմանային շրջաններում ռազմավարական միջոցառումներով: Եթե անգամ ինչ-որ տեղ հայերին իրավացիորեն վերաբերվի այս կշտամբանքը, այն չի արդարացնում ձեռնարկված չլսված, միջոցառումները (ըստ մեր ձեռքի տակ գտնվող տեղեկությունների՝ հայկական քաղաքական և եկեղեցական հեղինակավոր կազմակերպությունների հայրենադավ գործելակերպի համար ոչ մի փաստարկ չկա): Մենք ձեռնպահ ենք մնում դատողություն անել այն նպատակների մասին, որոնք վերջին հաշվով այդ միջոցառումներով հետապնդում է թուրք կառավարությունը: Սակայն դրանց իրագործման համար նա (կառավարությունը) ամեն դեպքում վատթարագույնս հրահրեց իսլամական մոլեռանդությունը և հակաքրիստոնեական ազդեցությունը, որը Թուրքիայի մնացած ողջ մահմեդական ժողովրդի տարրերի համար մնում է սպառնացող վտանգ: Շրջում են «երկիրը պետք է զուտ մահմեդական լինի» խոսքերը: Դրան համապատասխանում է այն, որ մաքրվել են մահմեդական հաստատությունները: Ըստ երևույթին՝ ոչնչացվում է ամեն տեսակի քրիստոնեական բարեգործություն և ամեն մի մշակութային ազդեցություն երկրի ներսում:

Այս իրադարձությունները մնացած քրիստոնյաների համար պարզապես անտանելի են, և Թուրքիայի համար ևս համարյա անհաղթահարելի դժվարություններ կստեղծեն՝ իրենց իրավացի ձգտմանը հասնելու, իրենց ներքին հարաբերությունները դրսի հարձակումներից ապահովելու համար: Այդ կապակցությամբ օրեցօր աճում է չեզոք և թշնամական արտասահմանի հուզումները, այն ավելի բուռն կարտահայտվի, հենց որ փաստերը լրիվ ծավալով հայտնի դառնան: Արդյոք այդ գայրույթը ամենայն խստությամբ շուտ չի՞ գա Գերմանիայի դեմ, երբ ողջ աշխարհը վստահ է, որ նա, Թուրքիայի հետ իր հարաբերության շնորհիվ, կարող էր կասեցնել այս սարսափելի դեպքերը և անհրաժեշտ միջոցառումները սահմանա-

փակել ռազմավարական պահանջով: Ինչպես որ Գերմանիային պատասխանատու դարձրին Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու և «սրբազան պատերազմ» հայտարարելու համար, այնպես էլ նրան կվերագրվի քրիստոնյա ժողովրդի ոչնչացման ողջ մեղքը: Մենք վախենում ենք, որ ազդեցությունն ավելի խորը կգնա, քան կարծեցյալ բելգիական սարսափների ազդեցության ժամանակ:

Եթե մինչև հիմա արտասահմանի բոլոր մեղադրանքները մեր ժողովուրդը միահամուռ խղճով ետ էր մղում, ապա այս լուրերը, որոնց հայտնի դառնալը ոչ որ չի կարող արգելել, գերմանացի քրիստոնյաների վրա սարսափելի ազդեցություն բողեցին: Արդեն սրբազան պատերազմի հայտարարության ժամանակ որոշ շրջաններում սկսեց գլուխ բարձրացնել խիղճը, սակայն մենք կարողացանք հանգստացնել այն՝ վկայակոչելով, թե այս սրբազան պատերազմն ընդհանրապես քրիստոնյաների դեմ չէ, այլ քրիստոնյա ժողովուրդների համագործակցությամբ տարվում է Թուրքիայի թշնամիների դեմ: Սակայն ոչ որ չկարողացավ կասեցնել գերմանացի քրիստոնյաների խանդավառության թուլացումը, երբ նրանք տեսան, թե ինչպես են իրենց դաշնակիցները ոչնչացնում մի ողջ քրիստոնյա ժողովուրդ: Բարի խղճով, որով մենք բոլորս աստված ենք կանչում՝ հանում մեր գեներալ հաղթության, արմատավորվում է մեր ժողովրդի դիմադրողականությունը: Այս համախմբվածությունն ու ուրախությունը կարող են սասանվել, երբ հայտնի դառնա, որ մեր այլադավան դաշնակիցները մեր դավանանքից հարյուր-հազարներին անհիմն և անիմաստ հետապնդում են՝ դատապարտելով մահվան, իսկ մեր կողմից նրանց փրկության համար անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվում:

Մեզ հայտնի է, որ գերմանական կառավարության կողմից բազմիցս քայլեր են արվել, նաև Թուրքիայի սեփական շահերից ելնելով, հայերի արտաքսումն արգելելու համար:

Փաստերը, դժբախտաբար, ցույց են տալիս, որ այդ քայլերը չկարողացան բախտի անիվը կանգնեցնել: Ինչքանով մեզ հայտնի է, թուրք կառավարությունը մինչև հիմա անհրաժեշտ ոչինչ չի արել՝ բռնագաղթվածներին սովամահությունից պաշտպանելու, նույնիսկ կարիքավոր կանանց և երեխաներին օգնելու փորձերն է մերժել: Վախենում ենք, որ վերապրած բռնագաղթվածները՝ հիմնականում կանայք ու երեխաներ, դատապարտված են մահվան:

Այդ բանը մենք, մեր քրիստոնյա ժողովուրդը չի կարող լռելյայն դիտել:

Թուրքական կառավարությունը, որը բոլոր երկրներում իսլամական ընդհանուր զգացումն արթնացնում և օգտագործում է իր ազգայնամոլական նպատակների համար, իրավունք չունի պահանջել իր քրիստոնյա դաշնակիցներից, որ նրանք իրենց քրիստոնեական ընդհանուր զգացումը լռության դատապարտեն: Նա (թուրքական կառավարությունը) պետք է գիտակցի, թե ինչքան է դժվարացնում իր սեփական ճանապարհն ասլագայի համար, երբ իր պատասխանատվությամբ հրեշավոր արարք է թույլ տալիս, որը քրիստոնյա ժողովուրդն ընդունում է որպես ասլտակ իր դեմքին: Պետք է կանխվի, որ գերմանական պատիվը ևս չարատավորվի՝ վերը նշված մեղավոր արարքների մասնակիցը լինելու պատճառով: Անտանելի է այն միտքը, որ երբ մենք՝ գերմանացիներս, բանտարկյալ մահմեդականների համար մզկիթներ ենք կառուցում, հարյուրավոր քրիստոնեական եկեղեցիներ քանդվում կամ մզկիթների են վերածվում: Մեր խիղճը ճնշում է, որ այն ժամանակ, երբ գերմանական մամուլը զովաբանում է մեր մահմեդական դաշնակիցների մեծահոգությունն ու ներողամտությունը, մահմեդականների ձեռքով հեղեղով անմեղ քրիստոնյաների արյունն է հոսում, և տասնյակ հազարավոր քրիստոնյաներ բռնի իսլամացվում են:

Մենք չենք թերագնահատում այն պարտականությունները, որոնք դրված են մեր՝ գերմանացի քրիստոնյաների առջև, որպես Թուրքիայի դաշնակիցների: Մենք անկեղծորեն ցանկանում ենք, որ նրան (Թուրքիային), որը հերոսաբար կռվում է մեր կողմում, արժանի պտուղներ բաժին ընկնեն, և մենք ամենևին չենք ուզում նրան որևէ անհարկի դժվարություններ պատճառել: Սակայն մենք չենք կարող նաև հրաժարվել մեր հավատակիցների հանդեպ պարտականություններից: Այլապես մենք կգործելիք պատվի ու խղճի դեմ, և մեր ժողովրդի հաղթանակի վրա ստվեր կընկներ:

Ուստի խնդրում են Ձերդ գերագանցությանը՝ ներկայացնելու Բ. Դռանը տվյալ վիճակի անտանելիությունը և ամենայն վճռականությամբ պահանջելու վերջ դնել այդ միջոցառումներին՝ միաժամանակ հետապնդելով հիմնականում երեք նպատակ, որոնք ոչ մի կերպ չեն հակասում Թուրքիայի բարօրությանը կամ մեր ռազմական նպատակներին հասնելուն, դրա փոխարեն սերտորեն կապված են մարդկայնության պահանջների և տնտեսական շահերի հետ:

1. Կանխել տեղահանությունները այն քաղաքներից և շրջաններից (Կ. Պոլիս, Չմյունիա, Հալեպ և այլն), որոնց հայ ազգաբնակչությունն ա-

ռայժմ խնայվել է:

2. Չեռնարկել ոչ միայն կարծեցյալ և երևութական, այլ իսկական և ազդեցիկ միջոցառումներ, արդեն Միջազգետքի տափաստաններն արքայ-ված կանանց և երեխաների կյանքն ապահովելու համար զերծ պահել հետագա արհավիրքներից դեռ կենդանի մնացած հայերին:

3. Հնարավորություն ստեղծել, որ այլ երկրների քրիստոնյաները, քերևս գերմանական և չեզոք ներկայացուցիչների գործակցությամբ, օգնություն հատկացնեն և պայմաններ ստեղծեն տառապող արքայավների համար:

Հաշտության համաձայնագրի ժամանակ խնդրում ենք նկատի ունեցնալ, որպեսզի ներկայումս բռնի կերպով մահմեդականացված քրիստոնյաների համար հնարավորություն ստեղծվի, որ վերադառնան քրիստոնեական կրոնին և որ անհրաժեշտ երաշխիքներ ապահովվեն Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների խաղաղ ու օրինական զարգացման, ինչպես նաև քրիստոնյաների բարեգործական և մշակութային գործն Արևելքում անխափան շարունակելու համար:

Խորին հարգանքներով խնդրում ենք Ձերդ գերազանցությանը՝ մեզ հնարավորին չափ շուտ դնել այնպիսի վիճակում, որպեսզի կարողանանք գերմանացի քրիստոնյաների շրջանում տիրող անհանգստության դեմն առնել և ներգործուն կերպով թուլացնել արտասահմանի մեղադրանքները:

**Ձերդ գերազանցությանը կապարյալ նվիրվածությամբ՝**

**Դոկտոր Կարլ Արսենֆելդ, Բեռլինի միսիոներական ընկերության ղիրեկտոր, Բեռլին**

**Պրոֆեսոր Դ. Բաումգարտեն, Քիլ**

**Պրոֆեսոր դոկտոր Յոհաննես Բուրխարդ, Պոզննի քաղաքական ակադեմիայի իրավագիտության պրոֆեսոր**

**Կառավարիչ Դ. Ս. Գորդես, Լայպցիգ**

**Դ. Ադոլֆ Դայման, Բեռլինի համալսարանի աստիճանաբանության հասարիքային պրոֆեսոր, գերմանական արևելյան միսիայի վարչության անդամ**

**Ավագ քարոզիչ Դ. Դիբելիուս, երկրի ավերարանա-լյութերական և եկեղեցական խորհրդի փոխպրեզիդենտ, Դրեզդեն**

**Եկեղեցական խորհրդավորու քահանա Դ. Էրիխ Ֆյոլսեր, Երևան**

**Յրանկֆուրտ (Մայնի վրա)**

**Թ. Հասարեկ, քահանա, գերմանական փոխօգնության միության և ավերարանչության I-ին նախագահ, Բարմեն**

**Դիրեկտոր Դ. Գ. Հակիուս, Հերմանսբերգ, Հանովերում**

**Ա. Հակիուս, իրավաբանական գաղտնի խորհրդավորու, Հանովեր Հենդլեր, ավագ քահանա և գլխավոր կառավարիչ, Բեռլին**

**Պրոֆեսոր Դ. Ֆոն Հարնակ, իսկական գաղտնի խորհրդավորու, Բեռլին-Գրունեվալդ**

**Պրոֆեսոր Դ. Գ. Հաուսլայեր, Հալլե (Չալիեի վրա)**

**Հելդ, Սուդանի առաջին միսիայի տեսուչ, Վիսբադեն**

**Պ. Օ. Հենիգ, Միաբանության միսիայի ղիրեկտոր, Հերնուր Գրոնդեն Դոկտոր Վ. Հերման, Մարբուրգ**

**Դ. Հեզերի, գլխավոր կառավարիչ, Վերնիգերոդեն**

**Դոկտոր Հորենման, մարզային դատարանի անդամ, Բեռլին Դ. Կաֆյան, գլխավոր կառավարիչ, Քիլ**

**Պաստոր դոկտոր Դ. Քինդր համայն ավերարանա-բողոքական միսիոներական միության պրեզիդենտ, Բեռլին**

**Դ. Վ. Լ. Քյոլբինգ, աղանդի անդամ, Երուսաղեմի ավերարանչական միաբանության բորոպների**

**ապաստարանի վարչության նախագահ**

**Դոկտոր Յոհաննես Լեյսիուս, Եկեղեցական խորհրդի գաղտնի անդամ, պրոֆեսոր, Պոպսդամ Դոկտոր Լուիս, Հալլե**

**Պրոֆեսոր Դ. Մահլինգ, Բեռլին, Շառլոտենբուրգ**

**Դոկտոր Ֆիլիպս, Բեռլին, Շառլոտենբուրգ**

**Քաղաքային քահանա Պֆիսպեր, Վայնբերգ, Վյուրտենբերգ**

**Պրոֆեսոր Դ. Յուլիուս Ռիխտեր, Բեռլին-Շպեգլից**

**Պրոֆեսոր Ռ-յոքելեն, Պարսկաստանում լյութերական միսիայի միության նախագահ, Հերմանսբուրգ**

**Ռ-յոքենբեկ, Պոպսդամի թեմի կառավարիչ, գերմանական արևելյան միսիայի ղիրեկտոր, Քլայն-Գլինիկե,**

**Պոպսդամի մոպ**

**Արտոնյալ դոկտոր Պաուլ Ռորբախ, Բեռլին**

**Ավերարանչական ապաստոր Շպիկեր, Հոենոսյան միսիոներական ընկերության դոկտոր, Բարմեն**

Հավելված II

Բեռլին, 29 հոկտեմբերի 1915թ.

Գերմանիայի կաթոլիկների գլխավոր ասամբլեայի կենտրոնական կոմիտեի միախոնրական հանձնաժողովը, որը հավաքվել էր Բեռլինում 1915թ. հոկտեմբերի 29-ին, իր անհետաձգելի պարտքն է համարում ձայն բարձրացնել և պահանջել, որպեսզի անմիջապես վերջ տրվեն ներկայումս թուրքական կառավարության կողմից հայերի հանդեպ գործադրվող չարաչափաց հաժան միջոցառումները: Ինչ պատասխանատվություն էլ ընկած լինի հայերի վրա, մարդկայնությունը պահանջում է, ինչը չի կարող ժխտել նաև թուրքական կառավարությունը, որ պետք է կասեցվի ողջ հայ ժողովրդի բնաջնջումը:

Մենք հավատում ենք Կայսերական Գերմանիայի ղեկավարությանը, որ նա մինչև հիմա արդեն արել է այն ամենը, ինչը իր ձեռքում էր, որպեսզի մեղմացնի հայերի ճակատագիրը: Սակայն նկատի ունենալով Հայաստանում շարունակվող սարսափները, խնդրում ենք, որ նա (գերմանական ղեկավարությունը) շարունակի դիվանագիտական ուղիներով ազդել մեր դաշնակից թուրքական կառավարության վրա՝ հայերի վիճակը մեղմացնելու, որը կարելի է անել՝ առանց վտանգելու ռազմական դաշինքը: Թուրքական կառավարությունը պետք է հասկանա, որ Գերմանիայի քրիստոնյա ազգաբնակչությունը, հակառակ Թուրքիայի հանդեպ իր քաղաքական դաշինքային գոհունակության, հուզվում է, երբ իր հավատակիցները Թուրքիայում այդպես դաժան ճնշվում են: Առավել ևս, որ բոլոր գերմանացի կաթոլիկները, ինչպես երևաց միսիայի հանձնաժողովի քննարկումների ժամանակ, հիմնականում կանգնած են այն տեսակետին, որ Թուրքիայի բոլոր քրիստոնյա ժողովուրդներից առաջին հերթին պահանջ են լրիվ օրինապահություն թուրքական պետության հանդեպ: Իրենք էլ իրենց հերթին պատրաստ են այդ ուղղությամբ ներգործել Արևելքի քրիստոնյաների վրա և նրանց մոտ արթնացնել քաղաքացիական հանդուժումը:

Ի դեպ, հենց Թուրքիայի շահն է պահանջում, որ ինքն իրեն չզրկի այնպիսի արժեքավոր աշխատակիցներից, ինչպիսին նրանց համար եղել են հայերը մինչև հիմա պետական կառավարչության բնագավառում և տնտեսական հաջողությունների հարցում:

Միսիայի արքունյալ Կրեուչ Ելունկ, Համբուրգ  
Շլիսեր, կառավարիչ, նախկինում Երուսաղեմի գերմանական ավերարանչական համայնքի քահանա, Ռուդոլֆ, Բեռլինի մոտ  
Ա. Վ. Շրայբեր, եկեղեցական խորհրդի գաղտնի անդամ, աստվածաբանության հաստիքային պրոֆեսոր, այժմ Հայդելբերգի աստվածաբանության ֆակուլտետի ղեկան  
Պրոֆեսոր դոկտոր Դ. Ռ. Չենբերգ, Բեռլին  
Գիրենկտոր Զ. Ս. Շպիկեր, Բեռլին-Գրունեվալդ  
«Գերմանա-հայկական ընկերության» և «Անհրաժեշտ բարեգործություն» միության նախագահ Էվալդ Շպիր, Ալտեն (Գեսաուի մոտ)  
Զ. Շուխարդտ, Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միություն, գրանցված միություն, Հաուզդորֆ, Նոերդդի շրջան  
Պրոֆեսոր դոկտոր Վեկեսեր, Կարլզրուհե  
Եկեղեցական խորհրդի գաղտնի անդամ,  
Հ. Հ. Վենդտ, աստվածաբանության պրոֆեսոր Յենայում  
Ա. Վինկլեր, քահանա, գերմանական արևելյան միսիայի հոգաբարձության անդամ, Բեռլին  
Ադոլֆ Յելլեր, պատրո, Յեխլենդորֆ, նախկինում Մարաշ, Հայկազի վիլայեթ  
Գերհարդ ֆոն Յեսչվից, քահանա և սենատոր Բուրգբերնհայմում, Բավարիա  
Պրոֆեսոր դոկտոր Դ. Դալման, Երուսաղեմից  
Գուստավ Գերոկ, Շտուրգարտ քաղաքի քահանա  
Յոհաննես Դալման, Միխովիցում սարկավագների խաղաղ ասպարանի պատրո  
Արքունյալ Ռ. Մում, ռայխսպագի անդամ, Բեռլին,  
Հյուսիս-Արևմտյան 87

Կայսերական Գերմանիայի կանցլեր, նորին գերագանցություն պարոն դոկտոր ֆոն Բեքման Հոլվեգին, Բեռլին

Սակայն առաջին հերթին մենք խնդրում ենք պարոն ռայխսկանցլերին՝ մեծ ուշադրություն դարձնելու այն բանի վրա, որպեսզի թուրքական կայսրության մյուս մասերում ևս քրիստոնյա բնակչության հանդեպ ոչ մի դեպքում նման գործողություններ տեղի չունենան:

Միսիոներական հանձնաժողովի գերմանական կաթոլիկների ներկայացուցիչները լրիվ վստահություն են տաժում Կայզերական Գերմանիայի ղեկավարության և բարեկամացած թուրքական կառավարության հանդեպ, որ հիշատակված անպատեհությունները վերացնելով, մեր դաշինքը Թուրքիայի հետ հետագայում ևս գոհունակությամբ և ընթրումով կնդունվի Գերմանիայի քրիստոնյա ժողովրդի կողմից:

Միսիոներական հանձնաժողովում ներկայացված գերմանական կաթոլիկների բոլոր կազմակերպությունների անունից ստորագրում են՝

**Պրելյատր դոկտոր Վերյման, նախագահ  
Կարլ Բախեն, իրավական խորհրդի անդամ,  
իրավաբանության դոկտոր  
Էրցբերգեր, ռայխսպագի անդամ**

**Նորին գերազանցություն պարոն  
ռայխսկանցլեր ֆոն Բեքման Հոլվեգին**

198.

Ռայխսկանցլեր

Բեռլին, 12 նոյեմբերի 1915թ.

Խորին շնորհակալությամբ ստացա Ձերդ բարեձնության անցյալ ամսվա 15-ին ուղարկած խնդրագիրը:

Կայզերական կառավարությունը, ինչպես մինչև այժմ, այնպես էլ ապագայում, մշտապես իր առաջնահերթ պարտականություններից մեկն է համարելու իր ազդեցությունն օգտագործել, որպեսզի քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատքի պատճառով չհետապնդվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես ղեկավարվելով այս սկզբունքով, ուժս ներածին չափ կանեմ ամեն ինչ՝ հաշվի առնելու ձեր արտահայտած անհանգստություններն ու ցանկությունները:

Կ. Պոլսի կայզերական դեսպանությանը տեղյակ եմ պահել Ձեր խնդրագրի բովանդակության մասին:

ֆոն Բեքման Հոլվեգ

**Նորին բարեձնություն, Գերմանական ավերարանչական-միսիոներական օժանդակության դիրեկտոր պարոն**

Ս. Վ. Շրայբերին

199.

Ռայխսկանցլեր

Բեռլին, 12 նոյեմբերի 1915թ.

Խորին շնորհակալությամբ հայտնում եմ, որ ստացել եմ Ձերդ բարեձնության՝ անցյալ ամսվա 30-ի թվագրությամբ Գերմանիայի կաթոլիկների կենտրոնական կոմիտեի միսիոներական հանձնաժողովի ուղարկած որոշումը:

Կայզերական կառավարությունը, ինչպես մինչև հիմա, այնպես էլ ապագայում, մշտապես իր առաջնահերթ պարտականություններից մեկն է համարելու իր ազդեցությունը գործադրել, որպեսզի քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատքի պատճառով չհետապնդվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ առաջնորդվելով այդ սկզբունքով՝ կանեմ ամեն ինչ, ինչ իմ ձեռքումն է, որ հաշվի առնեմ ինձ հայտնված Ձեր անհանգստություններն ու ցանկությունները:

Կ. Պոլսի կայզերական դեսպանությանը հայտնել եմ միսիոներական հանձնաժողովի որոշման մասին:

ֆոն Բեքման Հոլվեգ

**Նորին բարեձնություն, ռայխսպագի անդամ  
պարոն Ս. Էրցբերգերին**

200.

Արտաքին գործերի  
գերատեսչություն

Բեռլին, 12 նոյեմբերի 1915թ.

Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը՝ օգտվել գերմանացի ուսուցչի՝ գեկույցից, Բ. Դռանը հայերի նկատմամբ դաժան վերաբերմունքի առթիվ բողոքարկելու և Բ. Դռան ուշադրությունը հրավիրելու այն բանի վրա, որ բնաջնջման նման քաղաքականությունը ճակատագրական հետևանքներ կբողնի բուրքական կայսրության վրա:

Յագով

Նորին գերազանցություն կայզերական դեսպան  
պարոն կոնս Վոլֆ Մեյերնիխին, Կ. Պոլիս

201.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 12 նոյեմբերի 1915թ.

Վստահելի աղբյուրից իմացել եմ, որ բուրքական կառավարությունը, չնայած բոլոր հակառակ վստահեցումներին, որոշել է աքսորել Կ. Պոլսի տեղացի հայերին: Միջոցառումը ձեռնարկվելու է ո՛չ անմիջապես և ո՛չ էլ մայրաքաղաքի բոլոր հայ բնակիչների նկատմամբ, ամեն դեպքում մինչև պատերազմը վերջանալը այն պետք է իրագործվի: Այդ կապակցությամբ սույն ամսվա 8-ին Խալիլ բեյի հետ զրույցի ժամանակ ես կրկին համառորեն նրա ուշադրությունը հրավիրեցի այն անկանխատեսելի հետևանքների վրա, որոնք քաղաքական, տնտեսական տեսակետից իր հետևից կրերի նման գործողությունը: Թողնում եմ Ձերդ գերազանցության հայեցողությանը՝ Հաքի փաշային ևս համառորեն զգուշացնելու այդ կործանարար ծրագրի իրագործումը:

Նոյրաք

Նորին գերազանցություն ռայխսկանցլեր  
պարոն ֆոն Բեքման Հոլվեգին

1 Հմմ. N 182, Հալեպ, 15 հոկտեմբերի 1915թ.:

342

202.

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հալեպ, 16 նոյեմբերի 1915թ.

Բեռլինի բուրքական դեսպանությունը հրատարակել է Ուրֆայի ապստամբության մասին հավելվածում ներկայացված բացատրագիրը, որը տպագրվել է “Norddeutsche Allgemeine Zeitung”-ում հոկտեմբերի 28-ին (N 299, 2-րդ հրատարակություն) և որը ինձ հետևյալ նկատառումների առիթ է տալիս: Բացատրագրի մեջ մնացածների թվում ասվում է.

«Հրոսակներն ապստամբության միջոցով հետապնդում էին հետևյալ նպատակը. մի կողմից վնասներ պատճառել, օտար բաժանմունքներն ավերել և Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնվող պետությունների հպատակներին սպանել, որպեսզի այդ սպանությունների հետևանքը զգեն Թուրքիայի վրա: Մյուս կողմից նրանք ուզում էին կայսրության ջոկատների մի մասը զամել ամրացված թաքստոցների վրա և նրանց ետ քաշել պատերազմական թատերաբեմից»:

Հակառակ դրան, պետք է նշել, որ ապստամբության նպատակն առանց իր նախապատմության չի կարող հասկանալի լինել: 20 տարի առաջ Ուրֆան խիստ տուժել է հայկական կոտորածներից: Այդ ժամանակ ողջ մնացածներից 1000 մարդու լրիվ ողջակիզել են եկեղեցում, որոնք ապաստանել էին այնտեղ: Դրանից հետո հայերը մշտապես ապրել են վախի մեջ, թե կոտորածները կարող են կրկնվել և, անպաշտպան չմնալու համար, իրենց ապահովել էին զենքով:

Երբ այս տարվա վաղ ամռանը կարգադրվել էր հայերի տեղահանությունը, այստեղի վալի Ջելալ բեյը, որը հրաժարվել էր նրանց տեղահանել և այդ պատճառով հանվել գործից, ինձ ասաց. «Ապրելը մարդու ամենաբնական իրավունքն է: Որդը, որին տրորում ես, զալարվում է: Հայերը կլիմադրեն»:

Թե ինչպիսին են կանխարգելիչ միջոցառումները, որոնք բուրքական կառավարությունը ձեռնարկել է հայերի դեմ ներկայիս համաշխարհային ճգնաժամում, Ուրֆայի բնակիչներն արդեն գիտեին: Հունիսի կեսերին նրանցից մոտ 50 ամենաերևելի մարդկանց ձերբակալեցին, որոնցից մեկին զավազանի 100 հարվածներով տանջամահ արեցին: Դրանից կարճ ժամանակ անց, նրանց քչեցին Դիարբեքիր, որտեղ իբր տեղի էր ունենալու նրանց դատը: Սակայն ճանապարհին առանց դատավճռի սպանե-

343

ցին: Նրանց մեջ էր գտնվում գերմանական հոսսայիտայի երկարամյա դեղագործը, որը, գերմանական միսիոներների վկայությամբ, եղել էր օսմանյան օրինապահ հպատակ, ինչպես 50 ձերբակալվածներից շատերը: Ուրֆայի բնակիչներն աչքի առաջ ունեին նաև հյուսիսից և արևելքից ժամանած տարագիրների ճակատագիրը: Նրանք գիտեին, որ տղամարդիկ սպանվել, կանայք և աղջիկները անարգվել են, լավագույն դեպքում վերցվել էին մահմեդական հարեմները, և որ մնացածը՝ այսինքն՝ երեխաներն ու հասակավոր կանայք մատնվել էին սովամահության: Այստեղից էլ նրանց վճիռը՝ ավելի լավ է զենքը ձեռքին մեռնել և իրենց կյանքը այդպես հնարավորին չափ թանկ վաճառել, քան իրենց և իրենց ընտանիքներին թողնել անպաշտպան, որ ոչնչացվեն կամ անարգվեն: Ճիշտ է, Ուրֆայի հայերի համընդհանուր արտաքսումը դեռ վճռված չէր, երբ ապստամբությունը բռնկեց: Թուրքիայի միակ քաղաքները, որոնք մինչ այդ այս ճակատագրին չէին արժանացել, ինչքանով հայտնի է այստեղ, Կ. Պոլիսը, Չմյուռնիան, Հալեպը և Ուրֆան էին: Սակայն ի՞նչ երաշխիք կար, որ հերքը չի հասնի Ուրֆային: 18 ընտանիքներ արդեն տեղահանվել էին, հունիսին 50 հոգու ոչնչացման մասին հենց նոր խոսեցի<sup>1</sup>: Պարզ էր, որ ինչպես ամենուրեք, առաջնորդներին վերացնելուց հետո զանգվածաբար արտաքսելու էին նաև ազգաբնակչությանը: Չենք գտնելու նպատակով հետևեցին տնային խուզարկությունները: Այդ ընթացքում գնդակահարվեց մի պարեկ: Երկրորդ՝ չպարզաբանված փոխերաձգությունն առաջ բերեց ճգնաժամը:

Հայերը չեն գրավել «օտար բաժանմունքներ», ինչպես հաստատում է բացատրագիրը, որից պարագաներին ծանոթացած որևէ գերմանացի պետք է ենթադրի, թե գերմանական ներկայացուցչական տները նույնպես ներքաշվել են պայքարի մեջ: Նրանք միայն իրենց պաշտպանության համար օգտագործել են հարմար տեղ գտնվող ամերիկյան ներկայացուցչությունը<sup>2</sup>:

1 Հմմ. N 226-ը:

2 Գերմանական շենքերից՝ հոսսայիտայից, որբանոցից, գերմանացի ծառայողների սեփական տներից, գորգագործական ֆաբրիկայից, միայն վերջինս, որը գտնվում է հին քաղաքի մեջտեղում, ներքաշվել էր անախորժության մեջ, այն էլ շատ թեթևակի: Այն գտնվում էր մարտական շրջանի ծայրամասում և նրան հասել են մի քանի հրացանի կրակոցներ և թերևս նաև ձեռքի նռնակներ, որոնք սակայն որևէ լուրջ վնաս չեն հասցրել: Գերմանացիներից ոչ ոք չի վնասվել: Դրա փոխարեն ներկայացուցչությունն այն չափով ուժեղ է անախորժության մեջ ներքաշվել, որ նրա ողջ տեղական անձնակազմը, չնայած չի մասնակցել ապստամբությանը, անխնա և անգթորեն հեռացվել է: Թե դա ինչ ազդեցություն կբողնի հետագա աշխատանքի վրա, ես առայժմ չեմ կարող կանխագուշակել:

Հայերը քաղաքի իրենց թաղամասում պատանդ են պահել նաև ամերիկյան միսիոներ Լեպլին և յոթ ֆրանսահպատակների, սակայն ոչ նրանց սպանելու համար: Եթե նրանք ուզենային դա անել, դրա համար նրանք շատ առիթներ ունեին, քանի որ օրերով այդ օտարներին պահում էին իրենց իշխանության տակ: Ավելի հասկանալի կլիներ, եթե բացատրագիրն ասեր. «Նրանց թուրքական գնդակով սպանել տալու համար»: Որովհետև պահելն, անշուշտ, մի հուսահատ փորձ էր՝ օտարների ճակատագիրը հայերի հետ շղթայելու, այս ձևով որևէ կերպ իրենց վիճակը բարելավելու համար:

Ի վերջո, ինչ վերաբերում է այն պնդմանը, թե հայերը գրավել են քաղաքի մահմեդական թաղամասերը և սկսել են կոտորել բնակիչներին, դա հորինված է: Այն ինձ հիշեցնում է հետևյալ դեպքը: Երբ ապրիլի սկզբներին Մարաշում էի և հայերից այն քչերը, որոնք ընդհանրապես համարձակվում էին դուրս գալ տներից և, հայտարարված պաշարման վիճակի և գալիքի վախի ճնշման տակ, երկշտ քայլում էին տների պատերին սեղմվելով, մահմեդական բանասարկուները փորձեցին Կոստանդնուպոլիս հեռագիր ուղարկել, որ իբր հայերը գրավել են Մարաշի մզկիթները և վերածել եկեղեցիների:

Թուրքական բացատրագրում ամսաթվերը ներկայացված են ըստ արևելյան օրացույցի՝ փոխերաձգությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 29-ին, իսկ ապստամբությունը ճնշվել է հոկտեմբերի 16-ին: Թուրքական կողմից մահացածների թիվը կազմում է ոչ թե 20, այլ 50, բացի այդ եղել են 120-ից մինչև 150 վիրավոր:

Ես իմ նկարագրությամբ մտադիր չեմ այս կամ այն կողմին սեր կամ ցավակցություն արտահայտել, սակայն իմ պարտքն էմ համարում Ձերդ գերագանցությանը ներկայացնել իմ գերատեսչության շրջանում կատարված դեպքերի մասին, ինչը ես ճշմարիտ եմ համարում:

Նույն զեկուցագիրն ուղարկում եմ Կ. Պոլսի կայզերական դեսպանությանը:

Ռ-յուպեր

**Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն դոկտոր ֆոն Բեքման Հոլվեգին**

## Հավելված

Բեռլին, 29 հոկտեմբերի 1915թ.

Թուրքական կայսրության դեսպանությունը հաղորդում է. «Սեպտեմբերի 16-ի գիշերը հայկական հրոսակները խռովություն կազմակերպեցին: Նրանք խրամատավորվեցին Ուրֆա քաղաքի բարձր կետերում և կրակ բացեցին մեր ժանդարմական պարեկների վրա, որոնցից 2-ը մահացան և ութը վիրավորվեցին: Մեր ժանդարմներին ամենուրեք կրակով դիմավորեցին: Հայերը գրավեցին օտար բաժանմունքները, որոնց տերերին ուժով պահեցին, այնտեղ հրակնատներ տեղադրեցին: Երբ հաստատվեցին փաստերը, որ ապստամբ հրոսակները որոշել են դիմադրություն ցույց տալ և օգտագործել փոքրաթիվ ժանդարմներիայի անբավարար լինելը, և քանի որ նրանք ի վերջո գրավել են քաղաքի մահմեդական քաղամասերը և սկսել են կոտորել բնակիչներին, Ուրֆա ուղարկվեցին ճակատի համար մախսատեաված մի քանի ջոկատներ: Հրոսակների քաքստոցները ոչնչացվեցին, և հոկտեմբերի 3-ի ապստամբությունը ճնշվեց: Այս դեպքի ժամանակ սպանված զինվորների և ժանդարմների թիվը հասնում է 20-ի, վիրավորների թիվը՝ 50-ի:

Հրոսակներն ապստամբության միջոցով հետապնդում էին հետևյալ նպատակը. մի կողմից վնասներ պատճառել, օտար բաժանմունքներն ավերել և Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնվող պետությունների հպատակներին սպանել, որպեսզի այդ սպանությունների հետևանքը գցեն Թուրքիայի վրա: Մյուս կողմից նրանք ուզում էին կայսրության ջոկատների մի մասը գամել ամրացված քաքստոցների վրա և նրանց ետ քաշել պատերազմական թատերաբեմից:

Ընդհանրապես կայսրության ուժեղ և արագ միջոցառումների, ապստամբությունը ցանկալի հաջողություն չունեցավ: Այն ճնշվեց՝ առանց վնասելու Թուրքիայի հետ պատերազմի մեջ գտնվող երկրներից որևէ հպատակի կամ որևէ չեզոք անձնավորության»:

## 203.

Կայզերական Գերմանիայի  
հյուպատոսություն

Հալեպ, 16 նոյեմբերի 1915թ.

Կից խոնարհաբար Ձերդ գերազանցությանն ուղարկում են մի գերմանացու զեկույցը, որին ես վերջերս գործուղել էի Դեյր էլ Զոր (այն ոչ մի դեպքում կապ չունեն Հայկական հարցի հետ)՝ իմանալու այնտեղ փոխադրվող կամ արդեն տեղ հասած հայերի ճակատագրի մասին: Այս զեկուցագրում ներկայացված են այն դիտումները, որոնք կուտակվել են ճանապարհին:

Շտաբի գլխավոր բժիշկ դոկտոր Շախտը, որը որոշեց այստեղից Բաղդադ գնալ զետով, նոյեմբերի 3-ին Դեյր էլ Զորից գրել է. «Ես ճանապարհին շատ սարսափելի բաներ տեսա: Ինչ որ պատմում էին, ճիշտ է»:

Ցամաքով Բաղդադ տանող էտապի ճանապարհը Հալեպից Դեյր էլ Զոր վարակված է բծավոր տիֆով: Եվ նույն բանը պետք է ասել նաև ջրային ճանապարհի մասին:

Նույն զեկուցագիրն ուղարկում են կայզերական դեսպանություն:

Ռ. յուլեր

Նորին գերազանցություն ռայխականցլեր  
պարոն դոկտոր ֆոն Բեքման Հոլվեգին

## Հավելված

Հայերի տեղափոխությունը Դեյր էլ Զոր

Դեյր էլ Զոր գնալիս անխուսափելիորեն հանդիպում ես արտաքսված հայերի հետքերին: Արդեն Դեյր Հաֆիրում երևում է առաջին հետքը. նախկինում կար մի փերեզակի կրպակ, այժմ կա երեք կրպակ, որոնց տերերն առաջնորդվում են միայն մի բանով. օգտվելով հայերի հարկադիր վիճակից, բարձր գներով շահագործել նրանց (այժի միսն արժե 1 օկա 5-6 պիաստր, հացը 4-5 օկա, ձուն՝ 10 փարա և այլն): Այս մեծ անկարգությանը հանդիպում ես մինչև Դեյր էլ Զոր ընկած ողջ ճանապարհին: Քանի որ հազարավոր հայեր թափառում են Բաղդադի փողոցների երկայնքով ըն-



կամ կրթականների միջով, խղճուկ կահավորված խանութները, որոնցում համարյա ապրանք չկա, բոլորովին դատարկ են, և վաճառողը բարձր գին վճարող սոված գնորդներ է գտնում: Ծամբարատեղերում կարելի է ձեռք բերել միայն ցեխախառն, դիակներից, կեղտից ու փալասներից չզուլված Եփրատի ջուրը: Չնայած առկա հնարավորություններին, հոգ չի տարվում փոխադրումների ժամանակ սննդամթերք հասցնելու համար: Անվերջ անցնող տարագիրների համար կարելի էր կանգնած ջրից ջրհորներ պատրաստել: Այնպես, որ արտաքսվածներն իրենց բեռից, երեխաներից, հիվանդներից և տառապանքից բացի ստիպված են երկար երթերի համար իրենց հետ քարշ տալ նաև պարեն և անզամ ջուր: Որոշ տեղերում բոլորովին վառելանյութ չկա: Ուշ երեկոյան ժամանաձեռքը շրջանաձև բափառում են այս ու այն կողմ՝ իրենց թուլացած ուժերով փնտրելով մեծ դժվարությամբ պոկվող մատուտակի արմատներ, որպեսզի վառելիքի տեղ օգտագործեն: Դադարի բոլոր տեղերում ամիսներով կուտակված մարդկային կղկղանքի մնացորդների, փալաս-փուլուսների և աղբի շնորհիվ տիրում է գարշելի վիճակ, որը չի փոխվի, մինչև վերջին խմբին չհեռացնեն այնտեղից: Գետի երկայնքով և Բաղդադի ճանապարհով անցնող ուղիները կրում են բռնագաղթվածների հետքերը՝ թողնված սայլեր, որոնցից անասունը դուրս է պրծել, ջարդված սայլեր, շորերի մնացորդներ և ցնցոտիներ, որոնք այլևս մարմնի վրա չէին կարող պահվել: Կենդանիների լեշեր և մարդկանց դիակներ՝ նեխման բոլոր փուլերում: Լավ է, որ լեշ խժռողները հոգ են տանում, որպեսզի կարճ ժամանակամիջոցում վերացվեն այս դիակներն ու լեշերը: Մեսքենում մենք հանդիպեցինք ետ մնացած մի փոքր խմբի, որոնց մեջ կային նստած դիրքով արդեն նեխող մի դիակ, մի մահացող կին և երկու հիվանդ: Չինվորականներն ու բեռնակիր անասունները լցվել էին իջևանատունն ու կեղտոտ շրջակայքը, և ամեն մեկն իր հոգսերով էր զբաղված և չէր մտածում այս դժբախտության հետքերը մաքրելու մասին:

Եփրատի ափին գտնվող Աբու Հրերը, որտեղ դեռ վերջերս կար կրպակ՝ իր մի առևտրականով, այժմ մարդկային գոմաղբի կույտերով, 5 կենդանիների լեշերով, աղբով, փալասներով, միլիոնավոր ճանճերով լցված՝ դարձել էր իսկական մահվան վայր: Այնտեղից մի քանի ժամվա հեռավորության վրա անապատն է: Այս դժբախտ վայրում միայնակ նստած է սովից կմախքացած մի մայրիկ: Բաց կապույտ աչքերը, կուրացուցիչ սպիտակ մազերը, դիմագծերը խոսում էին նրա երբեմնի գեղեցկության

մասին: Նա խելացնոր ողբում էր իր երեխաների համար, գուցե նրա արևը շուտով կխավարի, և նա վերջապես կազատվի: Մենք նրան տեղափոխել տվեցինք իջևանատուն՝ մի կեղտոտ, անմարդաբնակ տեղ, որտեղ կային միայն երկու զինվոր և ուրիշ ոչինչ: Աբու Հրերի ետևում, որտեղ ճանապարհը ձգվում է ջրագուրկ անապատի միջով, ճանապարհի եզրին կենդանիների լեշերից և շորերի ցնցոտիներից բացի տեսանք երեք տղայի, մի տղամարդու և մի կնոջ դիակ:

Համամում կան երկու մեծ ամայի իջևանատուն, հայերի 3 մեծ ճամբար. ա) նավակատերեր՝ 7 փայտյա նավակներով, բ) ուղևորներ՝ իրենց սայլերով, գ) հետիոտն մարդիկ, ողորմելի վիճակում՝ իրենց ունեցվածքի մնացորդներով: Լուսաբացից առաջ նրանք կրկին ճանապարհ ընկան՝ 800-900 հոգի Անատոլիայից, Չեյթունից, Մարաշի շրջանից, Քիլիսից, Մուսլիից: Երեք ժամ հետո Համամի ետևում ճամփան մեր փողոցից ճյուղավորվեց մոտենալով գետափին, մինչդեռ փողոցը տանում էր անապատի խութերի վրայով ներքև:

Սաբկա՝ գաղթականների առաջին կայանը: Նախկինում մի քանի հարյուր բնակիչներով, այժմ 7000 բնակիչ ունի (մյուղիք Նահիեի ասելով): Այն ընկած է անապատի ժայռոտ գաղիվայրերի ու գետահունի միջև, գետափին գտնվում է հին թաղամասը՝ մի քանի տնամերձներով, դեպի լեռնաշղթան ավանը մեծանում է սլաքաձև, ուղղանկյուն ընկած նրբանցքներով: Հազարավոր ձեռքեր մեծ աշխուժությամբ գործում են, ջարդված քարերի երկար շարաններ կան, կառուցվել են 100-ից ավելի նոր տներ: Կարճ ժամանակամիջոցում պատրաստ կլինեն նաև 250 տներ: Հուլիսին և օգոստոսին Չեյթունից ժամանեցին առաջին տարագիրները: Շատերն ապրում են վարձով տներում (3-4 մեջիդիե վարձավճար), մեծ մասը՝ դեռ վրանաճամբարներում և բակերում: Իշխանությունը տուն կառուցելու տեղ է տալիս և թույլ է տալիս քարեր ջարդել: Հացն ու ալյուրը հազիվ են հերիքում, որի պատճառով բողոքներ են լինում: Տարագիրները բացել են մի դարբնոց, մսի խանութ, քիթեղագործական արհեստանոց և մի փերեզակի խանութ: Հիվանդության պատճառով շատ հայեր են մահանում: Վրանաճամբարների բնակիչները ինքնապահպանության համար դուրս են գնում հիվանդներին՝ մեծ մասամբ կանանց: Առանց սնունդի, բժշկի խնամքի նրանք պառկած են քաց երկնքի տակ՝ տնքալով, հաց աղերսելով, մինչև որ ճակատագրի բարի կամքով կմեռնեն (մոտավորապես 40 սարսափելի այլանդակված անձինք): Անցման տեղում ջրի հոսանքը կու-

տակել էր 12 դիակ, որոնց սարսափելի հոտի պատճառով ոչ ոք չէր ցանկանում դրանց թաղել: Ըստ քաղաքապետի խոսքերի՝ դեռ տասնյակ հազարավոր «երաբնակիչներ» են գալու, նշանակում է, ինչպես բառացիորեն ասաց պարոնը. «Մենք թողնում ենք նրանց գալ, որպեսզի մշակեն հողը»: Գետից վերև և ներքև, իհարկե, վերապրածների համար սարսափելի տեղ է: Այնտեղ անպայման անհրաժեշտ է բժշկական օգնություն:

Տարագիրների բնակեցման հիմնական տեղը Դեյր էլ Ջորն է: Արդեն մութի մոտ անմիջապես պարզվում է ներգաղթողների գլխավոր զբաղմունքը՝ թաղում են մեռածներին, քայլում են բթացած, դժվարությամբ, հիվանդ, կիսամեռ: Դեյր էլ Ջորն իրականում անհրապույր քաղաք չէ, ունի գեղեցիկ, լայն փողոցներ: Նախկինում այնտեղ կար 14000 բնակիչ, այժմ՝ 25000-30000: Ահավոր թվով կուտակված մարդկանց համար ոչ մի կազմակերպված կարգավորում չկա:

Չի բավարարում սննդամթերքը (հացի կրպակներում ժամերով հաց չի լինում), մի շոգեաղաց է գիշեր-ցերեկ չխչխկում, որն անբավարար է, հացի և բանջարեղենի պակասություն կա: 3 հիվանդանոց ծայրից ծայր խցկված են հազարից ավելի հիվանդներով: Կա տեղական մի բժիշկ, կառավարական մի բժիշկ, համարյա դատարկ մի դեղատուն: Տեղական բժիշկը վերջերս հեռացել էր քաղաքից, մի քանի օրով մեկնել էր գործուղման: Մահացությունը օրական հասնում է 150-200 (տեղական բժշկի խոսքերը): Միայն այս ձևով է հնարավոր, որ դեռ հազարավոր տարագիրներ կարող են բերվել այստեղ: Քաղաքից ներքև մեծ վրանաճամբարներ են: Գետի ձախ ափին, նավակամրջի կողքին, սովորական սաղարթավոր խրճիթներում տեղավորվել են անթիվ մահացողներ: Դրանք մոռացվածներ են, որոնց միակ փրկիչը մահն է:

Ոչ մի խոսքով հնարավոր չէ անգամ մոտավոր նկարագրել այս մարդկային թշվառությունը, այնքան աննկարագրելի են այնտեղի դեպքերը: Դժբախտությունները գնալով ավելանում են: Մյուս հետիոտների վկայությամբ՝ այստեղից բավական հեռու ընկած են մի կողմ քշվածների հարյուրավոր անթաղ դիակներ: Հերթապահ ժամդարմն ինձ պատասխանեց. «Ի՞նչ կարող ենք անել: Նրանք բոլորն էլ իրենք իրենց են մեռնում»:

Իշխանություններն ամեն օր խնամքով մաքրում են բոլոր անկյուններն ու փողոցները, կառուցում են նոր բնակելի թաղամասեր, ինչպես Սաբկայում, մարդկանց բաժանում են փող, նաև հաց և այլուր, բայց և այնպես, քիչ բացառությամբ, մահը կյանքից նախընտրելի է: Ինչպես Սաբ-

կայում, այնպես էլ Դեյր էլ Ջորնում մարդկանց բնակատեղերը միմյանցից ընկած են մի քանի ժամ հեռավորության վրա... Անապատի մեջ:

Արաբները քարեր են շարտում հայերի վրա, ծեծում, ծաղրում և ձեռ են առնում նրանց: Անձամբ տեսանք նման օրինակներ:

Օրինակ, Եփրատի ափին գտնվող Մադենում երեք դիակ էր ափ քշված, արաբները քարեր էին շարտում, թքում դրանց վրա և դեռ ծիծաղում (մի դիակի գլուխը ջարդված էր):

Մեր այնտեղ եղած ժամանակ ոստիկանությունը բազմաթիվ հայերի արգելեց դիմել մեզ և խոսել մեզ հետ (դրա համար իշխանություն կա, ոչ գերմանացիներ):

Ի՞նչ աշխատանք կա վերապրածների համար. հողագործություն և այգեգործություն գետի երկայնքով, որտեղ, իհարկե, հողը բերրի է, արհեստագործություն և մի քիչ առևտուր:

Հալեպ, 11 նոյեմբերի 1915թ.  
Սպորազրություն

204.

Կայգերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 20 նոյեմբերի 1915թ.

Ուրֆայի իրադարձությունների մասին մինչև հիմա ներկայացված է միայն Հալեպի կայգերական հյուպատոսի հոկտեմբերի 9-ի մի կարճ հեռագիր: Ըստ դրա՝ հայ ազգաբնակչությունը, որին հայտնի է դառնում սեպտեմբերի վերջին իրեն սպասվող արտաքսման մասին, որոշում է դիմել գենքի և թաքնվում է տներում: Հալեպի զինվորական հրամանատար Ֆախրի փաշան անմիջապես մեկնում է այնտեղ, բայց միայն փողոցային համառ կռիվներից հետո, որոնց ժամանակ թուրքերը օգտագործում են նաև հրետանի, կարողանում է ճնշել խռովությունը:

Չնայած կայգերական դեսպանության և հյուպատոս Ռյուլերի համառ միջնորդությանը, դժբախտաբար չի հաջողվում հասնել այն քանին, որ գերմանական հաստատությունների հայ ծառայողներն ու սաները մնան Ուրֆայում: Արտաքին գործերի նախարար Խալիլ բեյն սկզբում համաձայնվում է հաշվի առնել մեր ցանկությունները, սակայն Ֆախրի

վաշան հայտարարում է, որ հաշվի կառնի միայն ռազմական նկատառումները և ծայրահեղ դեպքում գերմանական ծառայությունում գտնվող այն հայերը. համար բացառություն կանի, որոնք ապստամբների ընտանիքների հետ ազգակցական կապ չունեն և սոցիալական դիրք չեն գրավում:

**Նոյրաք**

**Նորին գերագանցություն ռայխականցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

205.

Արտաքին գործերի գերատեսչություն

Բեռլին, 29 նոյեմբերի 1915թ.

Շոյբներ-Ռիխտերի սույն ամսվա 5-ի զեկուցագիրը և առկա մյուս լուրերը դժբախտաբար այն տպավորությունն են ստեղծում, թե թուրքական կառավարությունը, հակառակ մեր բոլոր բողոքների և զգուշացումների, չի հրաժարվում իր հակահայկական վտանգավոր քաղաքականությունից: Ընդհանուր մարդասիրական և քաղաքական բնույթի նկատառումներից բացի, մենք, որպես Թուրքիայի անկեղծ բարեկամներ, ելնելով նրա սեփական շահերից, խորապես ցավում ենք, որ նա (Թուրքիան) իր գործողություններով, անհասկանալի կարճատեսությամբ իրեն զրկում է երկրի տնտեսական զարգացման համար կարևոր ազգաբնակչության տարրից: Թշնամական և չեզոք արտասահմանում չեն դադարում մեր վրա բարդել թուրքական իշխանությունների գործունեության պատասխանատվությունը: Ինչպես նորից հաստատում է պարոն ֆոն Շոյբների զեկուցագիրը, նույնիսկ թուրք ազգաբնակչության լայն շրջաններում տարածվել է այն պատկերացումը, թե Գերմանիան է հրահրել Թուրքիային հայերին հետապնդել: Մենք հավատում ենք իր գերմանացի դաշնակիցների հանդեպ Բ. Դռան օրինապահությանը և սպասում ենք, որ նա վճռականորեն կհերքի նման լուրերը:

Պատիվ ունեն խնդրելու Չերդ գերագանցությանը, որ այդ իմաստով խոսք այդտեղի կառավարության հետ և օգտագործելով առիթը, կրկին

հույս հայտնեք, որ Բ. Դուռը Հայկական հարցը քննարկելիս հաշվի կառնի մեր խորհուրդները:

Ֆոն Յագով

**Նորին գերագանցություն կայզերական դեսպան պարոն կոնս Վոլֆ Մեպերնիխին, Բերա**

206.

Գերմանա-հայկական Պոտսդամ, Գր. Վայմմայտերշտրասեն ընկերություն 45,29 նոյեմբերի 1915թ.

**Չերդ գերագանցություն**

Անդրադատնալով խնդրագրում Թուրքիայի հայերի օգտին արտահայտված ցանկությանը՝ արգելել Կ. Պոլսի մինչև այժմ խնայված հայ ազգաբնակչության տեղահանությունը, պատիվ ունեն ներկայացնելու Սոֆիայի հայկական կոմիտեի ինձ ուղարկած հետևյալ հաղորդագրությունը՝

«Հակառակ թուրքական կառավարության Կ. Պոլսի բարձրագույն իշխանությունների ներկայացուցիչների նախկին խոստումներին՝ սկսվել է նաև Կ. Պոլսի հայերի արտաքսումը: Մինչև հիմա արդեն արտաքսվել են 10000 հոգի, որոնք մեծ մասամբ մորթվել են Իզմիթի լեռներում: Մնացած 70000-ի արտաքսման ցուցակը պատրաստ է:

Հանուն քրիստոնեության և մարդասիրության հարկավոր է փրկել ժողովրդի մնացած բեկորների կյանքը, վճռականորեն միջամտել՝ անմեղների տառապանքներին վերջ տալու:

Հայկական կոմիտեն»

դոկտոր Յոհաննես Լևիսիուս  
նախագահ

**Նորին գերագանցություն պարոն ռայխականցլեր դոկտոր ֆոն Բեքման Հոլվեգին, Բեռլին**

**Դեկտեմբեր**

207.

Արտաքին գործերի  
գերատեսչություն

Բեռլին, 1 դեկտեմբերի 1915թ.

Մարդիկնում և Միդիաքում գտնվող ասորական դավանանքի քրիստոնյաները նույնական են նեստորականների հետ: Ինչքանով մեզ հայտնի է, այս ասորիները լեռներն են քաշվել հիմնականում քրդերի բռնություններից խուսափելու և ոչ թե թուրքական իշխանությունների դեմ ըմբոստանալու համար: Ուստի շտապ անհրաժեշտ է խաղաղությամբ վերացնել առաջացած դժվարությունները:

Ինդրում են Ձերդ գերագանցությանը՝ պատշաճ եղանակով ներգործել այդ ուղղությամբ և արդյունքի մասին զեկուցել<sup>1</sup>:

**Ֆիներման**

Նորին գերագանցություն կայզերական դեսպան  
պարոն կոնս Վոլֆ Մեյերնիխին, Կ. Պոլիս

208.

(Արտաքին գործերի  
գերատեսչություն)

Հեռագիր

Բեռլին, 4 դեկտեմբերի 1915թ.

Բերայի գերմանական դեսպանությանը

Ըստ Սոֆիայի հայկական կոմիտեի հաղորդման, թուրքական կառավարությունը<sup>2</sup>, հակառակ նախկին խոստումների, սկսել է նաև Կ. Պոլսի հայերի արտաքսումը: 10000 հայեր արտաքսվել են, և մեծ մասը մորթվել

1 Հմմ., N 240, էջ 238 և N309, էջ 306:  
2 Հմմ., N 206:

է Իզմիրի լեռներում: Մնացած 70000-ի արտաքսման ցուցակը պատրաստ է: Եթե հաղորդումը ճիշտ է, խնդրում ենք վճռականորեն բողոքարկել:

**Ֆիներման**

209.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 7 դեկտեմբերի 1915թ.

Վերջին շաբաթվա ընթացքում Էնվեր փաշայի, Խալիլ բեյի և այսօր Ջեմալ փաշայի հետ լուրջ խոսակցություն ունեցա հայկական սարսափների մասին և նշեցի, որ անհանգստությունն ու դժգոհությունը համակել է նաև բարեկամ արտասահմանի և Գերմանիայի լայն շրջանակներին, և ի վերջո կկորչի համակրանքը թուրքական կառավարության հանդեպ, եթե վերջ չդրվի այդ գործողություններին: Էնվեր փաշան և Խալիլ բեյը պնդում են, թե տեղահանություններ այլևս չեն նախատեսվում, հատկապես Կ. Պոլսից: Նրանք պատճառ են բերում պատերազմական անհրաժեշտությունները, թե խռովարարները պետք է պատժվեն, և խույս են տալիս այն մեղադրանքից, որ հարյուր-հազարավոր կանայք, երեխաներ և ծերեր ընկնում են թշվառության մեջ և մահանում: Ջեմալ փաշան ասում է, որ սկզբնական հրահանգներն անհրաժեշտ էին, սակայն կատարումը վատ է կազմակերպվել: Նա չի ժխտում, որ դրա հետևանքով ցավալի պայմաններ են ստեղծվել, որոնք նա ձգտում է վերացնել՝ սննդամթերքներ և փող բերելով: Դա ճիշտ է: Հալեպի մոտակայքի նրա էտապի փողոցի վրա գտնվող գաղթականների մեջ թշվառություն է տիրում, և նա փորձում է օգնել: Կախաղան է բարձրացնել տվել նաև շատ անձանց, որոնք թալանել են գաղթականներին: Գնդապետ Կրեսը՝ շտաբի պետը, ինձ ասաց, որ անհնար է նկարագրել թշվառությունը: Ընդ որում՝ երկրում տարածվել է, թե գերմանացիներն են ցանկացել կոտորածները:

Ես խիստ կտրուկ կերպով խոսեցի: Բողոքներն անօգուտ են, իսկ թուրքական խոստումները, թե տեղահանություններ այլևս չեն ձեռնարկվի, արժեքազուրկ են:

Արժանահավատ կողմից իմացել են, որ ըստ այստեղի ոստիկանապետի տեղեկության, վերջերս Կ. Պոլսից ևս Անատոլիա է քշվել մոտավորապես 4000 հայ, և որ Կ. Պոլիսը աստիճանաբար մաքրվելու է դեռևս այն-

տեղ ապրող 80000 հայերից, այն բանից հետո, երբ ամռանը Կ. Պոլսից արդեն տարագրվել է մոտավորապես 30000 հայ և 30000-ն էլ փախել է: Պետք է վերջ դրվի այս բանին, անհրաժեշտ է խիստ միջոցներ ձեռնարկել:

Մեր մամուլում ևս պետք է լայնորեն դժգոհություն արտահայտվի հայկական հալածանքների դեմ:

Հայկական հարցում հաջողության հասնելու համար մենք պետք է թուրքական կառավարությանը վախ ներշնչենք հետևանքների հանդեպ: Եթե ռազմական պատճառներից ելնելով չհամարձակվենք խստորեն ելույթ ունենալ, ապա մեզ ոչինչ չի մնա, քան հեռվից անօգուտ զգուշացումներով, որոնք ավելի շատ զայրացնում են, քան օգնում՝ դիտելով, թե ինչպես են մեր դաշնակիցները շարունակում կոտորել:

Թալեաթ բեյն Անատոլիայից վերադառնալու է միայն շաբաթվա վերջին: Ես միայն այն ժամանակ կիմանամ, թե ինչպիսի ազդեցություն են ունեցել նրա վրա նրա գործընկերների և Ջեմալի հետ իմ բանակցությունները:

#### Մեպերնիխ

*Նորին գերագանցություն ռախականցլեր պարոն Բեքման ֆոն Հոլվեգին*

210.

*Կայզերական Գերմանիայի դեսպանություն*

*Բերա, 9 դեկտեմբերի 1915թ.*

Այսօր խիստ եղանակով խոսեցի մեծ վեզիրի հետ Հայկական հարցի մասին: Նրա ուշադրությունը հրավիրեցի այն բանի վրա, որ թուրքական կառավարությունը հայկական հալածանքների պատճառով թեթևամտորեն կորցնում է լավ տրամադրված արտասահմանյան երկրների իր հանդեպ ունեցած համակրանքը, և որ Գերմանիայում ավելանում է անհոգատարությունը, ռախականցլերին տարբեր կողմերից գրոհում են, որպեսզի նա բարեկամ ու դաշնակից թուրքական կառավարության առաջ միջնորդի հայերի օգտին: Ես կրկին նշեցի, որ պետության անվտանգության դեմ դուրս եկած դավադիրներն իրոք պետք է խիստ ձևով պատժվեն, սակայն հարյուր-հազարավոր ծերերի, երեխաների, կանանց խայտառակ արտաքսումը մի սև էջ է երիտթուրքերի պատմության մեջ...

Ես այս անգամ դիտավորյալ առարկություններ արեցի մեծ վեզիրի և ոչ Եռյակ միության մեկ այլ անդամի առաջ, որովհետև ինձ հայտնի է, որ նրան ախորժեղի չեն հայկական հալածանքները: Նա անկարող է դադարեցնել դրանք, սակայն կուզենա իմ բողոքներն օգտագործել իր պաշտոնակիցների դեմ:

Վերջապես ես խոսեցի թուրք ստորադաս պաշտոնյաների թույլ տված չարաշահումների մասին, որոնք սխալ պնդումներ են անում, թե գերմանացիները հովանավորում են հայկական հալածանքները: Ինչպես անհերքելիորեն իմացել եմ ճանապարհորդներից և այլ աղբյուրներից, այս գրպարտանքը լայնորեն տարածված է Անատոլիայում: Մենք բոլորովին տրամադրված չենք հակահայկական քաղաքականության համար պատասխանատվությունը կիսելու թուրքական կառավարության հետ, և ես խնդրեցի նրան վճռականորեն հերքել այդ լուրերը:

Այդ ասեկոսեների մասին մեծ վեզիրին ոչինչ հայտնի չէր: Սակայն նա որոշակի խոստացավ ժխտել տալ այդ լուրերը: Բացի դրանից նա ասաց, որ հայերը օտար, հատկապես ռուսական սաղարանքի զոհեր են եղել: Ամբողջ շրջաններ կազմակերպվել էին ապստամբության և ապահովվել զենքով: Խոսքը վերաբերում էր ոչ թե առանձին, այլ ամբողջ վայրերի ապստամբությանը, ուստի պատժի ենթարկվեցին ոչ միայն առանձին շրջաններ: Բայցևայնպես նա համաձայն չէ հայերի հանդեպ վերաբերմունքին: Ես նրա ասացի, որ ինչպես գիտե, պատմական փորձը ցույց է տալիս, որ հեղափոխությունները վատ կառավարության հետևանքներ են, և որ հարյուր-հազարավոր անմեղ մարդկանց հետապնդումն ու հալածանքը տվյալ պետության օրինական պաշտպանության միջոց չեն:

Երբ թուրքերին պատրաստվում եմ որևէ տհաճ բան ասել, այդ անում եմ խիստ խաղաղ ձևով, և նրանք համբերությամբ լսում են: Ճիշտ է, չկա հին թուրքական կուսակցություն, սակայն մեծահասակ թուրքերի մեջ դեռ կան մարդիկ, որոնք ամաչում են հայկական հալածանքների պատճառով:

Կուզենայի հավատալ, որ իմ առարկությունները լրիվ իզուր չէին: Ջեմալ փաշան պայմանների որոշ բարելավում է պահանջել հայերի համար. Դեյր էլ Ջորի անապատի փեշերն ուղարկելու փոխարեն, որտեղ նրանք կմեռնեն, թույլ տալ դեռևս Հալեպում գտնվող հայերին տեղավորել մոտակայքում: Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող հայ ինժեներներին, ծառայողներին և բանվորներին, որոնք արդեն արտաքսվել են, նմանապես կրկին հավաքագրել են բանակի նպատակների համար: Ջեմալ փաշան, որը նույնպես պատկանում է այն թուրքերի թվին, որոնք ամա-

չում են, մինչև հիմա կոմիտեում հանդիպել է դիմադրության, երբ փորձել է անցկացնել իր ցանկությունները: Ինչպես հաղորդեց նրա շտաբի պետը՝ զնդապետ Կրետը, վերջերս նրանք չեն դիմադրում Ջեմալ փաշային: Այդ վերագրում է իմ միջամտությանը: Գնդապետն ինձ ասաց, որ հայկական կոտորածների մասին հիշողությունը հետապնդելու է նրան ողջ կյանքում:

**Մեպերնիխ**

**Նորին գերագանցություն ռախականցիեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

211.

Արտաքին գործերի գերատեսչություն Բեռլին, 10 դեկտեմբերի 1915թ.

Խոնարհաբար բողոմում եմ Ձերդ գերագանցության հայեցողությանը՝ բուրքական կառավարությանը ծանոթացնել մի գերմանացու անցյալ անսովա 16-ի քվադրոնայն քվեկուցագրի բովանդակությանը՝ Դեյր էլ Ջոր արտաքին հայերի մասին<sup>1</sup>, որը ներկայացված է եղել Հալեպի կայզերական հյուպատոսին, և կրկին առարկություններ անել՝ ելնելով հայերի շահերից:

**Ֆիներման**

**Նորին գերագանցություն կայզերական դեսպան պարոն կոնս Վոլֆ Մեպերնիխին, Կ. Պոլիս**

212.

Արտաքին գործերի գերատեսչություն Բեռլին, 12 դեկտեմբերի 1915թ.

Դուկտոր Շտրաուբինգերը նոյեմբերի 27-ին ռախաստագի պատգամավոր Էրցբերգերին գրում է. «Այսօր մոնսինյոր Դոլչին ինձ ասաց, որ արտաքին գործերի նախարարը խոստացել է թույլ տալ կաթոլիկ հայերի վերա-

1 Հմմ. N 203 հավելվածը:

դարձը: Եթե այդ խոսքերը ճիշտ դուրս գան, ապա հնարավոր կլինի օգնություն ցույց տալ: Լուրը, թե բոլոր հայերը ոչնչացված են, այնքան էլ ճիշտ չէ: Բացի նրանցից, որոնք գոյություն ունեն Թուրքիայի եվրոպական մասում, կան նաև լեռները փախածներ, ինչպես նաև երկաթգծերի մոտ մի քանի համայնքներ և այնպիսիները, որոնք դիմացել են արսուրին: Կա երեք պայման, որոնք անհրաժեշտ են քվում հայերի մնացորդների պահպանման համար. բոլորին վերադարձի հնարավորություն, օգնության հնարավորություն, նախկին ունեցվածքի ետ ստացման իրավունք: Վերջինը, եթե ոչնչացված չէ, ապա լուծարքի օրենքի<sup>1</sup> միջոցով կարելի է ասել, որ կորել է»:

Խնդրում եմ Ձերդ գերագանցությանը՝ արձագանքել դուկտոր Շտրաուբինգերի գրությունը<sup>2</sup>:

**Ֆիներման**

**Նորին գերագանցություն կայզերական դեսպան պարոն կոնս Վոլֆ Մեպերնիխին, Կ. Պոլիս**

213.

Արտաքին գործերի գերատեսչություն Բեռլին, 12 դեկտեմբերի 1915թ.

Ըստ դուկտոր Շտրաուբի սույն անսովա 4-ին ներկայացված գրության՝ բուրքական կառավարությունը փորձում է հայ ժողովրդի մնացորդներին բռնի իսլամացնել: Պարզ է, որ մենք մնան ձեռնարկումը չենք կարող հանգիստ դիտել: Վկայակոչելով այն գրությունը, որտեղ պարոն ռախականցիերը վերջերս արտահայտել է իր կարծիքը Հայկական հարցի վերաբերյալ, պատիվ ունեմ Ձերդ գերագանցությանը խնդրել՝ պարզելու իրավիճակը և պետք եղած դեպքում վճռականորեն առարկություններ անելու Բ. Դեան առաջ: Խնդրում եմ Ձեզ գեկուցել ձեռնարկած քայլերի արդյունքի մասին<sup>3</sup>:

**Ֆիներման**

**Նորին գերագանցություն կայզերական դեսպան պարոն կոնս Վոլֆ Մեպերնիխին, Կ. Պոլիս**

1 Տե՛ս N 222:  
2 Հմմ. N 219:  
3 Հմմ. N 230:

## Հավելված

Արևելքում քրիստոնեական բարեգործական  
գերմանական օժանդակության միություն

Մայնի Ֆրանկֆուրտ, 4 դեկտեմբերի 1915թ.

Նորին գերագանցություն ռայխսկանցլեր  
պարոն ֆոն Բեքման Հոլվեգին, Բեռլին

Ձերդ գերագանցություն, ներքոստորագրյալ նվաստս թույլ է տալիս իրեն Ձեր ուշադրությունը հրավիրելու կայսերական օտոմանյան կառավարության վտանգավոր որոշման վրա, ըստ որի՝ երկրի խորքերի թուրքական իշխանությունները ցուցում են ստացել հայ ժողովրդի մնացորդներին ստիպել ստորագրելու մի ստացական, որտեղ նրանք հատուկ շնորհ են խնդրում՝ թույլ տալու անցնել իսլամական սուրբ կրոնին: Հրաժարվողները պետք է աքսորվեն: Որոշ թվով կանայք արդեն դավանափոխ են եղել, որպեսզի փրկվեն սովամահությունից:

Ինչպես 20 տարի առաջ առաջադեմ հայերին ստիպեցին ստորագրել մի հայտարարություն, թե նրանք ամեն դեպքում գոհ են եղել թուրքական կառավարության միջոցառումներից, և որ արտասահմանում տարածված լուրերը կոտորածների և այլնի մասին չեն համապատասխանում փաստերին, այնպես էլ դժվար չէ երկրի ղեկավարներին արտաքինապես այնպիսի տպավորություն ստեղծել, թե իսլամին անցնողների համար պահպանվում է «կամավորության» սկզբունքը:

Ելնելով պարոն ռայխսկանցլերի 1915թ. նոյեմբերի 12-ին Գերմանիայի ավետարանչական շրջանների ներկայացուցիչներին տված պատասխանից, ես հաստատ հույս ունեմ, որ Ձերդ գերագանցությունը համապատասխան ցուցումներ կտա Կ. Պոլսի կայզերական Գերմանիայի դեսպանությանը և առաջին հերթին կգործի այնպես, որ հնարավոր չլինի մեր պաշտոնյաների փոխանակումը:

Մամուրեթ ու Ազիզի վալին խստացել էր մեր կայանի ղեկավար պարոն քահանա Էհմանին, որ այն դեպքում, եթե նրան հաջողվի այդ վայրերի հայերին հանդգել հանձնելու իրենց մոտ գտնվող բոլոր զենքերը, նա ոչ

մի հայի չի պատժի: Պարոն Էհմանը կատարեց այդ հանձնարարությունը, սակայն այնտեղի ազգաբնակչությունը պակաս չկոտորվեց ու չաքսորվեց: Դրանով մեր աշխատանքը մեծ չափով կորցրեց իր հեղինակությունը հայերի աչքում:

Յ. Շուխարյ

214.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

16 դեկտեմբերի 1915թ.

Նշում

Այստեղի հայոց պատրիարքն ինձ հայտնեց հետևյալը.

Շարունակվում են Անատոլիայից բերված և այստեղ տեղավորված հայերի ձերբակալություններն ու աքսորը: Հալածանքներն սկսվելուց ի վեր արդեն արտաքսվել է 5000 հոգի: Ըստ պաշտոնական տվյալների, Կ. Պոլսում և շրջակայքում ապրում է 75000 հայ: Ըստ երևույթին, թիվը շատ ավելի պակաս է ներկայացված, մյուս կողմից հաշվվում է 120000-130000 հոգի:

Մորդման

215.

Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն

Բերա, 18 դեկտեմբերի 1915թ.

Այսօր Թալեաթ բեյի հետ, որը վերադարձել է Անատոլիայից<sup>1</sup>, հանգամանորեն քննարկեցինք հայերի վիճակը: Նա ասաց, որ լայն միջոցներ է ձեռնարկել արտաքսված հայ ընտանիքներին կերակրելու համար: Հայերի ունեցվածքի ու կյանքի դեմ կատարված հանցագործությունները խստագույնս պատժվելու են: Վերջերս պատժվել են 20 հոգուց ավելի մարդ, որոնք մեղավոր են ճանաչվել նման գործողությունների համար: Ռուսա-

<sup>1</sup> Հմմ. N 209, վերջին մասը:

կան սահմանի և Հալեպի մոտ գտնվող շրջաններից, ելնելով ռազմական անվտանգության նկատառումներից, ժամանակին անհրաժեշտ են եղել զանգվածային արտաքսումները: Սահմանամերձ և Հալեպի մոտակա շրջաններում մեծ չափով հայտնաբերվել են լուսավորչական հայերի շրջանում ռուսական կառավարության կողմից դեկավարվող դավադրությունները: Նախապատրաստված են եղել դիվերսիաներ կամուրջների ու երկաթգծերի վրա: Անհնար էր զանգվածի միջից ջուկել մեղավորներին: Միայն մեծ ծավալով տեղահանությունը կապահովեր անվտանգությունը: Սիրիայի հայերին չանհանգստացրին, Կ. Պոլսի հայերին՝ մույնպես: Տվյալ պահին ոչ մի վայրում տեղահանություններ չկան, և կառավարությունը փորձում է մեղմացնել տեղահանումների պատճառով առաջացած անհարմարությունները:

Ես ասացի, որ հայոց կաթոլիկ նախկին պատրիարքը և նրա օգնականն այսօր այցի էին եկել ինձ, ինչպես ընդունված է պաշտոնի անցնելու ժամանակ: Նրանք հավաստիացրին ինձ, որ իրենք և իրենց համայնքները Օտոմանյան կայսրության օրինապահ հպատակներն են և չեն մասնակցել որևէ հեղափոխական շարժման: Սակայն շատերը արտաքսվել են: Հոգևորականները հույս հայտնեցին, որ այդ արտաքսվածներին թույլ կտրվի վերադառնալ իրենց համայնքները և Հալեպի ու շրջակայքի իրենց հայրենի վայրերը: Ես հարցրի Թալեաթ բեյին, թե արդյո՞ք վերջիններին, ինչպես նաև ոչ հեղափոխական ապացուցված բողոքական հայերին, որոնք կապացուցեն, որ ընդհանրապես ոչ մի կապ չունեն հեղափոխության հետ, ինչքան որ հնարավոր է մնան պայմաններում, կթույլատրվի վերադառնալ իրենց հայրենի վայրերը:

Այնուհետև նախարարին ասացի Անատոլիայում լայնորեն տարածված այն ասեկոսների մասին, ըստ որի՝ գերմանական կառավարությունն է քաջալերել հայերի հալածանքները: Նա պատասխանեց, որ այդ կապակցությամբ մեծ վեզիրի հետ իմ խոսակցությունից հետո ինքը նահանգական բոլոր իշխանություններին կարգադրել է հերքել լուրերը և հայտարարել, որ գերմանական կառավարությունը ոչ մի գործ չունի այդ գործողությունների հետ, և որ թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում հակահայկական միջոցառումների ողջ պատասխանատվությունը: Չրույցի ընթացքում Թալեաթ բեյն տարօրինակ տեսակետ արտահայտեց, որը նկատվում է նաև նրա պաշտոնակիցների շրջանում, թե մենք ևս մնան պարագայում նույն ձևով կվարվեինք և Գերմանիայում

սկսված հեղափոխական շարժումը բռնությամբ արմատախիլ կանելինք: Ինձ համար միշտ անհասկանալի է եղել այն տեսակետը, որ մեղավորներին պատժելու համար պետք է տառապեն անմեղները: Պետք է պատժվեն միայն ապացուցված հանցագործությունները: Ես նախարարին հասկացրի, որ մենք երբեք մնան ձևով չէինք վարվի և կպատժեինք միայն մեղավորներին:

Տարբեր տեղերից ինձ հայտնում են, որ իմ լուրջ զգուշացումները կարծես ազդել են թուրք կառավարողների վրա: Հենց որ անհրաժեշտ լինի, կրկին կմիջամտեմ:

Մեղերնիխ

**Նորին գերազանցություն ռախսկանցլեր պարոն ֆոն Բեքման Հոլվեգին**

216.

(Կազերական Գերմանիայի դեսպանություն)

Հեռագիր

Բերա, 18 դեկտեմբերի 1915թ.

Բեռլինի արտաքին գործերի գերատեսչությանը

Թալեաթ բեյն ինձ հայտնեց, որ հակահայկական նոր միջոցառումներ չեն ձեռնարկվելու և որ արտաքսված ընտանիքներին օգնություն է ցույց տրվում: Կառավարությունն իր պաշտոնյաներին կարգադրել է հերքել Անատոլիայում տարածված այն լուրերը, թե մենք քաջալերում ենք հալածանքները:

Մեղերնիխ

217.

20 դեկտեմբերի 1915թ.

Խալիլ բեյն ամենայն վճռականությամբ ժխտում է, թե բռնի իսլամա-



ցումը կատարվել է մեծ ծավալով: Չարաշահումներ թույլ տված ստորադաս պաշտոնյաները պատժվել են:

**Ֆոն Նոյրաք**

Նշում

*Բերա, 21 դեկտեմբերի 1915թ.*

Հայերի բռնի իսլամացումը Անատոլիայում

Հայերի բռնի իսլամացումն սկսվեց մեծ ծավալով և պարբերաբար անցկացվեց Տրապիզոնի նահանգում:

Փոխհյուպատոս Կուրքուֆը (Մամսուն) այդ մասին մանրամասն զեկուցել է այս տարվա հուլիսի սկզբին<sup>1</sup>:

Նա մասնավորապես գրում է.

«Խոսքը վերաբերում է ոչ պակաս մի ողջ ժողովրդի ոչնչացմանը կամ բռնի իսլամացմանը: Կառավարությունը մոլեռանդ, խիստ հավատացյալ մահմեդական տղամարդկանց և կանանց ուղարկել է բոլոր հայերի տները՝ ազիտացիա տանելու, որ իսլամ ընդունեն, հասկանալի է՝ սպառնալիքի ներքո: Նրանց, ովքեր հավատարիմ կմնան իրենց հավատքին, ծանր հետևանքներ են սպասում: Մինչև այսօր այստեղ արդեն շատ ընտանիքներ հավատափոխ են եղել, և նրանց թիվը օրեցօր մեծանում է: Մեծամասնությունը մինչև հիմա հակադրվել է գայթակղությանը և ամեն օր, խուճբ-խուճբ քշվել երկրի խորքերը: Ինչպես պարզել են, նրանց պահել են ոչ հեռու վայրերում՝ իսլամի ընդունման համար ավելի հիմնավոր կերպով նշակելու: Մամսունի շրջանի բոլոր հայ ընտանիքները մահմեդականացվել են, ինչպես նաև՝ Ունիեն: Ուրացողներից բացի ոչ մեկին զիջումներ չեն արվում»:

Էրզրումի և Տրապիզոնի հայերի հավատափոխությունների մասին համեմատել այնտեղից ուղարկված զեկուցագրերը<sup>2</sup>:

Օգոստոսի սկզբին մի մահմեդական ճանապարհորդ հայտնեց, որ Ունիեի, Մամսունի, Ինեբուլուի և այլ վայրերի հայերը զանգվածաբար ընդունել են իսլամը (նա եկել էր այդ վայրերից): Չնայած այդ հանգամանքին,

<sup>1</sup> Հմմ. N 116 հավելվածը:

<sup>2</sup> N 73, 106, 131:

դրանից հետո էլ նրանցից շատերին տեղահանել են: Թերմեուս մի հայ քահանա մահմեդական էր դարձել և եկեղեցին մզկիթի վերածել:

Ինչպես երևում է, մյուս վայրերում իսլամացումը հաջողություն չի ունեցել: Սակայն, ինչպես հաղորդել են, Կոնիայում մի քանի հայեր (25 հոգի) պատրաստ են եղել դավանափոխ լինելու:

Պետք է ենթադրել, որ շատ դեպքերում հայկական արտաքսումների նպատակը՝ տղամարդկանց ոչնչացումն ու հայերի ունեցվածքի գրավումը, չվիժեցնելու համար, իշխանությունները խոչընդոտում էին զանգվածային դավանափոխության գործին կամ չնայած հավատափոխության նրանց արտոքում:

Հաճընի և շրջակայքի (Ադանայի վիլայեթ) հայերի իսլամացմանն է վերաբերում քույր Դիդգունի նոյեմբերի 15-ի զեկույցը: Հենց Ադանայի հյուպատոս Բյուզեն հոկտեմբերի 21-ի քվազրությամբ զեկուցում է.

«Թուրքական որբանոցի դիրեկտորը հայտարարել է քրիստոնյա սաներին, որ նրանք կամ պետք է ընդունեն իսլամը կամ հեռանան որբանոցից: Աղջիկները և տղաների մի մասը հեռացել են: Մնացած 14 տղաները, հավանորեն, իսլամացվել են: Դիրեկտորը տղաներին հայտարարել է, որ օսմանյան որբանոցում քրիստոնեական կրոնի համար տեղ չկա, նրանց աղոթել չի թույլատրվի»:

Այստեղ՝ Կ. Պոլսում, պայմանների ճնշման տակ, հավատափոխ է եղել 20 հայ, ենթադրվում է՝ հենց նրանք, որոնք հարստություն ունեն Անատոլիայում, դավանափոխությամբ փորձում են փրկել իրենց ունեցվածքը:

**Մորդան**

218.

*Կայզերական Գերմանիայի  
դեսպանություն*

*Բերա, 23 դեկտեմբերի 1915թ.*

Չերդ գերագանցություն, պատիվ ունեն կից ներկայացնել Բ. Դոնից առաջին անգամ ստացված գրավոր հաղորդման պատճեն՝ ի պատասխան մեր կողմից Հայկական հարցի վերաբերյալ վերջնագրերի:

Կայզերական դեսպանի հուլիսի 4-ի հուշագիրը ներկայացվել էր հուլիսի 7-ի զեկուցագրի հետ միասին: Բ. Դոնան վկայակոչած սեպտեմբերի 13-ի վերջնագիրը և նոյեմբերի 16-ի բանավոր հայտագիրը դրդված են եղել գեր-

մանացի շահագրգիռ անձանց պահանջով, որոնց մասին ես ինձ իրավունք  
եմ վերապահում հարկ եղած դեպքում հաշվետվություն ներկայացնել:

*Մեզերնիխ*

**Նորին գերագանցություն ռախականցիեր  
պարոն դոկտոր ֆոն Բերման Հովեզին**

Հավելված

Նշում N 75510

22 դեկտեմբերի 1915թ.

Ի պատասխան Ձերդ գերագանցության կայգերական Գերմանիայի  
դեսպանության հուլիսի 3-ի, սեպտեմբերի 13-ի և նոյեմբերի 16-ի 1915թ.  
հուշագրերի, որտեղ խոսքը վերաբերում է հայերի վերաբնակեցմանը,  
հայտնում եմք, որ ամեն ինչ արվել է բարձրագույն իշխանությունների գի-  
տությանը, որից հետևում է.

Առաջին հերթին պետք է նշել, որ այն միջոցառումները, որոնք կիրառվել  
են կայսրության հայ ազգաբնակչության նկատմամբ, վերաբերում են երկ-  
րի ներքին կառավարման գործողությունների իրավասությանը, ուստի  
դրանք միայն այն դեպքում կարող են դիվանագիտական միջամտության  
առարկա դառնալ, եթե անխուսափելիորեն շոշափեն օտար շահերը: Իրա-  
կանում անվիճելի է, որ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ձեռնար-  
կել այնպիսի միջոցառումներ, որոնց նպատակը հեղափոխական շարժման  
կանխումն է, որը պրոպագանդվում է նրա տարածքում, հատկապես, երբ  
այդ շարժումը տեղի է ունենում պատերազմական ժամանակաշրջանում:

Դաշնակից կայգերական Գերմանիայի դեսպանությունը իր պարզա-  
բանված գնահատականում ցանկացել է արտահայտել այս տեսակետի  
ճշմարտացիությունը, այսպիսով իր հուլիսի 3-ի հուշագրում ընդունել է, որ  
Արևելյան Անատոլիայի հայ ազգաբնակչության դեմ ձեռնարկված ճնշիչ  
միջոցառումները թելադրված են ռազմական պատճառներով և պաշտպա-  
նության օրինական մրջոց են: Իրականում ամենուր, որտեղ ձեռնարկվել  
են նման միջոցառումներ, բխում են կայսրության նույն պատճառներից:

Ինչ վերաբերում է գերմանական առևտրին հասցված կորուստների  
վերաբերյալ հայտարարություններին, Օտոմանյան կայսրությունը չի ըն-  
դունում դրանք: Քանի որ կայգերական Գերմանիայի դեսպանությունը

պետք է ընդունի, որ այդ օրինական իրավունքը չի կարող նման հայտա-  
րարության տեղիք տալ: Օտոմանյան, կայսերական կառավարությա-  
նը չի կարելի մեղադրել, որովհետև նա զբաղվում է ազգային պաշտպա-  
նության հարցերով և ամեն կերպ ձգտում է նվազագույնի հասցնել այն  
բոլոր տեսակի ասեկոսները, որոնք արդյունք են վերոհիշյալ անձնավո-  
րությունների տեղափոխման:

Հենց այս սկզբունքից ելնելով, ընդունվել, հաստատվել և հրապարակ-  
վել է այն ժամանակավոր օրենքը (17-ին Zilkadn 1333թ.)<sup>1</sup>, որը պարունա-  
կում է բոլոր շահերի պահպանման ցանկալի երաշխավորություններ:

Ինչ վերաբերում է կորուստների և անկարգությունների պատասխա-  
նատվությանը, որոնք մեծ չափով զգալի են Օտոմանյան կայսրության  
տնտեսական կյանքում, ապա այն իրականում ընկնում է միայն մեր ընդ-  
հանուր արտաքին թշնամիների վրա, որոնք հրահրեցին և ոգևորեցին  
հայկական հեղափոխական շարժումը կայսրությունում, որն հաստատ-  
վում է իրական փաստաթղթերով:

Ինչ վերաբերում է կայգերական դեսպանության տեղահանության  
ժամկետների հետաձգման մասին կարծիքներին, ապա 17-ը Zilkadn  
1333թ.-ի հրամանը բոլոր շահագրգիռ անձնավորությունների համար ու-  
ժի մեջ է հրապարակման օրից: Օտարները պետք է հաշվի առնեն այն և  
համակերպվեն, այնպես, ինչպես օտոմանները, որպեսզի նրանց երաշ-  
խավորությունը հետաձգման մասին նշանակություն ունենա:

Վերջում պետք է ասել, որ գերմանական դեսպանության կողմից հու-  
լիսի 3-ի, սեպտեմբերի 13-ի և նոյեմբերի 16-ի հուշագրերում մեզ ուղղված  
բոլոր մեղադրանքները, վերապահումներից բացի, չեն ընդունվում:

219

**Կայգերական Գերմանիայի Բերա, 27 դեկտեմբերի 1915թ.  
դեսպանություն**

Սույն ամսվա 12-ի որոշման կապակցությամբ

Մոնսինյոր Դոլչին հաստատում է, որ արտաքին գործերի նախարար  
Խալիլ բեյը ժամանակին հույս է տվել նրան, թե դադարեցվելու է կաթոլիկ

1 14/27 մայիսի 1915թ.: Տե՛ս N 71:

հայերի հետապնդումը և տեղահանվածներին քույրատրվելու է վերադառնալ իրենց հայրենիքը: Սակայն այս խոստումները, որոնք արվել էին ոչ հարկադրաբար, չեն իրագործվել, առնվազն, ինչ վերաբերում է արտաքսվածների վերադարձին: Եթե դրանից հետո այլևս չի խոսվում հետագա հալածանքների մասին, ապա պատճառն այն է, որ հայերի արտաքսումը հիմնականում վերջացել է: Առաքելական պատվիրակների հետագա ձեռնարկած քայլը, որ հասնեն փակված կաթոլիկ եկեղեցիների վերաբացմանը և արտաքսված հոգևորականներին իրենց թեմերը վերադարձնելուն, Բ. Դոնան կողմից ընկալվեց որպես «միջամտություն Թուրքիայի ներքին գործերին», և ոչ մի հաջողություն չունեցավ, ընդհակառակը, Կեսաբիայի եպիսկոպոսին դրանից հետո քշեցին Հալեպ:

Բացի դրանից, պետք է նշել, որ արտաքսումից խուսափած հայերի թիվը ավելի քիչ է, քան ենթադրում է պարոն դոկտոր Շտրաուբինգերը: Այն բանից հետո, ինչ մեծ քաղաքների և վայրերի հայ ազգաբնակչությանը վերջին ամիսներին տեղափոխել են Անատոլիա, Թուրքիայի եվրոպական մասում մնացել են հայերի խղճուկ բեկորներ:

Ինչ վերաբերում է Անատոլիայի համակենտրոնացման ճամբարներում (օրինակ Էսկիշեհիրում, Կոնիայում, Էրեզլիում, Հալեպում և այլ տեղերում) հավաքված հայերի նկատմամբ հոգացողությունը, ապա դոկտոր Շտրաուբինգերի մղումը համարում են անիրագործելի, որովհետև Բ. Դոնոր մեծ դժվարություններ է հարուցում դրսից և անգամ պատրիարքության կողմից օգնություն ցույց տալու ճանապարհին: Այսպիսի գործողությունը նախապես ցույց է տալիս, որ Բ. Դոնոր Միջագետք կամ Միդիա է քշելու այն հայերին, որոնք պատահաբար կամ տեղական իշխանությունների քույրտվությամբ մնացել են Անատոլիայում:

Ես միաժամանակ բացառում եմ, որ արտաքսվածները երբևէ տեղ կդառնան կառավարության կողմից բռնագրավված իրենց ունեցվածքին:

Մի անգամ ներքին գործերի նախարարը հայտարարեց.

«Այդ անձանց վերադարձը հայրենիք անթույլատրելի է, որովհետև նրանք այնտեղ այլևս չեն գտնի իրենց ունեցվածքը, որին այդ ընթացքում տիրացել է լուծարման հանձնաժողովը»:

**Մեկերնիխ**

*Նորին գերագանցություն ռախականցիեր պարոն ֆոն Բերման Հոլվեգին*

220.

*Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն*

*Բերա, 31 դեկտեմբերի 1915թ.*

Ծանուցում

Ամերիկյան ղեսպանն այսօր ինձ ասաց, որ Այնթապի 4000 բողոքական և կաթոլիկ հայերին վտանգ է սպառնում, փոխադրումներն սկսված են: Ով մահմեդական չի դառնում, արտրվում է: Ժամանակին Թալեաք բեյը նրան խոստացել էր հանգիստ թողնել բողոքականներին և կաթոլիկներին: Ինձ նույնպես խոստացել էր:

**Մեկերնիխ**

221.

*Կայզերական Գերմանիայի  
ղեսպանություն*

Հեռագիր

*Կ. Պոլիս, 31 դեկտեմբերի 1915թ.*

Հալեպի գերմանական հյուպատոսությանը

Այնթապի բողոքական և կաթոլիկ հայերի արտաքսումն սպասվում է կամ սկսվել է: Խնդրում եմ հեռագրով տեղեկացնել:

**Մեկերնիխ**

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՌ 1915 Թ.

222.

## Ժամանակավոր օրենք

այլ վայրերը տեղափոխված անձանց ունեցվածքի, պարտքերի  
և լիազորագրերի վերաբերյալ (Ֆրանսերեն):

Հոդված 1-ին. – Ըստ 1331 թ. մայիսի 14-ի ժամանակավոր օրենքի՝ այլ  
վայրերը տեղափոխված մասնավոր և իրավաբանական անձանց ունեց-  
վածքը, պարտքերը և լիազորագրերը կվճարվեն դատարանի կողմից, յու-  
րաքանչյուր անձի համար հատուկ կազմված հաշվեկշռի հիման վրա,  
այս առթիվ կազմված հանձնաժողովի կողմից:

Հոդված 2-րդ. – 1-ին հոդվածում նշված անձանց պատկանող կառույ-  
ցային սեփականությունները (vakt Idjarétéinli) և vakt-ի հողերը գրանցվում  
են բարեգործական հաստատությունների նախարարության դրամարկղի  
անունով, մնացած անշարժ գույքը գրանցվում է ֆինանսների նախարա-  
րության անունով: Սեփականատիրոջ վիճակը ճշտելուց հետո նրան կ-  
հանձնվի իր սեփականության արժեքի ընդհանուր գումարի պարտքի մնա-  
ցորդը, որը կվճարվի այս երկու նախարարություններից մեկի կողմից:

Անշարժ գույքին վերաբերող դատավարություններում, երբ սեփակա-  
նության կամ այլ հարցերում առկա են վիճելի հարցեր, հակառակ կողմը  
ներկայացվում է կադաստրի աշխատակիցների կողմից: Կադաստրի նա-  
խարարության կողմից տրված ակտերից բացի, սեփականությունը կա-  
րելի է հաստատել նաև այլ ապացույցներով, միայն թե տվյալ ակտը կեղծ  
կազմված չլինի: Վերոհիշյալ անձանց կողմից տեղափոխումից 15 օր ա-  
ռաջ կազմված փոխանցման կամ վաճառքի ակտերում, եթե դատավա-  
րության ընթացքում հաստատվում է խաբեություն կամ խոշոր կեղծիք, ա-  
պա կազմված ակտը անվավեր է հայտարարվում:

Հոդված 3-րդ. – Վերոհիշյալ անձանց կանխիկ դրամը, լքված ունեց-  
վածքը, լիազորագրերը և ավանդները հավաքվում, վերցվում և պահանջ-  
վում են հանձնաժողովի նախագահների կողմից, որոնք միաժամանակ ի-  
րականացնում են թողած այն շարժական գույքի վաճառքը, որի համար  
վեճեր չկան: Այս կերպ ստացված գումարներն ավանդի ձևով մուծվում են  
ֆինանսների նախարարության դրամարկղ՝ սեփականատիրոջ անունով:

Հոդված 4-րդ. – Ժամկետը 2 ամսով հետաձգվում է այն անձանց հա-  
մար, ովքեր հավակնում են իրավունքներ ունենալ թողած կայքի վրա կամ  
ովքեր տեղափոխված անձանց կողմից ունեն լիազորագրեր՝ անձանք դի-  
մելու հանձնաժողովներին և գրանցելու իրենց պահանջը: Արտասահմա-  
նում ապրող անձանց համար 4 ամիս ժամկետ է տրվում: Բացի այդ,  
նրանք պարտավոր են մի բնակավայր ընտրել այն քաղաքում կամ վայ-  
րում, ուր գտնվում են հանձնաժողովները, որպեսզի հնարավոր լինի  
նրանց հետ կապ հաստատել: Տվյալ ժամկետից հետո հարուցված դա-  
տական գործերը ենթարկվում են սովորական ընթացակարգի կանոննե-  
րին, և դատական գործը շահած անձինք, սույն օրենքի համաձայն, չեն  
կարող հավակնել կանխիկ ունեցվածքին:

Հոդված 5-րդ. – Հանձնաժողովները փնտրում են յուրաքանչյուր լիա-  
զորագրի և պարտքի ապացույցներ, որ համարում են հիմնավորված, և  
լիազորագրերն ուղարկում են իրավասու դատարաններ՝ լքված ունեց-  
վածքների վերաբերյալ վիճելի դատական հարցերը գրանցելուց հետո:  
Այնուհետև հանձնաժողովը հանրագումարի է բերում յուրաքանչյուր ան-  
ձի ակտիվը և պասիվը, շահագրգռված անձանց տեղյակ պահում այդ  
հաշվարկի մասին, որոշակի վայրերում փակցնում այդ հաշվարկների օ-  
րինականացված պատճենները, դրանց բնագրերն ուղարկում գլխավոր  
դատախազին՝ առկա բոլոր փաստաթղթերի հետ միասին:

Դատախազն այդ թղթերն ուղարկում է առաջին ինստանցիայի դա-  
տարանին, որի շրջանում գտնվում էր պարտապանի օրինական բնակա-  
վայրը մինչև նրա տեղափոխվելը, և այդ դատարանից պահանջում գրան-  
ցել տվյալ փաստաթղթերը: Պարտատերերը կարող են առարկություններ  
անել այդ արձանագրությունների վերաբերյալ իրավասու դատարանի ա-  
ռաջ՝ դրանց փակցնելու օրից 15 օրվա ընթացքում: Այդ ժամկետը լրանա-  
լուց հետո դատարանը քննում է հաշիվները գլխավոր դատախազի ներ-  
կայությամբ, և եթե առարկություններ կան, նա շտապ կանչում է առար-  
կություն ունեցող անձանց ու հանձնաժողովի նախագահին կամ նրա կա-  
տարածուին, որ ծանոթացնի դիմումի և պաշտպանության հետ: Որից հե-  
տո դատարանը ցանկալի փոփոխություններ է անում դատական հաշ-  
վեկշիռներում և գրանցելուց հետո դրանք հանձնում է հանձնաժողովնե-  
րին դատավճռի տեսքով, որպեսզի դրանք կատարվեն հետևյալ հոդվածի  
դրույթների համաձայն: Այդ դատավճիռները ենթակա չեն ո՛չ առարկու-  
թյան, ո՛չ հետաձգման, ո՛չ բողոքարկման, ո՛չ բեկանման:

Հոդված 6-րդ – Դատարանի վերջնական դատավճռի համաձայն պարտապանի մասնակի և սովորական պարտքերի վճարումը դրվում է գույքը վաճառող հանձնաժողովների և գործադիր գրասենյակների վրա (երբ այդ հանձնաժողովների նիստերը տեղի չեն ունենում): Եթե պարտապանի ունեցվածքը չի բավարարում մասնակի և սովորական պարտքերի վճարելու համար, ապա նա կարող է վճարել աստիճանաբար:

Հոդված 7-րդ – Քաղաքացիական հայցը բավարարելու համար կայքի վրա դրված կալանքը և փոխադրված անձանց կայքի կալանքի գործադրումը, լինի դա արտակարգ դատարանի, թե պետական վարչական հիմնարկների կողմից, գրույի է հավասար, և նրանք, ովքեր դրել են այդ կալանքները, պետք է առաջնորդվեն ըստ սույն օրենքի:

Տվյալ պահին տեղափոխված անձանց դեմ դատական գործ բացած անձինք ազատ իրավունք ունեն դիմելու հանձնաժողովներին, կամ թողնելու, որ գործը բնականոն հունով ընթանա՝ համաձայն ընդհանուր դրույթների: Ովքեր չեն դիմում հանձնաժողովներին, նրանց հանդեպ կիրառվում է չորրորդ հոդվածի վերջին պարագրաֆը: Այս անձանց օգտին ընթացքի մեջ գտնվող դատական գործերը վարվում են հանձնաժողովի նախագահի կամ նրա կատարածուի կողմից:

Հոդված 8-րդ. – Հանձնաժողովների կազմման կարգը և սույն օրենքի տարբեր դրույթների կիրառումը կգրանցվեն կանոնադրությամբ:

Հոդված 9-րդ. – Vakf Idjaréteinli կարգի անշարժ գույքը, ինչպես նաև vakf-ի հողերը և մյուս կառույցները, որոնք գրանցվել են Evkaf-ի և ֆինանսների նախարարության հաշվին, ներգաղթողների վերաբերյալ կանոնադրության համաձայն կարող են բաժանվել ներգաղթողներին:

Հոդված 10-րդ. – Evkaf-ի, ներքին գործերի, արդարադատության և ֆինանսների նախարարները պատասխանատու են սույն օրենքի կատարման համար:

Հոդված 10-րդ. – Սույն օրենքն ուժի մեջ է հաստատման և հրապարակման պահից:

13 սեպտեմբերի 1331  
(26 օգոստոսի 1915թ.)

Հաղորդում 1915թ. հոկտեմբերին և նոյեմբերին կայացած սենատի խորհրդակցությունների մասին

1-ին նիստ, 21 սեպտեմբերի 1331 (4 հոկտեմբերի 1915)

Ահմեդ Ռ-իզա բեյ – Հազարավոր և հարյուր-հազարավոր կանայք, երեխաներ և ծերեր թշվառ ու անօգնական այսօր թափառում են Անատոլիայի փողոցներում ու լեռներում: Ես սպասում եմ կառավարության արդարադատությունից, որ այս մարդիկ մինչև ծնունդ սկսվելը կամ վերադարձվեն իրենց հայրենի վայրերը, կամ տեղավորվեն այնտեղ, որտեղ ցանկանում են: Եթե Բ. Դուռը կմիանա իմ ցանկությանը, խնդրում եմ պարոն նախագահին այդ մասին տեղյակ պահել կառավարությանը: (Բացականչություններ՝ համաձայն ենք:?) Ներկայացնում եմ նաև մի օրինագիծ և խնդրում եմ այն մտցնել հաջորդ օրակարգի մեջ՝ օրենսդիր հանձնաժողովին փոխանցելու նպատակով:

2-րդ նիստ. 28 սեպտեմբերի 1331 (11 հոկտեմբերի 1915)

Ընթերցվում է Ահմեդ Ռ-իզա բեյի ներկայացրած օրինագիծը:

### Օրինագիծ

Առաջարկում եմ 1331 թ. սեպտեմբերի 13-ի (1915թ. սեպտեմբերի 26-ի) ժամանակավոր օրենքի 11-րդ հոդվածը՝ այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքի, պարտքերի ու պահանջների վերաբերյալ, փոխել հետևյալ ձևով.

Այս օրենքն իրագործել համաշխարհային պատերազմի ավարտից և հաշտության պայմանագրի հայտարարությունից մեկ ամիս հետո:

### Պատճառները

1. Պատերազմական ժամանակները ոչ մեկին իրավունք չեն տալիս խլել ուրիշների շարժական կամ անշարժ ունեցվածքը:

2. Այնտեղ, որտեղ վաճառվում են հողամասերը, հենց այն անձինք՝ գյուղացիներն ու տեղաբնակները, որոնք ամենից շատ են շահագրգռված

գնելու դրանք, պատերազմի պատճառով հիմա բացակայում են: Բացի այդ, այժմ ունևոր մարդիկ, որոնք այդ հողամասերի համար պատշաճ գին կվճարեին, չեն կարող դրամ ճարել: Ուստի տվյալ պահին այդ հողամասերի վաճառքը դրանց սեփականատերերին մեծ վնաս կհասցնեք, բացի այդ, տվյալ տեղի համաբնակչությունը ոչ մի օգուտ չէր ունենա:

3. Այս ժամանակավոր օրենքը, որն արձակվել է խորհրդարանի բացումից երկու օր առաջ, հակասում է սահմանադրության 16-րդ հոդվածին: Այն նաև անհամատեղելի է օրենքին և արդարադատությանը: Ուստի այս օրենքը սկզբում պետք է անցնի խորհրդարանով և միայն պատերազմից հետո իրագործվի: Այդ պատճառով պահանջում են, համաձայն սահմանադրության 53-րդ հոդվածի, կատարել վերը նշված փոփոխությունը:

#### Ահմեդ Ռիզա

##### 21 սեպտեմբերի 1331թ.

Նախագահի տեղակալ - Առաջարկում ներկայացված օրենքը վերաբերում է բացակա անձանց հայտնի դասի ունեցվածքի վաճառքին: Օրենքը հրապարակվել է սեպտեմբերի 13-ին և այդ օրվանից ուժի մեջ է մտել: Ահմեդ Ռիզա բեյն առաջարկում է, որ օրենքն ուժի մեջ մտնի հաշտության պայմանագրից մեկ ամիս հետո, և որ հոդվածը փոխվի: Մակայն ժամանակավոր օրենքը մեզ դեռ չի հասել, և մենք չգիտենք էլ, թե երբ կհասնի: Հանձնե՞ք առաջարկն օրենսդիր հանձնաժողովին մինչև ժամանակավոր օրենքի ստանալը:

Մուսա Քյազիմ էֆենդի - Իհարկե՛, պետք է առաջարկն ուղարկել այդ հանձնաժողովին:

Նախագահի տեղակալ - Լա՛վ: Ժամանակավոր օրենքն ստանալուց հետո պետք է առաջարկը քննարկվի օրենքի հետ միասին:

Ահմեդ Ռիզա բեյ - Օրենքն այսօր ուժի մե՞ջ է թե ոչ:

Նախագահի տեղակալ - Ես ծանոթ չեմ ժամանակավոր օրենքին: Չէ՞ որ ինքներդ ասացիք, որ այն հայտարարման օրից ուժի մեջ է:

Ահմեդ Ռիզա բեյ - Ես այն կարդացել եմ պաշտոնաթերթում: Այն հրապարակվել է սեպտեմբերի 12-ին և հրապարակման օրից գործում է:

Նախագահի տեղակալ - Եվ դուք դրանից հետո պահանջում եք 11-րդ հոդվածի փոփոխում:

Ահմեդ Ռիզա բեյ - Մենք չգիտենք, թե օրենքը երբ կհասնի մեզ: Ի՞նչ

կլինի, եթե այն ընդհանրապես մեզ չհասնի, կամ այնքան ուշ հասնի, որ տվյալ մարդկանցից ոչ մեկն այլևս կարողություն չունենա:

Հյուսնի փաշա - Ինձ թվում է՝ աննպատակ է առաջարկն ուղարկել հանձնաժողովին: Մենք՝ ինքներս դեռ մեր ձեռքի տակ օրենքը չունենք, այնպես որ չենք կարող ուշադրության առնել փոփոխման առաջարկը:

Մահմեդ փաշա - Առաջարկը պետք է ուղարկել հանձնաժողով:

Արիստիդի փաշա - Թող այդ մասին նախևառաջ հանձնաժողովը կարծիք հայտնի:

Նախագահի տեղակալ (որոշում է քվեարկությամբ) - Մեծամասնությունը կողմ է առաջարկը հանձնաժողովին հանձնելուն:

3-րդ նիստը, 19 հոկտեմբերի 1331 (1 նոյեմբերի 1915)

Ահմեդ Ռիզա բեյ - Ես խնդրել էի, որ կառավարության ուշադրությունը հրավիրվի Անատոլիայի լեռներում թափառող կարեկցանքի արժանի մարդկանց վրա: Բ. Դուռը միացել է իմ խնդրանքին: Արդյո՞ք կառավարությանը հասկացնել եք տվել, որ անհրաժեշտ է թեթևացնել այդ մարդկանց վիճակը, և ի՞նչ արդյունքի եք ասել:

Նախագահ - Բ. Դուռն որոշումից հետո ես այդ հարցի մասին խորհրդակցել եմ կառավարության հետ: Ինչպես որ կառավարությունն ամեն ինչ արել է բնակչության բարօրությանը վնասող արգելքները վերացնելու համար, նա աշխատում է միջոցներ գտնել նշված անձանց բարօրությունը ապահովելու համար ևս: Նա (կառավարությունը) այդ նպատակով բռնագաղթվածների գործերով զբաղվող դիրեկտորին միայն այդ գործի համար ուղարկել է տվյալ վայրերը<sup>1</sup>: Վարկեր են հատկացված այդ նպատակով, և ուրիշ պաշտոնյաներ էլ են ուղարկվել: Կառավարությունը հոգ է տանում այդ մարդկանց բարօրության համար: (Բացականություններ՝ Շատ լավ է:)

Ահմեդ Ռիզա բեյ - Ինչպես գիտեք, կանգնած ենք ձմռան շեմին: Եթե որևէ բան արվելու է, պետք է հնարավորին չափ շուտ արվի: Չէ՞ որ կառավարությունն այդ իմաստով Չեզ պաշտոնապես տեղեկացրել է, այնպես չէ՞:

Նախագահ - Իհարկե՛:

1 Այս պաշտոնյայի գործունեության մասին հմմ. N 165 և N 236:

224.

Նշում

Մոսուլի հայերի ծրագրված տեղահանության մասին ղեկտեներ 1915թ.

1915թ. սեպտեմբերին բուրքական կառավարության հրահանգով Բաղդադում բնակվող հայերն արքարվեցին Մոսուլ: Ֆելդմարշալ բարոն ֆոն դեր Գուլցի Բաղդադ ժամանելուց (ղեկտեներ, 1915թ.) կարճ ժամանակ անց Միջագետքի մինչայժմյան գլխավոր հրամանատար Նուրեդդին բեյը հրաման արձակեց՝ այս հայերին Մոսուլից հեռու տեղափոխել, ինչպես նաև Մոսուլի տեղացի հայերին տանել դեպի Եփրատ: Ֆելդմարշալը պատահաբար իմացավ այս ռազմական տեսակետից ոչ մի կերպ չարդարացվող միջոցառման մասին և վճռականորեն միջամտեց վիլայեթի իշխանությունների առաջ: Բայց՝ առանց արդյունքի: Գործը համարյա մի ամիս ձգձգվեց և ֆելդմարշալը կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը որոշ ժամանակ Մոսուլում սպասեն իրենց արտաքսմանը: Երբ մինչև 1916թ. հունվարի կեսերը Կ. Պոլսից ոչ մի ցուցմունք չստացվեց, ֆելդմարշալը, օգտվելով գլխավոր հրամանատարի իր լիազորությունից, Մոսուլի վալիին արգելեց հայերին ավելի հեռու առաքել: Վալիին կրկին գեկուցեց Կ. Պոլիս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չստացվեց, ընդհակառակը, լուր եկավ, թե կառավարությունը պնդում է փոխադրման վրա: Այդ պատճառով ֆելդմարշալը հեռագրով խնդրեց իրեն անմիջապես ետ կանչել ծառայությունից: Միայն այդժամ Էնվեր փաշան սիրալիք պատասխանեց հեռագրով, որտեղ խոստումներ էր տալիս հայերի Մոսուլում մնալու վերաբերյալ, բայցևայնպես հասկացնելով ֆելդմարշալին, որ գլխավոր հրամանատարի լիազորությունը նրան իրավունք չի տալիս խառնվելու բուրքական կայսրության ներքին գործերին:

Ֆելդմարշալը դրանից հետո էլ ուզում էր պնդել իր հրաժարականի մասին, սակայն հրաժարվեց այդ մտադրությունից, քանի որ այդ գործում անցկացրել էր իր կյանքը, և որովհետև Կուտ էլ Ամարայում ռազմական

ծանր վիճակի առկայությանը իրեն պարտավորված էր զգում մնալ այդ պաշտոնում:

Քեոլին, 19 նոյեմբերի 1918թ. Դեպքանության խորհրդական Դիքոնֆ

Քեոլին, 19 նոյեմբերի 1918թ. Դեպքանության խորհրդական Դիքոնֆ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդուլ Համիդ 65, 77, 112, 139, 225, 295  
 Աբդուլ Հալիլ բեյ, Մուստաֆա, Բիբլիսի վալին 104  
 Աբդուլ Ռեզակ բեյ, Բեդր խան 112, 236  
 Աբուհայթյան, դ-ր, բժիշկ Հալեպում 67  
 Ազիզ բեյ, ներքին գործերի նախարար 267, 268  
 Աբարյան Արրահամ, դեղագործ Ուրֆայում 67  
 Ալեքսանդր Նևակի 98  
 Ալի Մունիֆ բեյ 41, 287  
 Ակիմովիչ, ռուս. հյուպատոս Վանում 112  
 Ակնունի 196, 197, 208  
 Ահարոնյան 58  
 Ահմեդ Ռիզա բեյ, սենատոր 63, 373-375  
 Անդերս, փոխհյուպատոս, Էրզրումի կայզերական հյուպատոսությունում 24, 80, 95, 97, 98, 100, 103, 105, 106, 109, 113  
 Ապելյան, հեղափոխական 67  
 Ապել տիկին 303  
 Արամ 23  
 Արխատիյի փաշա 375  
 Արսենֆելդ Կարլ, դ-ր, Բեռլինի միսիոներական ընկերության ղեկավար 336  
 Բալակյան 227  
 Բախեմ Կարլ, իրավական խորհրդի անդամ, իրավաբանության դոկտոր 340  
 Բաումգարտեն Դ., պրոֆ. Քիլում 336  
 Բեադեյան, Էրզրումի հայոց եպիսկոպոս 100

Բեդրի բեյ, ոստիկանապետ 303, 304  
 Բենեդիկտ 15-րդ Պապ 40, 52, 91, 305  
 Բերգֆելդ, դ-ր, կայզերական հյուպատոս Տրապիզոնում 88, 108, 116, 203, 205, 206, 208, 210, 219, 277, 278, 285  
 Բեռնատորֆ Յ. Հ., կոմս 57  
 Բեշիր Սամի բեյ, Հալեպի վալին 257  
 Բեքման Հովվեզ, ռայխսկանցլեր 47, 52, 95, 107, 108, 110, 116, 119, 120, 124, 130, 131, 134, 151, 161, 162, 169, 172, 183, 196, 212, 216, 219, 223, 224, 233, 238, 255, 278, 282, 288, 294, 310, 314, 325, 327, 330, 340-342, 345, 347, 352, 353, 356, 358, 360, 363, 366, 368  
 Բեյիկյան Հայկազուն, գյուղ. գծով խորհրդատու 109  
 Բիզել Գեորգ, միջնակարգ դպրոցի ուսուցիչ Կոնիայում 265  
 Բլանկ, միսիոներ Մարաշում 136, 141, 143, 170, 171, 313, 316, 317  
 Բլեհր, քարտուղար 123  
 Բյուզե, դ-ր, կայզերական հյուպատոս Ադանայում 41, 82, 117, 127, 149, 181, 201, 287, 291, 293  
 Բոդիլ Բյոռն 328  
 Բուաչե ֆոն դեմ, պետական քարտուղարի օգնական 57  
 Բուրխարդ Յոհաննես, դ-ր, Պոզենի քաղաքական ակադեմիայում 336  
 Գերհարդ ֆոն Յեսչվիտց, քահանա 338  
 Գյոզուբուրյան Ազտիկ Էֆենդի, Հոֆ բեյի շտաբում 109

Գյուպերտ, դ-ր, դեսպանության գաղտնի խորհրդական 279  
 Գոգոլ, ռուս գրող 101  
 Գուլջ ֆոն դեր, գեներալ ֆելդմարշալ 64, 69, 300, 376  
 Գորդես Դ.Ս., կառավարիչ 336  
 Գրաեստեր Էդուարդ, փիլ. դ-ր, Հալեպի ռեալական դպրոց 309  
 Գրեյ, լորդ 66, 316  
 Գրիգոր Լուսավորիչ 95, 97  
 Գուստավ Գերոկ, Շտուտգարտ քաղաքի քահանա 338  
 Գևորգ 5-րդ Սուրենյան, կաթողիկոս Էջմիածնում 95, 96  
 Գալման Դ., դ-ր, Երուսաղեմից 338  
 Դալման Յոհաննես, Միխովիցում պատուր 338  
 Դայսման Դ. Ադոլֆ, գերմանական արևելյան միսիայի վարչության անդամ 336  
 Դանիելյան Ներսես, Հալեպի հայ. լուս. եպիսկոպոս 114  
 Դիրելիուս Դ., քարոզիչ, Դրեզդեն 336  
 Դիդոն քույր 365  
 Դիքհոֆ, դեսպանության խորհրդական 377  
 Դոլչի, մոնսիյոր 266, 305, 358, 367  
 Եփրեմ, կաթողիկոս 97  
 Զավեն, Կ. Պոլիս հայ լուսավորչ. պատրիարք 153  
 Զարդարյան, «Ազատամարտի» գլխ. խմբագիր 196, 197, 208  
 Զենբերգ Դ.Ռ., դ-ր, Բեռլին 338  
 Զենգեր Վիլլի, Անատոլիայի արդյունառուտրական ընկերության ղեկավար, Կոնիայի մասնաճյուղ 265

Չոհրապ Գրիգոր, փաստաբան, Կ. Պոլիս, հայ պատգամավոր 28, 29, 208, 227, 228, 230, 294  
 Էրիզայան Մաթևոս Էֆենդի, 1-ին ատյանի դատարանի նախագահ Վանում 109  
 Էդիեմ բեյ 302  
 Էման Յոհաննես, քահանա, գերմանական որբանոցի տնօրեն Մամուրեք ու Ազիզում 82, 166, 182, 183, 199, 204, 289, 360, 361  
 Էյնալիբեյք Ի., Մարաշի ամերիկյան առաքելության անդամ 317  
 Էյուբ բեյ 191  
 Էնվեր փաշա 23, 26, 27, 30, 31, 39, 41, 57-60, 63, 70, 71, 73, 74, 83-86, 111, 189, 191, 248, 249, 299, 300, 318, 329, 355, 376  
 Էրցբերգեր, ռայխստագի անդամ 340, 341, 358  
 Էսադ փաշա, Բաթում 58, 59  
 Էվալդ Շտիր, «Գերմանա-հայկական ընկերության» նախագահ 338  
 Էրիխ Դ. Ֆյոքստեր, քահանա Ֆրանկֆուրտում 336  
 Էրարտ Ֆրանց, Ուրֆա 66-68, 257, 260  
 Թազվորյան, դ-ր 208  
 Թալեսթ բեյ, ներքին գործերի նախարար, 1917թ-ից փաշա և մեծ վեզիր 22, 27-29, 32, 35, 36, 39, 41-43, 48, 52, 53, 55-59, 63, 64, 73, 83, 89, 123, 162, 185, 187, 195, 216, 221, 228, 252, 254, 267, 268, 279, 281, 285, 292, 294, 296-298, 356, 361-363, 369  
 Թահիր փաշա, վալի, վիլայեթի նահանգապետ 112



Թահսին քեյ, Էրզրումի վալին 21, 106, 152, 176, 235, 321  
Թրոյթեր, կայգերական դեսպանորդ Պլեսում 318  
Իսսան փաշա, 34-րդ դիվիզիայի հրամանատար 103  
Իշխան, դաշնակցական 23, 157, 160, 173  
Լայման Ջեյմս Քեյ, փոխնախագահ, ամերիկյան առաքելություն Մարաշում 317  
Լեսլի, ամերիկյան միսիոներ 323, 345  
Լեփսիուս Յոհաննես, դ-ր, 26, 91, 189, 197, 202, 203, 207, 222, 248, 249, 337, 353  
Լիման ֆոն Սանդերս, մարշալ, պրուսական բազավոր. հեծելազորի գեներալ 69, 70  
Լոյտվեդ, հյուպատոս Դամասկոսում 50, 277  
Լոսով ֆոն, գեներալ-մայոր 70  
Լուդենդորֆ, գլխավոր շտաբի պետ 71  
Լուֆս, դ-ր, Հալլե 337  
Խալիլ քեյ, արտ. գործերի նախարար և պալատի պրեզիդենտ 29, 39, 41, 45, 48, 56, 61, 64, 71, 73, 254, 319, 326, 242, 351, 355, 363, 367  
Խալիլ փաշա, 3-րդ բանակի գլխ. հրամանատար 172  
Խուլուսի քեյ, ոստիկանապետ Էրզրումում 274  
Խուրշիդ փաշա 157  
Կարապետ, եպիսկոպոս Էջմիածնում 28  
Կարլոս Մեծ 322  
Կաֆտան Դ., գլխավոր կառավարիչ Քիլում 337

Կիրլակյան Հովսեփ Էֆենդի 139  
Կոչկերյան, Օջախլիից 128  
Կոնյալյան Սողոմոն Էֆենդի 67  
Կրես, բարոն ֆոն, գնդապետ 42, 58, 59, 325, 355, 358  
Կրեսենշտայն, բարոն ֆոն 70  
Կրոմեր, լորդ 315  
Կուպեր, գրող 24  
Կուքոֆ, գերմանացի փոխյուպատոս 45, 88, 224, 226, 364  
Հալիլ քեյ, Երզնկայի մյութասարիֆ 209  
Հակիուս Ա., գաղտնի խորհրդատու, Հանովեր 337  
Հակիուս Դ.Գ., Հերմանսբերգ, դիրեկտոր Հանովերում 337  
Հակոբյան, հեղափոխական 67, 206  
Համանջյան Հակոբ, քաղաքացիական տեսուչ ներքին գործ. նախարարությունում 296  
Հայդար քեյ, Մոսուլի վալին 155  
Հայդար փաշա, Մարաշի մյութասարիֆը 134-136  
Հայկ 196, 208  
Հայկունի, դաշնակցական 28  
Հաջի Ադիլ քեյ, Ադրիանապոլի վալին 294  
Հասան Ֆեհմի քեյ, դիրեկտոր ներքին գործերի նախարարությունում 296  
Հասրեկ Թ., գերմանական փոխօգնության նախագահ 337  
Հաքի փաշա 342  
Հիլմի քեյ, մայոր, Բիրլիս քաղաքի պարետ 104  
Հիլմի քեյ, «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի անդամ 274  
Հինդենբուրգ, գերմանացի գլխավոր

հրամանատար 58, 71, 299  
Հյունի փաշա 375  
Հուլտայն, Կայզերական Գերմանիայի հյուպատոս Մոսուլում 30, 33, 65, 88, 173, 180, 220, 222, 223, 227, 236, 262, 288, 319  
Հոհենլոհե Լանգենբուրգ, իշխան, արտակարգ առաքելության դեսպան 35, 39, 74, 89, 234, 238, 240, 247, 252, 253, 255, 261, 263, 269, 275, 282, 284, 288, 289, 291, 292, 294, 301, 311, 312  
Հոֆ քեյ, Արևելյան Անատոլիայի գլխավոր տեսուչ 109, 110, 123  
Հոֆման, կայզերական հյուպատոս Ալեքսանդրեթում 82, 126, 304  
Հուբեր, ռեալական դպրոցի դիրեկտոր, Հալեպ 309  
Հունան, կապիտան 83, 84, 248  
Հուսեյն Հյունի, Ջեյթունի կայմական 154  
Հուսեյն Քյազիմ քեյ, Սալոնիկի նախկին վալի, Հալեպի վալի 65  
Հուսիկ, քարտուղար հայ կաթոլ. պատրիարքարանում 279  
Մաթևոս 2-րդ Իզմիրյան, կաթողիկոս 98  
Մակու շեյխ 111  
Մահլինգ Դ., պր.ֆ., Բեռլին 337  
Մահմեդ փաշա, թուրքական խորհրդարանի անդամ 375  
Մանդելշտամ Ա. 66, 68  
Մար Շիմուն, մեստորականների պատրիարքը Քոչանիսում 150  
Մաուրեր Յ. Է., դիպլոմավոր ինժեներ Կոնիայում 265  
Մաքսիմով, ռուս հյուպատոս 218  
Մերիկ Ջ. Ի., դ-ր, Այնթապի ամերիկյան

քոլեջի դիրեկտոր 148, 317, 349  
Միկուլ ֆոն, մայոր 215  
Մինասյան, հայ 196  
Մկրտչյան Թումաս Կ. 66  
Մորդման, Կայզերական Գերմանիայի դեսպան, Էրզրում 89, 149, 152, 173, 185-187, 195, 209, 228, 252, 267, 268, 329, 361, 365  
Մորգենթաու, ամերիկյան դեսպան 309  
Մուխիաս, դեսպանության խորհրդատու, Կայզերական Գերմանիայի գործերի հավատարմատար 100  
Մում Ռ., ռայխստագի անդամ, Բեռլին 338  
Մումբազ քեյ, Մարաշի մյութասարիֆը 135, 136  
Մուսա քեյ, քրդերի պարագլուխ 103  
Մուսա Քյազիմ Էֆենդի, թուրք սենատոր 374  
Մուրախաս, Դիարբեքիրի եպիսկոպոսը 216  
Յագով ֆոն, դ-ր, պետական քարտուղար, Բեռլինի արտաքին գործերի գերատեսչություն 342, 353  
Յանսոն Հայնրիխ, գործարանի վարպետ Կոնիայում 265  
Յոհանսոն Ալմա, քույր Մուշի որբանոցում 68, 327-329  
Յոնեսկու Թաքե, Ռումինիայի ներքին գործերի նախարար 298  
Նազարեթ Նորաշխարհյան, Ջեյթուն 155  
Նազարեթ Չաուշ, Ջեյթունի դասակարգների առաջնորդ 114, 134, 136  
Նազարյան Կապույտ, դ-ր 145  
Նահին, մուսլիմ 349

Ներսես 5-րդ, կաթողիկոս, Թիֆլիսի  
նախկին արքեպիսկոպոս 97  
Ներսես Կարազյան, Մուշի հայ արքե-  
պիսկոպոս 101  
Նիզամի, ռազմական կոմիսար Հալե-  
պում 288  
Նյուպազե, դ-ր, Հալեպի ռեալական դպ-  
րոցի ավագ ուսուցիչ 308, 309  
Նոյրաթ, Կայգերական Գերմանիայի  
դեսպան 187, 226, 267, 304, 314, 319-  
321, 326, 327, 330, 342, 352, 364  
Նոյրքիրլա, դ-ր, բժիշկ Կարմիր Խաչի ար-  
շավախմբում, Երզնկա 320  
Նուրեդդին բեյ, գլխավոր հրամանա-  
տար Միջագետքում 69, 376  
Նուրի փաշա, բարձրագույն հրամանա-  
տար Բարսիլում 60, 61, 71  
Շախտ, դ-ր, շտաբի գլխավոր բժիշկ 347  
Շահինյան Գրիգոր Էֆենդի, Հոֆ բեյի  
շտաբի կազմում 109  
Շաքիր բեյ, «Միություն և Առաջադիմու-  
թյան» անդամ 274  
Շեփարդ, դ-ր, Այնթապ 138, 142  
Շիլկով, ռուս հյուպատոս Բիբլիսում 104  
Շլիմե Կարլ, ենթասպա Էրզրում 69, 247,  
248, 270, 271  
Շմիդտ, կայգերական հյուպատոս, Ե-  
րուսաղեմ 285  
Շոյքմեր-Ռիխտեր ֆոն, Կայգերական  
Գերմանիայի փոխհյուպատոս Էրզ-  
րումում 21, 22, 31-33, 69, 82, 89, 125,  
152, 153, 163-165, 169, 177-179, 181,  
184, 185, 190, 191, 199, 200, 205, 209,  
216, 236, 247, 251, 313, 326, 352  
Շպիկեր, ավետարանչական պատու-  
նակ 337

Շպիկեր Մարի, միսիոներուհի Հալե-  
պում 309, 337, 338  
Շպիկեր Ֆ.Ս., դ-ր, Բեռլին-Գրունվալդ  
338  
Շվարց, Կայգերական Գերմանիայի  
հյուպատոս Էրզրումում 120  
Շտանգե, փոխգնդապետ 269, 274  
Շտիր, քահանա, Մարբուրգ 338  
Շտոկման Հելենե, դպրոցի տնօրեն Մա-  
րաշում 138  
Շտրաուսինգեր, դ-ր, Հայր 358, 359, 368  
Շրայբեր Ս. Վ., Գերմանական ավետա-  
րանչական առաքելության օգնության  
դիրեկտոր 341  
Շուխարդ, Արևելքում քրիստոնեական  
բարեգործական օժանդակության  
միության դիրեկտոր 359, 361  
Չաքրյան Պետրոս, Ջեյթուն 157  
Չիլինկիրյան Ռուբեն, բժիշկ 303, 304  
Չիլինկիրյան տիկին, դ-ր, Ռուբենի կի-  
նը, գերմանուհի 303  
Պասիոյան 227  
Պասկևիչ-Էրիվանսկի, փոխարքա 97  
Պաստիրմաճյան, Օտոման. բանկի դի-  
րեկտոր 21, 152, 167  
Պարաքվին, փոխգնդապետ 61, 71  
Պոդոս Նուբար փաշա 96, 102, 261  
Պֆիստեր, քաղաքային քահանա,  
Վայմերգ 337  
Ջամբուլադ բեյ 267  
Ջելալ բեյ, Հալեպի վալին 20, 34, 41, 65,  
83, 88, 135, 191, 199, 228, 343  
Ջեկտն Ջ. Բ., ամերիկյան հյուպատոս,  
Հալեպ 142  
Ջեմալ փաշա, 4-րդ բանակի հրամա-  
նատար 20, 21, 42, 50, 51, 63, 133, 134,

139, 141, 143, 158, 214, 215, 228, 252,  
253, 274-276, 280, 285, 287, 297, 324,  
325, 357, 358  
Ջեդեթ բեյ, Հեքյարի մյութասարիֆը,  
Վանի վալին 23-25, 27, 111-112, 151  
Ռահմի բեյ, Ջմյուռնիայի վալին 294  
Ռանկե 322  
Ռեշիդ բեյ, Դիարբեքիրի վալին 65, 220,  
221, 237  
Ռիխտեր Գ. Յուլիուս, պրֆ., Բեռլին-  
Շտեզից 337  
Ռյուսլեր, Կայգերական Գերմանիայի  
հյուպատոս, Հալեպ 20, 31, 33, 66, 68,  
82, 83, 88, 89, 114, 129, 132-134, 141,  
149, 172, 191, 192, 194, 199, 200, 208,  
215, 233, 234, 237, 240, 252, 257, 262,  
263, 274, 276, 280, 286, 290, 292, 293,  
314-317, 325, 345, 347, 351  
Ռոզենբերգ ֆոն, դեսպանության գաղտ-  
նի խորհրդական, արտաքին գործերի  
գերատեսչություն, Բեռլին 303  
Ռոհներ Բեստրիչե, քույր Հալեպում 142  
Ռուբեն Էֆենդի, Մուշի դաշնակցական-  
ների առաջնորդ 101  
Ռուհի բեյ, գլխավոր շտաբի կապիտան  
103, 104  
Մազոնով 248  
Մահակ, Կիլիկիայի կաթողիկոս 158  
Մալջյան, դասալիք 128  
Մայիդ Հալիմ փաշա, մեծ վեզիր 37, 41,  
65  
Մեիդ Ալի, քրդական շենյա, կրոնական  
առաջնորդ 103, 105  
Մելիմ Մուլլահ, քուրդ պատամիր 104  
Մելիմ Յաուզ, սուլթան 104  
Մեյֆուլա բեյ, Էրզրումի պատգամավոր,

«Միություն և Առաջադիմություն» կո-  
միտեի անդամ 274  
Մերվեթ բեյ, Մուշի մյութասարիֆը 329  
Սմբատ, եպիսկոպոս Էրզրումում 96  
Սմկո բեյ, քուրդ շենյա 111  
Սպոների, քարոզիչ, Վանի գերմանական  
որբանոցի ղեկավար 170, 183  
Սուլեյման բեյ, Մուշի ոստիկանապետը  
131, 154  
Վալիդե սուլթան, Թուրքիայի կայսրու-  
հի 154  
Վանգենհայմ բարոն ֆոն, Կ.Պոլսի Կայ-  
գերական Գերմանիայի դեսպան 21,  
35, 37, 38, 82, 89, 95, 97, 98, 103, 105,  
107, 110, 119, 124, 126, 127, 130, 131,  
134, 141, 148, 150, 151, 159, 161, 162,  
166, 167, 169, 170, 173, 177, 179, 182,  
183, 185, 188, 189, 192, 196, 199-201,  
203, 204, 212, 216, 221, 223, 224, 236,  
305, 310, 313, 314  
Վարդես Էֆենդի, հայ պատգամավոր  
28, 29, 208, 209, 227, 228, 230, 294  
Վելի փաշա, թիկունքի տեսչության շեֆը  
325  
Վեստենենգ, գլխավոր տեսուչ 109, 123  
Վերթ, կայգերական հյուպատոս Էրզ-  
րումում և Սվազում 69  
Վերտման, պրելատ, դ-ր, Գերմանիայի  
գլխավոր ասամբլեայի կենտրոնական  
կոմիտեի նախագահ 340  
Վոլֆ Մետերնիխ, կոմս, Կայգերական  
Գերմանիայի դեսպան 41, 42, 48, 51,  
52, 54, 55, 63, 89, 342, 353, 354, 356,  
358, 359, 363, 366, 368, 369  
Վորոնցով-Դաշկով, ռուս փոխարքա 98  
Վոսմյան, Վանի հայ պատգամավոր

23, 87, 173, 202  
 Վուլյի Ի.Ս., Մարաշի ամերիկյան առա-  
 քելության Ց սխազահ 66, 143, 313,  
 314, 316, 317  
 Տիշկա ֆոն 74, 300  
 Տրդատ, հայոց թագավոր 95  
 Տուրյան, հայ պատրիարք Կ.Պոլսում 96  
 Յիմեր Մաքս, դ-ր 227, 228  
 Յիմերման, պետական քարտուղարի  
 օգնական 197, 207, 266, 281, 293, 313,  
 354, 355, 358, 359  
 Փափազյան Վահան, Մուշի խորհրդա-  
 րանի պատգամավոր 22, 31  
 Փիթ, ամերիկյան Բայթլ Հաուզ ընդերու-  
 քյան անդամ Կ.Պոլսում 184, 186, 187  
 Փիլման, դ-ր 247  
 Փոսելդ, գեներալ, Էրզրումի բերդակալ  
 21, 22, 31, 82, 144, 151, 152, 176, 241  
 Քենալ թեյ, թուրք, բիկունքի սպա, գնդա-  
 պետ 65  
 Քենալ փաշա 269

Քեյս, դ-ր 186  
 Քյազիմ թեյ, գնդապետ, 5-րդ բանակի  
 շտաբի պետ 51  
 Քյազիմ թեյ, ժանդարմերիայի կապի-  
 տան 104  
 Քյամիլ Մահմուդ փաշա, 3-րդ բանակի  
 գլխավոր հրամանատար 235, 274  
 Քյոլքինգ Վ.Լ., դ-ր, ադանդի անդամ  
 Երուսաղեմում 337  
 Քյուլման ֆոն, Կայզերական Գերմա-  
 նիայի դեսպան 52, 79  
 Քյունցլեր Յակոբ, սարկավագ Ուրֆա-  
 յում 67, 68, 256  
 Քրիստոս 47, 95  
 Օպենհայմ ֆոն, բարոն 315  
 Ֆալկենհայն ֆոն, գեներալ 73, 318  
 Ֆալստաֆ 25  
 Ֆախրի փաշա, գեներալ 67, 135, 191,  
 304, 323, 351  
 Ֆիլիպս, դ-ր, Բեռլին 337

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբու Հրեր 348, 349  
 Ադաբազար 56, 83, 249, 264  
 Ադամա 32, 41, 46, 73, 81, 126, 127, 129,  
 146, 149, 153, 157, 180, 185, 189, 198,  
 201, 211, 214, 232, 251, 267, 268, 279,  
 282, 284, 286, 289-291, 293, 332, 365  
 Ադյաման 34, 228, 257-259  
 Ադրբեջան 23, 25, 34, 85, 111, 302  
 Ադրիանապոլիս 294  
 Ալաբաշ 33, 193  
 Ալակայա 18, 141  
 Ալաշկերտ 146  
 Ալքիստան 33, 193, 195  
 Ալեքսանդրեթ 82, 125, 128, 228, 294  
 Ալեքսանդրիա 19, 76, 322  
 Ալտեն 338  
 Ադրամար 54  
 Ամադիա 180, 194  
 Ամանու 72, 73  
 Ամասիա 227  
 Ամարա 376  
 Ամերիկա 49, 51, 118, 138, 144, 168, 213,  
 219, 248  
 Ամստերդամ 315  
 Այաշ 28, 303, 304  
 Այնթապ 20, 34, 44, 48, 66, 138, 142, 148,  
 164, 168, 169, 196, 317, 369  
 Անատոլիա 21, 32, 34-37, 44, 45, 49, 74,  
 78, 100, 109, 117, 118, 144, 159, 195,  
 213, 224, 225, 249-251, 254, 255, 261,  
 264, 303, 311, 331, 349, 355-357, 361-  
 364, 366, 368, 373, 375  
 Անգլիա 20, 66, 147, 148, 251  
 Անկարա (Անգորա) 47, 65, 196, 197, 199,  
 247, 267, 268, 279, 282, 284, 288, 298,

303, 304  
 Անտիոք 34, 228, 322  
 Աշկալա 242  
 Ասիա 55, 57, 317  
 Ավստրիա 79, 219, 225  
 Արաբական անապատներ 19, 44, 49,  
 76, 331  
 Արաբ Փունար 256, 259  
 Արարատ լեռ 95  
 Արաբսի հովիտ 56  
 Արդահան 56, 58, 60, 61, 246  
 Արդանուս 246  
 Արեշ 61  
 Արճեշ 24  
 Աֆրին 324  
 Բաբ 76, 194, 257  
 Բաբերդ 69, 216, 218, 242, 247, 271, 272,  
 298  
 Բաբուն 56-60  
 Բալիկեզիր 56  
 Բալկաններ 171  
 Բաղդադ 32, 64, 69, 97, 189, 230, 287,  
 288, 323, 347, 348, 357, 376  
 Բաղչեջիկ 34, 267  
 Բալազետ 112, 236, 321  
 Բաշկալա 170, 172  
 Բասենի դաշտ 21, 241  
 Բասրա 300  
 Բավարիա 338  
 Բաբու 18, 57, 60, 61, 71  
 Բեյլան 228, 231  
 Բեռլին 25, 39, 54, 56, 59, 60, 73, 85, 96,  
 120, 147, 158, 197, 202, 206, 266, 281,  
 292, 302, 305, 309, 312, 330, 336-343,  
 346, 352-354, 358-360, 363, 377

Բերա 32, 60, 117, 119, 123-125, 129-131, 133, 150, 158-161, 163, 164, 166, 167, 169, 170, 172, 173, 178, 179, 181-187, 189-195, 197-210, 213-215, 220-223, 226, 227, 234, 236, 237, 240, 251-253, 255, 260-263, 266, 268, 274-277, 279-281, 284-286, 288-293, 301, 303-305, 309, 310, 312, 314, 315, 318, 319, 326, 342, 351, 353-356, 361, 363, 365, 367, 369  
 Բիրիխ (Բաղնշ) 22-24, 30, 31, 34, 69, 80, 84, 86, 87, 101-107, 112, 125, 147, 159, 160, 179, 207, 230, 272, 326, 328  
 Բիրեջիկ 228  
 Բոզանտի 265, 325  
 Բողո 236  
 Բուֆոր 162, 333  
 Բրեստ-Լիտովսկ 18, 56, 59, 60, 71, 84  
 Բրուսա 34, 217, 298  
 Բուլանդ 326, 328  
 Բուլղարիա 36, 37, 78, 144  
 Բուխարա 104  
 Բուխարեստ 57  
 Բուրգերնհայն 338  
 Պարահիսար 47, 80, 203, 249, 282, 284, 298  
 Գերեն 103  
 Գերմանիա 30, 35-41, 47, 51, 54, 60-62, 66, 71, 79, 95, 97, 100, 105, 107, 109, 110, 114, 117, 119, 123-125, 129, 130, 133, 134, 136, 145, 150-153, 158-161, 166, 167, 170, 173, 175, 179, 181-187, 189, 192, 195, 199, 200, 202, 203, 208, 210, 212, 214, 215, 218, 221, 222, 224-227, 230, 231, 234, 237, 240, 248, 253, 255, 256, 263-265, 267, 268, 274, 275, 277, 279, 284, 288, 289, 291-293, 301-305, 308-311, 313, 317, 319, 326, 327, 330, 332-334, 338-343, 347, 351-353, 355, 356, 360-363, 365-367, 369  
 Գյուզել դերե 103  
 Գյուզել-Հիսար 115  
 Գոմս 22  
 Գրումեվալդ 337, 338  
 Դամասկոս 50, 51, 65, 158, 253, 276, 312  
 Դատվան 106  
 Դարդանել 37, 78, 162, 217, 298, 300  
 Դեյր էլ Չոր (Տեր Չոր) 19, 32, 44, 49, 51, 65, 67, 75, 171, 190, 195, 237, 253, 282, 294, 298, 311, 347, 350, 351, 357, 358  
 Դերա 49, 51  
 Դեր Հաֆիր 347  
 Դերջան 195, 216, 243, 270  
 Դերսիմ 107, 211  
 Դիարբեքիր 23, 28, 29, 32, 33, 40, 64, 65, 112, 165, 166, 168, 193-195, 203, 208, 209, 214-216, 218, 220-223, 228, 230, 233, 236, 237, 255, 260, 282, 288, 294, 322, 343  
 Դյորթյոլ 19, 20, 30, 33, 126-129, 146, 171, 193  
 Դվնիկ 120  
 Դրեզդեն 336  
 Եգիպտոս 139, 140, 171, 276, 280, 325  
 Ելիզավետպոլ 60, 71  
 Եկատերինենֆելդ 61  
 Եմեն 103  
 Եվրոպա 23, 36, 37, 53, 58, 78, 108, 249, 300  
 Երզնկա 33, 69, 84, 87, 163, 196, 198, 210, 211, 216, 218, 235, 241-243, 247, 248, 271, 272, 319-321  
 Երուսաղեմ 54, 275, 276, 280, 285, 337, 338  
 Երևան (Երիվան) 56, 58, 59, 71, 86  
 Եփեսոս 95  
 Եփրատ 19, 70, 74, 195, 215, 228, 234, 241, 270-272, 281, 348, 351  
 Զալե 337  
 Զաքարիա 83, 249, 253  
 Զեյթուն 18-20, 31, 33, 79, 80, 82, 114, 129-133, 135-143, 146, 148, 149, 153-157, 163, 168-172, 193, 195, 229, 264, 349  
 Զմյուռնիա (Իզմիր) 35, 55, 70, 335, 344, 294, 299  
 Էնֆերեկ 168  
 Էջմիածին 54, 95-97, 261  
 Էսկիշեհիր 264, 266-268, 284, 368  
 Էրեզլի 264, 265, 283, 368  
 Էրզրում 21-23, 27, 30, 32, 33, 40, 64, 69, 79, 80, 82, 84, 87, 95-97, 100, 106, 110, 112, 117, 119, 120, 125, 145, 150-153, 158-160, 163, 164, 166-169, 173-179, 181, 183-191, 195, 198, 200-203, 205, 209, 210, 212, 216-218, 230, 234, 235, 241, 242, 245, 247, 249, 251, 255, 269-272, 274, 282, 300, 312, 321, 326, 364  
 Թավրիզ 112, 311  
 Թել Արիադ 229, 259  
 Թել Էրմեն 34, 215, 232, 238  
 Թեմպել 75  
 Թերապիա 95, 106, 109, 110  
 Թերեք գյուղ 138  
 Թերմեն 365  
 Թերեք վանք 136  
 Թիֆլիս 59, 70, 71, 95-97

Թորթում 184, 321  
 Թուրքիա 18, 20, 26, 28, 29, 32, 36, 38-40, 43, 49, 51, 53-55, 57-62, 65, 71-73, 76-78, 82, 89, 90, 96, 98, 112, 115, 117-120, 123, 124, 134, 144, 147, 160, 162, 169, 175, 176, 186, 189, 196, 200, 206, 213, 214, 216, 217, 226, 232, 235, 240, 243, 244, 246, 248, 249, 251, 255, 256, 269, 278, 282, 294, 295, 297, 298, 300, 302, 303, 319, 330, 332-336, 339, 340, 343, 344, 346, 352, 353, 368  
 Իգդիր 112  
 Իդլիք 194  
 Իզմիր 34, 40, 50, 56, 83, 249, 353, 256, 355, 264, 282, 284  
 Ինեբրու 364  
 Իսուս 19  
 Իսպանիա 224  
 Իտալիա 219  
 Իրաք 325  
 Լահիջան 112  
 Լալայգիզ 336  
 Լեհաստան 81  
 Լիբանան 56, 98  
 Լիզ 327, 328  
 Լիտովսկ 18  
 Լոնդոն 315  
 Լորդնոք 102  
 Խարբերդ (Խարապոտ) 34, 55, 106, 113, 183, 198, 211, 230, 242, 271, 327-329  
 Խիանք 101  
 Խիզան 102  
 Խլաք 327, 328  
 Խնուս 102, 243, 326  
 Խոք 101  
 Խոտլավենդիկյար 282, 284

Ռաջու 44, 311  
 Ռարա 44, 49, 74, 229, 311  
 Ռաս ու Այն 44, 49, 64, 75, 230, 236  
 Ռոմաներիում 68  
 Ռոմեյիս 55  
 Ռոմինիա 78, 96, 298  
 Ռոմքալե 228  
 Ռուսաստան 24, 58, 91, 95-98, 101, 108, 112, 114, 115, 118, 119, 147, 148, 159, 167, 174-176, 217, 246, 251, 261  
 Սարկա 349-351  
 Սալմաստի հովիտ 23  
 Սալոնիկ 26, 51, 65  
 Սամարղանդ 104  
 Սամսուն 34, 205, 223-226  
 Սանսար 241  
 Սասուն 45, 101, 102, 217, 328, 364  
 Սաքսոնիա 322  
 Սիմեկ (Շիչեկ) 103  
 Սիրա 47, 51  
 Սիս 33, 54, 96, 149, 193  
 Սղերդ 104, 227, 236, 326  
 Սինջար լեռ (Ջերեկ Սնջար) 236  
 Սոյուջբուլաղ 112  
 Սոֆիա 196, 197, 353, 354  
 Սալիկոր 210  
 Սերաստիա (Սվազ) 34, 46, 47, 175, 211, 235, 243, 253, 282, 299, 329  
 Սիս 195, 208, 228  
 Սիրիա 63, 126, 312, 318, 362, 368  
 Սվեդիա 19, 20, 24, 34, 80, 82, 322  
 Ստամբուլ 27, 109  
 Սուեզի ջրանցք 299  
 Սուկլուկ 228, 231  
 Սուալի 349  
 Սուրբ Հակոբի վանք 54

Սուրբ Կարապետ, վանք Մուշում 68  
 Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին  
 Վայնրեղ 337  
 Վան 18, 22-28, 30, 31, 36, 79, 80, 84-87, 106, 109, 110, 112, 113, 145-147, 150-152, 159-163, 165, 167, 170, 172-174, 176, 179, 182, 183, 194, 207, 217, 241, 249, 251, 272, 295, 297, 300, 321, 322, 327, 328  
 Վանա լիճ 86, 109, 110, 113  
 Վեսսեն 112  
 Վերնիգերդեն 337  
 Վաշինգտոն 51  
 Վիսրադեն 337  
 Վյուրտեմբերգ 337  
 Վրաստան 57, 60  
 Տավրոսիկ 101  
 Տավրոս 18, 73  
 Տարսոն 157  
 Տիգրիս 87  
 Տրապիզոն 32, 34, 40, 45, 107, 115, 203, 204, 206, 207, 210-212, 216-218, 243, 247, 251, 255, 271, 272, 277, 278, 282, 284, 285, 288, 299, 316, 364  
 Ունին 45 225 364  
 Ուրմիա 23 110-112 172  
 Ուրֆա (Ուռհա) 29, 35, 44, 46, 47, 67, 68, 70, 72, 80, 82, 215, 225, 230, 231, 242, 243, 256-260, 271, 276, 282, 294, 304, 312, 315, 322, 323, 343, 344, 346, 351  
 Փաշավանք 102  
 Փեյշդարուր 222, 227  
 Փերեզ 241  
 Փիշենք 101  
 Փոքր Ասիա 28, 40, 66, 161, 240, 255, 315

Քաղկեդոն 95, 100, 102  
 Քեսաբ 228, 232  
 Քերաբ 46, 49, 276, 277  
 Քիլ 336, 337  
 Քիլիս 34, 44, 349  
 Քյոթահիա 282, 284  
 Քոչանս 180  
 Քրդստան 104, 107  
 Օձնի (Օզնի) 120

Օլբի 61 246  
 Օջախի 128  
 Օսմանիե 126, 134, 157  
 Օսմանյան կայսրություն, տե՛ս Թուրքիա  
 Օտոմանիա, տե՛ս Թուրքիա  
 Ֆրանկֆուրտ, տե՛ս Մայնիֆրանկֆուրտ  
 Ֆրանսիա 118, 175

Հայաստանի Հանրապետության  
 Գրականության և հուշարձանաբանության  
 նախարարության հրատարակած

Հայաստանի Հանրապետության  
 Գրականության և հուշարձանաբանության  
 նախարարության հրատարակած

Հայաստանի Հանրապետության  
 Գրականության և հուշարձանաբանության  
 նախարարության հրատարակած

Հայաստանի Հանրապետության  
 Գրականության և հուշարձանաբանության  
 նախարարության հրատարակած

Հայաստանի Հանրապետության  
 Գրականության և հուշարձանաբանության  
 նախարարության հրատարակած

# ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1914-1918

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ I

## Հրատարակությունը և ներածությունը՝ Գոկտոր Յոհաննես Լեփսիուսի

Թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինայանի  
Հրատ. խմբագիրներ՝ Ռուզան Մարգարյան,  
Վահագն Մարգարյան  
Համակարգչային մակետը՝ Միսակ Գևորգյանի

Տպագրությունը՝ «ԵԳԵԱ» հրատարակչատան

---

Ստորագրված է տպագրության՝ 23.01.2006թ.:  
Ծավալը՝ 25.5 տպ. մամուլ, 27,0 հրատ. մամուլ:  
Չափսը՝ 60x84 1/16: Տպաքանակ՝ 300:  
Գինը՝ պայմանագրային:

«Գրական հայրենիք» հրատարակչություն. Երևան 9, Իսահակյան 28